2. Dedevim "sway" < *dhewh-, cf. Skr. dhunoti/dhunāti "shakes", ptc. dhūtá- as well as the likewise reduplicated (intensive) dodhavīti.

3. Tevem "last, endure", cf. e.g. Skr. comp. dávīyas- "more distant" < *dewh$_2$-. It is necessary to assume "Schwebeablaut" of the root, as we have the "thème II" preserved in Dor. ὄαρον "prolonged" = Arm. erkar "for a long time" < *dwah$_2$ro-, zero grade in Skr. dūrá- "far away". Cf. also the expression i tev "for a long time", probably

i + loc. < *dewh$_2$-ei.

4. Hoviw "shepherd". Generally analysed as *h$_2$owi-pah$_2$, which is to be preferred to Eichner's solution *opi-pah$_2$, not only because of the initial h- (cf. Luv. hawis) but also on the basis of Vedic parallels such as gopā, paśupā but not *apipā or the like. The semantic development must be parallel to that of Eng. shepherd.

5. Ełevin "cedar", probably with a v-suffix as Rus. jalovec "juniper".

6. T^{c}ovem "encant", Skr. stauti "praises", Gr. στεῦται "boasts". In this case a "mobile s" must be involved (since *st > st, cf. sterǐ "sterile", Gr. στεῖρα). Of course the verb is, as indicated by Greppin (The Armenian Reflexes of IE *w and *y, REArm 9, 1972, pp 69-78), originally athematic.

However, we can hardly find support for the theory that the preconsonantal form *tov- has been preserved instead of *tog-, as the "morphological sweep" from athematic to thematic flexion "must have occurred after the shift *-wV- > -g-". In my opinion we may rather find examples to support the opposite point of view. Thus the verb dizanem "heap up", aor. dizi, in which -z- as opposed to -j- is the intervocalic reflex of *ĝh, in spite of the fact that also this verb has an athematic past (Skr. dehmi < *dheiĝh-mi).

A further example may be avetel "evangelize", the connection of which with Gr. ἀυτή has been rejected by Peters (Untersuchungen zur Vertretung der indogermanischen Laryngale im Griechischen, Wien 1980, p 14) not only because of the intervocalic v, but also because the sequence of initial *hw- is supposed to be reflected as g-. If, however, we assume a compound of *h$_1$su- (Gr. ἐυ-, Skr. su-) + *h$_2$wed- we would, in fact, expect a stem awet- < *ahuwet- with a prothetic vowel a-. The very meaning of the verb, also, would be more evident in this way than with a protoform *h$_2$wed- alone.

Now, a comparison of the above mentioned material

concerning the two possible reflexes of intervocalic *w, -g- and -w/v-, seems to show a regular distribution: -g- before the back vowels a, o (but -w- before the homorganic vowel u), -w/v- before the front vowels e, i . Apparently the final vowels had been preserved for a sufficiently long time to affect a preceding -w- before being dropped.

Naturally a particular interest must be attached to the cases in which etymologically clearly connected units show a different treatment. This is the case in the word arew "sun", den. arewu, where we find -wu throughout the inflexion, whereas the archaic genitive is areg, cf. expression such as areg kałak^{c} and the compound aregakn. Areg is probably to be reconstructed as *hrewos and thus seems to support the reconstruction of *-os as the athematic genitive ending. Moreover, kov "cow", gen. kovu, which has also been transferred to the u-inflection, with the derivational noun kogi "butter", gen. kogwoy, which is an old iyo-stem (Arm. wo-stem), to judge from the inflection. As all IE iyo-stems undergo the change *iyo > *io > *iwo in Armenian we must assume a development *g^{w}owiyo- > *kowiyo- > *kowio- > *kowiwo- > *kowwo-. It is hardly possible to decide whether we are dealing with a sort of "Verschärfung", *ww > gw or a simplification of the geminate *kowwo- > *kowo- > *kogo- and a subsequent analogical transformation *kowi/*kogoy kogi/kogwoy patterned on the type ordi/ordwoy. The latter solution would probably imply an analogical formation of two stages: *kowi/*kogoy > kogi/*kogoy > kogi/kogwoy or *kogi/*kogoy > *kowi/kogwoy kogi/kogwoy. Examples of the same type of formation as kogi are hogi "spirit", and aygi "vine".

The final conclusion to be drawn from the preceding examination must be that the conditions of the reflex g < *w intervocalically may be defined in the following way: After V before a, o - if the preceding vowel is different from i.

*γ^{w} seems most likely as a preliminary stage of the Arm g/w. Subsequently we presumably have to do with a sort of hardening before the back vowels a/o. As a possible support of an intermediate stage *γ^{w} we may mention the Georgian

loanword ɣ^{w}ino "wine", cf. Arm. gini. In this connection it must be emphasized that the Kartvelian languages distinguish between ɣ^{w}, gw and w initially before front as well as back vowels.

R.B. FINAZZI (Milan, Italie)

L'INFLUENCE GRECQUE SUR LA LANGUE ARMÉNIENNE: ASPECT LEXICAL

1. La capacité de la langue arménienne à reproduire complètement des termes qui n'existaient pas dans son vocabulaire originaire par l'intermédiaire de calques lexicaux ou sémantiques est bien connue. Cela a été mis en lumière à plusieurs reprises et les exemples ne manquent pas(1).
Mais il y a, surtout dans les traductions des anciens textes grecs, de nombreux cas de simple transposition de lexèmes grecs en arménien, si bien que l'on trouve en arménien des termes dépourvus de signification; ils restent, de ce fait, du domaine des spécialistes, des quelques initiés qui traduisaient ou étudiaient ces textes grecs, mais ils ne parviennent pas à s'intégrer dans le vocabulaire arménien existant, à le concurrencer, à provoquer de nouvelles créations lexicales.
C'est le cas d' ἀστυνόμος, bien attesté en grec comme adjectif, avec le sens de "protecteur d'une ville, qui régit une ville" (chez Eschyle), "qui concerne l'art de vivre en société" (chez Sophocle), ou comme substantif avec le sens d'"astynome" (chez Platon), "magistrat chargé de la police des rues, de l'entretien de la ville et des édifices publics", et, à l'époque romaine comme équivalent du lat. praetor urbanus(2).
Or ce terme n'avait évidemment pas d'équivalent dans la structure de l'état arménien et, même en grec, il n'était pas très répandu. Dans la traduction d'un texte de Platon le terme apparaît sous la forme de k^{c}aɫak^{c}abaš$_{x}$(3) et k^{c}aɫak^{c}ōrēn(4).
La correspondance externe des deux langues est parfaite, même si, comme on peut le remarquer, k^{c}aɫak^{c} traduit indifféremment

les termes grecs ἄστυ et πόλις , qui ont une connotation différente[5].

Pour la deuxième partie du composé le traducteur s'est basé sur l'étymologie de νόμος , vu comme dérivé de la racine de νέμω, "je divise, je découpe, je partage, je distribue", et dont le verbe bašxem est l'exact équivalent sémantique. Dans kʿałakʿōrēn on a, au contraire, effectué une juxtaposition des deux éléments, ἄστυ et νόμος, où ōrēn est le lexème corréspondant à l'idée de lois: il en résulte le terme kʿałakʿōrēn, qui coïncide alors avec le mot arménien déjà connu comme signifiant "semblable à la ville", et qui n'est pas pertinent dans le contexte.

Le processus du calque est même utilisé dans la transposition de catégories morphologiques: l'adverbe ἐχόντως, par exemple, est traduit par ownołapēs[6] au moyen d'un calque qu'on pourrait définir comme morpho-structural: l'arm. ownołapēs est en effet construit au moyen du suffixe -pēs qui traduit le suffixe adverbial grec - ως, ownoł étant la forme participiale en -oł du verbe ownim = ἔχω .

Des syntagmes entiers même sont traduits en arménien sans aucune considération pour leur signidication: c'est le cas des expressions qui, en grec, ont une connotation spéciale du fait de la situation historique et politique, ainsi que des notions concernant l'état, dont la conception grecque est tout à fait particulière.

Πολιτικος ἀνήρ [7], par exemple, est l'individu impliqué dans la vie et l'administration de la πόλις; à cette expression le traducteur des Lois de Platon oppose l'arm. kʿałakʿakan ayr, dans lequel l'adjectif ne rend pas la portée sémantique du lexème grec, même si, formellement il en est l'exacte correspondant. Citons encore le proverbe d'un passage platonicien: μήτε γράμματα μήτε νεῖν ἐπίστωνται, qui reflète le tempérament d'une peuple de marins[8], d'un peuple qui tire de la mer sa subsistance, ses ressources. Cette expression à caractère populaire est traduite en arménien par oչʿ groy icʿen makacʿołk, ew oչʿ ayoly owrowkʿ gorcarnowtʿean (96, 13-15), qui est en partie un calque, mais au fond, une banalisation et un appauvrissement du grec.

Cette traduction reflète bien le choix culturel d'un peuple, l'arménien, auquel la mer n'était pas familière.
Curieuse est la traduction, encore au moyen d'un calque, du nom du platane, en grec πλάτανος (Lois IV, 705 c 4; 118, 12), formation nominale de l'adjectif πλατύς [9], rendu par <u>layn-terewi</u>, c'est à dire "au large feuillage"; ceci ressemble à une glose ou à une reconstruction étymologique, intégrée morphologiquement dans les formations d'adjectifs ou de substantifs indiquant le nom de plantes, alors que l'arménien disposait déjà du lexème désignant cet arbre, <u>sōsi</u> [10], bien attesté dans la traduction de la Bible.

De la même façon on trouve dans les anciennes traductions le substantif διθύραμβος (Lois III, 700 b 5, 700 d 7) traduit par <u>erkadowṙn</u> (111, 16) / <u>erkdowṙn</u> (112, 3), sur la base d'une étymologie populaire qui reconnaît dans δι- le préfixe multiplicatuer par deux, et dans -θύραμβος le lexème qui indique la porte, peut-être sous l'influence de δίθυρος "à deux battants". Dénuées de tout fondement, cette reconstruction partielle et cette interprétation pourraient quand même être placées parmi les autres étymologies de ce mot, anciennes et modernes, quelquefois fantaisistes.

Le recours au calque de type lexicale est, au contraire, très employé, et avec succès cette fois, pour rendre la terminologie philosophique grecque: dans la traduction des Catégories d'Aristote, le terme ποιότης "qualité", est traduit par <u>orakowt^{c}iwn</u> [11], sur la racine du pronom ou adjectif relatif-interrogatif <u>orak</u>, de la même façon que le latin de Cicéron [12] modela l'abstrait <u>qualitas</u>.
De même à ποσότης correspondent <u>ork^{c}anowt^{c}iwn</u> et <u>quantitas</u>.

2. A côté de ces calques lexicaux, il y a en arménien des mots qui, empruntés à l'iranien, sont devenus par la suite, des calques sémantiques du grec, développant alors un sens nouveau pris au grec, pour les raisons historiques et culturelles bien connues.
Prenons les termes indiquant une notions de temps: à côté de ceux de dérivation indo-européenne directe, comme <u>am</u> "année", <u>amis</u> "mois", <u>amaṙn</u> "été", <u>jmeṙn</u> "hiver", l'arménien recourt

à des emprunts à l'iranien pour indiquer le temps, le temps long, l'éternité, à savoir yawēt, yawitean.
On ne doit pas plus particulièrement s'étonner de ce que l'arménien ait eu recours à une autre langue pour exprimer ces concepts et qu'il ne les ait pas dérivés de l'héritage indo-européen commun. Même d'autres mots désignant des choses concrètes, de la vie quotidienne[13] sont empruntés à l'iranien, sans que, pour cela, on soit obligé d'invoquer des raisons culturelles et linguistiques particulières: l'arménien a pu tout simplement ne pas participer à certaines isoglosses lexicales et sémantiques, développées dans une période plus récente que celle de l'ancienne unité indo-européenne.
L'arménien a justement emprunté les mots désignant l'accident 'temps', dont la détermination, on le sait, a effectivement donné lieu à diverses subdivisions à l'intérieur du mond indo-européen.
Des langues ont développé le terme indiquant le temps long, l'éternité en utilisant la racine *aiu-/*aiu̯-, dont le sens original était celui de 'force vitale'[14]. Ce n'est pas le cas de l'arménien, alors que l'on retrouve cette racine dans deux aires linguistiques voisines, la grecque et l'indoiranienne (ainsi qu'en latin et dans les langues germaniques et celtiques, malgré des modifications sémantiques et lexicales).
L'arménien, quant à lui, ne présente pas une forme nouvelle, que l'on pourrait considérer comme une innovation surgie au milieu d'aires conservatrices.
S'il est vrai, comme le soutient Benveniste, que la présence des continuations de *aiu- en grec, en iranien et en sanscrit, renvoie à 'la vieille doctrine ionienne, brahmanique, peut-être aussi mazdéenne, de la durée cosmique'[15], alors l'arménien pourrait, probablement, avoir été exclu de cette ligne directrice culturelle qui se manifesta, à époque historique, dans ces courants de pensée et ces doctrines philosophiques.
C'est donc au parthe que l'arménien emprunte yawēt[16], le mot désignant l'éternité, terme qui, dans son développement, présente en iranien, jusqu'à un certain moment, un cheminement presqu'identique a celui du grec αἰών .

Partant tous les deux de la notion de 'force vitale', avec une connotation exclusivement humaine, du moment qu'ils représentent 'ce qui tient l'homme en vie', 'le siège de la vie', ils finissent par s'identifier avec la vie, et avec la durée de la vie de l'homme, qui vit justement tant que l' αἰών demeure en lui. De cette division du temps en fonction de la durée de la vie humaine, l'on passe à la notion de génération, de succession interminable, incessante, infinie de générations qui aboutit à l'éternité (comparer aussi les adverbes yawēt et ἀεί).

Jusque là, donc, grec et iranien évoluaient d'une façon identique, distinguant un temps illimité, l'éternité (αἰων = zrvan akarana) du temps limité (χρόνος = zrvan dareghō-chvadhāta), soumis à sa propre détermination.

L'arménien a emprunté le lexème yawēt/yawitean, mais le mot arménien, avec l'adaptation phonétique caractéristique des emprunts parthes, a évolué sémantiquement sous l'influence du grec αἰών , pour signifier aussi 'monde', tout comme lat. saeculum signifie 'temps long, longue durée', et 'monde', y compris au sens laïque.

Sur le mot grec, c'est l'influence sémitique qui se fait sentir, le terme ʿôlām indiquant 'éternité' et en second lieu 'monde'.

On pourrait penser que l'arménien a reçu ce nouveau sémantème de yawitean directement du sémitique (du syriaque, en effet, l'arménien a pris un autre lexème indiquant une détermination de temps, dar 'Zeitalter, Generation, Geschlecht, Jahrhundert, aetas, saeculum'(17)).

Mais la comparaison avec des traductions de textes grecs en arménien, où la traduction d' αἰών par yawitean est constante, même dans le sens de 'monde', tout comme la présence de quelques syntagmes prepositionnels calqués sur le grec et l'emploi de yawitean au pluriel conduisent à penser à une influence directe du grec sur l'arménien (cf. le grec εἰς τους αἰῶνας τῶν αἰώνων etc.(18), le grec ayant fait fonction de modèle plutôt qu' av. yavaeča yavetātaeča).

L'arménien n'est pas isolé dans cette innovation de son système lexical et sémantique: le gotique aussi, pour ce que

le texte de Wulfila nous atteste, montre que aiws, dont le sens primaire est 'temps', prend la valeur d' 'éternité' d'après la conception judéo-chrétienne transmise par les Grecs, les Goths (et avec eux les autres Germaines) ne possédant pas la valeur réligieuse et transcendante de l'éternité.

De plus, aiws est aussi employé, comme saeculum, au sens de 'monde'. Et ce n'est pas un hasard si gotique et arménien subissent, à peu près à la même époque, une influence culturelle pour une abstraction pure, telle que celle du temps, même considéré avec ses projections et distributions concrètes dans l'espace.

Ces deux langues ont en effet un autre élément de ressemblance, l'absence d'une forme véritable de futur, qui est, en termes très simples, le dépassement de l'expérience individuelle et personelle, de l'immanence et le domaine du devenir.

Un autre terme armenien, lié à la notion de temps, semble montrer, lui aussi, une influence sémantique du grec: žamanak 'temps, jour, âge, époque, dernière heure, saison, occasion', est un emprunt au parthe jm'n avec elargissement en -ak[19], attesté essentiellement avec la valeur de 'temps, heure, époque'.

žamanak montre, dans son emploi, toute une gamme de connotations centrées sur la durée momentanée, découpée à l'intérieur de la ligne du temps, ou, mieux encore, centrées sur son unicité, son impossibilité à se répéter, si bien que žamanak est l'instant ou l'occasion favorable que l'on doit saisir et dont il faut bien profiter, parce qu'elle est unique et décisive.

Or toutes ces connotations qui se sont ajoutées au lexème iranien doivent avoir eu καιρός ('le temps opportun') comme modèle.

De plus c'est chez Platon dans le Timée que l'opposition entre αἰών, χρόνος et καιρός est bien exprimée: Platon y part du concept de αἰών en relation avec l'homme mortel, pour en faire l'éternité a-temporelle et idéale, tandis que χρόνος est le temps créé avec le monde, une copie en mouvement de l'éternité, tandis que καιρός est l'instant.

De même, le traducteur du Timée en arménien (que ce soit Grégoire Magistros ou un inconnu, peu importe ici lequel[20]) oppose toujours yawitean (αἰών), amanak (χρόνος) et žamanak (καιρός) (37 d 5- 38 a 1; p. 111 de l'édition de Venise de 1877[21]).

Considérons maintenant un autre lexème: calque lexical et sémantique évident est l'adjectif lowsnot qui, avec le verbe dénominatif lowsnotim, est en correspondance avec le couple grec σεληνιακός / σεληνιάζομαι 'épileptique, être épileptique', qui provient de σελήνη , entendu comme étant l'astre nocturne et maléfique des ténèbres. Le terme grec, sous cette forme-là, est une innovation de l'Evangile de Matthieu, mais courants étaient les termes σεληνιάζοντες, σεληνῶντες, σεληνόπληκτοι, σεληνόβληποι - pour désigner ces malades. A l'époque classique, c'était le terme technique équivalent qui était employé, ἐπιληπτικός , avec le verbe ἐπιληπτίζω , chez Hippocrate.

Le mot σεληνιακός dut son succès à son caractère populaire, qui, d'une part, entendait faire remonter à l'influence de la lune l'origine du comportement de certaines sujets fantasques, bizarres et à l'humeur changeante, et qui, d'autre part, mettait en rapport avec les phases de la lune des manifestations d'hysterie, convulsions, hallucinations sensorielles, pertes de connaissance ou diverses perturbations psychiques de certaines personnes, particulièrement faibles physiquement et psychiquement.

Du reste, dans le monde méditerranéen et asiatique, d'autres événements encore, d'ordre géophysique et physiologique, étaient mis en corrélation avec le retour des phases lunaires[22].

Le double caractère, à la fois positif et négatif, bienfaisant et maléfique, de la lune, dont le cult est largemente attesté dans le monde indo-européen, est une chose bien connue.

Il n'est donc pas surprenant qu'en arménien aussi, on ait fait un calque sur le mot grec, sur base de l'équivalence sémantique entre σελήνη et lowsin (à l'origine ils désignaient tous les deux la 'Lumineuse', cf. lat. luna, prén. losna <*loksna <*leuksnā).

Cette équivalence sémantique a donné lieu à un mot que l'on retrouve même en latin, lunaticus, pour désigner en même temps une personne capricieuse et à l'humeur changeante, et un épileptique (de même l'italien populaire a de nombreuses expressions pour ce tabou linguistique: piccolo male, male caduco, et le francais a petit mal, grand mal).

On peut trover une coïncidence lexicale entre ὀψώνιον et t^{c}ošak. Le grec part du sens de 'provisions', 'vivres', et, plus généralement, de solde destinée à l'achat de l' ὄψον 'tout ce que l'on mange avec le pain' et passe ensuite à la signification de 'salaire', 'solde en nature ou en argent à une armée', tandis que l'ambivalence subsiste dans le verbe ὀψωνιάζω 'je donne des provisions, je donne un salaire'(23). Dans ce cas encore l'arménien se trouve entre deux aires, la grecque et l'indo-iranienne, qui ont gardé un ancient mot indo-européen pour indiquer le salaire, la récompense, *mizdho-, terme qui a survecu aussi dans le gotique mizdo et dans le slave mĭzda. Mais en avestique et en grec, le genre de récompense désigné par mižda et μισθός est plutôt de caractère non économique, non régulier: elle est donnée à celui qui a accompli un exploit, une action d'éclat, une entreprise difficile. Μισθός est devenu ensuite la 'récompense', le 'salaire', la 'solde'(24). Concurrencé, pour les soldats et les mercenaires, par ὀψώνιον l'originaire *mizdho- est ce qu'en arménien on pourrait appeler varj, ou peut-être même pargew 'don', c'est à dire une récompense non établie a priori, mais librement donnée. Au contraire, l' ὀψώνιον était la ration de vivres assurée aux soldats, c'est à dire la récompense du soldat qui est payé en nature.

L'arménien t^{c}ošak, il me semble, recouvre bien, quant à lui, la sphère sémantique du grec ὀψώνιον.

Il doit être rapporté à bal. t^{c}ōšaɣ, tōšag, p.m. tosa, 'provisions de vivres, vivres pour le voyage'. Entré comme emprunt en arménien, il est même bien attesté pour traduire ἐπισιτισμόν, τα προς την ὁδόν , c'est à dire le'ravitaillement', 'l'action de s'approvisionner'.

Mais en arménien t^{c}ošak signifie aussi 'salaire', 'récompense',

d'après le grec ὀψώνιον qui, bien attesté avec le sens de 'solde donné aux soldats', signifie ensuite 'retribution' et 'paie' en général[25]. Il s'agirait donc d'un terme de valeur juridique, lié à l'image de la guerre, le vestige de système d'échange, de services récompensés en nature, ce que rappelle d'ailleurs le latin salarium, de sal 'sel', en tant qu'argent donné aux soldats pour s'acheter du sel, situation différente de celle du solidatus 'payé par le solidus aureus'.

Dans le rapport entre ὀψώνιον et t^{c}ošak il faut enfin remarquer que, déjà dans les papyrus du III siècle a.J.C., ὀψώνιον est aussi attesté comme 'allocation', 'gratification', 'pension', ce qu'on relève également dans l'évolution de t^{c}ošak.

L'influence grecque sur l'arménien s'est donc exercée à plusieurs niveaux, dans différents domaines et registres de la langue, pas seulement au point de vue lexical, mais sémantique aussi, soit sur les mots indigènes, soit sur les emprunts à l'iranien.

NOTES

(1) Cfr. encore récemment G.BOLOGNESI, L'Armenia tra Oriente e Occidente: incontro di tradizioni linguistiche nei secoli che precedono e seguono la prima documentazione scritta, dans Transcaucasica II, Quaderni del Seminario di Iranistica, Uralo-Altaistica e Caucasologia dell'Università degli Studi di Venezia, 7 (1980), pp. 26-42.

(2) Dion. Cass., Hist. Rom. 53. 2.

(3) Platon, Les Lois, VI 763 c 5, 193, 1; 763 d 7, 193, 15; 779 c 1, 214, 22; VIII 845 e 4, 229, 28; 847 a 4, 301, 14; 847 b 5, 301, 26; 849 a 2, 304, 9; IX 879 d 7, 343, 34; 879 e 1, 343, 36. Les citations sont données suivant l'édition d'E. dès PLACES, Paris 1965, pour le texte grec, et l'édition de G.ZARBHANALEAN, Płatoni tramaxōsowt^{c}iwnk^{c} yałags ōrinac^{c} ew Minovs, Venise 1890, pour le texte arménien.

(4) Platon, Les Lois, VI 764 c 1, 194, 9; 764 c 2, 194, 10; VII 794 c 1, 232, 26; VIII 844 c 5, 297, 26; 849 e 5, 305, 12-13; IX 881 c 5, 346, 10; XI 913 d 5, 387, 8; 936 c 4, 418, 24; XII 954 b 7, 440, 16; 954 c 1, 440, 18. On rencontre aussi y-ōrinoł k^{c}ałak^{c}is (VI 759 a 7, 187, 1; 760 b 1, 188, 18) ardar k^{c}ałak^{c}in (VI 763 e 6, 193, 23-24), ōrinak^{c}ałak^{c} (XI 918 a 2, 392, 37; 920 c 5, 396, 13).

(5) E.BENVENISTE, Le vocabulaire des institutions indo-européennes, Paris 1969, vol.I, p. 367.

(6) Platon, Les Lois, III 686 e 1, 92, 5.

(7) Platon, Les Lois, III 688 a 1, 93, 38.

(8) Platon, Oeuvres complètes, tome XI (2^{e} partie), Les Lois, texte établi et traduit par E. des PLACES, Paris 1965, p.29, n.2 (689 d 3-4, 96, 13-15).

(9) P.CHANTRAINE, Dictionnaire étymologique de la langue grecque, Paris 1968-1980, s.v. πλατάνιστος.

(10) Gen. 30.37; Sirac. 24, 14 (=arm. 24, 19), où sōsi traduit πλάτανος

(11) Arist., Cat., 8 bis 25, 26, 27 ... passim; Dawt^{c}i anyałt^{c} p^{c}ilisop^{c}ayi matenagrowt^{c}iwnk^{c}, Venise 1932^{3}, p. 294, 1-2-3 ... passim.

(12) Ac.quaest. 1, 7, 25.

(13) par ex. mah 'mort', ambar 'depôt, magasin de vivres', čaš 'nourriture', seaw 'noir', mēg 'nuage', etc. .

(14) E.BENVENISTE, Expression indo-européenne de l'"éternité", dans BSL 38 (1937), pp. 103-112.

(15) E.BENVENISTE, Expression indo-européenne....., p.111.

(16) G.BOLOGNESI, Le fonti dialettali degli imprestiti iranici in armeno, Milano 1960, p. 54.

(17) H.HÜBSCHMANN, Armenische Grammatik, Leipzig 1897 (Hildesheim 1962), p. 302.

(18) I Tim.1, 17 δόξα εἰς τους αἰῶνας τῶν αἰώνων
pativ yawiteans yawiteanic^{c}
II Cor.11,31 ὁ ὢν εὐλογητος εἰς τους αἰῶνας
or ē ōrhneal yawiteans
Rom. 9, 5 εὐλογητος εἰς τους αἰῶνας
ōrhneal yawiteans.

(19) G.BOLOGNESI, Le fonti dialettali degli imprestiti iranici in armeno, Milano 1960, p. 44.

(20) M.LEROY, Grégoire Magistros et les traductions arméniennes d'auteurs grecs, dans 'Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales de l'Université libre de Bruxelles', vol.III (1935), pp. 263-294.

(21) PŁATONI IMASTASIRI, Tramaxōsowt^{c}iwnk^{c} Ewt^{c}iffon, Paštapanowt^{c}iwn Sokratay ew Timēos, éd. par H.Ars. Sowk^{c}rean, Venise, St.Lazare 1977.

(22) S.LUNAIS, Les auteurs latins, dans 'Recherches sur la lune', vol.I, Leiden 1979.

(23) Le mot grec est passé en latin comme emprunt sous les formes opsonium/obsonium, avec la valeur de 'ce que l'on mange avec le pain', mais chez Plaute il signifie 'vivres', 'provisions'.

(24) E.BENVENISTE, Le vocabulaire....., vol.I, p. 164-165.

(25) E.BENVENISTE, Le vocabulaire....., vol.I, p. 170.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИЯ И ДИАЛЕКТОЛОГИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

HISTORY AND DIALECTOLOGY OF THE ARMENIAN LANGUAGE

Ա.Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԱՐՍԵՆ ԱՅՏԸՆՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԲԱՆ

Արսեն Այտընյանի լեզվաբանական գործունեության առանցքային խնդիրը հայ գրական լեզվի ընտրությունն է: Գրական լեզվի ծիշտ ընտրությանը նպաստելու, այդ ընտրությունը հիմնավորելու նպատակ է հետապնդում նաև 1866թ. նրա ,,Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի,, աշխատության հրապարակումը: Այս աշխատությունը իր հատուկտուն ու պատվավոր տեղն ունի հայ լեզվաբանության ամենամեծ նվաճումների շարքում: Աշխատության բուն քերականական մասին նախորդում է մի սովարածավալ բաժին՝ ծևականորեն՝ ներածություն /,,նախաշավիղ,,/, սակայն ըստ էության՝ հայոց լեզվի պատմության և այն ժամանակի վիՅակի մի հանգամանալից մեծարժեք ուսումնասիրություն:

Գրական լեզվի ընտրության հարցը Այտընյանի համար հայոց լեզվի պատմության հետ սերտ կապված հարց է:

Լեզվաբանության պատմության մեջ 19-րդ դարը պատմական ուսումնասիրությունների իշխանության դար է: Այտընյանը հավատարիմ է իր ժամանակի գիտության դավանած սկզբունքներին: Նա լեզվի համաժամանակյա վիճակի քննությունը և համաժամանակյա խնդիրների լուծումը սերտորեն կապում է տարժամանակյա հարաբերությունների, անցումների ուսումնասիրման հետ:

Այտընյանը հանգամանալից քննության է ենթարկում գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերությունը 19-րդ դարում, երկու գրական լեզուների բախման ժամանակաշրջանում: Սակայն այդպիսի քննությունը նա բավարար հիմք չի համարում գրական լեզվի ընտրության համար, այլ անհրաժեշտ է գտնում գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության համակողմանի ուսումնասիրությունը: Դրան հասնելու համար նա նաև խորանում է գրաբարի ու աշխարհաբարի պատմության մեջ, քննում հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում նրանց փոխհարաբերության կըրած փոփոխությունները: Լեզվի պատմության գիտական ուսումնասիրությունը դիտավում է որպես խնդրի հնարավոր լուծումներից ամենամիշտն ընտրելու անհրաժեշտ պայման. ,,... այլևայլ կողմանց տարբերության

կնճիռը միայն Պատմությունը կրնա լուծել, և մանավանդ քննադատ կամ պատճառախնդիր պատմությունը,,[1]:

Պատմական հայեցակետով կատարվող ուսումնասիրության կարևորությունն ընդգծելով, ,,ներկան անցածով լուսավորելու,, պահանջն առաջ քաշելով հանդերձ՝ Ա. Այտընյանը չի ընկնում ծայրահեղության մեջ: Նա չի հավակնում լեզվական իրողության ժամանակակից վիճակի քննությունը փոխարինել նրա պատմության քննությամբ. գիտնականը լեզվի ուսումնասիրման համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերը դիտում է միասնության, փոխադարձ կապի մեջ, հավասարապես անհրաժեշտ է համարում թե մեկը և թե մյուսը: Լեզվական իրողությունների այս երկու կարգի հարաբերությունների կապի գիտակցումը և հաշվառումը հեղինակին հանգեցնում են ըավական ուշագրավ եզրահանգումների:

Հին և նոր գրական լեզուների փոխհարաբերությունը ճիշտ որոշելու համար հայացքը դարերի խորքը ուղղելով՝ Այտընյանը նկատի է առնում ոչ միայն գրաբարի, այլև աշխարհաբարի անցյալը:

Եվրոպական նոր ազգային լեզուների հաստատումն ուսումնասիրողները նշում են, որ այդ գործընթացին նպաստող խոշոր գործոն է եղել հումանիստների կողմից լատիներենի պատմության քննությունը, նրա աստիճանական զարգացման ընթացքի վերհանումը[2]: Այտընյանն ավելին է անում: Նա անհրաժեշտ է համարում անդրադառնալ ոչ միայն դասական գրական, այլև ժողովրդախոսակցական լեզվի անցյալին:

Աշխարհաբարի հնության մասին ենթադրություն է անում ,,Սեր,, թերթում լույս տեսած ,,Լեզու և առանձինն հայերեն լեզուն,, հոդվածի հեղինակը[3]: Այդպիսի ենթադրության հնարավորությունը գրաբարի կողմնակիցների դեմ բանավիճելու կռվան է դարձնում Մ. Նալբանդյանը[4]: Այտընյանը, սակայն, չի կարող բավարարվել ենթադրական անդումով: Հմուտ բանասերն իր դրույթների հիմնավորման համար փաստերի կարիք է զգում: Եթե Նալբանդյանն իր իրավացիությունը փաստարկում է փաստերի բացակայությամբ, ապա Այտընյանին այդպիսի իրավիճակը ստիպում է ծնռնարկել պակասող փաստերի որոնումներ: Դրա համար նա վերլուծական քննության է ենթարկում մատենագրության ընձեռած հարուստ փաստական նյութը: Հին տեքստերում ժողովրդական լեզվի տարրեր բացահայտելու փորձերում նա մեծ չափով հիմնվում է եվրոպական նոր լեզուների պատմությունից հայտնի իրողությունների ընդհանրացման վրա: Տարրեր լեզուներում ընդհանուր օրինաչափությունների առկայության ընդունումը Այտընյանին հնարավորություն է տալիս այլ լեզուների հետ զուգահեռներ անցկացնելով պարզաբանել հայերենի պատմության շատ իրողություններ:

Այսընյանը լեզվի զարգացումը դիտում և ներկայացնում է որպես աստիճանական, մեծ ժամանակահատված ընդգրկող փոփոխությունների շարք: Լեզվի պատմական փոփոխության ընթացքի այսպիսի մեկնաբանությունից էլ բխում է նորաբանությունների, լեզվում հանդես եկող նոր տարրերի գնահատումը: Ամենատարբեր լեզվական իրողությունների ժամանակագրությունը ներկայացնելիս Այսընյանը զգուշացնում է, որ նրանց գործածականության ժամանակը չի համընկնում ծագման ժամանակի հետ: Լեզվական նոր իրողությունը ծագելուց միայն երկար ժամանակ անց է օրինականացվում և հաստատվում, այնպես որ որևէ դարում վերակայակոչված ձևը անպայման ավելի շուտ պիտի ծագած լինի:

Փոփոխությունների այսպիսի աստիճանականությունը բնութագրում է ինչպես առանձին տարրերի փոփոխությունները, այնպես էլ լեզվի պատմության տարբեր փուլերի հաջորդումը, մի լեզվական որակի փոխարինումը ուրիշով: Հին համակարգի մեջ ծագում են նոր տարրեր, որոնք աստիճանաբար տարածվում են, ծավալվում և հանգեցնում են նոր համակարգի ձևավորմանը:

Այդ սկզբունքով առաջնորդվելով՝ Այսընյանն արդեն 5-րդ դարում տեսնում է աշխարհաբարի /,,ռամկորենի,,/ առանձին, ցրված վկայություններ, որոնց հիման վրա երևակայությամբ վերականգնում է առավել կամ պակաս ամբողջական պատկերը: Այդ պատկերը կազմելուն օգնում է ոչ միայն 5-րդ դարի առանձին փաստերի ընդհանրացումը, այլև հետագա դարերի ընծեռած տվյալների օգտագործումը՝ ետընթաց մտահանգումների շղթայով նախկին վիճակը վերականգնելու համար:

Այսպիսով, հայոց լեզվի հին շրջանի վիճակը համասեռ որակ չի համարվում: Այսընյանը հայոց լեզվի պատմությունը ներկայացնում է ոչ թե որպես միագիծ ընթացք և գրաբարի պարզ փոխարինում աշխարհաբարով, այլ որպես երկու տարբերակների բարդ ու տարաբնույթ փոխհարաբերությունների պատմություն: Նա գտնում է, որ 5-րդ և 19-րդ դարերը համապատասխանաբար գրաբարի և աշխարհաբարի բացարձակ մենիշխանության դարեր չեն. դրանք ավելի մեծ կլինի որակել որպես այդ տարբերակներից մեկի կամ մյուսի գերիշխման շրջաններ: Այսընյանը 5-րդից մինչև 19-րդ դարը հայոց լեզվի պատմությունը պատկերում է տարբերակների և նրանց մրցակցության հիման վրա, ներկայացնում այդ դարերի ընթացքում գրաբարի և աշխարհաբարի պայքարը, որն ավարտվում է գրաբարի արտամղումով և աշխարհաբարի հաղթանակով: Գիտականորեն հիմնավորված տեսական սկզբունքների և գրավոր վկայությունների խորագննին քննության հիման վրա նա ցույց է տալիս, թե ինչպես է գրաբարի և աշխարհաբարի հարաբերության մեջ գերիշխման-գերադասության

ուղղվածությունը ժամանակի ընթացքում շրջվում՝ անցնելով մի շարք անցումային աստիճաններով:

5-րդ դարում գրաբարը ,,ծաղկյալ կենդանություն,, է ապրում, և, իհարկե, գրականությունը ստեղծվում է այդ լեզվով: Այտընյանը գիտակցում է, որ այդ ժամանակաշրջանում աշխարհաբարը գրական լեզվի մեջ ժողովրդախոսակցականի առանձին տարրերի ներթափանցումով միայն կարող է ի հայտ գալ: ,,Ռամկորենի,, այդ փուլը բացահայտելու համար նա մատենագրական հուշարձանների լեզվի մանրակրկիտ քննական վերլուծություն է կատարում:

Իրադրությունը ժամանակի ընթացքում աստիճանաբար փոխվում է: 7-րդ դարում արդեն, ըստ Այտընյանի, հանդես է գալիս որոշ, թեկուզ և անկայուն, հավասարակշռություն գրաբարի և աշխարհաբարի միջև:

Այտընյանը տարբերակում է աշխարհաբարի զարգացման և ինքնուրույնացման աստիճաններ: Սկզբում /6-7-րդ դարերում/ մատենագրության լեզուն աշխարհաբարախառն գրաբար է. 8-10-րդ դարերի արձանագրությունների լեզուն արդեն գրաբարախառն աշխարհաբար է: Այտընյանը գտնում է, որ 10-րդ դարում գրաբարն արդեն իր ամբողջության մեջ մեռած, գրքային լեզու՝ գրաբարը է: 11-րդ դարում և նրան հաջորդող շրջանում /այն շրջանում, որը այժմ կոչվում է միջին հայերենի շրջան/ աշխարհաբարի մեջ կենդանի են միայն առանձին գրաբարյան տարրեր: 15-րդ դարից աշխարհաբարը ձեռք է բերում նոր որակ. սա ,,նոր աշխարհաբարը,, կամ ,,արդի հայերենն,, է, որը արդեն անվերապահորեն գերակշռում է գրաբարին: 19-րդ դարում գրաբարը լեզվում արդեն կատարված տեղաշարժը օրինականացնելու և ողջ գրականության մեջ հաստատելու նպատակով է մղվում:

Ըստ Այտընյանի, դարերի ընթացքում փոփոխվում է գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության ոչ միայն ուղղվածությունը, այլև բնույթը:

Այտընյանը մեծ մանրակրկիտությամբ է քննում 5-րդ դարում աշխարհաբարի գոյության հարցը. նա գտնում է, որ այդ հարցի լուծման համոզչությունից է կախված ողջ խնդրին տրվող լուծման ընդունումը:

5-րդ դարում աշխարհաբարի առկայության մասին դրույթը, իհարկե, վիճելի կարող է համարվել, այս կամ այն փաստի մեկնաբանությունը կարող է վիճարկվել: Սակայն բազմաթիվ փաստերի առկայությունն արդեն առնվազն վկայում է, որ գրաբարի ընդերքում հանդես են գալիս աշխարհաբարի առանձին տարրեր: Այլ բան է, որ Այտընյանը ,,ռամկորենի,, , որպես ամբողջության, գոյությունը դնում է գրաբարի կողքին և խոսում է որպես գոյություն ունեցած ենթադրվող ամբողջի որա-

կական անորոշության մասին այնտեղ, որտեղ իրականում գործ ունենք նոր լեզվական որակի տարրերի քանակային սահմանափակության հետ:

Այտընյանը, իհարկե, 5-րդ դարի ,,ոսկեկան,, լեզուն չի նույնացնում իր ժամանակի աշխարհաբարի հետ, այլ նրա մի հին փուլն է համարում[5], որը միայն երկարատև զարգացման ընթացքով է հասել 19-րդ դարի վիճակին և դարձել գրաբարից զորեղ գրական լեզու: Իսկ 5-րդ դարում գրաբարի և ոսկեդարենի հակադրությունը գործառական-ոճական տարբերակների՝ գրական և խոսակցական լեզուների հակադրություն է:

5-րդ դարի հայերենում առկա գործառական-ոճական տարբերակումը Այտընյանի տեսության մեջ ուրույն մեկնաբանություն է ստանում: Այս տարբերակման ըմբռնմանը հաջորդում և նրա հետ միաձուլվում է լեզվի հասարակական տարբերակման ըմբռնումը: Գրական լեզուն գիտունների, դպիրների՝ կիրթ խավերի լեզուն է, ինչպես նաև արքունիքի՝ իշխողների լեզուն: Դրանից տարբեր է ռամիկների լեզուն՝ առօրյա խոսակցության լեզուն: Գրաբարի և աշխարհաբարի միջև ընդգծված հասարակական տարբերակման մասին Ա. Այտընյանը խոսում է հատկապես 5-րդ դարին վերաբերող հատվածներում: Ավելի ուշ շրջանները բնութագրելիս նա ժողովրդական լեզուն հակադրում է ոչ այնքան բարձր խավերի, որքան պարզապես գրագետների ,,մատենագրական,, լեզվին, ինչպիսին է իրոք այդ դարերում գրաբարը:

Հանրալեզվաբանության ձեռավորումից գրեթե մեկ դար առաջ, անցյալ դարի կեսերին, լեզվի հասարակական տարբերակման որոշակի ըմբռնման առկայությունը /անշուշտ, առանց այդ ժամանակակից տերմինի օգտագործման/ ևս մեկ անգամ վկայում է Այտընյանի հայացքների խոր գիտականության և արդի լեզվաբանության խնդիրների հետ նրա ուսմունքի կապի մասին: Նշելով ավազանու և հասարակ ժողովրդի լեզուների տարբերակումն Այտընյանի կողմից՝ Ա.Ա. Աբրահամյանը նկատում է. ,,Սա է Այտընյանի նոր_նոսրը հայագիտության մեջ,,[6]:

Ծիշտ է, լեզվի հասարակական տարբերակման մասին առանձին դիտողություններ արվել են դեռևս անտիկ աշխարհի որոշ ճարտասանական երկերում[7], սակայն դրանք ավելի շատ վերաբերում են խոսքային տարբերակներին, խոսքի պատշաճության և, որ ավելի կարևոր է, մնում են առանձին դիտողություններ, չեն վերածվում բիչ թե շատ ամբողջական տեսության: Ինչ վերաբերում է Այտընյանի տեսության մեջ գործառական-ոճական և հասարակական տարբերակումների համադրմանը, ապա այս մոտեցումը զալիս է ոչ թե դրանց էությունը լավ չպատկերացնելուց, այլ դրանց յուրակերպ ու հետաքրքրական ըմբռնումից:

Այտընյանի դիտողություններից ու մեկնաբանություններից ըստ

էության ստացվում է, որ առկա է ոչ թե լեզվի անխառն հասարակական տարբերակում, այլ, կարելի է ասել, հասարակական-ոճական տարբերակում:

Այտընյանը գտնում է, որ հին հայերենի հասարակական-ոճական տարբերակները բացահայտելու համար լեզվաբանական ուսումնասիրությունից բացի անհրաժեշտ է նաև բանասիրական վերլուծության ենթարկել մատենագրական հուշարձանները: Ինքը Այտընյանը կատարում է այդպիսի վերլուծություն, որի շնորհիվ որոշակի կարգերի է բաժանում 5-րդ դարի մատենագրությունը՝ նշելով, թե այդ կարգերից ամեն մեկի մեջ ինչ չափով է ներթափանցում ժամանակի ,,ընտանեկան լեզուն,,[8]:

Խոսելով լեզվի հասարակական-ոճական տարբերակների գոյության մասին՝ Այտընյանը նրանց հակադրումը խզման չի հասցնում, նրանց մեջ տեսնում է անժխտելի միասնություն[9]:

Նա ժխտական պատասխան է տալիս 5-րդ դարում 19-րդ դարի նման երկու էապես տարբեր լեզուների առկայության վերաբերյալ հնարավոր հարցադրմանը: Լեզվաբանը գտնում է, որ գոյություն են ունեցել միասին ոճական-գործառական տարբերակներ, որոնք տարբերվել են իրարից ,,այնչափ միայն՝ որչափ որ միշտ և ամեն տեղ կենդանի լեզու մը յուր բարձրագույն և խոնարհագույն կարգերը կունենա, յուր գրավորականն ու ժողովրդականը կը զանազանե,,[10]: Լեզվի հասարակական տարբերակներին Այտընյանի տված մեկնաբանությունը բարձր գնահատելով՝ Է.Բ. Աղայանը նկատի է ունենում առաջին հերթին այն, որ Այտընյանը դրանց տարբերությունները ստորադասում է լեզվի միասնության և ընդհանրության ըմբռնմանը[11]:

Ինչպես այս, այնպես էլ շատ այլ դեպքերում Այտընյանը լեզվական նոր որակի առաջացումը որոշում է երկու չափանիշով. դրանցից մեկը ,,հատուկ կերպարանքն,, է, մյուսը՝ ,,բարոյապես զատված,, լինելը[12]: Այն փոքր փոփոխությունները, որ աստիճանաբար կատարվում են լեզվում, վերաբերում են նրա առանձին տարրերին, որոնց զումարումից ստացվում է լեզվի ,,կերպարանքը,,: Սակայն տարրերի անընդհատ ձևական փոփոխությունները չեն կարող որոշակի սահմանի դեր կատարել: Այդ փոփոխություններն անհետևանք չեն մնում լեզվի էության համար: Երևութական կողմի փոփոխությունը վերջին հաշվով կապվում է էության փոփոխության հետ՝ և՛ պատճառային, և՛ հետևանքային կապերով: Այն ժամանակ, երբ կատարվում է նաև ներքին տեղաշարժ, երբ արտաքին փոփոխությունները դառնում են ներքին փոփոխության ցուցիչ, երբ արտաքին ձևափոխությունների մեջ ու միջոցով բացահայտվում է ներքին փոփոխությունը, կատարված փաստ է դառնում անցումը լեզվական մի ո-

րակից մյուսին, որը և՛ արտաքուստ, և՛ ներքուստ տարբերվում է նախորդից: Այս երկու չափանիշների ընդգրկման սկզբունքի հետևողական կիրառումով է Ա. Այտընյանը որոշում երկու՝ իրար հաջորդող կամ գոյակցող, տարբերակների հարաբերությունը:

Ա. Այտընյանը փորձում է հասարակական-ոճական տարբերակները և նրանց միասնությունը դիտել զարգացման մեջ, հաշվի առնել կրած փոփոխությունները ու դրանց հետևանքները:

Հասարակական տարբերակները, ծագելով որպես ոճական տարբերակներ, մրցակցության մեջ են մտնում միմյանց հետ: Նրանց մրցակցությունը դառնում է լեզվի զարգացման շարժիչ ուժ, դասական լեզուն աստիճանաբար փոխարինվում է ,,ռամկականով,,:

Ռոմանական լեզուների ծագումը քննելով՝ եվրոպական լեզվաբանության մի շարք ներկայացուցիչներ ընդունում են նրանց զարգացումը ժողովրդական լատիներենից: Լատիներենի անկումը և նոր լեզուներով փոխարինվելը պատմաբանավում են լատիներենի անմիասնականությամբ և տարբերակվածությամբ[13]: Սակայն այս դեպքում ավելի շատ գործ ունենք ակնհայտ փաստերի շարադրման, քան տեսության կառուցման, լեզվի զարգացման ու տարբերակվածության փոխկապակցության բացահայտման հետ, ինչին հանդիպում ենք Ա. Այտընյանի մոտ:

10-րդ դարից հետո արդեն սրվում է աշխարհաբարով գրված և ժողովրդին հասկանալի գրքերի կարիքը: Գրաբարն ու ռամկորենն այնքան են հեռանում իրարից, որ վերածվում են արդեն որպես առանձին լեզուներ գիտակցվող որակների: Դրանք երկուսն էլ գործածվում են գրականության մեջ՝ գործառելով տարբեր ոլորտներում:

Դասական և նոր լեզուների գործառական տարբերակման իրողությունն Այտընյանին արդեն հայտնի էր եվրոպական նոր /ժողովրդական/ լեզուների և լատիներենի պատմությունից, այդպիսի բաշխումը վկայված է նաև հունարենի պատմության մեջ: Հայոց լեզվի պատմությունը քննելով՝ Այտընյանը այստեղ ևս, մանավանդ 10-րդ դարից հետո, ակընհայտ տարբերակում է տեսնում գրաբարի և աշխարհաբարի գործածության ոլորտների միջև. ,,Առաջինը, գրաբարը, որ ավելի գործածականն է, գիտնոց և եկեղեցականաց ուղղված՝ նվիրյալ է ծառերու, շարականներու և ուրիշ քերթվածոց. երկրորդը, աշխարհաբարը, ժողովրդյան կը խոսի, և ասով կը գրվին՝ առակներ, տաղեր, մշակության և բժշկության գրքերը, և մանավանդ հրապարակական արձանագրությունները, անտարակույս նաև նամակներն ու նմանները,,[14]:

15-րդ դարից սկսվում է նոր հայերենի շրջանը: Տասից ավելի դարերի ընթացքում կատարված փոփոխությունները նոր ժամանակներում

այնպիսի չափեր են ընդունում, որ գրաբարն ու աշխարհաբարը արդեն որոշակիորեն որակվում են որպես տարբեր լեզուներ: Ինչպես ,,բարոյապես,, , այնպես էլ ,,կերպարանքով,, տարբերվելով՝ իրենց տարբերակման պատմությունը որպես հասարակական-ոճական տարբերակներ սկսած, ապա որպես գործառական տարբերակներ հանդես եկած գրաբարն ու աշխարհաբարը ղառնում են հայոց լեզվի ժամանակային տարբերակները /հին և նոր գրական լեզուներ/:

Այսպես հայոց լեզվի պատմության քննությամբ Ա. Այտընյանը հիմնավորում է գրական լեզվի ընտրությունը:

,,Նախաշավիղը,, հայերենի առաջին լուրջ պատմական ուսումնասիրությունն է[15]: Եվ իր հայագիտական նշանակությամբ, և առաջ քաշված տեսական դրույթներով այն ծառք է բերում անժխտելի մեծ արժեք, որոշ հարցերում գերազանցում ժամանակի ոչ միայն հայ, այլև արտասահմանյան լեզվաքանության մակարդակը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այտընյան Ա. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, Նախաշավիղ, էջ 330:
2 Տես Гуковская З.В. Из истории лингвистических воззрений эпохи Возрождения /теория языка у Плеяды/. Л., 1940, с. 23:
3 Տես ,,Լեզու և առանձինն հայերեն լեզուն,, , Սեր, 1860, թ. 9, էջ 75:
4 Տես Նալբանդյան Մ. Նամակ կոմս Էմմանուելին, Երկերի լիակատար ժողովածու, Ե. , 1947, հ. II, էջ 299:
5 Համմ. Այտընյան Ա. Նշվ. աշխ., էջ 120:
6 Աբրահամյան Ա.Ա. Արսեն Այտընյանի ,,Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի,, աշխատության ,,Նախաշավիղը,, , Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, Ե., 1945, № 2, էջ 222:
7 Տես, օր., Аристотель. Риторика, Ш, 7. В кн.: Античные риторики. М., 1978, с.138; Марк Туллий Цицерон. Об ораторе, Ш, 211. В кн.: Марк Туллий Цицерон. Три трактата об ораторском искусстве. М., 1972, с. 248; Կուինտոսի Որսեցւոյ Փլակկոսի Արուեստ քերթողական, Վենետիկ, 1847, էջ 23: Дионисий Галикарнасский. Лисий, 9. - В кн.: Античные теории языка и стиля. М.; Л., 1936, с. 197; Марка Фабия Квинтилиана Двенадцать книг риторических наставлений. Спб., 1834, ч. П, с. 314-318; Секст Эмпирик. Против грамматиков. - Сочинения в двух томах.

М., 1976, т. 2, с. 70, 100; Քէոսկնեա Ցաղագս մարտասանական կրթութեանց, Ե., 1938, էջ 122, 124:
8 Տես Այտընյան Ա. նշվ. աշխ., էջ 58-60:
9 Տես Ն. տ., էջ 84:
10 Այտընյան Ա. նշվ. աշխ., էջ 120:
11 Տես Աղայան Ե.Բ. Հայ լեզվաբանության պատմություն /Սկզբից մինչև մեր օրերը/, Ե., 1958, հ. 1, էջ 275:
12 Համմ. Այտընյան Ա. նշվ. աշխ., էջ 32:
13 Տես Шлегель Ф. История древней и новой литературы. Спб., 1834, ч. I, с. 299-300; Гумбольдт В. фон. О различии организмов человеческого языка и о влиянии этого различия на умственное развитие человеческого рода. Спб., 1859, с. 269; Гейзе К.В.Л. Система языковедения. Воронеж, 1864, ч. I, с. 239-240:
14 Այտընյան Ա. նշվ. աշխ., էջ 147:
15 Համմ. Ջահուկյան Գ.Բ. Լեզվաբանության պատմություն, Ե., 1960, հ. I, էջ 493:

Ս.Մ. ԱՆԹՈՍՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՀԱՅԵՐԵՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Գրաբարի խոնարհման ամբողջ համակարգում չկա մի ըներականական կարգ, որի դրսևորումն այնքան բազմազան լինի, այնքան բարդ և այնքան անհատակ ու խառնակ վիճակ ներկայացնի, որքան կրավորականության դրսևորումը:

Գրաբարում կրավորականությունն առավելապես դրսևորվում է ի և ա մասնիկների միջոցով. այդ հատկապես երևում է ի խոնարհման բայերում: Ներկայի հիմքից կազմվող ձևերում ի ունեն. 1/Ներկան /սկսանիմ/, 2/առաջին ապառնին /սկսանիցիմ/, 3/Ըղձական հրամայականը /մի սկսանիր, մի սկսանիք/: Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում՝ աճանցավոր բայերի բուն հրամայականի եցական /սկսիր/:

Իսկ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում ա մասնիկ ունեն, ա/Անցյալ կատարյալը /սկսայ/, բ/Երկրորդ ապառնին /սկսայց/, գ/Հոգնակի հրամայականը /սկսայք/:

Գրաբարում կրավորականությունն ի-ով է արտահայտվում, երբ ներգործականում ունենք և. այդպես են.

ա/Ե խոնարհման բայերի ներկան ու առաջին ապառնին /գրեմ-գրիմ, գրիցեմ-գրիցիմ/.

բ/Ա խոնարհման բայերի առաջին ապառնին /աղաչեմ-աղաչիմ, զողանայեմ-զողանայիմ/.

գ/Ե խոնարհման բայերի արգելական հրամայականը /մի գրեր-մի գրիր, մի գրէք-մի գրիք/:

-ի մասնիկը որպես կրավորական ցուցիչ հանդես է գալիս նաև որոշ խոնարհումների հրամայականում. ինչպես՝ արկ-արկիր /Ե ածանցավոր/, աղա-աղացիր /Ա պարզ/, քող-քողիր /Ու պարզ/:

Մնացած բայաձևերում կրավորականությունն արտահայտվում է ա մասնիկով: Ե-ի հերթագայության ժամանակ կրավորականություն է արտահայտում է-ա, ինչպես՝ ի-ա հերթագայության դեպքում կրավորականությունն արտահայտում է ե-ա: Այսպես են Ե պարզ և ածանցավոր, այլև Ա,Ու պարզ խոնարհումների անցյալ կատարյալն ու երկրորդ ապառնին

/գրեցի–գրեցայ, արկի–արկայ, գրեցից–գրեցայց, արկից–արկայց, աղացի–աղացայ, աղացից–աղացայց, թողի–թողայ, թողից–թողայց/:

Կրավորականության արտահայտության այլ միջոցներ ևս կան. Ը խոնարհման պարզ բայերը, անշուշտ, ի պարզերի հետևողությամբ, հրամայականի կրավորականությունն արտահայտում են անցյալի հիմքը շեշտի տակ դնելով /գրեաց–գրե՛ա–գրեաց/: Իսկ Ը,Ա,ՈՒ պարզ խոնարհումների, այլև Ը ածանցավոր բայերի հոգնակի հրամայականում կրավորականությունն արտահայտվում է -ըը,ը, մասամբ և -ա,յք վերջավորություններով:

Եթե բացառենք ի խոնարհման բայերի չեզոք և ներգործական սեռի իմաստով կիրառությունները, ապա վերևի բոլոր դրսևորումներում կրավորականությունը կրավորականի իմաստ է արտահայտում:

Մյուս կողմից՝ մի շարք ժամանակներում ունենք ընդհանրական ձևեր, որոնք, կախված կիրառությունից, նույն ձևով միաժամանակ և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ են արտահայտում, ընդ որում նույն լծորդություններով են խոնարհվում նաև չեզոք սեռի բայերը: Այսպես են.

ա/անցյալ անկատարը՝ բոլոր խոնարհումների բայերում.

բ/Ա,ՈՒ պարզ և ածանցավոր խոնարհումների ներկան՝ աղամ ,,աղում եմ, աղացվում եմ,, , զողանամ ,,զողանում եմ, զողացվում եմ,, ,,սպասում եմ,, , զարմանամ ,,զարմանում եմ,, , թողում ,,թողնում եմ, թողվում եմ,, , կալնում ,,վերցնում եմ, վերցվում եմ, այլև՝ մնամ, զբօսնում ,,զբոսնում եմ,,:

գ/ՈՒ,Ա ածանցավոր բայերի անցյալ կատարյալը՝ զողացայ ,,զողացա, զողացվեցի,, , կալայ ,,վերցրի, վերցվեցի,, , նաև՝ զարմացայ ,,զարմացա,, , զբօսայ ,,զբօսնեցի,,:

դ/Ա,ՈՒ պարզ և ածանցավոր խոնարհումների արգելական հրամայականը՝ մի աղար ,,մի աղա, մի աղացվիր,, , մի զողանար ,,մի զողացիր, մի զողացվիր,, , մի թողուր ,,մի թող, մի թողնվիր,, , մի կալնուր ,,մի վերցրու, մի վերցվիր,, , ինչպես նաև՝ մի զբօսնուր ,,մի զբօսնիր,, , մի մնար ,,մի մնա,,:

ե/ՈՒ խոնարհման պարզ և ածանցավոր բայերի առաջին ապառնին՝ թողուցում ,,թողնեմ, թողնվեմ,, , կալնուցում ,,վերցնեմ, վերցվեմ,, զբօսնուցում ,,զբոսնեմ,, և այլն:

Այս բոլորի վրա ավելացնենք նաև, որ.

ա/երկրորդ ապառնու հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերը /ուստի և հորդորական հրամայականի ձևերը/ բոլոր սեռերի բայերի համար ընդհանուր վերջավորություն ունեն.

բ/անորոշ դերբայը կրավորականի հատուկ ձև չունի.

գ/ԵՂԱՆԻ խոնարհումների ենթակայական դերբայը կրավորական իմաստով կիրառություն չունի.

դ/անցյալ և ապառնի դերբայները միևնույն ձևով կարող են արտահայտել թե՛ ներգործական, թե՛ կրավորական և թե՛ չեզոք սեռի իմաստ:

Գաղտնիքը պարզ է... Ահա թե ինչու Արսեն Այտընյանը գրում է. ,,Որչափ որ հին հոլովները որոշ են, և նորերը պարզ, բայց անորոշ.. նույնչափ ալ նոր խոնարհմունքն որոշ են և հինները անորոշ. գրաբարի մեջ յուրաքանչյուր բային, գոնե 12 անգամ՝ կրավորականն ու ներգործականը նույնանան իրարու հետ, երբեմն նաև մինչև 30-40 անգամ, իսկ արդի լեզվին մեջ և ոչ մի անգամ մը,,[1]:

Գրաբարում ոչ միայն կրավորականության դրսևորման մի հատուկ մասնիկ չկա, այլև տրամաբանական հետևողականությամբ դրսևորումների մի միասնական սկզբունք իսկ չկա: 1/Միևնույն ձևը մի դեպքում արտահայտում է սեռի իմաստ /գրիմ ,,գրվում եմ,,/, մի այլ դեպքում չի արտահայտում /բուսանիմ ,,բուսնում եմ,,/, 2/այս կամ այն խոնարհման պատկանող բայը որոշ ժամանակներում ունի կրավորականի դրսևորումներ /թողի-թողայ/, սակայն այլ ժամանակներում չունի /թողում-նույնը/, 3/նույն բայի մի ժամանակում կրավորականությունը ի մասնիկով է արտահայտվում /աղայցեմ-աղայցիմ/, մեկ ուրիշ ժամանակում՝ ս մասնիկով /աղացի-աղացայ/ և այլն, և այլն:

Իսկ ինչն է պատճառը. անմիօրինակության ու բազմազանության կարևոր պատճառն այն է, որ որևէ ժամանակում կրավորական բայաձևերը կազմվում են ոչ թե եզակի 1-ին դեմքը հիմք ընդունելով, այլ յուրաքանչյուր բայաձև կազմվում է իր ներգործական ձևը հիմք ընդունելով: Սակայն ըստ պատճառն, անշուշտ, կրավորական մի միասնական մասնիկի գաղափարն է գերբերում:

Դեռևս դասական գրաբարի շրջանում կրավորականության դրսևորման այս լարյուրինթոսը նեղություն է պատճառել մեր մատենագիրներին: Ահա թե ինչու նրանք ներգործական և կրավորական իմաստների հատակ արտահայտության միջոցներ են փնտրել: Դիցուք, եզնիկն ուզում է արտահայտել պաշտել և պաշտվել իմաստները: Այդ երկուսի դիմաց գրաբարն ունի մեկ ձև միայն՝ պաշտել. մինչդեռ ներգործական և կրավորական իմաստների հստակացումը շատ կարևոր է արտահայտվող միտքը ճիշտ ընկալելու համար: Ահա թե ինչու նրան չի բավարարում պաշտել բառը պաշտել և պաշտվել իմաստներով, և նա դիմում է այլ լեզվամիջոցի. ,,Եւ իբրեւ ւօսուն ընտանով անշշուկն բողոքէ՝ եթէ չեմ արժանի պաշտօն առնլոյ /= պաշտվելու/ այլ պաշտօն հաղկանելոյ /= պաշտելու/: ,,Որդի մար-

դոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել,, /Մատթ., ի 28/:

Եվ այսպես, դեռևս դասական դրաբարում մենք գտնում ենք նոր-գործական ու կրավորական իմաստների հստակացման համար գործադրված մի շարք լեզվամիջոցներ, հատկապես անցյալ-ցեղբայ-ժ-լինիմ կազմութ-յունները, ինչպես՝ ,,Այ սուտ եւ չարագործ, ժուեալ լինցի /= թող տրվի/ քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի,, /Եզնիկ/:

Այս կազմութ-յունները շատ կիրառական էին հատկապես անկատար բայերի բուն հրամայականում. արա, արարէք-արարեալ լեր, արարեալ լերուք և այլն:

Դիտված է, որ կրավորականի իմաստի վերևի կազմութ-յուններն առավելապես հատուկ են Ա և ՈՒ խոնարհումներին, որոնց հիմնական ժամանակները ներգործաձև-կրավորաձև տարբերակված դրսևորումներ չունեն: Հետագայում համաբանութ-յան և ընդհանրացման օրենքով տարածվել են նաև Ը խոնարհման բայերի վրա:

Գրաբարի կրավորականութ-յան դրսևորման համակարգի մեջ ըստ ևրևութ-յին առաջին մեղքվածքը եղավ Ը խոնարհման բայերի անորոշ դերբայի կրավորականի, ուստի և Ի խոնարհման բայերի՝ անորոշ դերբայում ը վերջավորութ-յամբ հանդես գալը, որ գտնում ենք դեռևս 5-րդ դարում, եղբայական շրջանում ,,Բայց զվիշապացն մանուածս, ահագին բերանաբացութեամբ ուռուցեալ ի փչմանէ օդոյն, ոչ ինչ ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ միայն իբրեւ զեռան ինչ աղամանդեայ խընայրհիլ ի ծով,, /Մ. Խորենացի/:

7-րդ դարում սա արդեն տիրապետող ձև էր: Այդ ձևը կիրառում է նույնիսկ Սեբեոս պատմիչը, որ լեզվի հարցում պահպանողական է. ,,Ապա յայնմ ժամանակի Հայկն Արեթածին ոչ կամեցաւ հնազանդել ի ծառայութիւն Բէլայ արքայի,, /Սեբեոս/: Միաժամանակ Ը խոնարհման բայերի անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքը ևս սկսեց օգտագործվել կրավորական հատուկ ձևով՝ ըը վերջավորութ-յամբ, ինչպես՝ ,,Ջի անմարմինն մարմնանայր, եւ անտեսանելին տեսանիը /= տեսնվում էր/, անշաւշափելին շաւշափիը /= շոշափվում էր/, անժամանակն սկսանիը/ = սկըսվում էր /Սեբեոս/:

Հակառակ առանձին հեղինակների լեզվական պահպանողականութ-յան, գրաբարի կրավորականութ-յան պարզեցման ձգտումը դրսևորման նորանոր ձևեր էր ստանում: Վերևի ձևերը, որքան էլ մասամբ օգտակար, անբավարար էին կրավորականութ-յան ամբողջական պարզ դրսևորման տեսակետից: Եվ լեզուն գտավ կրավորականի ընդհանրական մի նոր մասնիկ՝ ուց-վ: Արդ՝ ինչ մասնիկ է սա: Հայտնի է, որ գրաբարում Ու խոնարհման բայերը կրավորականի դրսևորման իմաստով աղքատ են. ածանցավոր-

նները ներգործական-կրավորական դրսևորման ոչ մի հակադրություն չունեն, իսկ պարզերը ունեն միայն 2-րդ ապառնիում /քողից-քողաց/, անցյալ կատարյալում /քողի-քողաց/ և բուն հրամայականում /քո՛ղ-քողի՛ր, քողե՛ք-քողարո՛ւք/: Գեաերմանի կարծիքով՝ ՈՒ խոնարհման բայերում սկսեցին օգտագործնել զրաբարի կրավորականության դրսևորման առավել ընդհանուր ի մասնիկը: Այս դեպքում, ասենք, ՈՒ պարզ խոնարհման զենուլ և քողուլ բայերն սաացան զենու-ի-լ, քողու-ի-լ ձևերը: Մի անգամ որ ու-ի-ի-լի հնչյունակապակցությամբ կրավորականը կազմըվել էր արդեն, այնուհետև ընդհանրացման օրենքով տարածվեց նաև մյուս խոնարհումների վրա՝ առաջ բերելով ու-վ, ե կրավորական մասնիկը:

Գեաերմանի այս բացատրությունն ընդունում են Հյուբշմանն ու Կարստը: Սակայն, թվում է, ավելի բանական է Ա. Այտընյանի տված բացատրությունը. զրաբարում կային -ու-ած վերջավորությամբ ձևեր, որոնցում, միշտ է, թեև ու-ն հատկապես կրավորականի իմաստ չէր արտահայտում, սակայն -ած, -ու-ած կազմություններն ինքնին առավելապես կրավորականի իմաստով էին ընկալվում: Այաընյանի կարծիքով, հենց սրանից է ծագել մեր կրավորական վ մասնիկը:

Հ. Աճառյանը ,,Լիակատար քերականության,, մեջ բերում է ե՛ մեկ, ե՛ մյուս բացատրությունը, սակայն որոշակի վերաբերմունք չի արտահայտում, քանի որ պարզ չէ, թե ,,միջին հայերենում ինչպես է հնչվում կրավորականի վերջավորությունը,,[2]:

Կրավորականի կազմության զրաբարյան ձևերը միջին հայերենում հանդես զալիս են, սակայն ոչ թե որպես համակարգ, այլ որպես հնաբանություն. Միջին հայերենի կրավորական մասնիկը վ-ն էապես դրվելով անորոշում դերբայական վերջավորություններից առաջ, այնուհետև հանդես է գալիս նաև մյուս դերբայներում և բայի խոնարհված ձևերում, օրինակ՝ ,,Եթե ուրդի, որ վասն առելութեան լինել ըլել քաժանվելն...,, /Ս. Գունդստապլ/, ,,...զի այս չրերս, որ խաղնված ունին ի սկզբանե,, /Գրիգորիս/, ,,Եկեղեցի վկայե, որ աղեկ մարդ լինի, ևս ընդունվի,,/Ս. Գունդստապլ/, ,,Բաղչի դուռն է բացվեը մեջ քո դարպասին,, /Սաղաշ Հովնաքան/ և այլն:

Կրավորական վ մասնիկը փոխանցվեց նաև հայերենի բարբառներին ու մեր նոր գրական լեզուներին: Թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ գրականում կրավորականությունն արտահայտվում է վ մասնիկով: Արևելահայ գրականում կրավորական բայերը -վել վերջավորություն ունեն և խոնարհվում են Ը խոնարհման պարզ բայերի նման, մինչդեռ արևմտահայ գրականում ունեն -ուիել վերջավորությունը և հետևում են Ի խոնարհ-

ման:

Կրավորականի վ ընդհանուր մասնիկը արևելահայ գրականում պատճառ դարձավ մի [illegible] բարդության. արևելահայ գրականում մի շարք բայեր թեև վ ածանց են ունենում, սակայն կրավորական չեն, ինչպես՝ դիզվել, կուտակվել, գալարվել, առալել ևս՝ բնակվել, հրաժարվել, հքվել, սիրահարվել, հարձակվել և այլն: Սրանք չեզոք սեռի բայեր են: Իսկ արևմտահայ գրականում, ինչպես նշում է քերական Հովհ. Գաղանճյանը, ,,շատ մը եւ վերջավորությամբ /իմա ներգործական սեռի - Ս.Ա./ բայեր ունին նաև իրենց չեզոք ձևերը իւ վերջավորությամբ, օրինակ՝ մաշել-մաշիլ /= մաշվել/, մարել-մարիլ, ազատել-ազատիլ /= ազատվել/ և այլն[3]": Թեև հեղինակը որպես չեզոք է գնահատում այս բայերը, սակայն նրանք օգտագործվում են նաև կրավորականի իմաստով՝ ներգործող խնդրով, ուրեմն՝ գրաբարի կրավորականի մի մնացորդ է սա:

Վ մասնիկը գրաբարից վերցնելով՝ աշխարհաբարն այն դարձրեց կրավորականության ստահայտության ընդհանրական մի ձև՝ վերջ տալով գրաբարի կրավորականության դրսևորման լայնությունին: Անվիճելիորեն, աշխարհաբարն այս հարցում ցերացանցում է գրաբարին, քանի որ այդ յունը լեզվի համար կարևոր դրական հատկանիշ է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ա. Այտընյան, ,,Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 69:

2 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ.IV բ, էջ 327, Երևան, 1961:

3 Հ. [illegible], Նոր քերականություն հայոց լեզվի, Կ. Պոլիս, 1924, էջ 91:

Վ.Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Մի խումբ վիեննացի Մխիթարյանները՝ Հովսեփ Գաթրճյան, Մաղաքիա Գարագաշյան, Ղևոնդ Հովնանյան և այլք, ուսումնասիրելով 5-րդ դարի առաջին կեսի գրականությունը, եզրակացրին, որ այդ գրականության լեզուն ու ոճը զանազանվում են դարի 60-ական և հետագա թվականների գրական լեզվից: Առաջին շրջանի գրական լեզուն կոչեցին ոսկեդարյան, 460-ից հետո գրված գրքերի լեզուն կոչեցին ետ-ոսկեդարյան:

Վենետիկի Մխիթարյանները, նրանց հետևողությամբ նաև այլ բանասերներ մերժեցին այդ տեսակետը. բայց այդ տեսակետը ուներ մեծ թվով կողմնակիցներ, որոնք և՛ որակով, և՛ քանակով նշող մեծամասնություն կազմեցին. սրանք և՛ մերազնյա հայագետներ էին, և՛ օտար:

Հակառակորդներից ամենաուժեղ ելույթը ունեցավ Արսեն Բագրատունին, որի ելույթը դժբախտաբար ավելի գրականագիտական էր, քան լեզվաոճական:

Այդ ելույթից հետո հարցը ըստ էության ու խորության այլևս չքննվեց, ուստի Վիեննայի Մխիթարյանների կարծիքին գրեթե համընդհանուր ճշմարտության տեղ հատկացվեց:

Արսեն Այտընյանը, որ 19-րդ դարի մեր ամենախոշոր քերական լեզվաբանն էր, նույնպես լռելյայն ընդունեց այդ տեսակետը, բայց լինելով փաստերի վրա հենվող և փաստերից միայն հետևություններ հանող գիտնական, այն տեսակետն է հայտնել, որ Փ. Բուզանդը լեզվով ու ոճով ավելի մոտ էր Ղ. Փարպեցուն, քան Կորյունին ու Ագաթանգեղոսին, երբ Ն. Բյուզանդացին Կորյունի, Ագաթանգեղոսի, Բուզանդի գործերը համարում էր մի հեղինակի աշխատություն: Ուրեմն ըստ Այտընյանի առաջին շրջանի ամենաոսկեդարի հեղինակը լեզվական առումով ավելի մոտ է երկրորդ շրջանի ամենավերջին հեղինակին, քան իր ժամանակակիցներին /խոսքը վերաբերում է 5-րդ դարին/:

Այտընյանի այս տեսակետը առանց որևէ վիճարկության ու փաստարկման համընդհանուր ժխտումն է ոսկեդարյան և ետ-ոսկեդարյան լեզվական բաժանումի:

Լինելով այդ բաժանման խանդավառ հետևողներից մեկը՝ լոկ հետաքրքրության համար հետամուտ եղանք այդ խնդրին և նկատեցինք, որ Վիեննայի Մխիթարյանների այդպիսի բաժանումը ամենից առաջ նմանակություն է լատինական լեզվի նման բաժանման, մի լեզու, որ գործում էր հզոր մի կայսրության մեջ, որտեղ հասարակական ու տնտեսական համակարգը բոլորովին զանազանվում էր հայկականից, որտեղ լեզվական բաժանման հիմքը հիսուն տարի չէր, և գոյություն ուներ տարբեր ոճերի գրական լեզու:

Երկրորդ՝ որոշ դեր է խաղացել նաև երիտասարդ Մխիթարյանների ոգևորությունը առաջին շրջանի մեր գրական գործիչների հանդեպ ածած սիրո հետևանքով:

Ամառյանը, նկատի ունենալով Վիեննայի Մխիթարյանների առաջին և հետագա գործիչների լեզվի շրջանաբաժանման հիմք ծառայող բոլոր տվյալները, դրանք ամփոփել է հետևյալ կետերի մեջ.

1/ ոսկեդարյան հայերենը չգիտե մի խումբ բառեր, որ գործածական են ետ-ոսկեդարյանում.

2/ մի խումբ բառեր ձևով քիչ տարբեր են ոսկեդարյան և ետ-ոսկեդարյան հայերենում.

3/ ոսկեդարյան հայերենում նախամասնիկներով բառեր չեն գտնվում.

4/ ամեն բառը ոսկեդարյան հայերենում բարդվում է միայն բայարմատի հետ, բայց ոչ ածականի.

5/ ունի մասնիկով բառեր չկան.

6/ ցան մասնիկը ընավ չի գործածված.

7/ ընդ մասնիկը անգործածական էր.

8/ այլ մասնիկը միանում է միայն տեղ ցույց տվող բառերին.

9/ ող և եալ ածանցներով դերբայները սովորական չեն ոսկեդարյան հայերենում.

10/ ան մասնիկով կազմված բացասական բառերը չեն կարող իրենց վերջում կրել եալ մասնիկը.

11/ իլ մասնիկով անորոշ դերբայ չկա.

12/ ոսկեդարյան հայերենը սիրում է բաղաձայնույթներ գործածել.

13/ ոսկեդարյան հայերենում խաղ բառը բարդության սկզբում ունի անարգական նշանակություն, իսկ բարդության վերջում սովորական նշանակությամբ է.

14/ ոսկեդարյան հայերենում որոշ բառեր ձևով զանազանվում են.

15/ ոսկեդարյան հայերենը սիրում է պարզ բայի փոխարեն դարձվածքով արտահայտել.

16/ ըղեմ վերջավորությամբ բայեր և ըղուքիւն կազմությամբ գոյականներ ոսկեդարյան հայերենում չկան.

17/ ըն բացասական մասնիկի փոխարեն ոսկեդարյան հայերենը գործածում է ըղանց կապը.

18/ ոսկեդարյան հայերենը ասում է աշխարհ Հայոց, աշխարհ Պարսկաստանացւոց, և ոչ թե Հայաստան, Պարսկաստան:

Այս 18 կետերում են ամփոփված այն զանազանությունները, որոնք բաժանում են ոսկեդարյան հայերենը ետ-ոսկեդարյան հայերենից:

Առաջին կետում ասված է, թե ոսկեդարյան հայերենը չունի ըղըվանք, ըղոհել, հրաշք, փաղաքամ, վսեմ, վեհ, աղքի, քաղ, քաջ, սեղ, ցաղ, գանձել, սաղարթ, նեղակ, տեսակ, քանակ, ողակ, էակ, հրեշտակ, ճաշակել, ճաղարը և այլն:

Վիճելի մեկնաբանների ուշադրությունից վրիպել է քառակիրառության հաճախականության կարևոր հարցը և ոլորտի խնդիրը: Եթե 5-րդ դարում մեղուների մասին գիրք գրված լիներ և փեթակ բառը չգործածվեր այնտեղ, արդ կերպով կարելի էր ասել, որ փեթակ բառը 5-րդ դարի առաջին կեսում չի եղել:

Հաճախականության և ոլորտի հարցը շատ կարևոր է բառերի ուսումնասիրության համար, որովհետև եթե հիշյալ բառերը չկան ոսկեդարյան շրջանում, չկան նաև ետ-ոսկեդարյան շրջանում: Վիճելի երիտասարդ մեկնաբանների մի սխալն էլ այն է, որ ոսկեդարյան կոչված շրջանը ուսումնասիրելով, բարձրիթողի են արել հաջորդ շրջանը: Եթե նրանք ուսումնասիրեին նաև հաջորդ շրջանը, ապա կնկատեին, որ Խորենացին նույնպես չունի փաղաքամ, վսեմ, սեղ, հրաշք, փեթակ, տեսակ, քանակ, ողակ, էակ, տղմանք. հրճուել, Եղիշեն չունի փաղաքամ, վսեմ, տղմանք, ըղոհել, հրճուել, աղքի, քաղ, քաջ, սեղ, ցաղ, կենցաղ, սաղարթ, հրաշք, փեթակ, քանակ, ողակ, էակ, Փարպեցին չունի փաղաքամ, վսեմ, աղքի, տղմանք, քաղ, քաջ, էակ, սաղարթ, հրաշք, փեթակ, քանակ, ողակ, ըղոհել, հրճուել, վեհ բառերը:

Հիշյալ բառերից Եղիշեն ընդամենը երկու բառ է գործածել՝ վեհ, տեսակ: Փարպեցին ունի չորս բառ՝ սեղ, ցաղ, կենցաղ, տեսակ:

Ուրեմն բաժանման հիմք ծառայող այդ բառերը միայն հատուկենտ են երևում ետ-ոսկեդարյան հայերենում, ծիշտ այդչափ հատուկենտ էլ կարող ենք ցույց տալ և ոսկեդարյան հայերենում. Ագաթանգեղոսը, Բուզանդը ունեն տղմանք, ըղոհել, հրաշք /օրինակները տես մեր ,,Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության,, մեջ, էջ 93/: Խորյունը ունի կենցաղ բառը:

Այս նշանակում է, որ մեր լեզվի բառապաշարի մեջ այդ բառերի

հաճախականությունը սակավ է, կամ գրականության նյութը առիթ չի ընծեղծել այդ բառերի կիրառության համար:

Օրինակ՝ ֆեքսակ բառի համանիշ մեղուանոց բառը որպես թե ոսկեդարյան է: Քանի՞ անգամ է գործածվել. մի անգամ եզնիկն է գործածել, որտեղ իրոք մեղուանոց ֆեքսակ է նշանակում, մի վկայություն էլ ունի Աստվածաշունչը, որտեղ մեղուանոց ֆեքսակ չի նշանակում, այլ փեթակներով լցված վայր:

Այդ նույն մեղուանոց-ը չորս անգամ էլ կիրառվել է ետ-ոսկեդարյան գրականության մեջ: Փաստորեն մի անգամ միայն պատահականորեն գործածված մեղուանոց բառը դարձել է լեզվի շրջանաբաժանման հիմք:

Երկրորդ կետում ասված է, որ ոսկեդարյան հայերենում արձիւ, տեղ, պատասխան, հիւսիս, արհեստ բառերը գործածվում են արձուի, տեղի, պատասխանի, հիւսիսի, արուեստ ձևերով, իսկ ետ-ոսկեդարյանում նախորդ ձևերով:

Խորենացին արձուի բառը գործածել է 7 անգամ, Փարպեցին՝ 4 անգամ, և ոչ մեկը արծիւ ձևը չունի: Խորենացին հիւսիսի բառը ունի 14 տեղում, Եղիշեն՝ 2 տեղում, Փարպեցին՝ մեկ, և ոչ մեկը այլ ձևով չի գործածել, քան հիւսիսի: Պատասխանի բառը Խորենացին կիրառել է 12 անգամ, Փարպեցին՝ մեկ անգամ, Եղիշեն՝ էլ ավելի շատ անգամ, սակայն ոչ մեկը այլ ձևով չունի, միակ ձևը պատասխանի է: Նույնը վերաբերում է արուեստ բառին, րոլոր ետ-ոսկեդարյան հեղինակները արհեստ ձև չունեն:

Չորրորդ կետում ասված է, որ ոսկեդարյան հայերենում ամեն բառը միայն բայարմատի հետ է կիրառվում, ածականի վրա չի դրվում: Ագաթանգեղոսը ունի ամենահեշտ, Եզնիկը՝ ամենայաչը, ամենասուրբ, Կորյունը ունի ամենաքաջի, ամենապայծառ, ամենահեշտ. Ագաթանգեղոսը, Մակաբայեցիները, Կորյունը ունեն ամենազօր, որոնք բաղդատական աստիճան են արտահայտում: Որքան որ սակավ է ամենա մասնիկի բաղդատական գործածությունը ոսկեդարյան գրականության մեջ, նույնքան և ավելի սակավ է ետ-ոսկեդարյան գրքերում:

Խորենացին ունի ամենահարուստ ,,ամեն ինչով հարուստ,, , ամենապատիկ ,,բազմապատիկ,, , ամենիմաստ ,,բազում իմաստություն արտահայտող,, , էլի ուրիշ բառեր ևս կազմել է ամենա մասնիկով, սակայն ոչ մեկն էլ բաղդատական նշանակություն չունի:

Հետագա սերունդները, որոնք հետևում էին Գաթըրճյանին, Գարագաշյանին՝ այսինքն հիմնարար սերունդին, ոչ թե քննադատում էին ձեվակերպված, բայց ոչ հիմնավորված կանոնները, այլ նյութը բռնի կեր-

պով փոխելով, հարմարեցնում էին կանոններին: Այդ հարմարեցումը կոչվում էր սըըսագըըմ:

5-րդ կետում ասված է, որ ըւնի ածանցով բառ չկա Ոսկեդարյան գրականության մեջ. և ահա որտեղ որ այդպիսին պատահում էր, սխալ էին համարում և սրբագրում:

Երգ երգոցի քարգմանությունը երկու անգամ ունի թագուհի՝ նորայր Բյուզանդացու վկայությամբ թագուհի բառը գործածված է Լաբուբնա Եղեսացու քարգմանության մեջ երեք անգամ: Զգոնի գրքում կա քանանուհի, հգնատիոսի թղթերում հանդիպում են երանուհի, իմաստուհի, հավատուհի, Բուզանդը ունի Համազասպուհի:

Իսկ Խորենացին, Փարպեցին, Եղիշեն, որ ետ-ոսկեդարյան հեղինակներ են, քանի՞ անգամ են գործածել այդպիսի բառեր: Փարպեցին և Եղիշեն ոչ մեկ անգամ, իսկ Խորենացին ունի Սմբատուհի, առաքելուհի, արիտասարդուհի, աստվածուհի, Վարդապետուհի, Ջարուհի, Տիգրանուհի: Վերջին երկու անունները եղել են Տիգրան Հայկազնի կնոջ ու քրոջ անունները մեր թվականությունից մի հարյուր տարի առաջ, ուրեմն ուհի-ով բառեր եղել են և անհրաժեշտության պարագայում կիրառվել են: Դուցե թե պարսկերեն -ուհի մասնիկը քրիստոնեության շրջանում ոճաբանորեն խորթ է հնչել, բոլոր պարագաներում գործածության հավասարակշռությունը երկու լեզվական շրջանների համար չի խախտվել:

8-րդ կետում ասված է, թե ային ածանցը ոսկեդարյան հայերենում միայն տեղ արտահայտող բառերի վրա էր դրվում. կարելի էր ասել լեռնային, դաշտային, բայց կարելի չէր ասել մարդկային, աստվածային, հրեշտակային, որոնք ոսկեդարյան բառեր չեն: Հակառակի նման մարդկային բառը Ագաթանգեղոսը ունի 4 անգամ, ունի նաև ոգնմային: Մարդկային բառը ունի նաև Բուզանդը: Խավարային բառը ունեն Սաղմոսները /ժ, 12/ Ագաթանգեղոսը ունի աղանձնային: Ոսկեդարյան գրքերում կան անդնդային, գիշերային, խաւարային /ԱԳ., 243. խաւարային Ճանապարհ/:

Ըստ Ն. Բյուզանդացու աստուածային բառը կա ոսկեդարյան բոլոր գրքերում՝ աստուածային օրենք՝ խորհուրդ՝ առաքել՝ աըդաշուքնէն՝ բանք՝ գիրք՝ գանձք՝ ծնունդ և այլն:

Եթե ային ածանցը մերժված ճևով այսքան կազմություններ ունի ոսկեդարյան հայերենում, ինչու՞ ետ-ոսկեդարյան այդպիսի կազմություններ չպետք է լինեին:

Սակայն Փարպեցին այդ ածանցով ընդամենը երեք բառ է գործածել՝ ծմեռնայինն, մարդկայինն, ցամաքայինն: Եղիշեն ունի ցերկնայինն, դաշտայինն, ծովայինն, ցամաքայինն /տեղային բառ չէ միայն ցերկնայինն/:

Շատ բառեր չունի նաև Խորենացին՝ ամառնային, աստուածային, ցաղնային, գեշերային, ձմեռնային, մարդկային, որոճային, ցարսկային, ջերմային և այլն, որտեղ իսկապես -ային-ը կապված չէ տեղ արտահայտող բառերի հետ, որ պատահականություն է:

Մի այլ կետով ասված է, թե խաղնել բայը ունի երկու նշանակություն՝ միավորել և խառնակել: Առաջին դրական նշանակությունը խաղն բառը արտահայտում է բառավերջում, իսկ երկրորդ խաղնակել նշանակությունը արտահայտում է բառասկզբում: Իբրև թե այս զանազանությունը հատուկ է միայն ոսկեդարյան հայերենին, իսկ ետ-ոսկեդարյանը այս նրբությունը չունի:

Եթե մեղմ ասելու լինենք, սա միայն մտքից հանված դրույթ է, նման երևույթ մեր լեզվում չկա:

Ինչ նշանակություն որ խաղն-ով կազմված բառերը ունեցել են ոսկեդարյան գրականության մեջ, իրենց նշանակությունները նույնությամբ պահպանել են ետ-ոսկեդարյանում, ոչ մի փոփոխություն չեն կրել: Եզնիկը ունի խառնակությունք, խառնաբնդրել, խառնել, խառնիխուռն, խառնիչ, խառնուածք, խառնութիւն, խառնք: Առաջին երկու բառը մեր լեզվում ունեցել է և ունի անարգական նշանակություն, այդպես է նաև խառն ի խառն: Խառնուած, խառնել, խառնութիւն սովորական են /Արեզակն առանց օդոյ խառնուածոյ այրիչ է/, խառնութիւն, հակառակ անարգական տպավորության, սովորական է /Ջոր բարին կարծիցեն առանց ընկերին խառնութեան վնասակար լինի/: Ավելին՝ այդ բառի հետագա կիրառությունն է բացասական /Մարմին մեղսամակարդ, խառնութիւն ներհակական/:

Այստեղ նշենք նաև, որ այդ կազմությունների անարգական նշանակությունները կապ չունեն խաղն բառի հետ, այդ կախված է մյուս բաղադրիչից /խառնաբնդրել, խառնափնթորել, խառնակեաց, խառնաղանձ, բաբեխառն, ջերմախառն և այլն/:

Խառն բառով կազմված բառերը ոչ մեկ զանազանություն չունեն ոսկեդարյան և ետ-ոսկեդարյան հայերեններում: Խորենացին ունի խառնակութիւն, խառնաղանձ, խառնակել: Ղեւիշեն գործածել է խառնամբոխ, խառնափնթորը, խառն ի խառն, խառնուածք: Փարպեցին գործածել է բաբեխառնութիւն, ազգախառն, ազգախառնութիւն ,,ազգակից, ազգակցութիւնք,,: Կրկնենք՝ հյուլեի իսկ տարբերակում չի տալիս այս կետը:

Մի այլ կետում ասված է, թե սառնամանիք բառը ոսկեդարյանում կիրառվում է սառամանիք, իսկ ետ-ոսկեդարյանում սառնամանիք: Այս կետը պետք էր միացնել այն կետերի հետ, որտեղ նշվում են բառերի ձևական տարբերությունները:

Արդարև Եզնիկը սառամանիք ձևը վեց անգամ է կիրառել առանց ն-ի:

Բայց եթե խոսքը վերաբերում է սառ և սառն ձևերին, ապա պետք է վերցվեին գոնե սառն բաղադրիչով բոլոր բարդ բառերը, միայն սառամանիքով ու սառնամանիքով հարց չի լուծվի: Ազաթանգեղոսը ունի սառնահալ: Ոսկեդարյան են սառնաշաւտ, սառնատեսակ, սառնեղեն: Ագաթանգեղոսը ունի սառնեղեն, նաև սառնամանիք /Աւուրս ցրտաշունչ սառնամանեաց անցուցանեին: Չեռուցաններ գնոսա ի ցրտոյ սառնամանեաց/:

Խորենացու բնագրում սառնամանիք է, բայց մի քանի ձեռագրեր ունեն սառամանիք: Իսկ Եղիշեն և Փարպեցին այդ բառը չեն կիրառել:

Օգտագործված է նաև սառամանիք բառի իմաստը, իբր ոսկեդարյան հայերենում այդ բառը նշանակում է սառը քամի, իսկ ետ-ոսկեդարյանում՝ սառուցյց: Եզնիկը վեց անգամ է գործածել այդ բառը: Մի օրինակում նշանակում է սառը քամի /օդք երբեմն զսառամանիս շնչեն/, մյուս օրինակում բառս նշանակում է սառնութիւնն /միմեանց ծախիչք են ջեր սառամանեաց/: Իսկ մյուս օրինակում սառամանիք հակառակի նման սառուցյ է նշանակում/ եթե ոչ ձիւն և սառամանիք պնդէին, արմատք զլերինս խոտոց ոչ պարարէին /Եզն., 70/: Այս երեք նշանակութիւնները ուղեկցում են այս բառին գրաբարի ողջ շրջանում: Մինչև իսկ Շիրակացին ունի սառը քամի նշանակութիւմբ /շնչումն սառնամանեաց/:

Մենք բոլոր ձևերի վրա կանգ չառանք: Այդ բոլոր կետերը մեկ առ մեկ քննված են մեր ,,Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության,, աշխատության մեջ:

Բայց մի կետի վրա ևս ցանկանում ենք կանգ առնել, որը այս հարցի փորձաքարն է: Այս կետը վերաբերում է նախամասնիկավոր կազմություններին: Ըստ ոսկեդարյան հայերենի տեսության ապա, ել, բաղ, բաց, գեր, դեր, ենթ, հոմ, մակ, յեր, ներ, շաղ, շար, վայր, վեր, տար, տրամ, ստոր, փաղ նախամասնիկներով բառեր ոսկեդարյան հայերենում չկան: Արիստակես Վարդանյանը այս կետի համար ոչ թե ընդհանրապես բառեր է ասում, այլ բայեր. իր հերթին ոսկեդարյան հայերենից բերում է մի շարք բայերի օրինակներ և ջանում է դրանք սրբագրել: Այդ բայերն են վերածեմ, առգանացանեմ, առլնում, գերազանցեմ, ներգործեմ: Մատթեի ավետարանի մեկնութիւնից Հայկազյան բառարանը բերում է. ,,Զյոռին և զանպիտանն ապազդվէ: ,,Վեցօրեայքում,, կա ապալեց, ,,անափ,, , Աստվածաշնչում գործածված է ապախուրել /Զգուլուխ ձեր մի ապախուրեք: Զգլուխս իւր մի ապախուրեսցէ Ղուկ. ժ 6, ԻՆ 10/: Վերջապես ոսկեդարյան հայերենում ունենք ապաշնորհ, ապա-

հարկ, աշերաստանութիւն, առաջաստ, առաջիմ, առաւելիմ, առաւելում, ա-
ղեղձանեմ, առեղծում, աղբնթանամ, աղնում, առկայծեմ, առողջանամ,
բացաձի, գերահրաշ, գերաբտօսրալից, յարմուր, ներգործեմ, ներգոր-
ծութիւն, պարունակեմ, տարբեր, տարաժամ, տարաժամել, տարաժամու,
տարապայման և այլն: Միայն չկան փաղ, բաղ, տրամ մասնիկներով բառեր:

Իսկ որքա՞ն այդպիսի բառեր ունեն մեր դասական հայերենից օտար-
ված Խորենացին, Փարպեցին, Ղևիշեն: Փարպեցին միայն ունի շաբաթ,
վեր նախամասնիկներով բառեր շարագրել, առնում, վերաբերեմ:

Ղևիշեն երեք նախամասնիկ է գործածել աշխ, տար և բաց. յուրա-
քանչյուրով մի բառ՝ աշխարհանութիւն, տարաբաժին, բացատրեմ:

Խորենացին մի քիչ զանազանվում է իր ժամանակակիցներից, գոր-
ծածել է բաղ, գեր, մակ, պաղ, վեր, սառը, նաև հոմ /հոմիշխան, որ
ունի համիշխան փոփոխակը/:

Նշարակացութիւն. Հայերենի այս շրջանաբաժանումը գիտական հիմք
չունի: Լեզուն հիսուն տարվա մեջ չէր կարող այդպիսի շրջանաբաժա-
նում տալ: Դասական գրաբարը կարող է հակադրվել հունաբանական հա-
յերենին, բայց ոչ երբեք Խորենացուն, Փարպեցուն, Ղևիշեին:

Լեզվական շրջանաբաժանման համար հիսուն տարին իր տևողությամբ
շատ կարճ է, հասարակական ու տնտեսական պայմանները նույնն էին մը-
նացել, ինչպես մինչ վաթսունական թվականները, այդպես էլ վաթսունա-
կանից հետո:

Այդպիսի բաժանումը ի՞նչ օգուտներ ավեց: Ամենից առաջ ոսկե-
դարյան շրջանը առանձին ուսումնասիրության առարկա դարձավ, բայց
այս օգուտն ու վնասը իրար հավասարակշռում են. այնպիսի ինքնու-
րույն դասական հեղինակներ, որպիսիք էին Խորենացին, Փարպեցին, Ե-
ղիշեն, մնացին տեսածիրից դուրս:

Գիտնականները հետագա շրջանի գրականության վրա որոշ քմայքով
էին նայում: Այնպիսի մի գիրք, ինչպիսին ,,Յամախապատում ծառքն,,
է, որ գրված է Եզնիկյան հայերենով, չի ուսումնասիրվել, որովհետև
այնտեղ կան անմեղկելի անասանելի ձևերը:

З.И.БУДАГОВА (Баку, СССР)

К ИСТОРИИ АЗЕРБАЙДЖАНСКО-АРМЯНСКИХ ЯЗЫКОВЫХ КОНТАКТОВ

Социально-политические, экономические, культурные и т.п. связи азербайджанского и армянского народов имеют свою многовековую историю. Они нашли свое отражение в азербайджанском и армянском языках. Армянский регулярно контактировал и с турецким языком, и, таким образом, всестороннее общение армян с тюркским миром происходило, с одной стороны, через территорию современного Азербайджана, с другой - через территорию современной Турции. Результаты двухсторонних языковых контактов на контактирующих языках сказались различно: армянский язык в большей мере оказался подверженным влиянию тюркских языков. Об этом писали не только видные армянские лингвисты, но и писатели. Так, например, основоположник новоармянской реалистической литературы Хачатур Абовян отмечал, что "тюркским языком владеют в Армении даже дети и женщины. Поэтому сочинение и импровизация песен-стихов на тюркском языке талантливыми армянскими поэтами и ашугами - импровизаторами абсолютно естественное явление".[1] Это явление Х.Абовян объяснял тем, что "татарский /то есть азербайджанский - З.Б./ своей гармоничностью, поэтичностью и простотой грамматического строя особо выделяется среди других языков Закавказья".[2]

Об объективных экстралингвистических причинах влияния азербайджанского языка на армянский, а также о взаимоотношении азербайджанского и армянского языков писали многие армянские и азербайджанские лингвисты.[3] В данной работе суммируются некоторые результаты азербайджанско-армянских языковых контактов. Отметим, что эти контакты выявляют себя двояко: контакты диалектов и говоров и контакты литературных языков.

Влияние азербайджанского литературного языка армянский язык начал испытывать, по-видимому, с XII-XIII веков, когда

сформировались азербайджанский и турецкий литературные языки. Поэтому не случайно, что некоторые армянские поэты именно после XIII века писали стихи на упомянутых языках. Характеризуя указанный период, Э.В.Севортян писал: "Еще до монголов, в XI веке, если не раньше, армяне вступили в контакт с сельджуками, туркменами, а затем с османами и предками современных азербайджанцев и находились с ними в постоянных сношениях, нередко живя бок о бок с ними.

Только повседневным общением с огузскими племенами и народами объясняется факт весьма раннего проникновения южнотюркских слов в произведения армянской средневековой литературы...".[4] Говоря о тюркизмах в стихах армянского поэта конца XIII века Ованеса Ерзнкаци, Э.В.Севортян замечает: "Употребляемые Ованесом Ерзнкаци заимствования из тюркского разговорного языка и диалектов-собственно тюркского или арабо-персидского происхождения - являются не авторскими, а общепринятыми в разговорном армянском языке тех далеких веков, о чем свидетельствуют произведения его современников, у которых встречаются те же тюркизмы".[5]

К ранним заимствованиям, например, Р.А.Ачарян относит такие слова, как: արխ /арх/ "арык, канава", ավչի /авчи/ "охотник", աղա /ага/ "господин, хозяин", աթաբեկ /атабек/ "атабек, воспитатель принцев", բեկ /бек/, խազալ /хазал/ "лист", ղոչ /гоч/ "баран племенной", ղուշ /гуш/ "птица", քիշմիշ /кишмиш/, թուրալ /турадж/ "турач" /птица/, խոչախ /хочах/ "молодец", "шустрый", ջեյրան /джейран/ "джейран, газель", չոբան /чобан/ "чобан, пастух" и т.д.[6] Однако количество подобных примеров можно умножить. Причем некоторые из них могут быть отнесены даже к более раннему периоду. К.Патканян, например, слово арыг/аруг "тощий, худой", ариг "арык, канава", от хот "трава, сено" и т.п. относит к У-УI векам [7], а Р.А.Ачарян "арх" относит к X веку /Ներկայ այգին, որ Ջրանցի արխի տակն է/[8]: Некоторые слова, заимствованные в тех веках в армянском языке, в последующем исчезли в азербайджанском, но сохранились в других тюркских языках. Например, армянский бол-/бола/ киргиз. бол-вболды /хватать/.

У армянского поэта конца XIII - нач. XIУ века Фрика встречаются такие интересные азербайджанские слова, как бэрк, аға,

кеч, ортаг, гамиаз, хан, бəj, сыгал и др.[9]

Часть тюрко-монгольских слов, зафиксированных в "Истории" Киракоса Гандзакеци, также вошла в лексический состав армянского языка /напр. "äкä", армян. диал "äкä" "тетя", аға "господин", елчи "посол, посланник", гуш "птица", tanra "деньги", роч "баран-самец" и многие другие/.[10]

Из армянских письменных памятников XУ-XIX веков явствует, что в последующие века количество азербайджанских и турецких лексических заимствований намного увеличилось. В книге акад. Р.А.Ачаряна "Тюркские заимствования в армянском языке" отмечено 4200 таких слов. Широко представлена азербайджанская лексика не только в художественных произведениях XУП-XУШ вв., но и в исторических сочинениях Аракела Даврижеци, Симеона Ереванци, Захария Канакерци и других. У этих авторов отмечены такие слова и топонимы, как Касым гунеи, Кырхбулаг, Агджагала, Кордара, Кызыл и Гаджи, Тфангчи, болукбаши, халвачи, чарии, арпалых, байдах и др. У Аракела[11]: Культапа, Алибеклу, Уч Килиса /Эчмиадзин/, Шорлу, Кара-Коюнлу, Таш-бурун, Дарачичаг, Кызыл топа, йедак, йол, горуг, йонджалых и др. - У Симеона Ереванци[12]: гатырчы, ата, гадага, гырат, дали гардаш, харджчи и многие другие у Захария.[13] Отметим, что довольно солидное место занимают в Армении азербайджанские географические названия, включая и названия отдельных построений типа названий мостов Чирпили /XI в./, Чубук корпи, Хан корпи, Галин корпи, чобан корпи /XШ-XIУ вв./[14] и т.д.

В большом количестве азербайджанские заимствования в диалектах и говорах армянского языка представлены на территории Азербайджанской ССР. Большинство армян, проживающих в Азербайджане, фактически двуязычны, а двуязычие, как известно, создает благоприятные условия не только для многочисленных лексических заимствований, но и для фонетической и грамматической интерференции контактирующих языков. Не случайно, что гласные а,о,у/ш,п,п/ и глухой спирант "ф" / ֆ /, чуждые армянскому языку, довольно широко представлены в его диалектах и говорах. Забегая вперед, отметим, что мы не разделяем мнения тех лингвистов, которые полагают, что звуки могут заимствоваться. Ибо, как бы ни были многочисленны лексические заимствования, фонемы как таковые заимствоваться не могут.

Новые звуки, новые фонемы появляются в языке только при наличии сочетания как внешнего фактора /то есть влияния другого языка/, так и внутреннего фактора, заключающегося в артикуляторной предрасположенности.[15] А.Мартине, Л.Р.Зиндер, Ехи Курилович и ряд других языковедов, говоря о возможности появления в языке /диалекте/ под влиянием заимствований новой фонемы, подчеркивают необходимость существования в заимствующем языке соответствующих артикуляторных особенностей, способствующих освоению нового звука.[16] Следовательно, для возникновения нового звука /фонемы/ необходима выработка навыка произношения его у носителей данного языка /диалекта/. Исследователи распространенных в Азербайджане диалектов и говоров армянского языка отмечали существование в них гласных а,о,у и согласного "ф" /в Шемахинском диалекте/, которые возникли в результате их длительного и интенсивного контактирования с азербайджанским языком. Судя по исследованиям К.С.Давтяна, Р.А.Баграмяна и др. диалектологов, а,о,у в армянских диалектах Азербайджана фонологизировались и коррелируют с широкими гласными а,о,у во всех позициях в слове.[17]

Влияние азербайджанского и турецкого языков сказывалось и на морфологии армянского языка, особенно на аффиксальном словообразовании /-луг, -лу, -чи, -миш/ и образовании порядковых числительных /напр.: մեկումջի "мекумджи "первый", յերկումջի йеркумджи "второй", տասումջի тасумджи "десятый" и др./.

Можно указать также на многочисленные фразеологические обороты, образованные при помощи азербайджанских заимствований или путем калькирования. В фразеологическом словаре армянского языка, составленном М.А.Сукиасяном и С.А.Галстяном /Ереван, 1975/, количество подобных оборотов составляет десятки. Немало пословиц и поговорок, целиком заимствованных из азербайджанского языка, например: թիքա-թիքա անել /азерб. тикэ-тикэ етмэн/"разрубить на куски"; խաթրի խոշ անել /азерб. хэтрини хош етмэк/ "Ублажать чью-то прихоть"; դալի շեյթանը տասում ա /азерб. дэли шеIтан деIир/ "сатана наталкивает на что-то"; քյալ-քյալ անել /азерб. кэл-кэл демэк/ и десятки других.

Азербайджанско-армянские языковые контакты, естественно, имели следствием также заимствования в азербайджанский и турец-

кий языки армянских слов Р.А.Ачарян в своем докладе на I тюркологическом съезде в Баку в 1926 году отметил, что в азербайджанском и особенно в диалектах турецкого языка им обнаружено 200 армянских слов. Эти слова включены Р.А.Ачаряном в его многотомный "Этимологический корневой словарь армянского языка". Правда, не все слова из этого списка являются армянскими. Сюда мы первым долгом можем отнести такие древнетюркские заимствования в армянском как хот "трава, сено", кошгар очхар/вочхар "племенной баран", гойун "овца, баран" и ряд других.[18] Говоря о кочкар, К.П.Патканян еще в 70-х гг. XIX века писал: "Возьмем еще одно до сих пор также не тронутое слово и сравним: /оčхаг/ "баран, овца". Слово У века. Я нахожу в словаре Будагова, джаг., тат. кпо апкач "баран племенной"; в алтайском - кочкор "дикий баран"... Нельзя же присутствие этого слова в армянском языке У века объяснить только случайностью. Утрата гортанной "к" перед " /о/ также не без аналогии".[19] Однако, по мнению Р.А.Ачаряна как кочкар так и гойун в тюркских языках были заимствованы из армянского. Верно наблюдение автора о том, что хоч и хой однозначны, разница диалектного характера. В "Диване" Махмуда Кашгарского /XI в./, "Кутадгу-билиге" Юсифа Баласагунского /XI в./ и др. древнетюркских источниках эти слова отмечаются как исконно тюркские названия овцы, барана.[20] Поэтому верно, на наш взгляд, мнение К.М.Мусаева о том, что: "Основное название овцы, как нам представляется, вошло и в дагестанские языки, причем в формах, характерных для юго-западных и кыпчакских языков: лак.ку, авар.куй, кви, карат., ботл., куни, тинд., чамал., багуал., квин..."[21].

Вместе с тем отметим, что в азербайджанском языке, особенно в его диалектах и говорах, контактирующих с армянским языком, довольно много армянских заимствований. Причем, их тоже можно делить на две группы: а/ слова, употребляемые в азербайджанском литературном языке, б/ слова, функционирующие в диалектах, в особенности в говорах, представленных на территории Армянской ССР.

В азербайджанском литературном языке мы имеем армянские заимствования двоякого характера: слова, которые широко употребляются в языке; слова, которые находятся в пассивном балан-

се, некоторые из них можно назвать "экзотическими".

Отрадно отметить тот факт, что азербайджанские лингвисты в своих исследованиях, главным образом, обратили внимание на армянские заимствования в азербайджанском языке. Пионерами этого прекрасного начинания были акад. М.Ш.Ширалиев, проф. А.М.Демирчизаде. Первый из них отметил такие армянские заимствования в диалектах и говорах азербайджанского языка, как барров /цшпшц / "старое, неработоспособное /животное/", андыр / шնшեր / "не имеющий хозяина, беспризорный", hахчых / աղջիկ / "девочка, девушка" дʀа / տղա / "мальчик, сын" и ряд других.[22] А.М.Демирчизаде полагает, что слова джурдак "кувшин для воды", такур /такавар/ и т.п., употребляемые в азербайджанском языке, заимствованы из армянского. К этому списку мы можем добавить слова: нерик /шуму/ "пашня", сал /даш, гаjа/ "каменная плита, утес", чаран /ламак/ "говорить долго ; произнести длинную речь", хосун /лашмаг/ "говорить", кирва "крестный", дыка "сын, мальчик", лачар "бесстыжая, истеричная" и ряд других, которые широко употребляются в азербайджанском литературном языке.[23]

Имеются и некоторые "экзотические" слова, употребляемые в произведениях отдельных писателей. Сюда первым долгом могут быть отнесены произведения Наджафбека Везирова, Абдуррахимбека Ахвердова, Ю.В.Чеменземинли, Наримана Нариманова, Джара Джаббарлы, Сулеймана Рагимова и др., то есть произведения тех писателей, которые часто обращались к теме многовековой дружбы азербайджанского и армянского народов. В их произведениях имеются образы армянина или армянки, в речи которых нередко включаются армянские слова հարս "невестка, сноха", աղջիկ /hахчых/ "девочка", տղա /дыгы/ "мальчик, сын", խումբ /хумб/ "глава отряда", հալիվոր /hиливер/ "пожилой человек", բանվոր /банвар/ "рабочий", խաչ /хач/ "кресты" и др.

Армянские заимствования мы обычно имеем в тех диалектах и говорах азербайджанского языка, которые контактируют с таковыми армянского языка. Их много в Карабахском и Нахичеванском диалектах, в Закатало-Кахских говорах. Судя по диалектологическим исследованиям, в указанных диалектах и говорах мы имеем такие интересные заимствования, как: պատ /тандрин бады/ "стена" ասըմա /асма/ "говорит", հիմ /hим/ "фундамент", աղբյուր

/ахбур/ "ключ, родник", մաճկալ /маҗкал/ "пахарь", հոտաղ /ҳодах/ "погонщик плуга, подпасок", գոմ /ком/ "хлев, загон; овчарня", թառ /тар/ "насест", տափան /тапан/ "борона", մարայ /марой/ "сарай для соломы", ծիծեռնակ /цицернак/ "ласточка", и многие другие.[24]

В говорах азербайджанского языка, представленных на территории Армянской ССР, часть заимствований вытеснила их азербайджанские синонимы. Наблюдаются даже такие слова, как ակոս /агос/ "ряд в пашне"; ակումբ /акумб/ "дом культуры"; անհաղ /чанҳад/ "единственный", աշխոր /ашхор/ "трудодень"; կոթ /гот/ "рукоятка", կոճակ /годжаг/ "пуговица"; բալանիկ "ключ, замок"; թան /тан/ "айран, пахталка"; շենք /шенк/ "здание, дом, стройка"; նախագահ /нахага/ "председатель" и десятки других /сравните с азерб.: джарка, шрым; мадани ат еви; йекана, валид; амак куну; дастан; дуйма; гыфыл, ачар; айран; бина, тикинти; садр вə и.а./.[25]

Это, конечно, связано с совместной с армянами жизнью и деятельностью в Армении, где средством общения / и литературным языком, языком делопроизводства и т.п./ является армянский язык.

Хотя о взаимоотношениях и взаимообогащениях азербайджанского и армянского языка написано немало, но этот вопрос должен быть исследован более обстоятельно: необходимо монографическое исследование данного многовекового процесса, обусловленного экономическими, социальными и другими причинами и узами тесной дружбы двух древних народов, веками проживающих в добром соседстве.

ПРИМЕЧАНИЯ

1. См.: Х.Абовян. Избранные сочинения /на армянском яз./, т.I, Ереван, 1940, стр. 47.
2. См.: Х.Абовян. Полное собрание сочинений /на армянском яз./, т. У, Ереван, 1950, стр. 174.
3. См.: К.Патканян. О месте, занимаемом армянским языком в кругу индоевропейских. ИКОИРГО, т. УI, № I, Тифлис, 1881, стр. 27-49; Р.А.Ачарян. Тюркские заимствования в армянском языке /на армянском яз./, Москва-Вагаршапат, 1902; Его же:

Взаимное влияние тюркского и армянского языка. - I тюркологический съезд. Стенографический отчет. Баку, 1926; М.Х.Абегян. Синтаксис новоармянского языка /на армянском яз./, Тифлис, 1912; А.С.Гарибян. Введение в изучение истории армянского языка /на армянском яз./, Ереван, 1937; К.О.Арутюнян. Сопоставительное исследование морфологии армянского и азербайджанского языков. Автореф. канд.диссер., Ереван, 1955; Р.А.Баграмян. Армянские диалекты в Азербайджанской ССР. Автореф. доктор.диссер., Тифлис, 1969; А.Е.Хачатрян. Лексическое взаимовлияние азербайджанских и армянских говоров. - Тезисы докладов и сообщений конференции по вопросам взаимоотношения и развития языков Закавказья, Ереван, 1977, стр. 51-52; Ю.Мирбабаев. О взаимоотношении азербайджанского и армянского языка /на азерб. яз./ - Труды Института языка АН Азерб.ССР, т. I, Баку, 1947, стр. 16-22; М.Ш.Ширалиев. Основы азербайджанской диалектологии /на азерб.яз./, Баку, 1962; З.И.Будагова,В.Л.Гукасян. Об азербайджанско-армянских языковых контактах - "Советская тюркология". Баку, 1979, № 4, стр. 10-21; М.И.Мамедов. Взаимоотношения современного азербайджанского и армянского языков. Автореф. канд.диссер., Баку, 1981; А.А.Григорян. Опыт историко-лексикологического исследования азербайджанских заимствований в армянских источниках и диалектах армянского языка. Автореф. канд.диссер., Баку, 1981 и т.д.

4. См.: Э.В.Севортян. Тюркизмы у ранних армянских писателей.- В кн.: "Структура и история тюркских языков",М., 1971, стр. 264-265.
5. Там же. стр. 266.
6. См.: Р.А.Ачарян. Этимологический корневой словарь армянского языка /на армянском яз./, тт. I-IУ, Ереван, 1971-1979.
7. См.: К.Патканян. Указ. раб., стр. 45-49.
8. См.: Р.А.Ачарян. Указ. словарь, т. I, Ереван, 1971, стр. 317.
9. См.: Фрик. Стихотворения. Составили и комментировали М.Мкрян и Е.Торосян /на армянском яз./, Ереван, 1941:

„...Արդուն ղանին եւ բուղային...; „Բուղա էիր չինքսան ե-
ղար. Բեկլար բեկի իր հեծելին...; „...թէ օրքանին անիծեցին;

,,...Սպանող, ղաֆաց, զործող չարի,, и т.д./ стр. 111, 209-211, 239/.

10. См.: Киракос Гандзакеци. История. Научно-критический текст /на армянском яз./, Ереван, 1961, стр. 273-275.
11. См.: Аракел Даврижеци. Книги историй. Перевод, предисловие и комментарии. Л.А.Ханларян. М., 1973.
12. См.: Симеон Ереванци. Джамбр. Перевод акад. С.С.Малхасянца, М., 1958.
13. См.: Захария Канакерци. Хроника. Перевод, предисловие и комментарий. М.О.Дапбинян. - Меликян. М., 1969.
14. Об этом см.: О.Х.Халпачьян. Инженерные сооружения Армении - "Архитектурное наследие", М., 1964, № 7, стр. 67-120.
15. Об этом подробно см.: В.Л.Гукасян. О фонемном новообразовании - "Советская тюркология", Баку, 1978, № 5, стр. 33-43.
16. См.: А.Мартине. Принципы экономии в фонетических изменениях. М., 1960; стр. 135-139; Л.Р.Зиндер. Общая фонетика. М., 1960, стр. 67; Е.Курилович. О методах внутренней реконструкции. - В кн.: "Новое в лингвистике", IУ, М., 1965, стр. 405.
17. См.: Р.А.Баграмян. Армянские диалекты в Азербайджанской ССР. Автореф. докт.диссер., Тбилиси, 1969, стр. 38.
18. См.: Р.А.Ачарян. Указ. словарь, т. П, Ереван, 1973, стр. 390-391; т. Ш, Ереван, 1977, стр. 562-563.
19. См.: К.Патканян. Указ. раб., стр. 49.
20. См.: "Древнетюркский словарь", Л., 1969, стр. 451-453.
21. См.: К.М.Мусаев. Лексика тюркских языков в сравнительном освещении, М., 1975, стр. 57.
22. См.: М.Ш.Ширалиев. Бакинский диалект /на азерб. яз./, Баку, 1957, стр. 162-201; его же: Основы азербайджанской диалектологии /на азерб. яз./, Баку, 1962, стр. 350-351.
23. См.: Э.М.Дэмирчизаде. Язык дастанов "Китаби-деде Коркуд" /на азерб. яз./, Баку, 1959, стр. 149-150; его же: История азербайджанского литературного языка /на азерб. яз/, часть I, Баку, 1979, стр. 44-45.
24. См.: Диалектологический словарь азербайджанского языка /на азерб. яз./, Баку, 1964; А.А.Гусейнов. Словарь севе-

ро-западных групп диалектов и говоров азербайджанского языка /на азерб. яз./ - "Ученые записки" АПИ им. В.И.Ленина, IX серия, Баку, 1964, № 6; 1965, №№ 1-4; "Западная группа диалектов и говоров азербайджанского языка", т. I /на азерб.яз/, Баку, 1967; т. III /на азерб.яз./, Баку, 1972 /архив № 1778/ и т.д.

25. См.: М.И.Мамедов. Взаимоотношения современного азербайджанского и армянского языков. Автореф. канд. диссер., Баку, 1981, стр. 22-23.

Ս.Վ. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայերենի այբուբենը երանելի Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է յուրաքանչյուր հնչյունին մի գիր, յուրաքանչյուր գիր մի հնչյունի համար սկզբունքով: Աչընթաց գրությունը, անշաղկանությունը, յուրաքանչյուր հնչույթին մի գիր համակարգը Մաշտոցի այբուբենը դարձրին կատարյալ, և այն ապրեց անփոփոխ մինչև մեր օրերը: Այսօրվա մեր այբուբենի համակարգը /շարքը/ մաշտոցյան է, Մաշտոցի սահմանածը: Ամառյանը դրա լավագույն ապացույցներն է համարում Նոմիտաս կաթողիկոսի ,,Անձինք նուիրեալք,, շարականը և Դավթակ Քերթողի ,,Ողբը,,՝ գրված Աղվանից Ջուանշիր իշխանի մահվան առթիվ, որոնց տողերն սկսվում են այբբենական կարգով և համապատասխան են մեսրոպյան շարքին: Վարդան Հացունին դրա համար վկայակոչում է Քրակացու քարզմանության մեջ հայտնաբերված ,,Ցուցակ վախճանաց գրոց,, , ուր բառերը դասավորված են ըստ բառավերջի գրերի այբբենական կարգի՝ ողբ, ազգ, մարդ, պարզ, բազէ, հաղթ, վարժ, բարի, տալ, ցախ և այլն: Չկան ա_, ե_, ը_, ո_ տառերը, որովհետև դրանցով բառերը չէին վերջանում:

Ուղղագրությունը կախված չէ լեզվի քերականական կառուցվածքից, թեև առանձին դեպքերում ձևաբանական փոփոխությունները կարող են ազդել նրա վրա: Այն ավելի շատ կախված է ուղղախոսությունից: Տըվյալ լեզվի քերականական կառուցվածքը կարող է փոփոխվել, իսկ ուղղագրությունը պահպանվել և ընդհակառակը: Մինչև 1922թ. գրաբարի և արևելահայ գրական աշխարհաբարի ուղղագրությունը նույնն էր, թեև քերականությամբ նրանք արմատապես տարբերվում էին, մինչև հիմա էլ սփյուռքահայ գրավոր խոսքը գրաբարյան ուղղագրությամբ է: Այսօր Սովետական Հայաստանում գործող ուղղագրությունը տարբերվում է մինչև 1940թ. եղած ուղղագրությունից, թեև քերականությամբ այդ երկու շրջանները գրեթե տարբեր չեն:

Ուրեմն ուղղագրության պատմության շրջանաբաժանումը կարող է չհամընկնել լեզվի զարգացման շրջանաբաժանմանը: Ահա թե ինչու մենք

հայերենի ուղղագրության պատմությունը շրջանաբաժանում ենք ըստ նրանում տեղի ունեցած շրջադարձային փոփոխությունների՝ 5-ից 10-րդ դար, 10-ից 18-րդ դար, 19-րդ դարից մինչև 1922թ. և 1922 թվականից հետո:

1/ 5-10-րդ դարեր. Հայերենի ուղղագրությունը 5-10-րդ դարերում գերազանցապես հնչյունային է եղել, Մաշտոցի այբուբենի յուրաքանչյուր հնչյունին մի գիր սկզբունքը այս դարերի ուղղագրության հիմունքն է եղել: Բացառություն է եղել ՝ հնչույթի զրույթյունը: Այդ հնչույթը այս դարերում երկու գրով է արտահայտվել՝ բառասկզբում և ո տառից հետո գրվել է վ տառով, որը պահպանվել է նաև բաղաղրյալ ձևերում /վար-նաւավար, վախ-անվախ/, իսկ բառամիջում ձայնավորների միջև և բառավերջում աւ_իւ_ն ձայնավորներին հաջորդելիս՝ ւ տառով /աւազ, թեւ, թիւ/: Այս կանոնը, սակայն, սկսում է խախտվել դեռ 7-րդ դարից: Վիմագիր արձանագրություններում հանդիպում են քեվ, քվակյան ձևերը՝ քեւ, քուակյան ձևերի փոխարեն:

Հին հայերենում երկու լ հնչյուն է եղել, մեկը մեր այսօրվա լ-ն է /լաւ, լոյս, գալ, թել և այլն/, մյուսը՝ ետնալեզվային լ-ն, որ համապատասխանում էր հունարեն λ -ին և արտահայտվել է ղ տառով: Ամառյանն ապացուցում է, որ մեր այսօրվա ղատը ձևավորվել է 9-10-րդ դարերում: Հինգերորդ դարում ղ-ով սկսվող բնիկ հայերեն բառեր չկային, ղրանով սկսվում էին մի քանի փոխառյալ բառեր, որոնց բառասկզբի ղ-ն մասամբ էլ հնչյունափոխության հետևանք էր: Բառամիջում այդ տառը հանդիպում է գերազանցապես աղ, ուղ երկբարբառներին հաջորդող դիրքում /փայդ, նշոյդ/ և օտարազգի λ-ի դիմաց /Փիղիպպոս, Աբեղ, աղեղուիա, Գաղիղեա, Ողիմպիա և այլն/:

Դեռ 8-9-րդ դարերից նկատվում են բաղաձայնների զրույթյան խախտումները: Լազարյան Ծեմարանի Ավետարանում /887թ./ հանդիպում են ն-ին հաջորդող դիրքում խուլի փոխարեն ձայնեղով բառեր /մանգանց, անզեալ, տնզեաց, մանզունք և այլն/, իսկ ձայնեղի փոխարեն խուլով բառեր /հունձք, ամպոխ, կանկնեցալ, ժառանկ և այլն/:

Ըստ էության ե և է գրերը 5-րդ դարում տարբեր հնչույթների արտահայտություն են եղել, որի համար և Մաշտոցը տարբեր գրեր է ստեղծել: Բառասկզբում և բառամիջում գրվել է գերազանցապես ե, իսկ բառավերջում՝ է: Բառամիջում է գրվել է այն դեպքում, երբ այն կարող էր հնչյունափոխվել /կէս-կիսել, սէր-սիրոյ/: Հայկազյան բառարանում ե-ով սկսվող բառերի քիվը հասնում է 1500-ի, իսկ է-ով սկսվող բառերինը՝ մոտ 30-ի: Լեզվաբանների կարծիքով է-ն հավասար

էր ե յ երկբարբառին /Հյուբշման, Աճառյան, Աղայան/:

Դեռ 6-րդ դարի վիմական արձանագրություններում հաճախ է ե-ի փոխարեն հանդիպում է տառը և ընդհակառակը: Դա վկայում է, որ այդ դարում արդեն այդ տառերը հնչման տեսակետից իրարից չեն տարբերվել: Հանդիպում են մի կողմից՝ Եմանուէլ, եի, թե, ըմպեի, խլե, յիշեցեք, տանջեին գրություններըը, ուր է-ի փոխարեն գրված է ե, մյուս կողմից՝ ասէն, էն, էրուսաղեմ, էթե, էհար, կէցէ, սիրէմ գրություններըը, ուր ե-ի փոխարեն գրված է է: Հռիփսիմեի վանքի պատին Կոմիտաս կաթողիկոսի միևնույն արձանագրության մեջ /7-րդ դար/ Հռիփսիմե անունը գրված է թե է, թե ե տառերով /Հռիփսեմէի և Հռիփսիմեի/:

Ը-ն գրվել է բառասկզբում, եթե լսվել է, որը պահպանվել է նաև բառամիջում /ընկնեմ, ընկղմեմ, ընչաքաղց, երկընտրանք, քարընկեց, այրընտիր/: Բառամիջի զաղտնավանկ ը-ն չի գրվել /ըմբռնեմ, ըմբոշխնեմ, ընդվզում, ընկղմեմ և այլն/:

Երբեմն գրում են հնչյունափոխության հետևանքով առաջացած զաղտնավանկ ը-ն /ժողովըրդին, ծընընդոյ, սըրբոյ և այլն/, որը շեղում է ընդհանուր կանոնից:

Հինգերորդ դարում յ-ն ամենուրեք արտասանվել և գրվել է, այդ թվում և բառավերջում: Սակայն դեռ 6-րդ դարից նկատվում է բառավերջի յ-ի անկում, հանդիպում են ծառա, ի վերա, բազմամեա, Վառամա, մարմնո, որդո գրություններըը: Առանձին վկայությունները ցույց են տալիս, որ 6-7-րդ դարերից արդեն բաղաձայնանախորդ ա յ երկբարբառը պարզ օ էր դարձել: Այս մասին գրել է պրոֆ. Աշ. Աբրահամյանը: Հանդիպում են զրաւղ և զրող զուգաձևերը, կարող և կարաւղ, քարեխաւս, ստացաւղացն և բարեխոս, ստացողացն զուգաձևությունները: Ազաթանգեղոսի կրկնագրում /9-րդ դար/ ծնեալ բառը գրված է ծնոտ ձևով: Ուա, ուե, ուի, ուո երկբարբառները դարձել են va, ve, vi, vo , որի հետևանքով էլ վիմական արձանագրություններում հանդիպում են թվին, տվաք, Առվեղեան, թևականին ձևերը: Եյ և իյ երկբարբառները զուգահեռ կիրառություններ են ունեցել: Հանդիպում են միևնույն բառի թե եյ-ով; թե իյ-ով գրություններ /առեւծ-առիւծ, մեւս-միւս, հարեւր-հարիւրոյ/: Մեյեն այն կարծիքին է, որ հնագույն ձևը եյ-ն է, իյ-ը սեռականում է լինում:

Մեսրոպյան երկաթագրում չկան փոքրատառեր: Փոքրատառի առաջին անգամ հանդիպում ենք 7-րդ դարում: Դվինի մի արձանագրությունում կա փոքրատառ ա՝ շուռ տված՝ Յովհաննես վարդապետ, նաև՝ ծառ, զգոն, թյս:

Դեռ զրույցները բառանշան չէ, ուստի տողադարձն էլ վանկատմամբ չի կատարվում, կարող է մի տառն էլ անցնել մյուս տողը, պահանջում են պատե-րը, աղա-ւթս, ա-նդնդոց, մաղթե-մք, արի-ւն, ջո-ւր և նման տողադարձումներ:

Ընդունված է համառոտագրել տերունական անունները /Տի, Աե, Քի, Ցե և այլն/, որոնց վրա գրվում է ւ /պատիվ/ նշանը:

Օտարազգի բառերը գրել են հնչյունային տառադարձությամբ, ձգտել են պահպանել փոխառու լեզվի հնչումը / παţριάρχης>պատրիկոս, βῆμα>բեմ, λέγεων>լեգէոն, φιλόσοφος>փիլիսոփայ, Ἐπαρχος> եպարքոս և այլն/: Ուրեմն օտարազգի ձայնեղը ձայնեղով, խուլը խուլով, շնչեղ խուլը շնչեղ խուլով են տառադարձվել:

2/ 10-18-րդ դարեր. Նախորդ դարերում բանավոր ու գրավոր խոսքի միջև սկսված տարբերությունը քանի գնում մեծանում է, և 11-րդ դարից հետո ժամանակի հեղինակները ժողովրդին հասկանալի լինելու համար ստիպված են դիմել ժողովրդական լեզվին: Այդ ճանապարհով էլ ստեղծվեց միջին գրական հայերենը: Կիլիկիայի բարբառը Ռուբինյան թագավորության ժամանակ հասավ պետական լեզվի աստիճանի: Գրաբարով գրվում էին եկեղեցական մատյանները, իսկ միջին հայերենով՝ գիտական աշխատությունները, գեղարվեստական գրականությունը:

Միջին հայերենի տառադարձությունը ներկայացնելիս կարստը խուլերի դիմաց դնում է ձայնեղները /կ-գ, ճ-ջ, ծ-ձ, տ-դ, պ-բ/, իսկ ձայնեղների դիմաց՝խուլերը /գ-կ, ջ-չ, ձ-ծ, դ-տ, բ-պ/, շնչեղ խուլերն անփոփոխ են մնում:Հովհ. Մուրադյանը միջին հայերենի բաղաձայնները ներկայացնում է չորս համակարգով՝ եռաստիճան անտեղաշարժ, եռաստիճան տեղաշարժ-տեղափոխությամբ, քառաստիճան և երկաստիճան խլազուրկ:

Միջին հայերենում արդեն ճևավորվել էր այսօրվա ղատը, և ը-ն ու ղ-ն որակապես տարբեր հնչույթներ էին: Բայց այդ փոփոխությունը միանգամից չկատարվեց: 11-13-րդ դարերում առկա էին թե՛ հին ղ-ն /ʎ - ղ̂/ և թե՛ նոր ղատը իբրև հնչույթային տարբերակներ: Ըստ Երզընկացու՝ ղ-ն երկու հնչյունի տեղ էր ծառայում՝ ղատի և ղիւնի: Այս տառերի տարբերությունը 11-12-րդ դարերում այնքան անորոշ է, որ միևնույն բառը գրչություններում հանդիպում է թե՛ ղիւնով, թե՛ ղատով: Սրանք իրարից տարբերելու համար սկսեցին ղիւնի վրա փշիկ դնել /ղ̂/: Այսպիսով գրչություններում հանդիպում են ւ, ղ և ղ̂ տառերը: Արիստակես Գրիչի աշխատությունում հանդիպում են ուղղակի, շաղփաղփ բառերը, ուր ղ-ն այսօրվա ղատն է, յաղեղուիւ էղի բառերը, որոնց ղ-ն տարբերվում է ղատ-ից, և էւի, խոյս տալ, յուղվուիւնէ

բառերը, որոնց լ-ն մեր այսօրվա լ-ն է: Ինքն էլ բացատրում է, որ ղիւն /ղ̂/ ոչ լյուն է, ոչ ղառ: 15-րդ դարից փշիկով ղ-ն վերանում է, մնում են լ-ն և ղ-ն: Օտար բառերը, որոնք զրվում էին ղիւն-ով /ղ̂/, հանդիպում են լ-ով /Գալիլեա, Օլիմպիա, Հելլեն, Բաբելոն և այլն/:

Այբուբենում ավելանում է Ֆ տառը: Այս տառին առաջին անգամ հանդիպում ենք Բուսայիղի դեղագրում /1037թ./. ,,Գնացի Մուշարզինն ի ՆԹՋ /1037/ թուականին,,:

V հնչույթն արտահայտվում է երեք տառով՝ ւ, վ, ու: Այս մասին մանրամասն գրել է Է. Աղայանը: Բառամիջի ծայնավորանախորդ ու-ն սկսում է v հնչել՝ թուին-թվին, տուաք-տվաք, թուո-թվո, տուեալ-տվեալ: Ու տառը դառնում է երկու հնչյունի նշան՝ ծայնավորական /տուն, ջուր/ և բաղաձայնական /տուեալ/: Այս պատճառով էլ գրչության մեջ շփոթ է առաջանում: Որպեսզի բաղաձայնանախորդ ու-ն վ կարդան, նրա վրա գրիչները ∞ ∘ նշանը դրեցին, որի գործածությունը մինչև 17-րդ դարը տևեց: Հանդիպում են արտասուեցին, ի տուէ, լուեան, նուազ գրությունները:

Բառավերջի յ-ն դեռ նախորդ դարերից սկսել էր հարտասանվել, 11-րդ դարից հետո բառավերջի յ-ն համր է և գրչություններում համատարած կերպով չի հանդիպում:

Թեև Թրակացու մեկնիչը գրում է, որ հայերենում բառերը ա, ը տառերով չեն վերջանում, բայց Արիստակես Գրիչի ժամանակ /12-րդ դար/ արդեն շատ էր խախտվել այդ կանոնը: Գրիչն իր ,,Վերլուծութիւնք,, աշխատությամբ սահմանում է յ-ի ուղղագրության նոր կանոններ և նշում մի քանի հնչյունափոխական երևույթներ: Ըստ այդ կանոնների յ չեն ստանում 1/հրամայական բայերը՝ աւգնեա, առաքեա, աճեցո, դարձո, 2/սա, դա, նա դերանունները, 3/կա, ապա, ահա, հա եղանակավորող բառերը, 4/այն հատուկ անունները, որոնք ենթակա են /Յուդա մատնեաց զՏէր/, 5/ուղևորման տեղի պարագաները /,,Երթամ ի Սիլիկիա,,/: Այս կանոնները հետագայում էլ, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, ընդունվեցին Մխիթարյանների կողմից և մնացին անփոփոխ: Նարելի է ասել, որ Գրիչի այս կանոնները մեր ուղղագրության առաջին բարեփոխությունը եղան: Սակայն յ-ի ուղղագրությունը քանի զբնում, այնքան շատ է խախտվում: Այդ տառի գրություններն ավելի է դըժվարանում, երբ բառասկզբում սկսում է հ կարդացվել: Շնչեղ յ-ն/ֆ/ դառնում է հ: Գրության մեջ բառասկզբում յ-ի փոխարեն հ է հանդիպում 13-րդ դարից: Հերացին /1279թ./ օգտագործել է հայնց բառը ,,այնպես,, իմաստով: Այդ բառի հ-ն յ նախդիրն է, որ ծայնավորից

առաջ էր դրվում, արտասանվել է ՝ և գրվել ՝: Մի այլ ձեռագրում /1282թ./ հանդիպում է ՝ողքնըտեսըկ ձևը յողնըտեսըկ-ի փոխարեն: Սմբ. Գունդստաբլի ,,Դատաստանագրքում,, /1264թ./ հանդիպում են ՝այնց, ՝անչանը, ՝նեը ձևերը:

Բաղաձայնանախորդ աւ տառակապակցությունը, որ 5-րդ դարում երկբարբառային էր /բացառությամբ նաւթ, աղաւնի բառերի/ և աստիճանաբար վեր էր ածվում օ-ի, այս դարերում ավելի է ընդունում օ հնչումը: 11-րդ դ. հանդիպում են բարեխոսութիւն, փառոք, Կոստանդնապոլսի և այլ գրությունները, որոնցում աւ-ի փոխարեն գրված է ո: Մագիստրոսի ժամանակ /11-րդ դար/ արդեն բաղաձայնանախորդ աւ-ը օ էր հնչում, նշում է պրոֆ. Գ. Ջահուկյանը:

9. See F. Blass and A. Debrunner, A Greek Grammar of the New Testament and Other Early Christian Literature, translated and edited by R.W. Funk (Chicago/London: The University of Chicago Press, 1961), p. 181, # 356.

Gn 43:25 offers one of only two examples of μελλεῖν plus an infinitive in the Greek Pentateuch. In the only other case, at Ex 4:12, the construction in Armenian employs պարտ.

G. Cuendet made the following remark on the use of the participle in -ots^{c} to render μελλεῖν . "In the Armenian version this turn of expression often renders the Greek future (Jn 13:21: մատնիլոց է = παραδώσει) and more often the verb μελλεῖν (Jn 6:71: մատնիլոց էր = ἤμελλεν παραδιδόναι)." He makes this remark in "Eznik et la Bible," REArm 9 (1929), p. 21.

10. This means of rendering attributive participles is common in Dt. Cf. The Armenian Translation of Deuteronomy, p.226.

11. Of this type of conditional sentence in Hellenistic Greek see Blass-Debrunner-Funk, pp. 188ff., # 371, 372.

12. The ὅσα ἐάν indefinite relative clauses are the equivalent of so-called third class conditional clauses. Here the condition is "an expected case or a generalizing case in present time," according to Funk, A Beginning - Intermediate Grammar, p. 683, # 858.

13. There is a second example of καθαρίζω in attributive participial form in v.11. Here ὁ καθαρίζων refers to the priest. It is translated here too by a relative clause with the verb in the subjunctive: որ սրբիցէ "who will cleanse."

14. 1:20, 25; 2:29; 3:20; 4:1, 21, 40; 5:31; 9:6, 23; 11:31; 12:1, 9; 13:12; 15:4,7; 16:20; 17:14; 18:9; 19:2, 8, 10, 14; 21:1, 23; 24:4; 25:15,19; 26:1, 2; 27:2, 3; 28:8; 32:49.

15. On aorist participles with a futuristic meaning see Funk, A Beginning - Intermediate Grammar, p. 668, # 845.2 and Blass-Debrunner-Funk, A Greek Grammar, p. 174f.; #339.

16. It is true also of The Life of Mashtots that the participle in -ots^{c} with the verb "to be" does not occur in a main clause. See M. Abeghyan, ed., Vark^{c} Mashtots^{c} (Yerevan: Haypethrat, 1941), p. 28, line 15 զինչ ի Սողոմն էր զործելոց a quotation from Gn 18:17; p. 54, line 23 որ զալոցն էին cited by Jensen at # 311; p. 72, line 23 ուր եւ երթալոցն էր p. 98, line 12f. որք նորօք աշակերտելոց իցեն.

Վ.Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

18-19-ՐԴ ԴԴ. ԳՐԱԲԱՐԻ ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

18-19-րդ դդ. հայ մշակույթը մեծ վերելք է ապրում: Այդ ընթացքում նոր հայերենի զարգացումը տեղի է ունենում աշխարհաբարի գրական նորմավորման և նոր շրջանի գրաբարի մշակման ու կատարելագործման ուղիներով: Գիտության տարբեր ճյուղերի զարգացմանը համընթաց որոշակի աշխուժացում է նկատվում նաև մարտասանության բնագավառում:

Նոր շրջանի գրաբարի մարտասանական տերմինաբանությունը քննության առարկա չի եղել՝ վերցված ոչ միայն առանձին, այլ գրաբարի բառապաշարի հարաբերությամբ: Գրաբար մարտասանական երկերի լեզուն աչքի է ընկնում նոր շրջանի գրաբարին բնորոշ առանձնահատկություններով, որոնք արտացոլված են հատկապես տերմինաբանության մեջ:

Հայոց լեզվի զարգացման նոր պայմաններում գրաբար մարտասանական երկերի տերմինաբանության մշակումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

Նախ, ոչ անկախ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու ,,Համառոտութիւն մարտասանականի արհեստի,, երկի[1] ազդեցությունից, նկատվում է լատինաբան գրաբարի ժառանգման և հետագա խորացման միտումը: Այդ բնույթի է հատկապես Խաչատուր Երզրումցու ,,Մարտասանութիւն,,[2]: Այն անհամեմատ ավելի ընդարձակ է, քան նախորդ երկը, աչքի է ընկնում նյութի մանրամասն մշակմամբ և լայն շարադրանքով, որոնցով պայմանավորված են տերմինների առատությունը և բազմազանությունը: Այսպիսին է նաև Մխիթար Սեբաստացու ծեռագիր ,,Գիրք մարտասանութեան,,[3], թեև նրանում առկա է գրաբարի լատինաբան ազդեցության թուլացման, համապատասխան ձևերի մեղմացման միտումը:

Երկրորդ, գրաբար մարտասանական երկերը ևս ցույց են տալիս, որ այդ շրջանում մեծ չանքեր են ի սպաս դրվում գրաբարի լատինաբան ազդեցության հետագա թուլացման և գրաբարի ինքնակա մշակման ուղղությամբ: Այդպիսին է Ստեփաննոս Ազոնցի ,,մարտասանութիւն,,-ը[4], որտեղ հեղինակը, գրաբարի մշակման հարցում հետևելով Սեբաստացուն,

տվյալ գիտակարգին վերաբերող հարցերի լուծումը տալիս է համեմատաբար մեծ հետևողականությամբ, նյութի ընդգրկման ամբողջականությամբ և դասակարգման ինքնատիպությամբ: Այդ աշխատության լեզուն ընդհանուր առմամբ նմուշ է գրաբարի լատինաբան նորամուծությունների իսպառ թուլացման և հաղթահարման պատմության մեջ:

Երրորդ, գրվում է նաև այնպիսի մարտասանական երկ, որի լեզուն ժամանակի գրաբարն է: Այդպիսիք են Եփրեմ Սեթյանի և Միքայել Սալլանթյանի համապատասխան աշխատությունները[5]: Այս իմաստով որոշ հետաքրքրություն է ներկայացնում նաև Էդուարդ Հյուրմյուզյանի ,,Առճեռն մարտասանութիւն,,-ը[6], որը հետազոտում է ավելի շատ գործնական նպատակ:

Չորրորդ, խնդիր է առաջադրվում, ինչպես այլ դեպքերում, մարտասանական երկը գրել դասական գրաբարի օրինակով, ընդ որում գործածել 5-րդ դարի առաջին՝ կեսի երկերի բառապաշարը և տերմինաբանությունը: Այդ ընույթի է Մատթիա Գարագաշյանի ,,Արուեստ մարտարախօսութեան,,-ը[7], որտեղ յուրովսանն հաշվի են առնված մարտասանության բնագավառի այն հին ու նոր նվաճումները, որոնց հասել են հայ և օտար հեղինակները:

Գրաբար մարտասանական երկերը տվյալ գիտակարգի տեսական և գործնական խնդիրներով պայմանավորված ուսումնասիրություն լինելուց բացի պարունակում են նոր շրջանի գրաբարի պատմությանը վերաբերող տվյալներ, գրաբարի բառապաշարի մեջ տեղի ունեցած փոփոխությունները փոքրիշատե արտացոլող փաստեր:

Գրաբարի մարտասանական տերմինաբանությունը զոյանում է հիմնականում հայոց լեզվի բառապաշարի ներքին հնարավորությունների գործադրմամբ, մասամբ՝ օտար տերմինների փոխառությամբ:

Գրաբարի նախորդ շրջաններում հայտնի բառերի, լայն իմաստով հանդես եկած տերմինների կողքին բառաբարդմամբ ու ածանցմամբ կազմվում և կիրառվում են նոր տերմիններ: Նախկինում սովորական կիրառություն ունեցած բառերն այստեղ հանդես են գալիս նոր՝ տերմինային նշանակությամբ: Դրանցից բացի, դասական գրաբարի օրինակով առաջադրվում են այնպիսի տերմիններ, որոնք զուգահեռ են մինչ այդ կիրառվածներին: Երբեմն տվյալ տերմինը արտահայտվում է մեկ ամբողջական բառակապակցությամբ: Կիրառվում են նաև օտար տերմիններ:

Նորակազմ են իբրև բառային ինքնուրույն միավոր գործածվող բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր այն տերմինները, որոնք առաջին անգամ հանդիպում են այս շրջանի գրաբար մարտասանական երկերում: Նորակազմ տերմինները ևս ցույց են տալիս նոր շրջանի գրաբա-

րի բառապաշարի կրած այն փոփոխությունները, որոնք պայմանավորված են նոր հասկացությունների անվանման, ինչպես նաև արդեն մոռացության մատնված բառերի փոխարեն նոր բառեր կիրառելու հանգամանքներով:

Նորակազմ տերմինները համեմատաբար քիչ են: Օրինակ՝ ածանցանուն / paregmenon / - ՄՈՒՀ, 306. հրապարակագիր//հրապարակամտեան - Խէ, 51. նմանաձայն - ԵՍՍ, 51. նմանայանգ - ՄՈՒՀ, 30. նմանավերջ - ՍՍՀ, 313. նոյնահոլով - ն.տ., 312, նոյնատառ - ՄՈՒՀ, 305 և այլն:

Նորակազմ ածանցավոր տերմինները բաժանվում են երեք ենթախմբի՝ ըստ բառի կազմում ածանցի զրաված դիրքի կամ ածանցների մասնակցության հնարավորության:

Նախածանցավոր տերմինները կազմվում են գեր-, վեր-, տար- ածանցներով: Օրինակ՝ գերագաղափար - ՄՈՒՀ, 122. վերբերբնանալ, վերբանբանալ, վերպատուականանալ - Խէ, 233-234. տարագոյգ - ն.տ., 32. տարահամոգել - ն.տ., 104 և այլն:

Վերջածանցավոր տերմինները բաղադրվում են -ութիւն, -ումն ածանցներով, որոնք,բնականաբար, կազմում են գոյական անուն՝ անվանելու առարկայական հասկացություն: Դրանցից -ութիւն-ը գործածվում է ոչ միայն ինքնին, այլև՝ հաջորդելով -ական, -արար, -որդ ածանցներին: Օրինակ՝ աստիճանութիւն - Խէ, 236,246. բաժանորդութիւն - ՍՍՀ, 352. եղանակաւորութիւնն - Խէ, 213. ցարտուղութիւն - 216-317. աղերսումն - Խէ, 258. սնիծումն - ն.տ., 246 և այլն:

Նորակազմ համածանցավոր /այլ կերպ՝ նախածանցավերջածանցավոր[8]/ են, տվյալ դեպքում, այն տերմինները, որոնցում նախածանցը և վերջածանցը բաղադրության հավասարաչափ անհրաժեշտ անդամներ են՝ միասնաբար արտահայտելու հիմքում ընկած նոր հասկացության տերմինային նշանակությունը: Այսպիսի բաղադրությունները պատմականորեն կարելի է հանգեցնել կամ նախածանցավոր, կամ վերջածանցավոր տիպի: Իրրև նախածանցներ կիրառվում են ան-, բաղ-, ընդ-, հակ-, համ-, նախ-, ներ-, սառը-, վեր-, տար-, փոխ- ածանցները, իրրև վերջածանցներ՝ -ութիւն, -ումն, -ական, -ապէս ածանցները: Վերջիններս բաղադրում են գոյականները, ածականներ և մակբայներ, որոնք հանդես են գալիս իրրև առարկայական հասկացություն, առարկայի կամ գործողության հատկանիշի զաղափար նշանակող տերմիններ: Օրինակ՝ անուրանալութիւն - Խէ, 247. բաղանշանումն - ն.տ., 26. բաղհիւսութիւն - ՍՍՀ, 297. ընդլայնումն - ն.տ., 162. հակակցութիւն - ն.տ., 316. համակցութիւն - ձեռ. 879, 105ա. համառութիւն - Խէ, 225. նախադասութիւն - ն.տ., 50-51. նա-

ընդհանրություն – ՍԱՀ, 351. ներհակադրություն – Ն.տ., 316. ստորադասություն – ԽՀԺ, 22. վերջակրկնություն – ՄՄԱՀ, 305. տարբերություն – ԽՀԺ, 239. տարանջատություն – ՍԱՀ, 304. փոխաբերականացում – ԽՀԺ, 225 և այլն:

Նորակազմ բարդ ածանցավոր տերմինները համեմատաբար շատ են: Բառակազմությունը տեղի է ունենում երկու և ավելի բաղադրիչներով, որոնք միանում են հոդակապով կամ առանց հոդակապի: Օրինակ՝ ընտրելիություն – ԽՀԺ, 246. ընդգրկունություն – ՄՄԱՀ, 61. ընկալունակություն – ԽՀԺ, 63-64. պատմառաջնայնականություն – Ն.տ., 67. վստահելիագնահատություն – Ն.տ., 277 և այլն: Դրանք բաղադրվում են հիմնականում -ություն և -ումն վերջածանցներով, երբեմն՝ -ան նախածանցով: Ընդ որում վերջածանցները մի դեպքում հարում են ամբողջական բարդությանը՝ աստիճանայնություն – ԽՀԺ, 64. պայմանայնություն – ՄՄԱՀ, 122. վստահարկություն – Ն.տ., 278, մյուս դեպքում՝ առնչվում բարդության երկրորդ բաղադրիչին՝ անդրադարձություն – ԽՀԺ, 242. իրականացում – Ն.տ., 253. հիմնադրում – Ն.տ., 249. նոյնանշանակություն – Ն.տ., 19 և այլն: Ան- նախածանցը վերաբերում է ողջ բաղադրությանը. անարժանահամարում – ԽՀԺ, 128. անհրաժեշտություն – Ն.տ., 278. անկանոնագահություն – Ն.տ., 149 և այլն:

Հին և միջին շրջանի գրաբարի բառապաշարի որոշ միավորներ գրաբար ծարտասանական երկերում հաճախ հանդես են գալիս նոր իմաստային կիրառություններով: Այդ դեպքում գործ ունենք բառի իմաստային ընդլայնման, այսինքն՝ բառի տերմինային նշանակության ձեռքբերման հետ: Այստեղ բառի իմաստային նոր կիրառությամբ պայմանավորված տերմինները առանձնացնում ենք գրաբարի բառարաններից, հատկապես ,,Նոր բառգիրք հայկազեան,,-ի[9] ընձեռած հնարավորությունների համեմատությամբ՝ առանց անտեսելու մյուս բառարանների[10] տվյալները, եթե դրանք տրվյալ դեպքում որևէ տարբերություն ունեն:

Այսպես, առաձելաբանությունը բառը ըստ ՆՀԲ-ի արտահայտում է ,,ավելորդաբանություն. հավելված կամ բարդություն բանից,, իմաստները, այնինչ Երզրումցին նույն բառը կիրառում է իբրև ասացվածի այլաձևության մի տեսակը նշանակող տերմին. ,,առաձելաբանությունը կամ վերանցութիւն, որ ի յայլոց վերաչուութիւն ասի, իսկ յունարէն և լատիներէն հիփէռպոլէ ասի,, /էջ 233/: Բացմաբանությունը բառը ըստ ՆՀԲ-ի ունի ,,ի բազում մասանց հոդյալ, բաղադրություն ի բազմաց,, իմաստը: Ագոնցը նույն բառը կիրառում է իբրև ոչ փոխակերպությամբ հանդես եկող բառերի ծարտասանական ձևերից մեկը նշանակող տերմին. ,,բազմաբանությունը, որ ըստ յունաց բօլիսինթէթօն լսի, է ձև առաւե-

լեալ բազմապատիկ շաղկապօք, յորում իւրաքանչիւր անդամք պարբերութեան շաղկապաւ յօդին,, /էջ 303/: Զուգորդութիւնը բառը ՀՀԲ-ում տրվում է ,,մեկզմեկու հետ կցիլ, խառնվիլ,, իմաստով: Ըստ Սեթյանի այն զեղչման տեսակներից մեկը նշանակող տերմին է. ,,զեղչումն անուանեմք զասացուածս՝ յորս լոին բառք՝ դիւրաւ գուշակելիք: Երբեակ ազգք են զեղչման. տրոհումն, զուգորդութիւն և կրճատումն,, /էջ 91/: Ըստ այսմ, գրաբարի մարտասանական տերմինաբանության մեջ առանձնացնում ենք բառի իմաստային նոր կիրառությամբ պայմանավորված շուրջ 35 տերմիններ. անդամահատն /,,պարբերության մի ճեսակը,,/ - ԽՀծ, 220. անցումն /,,ասացվածի ձևերից մեկը,,/ - ԵՍԱծ, 99. բազմաբանութիւն /,,հավելվածի մի տեսակը,,/ - ՄՍՀծ, 303. բազմաեղանական /,,մի տեսակը, ըստ Սեթյանի, ,,հոգեշարժ ձևոց իմաստից,,/ - ԵՍԱծ, 128. խելամտութիւն /,,սինեկդոխա,,/ - ՍԱծ, 273. շփոթաբանութիւն /,,հիպեռբատոն,,/ - ԽՀծ, 233. ցարակուսութիւն /,,ասացվածի ձևերից մեկը,,/ - ՍԱծ, 323. ունայնաբանութիւն /,,պլեոնազմ՝ մոխրաբանության հոռություններից մեկը,,/ - ԽՀծ, 277. փոխակերպութիւն /ըստ Ագոնցի՝ ,,ի յունաց թռօփուս կոչի,,/ - ՍԱծ, 261. փոխանութիւն /,,ըստ յունաց մէթօնիմիա և հիփալլակէ ասէ,,/ - ՍԱծ, 268 և այլն:

Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ նոր ժամանակներում, կապված գրաբարի ,,վերակենդանացման,, , գրաբարը ընդհանուր գրական լեզու դարձնելու փորձերի հետ, մշակվում է նաև գրաբարի մարտասանական տերմինաբանությունը: Դա ամենից լավ երևում է Մխիթարյան երկու դպրոցների ներկայացուցիչների կողմից ստեղծված մարտասանական երկերի բառապաշարի փաստերի համադրումից: Դասական գրաբարի օրինակով առաջադրվում են այնպիսի տերմիններ, որոնք ոչ միայն զուգահեռ են մինչ այդ եղած, այս շրջանի նախորդ հեղինակների կողմից կիրառված տերմիններին, այլև որոշակիորեն խախտում են նույն շրջանում տերմինների կիրառության հարցում փոքրիշատե ստեղծված ավանդույթը: Այսպես, Էրզրումցին /էջ 233, 246/ կիրառում է այլաբանութիւն տերմինը, որին հետևում են Մխիթար Սեբաստացին /էջ 81բ/, Ագոնցը /էջ 281-284/, Սեթյանը /էջ 79-80/ և Սալլանթյանը /էջ219/, սակայն Գարագաշյանը դրա դիմաց գործածում է այլաստացութիւն տերմինը՝ իբրև դասական գրաբարին ավելի հարազատ բաղադրիչով մի կազմություն /էջ 156/: Բացադրաբանութիւն տերմինը կիրառում է Ագոնցը /էջ 338-339/, որին հետևում են Սալլանթյանը /էջ 210-211/, Հյուրմյուզյանը /էջ 75-76/, իսկ Գարագաշյանը այն փոխարինում է դարձուած տերմինով /էջ 141-142/: Էրզրումցին կիրառում է փոխաբե-

ըուքյուն տերմինը /էջ 225/, որն ընդունվում է Ազոնցի /էջ 263-268/, Սեթյանի /էջ 72-74/, Սալլանթյանի /էջ 219-221/, Հյուրմյուզյանի /էջ 47-59/ կողմից, ստեղծելով տերմինի գործածության որոշակի ավանդույթ: Գարագաշյանի կողմից հետագայում այն փոխարինվում է փոփոխուսմ տերմինով /էջ 147-149/, այն նկատառումով, որ վերջինս համարվում է դասական գրաբարին բնորոշ մի կազմություն:

Այստեղ կարելի է առանձնացնել այդ բնույթի տերմինների կիրառության շուրջ 30 օրինակ՝ իրենց զուգահեռներով. դիմաինուքիւն /ՍՍԱ, 341-343. ԵՍՍԱ, 109-114. ՄՍՀԱ, 209, 290. ԷՀՍԱ, 76-78/ - ընեսս առնուլ /ՄԳՍԱ, 144-146/. զանցառուքիւն /ՀՆԱ-ի հետևությամբ՝ ԽԶԱ, 254. ԺԵՌ. 879, 94ա. ՍՍԱ, 331-333. ՄՍՀԱ, 290/ - զեղչել /ՄԳՍԱ, 136-137/. համբարդուքիւն /ՍՍԱ, 236-238. ՄՍՀԱ, 254. ԷՀՍԱ, 146-148/ - շեղջակոյս /ՄԳՍԱ, 79-80/. համանունուքիւն /ՀՆԱ-ի հետևությամբ՝ ԽԶԱ, 238. ԺԵՌ. 879, 84բ-85ա. ՍՍԱ, 301-302/ - կից անուանք /ՄԳՍԱ, 156-157/. հեգնուքիւն /ՀՆԱ-ի հետևությամբ՝ ԽԶԱ, 256. ԺԵՌ. 879, 81բ, 93ա. ՍՍԱ, 276-277/, հենգնուքիւն /ԵՍՍԱ, 80-82. հեգնուքիւն//հենգնուքիւն - ՄՍՍԱ, 52-53, 292/ - խաղաքնուքիւն, կեղծիք, կեղծաւորուքիւն /ՄԳՍԱ, 154-155/. պարբերուքիւն /ԽԶԱ, 218-221. ՍՍԱ, 359-371. ԵՍՍԱ, 62-65. ԷՀՍԱ, 198-210/ - շըջուսմն /ՄԳՍԱ, 160-165/, սահման /ՀՆԱ-ի հետևությամբ՝ ԽԶԱ, 16. ԺԵՌ. 879, 23բ. ՍՍԱ, 83. ԵՍՍԱ, 208-211. ՄՍՀԱ, 17. 169-171. ԷՀՍԱ, 16/ - որոշուսմն /ՄԳՍԱ, 87/. սեռ /ՀՆԱ-ի հետևությամբ՝ ԽԶԱ, 254, ԺԵՌ. 879, 23բ - 24բ. ՍՍԱ, 100. ԵՍՍԱ, 216-218. ՄՍՀԱ, 12-14. ԷՀՍԱ, 30/ - ցզգ /ՄԳՍԱ, 92, 187/. փոխանունուքիւն /ՀՆԱ-ի հետևությամբ՝ ԺԵՌ. 879, 76ա. ՍՍԱ, 268-272, ԵՍՍԱ, 77-78, ԷՀՍԱ, 50-51/ - անուանափոխուքիւն /ՄԳՍԱ, 151-152/ և այլն:

Գրաբար Ծարտասանական երկերում բավական ակնառու է բառակապակցությամբ արտահայտված տերմինների կիրառությունը: Այդ կարգի տերմինների նորակազմություն լինելը հիմնականում պարզվում է նախորդ դարերի հայերեն Ծարտասանական երկերում կիրառված չլինելու հիմունքով: Բառակապակցությամբ արտահայտված տերմինների գերակշիռ մասը հանդես է գալիս բառակապակցության բաղադրիչներից լրացումներով՝ նոր հայերենին առավել բնորոշ առաջադաս կիրառությամբ, և դա բավական հետաքրքրական է:

Բառակապակցությամբ արտահայտված տերմինները անհամեմատ շատ են հանդիպում էրզրումցու երկում: Ընդհանուր առմամբ կիրառված են շուրջ 60 տերմինները՝ կազմված բառակապակցական երկու և ավելի բաղադրիչներով: Օրինակ՝ անպատեհ առատաբանութիւն, անպատեհ հպարտա-

քանուքիւն – Խշ, 278. աշացուցական ձեռնարկուքիւն ,,մարտասանական ձեռնարկման մի տեսակը,, – Ն.տ., 15. առաքինուքիւնք և զարդք մոխաբանուքեաց – Ն.տ., 276. բարքայլտնական, բնուքենայլտնական քան ,,մարդ առարկայի մասին ծանուցում,, – Ն.տ., 198. գիտնական համախօսուքիւն ,,իրաւրական մարդ մի տեսակը,, – ՄՈՀշ, 20. գեղեցկագարդուքիւն բառից –Խշ, 210. համածայն քառանդամ պարբերուքիւն – Ն.տ., 220. համահերքական քան ,,մարդ դատաստանական բեռի մի տեսակը,, – Ն.տ., 201. մաշակ գեղագիտական ,,գեղագիտական մաշակ,,. gustus aestheticus – ՄՈՀշ, 105. մեղմադէմ//բարեկամաձև զանգատական քան – Խշ, 204. պայման խնդրոյ – ՆՈՍշ, 196–197 և այլն:

Օտար տերմինների կիրառության հարցում հեղինակները հանդես են բերում երկու կարգի մոտեցում: Մի դեպքում օտար տերմինը կիրառվում է իբրև հայերեն տերմինի իմաստը երկրորդաբար պարզաբանող միջոց: Այն բերվում է զուգահեռաբար, հայերեն կամ օտար գրությամբ և ընդհանրացնում է հայերեն տերմինի կոնկրետ նշանակությունը: Այդ միջոցին մեծ մասամբ դիմում են Էրզրումցին, Ազոնցը, Սեթյանը և Սալլանթյանը: Մխիթար Սեբաստացին, Հյուրմյուզյանը և Գարագաշյանը գրեթե հեռու են օտար տերմինի այդպիսի կիրառությունից: Դրանից բացի, Էրզրումցին և Ազոնցը օտար տերմինը գործածում են շարադրանքի ընթացքում, իսկ Սեթյանը՝ աշխատության տողատակին, Գարագաշյանը՝ գրքի վերջում բերվող տերմինների ցանկում: Այդպիսիք են, օրինակ, հետևյալները. ,,ազդուաբանուքիւն, ըստ յունաց էմֆազիս ասացեալ,, – ՄԱշ, 290. ,,բաժանորդուքիւն, ըստ լատինացւոց տիսթռիպուցիօ,, – Ն.տ., 352. ,,աղուաժայնուքիւն – euphonia ՄՈՀշ, 260 և այլն:

Մյուս դեպքում օտար տերմինները, իրոք, փոխառություններ են: Դրանց մի մասը կիրառվում է առանձին: Օրինակ՝ ալլէօզիս – Խշ,261. անթիսթացիս – Ն.տ., 262. էֆիքրիզիս – Ն.տ., 264. փլէօնազմուս կամ պլէօնազմուս – Ն.տ., 267 և այլն: Մյուս մասը հանդես է գալիս հայերեն համապատասխան իմաստով զուգահեռ, հայերեն թարգմանական տարբերակի հետ: Օրինակ՝ ավուկսէզիս – լայնատարածումն – Խշ, 263. դիղեմայ – երկառած – ՄԳԱշ, 75–76. էթօլօգիա կամ էթօլօգիայ – վարքաբանուքիւն – Խշ, 266. լէքթօլօգիայ – մանրամասնաբանուքիւն – Ն.տ., 262 և այլն:

Այսպիսով, 18–19-րդ դդ. գրաբարի մարտասանական տերմինաբանության լեզվական քննությունից պարզվում է, որ նոր շրջանի գրաբարի բառապաշարը կրում է զգալի փոփոխություններ՝ կապված լատինաբան ձևերի աստիճանական հաղթահարման, բառակազմությունը մասամբ հին շրջանի գրաբարին, հետագայում նաև վերջինիս դասական վիճակին մոտեցնելու,

ժամանակի գրական աշխարհաքարից որոշ չափով ազդվելու և օտար տերմիններ փոխառնելու հանգամանքների հետ:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Համառօտութիւն Յարտասանականի արհեստի, շարադրեցեալ ի Յոհաննիսէ Կոստանդնուպօլսեցւոյ, Մարսել, 1674 /այսուհետև՝ ՀՅԺ/

2 Յարտասանութիւն, արարեալ և շարադրեցեալ ի Թաչատրոյ Էրզրումեցւոյ, Վենետիկ, 1713 /այսուհետև՝ ԹԷԺ/

3 Գիրք Յարտասանութեան, շարադրեալ ի Մխիթարայ Սեբաստացւոյ /Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. 879, գրված՝ ,,յամի 1760 ի Հաշտարխան,, , Գասպար գրչի կողմից. այսուհետև՝ ձեռ. 879/

4 Յարտասանութիւն, շարազրեալ ի Ստեփաննոս Ազոնց, Վենետիկ, 1775 /այսուհետև՝ ՍՍԺ/

5 Արհեստ Յարտասանութեան, աշխատասիրեալ Եփրեմայ Սեթեան, Վենետիկ, 1832 /այսուհետև՝ ԵՍՍԺ/. Հրահանգ Յարտասանութեան կամ Յառաբանութեան, յօրինեաց Միքայէլ Սալլանթեանց Կոստանդնուպօլսեցի, Մոսկվա, 1846 /այսուհետև՝ ՄՍԺԺ/

6 Առձեռն Յարտասանութիւն, համառօտեալ ի Եղուարդայ Հիւրմիւզեան, Վենետիկ, 1839 /այսուհետև՝ ԷՀՍԺ/

7 Արուեստ Յարտարախօսութեան, զոր արարեալ է Մատաթիայ Գարագաշեան, Վիեննա, 1844 /այսուհետև՝ ՄԳՍԺ/

8 Տես Ս.Գ. Աբրահամյան, ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981, էջ 106-107

9 Գաբրիէլ Ալեպիքեան, Թաչատուր Սիւրմելեան, Մկրտիչ Ալգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837 /այսուհետև՝ ՆՀՔ/:

10 Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1749-1769 /այսուհետև՝ ՀՀՔ/

Ա.Ն. ՀԱՆԵՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՁԱՅՆԵՂ ՀԱԳԱԳՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՂԵՐՍԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՍՆԱԶԲԻ Ց ՁԱՅՆՈՐԴԻ ՀՉՑ

Հայտնի է, որ արդի գրական հայերենի երկու տարբերակների բաղաձայն հնչույթների համակարգում առկա է հազագային մեկ հնչույթ՝ խուլ շփական ս, որը հատուկ է նաև հայերենի բարբառների արևելյան ու արևմտյան խմբակցություններին եզրային տարածքների խոսվածքներին: Ի տարբերություն նշվածների, բարբառների կենտրոնական և հարակից տարածքներում բաղաձայնական համակարգերը երևան են հանում հազագային զույգ հնչյուններ, որոնցից մեկը արտաբերմամբ համապատասխանում է նշված խուլ ս-ին, իսկ մյուսը հակադրվում է նրան ձայնեղության հատկանիշով: Վերջինս բարբառային տարբեր տարածքներում իրացվում է ձայնեղ հազագների տարատեսակներով, որոնք ներկայացրել ենք հ և ֽհ նիշերով /տես աղյուսակը/: հ հնչյունով բնորոշվող բարբառային տարածքը ընդգրկում է հարավ-կենտրոնական, հյուսիս-արևելյան, Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբերը[1] /ոչ լրիվ/: Սրանց ընդհանուր հատկանիշն է նաև շնչեղ ձայնեղով բաղաձայնական համակարգի առկայությունը: Տարածքում առանձնանում է բարբառային միավորների երկու խումբ: I խմբին /Մուշ, Ալաշկերտ, Բուլանուղ, Արծափ, Արարատյան, Լոռի, Կարին, Սեբաստիա, Արաբկիր, Շապին-Գարահիսար/ բնորոշ է երկու հազագային հնչյունների առկայությունը՝ խուլ և ձայնեղ /տմմտ.՝ հաց, հին, հաննել և ֽճիձձուն, ֽիջվիկ, ֽհաղուղ/. ի դեպ, նշված տարածքում այս հազագը առաջին անգամ դիտել է Հ. Աճառյանը[2]: II խումբը կազմում են Մուշին և Վանի հարավային միջբարբառախմբին սահմանակից այն խոսվածքները /Արծկե, Արճեշ, Բաղեշ, Մանազկերտ, Խլաթ, Ալաշկերտի և Բուլանուղի որոշ խոսվածքներ, նոր Ջուղա, Բայազեդ /Կամո/, Դիադին /Վարդենիս//, որոնք հին հայերենի հ-ի դիմաց ունեն խ /հազ~խազ, հաւ~խավ/. հետևաբար՝ սրանցում խուլ հազագի բացակայության պայմաններում ձայնեղ հազագը գործառում է իբրև իր տեսակի մեջ միակ հնչյուն: Այս խոսվածքները ուշ շրջանի օտար և անգամ արդի հայերենից կատարած

փոխառութիւններում խուլ ՙ-ն հնչում են ծայնեղ:

ֆ հազագով բնորոշվող տարածքը ընդգրկում է Վանի հարավային միջբարբառախումբը /Շատախ, Մոկս, Ոզմ, Բերկրի/: Տարածքի ընդհանուր հատկանիշներն են ստուգաբանական ՙ-ի դիմաց ը-ի առկայությունը, որով այն հարում է 1-ին տարածքի ՛ խմբին, և շնչեղ ծայնեղների բացակայությունը: Այսինքն՝ այս տարածքում նուլյսպես ծայնեղ հազագը գործառում է իբրև միակ կոկորդային հնչյուն: Հազագի այս տարատեսակը առաջին անգամ դիտվել է Մ. Մուրադյանի կողմից և որակվել իբրև ծայնեղ ՙ[3]:

Ըստ հնչյունների արտաբերական դասակարգման, ֆ հազագը ստորին-կոկորդային /լարինգալ/, ծայնորդանման հնչյուն է, արտաբերվում է առավելապես ծայնալարերի ցրճռումով, որին այս կամ այն չափով ուղեկցում է նաև թույլ շունչ կամ աղմուկ: Իբրև հնչյուն նրա ծևավորումը վանկի սահմաններում կախված է հաջորդող ծայնավորի կազմավորման տեղից ու դիրքից. այսպես՝ միջին շարքի ը ծայնավորին նախորդող դիրքում հնչյունը երևան է գալիս իր ամենաբնական ծևով՝ ֆըղուղ, ֆըմմէն. ի ծայնավորին նախորդելիս այն ստանում է նաև միջնալեզվայնության երանգ՝ ֆիծծուն, ֆիստակ, իսկ ետին շարքի ծայնավորներից առաջ ավելի է ընդգծվում նրա կոկորդայնությունը՝ ֆագօգ, ֆօսօ: Այս հնչյունն իբրև ծայնեղ հազագային բաղադրիչ երևան է գալիս նաև շնչեղ ծայնեղ կոչված բաղաձայնների կազմում՝ բ՚ֆ, գ՚ֆ, դ՚ֆ ...:

Մյուս հազագը՝ ֆ -ն , ի տարբերություն նախորդի, արտաբերության տեղով վերին կոկորդային /Ֆարինգալ/ հնչյուն է, հատկապես առաջնային շարքի լայնբացվածքային ծայնավորներին նախորդող դիրքում /ֆաղը, ֆէփ/, ընկալվում է իբրև ծայնեղ շփական ՙ, այսինքն՝ աղմուկը, շունչը սրանում առավել զգալի է:

Փորձառական հնչյունաբանության տվյալների համաձայն[4], այս երկու հազագները մոտավորապես բնութագրվում են՝ ա/ որպես ծայնորդանման հնչյուններ՝ ընդհանուր առմամբ նման հաջորդող ծայնավորի պատկերին՝ որոշ երանգային տարբերություններով. վանկարար ծայնավորը հիմնականում մաքուր է՝ երբեմն միայն շնչով երանգավորված: Այս որակով հնչյունը առկա է Ալաշկերտի խոսվածքում ընդհանրապես, իսկ Բուլանուղի, Բայազեդի, Շատախի խոսվածքներում՝ մասամբ. և բ/ որպես բաղադրյալ հնչյուն՝ հետևյալ կազմով. բառասկզբում խուլ շունչ կամ աղմուկ+ծայնորդա-ծայնավորային հատված, կամ վանկարար ծայնավորի՝ շնչով երանգավորված մաս, որոնց հաջորդում է ծայնավորի մաքուր հատվածը /Բուլանուղ, Բայազեդ, Շատախ/: Վանկի ներսում

բաղաղրյալ այս հնչյունի ձայնեղ հատվածը տատանվում է ձայնորդի և ձայնավորի սահմաններում. սրանով պետք է բացատրել այն երևույթը, որ այդ հատվածը չունի կայուն պատկեր և յուրաքանչյուր առանձին դեպքում մոտենում է հաջորդող ձայնավորի պատկերին: Վերջինիս երանգավորված մասը, որ ձայնեղ հազագի շնչի տարածումն է վանկաըար ձայնավորի վրա, արդյունք է վանկի մեջ բաղաձայն ու ձայնավոր հնչյունների հարմարեցման, փոխներգործության: Ի դեպ, ձայնի և աղմուկի նշված հարաբերությամբ այս հնչյունները տարբերություն են գծում ոչ միայն առանձին խոսվածքների միջև /օրինակ՝ Ալաշկերտի և մյուսների/, այլև միևնույն խոսվածքի ներսում՝ արտաբերվելով մերթ մաքուր ձայնեղությամբ, մերթ էլ՝ խլությամբ բաղաղրված: Երևույթը տեսականորեն կարելի է բացատրել հետևյալ կերպ. երկհազագավոր խոսվածքներում ձայնեղ հազագը հիմնականում գործառում է իբրև ձայնորդանման հնչյուն, որը արտաբերական հատկանիշներով հստակորեն տարբերվում է խուլ [ʔ]-ից, քանի որ, ինչպես կտեսնենք, այդ երկու հազագները հնչույթային համակարգի տարբեր միավորներ են, տարբեր հնչույթներ. իսկ ստուգաբանական [ʔ]-ի դիմաց ի ունեցող միահազագ խոսվածքներում ձայնեղ հազագը, ինչպես էլ որ արտաբերվի՝ շունչը քիչ, թե շատ, մաքուր ձայնեղությամբ, թե խլության երանգով, այնուամենայնիվ ընկալվում է իբրև միևնույն հազագային հնչույթը: Այսպիսով՝ երկհազագավոր խոսվածքներում [ɦ] հազագը ունի կայուն ֆիզիկական /ակուստիկական/ բնութագիր, իսկ [ʔ~ɦ] համապատասխանությամբ ընորոշվող միահազագ խոսվածքներում ձայնեղ հազագները՝ [ɦ]-ն, և [ɦ̥]-ն, տատանվում են մերթ մաքուր ձայնեղությամբ օժտված և մերթ խլությամբ ուղեկցվող բաղաղրյալ հնչյունի սահմաններում: Ընդհանուր առմամբ, ըստ ձայնաբանական դասակարգման, այս հազագները որոշ վերապահությամբ դրսևորում են բաղաձայն-ձայնորդի հատկանիշ, որը, ինչպես կտեսնենք, արդարացվում է նաև պատմականորեն:

Ձայնեղ հազագները գործառում են միայն բառասկզբի դիրքում՝ ձայնավորից առաջ. բառամիջում հանդիպում են այն դեպքում, երբ իրենցով սկսվող բառը բարդվում կամ ածանցվում է, օրինակ՝ [ɦ̥ɛɦ̥ɛɲɛs], [ɲaɣaɦ̥aʃɣ]: Հնչույթաբանական մակարդակում նշված հնչյունները անտարակույս ունեն հնչույթային արժեք: Իբրև ձայնորդանման հնչույթներ, ձայնորդային համակարգի մյուս բոլոր միավորներին կարող են հակադրվել մեկ հատկանիշով՝ կոկորդայնությամբ. նշենք հակադրական զույգերի օրինակներ տարբեր խոսվածքներից, ըստ [կոկորդայնություն-ոչ_կոկորդայնություն] հատկանիշի՝ [ɦuɾ] /ուր/ - [muɾ] մուր, [ɦuʃik] - [muʃik] - [ɲuʃik], [ɦɛɣ] /անգամ/ - [jɛɣ] /յուղ/, [ɦɛɾd] /հարդ/ -

լէըը /լյարդ/, հաց /ակ/ - լաց /լակ/, հաչխու /վախից/ - լախու /դեղամիջոց/, հուլս/հուլս /հուլս/ - լուլս /լուլս/ և այլն: Երկհազագավոր խոսվածքներում հ հազագը կոկորդայնությամբ հոմանիշ է խուլ չ-ին, սակայն հակադրվում է նրան ժայնեղությունը-ոչ ժայնեղությունը հատկանիշով, օրինակ՝ Ալաշկ. հուլմ /ում/ - չուլմ, հընժի /ինձ/ - չընժի /հունձ/, հօրը /ինչու/ - չօրը /հոր/, Աշտ. Կոշ՝ հաբէք /ակեք/ - չաբէք /հարեցեք/, հաղաք /առջև/ - չաղաք /խաղաք/, Մուշ /Դիլիֆ/՝ հուլը /ուր/ - չուլը /կրակ/, հօղի /այդտեղ/ - չօղի /հոտ/, հէղի /երկրորդ/ - չէղի /հետինը/ հմմտ.՝ քու հէղի կընիկ /քո երկրորդ կինը/, քու չէղի կընիկ /քո հետ եկած կինը/, Թալին Մաստ.՝ հուղա /Քրիստոսի աշակերտը/ - չուղա /այստեղ/: Հետևաբար՝ երկհազագավոր խոսվածքներում հ հազագի ժայնեղությունը հնչույթաբանորեն էական, տարբերակիչ հատկանիշ է: Ստուգաբանական չ-ի դիմաց ի ունեցող խոսվածքներում ժայնեղ հազագները խուլերի շարքում չունեն հարաբերակից զույգ, ուստի և ժայնեղության հատկանիշը իմաստային նվազագույն հակադրություն չի ստեղծում, հնչույթաբանորեն ոչ էական /լրացական/ հատկանիշ է: Այսուհանդերձ տարբեր խոսվածքներում դրանք կարող են հակադրվել խուլ շփական ի-ին ոչ միայն կոկորդայնության, այլև ժայնեղության հատկանիշով, ինչպես օրինակ՝ հէը /այր, քարայր/ - խէը /հայր/, հուլս/հուլս /հուլս/ - խուլս /խյուս և հյուսն/, հուլը /իր/ - խուլը /հյուր և հուր/, հէտի /հաջորդ, երկրորդ/ - խէտի /հետի/:

Ուրեմն՝ այս տարածքներում ժայնեղ հազագների միակ էական հատկանիշը մնում է կոկորդայնությունը, որով ընդհանուր առմամբ որոշվում է նրանց հնչույթային արժեքը բաղաժայնական համակարգում:

Տարժամանակյա հայեցակետով՝ բարբառային ժայնեղ հազագները ընդհանուր առմամբ հանդես են գալիս զրաքարի բառասկզբի յ զրով արտահայտված հնչյունի դիմաց, հմմտ.՝ յաստակ~հիստակ, յոր~հոր, հ՞ողի, յաղդ~հէրտ, հ՞արը, ցակոբ~հագօպ, հ՞ակօ և այլն: Այսինքն՝ նշված բարբառային տարածքները շարունակում են տարբերակել զրաքարի բառասկզբի յ և հ զրերով արտահայտված հնչյունները, ի հակադրություն միջին և արդի գրական լեզուների, որոնցում զուգամետ /կոնվերգենտ/ զարգացմամբ բառասկզբի դիրքում չեզոքացել է յ և հ հնչույթների հակադրությունը. յ-ն, կորցնելով միջնալեզվայնության ու ժայնեղության հատկանիշները, խլացել, նույնացել է հ-ին, հմմտ. գրաբ.՝ հաց, հին, յիսուն, յաղդ, արդի արևելահայ գրական լեզու՝ հաց, հին, հիսուն, հարդ, բրբռ.՝ հաց, հին կամ խաց, խին, բայց՝ հիծծուն, հէրտ, հիսուն, հ՞արը: Այսպիսով՝ ժայնեղ հազագների՝

միայն բառասկզբի դիրքում ունեցած զործառութ յունը պատմառաբանվում է պատմական զործոնով, այն է՝ զրաբարի յ ձայնորդի՝ բառասկզբի դերքում ապրած զարզացման ընդհանուր հազազայնացման միտումը, որը սակայն չի ընդգրկել յ-ի զործառութ յան մյուս ոլորտները: Բարբառային նշված տարածքներում այդ միտումի գործողութ յան պայմաններում այնուամենայնիվ ընդգծվում է յ և ՝ հնչույթների զարզացման տարընթաց և զրական լեզուներից զգալիորեն տարբեր ուղին. այսպես՝ կենտրոնական, այժմ երկհազազավոր տարածքում, ըստ երևույթին, ներհամակարգային պահանջներով լրացվել է խուլ հազազի ձայնեղ զույգի դատարկ վանդակը՝ յ-ի՝ միջնալեզվայնութ յան չեզոքացմամբ և զուտ կոկորդային հնչույթի վերածվելով: Հարավային տարածքի խոսվածքներում ՝>_ը հնչյունափոխութ յամբ, եթե իհարկե դա հնազույն երևույթ չէ, բաղաձայնական համակարգում դատարկվել է /կամ դատարկ է եղել/ հազազային հնչույթի վանդակը, և ապա, դարձյալ ներհամակարգային պահանջներով յ>՝ կամ հ հնչյունափոխութ յամբ ազատ վանդակը կրկին լրացվել է: Հարցին կարելի է մոտենալ և ավելի ընդհանուր հայեցակետից. հայոց լեզվի պատմութ յան ընթացքը ցույց է տալիս, որ հին հայերենի՝ այժմ որակափոխված ձայնորդների՝ յ-ի, ը-ի, ղ-ի զարզացման գործընթացը ուղեկցվել է ներհամակարգային ընդհանուր միտումով՝ քոքափել ձայնորդային հնչարտաբերական տարտամութ յունը, հասնել լիարժեք բաղաձայնութ յան. ահա բաղաձայնացման այս միտումով արդեն իսկ միջին հայերենում յ-ն բառասկզբում ստացել էր կոկորդային ՝-ի, երկշրթնային ը-ն՝ շրթնատամնային ձայնեղ շփական վ-ի, փափկաքմային ղ-ն՝ ետնալեզվային ձայնեղ ղ շփականի արժեքներ, ըստ որում յուրաքանչյուրը վերածվել էր իր լիահունչ բաղաձայն տեսակին: Բարբառային նշված տարածքներում լիարժեք բաղաձայնացման ալիքը մասամբ է միայն ընդգրկել յ-ի զարզացման գործընթացը, չի հասել ավարտի, որի հետևանքով քննվող հազազների ձայնորդային հատկանիշը /ձայնաբանական առումով/ այնուամենայնիվ, ավանդաբար, այս կամ այն չափով պահպանվել է: Սրանով էլ կարելի է բացատրել ձայնեղ հազազների հնչարտաբերական անկայուն որակը՝ մերթ մաքուր ձայնեղութ յամբ, մերթ խլութ յան բաղադրիչով զործառելը:

Բարբառային ձայնեղ հազազներից յուրաքանչյուրը իր տարածքում ունի նաև, զրական լեզուների համեմատութ յամբ, հավելական հնչյունի դերով զործառույթ. հմմտ.՝ աղիք~հաղիք, հիւղիք՝, երդիկ~հէրդիկ, հիւրտիւս, ամեն~հրմմէն, հրմէն, ուստի~հուստ, հուստ և այլն, որն ընդգրկում է նշված տարածքներին հատուկ մեծաքանակ բառերի մի խումբ /մոտ 50/ և ավելի ծավալուն ու զործուն բնույթ է դրսևորում,

քան ժամանակագրական առումով հնագույն շերտ համարվող հավելավոր յ-ի առկայությունը մի շարք բառերում՝ գրաբարյան ծևերի համեմատությամբ, ինչպես՝ ալեւոը~յալիվոը_/խաւլիվոը, ագանիմ~յաքնել_/խալնել, աըօը~յաըօը/խաըօը, որը ոչ կենսունակ երևույթ է: Հետևաբար՝ բարբառային այս տարածքներում հավելավորում կոչված երևույթը ծայնավորակիզը բառերում հիմնականում իրացվել է գրաբարի բառասկզբի յ-ին հանգող հազագային հնչյուններով, և, որ ամենաակնառուն է, այս երևույթը գրավոր աղբյուրներում վկայված է դեռևս 5-րդ դարից. հմմտ.՝ յ-ով և առանց յ-ի բազմաթիվ զուգաժևերը՝ ազաջ~յազաջ, ուշ~յուշ, աւել~յաւելուլ, աջող~յաջող, ոյժ~յոյժ, ողն~յողն և այլն //ն/հր/, զուգաժևեր, որոնք ըստ Ամառյանի առաջացել են հայերենի հողի վրա ը /յ/ նախդրի բարացմամբ: Դրանց մի մասն ունի ետին վկայությունները՝ ավելի ուշ դարերից /9-12-րդ/՝ ազժան~յաժան, ալգ/ուց/~յալգուց, ալեգուց~յեգուց, մի հանգամանք, որ խոսում է յ-ի՝ հավելավոր հնչյունի դերով գործառության հետագա ընդարձակման օգտին. հմմտ. նաև այս բառաժևերի արտացոլումը արդի բարբառներում՝ հաջող, հառեմ, ճուշ, ճուշիկ, հեվել, հեվելնալ, հեժան, հեկուն, ճողնաշաը և այլն:

Այսպիսով՝ ի տարբերություն հայերենի արևելյան, ծայր հյուսիս-արևելյան բարբառային տարածքների /Մեղրի, Ագուլիս, Ղարաբաղ, Ջանգեզուր .../, որոնք ընդհանուր առմամբ բնորոշվում են գրաբարի բառասկզբի յ-ի դիմաց Ø հատկանիշով, ծանաչում են հազագային միայն մեկ հնչյուն՝ խուլ ՝, և որոնցում հավելավորման երևույթը հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում իրացվել է միևնույն խուլ հազագով, հայերենի բարբառների հյուսիս-արևելյան, հարավ-կենտրոնական, հարակից արևմտյան և հարավային տարածքներում իբրև հավելավոր հնչյուն գործուն ու կենսունակ բնույթ է ունեցել գրաբարի յ-ին հանգող ծայնեղ հազագների գործառույթը: Այն իր արմատներն ունենալով հայոց լեզվի զարգացման հնագույն շրջաններում՝ հայերենի հողի վրա ապրել է նաև ինքնուրույն զարգացում:

Ի դեպ այն, որ միջին հայերենում յ գրով արտահայտված հնչյունը բառասկզբում արդեն ուներ կոկորդային ծայնեղի արժեք, վկայում են արաբական փոխառությունները, որոնց ع /այն/ կոկորդային ծայնեղ ջփական հնչյունը բառասկզբի դիրքում սովորաբար տառադարձվել է յ տառով /կամ բաց է թողնվել/, օրինակ՝ ʿalam~յալամ, ʿanbar~յամբար, ʿarʿar~յարար, ʿunnāb~յունապ: ع-ի դիմաց առկա յ-ն արտաբերական յ /ɣ/-ի արժեք ունենալ չէր կարող, որովհետև նախ՝ Ֆիզիկական հատկանիշներով դրանք միմյանցից խիստ տարբեր հնչյուն-

ներ էին, և ապա՝ արաբական փոխառություններում յ հնչյունը միջին հայերենում բառասկզբին տառադարձվում էր հիմնականում ե տառով՝ yaêm - եաշմ, yaeb - եասպ և այլն: Չ-ի արժեք ունենալը դարձյալ կասկածելի է, ըստ որում արաբերենի չ-երի երկու տարատեսակները տառադարձվում էին միայն չ տառով և ոչ երբեք յ-ով /հմմտ.՝ Արմ. քառ./: Մնում է ենթադրել, որ ջ -ը տառադարձվել է հնչարտաբերական հատկանիշներով իրեն համեմատաբար մոտ մի հնչյունի գրով, որ, ըստ երևույթին, եղել է կոկորդային ծայնեղ հազագը՝ ղ -ն:

Ջննված բոլոր այս երևույթները՝ զուտ հազագային հնչյունների առկայությունը հին հայերենի յ-ի և չ-ի դիմաց, գրաբարի բառասկզբի յ-ի արտացոլումը հազագային տարբեր հնչյուններով, յ-ին հանգող հավելավորման երևույթը, գրական լեզուներում և բարբառային որոշ միավորներում դրսևորված յ-ի և չ-ի նույնացումը բառասկզբի դիրքում, կասկած են հարուցում հայագիտության մեջ արմատացած այն տեսակետի նկատմամբ, ըստ որի գրաբարի յ-ն բառասկզբի դիրքում զուտ միջնալեզվային ՙ /յոտ/ հնչյուն է եղել: Ամենայն հավանականությամբ յ-ն գրաբարում, կամ գոնե հին բարբառների կենտրոնական ու հարակից տարածքներում ունեցել է նաև կոկորդային-հազագային երանգ և հարաբերակցվել է չ-ին՝ հակադրվելով վերջինիս ծայնեղության հատկանիշով:

Այդ է հուշում նաև գրաբարի /չ/ և /յ/ հնչյունների միջև եղած ընդհանրությունների շարքը, որ երևան է գալիս հայոց լեզվի պատմության հնագույն շրջանից սկսած և, ըստ երևույթին, կարող է բացատրվել նրանց ունեցած արտաբերական հատկանիշի ընդհանրությամբ՝ հազագայնությամբ. դրանք են՝

1/ Ծագումնաբանական ընդհանրությունները - արդյո՞ք պատահական պիտի համարել այն երևույթը, որ հ.-ե. նախալեզվի ե́*ր, ե́*ջ հնչյունները հին հայերենում բառասկզբի դիրքում արտացոլված են չ, յ հնչյուններով կամ ջ-ով: Հավանաբար *ր-ն և *ջ -ը բառասկզբի դիրքում տվել են հազագային հնչյուններ՝ խուլ չ, կոկորդա-քմային յ և հազագի բացակայություն՝ ջ: Այնուհետև. իբրև հնդեվրոպական կոկորդայինների արտացոլում, ուսումնասիրողները հայերենում նշում են ոչ միայն բառասկզբի չ-ով, այլև յ-ով դեպքեր, ինչպես օրինակ՝ հոըձ-յոըձ[5]. յաըւ-յաըեմ, յաըմաը[6]: Նույնը կարելի է ասել և այստեղ. թերևս հ.-ե. կոկորդայինների արտացոլումը նախահայերենում առնչվել է հենց կոկորդային-հազագային հնչյունների հետ /այս հարցերը կարոտ են լուրջ, հիմնավոր հետազոտությունների/:

2/ Լծորդային-հարաբերակցական ընդհանրությունները - հայտնի է,

որ զրաբարում կան ծագումնաբանական ընդհանրություն ունեցող արմատներ, որոնցում իբրև հարաբերակից-լծորդ հնչյուններ հերթագայվում են ՀՀ-ն և Յ-ն, ինչպես օրինակ՝ ՀԻՆԳ-ՅԻՍՆԱՅ, ՀԵՏ-ՅԵՏ, ՀԱՏ-ՅԱՏ, ՀԱՅԸ-ՅՕՐՅԱ, ՀԱՒ-ՅԱՒ, ՀՕՏ-ՅՕՏ: Այս երևույթը հուշում է,որ վաղեմի ժամանակներում ՀՀ-ն և Յ-ն, իբրև հազագային-հարաբերակից հնչյուններ, բառասկզբի դիրքում սերտորեն աղերսվել են նաև հնչույթաբանական մակարդակում, եթե միայն նշված տարբերաժևերը հնազույն բարբառային երևույթների ներթափանցումներ չեն:

3/ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ հավելավոր հնչյունի դերովորքան որ հնատիպ է հավելավոր Հ-ի առկայությունը հայերենի բարբառներում, նույնքան էլ՝ Յ-ի հավելման երևույթը, քանի որ ծագումնաբանորեն երկու երևույթներն էլ կապվում են կամ հ.-ե. *Ḫ -ի և *Ǵ -ի, կամ հ.-ե. կոկորդայինների արտացոլման հետ: Եվ եթե ընդունելի համարվի հին հայերենում բառասկզբի Յ-ի կոկորդային-հազագային բնույթ ունենալու վարկածը, ապա միանգամայն պարզ մեկնաբանություն կստանա Յ-ի այս գործառույթը, որից նաև կբխի հետևյալ եզրակացությունը՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՎԵԼԱՎՈՐՈՒՄ ԿՈՉՎԱԾ ԵՐԵՎՈՒՅԹԸ ԾԱՅՆԱՎՈՐԱՍԿԻՑԸ ՔԱՌԵՐՈՒՄ ԲԵՑՎԵԼ Է ՀԱԳԱԶԱՅԻՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ՝ Հ-Ի և Յ-Ի /Ḫ,Ǵ/:

Եվ վերջապես, եթե նկատի առնվի նաև այն հանգամանքը, որ Հ ծայնորդ հազագի առկայությամբ բնորոշվող բարբառային տարածքները ունեն այսպես կոչված շնչեղ ծայնեղով բաղաձայնական համակարգ, որի՝ զրաբարին հատուկ լինելը այսօր կարծեք թե այլևս վիճելի հարց չէ, ապա ընդունելի կարելի է համարել նաև ծայնեղ հազագների նախատիպի գոյությունը զրաբարում, որ հանգում է Յ ծայնորդին: Արդի բարբառների կենտրոնական տարածքին բնորոշ երկհազագության հատկանիշը, ըստ երևույթին, խոր արմատներ ունի հայոց լեզվի պատմության հնագույն շրջաններում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Բարբառային տարածքները ներկայացվում են ըստ Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆի բազմահատկանիշ դասակարգման /տես Հ.Բ.Ն., Եր., 1972/:

2 Հ. ԱՃԱՌՅԱՆ, Հայ բարբառագիտութիւն, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 10, 106, 117:

3 Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Շատախի բարբառը, Երևան, 1962, էջ 29, 63:

4 Ըստ որում կատարված է միայն այս հնչյունների օսցիլոգրաֆիկ ուսումնասիրությունը մի շարք խոսվածքներում, որի հիման վրա արված

են նախնական եզրակացություններ:

5 Գ. Ջահուկյան, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, стр. 242-243.

6 ,,Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր,, , Երևան, 1979, էջ 219:

Տարածքներ	խմբեր	Բարբառային միավորներ	Ընդեկցող հատկանիշներ		
			հ	խ /հ՝/	Հնչեղ ձայնեղով համակարգ
Ճ	I	Մուշ, Ալաշկերտ, Արծափ, Բուլանուղ, Կարին, Արարատյան, Լոռի ... Սեբաստիա, Արաբկիր, Շապին-Գարահիսար...	+	−	+
	II	Արծկե, Արմեշ, Բաղեշ, Խլաթ, Մանազկերտ, Բայազեդ /Կամո/, Դիադին, Նոր Ջուղա ...	−	+	+
Ե		Շատախ, Մոկս, Ոզմ, Բերկրի	−	+	−

Լ.Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դարերի ընթացքում հայերենը զգալի ազդեցություն է կրել իրանական լեզուներից:

Հայերենի իրանական տարրի գիտական ուսումնասիրությունը սկսվում է համեմատական լեզվաբանության սկզբնավորման շրջանից: Ինչպես գիտենք, նախնական փուլում /1836-1875թթ./ հայերենը դիտվում էր որպես իրանական լեզու: Անցյալ դարի վերջին քառորդից սկանավոր հայագետ Հյուբշմանի աշխատություններով ժխտվեց այդ տեսությունը և հայերենը համարվեց հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին մյուղ, բնականաբար, հայոց լեզվում գործառող իրանական բառերն էլ դիտվեցին որպես փոխառություններ:

Հայերենի իրանական բառաշերտի քննությանը անդրադարձել են համարյա բոլոր նշանավոր հայագետները, այդ թվում նաև այս գիտաժողովի շատ մասնակիցներ: Ունկ են մեծ թվով մշակված և իրար լրացնող ուսումնասիրություններ, բացահայտված են փոխառությունների հնչյունական, հնչյունափոխական որոշ օրինաչափություններ, կատարված են զանազան կարգի դասակարգումներ և այլն: Մի խոսքով, հարցը տարբեր հայեցակետերից եղել և մնում է քննության առարկա: Հետազոտողների կողմից ներկայացվել են նաև փոխառյալ բառերի ցանկեր: Այդ ցանկերից համեմատաբար ամբողջականն ու ծավալունը Հրաչյա Աճառյանինն է: այն զետեղված է նրա ,,Հայոց լեզվի պատմության,, 1-ին հատորում:

Սույն հաղորդումով ուզում ենք հայտնել մի քանի նկատառումներ փոխառյալ բառերի տարբերակման սկզբունքների, ինչպես նաև փոխառությունների գործառական արժեքի գնահատման վերաբերյալ:

1/ Երբեմն հստակորեն չեն տարորոշվում փոխառյալ արմատի և տրվյալ արմատով կազմված նոր բառերի փոխառյալ միավոր դիտելու չափանիշները, որը վերջին հաշվով հանգեցնում է փոխառությունների քանակական կողմի արհեստական ածի: Հին հայերենի իրանական փոխառությունների նյութի հիման վրա կարելի է առանձնացնել մի քանի դեպքեր:

ա/ իրանական արմատների հետ հայերեն նախդրավոր կազմությունները նույնպես համարվում են առանձին փոխառյալ միավորներ, որը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Այսպես, բառացանկում ոյժ և ոյգ արմատներից անկախ փոխառյալ բառեր են հաշվվում ժողյժ-ը /գ ◆ ոյժ/ և աոոյգ-ը /աո ◆ ոյգ/:

բ/ Փոխառություններ են համարվում նաև իրանական արմատ ◆ հայերեն ածանց կազմությունները: Եթե անկ արմատը, իրոք իրանական է, ապա անկանեմ-ը փոխառություն չպիտի համարենք: Բառի փոխառյալ լինելու դեպքում սպասելի էր աննկեմ և ոչ թե՝ անկանեմ: Ընդ իրանական արմատի գոյությունը իրավունք չի տալիս ցաոցանալ-ն էլ փոխառություն համարելու, որտեղ ց, ան և ալ ճևույթները զուտ հայկական են: Նամ ըստ Բեյլիի իրանական ծագում ունի և ըօս արմատը[1], որը մեզ երևի իրավունք չի տալիս, սակայն, զբօսանուլ-ն էլ համարելու փոխառություն:

գ/ Ընդեմն փոխառություններ են համարվում այնպիսի բարդ բառեր, որոնց մեկ բաղադրիչը հայերեն բառ է: Հմմտ. սոըակալ /stōr ◆ կալ/ աագրաըոյգ և այլն: Սա ևս ճիշտ սկզբունք չէ: Մեր կարծիքով փոխառություն չպետք է համարել և հրամանատար բառը: Պահլավականից փոխառյալ լինելու դեպքում սպասելի էր հրամատար, պհլ. framatār : Ի դեպ մեր հին մատենագրության մեջ կան հրամատար և հրամանատար ճևերը, երկրորդն անշուշտ գիտակցվել է որպես հայակազմություն: Եղիշեի պատմության մեջ՝ պարսից զորավար Միհրներսեհին՝ հայերին ուղղված նամակի մեջ կարդում ենք. ,,Միհրներսեհ վզուրկ հրամատար երան և աներան Հայոց մենաց ողջոյն շատ,,: Այստեղ վզուրկ հրամատար-ը իրանական տիտղոս է և Եղիշեն բերում է օտար ճևով՝ հրամատար /24/: Մի այլ առիթով, երբ նույն Միհրներսեհի մասին Եղիշեն է խոսում գրում է. ,,Սա էր իշխան և հրամանատար ամենայն տերութեանց Պարսից,,: Այստեղ արդեն օգտագործված է հայերեն ճևը:

2/ Իրանական ծագում ունեցող բառերը հայերենում կազմում են նաև համանունների շարքեր: Համանուն բառերը նույնպես դիտվում են առանձին փոխառություններ: Բայց պետք է ասել, որ այս սկզբունքը երբեմն չի արդարացվում: Բերենք երկու օրինակ: Անարը ,,անմոռնի, վիթխարի,, բառը Ամառյանի ,,Հայերեն արմատական բառարանում,, կապվում է իրանական anariya ,,ոչ արիական, օտար,, բառի հետ: Ըստ Պափանցյանի հայոց անարի բառը փոքրասիական ծագում ունի[2]: Մեզ հետաքրքրող բառի ծագման վիճելի հարցը թողնենք մի կողմ և ընդունենք նրա կապը իրան. anariya-ի հետ: Այս դեպքում էլ մեր անարը-ն փոխառություն չէ, այն նոր բառ է, նոր իմաստով, որը ստեղծել է հայերենը: Բացուկ ,,մակնդեղ,, բառն էլ նույնպես փոխառություն է համարվում: Բացուկ

,,ծեռք,, պիլ. bazū բառի աղերսով: ,,Նույն բառն է, որ հատկացվում է այս բույսին իր երկար թևերի պատճառով,, ,- սա ,,Հայերեն արմատական բառարանի,, բացատրությունն է: Գուցե և այս միջնորդավորված կապը կա /Ղափանցյանը մերժում է իրանական ծագումը, տեսնելով արմատ + ուկ ածանցով կազմություն. հմմտ. ցնծմնծուկ, պատտուկ... և այլն/[3], բայց այդ էլ հիմք չի տալիս բառը համարելու փոխառություն:

3/ Կան դեպքեր, երբ այս կամ այն հեղինակը գործածում է պարսկերեն բառը՝ տալով նրա մեկնությունը, թարգմանությունը: Բերենք մեկ օրինակ: Տարազուկ բառը հանդիպում է Շիրակացու մոտ՝ համաստեղությունների թվարկման ժամանակ. ,,Խումբ աստեղատանցդ հարկաւորիմ զընոյն անուանս յիշել՝ զոր /Յոյնք/ կոչեն Ջիւգոս, /Հայք/ Կշիռ, /Պարսք/ տարազուկ[4]: Համաեքստից զգացվում է, որ տարազուկ-ը փոխառություն չէ, այլ պարսկերեն բառ: Ուրեմն, այս և այս կարգի բոլոր բառերը /աթաշ, գուրգասար, նեմռոզ/ պետք է հանել փոխառյալ բառերի ցանկից:

4/ Երբեմն բուն փոխառության հետ փոխառյալ միավոր է դիտվում նաև նույն բառի հնչյունափոխված ձևը: Ախոկ և ախոկը ,,հանցանք, վնաս,, տարբեր քվահամարների տակ զետեղված են ցանկում: Եթե ախոկ-ը հայերենին անցած լիներ իրանական որևէ լեզվից կամ բարբառից, ապա այս դեպքում առարկություն չէր լինի: Ախոկ ձևը մեր որոշ բարբառներին բնորոշ հ > խ հնչյունափոխության արդյունքն է:

5/ Հայերենում մի շարք բառեր կարելի է անմիջապես կապել համապատասխան հնդեվրոպական նախաձևի հետ: Սակայն դրանք համարվում են իրանական փոխառություններ, թերևս միայն այն պատճառով, որ վկայված են և իրանական լեզուներում: Բերենք օրինակներ. մանկ//մանգ ,,խորամանկ,, կապվում է պիլ. *mang, պրս. mang ,,նեղություն,, բառի հետ: Սրանք ծագում են հ.-ե. *mang արմատից /լտ. mango , իռլ. meng ,,խաբեություն,,/: Հ.-ե. *mang-ը հայերենում տալիս է մանկ //մանգ, էլ ինչու՞ այն համարենք փոխառություն:

Մեր սարկիկ//սարեկ բառը կարելի է կապել ոչ միայն պիլ. ենթադրյալ *sarik-ի, այլև հ.-ե. *ḱer, *ḱor, *ḱr արմատի հետ /պրուս. sarke , լեհ. sroka և այլն/: Այս տեսակետի փաստարկումն ենք տեսնում նաև վերջերս Ա. Գրեպպինի հրատարակած մի աշխատության մեջ, որտեղ ըստ հեղինակի սարեկ-ը և սարիկ-ը տարբեր թրուչնանուններ են հ.-ե. *ḱer արմատից: Ըստ Գրեպպինի հայ. սարիկ-ը փոխառյալ է իրանականից, իսկ սարեկ-ը կարող է ուղղակիորեն ժառանգված լինել հնդեվրոպականից[5]:

Հայերեն ազգ, բանդ, դայեակ բառերը նույնպես կարելի է կապել հնդեվրոպական համապատասխան *azgho-, *bhend , *dhe/*dhi/ - ձևերի հետ: Եթե առկա է հնչյունական համապատասխանությունը, ապա կարելի է գտնել և տրամաբանական փաստարկումներ:

6/ Կան իրանական ծագմամբ մի շարք բառեր /արմատներ/, որոնք հայերենում անկախաբար չեն կիրառվում: Այսպես, ոոշն արմատը գտնում ենք ոոշնական բառի մեջ: Ոոշ ,,գետ,, բառը մի քանի տեղանունների բաղադրիչ է /Բաղանոոշ կամ Ոոշիքաղաշ.../, մաղձ- գտնում ենք ըղձանանունների մեջ. լողամաղձ, սիրամաղձ և այլն: Շատ և ապատ-ը համախական են տեղանունների կազմության մեջ. Աղտաշատ, Ավազաշապատ և այլն: Քանի որ հայերենում սրանք ինքնուրույն բառեր չեն, ուրեմն փոխառությունների ցանկում դրանց նշելու հարկ չկա: Դրանց փոխարեն նպատակահարմար է նշել այդ բաղադրիչներով ամրողջական փոխառությունները, եթե այդպիսիները կան: Այլ կերպ ասած, ատը-ը փոխառությունների մեջ չնշել, իսկ ատուշան-ը, ատրճանակ-ը համարել առանձին փոխառյալ բառեր:

Տվյալ լեզվի բառապաշարում փոխառյալ բառաշերտը արժեքավորվում է ոչ միայն քանակական կողմով, այլև բառերի գործառական համախականության, նրանց բառաբարդման ու ածանցման հնարավորությամբ, իմաստային զարգացմամբ, բառերի յուրացման ու հասկանալիության աստիճանով և մի շարք այլ գործոններով: Արդեն 5-րդ դարից իրանական ծագմամբ շատ բառեր մերվել էին հայերենի բառապաշարին և կայուն կիրառություն ձեռք բերել /գունդ, թշնամի, նամակ, ժամանակ, կտեսըդ, լսելը, տգետ, աշխարհ, ոյժ, սպիտակ, սեսւ, կարմիր և այլն/: Դրանց կողքին բազմաթիվ բառեր միշտ էլ մնացել են օտար, չեն մտել մեր լեզվի հիմնական բառաֆոնդի մեջ: Կարելի է առանձնացնել բառերի մի ստվար խումբ՝ խիստ նվազ համախականությամբ: Մեր հաշվումներով մոտ 130 փոխառություն հայերենում կիրառվել է 1 կամ 2 անգամ. նշենք մի քանիսը. պետարմոյ, աշխարհաւանդ, ապալեպ, ասան, ըահլիկ, գոմեց, խոշակ, ցեմիշ, պարմայել, քրտիկար և այլն: Հասկանալի է, որ սրանք սովորական փոխառություններին համարժեք չեն: Փոխառությունների մեջ զգալի թիվ են կազմում նաև հրանի պետական, կրոնական կյանքն արտացոլող բառերը. սրանք տերմիններ են, որ 5-րդ դարում չէին կարող թարգմանվել և դրա հարկն էլ չկար: Այդպիսին են՝ դենիմազդեցն, դենպետ, զինդակապետ, համայդեն, մովպետ, շահապ, շարսաղար, պետմոգ, փուշտիպանսապ, սակստան, անդերձապետ և այլն, և այլն: Սրանք միշտ էլ ընկալվել են որպես օտար իրականությանը վերաբերող օտարամուտ բառեր: Միջնադարյան մի բառարանում[6], որը ուսումնասիրողների կարծիքով գրվել է 11-րդ

դարում կամ ավելի շուտ, մեկնված են Ղևիշեի ,,Վարդանանց պատմության,, մեջ գործածվող պարսկերեն բառերը: Բառարանագիրը նշում է միայն այն բառերը, որոնք անհասկանալի են, իսկ դրանք հիմնականում դարձյալ իրանական կյանքին են վերաբերում /ղենիմացդէ, ամպաստաշն, լակի2, պահլավիկն, պարսկաերենն և այլն/: Բառարանագիրն էլ շատ բառերի իմաստները չհասկանալով տվել է սխալ մեկնություններ: Այսպես, Մովսեսեան Մովսես-ը թարգմանված է իշխանաց իշխան: Արտառոց մեկնություն ունի փուշտիպան բառը. ,,Մարմնապահ կանայք մոգուցն. սարկաւագուհիք,,. ըստ երևույթին բառարանագիրը չի հասկացել Ղևիշեի ,,...յանդ գնացին և կանայք փշտիպանացն յաւուր կիրակէի անցուցանել զնրազուսս...,,/69/ նախադասությունը:

Մի խոսքով, տերմինատիպ և տերմինային բառերը պետք է տարբերակել բուն փոխառություններից:

Փոխառյալ մի շարք բառեր էլ անկախ համախականությունից ու բնույթից գործառում են միայն որոշակի, սահմանափակ ոլորտներում: Այսպես, կրոն բառին համանիշ ունենք երեք իրանական բառ՝ կեշ, քէշ, դեն: Հայ մատենագիրը այս բառերը գործածում է միայն այն դեպքում, երբ նկատի ունի զրադաշտականությունը: Իմաստային ընդհանրություն ունեն նաև զոհեմ և յազեմ-ը, սակայն վերջինս դարձյալ գործառում է այն ժամանակ, երբ խոսք է գնում զրադաշտականության մասին: Այդպես է և յաշտ առնեմ-ը, որը սակայն կարող է վերաբերել հեթանոսությանը ընդհանրապես:

Երաշէ, զարտակ, աշխէտ, ծերմակ ածականները գունանուններ են մատնանշում, սակայն միայն ձիու գույն. այլ համատեքստում սրանք չեն հանդիպում: Հմմտ. ի ձի երաշէ արիւնազոյն հեծեալ /Մագ., ԺԷ, էջ 51/: Ահա ձի զարտակ /Յայտ. 4,8/: Եւ էր երիւարն մուշեղի ծերմակ ձի մի /Բուզ., 159/: Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զմուշեղ ծերմակաւն /Ն. տ./: Բամբիշն, ունի ,,թագուհի,, իմաստը: Համեմատելով սրա բարբառային ձևերն ու իմաստները է. Բենվենիստը գտնում է, որ բառը զուտ իրանական տիտղոսի արտահայտություն է[7]: Բամբիշն հայերենում վկայված է 5-րդ դարից, սակայն այն երբեք հայ թագուհիներին չի վերաբերում: Հմմտ. Եւ առին զկապուտ բանակին և զկանայս թագաւորին և զբամբիշն... /Բուզ., 48/: Նոքեր եղև բամբիշ ի տեղի Վասքեայ /ՆՀՐ/[8]: Նման կարգի գործառական սահմանափակություն ունեցող բառերի ցանկը կարելի է շարունակել:

Փոխառությունների ուսումնասիրման ժամանակ, բնականաբար, հարկ է լինում կատարել որոշ դասակարգումներ: Հ. Ամատյանի ,,Հայոց լեզվի պատմության,, առաջին հատորում, օրինակ, հանգամանորեն դասակարգ-

ված են փոխառությունները ըստ իմաստային-կիրառական ոլորտների: Բառապաշարի խոր քննության համար էական պետք է համարել նաև ժամանակագրական դասակարգումը:

Գրաբարյան փուլում իրանական փոխառությունների՝ ըստ դարերի վկայության պատկերը հետևյալն է.

5-րդ դար. ազատ, ազգ, ազդ, ազոխ, ախոռ, ախորժ, ախտ, ալտարմոլ, ակահ, ակամայ, ահեկան, աճառ, ամանակ, ամբար, ամբարիշտ, ամբարտակ, ամբարտաւան, ամբոխ, ամիճ, անանուխ, անապակ, անապատ, անարի, անգամ, անգար, անդամ, անդերձապետ, անդրաւարտիք, անոյշ, աշակերտ, աշխատ, աշխարհ, աշխարաւանդ, աշխարհ, աշխէտ, աշխոյժ, աշտեայ, ապալեպ, ապակի, ապահարգան, ապաշա, ապաստան, ապարահ, ապարանք, ապարասան, ապաւանդակ, ապաւէն, ապենիազ, ապիկամ, ապիրատ, ապշոպ, ապուխտ, ապուռ, ապսպարեմ, ապստամբ, ապրդում, առասան, առատ, ասպազէն, ասպահապետ, ասպաճարակական, ասպաստան, ասպատակ, ասպար, ասպարէզ, ասպետ, ասպնջական, ատակ, ատրազոյն, ատրուշան, արագ, արահետ, արդու, արժան, արծակ, արմաւ, արշաւ, արոյր, արուճանակ, արուսեակ, աւազան, աւար, աւարտ, աւեր, աւսարդ, բազ, բազ ,,բաժին,, , բազէ, բազմակ, բազմիլ, բազուկ, բազում, բաժ, բաժակ, բախտ, բամբիշն, բանուական, բաշխ, բարակ, /2/[9] բարապան, բարզաւաճ, բարձ, բարսմունք, բաւ, բաւանդակ, բդեշխ, բժիշկ, բիժ, բիւր, բոզպայիտ, բոյժ, բոյր, բոշխնել, բոր, բորակ, բուն, գահաւոր, գահաւորակ, գանձ, գանձակ, գանձանակ, գանձաւոր, գաւազան, գաւարս, գեր ,,ողբ,, , գերդաստան, գերեզման, գէս, գմբեթ, գոմէզ, գոմէշ, գոյն, գոյշ, գոնջ, գովեմ, գորշապահանգ, գումար, գումարտակ, գունակ, գունդ /2/. գուշակ, գուսան, գրապան, գրաւ, գրաւական, գրիւ, գրոհ, դազ, դաժան, դահանակ, դահեկան, դահիճ, դահլիճ, դանակ, դանդանաւանդ, դաշն, դաշտ, դաշտան, դաստակ, դաստակերտ, դաստապան, դաստառակ, դաստիարակ, դատ, դատախազ, դատաստան, դատաւոր, դար ,,բարձրավանդակ,, դարան, դարապան, դարապետ, դարաստան, դարման, դաւ, դեհկան, դեհպետ, դեն, դենիմազդեզն, դենապետ, դեսպակ, դեսպան, դերանդերձապետ, դեւ, դէմ, դէտ, դժգոյն, դժխեմ, դժկամ, դժկերպ, դժնդակ, դժնեայ, դժնիկ, դժոխ, դժուար, դըժպարիշտ, դժպարտ, դիմակ, դիւան, դղեակ, դմակ, դշխոյ, դորակ, դպիր, դսրուվ, դրախտ, դրամ, դրանիկ, դրուատ, դրօշ, դրօշակ, երազ, երախ, երախտ, ելակ, երամ, երանգ, երանք, երաշխ, երաշտ, երասան, երիտասարդ, երկ, զամբիւղ, զանգակ, զանկապան, զառնաւուխտ, զարտակ, զգոյշ, զեան, զենուլ, զէնք, զինդակապետ, զմրուխտ, զնդան, զոհ, զուիրակ, զուր, զրահ, զօր/ք/, ըմբոստ, թազ, թակոյկ, թասել, թիրախ, թմբուկ, թշնամանք, թշնամի, թշուառ, թոշակ, թուէ, ժաժ, ժահ, ժամ,

3. С точки зрения сходства словообразовательных аффиксов обращают на себя внимание грузинский суффикс - ian и армянский суффикс - jan , которые имеют одинаковый первоначальный вид - ean . В обоих языках от имен существительных посредством этих суффиксов образуются имена прилагательные со значением

"имеющий", обладающий". Например, в грузинском: coliani (женатый), ç̣veriani (бородатый), mariliani (соленый); в армянском: jerk̦lezvjan (двуязычный), jerčuyjan (имеющий три ветки).

Прилагательные с суффиксом ian и jan передают также свойство и принадлежность к общественным течениям и направлениям. Например, в грузинском: kriștiani (христианский), mahmagiani (магометанский); в армянском: leninjan (ленинский), mičurinjan (мичуринский). И что самое главное - эти суффиксы употребляются в фамильных именах, которые имеют в основном единственное число, реже - множественное. Например, в грузинском: ciciani, ǯavaxiani, tarxniani-ciciant, ǯavaxiant, tarxniant; в армянском: Mamik̦onjan, Knunijan - Vardaneank, Vardaneac.

В родственных грузинскому языках суффикс - ian имеет фонетические варианты: в сванском употребляется как -ian и как -ān . Например, davitiani, guǯeǯiani, gasviani, margvelān, pircxelān . А в мегрельском конечный согласный - n этого суффикса редуцировался, и имеем -ia . Например, dadia, liparṭia, čxetia.

В настоящее время трудно утверждать что-либо определенное о генетической взаимосвязи этих суффиксов, но их материальное и функциональное сходство очевидно.

К словообразовательно сходным суффиксам относятся также грузинские - aķ , - iķ и армянские - aķ , -iķ . Суффикс - aķ в древнегрузинском и новогрузинском образует имена с уменьшительно-ласкательным значением. Например, в современном грузинском: ç̣igni (книга) - ç̣ignaķi (книжка), в древнегрузинском: k̦nini (маленький), k̦ninaķi (совсем маленький, крошечный), saxli (дом), saxlaķi (домик).

Суффикс - aķ в армянском языке-достаточно распространенный и продуктивный суффикс. Он, наряду с суффиксами -iķ и -uķ , также используется для образования имен с уменьшительно-ласкательным значением. Например, vordi (сын) - vordjaķ (сынок), ṭun (дом), ṭnaķ (домик), nav (лодка), navaķ (лодочка).

Однако, в древнейших памятниках древнегрузинского и древнеармянского языков втречаются имена, не имеющие оценоч-

ного значения, хотя основа у них и оканчивается на -aḳ . Большинство имен такого типа в обоих языках заимствовано из иранских языков вместе с суффиксом языка - источника, и в специальной литературе они считаются словами общего грузинско-армянского употребления. Например, арм.: avazaḳ , груз. avazaḳi , среднеперс. avazak (разбойник), арм. zuaraḳ груз. zuaraḳi , среднеперс. zōhraḳ (жертвенное животное); арм. xoršaḳ , груз. xoršaḳi , среднеперс. xaršak (горячий ветер); арм. hasaḳ , груз. hasaki , среднеперс. hāsaḳ (возраст) и т.д.

Поскольку такие лексические единицы встречаются в большом количестве как в грузинском, так и в армянском, то не исключено, что словообразовательный суффикс -aḳ вычленяется из этих имен и в дальнейшем получает другое функциональное значение.

Рассмотренные явления имеют определенное значение для изучения структуры этих языков и их исторических взаимоотношений. Некоторые из этих явлений, как нам представляется, возникли самостоятельно, другие же, возможно, появились как следствие влияния одного языка на другой.

ПРИМЕЧАНИЯ

I. Г.А.Капанцян. О взаимоотношении армянского и лазо-мингрельского языков. Историко-лингвистические работы, П, Ереван, 1975, стр. 349.
2. Г.А.Капанцян. Назван. работа, стр. 346.
3. А.С.Чикобава. Введение в языкознание, Тбилиси, 1952, стр. 354 (на груз. языке).
4. Г.А.Капанцян. Назван. работа, стр. 349.
5. И.В.Абуладзе. Грузино-армянские литературные связи в IX-X вв. Исследование и тексты, Тбилиси, 1944, стр.22 (на груз. языке).

Հ.Գ. ՄԻՐՋՈՑԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈԼՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Մեծ է Հովհաննես Հոլով Նոստանղնուպոլսեցու /1636-1691/ վաստակը հայ մշակույթի պատմության մեջ: Ընդամենը իր կարճատև կյանքին, նա թողել է թարգմանական ու սեփական տարաբնույթ գրական պատկառելի ժառանգություն, որի մնշող մասը լույս է տեսել նրա կենդանության ժամանակ, երբեմն ունենալով բազմակի տպագրություն, իսկ առանձին գործեր ցարդ մնում են անտիպ վիճակում: Հոլովը մեծապես ազդել է XVII-XVIII դ.դ. հայ տեսական մտքի վրա, ընդ որում այդ ազդեցությունը եղել է բարդ ու հակասական:

Ծիշտ է, վերջին շրջանում առանձին գիտնականներ զգալի գործ են կատարել Հոլովի քերականական հայացքների /Գ. Ջահուկյան/, դրամատիկական ու մարտասանական ըմբռնումների /Գ. Պողոսյան/ և տպագրական գործունեության /Ռ. Իշխանյան/ լուսաբանման ուղղությամբ, բայց և այնպես առայժմ հրապարակի վրա չկա մշակութային այդ մեծ գործչի կյանքի, գործունեության ու գրական հարուստ ժառանգության համակողմանի վերլուծությանը նվիրված գիտական որևէ մենագրություն: Այդ է պատճառը, որ Հոլովի անձնավորության մասին հայագիտական գրականության մեջ անցյալում հաստատված ոչ ծիշտ, եթե չասենք հանիրավի, բացասական պատկերացումն ավանդույթի ուժով շարունակում է գոյատևել նաև մեր օրերում: Հարկ է նշել նաև, որ վերջերս Հոլովի գործունեության վերագնահատության փորձ է կատարել Ռ. Իշխանյանը, որը, սակայն, ընկնելով հակառակ ծայրահեղության մեջ, մասամբ անտեսել կամ մեղմացրել է նրա կյանքի առանձին անցանկալի դրվագները[1]: Իսկ ի՞նչն է պատճառը, որ Հոլովն արժանացել է իրարամերժ գնահատությունների: Այս հարցի պատասխանը տալու համար անհրաժեշտ է ամենաընդհանուր գծերով ներկայացնել նրա կյանքն ու գործունեությունը: վաղ հասակից ընդունելով կաթոլիկություն, Հոլովն ուսանել է Հռոմի Ուրբանյան վարժարանում, որտեղ աշակերտել է Նղեմես Գալա-

նոսին՝ որդեզրելով նրա կաթոլիկական ջերմեռանդությունն ու մոլեռանդությունը: Վարժարանն ավարտելուց հետո իր հայրենակից Բարսեղ Բարսեղյանի հետ միասին նա սկսում է ծավալել միաբարական գործունեություն, որի լավագույն արտահայտություններից է Աստվածաշնչի տպագրության առթիվ Ոսկանի դեմ նրանց գրած համատեղ ամբաստանությունը: Այդ և նման այլ ծառայությունների համար Հոլովը շահել է Հռոմի վստահությունը և Մարսելի Ոսկանյան տպարանում նշանակվել պաշտոնական զրաքննիչ, որը և, մեր կարծիքով, շրջադարձային նշանակություն է ունեցել նրա կյանքում:

Իբրև մեծապես օժտված անծնավորություն /այդ է վկայում դասական ու ժամանակակից բազմաթիվ լեզուների նրա փայլուն իմացությունը/, Հոլովը Ոսկանի հետ ունեցած անծնական շփումների, ինչպես նաև իր շուրջը տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունների սեփական վերլուծության շնորհիվ աստիճանաբար ազատվում է կրոնական նախկին նեղմտությունից՝ ցուցաբերելով զաղափարական հանդուրժողականություն Ոսկանի տպագրական գործունեության հանդեպ, իսկ երբեմն էլ՝ համագործակցելով նրա հետ: Հետևանքը եղավ այն,որ Հոլովը կորցրեց Հռոմի վստահությունը և հեռացվեց զրաքննիչի նյութապես ապահով պաշտոնից: Ի տարբերություն ժամանակի կաթոլիկադավան հայերից շատերի /Նիկոլ Թորոսովիչ, Բարսեղ Բարսեղյան, Վարդան Հունանյան, Թադևոս Համազասպյան և ուրիշներ/, կյանքի երկրորդ շրջանում Հոլովն ընդհանուր առմամբ մեզ ներկայանում է որպես հայրենի երկրի վշտերին ցավակից, իր ժողովրդի հոգսերով ապրող, նրա բախտով ու ճակատագրով մտահոգված, հայրենի մշակույթի զարգացմանը նախանձախնդիր հայրենասեր մտածող:

Եվ ընավ պատահական չէ, որ ժամանակի հայ վաճառականներից շատերը՝ սեփական ժողովրդի հոգևոր ինչ-ինչ պահանջմունքները բավարարելու միտումով հաճախ, անտեսելով դավանաբանական ամեն մի տարաձայնություն, դիմում էին Հոլովին, Փինանսավորում նրան և պատվիրում թարգմանել կամ հեղինակել իրենց ցանկալի զրքեր: Իսկ Հոլովը, իբրև կանոն, սիրահոժար կատարում էր նրանց պատվերները՝ անգամ եթե դրանք անհարազատ էին իր հոգուն, միայն թե ինչ-որ չափով նպաստած լիներ ,,զրեանց հայկազունեաց,, բազմացմանը: Այս ամենը, կարծում ենք, մեզ հիմք է տալիս ասելու, որ երիտասարդական տարիներին Հոլովի գործած կրոնաղավանաբանական ծախսությունները և հատկապես հայոց լեզվի լատինականացման ակնհայտ ձգտումն ստվերի տակ են թողել նրա կյանքի ու գործունեության երկրորդ շրջանի լուսավոր էջերը, մթագնել հայ մշակույթի զարգացմանը նրա մուծած անուրանալի նպաս-

ը: Մինչդեռ գիտության իսկական խնդիրն սակերն ու լույսն իրարից զատելը, ամեն մեկն ըստ արժանվույն գնահատելն է:

Հովհաննես Հոլովի վերը նշված գաղափարական էվոլյուցիան, մեր կարծիքով, իր դրական արտահայտությունն է գտել նաև հայոց լեզվի հանդեպ նրա ունեցած վերաբերմունքում: Բանն այն է, որ իր գործունեության առաջին շրջանում գրած և 1674թ. տպագրված ,,Ճառք ի հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական,, գրքում հանդես գալով որպես լատինաբան հայերենի ջերմ պաշտպան, Հոլովը տարբերակում է երեք տեսակի հայերեն, որոնցից աշխարհաբարի կամ ,,աշխարհականի,, հանդեպ ցուցաբերում է, ըստ էության, մերժողական ու արհամարհական վերաբերմունք, անվանելով այն ,,շփոթուն ու անկանոն, որով և,- ինչպես ինքն է ասում,- վարին արք անտեղեակք գրոց,, /էջ 3/: Ընդհակառակը, կյանքի երկրորդ շրջանում արմատապես փոխելով իր այդ վերաբերմունքը, Հոլովն արդեն ոչ միայն հանդես է գալիս աշխարհաբարի դաժի պաշտպանությամբ, այլև դառնում է նրա առաջին մշակներից մեկը՝ լույս աշխարհ բերելով աշխարհաբար հայերենով երկրորդ[2] տպագիր գիրքը. ,,Պարզաբանութիւն հոգենուազ սաղմոսացն Դաւթի մարգարէին,, թարգմանական-սեփական կոթողային երկը: Վերջինիս ,,Խրատ առ ընթերցօղս,, ներածականում անդրադառնալով դրա ստեղծման խնդիրներին ու նպատակներին, Հոլովը պարզորոշ գրում է.,,Բայց նախ զիտելի է, զի զմեկնութիւնս զայս այնու դիտաւորութեամբ շարադրեցաք մեք աշխարհօրէն, զի կարիցեն աշխարհականք ամենեքեան դիւրաւէս իմանալ զսոյն, քանզի եկեղեցականք ունելով զբաւական կրթութիւն և զուսումն, յարաժամ ճաշակեն զքաղցրութիւնս սրբազանից գրոց, իսկ աշխարհականք որք պարապին ի զբաղմունս և ի հոգս աշխարհի ամենևին մնան անմխիթարք ի յայսպիսեանց շնորհաց: Ուստի մի ոք արհամարհիցէ զմեզ իբրև զանհմուտս լեզուին հայոց, որովհետև ոչ վասն եկեղեցականաց, այլ վասն օգտի և շահավէտութեան հասարակաց ժողովրդոց եղև առաջիկա մեր գործառնութիւն,, /էջ 8/: Դժվար չէ տեսնել, որ ներկա հատվածում Հոլովը մի կողմից դրսևորել է աշխարհաբարի հանդեպ նախկինում ունեցած իր արհամարհական վերաբերմունքը, ուստի ընթերցողին զգուշացնում է չկարծել, թե ինքը չի տիրապետում գրաբարին, իսկ մյուս կողմից՝ քաջ գիտակցում է աշխարհաբար հայերենի հասարակական-կուլտուրական առաքելությունը և ինքն էլ դառնում է այն գրական լեզվի վերածնողներից մեկը:

Ոչ պակաս ուշագրավ է այն փաստը, որ Հոլովը հեշտությամբ չէ, որ համաձայնվել է հրապարակավ հանդես գալ որպես աշխարհաբարի առաջին գիտակներից ու մշակներից մեկը: ,,Պարզաբանության,, առաջաբա-

նում Հոլովը նշում է, որ Ազուլեցի Խոջա Գուլնազարի որդի Նահապետը Ն.Գոլսում վաղուց իրեն խնդրել էր գրել Սաղմոսի մեկնություն, բայց ինչ-ինչ պատճառներով ինքը չէր կարողացել կամ չէր ցանկացել իրականացնել նրա խնդրանքը: Տարիներ անց Նահապետն իր խնդրանքը կրկնել է նաև Վենետիկում՝ շեշտելով, որ նա դա ցանկանում է ,,ոչ վասն մարմնաւոր օգտի և շահաւետութեան իւրոյ, այլ վասն հոգեկան մխիթարութեան ազգին հայկազունեաց. և ի հիշատակ անշնջելի ինքեան և ծնողաց իւրոց հանգուցելոց ի Քրիստոս,,/էջ ե/: Իրավամբ հարց է ծագում. ինչու՞ Նահապետ Ազուլեցին հենց Հոլովին էր համառորեն խնդրում իրագործել իր իղձը: Արդյոք դա չի՞ նշանակում, որ Հոլովը վաղուց ճանաչված էր որպես աշխարհաբար հայերենի գիտակ, որից էլ դրդված Ազուլեցի Խոջան հենց նրան էր ընտրել որպես ամենահարմար անձնավորություն:

Նկատենք նաև, որ եթե աշխարհաբար առաջին տպագիր գիրքը, ,,Արհեստ համարողութեանը,, կոչված էր բավարարելու հայ վաճառականների գործնական առանին պահանջմունքները, ապա երկրորդ գիրքը՝ ,,Պարզաբանութիւնը,, հետապնդում էր հասարակական ավելի վեհ նպատակ՝ լուսավորել համայն հայ ժողովրդին, տալ նրան հոգևոր սնունդ, բարձրացնել նրա ազգային ինքնագիտակցությունը, արթնացնել նրա մեջ ազգային ազատագրության հույս ու ձգտումներ: Այդ վեհ նպատակն էլ ստիպել է հայ Խոջային չխնայել ,,զինչ պիտոյ էր,, և ,,ի նեղութեան ժամանակի,, վաճառել ,,բազում դրամս,, լույս աշխարհ հանելու համար հայ քաղաքարյան մտածագրության մեջ քե՛ լեզվով և քե՛ բովանդակությամբ լուրջ երևույթ հանդիսացող ,,Պարզաբանութիւն,, գիրքը: Ըստ այդմ էլ՝ մենք դժվարանում ենք համաձայնվել Ռ. Հշխանյանի այն կարծիքի հետ, որ իբր ,,Պարզաբանութիւնը,, ,,նույնպես հատկագրված էր հայ վաճառականներին,, և որ նրա տպագրության գործում ,,ընդհանուրին օգտակար լինելու,, ձգտումից բացի ,,հավանաբար, դեր է խաղացել,, նաև ,,վաճառական գնորդներ ունենալու հեռանկարը,,[8]: Իսկ ինչու՞ չընդունել, որ XVII դ. հայ իրականության մեջ հասարակական առաջընթացը խթանող Խոջայական դասի ներկայացուցիչներից քեկուզև մեկը կարող էր իր փայփայած վեհ նպատակին զոհաբերել իր ոսկու քանակի եթե ոչ ամբողջ պարունակությունը, ապա գոնե նրա մի մասը:

Իսկ ի՞նչն էր պատճառը, որ Նահապետ Ազուլեցին ցանկանում էր Սաղմոսն անպայման մեկնված տեսնել աշխարհաբար հայերենով՝ դրան զոհաբերելով ,,բազում դրամս,,: Թանն այն է, որ ողջ միջնադարում մեզանում սաղմոսաշնչյան գրքերից ամենատարածվածներից մեկը

եղել է Սաղմոսը: Ընդ որում, ի տարբերություն եվրոպական երկրների, Հայաստանում նրանից օգտվում էին ոչ միայն հոգևորականները, ,,այլև,- ինչպես Հոլովն է ասում,- աշխարհականք ևս արտաքոյ եկեղեցւոյ միշտ յանապազ ունին զնա ի բերան,,:

Սաղմոսի հանդեպ հայ ընթերցողի հետաքրքրությունն առանձնապես ուժեղացել էր XVII դ. կեսերին, բավական է ասել, որ միայն 1638-1682 թթ. այն լույս է տեսել ավելի քան տասն անգամ, որի ծնշող մեծամասնությունը բաժին է ընկնում 1662-1682 թթ.: Բայց այդ ամենից հետո էլ Սաղմոսը մնում էր սիրված ու փնտրված գիրք: Հայտնի են մի շարք փաստեր, երբ տպագիր Սաղմոսից կատարվել են ծեռագիր ընդօրինակություններ:XVII դարակեսին Սաղմոսի հանդեպ հետաքրքրության այդօրինակ աշխուժացումը, մեր կարծիքով, հիմնականում հետևանք էր հայ ժողովրդի գիտակցության մեջ տեղի ունեցող ազատագրական խմորումների: Գաղտնիք չէ, որ իբրև մարդկային խռովված հոգու բուռն տվայտանքների ու ալեքախումների փայլուն արտահայտություն, Սաղմոսն ընթերցողին լայն հնարավորություն էր տալիս արտահայտելու կյանքից ունեցած իր դժգոհությունն ու բողոքը, զայրույթն ու ատելությունը, հուսախաբությունն ու հուսահատությունը, գալիքի հանդեպ տածած հույսն ու հավատը, իր հոգու խորքում փայփայած իղձերն ու երազանքները: Այսուհանդերձ միշտ չէ, որ հայ ընթերցողը կարողանում էր հասկանալ Սաղմոսը, նրանից կատարել համապատասխան եզրակացություններ: Ընդ որում դժվարությունը ոչ միայն լեզվի մեջ էր, այլև բովանդակության բարդության: Այդ է պատճառը, որ Նահապետ Ազուլեցին Հոլովին ոչ թե պատվիրում է Սաղմոսը թարգմանել զրաբարից աշխարհաբար, այլ զրել նրա աշխարհաբար մեկնություն: Ու որովհետև դա ոչ թե ինքնանպատակ ծեռնարկում էր, այլ պետք է հոգևոր սնունդ տար հայ ընթերցողին, այստեղից էլ Հոլովը սոսկ չի համադրել ուրիշ լեզուներով առկա մեկնությունները և թարգմանել աշխարհաբար հայերենի, այլ հաճախ ավելացրել է նաև սեփական մեկնությունները՝ արտահայտելով հայ ժողովրդի հոգուն խիստ համահունչ մտքեր: Այսպիսով, ,,Պարզաբանութիւնն,, իր ժամանակի համար նշանակալից երևույթ էր ոչ միայն լեզվի տեսակետից, այլև գաղափարական իմաստով, որը ցարդ վրիպել է հայագետների ուշադրությունից: Պատճառն այն է, որ առայժմ նրանով զբաղվել են միայն լեզվաբանները, որոնք, հասկանալի է, այն չեն ենթարկել բովանդակային վերլուծության: Ներկա դեպքում հնարավորություն չունենալով տալու Հովհաննես Հոլովի մեկնությունների մանրամասն վերլուծությունը, բերենք մեր միտքը հաստատող մեկ օրինակ: Թարգմանելով իսրայելական ժողովրդի

ձերութեան ծանր վիճակն արտահայտող Սաղմոսի համապատասխան մաքի օտար ինչ-որ մեկնութիւն, Հուլովն զգացել է, որ դա հայ ընթերցողին առանձնապես շատ բան տալ չի կարող, ուստի ավելացրել է նաև սեփական մեկնութիւնը՝ ընթերցողին ներկայացնելով ժամանակի հայ կյանքի իրական պատկերը: Զուգադրաբար բերում ենք այդ երկու հատվածը.

Օտար մեկնիչ

,,... Այս ձերութեան ժամանակիս մեր իսրայելացւոց ազգն ոչ իշխան ունինք, և ոչ թագաւոր, ոչ մարգարէ ունինք, և ոչ առաջնորդ, ոչ զբեզ անարատ մատաղ կարենք անել և ոչ քոյ առևտ խունկ ծախել ըստ օրինաց Մովսէսի. այլև տեղ և տաճար այլ չունինք, որ քեզ պատարագ մատուցանենք և քեզանից ողորմութիւն և ազատութիւն գտանենք,,:

Հուլով

,,... Այս հալածանաց ժամանակիս ոչ քրիստոնեայ իշխան ունինք և ոչ թագավոր քաց ի քէն, որ կարենան զմեզ փրկել ի ձեռացն անհաւատից, ոչ մարգարէական հոգւով մարդ ունինք որ զմեր վերջն ու վախճանն մեզ ծանուցանէ, և ոչ առաջնորդ ունինք որ զմեզ կարենայ մխիթարել ոչ զքեզ կարենք պատարագել հօրն երկնաւորի ի յերկուղէ անհաւատիցն, և ոչ զխունկ կարենք ծախել ըստ առաքելական աւանդութեանն այլև ոչ եկեղեցի և ոչ սէղան ունինք, որ կարենանք պատարագ մատուցանել և ի քէն զշնորհս և զողորմութիւն գտանել,,:

Դժվար չէ տեսնել, որ Հուլովը Սաղմոսերգուի միտքը մեկնելով արտաքնապես վերացական ձևով /չմոռանանք, որ նա կաթոլիկաղավան էր և գիրքը լույս էր տեսնելու հենց Վենետիկում/, ամենից առաջ նկատի ունի հայ ժողովրդի իրական վիճակը: Չէ՞ որ XVII դ. 80-ական թվականների ,,հալածական ժամանակում,, առաքելական ավանդություններով խունկ ծխող քրիստոնյա ժողովուրդներից հազիվ թե մեկ ուրիշն ,,ի ձեռացն անհաւատից,, փրկվելու այնպիսի սուր կարիք զգար, ինչպես մահմեդական երկու հզոր բռնապետությունների լծի տակ հեծող, կրոնական հալածանքների ենթարկվող և ներդավանաբանական պայքարից նվաստված, քրիստոնյա թագավոր կամ իշխան չունեցող հայ ժողովուրդը, որի մարգարեական հոգու աչքը անծիծաղ հանձինս իսրայել Օրու և այլոց, դեռ ի վիճակի չէին տեսնելու այդ դրությունից ազատվելու իսկական „վերջըն և զվախճանն,,: Ահա թե ինչու նահապետ Ազուլեցին ,,վասն մխիթարութեան ազգին հայկազունեաց,, նյութական մեծ զոհողությունների

գնով համառորեն ցանկանում էր մեկնված տեսնել Դավիթ մարգարեի Սաղմոսը, իսկ Հովհաննես Հոլովն առանձնելով այդ դժվարին գործը ,,ոչ վասն եկեղեցականաց, այլ վասն օգտի և շահաւետութեան հասարակաց ժողովրդոց,, խնդրում էր չարհամարհել իրեն ,,իբրև զանհմուտս լեզուին հայոց,,: Տվյալ դեպքում հայ խոջան իր ոսկու քսակով, իսկ հայ մտավորականն իր ոսկյա գրչով հետապնդում էին միևնույն նպատակը՝ տեսնել

,,Տարակուսեալ բանն բարձեալ,
և յիմարաց աչքըն բացեալ,,:

Արդարությունը պահանջում է ասել նաև, որ եթե ,,ի յիշատակ անջնջելի ինքեան և ծնողաց իւրոց,, թողած ,,Պարզաբանութիւն,, միակ գրքով խոջա Նահապետն այսօր իրավամբ դասվում է հայ մշակույթի մեծ բարերարների շարքը, իսկ նրա շքեղ նկարը զարդարում է ,,Հայ ժողովրդի պատմություն,, ակադեմիական հրատարակության չորրորդ հատորը /էջ 617/, ապա միանգամայն անարդարացի է, որ երկու տասնյակից ավելի տպագիր ու ծեռագիր քարգմանական և ինքնուրույն գրքերի հեղինակ Հովհաննես Հոլովի անունն անգամ չի հիշատակվում այդ նույն հատորում: Կարծում ենք, արդեն ժամանակն է, որ Հոլովը նույնպես դասվի հայ մշակույթի մեծ երախտավորների շարքը, իր արժանի տեղը գրավի այդ մշակույթի պատմության համապատասխան ուսումնասիրություններում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Տես Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ.1, Ե., 1977, էջ 500-7, տես նաև մեր գրախոսությունը. ,,Սովետական գրականություն,, , 1978, նո.11, էջ 157:

2 Ի դեպ՝ մինչև վերջերս հայագիտության մեջ կար այն տեսակետը, որ ,,Արհեստի,, թարգմանիչը Հովհաննես Հոլովն է, սակայն ,,Արհեստի,, լեզվի ու մատենագիտական որոշ տվյալների քննության հիման վրա Ռ. Իշխանյանը մերժում է այդ տեսակետը, սակայն ինքը նույնպես չի տալիս առաջադրված հարցի վերջնական պատասխանը /տես ,,Նոր գրական հայերենը XVII-XVIII դ.դ., էջ 45-72/: Նպատակ չունենալով զբաղվելու այդ խնդրի լուծմամբ, հարկ ենք համարում նշել միայն, որ ընդունված տեսակետի դեմ Ռ. Իշխանյանի բերած առանձին փաստարկները լուրջ առարկությունների տեղիք են տալիս: Օրինակ, նա գրում է ,,որ մեզ ծանոթ դեպքերից միայն մեկում է Հովհաննես Հոլովն իրեն Բուզանդեան /ի դեպ ոչ Բիւզանդեան, ինչպես գրում է

Ջարբհանալյանը/ անվանել,, /նույն տեղում, էջ 70/: Մինչդեռ մեզ հայտնի է ևս երկու փաստ, որոնցից մեկում Հոլովն իրեն անվանել է Բուզանդեան /տես ,,Հայելի Ճշմարտութեան,, , Վենետիկ, 1680, էջ 4ա/; իսկ մյուսում՝ Բիզանդեան /տես Մ.Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2592, էջ 2բ/: Բացառված չէ, որ բերված օրինակներից երկրորդն սկզբնապես ունեցել է Բիւզանդեան ձևը, իսկ հետագայում զրիչը դարձրել է Բիզանդեան: Ինչևէ, այս հարցը դեռ կարոտ է հանգամանալից ուսումնասիրության:

3 Ա. Հշխանյան, Նոր զրական հայերենը XVII-XVIII դ.դ., Երևան,1979, էջ 72:

Ա.Ն. ՅՈՒՐԱԴՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հունաբան դպրոցի ստեղծած գիտական, դավանաբանական բազմակողմանի և հարուստ ժառանգությունը հայ մշակույթի գանձարանը հարստացրել է թարգմանական և ինքնուրույն արժեքավոր հուշարձաններով, որոնք իրենց ուրույն բովանդակության ու լեզվի տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում և արժանի են լուրջ ուսումնասիրության: Սակայն, այդ երկերի մասնագիտական բովանդակությունը և հունաբան խրթին հայերենը հաճախ դժվարացրել են դրանց ուսումնասիրությունը:

Բանասերներն ավելի շատ զբաղվել են այս ուղղության հետ կապված բանասիրական հարցերի լուծմամբ, սակայն, այս դեպքում էլ, փաստական ծշգրիտ տվյալների բացակայության պատճառով, հաճախ նույն հարցի մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ:

Մատենագրական ավանդությունը հունաբան դպրոցի թարգմանություններն ու մեկնությունները վերագրում է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտներին, մասնավորապես՝ Մովսես Խորենացուն, Մամբրեին, Դավիթ Անհաղթին և նրանց ընկերներին, որոնք 5-րդ դարում իրենց ուսուցիչների կողմից ուղարկվել են Բյուզանդիոն և Ալեքսանդրիա հունարեն լեզվի և թարգմանական արվեստի մեջ հմտանալու նպատակով: Այդ մասին Խորենացին վկայում է. ,,Բայց քանզի անգէտք էին մերումս արուեստի՝ ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յՀեղեսականդրիա, ի լեզու պանծալի, ի ստոյգ յօղանալ ծեմարանին վերաբանութեան,,[1]:

Հայ բանասիրությունը մինչև 19-րդ դարը անվերապահորեն ընդունել է կրտսեր թարգմանիչների մասին մատենագրական վերոհիշյալ տեղեկությունը: 19-րդ դարի 90-ական թվականներից սկսած, քննական բանասիրությունը կասկածի տակ առավ Մովսես Խորենացու ,,Հայոց պատմության,, արժանահավատությունն ու վավերականությունը և հանգեց այն եզրակացության, որ այն ոչ թե 5-րդ, այլ ավելի ուշ դարերի, նույնիսկ 9-րդ դարի անձանոթ մի հեղինակի գործ է, որը վերագրվել է

5-րդ դարում ապրող մի ուրիշ հեղինակի: Կրտսեր աշակերտների կամ թարգմանիչների մասին մատենագրական վերոհիշյալ ավանդությունն էլ համարվեց հետագա դարերում հերյուրված անհիմն ու անվավեր մի առասպել[2]:

Երկարատև զրական պայքարից[3] հետո, բանասիրությունը Մովսես Խորենացուն վերադարձրեց իր բնական և արժանի տեղը՝ 5-րդ դար, իբրև Սահակի ու Մեսրոպի անմիջական աշակերտ: Դրանով հաստատվեցին նաև 5-րդ դարի մյուս կրտսեր թարգմանիչների, ինչպես՝ Եղիշեի ժամանակի ու անձնավորության մասին եղած մատենագրական տեղեկությունները:

Կրտսեր աշակերտների հունաբան ղպրոցի ներկայացուցիչներ լինելու մասին են վկայում նրանց ,,թարգմանիչ,, , ,,մեկնիչ,, , ,,քերթող,, , ,,քերթողահայր,, , ,,փիլիսոփա,, , ,,իմաստասեր,, , ,,քերականական,, , ,,վերծանող,, , ,,հռետոր,, մականունները: Փարպեցու ըննութագրումը Գյուտ կաթողիկոսի մասին որպես ,,այր լի գիտութեամբ հայովս և առաւելեալ յունիւն,, կարելի է վերագրել նաև 5-րդ դարի կրտսեր թարգմանիչներից շատերին, որոնք ժամանակի գիտական առաջավոր կենտրոններում՝ Բյուզանդիոնում և Ալեքսանդրիայում հմտանալով հունարենի մեջ, ստացել էին հունական գիտական և եկեղեցական բարձր ուսում: Հայրենիք վերադառնալով նրանք թարգմանած Հայաստան էին բերել ,,եւյակ գիտութիւնների,, վերաբերյալ քերականական, ճարտասանական, տրամաբանական, փիլիսոփայական դասագրքեր և ժամանակի կրոնական աշխարհը հուզող դավանաբանական կարևոր երկեր: Եվ ո՞վ ավելի իրավունք ուներ այդ մականունները վաստակելու, քան քերթողական արվեստի մեջ հմտացած ու մեծ հռչակ վայելող Ջերթողահայր Մովսես Խորենացին կամ Մովսես փիլիսոփոսը, ինչպես նրան անվանում է Փարպեցին, Դավիթ Անհաղթ փիլիսոփան կամ Եռամեծն Դավիթ փիլիսոփան, Մամբրե Վերծանողը, Աբրահամ Հռետորը և նրանց նմանակից մյուս կրտսեր թարգմանիչները ու մեկնիչները:

Անցյալի հայագետներին ամենից շատ զբաղեցրել է հունաբան ղպրոցի սկզբնավորության ժամանակի հարցը, որի լուծումը, սակայն, լուրջ դժվարությունների է հանդիպել հետևյալ պատճառներով:

Հիմնական դժվարություններից մեկն այն է եղել, որ մեր հին թարգմանիչներն իրենց անձնավորությունը թաքցրել են և սովորություն չեն ունեցել թարգմանությունների վրա իրենց անունը գրելու: Բնականաբար, դժվար է որոշել անանուն թարգմանությունների և՛ թարգմանչին, և՛ թարգմանության ժամանակը: Նույնը վերաբերում է ինքնուրույն երկերին: Հայտնի է, որ Դավիթ Անհաղթի աշխատությունների վրա հետագայում են ավելացրել նրա անունը: Այդ պատճառով էլ բանասիրությունն

առ այսօր դժվարանում է մշգրիտ որոշելու նրա գիտական ժառանգությունը:

5-րդ դարը լի էր քաղաքական և դավանաբանական սուր զայրույթով: Միաժամանակ, 5-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանում գոյություն ունեին ասորական և հայկական հակամարտ կողմնորոշում ունեցող մտավորական երկու հակադիր հոսանքներ: Ղազար Փարպեցին իր ,,Թղթի,, վերջում, որպես ժամանակակից ու ականատես, դառնությամբ ու ցասումով է վկայակոչում ասորական կողմնորոշում ունեցող պահպանողական խավի կողմից հունական բարձր կրթություն ստացած կրոսեր քարգմանիչների կրած հալածանքները. ,,Արդ՝ ես ահա ըստ արժանի որոց զործեցին ընկալայ զպատուհասն,- գրում է նա,- ... իսկ այլ առաքելաման մարդիկն ընդէ՞ր այսպիսումն և ևս առաւել քան զսոյնս դիպեալք ի յաշխարհիս ի յայսմ՝ խստագոյն վշտիւ վախճանեցան: Ներանելի փիլիսոփան մովսէս, որ արդարև մինչդեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից. ո՞չ ապաքէն ի տեղւոջէ ի տեղի աբեղեանդ Հայոց հալածական արարին: Ո՞չ զլուսաւորիչն և զսիզիսաուալած զգրեանն նորա առ անգիտութեան փաթաղ-իկէս կոչէին,,[4]: Փարպեցին հիշում է մեկին, որ գիշեր ցերեկ աշխատել է ,,ի լուսաւորութիւն աշխարհիս Հայոց: Զոսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի գեա արկանել: Զհրեշտակնամն այրն զՏէր՝ նոյն անհանգիստ հալածանօք վախճանեցուցին, որք և այժմ դեռ ևս անյագութեամբ քինով ընդ մեռելոյն կազին: Անարատ և յամենեցունց յարգելի յոյսն աէր Խոսրովիկ, չև ևս հասեալ ի սահմանս մերս, մինչդեռ զայր ի Ծանապարհի, և լուան՝ որպէս ի վերայ թշնամւոյ ընդդէմ զինեցան, ասելով. ,,Ահա ուր՞ը գայ միւս ևս քարգմանն,,[5] /ընդգծումը մերն է - Ա.Մ./: Հալածվածների թվում Փարպեցին հիշում է նաև Գյուտ կաթողիկոսին, Աբրահամ եպիսկոպոսին և ուրիշների ու ավելացնում. ,,Եւ այսք այսպէս թշնամանեալք և հայհոյանօք հալածեալք[6] առ մեօք իսկ և ի մերում ժամանակի եղեալ տեսաք զայս ամենայն,,[7]: Ակնհայտ է, որ 5-րդ դարի երկրորդ կեսին այդ հալածանքներն ուղղված էին հունական ուսումն ստացած կրոսեր քարգմանիչների դեմ, որոնք հունարենից կատարած քարգմանություններով աշխատում էին իրենց հայրենակիցներին հաղորդակից դարձնել հելլենիստական մշակույթին, ծանոթացնել անոիկ շրջանի հունական քաղաքական արվեստին և բնագիտական-փիլիսոփայական մտքին:

Մյուս էական դժվարությունը հունաբան դպրոցի սկզբնավորության ժամանակը որոշելու հարցում ներկայացրել են Խորենացու և Դավիթ Անհաղթի ժամանակի ու անձնավորության մասին քննական քննասիրության առարկությունները: Ն. Ադոնցն իր ժամանակին այդ մասին

գրում է. ,,Դավթի ու Մովսեսի անունները հայ գրականության մեջ եղել են նախատիպական: Նրանց շուրջ անորոշության մի այնպիսի մառախուղ է կուտակվել, որ հորինվածքների ծալքերում նշմարությունը հայտնաբերելը առ այսօր մնում է հայագիտության ամենադժվարին ու ամենակարևոր խնդիրներից մեկը,,[7]:

Բանասերները հունաբան դպրոցի սկզբնավորության ժամանակը որոշելու համար փաստացի ավյալներ չունենալով, արել են տարբեր ենթադրություններ, որոնց հիման վրա էլ այն տարուբերել են 5-րդ դարի կեսերից մինչև 8-րդ դար:

Նկատի ունենալով, որ հունաբան դպրոցի սկզբնավորության և նրա զարգացման շրջանների հարցով առավել հանգամանորեն զբաղվել է Հ. Մանանդյանը, անդրադառնանք նրա տեսակետին: Նա իր ,,Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները,, մենագրության մեջ, հենվելով հունաբան թարգմանությունների լեզվական համեմատությունների վրա, հանգում է այն եզրակացության, որ այդ երկերը տարբեր ժամանակաշրջանների աշխատություններ են և բաժանվում են երեք խմբերի, որոնք միմյանց հաջորդել են մոտ երկու հարյուր տարվա ընթացքում, ,,սկսած 6-րդ դարի սկզբներից կամ 5-րդ դարի վերջերից, ուրեմն գլխավորապես 6-րդ և 7-րդ դարերում,,[8]: Հ. Մանանդյանի այդ խմբավորման համաձայն, հունաբան դպրոցի <u>Ն ա խ ա գ ու յ ն շ ր ջ ա ն</u>ը կազմում են Թրակացու Քերականության, Փիլոնի, Պիտոյից Գրքի և Իրենիոսի երկերի թարգմանությունները, որոնք, նրա կարծիքով, պետք է կատարված լինեն ոչ ուշ քան 6-րդ դարի առաջին կեսին: <u>Ն ր կ ր ո ր դ շ ր ջ ա ն</u>ը կազմում են՝ Տիմոթեոս Ալուզի ,,Հակաճառությունը,, , Արիստոտելի ,,Ցաղագս մեկնութեան,, և ,,Սահմանութեանց,, թարգմանությունները և Յամբղիքոսի մեկնությունները, որոնք կատարվել են 6-րդ դարի կեսերին, իսկ <u>Ե ր ր ո ր դ շ ր ջ ա ն</u>՝ Դավիթ-Օլիմպիոդորոսի խմբի իմաստասիրական մեկնությունները՝ 6-րդ դարի վերջերին և 7-րդ դարում:

Հ. Մանանդյանը հունաբան դպրոցի վերոհիշյալ երեք խմբերի ժամանակը որոշելու համար, բացի լեզվական համեմատություններից, ունի նաև ժամանակագրական մի կռվան. դա Տիմոթեոս Ալուզի ,,Հակաճառության,, թարգմանության մեջ հիշատակված Դիոսկորոսի մահվան ամսաթիվն է, որի շուրջը սակայն, ըստ տարբեր տարբեր հաշվումների, բանասիրության մեջ կան տարակարծություններ: Հ. Մանանդյանի կարծիքով Դիոսկորոսի մահվան ,,Հոռի Ջ,, հայ ամսաթիվն աղճատված է սկզբնական ,,Հոռի ԻՋ,, ընթերցվածից և պետք է այն սրբագրել: Այսպիսով, ըստ Հ. Մանանդյանի, Ալուզի ,,Հակաճառության,, հայերեն թարգմանության թվականը ,,Հոռի Ջ,, , այսինքն՝ 480-484 քառամյակի փոխարեն, տացվում է ,,Հո-

ոի ԻՋ,,՝ 552-564 թվականների ժամանակամիջոցը, որը նա ճշտված համարելով, հիմք է դարձնում հունաբան դպրոցի երկերի ժամանակագրական խմբավորման համար: Այսպես. եթե ,,Հակաճառություն,, թարգմանվել է 6-րդ դարի կեսերին, ապա նրան խմբակից ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ մյուս թարգմանությունները ևս պետք է կատարված լինեն 6-րդ դարի կեսերին, ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ թարգմանությունները՝ ,,Հակաճառության,, թարգմանությունից առաջ, ուրեմն՝ ոչ ուշ քան 6-րդ դարի առաջին կեսին, իսկ ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ թարգմանությունները՝ ,,Հակաճառության,, թարգմանությունից հետո՝ 6-րդ դարի վերջերին և 7-րդ դարում: Այսպիսով, Հ. Մանանդյանը հունաբան դպրոցի ծագման ժամանակաշրջանը և զարգացման հաջորդական ընթացքը ,,լուսաբանված,, է համարում:

Գ. Տեր-Մկրտչյանը ,,Արարատ,, ամսագրում տոմարական մանրակըրկիտ հաշվումներով ,,Հոռի Ջ,, ամսաթիվը պարզելուց հետո, ,,Շողակաթ,, ամսագրում[9] հանգամանորեն կրկին անդրադարձավ այս հարցին և պնդեց, որ նուզի ,,Հակաճառության,, թարգմանությունը կատարվել է 480-484 քառամյակում:

Մ. Աբեղյանը հաստատելով Միաբանի կարծիքը ,,Հակաճառության,, թարգմանության թվականի մասին, իրավացիորեն գրում է. ,,Դրանով հեղաշրջվում է 19-րդ դարի վերջերից ընդհանրացած տեսությունը, որով հունաբան դպրոցի սկիզբն առանց որևէ հաստատուն հիմունքի, դրվում էր 6-րդ դարում կամ 5-րդ դարի վերջերից,,[10]: Նա եզրակացնում է, որ եթե հունաբան դպրոցի երկրորդ խմբի թարգմանությունները կատարվել են 480-484 թվականներին, ապա առաջին խմբի թարգմանությունները պետք է կատարված լինեն մի քանի տասնամյակ առաջ: Ուրեմն, հունաբան դպրոցի սկիզբը պետք է դնել 5-րդ դարի երրորդ քառորդին՝ 450-475թթ.: Այս տեսակետն այժմ հայագետների մեծ մասի կողմից ընդունված է:

Ընդունելով ,,Հակաճառության,, թարգմանության թվականի մասին Գ. Տեր-Մկրտչյանի տեսակետը, մենք հակված ենք հունաբան դպրոցի ըսկիզբը դնելու 5-րդ դարի կեսից առաջ՝ երկրորդ քառորդին, հետևյալ նկատառումներով: Կորենացին վկայում է, որ կրտսեր թարգմանիչները Ալեքսանդրիա են ուղարկվել Եփեսոսի ժողովից՝ 431 թվականից հետո և հայրենիք են վերադարձել իրենց ուսուցիչների մահից՝ 440 թվականից հետո: Նրանք վերադարձել են որպես թարգմանիչներ, իրենց հետ բերելով շատ թարգմանություններ, որոնք կատարել էին դեռևս արտասահմանում եղած ժամանակ: Հետևաբար, նրանց թարգմանչական գործունեությունը պետք է սկսված լինի 5-րդ դարի երկրորդ քառորդին: Այս կարծիքը հաստատվում է նաև լեզվական փաստերով:

Վարդան Հացունին նկատում է, որ Բրակացու Քնրականության

թարգմանության մեջ ընագրի հունարեն անունների դիմաց հայ թարգմանչի բերած անունները հանդիպում են միայն դասական շրջանի երկերում: Անունների թարգմանության այդ ազատությունը հատուկ է դասական շրջանի թարգմանիչներին[11]:

Հ. Մանանդյանն իր հերթին հաստատում է, որ Թրակացու Քերականության թարգմանության մեջ ,,հունարեն բարդ բառերի թարգմանությունը ոսկեդարյան գրաբարի բառերով կամ նրա կանոնների հետևողությամբ, թարգմանչի վարանումներն ու անվճռականությունը քերականական եզրների ու եղդիրներով բարդված բառերի թարգմանության ժամանակ, նախդիրների թարգմանումը հայերեն տարբեր ու բազմազան նախադրություններով, այս բոլորը... Թրակացու թարգմանության հնության մի նշան է և բացատրվում է հունարեն որոշ ու հաստատուն բառամքերքի բացակայությամբ,,[12]: Լեզվական այս փաստերը վկայում են այն մասին, որ Թրակացու Քերականության թարգմանությունը պետք է կատարված լինի 5-րդ դարի կեսից առաջ, երկրորդ քառորդին:

Փիլոնի և Իրենիոսի երկերի թարգմանությունների լեզվական առանձնահատկությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը[13] ցույց է տալիս, որ այդ երկերը նույնպես թարգմանվել են 5-րդ դարի առաջին կեսին: Հ. Մանանդյանը ևս վկայում է, որ ,,Փիլոնը և Պիտոյից գրքի հնագույն նախակրթությունները թարգմանված են ավելի ազատ ու ավելի համապատասխան հին հայերենի քերականության ու լեզվի կանոններին,,[14]:

,,Հակաճառության,, թարգմանության թվականը որոշելուց բացի, Գ. Տեր-Մկրտչյանին հաջողվեց նաև պարզել, որ ,,Գիրք թղթոցում,, պահպանված Մովսես Քերթողահոր և Հայոց Հովհաննես եպիսկոպոսապետի անունով, հակաքաղկեդոնական բովանդակությամբ և հունաբան հայերենով գրված երկու գրություններից ոտաշինի հեղինակն է Խորենացին, երկրորդինը՝ Հովհան Մանդակունին: Առաջին թղթի մեջ, որի վերնագիրն է ,,Ներանելի մեծի քերթողահաւրն Մովսէսի եպիսկոպոսի,, , նկատելի է, որ Քերթողահայրն օգտվել է ,,Հակաճառության,, հայերեն թարգմանությունից: Եթե ,,Հակաճառությունը,, թարգմանվել է 480-484 քառամյակում, ապա միանշանակ եզրակացնում է, որ այս Մովսեսը պիտի լինի Փարպեցու հիշած Մովսես փիլիսոփոսը: Երկրորդ թղթի /,,Ներանելոյն Յովհաննու հայոց եպիսկոպոսապետի, Ազացոյց յերկուց բնութեանց ասել զփրկիչն եւ կամ մի բնութիւն,,/ առիթով Գ. Տեր-Մկրտչյանը ցույց է տալիս, որ ,,Ինքը հայ.առոյ,, ժողովածուի մեջ Հովհաննես եպիսկոպոսապետի ,,Ազացույցից,, բերված է մի մեծ հատված, որի վերնագիրն է ,,Ներանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթուղիկոսի՝ ի հակա-

Ծառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց,,/ ,,Ինիք Հաւատոյ,, , էջ 130, հմմտ. ,,Գիրք Թղթոց,, , էջ 33/: Այս երկու թղթերի համեմատությունը միաբանին բերում է այն համոզման, որ ,,Ապացույցի,, հեղինակ Հովհաննես հայոց եպիսկոպոսապետը պետք է լինի Հովհան Մանդակունին[15]: Նույն տեսակետը ,,Ինիք Հաւատոյ,, իր առաջաբանում /էջ LIX/ պաշտպանում է Կ. Տեր-Մկրտչյանը, ավելացնելով նաև, որ ,,Ապացույցի,, մեջ գործածված են մի շարք բառեր ու դարձվածքներ, որոնք հատուկ են ,,Հակաճառության,, թարգմանությանը, բովանդակությամբ էլ ,,Ապացույցը,, ,,Հակաճառության,, դավանաբանական ըմբռնումների շրջանակի մեջ է: Միաբանը եզրակացնում է, որ նախ թարգմանվել է ,,Հակաճառությունը,, , որից օգտվել են Մովսես Քերթողահայրը, այնուհետև՝ Հովհան Մանդակունին: Սա ևս մի ապացույց է, որ ,,Հակաճառությունը,, թարգմանվել է 5-րդ դարի 80-ական թվականների սկզբին:

Հ. Մանանդյանն ընդունում է Գ. Տեր-Մկրտչյանի վերոհիշյալ եզրակացությունը, սակայն նա զտնում է, որ այդ թղթերը Մովսես փիլիսոփոսի և Հովհան Մանդակունու գրվածքները չեն և չեն կարող 5-րդ դարի գրություններ լինել, որովհետև ,,Մովսես քերթողահոր վերագրված թուղթը դավանաբանական իր մեկնությունները հիմնավորում է հաճախ արիստոտելյան իմաստության զաղափարներով,,[16]: Հ. Մանանդյանը նկատում է, որ նույն թղթի մեջ հիշվում է նույնիսկ ,,փիլիսոփայական Ստորոգութիւնք,, երկը, իսկ դա ,,մի նշան է, որ Քերթողահորը վերագրված թղթի ծագումը պետք է դնել Արիստոտելի Ստորոգությանց թարգմանությունից հետո, ուրեմն՝ վեցերորդ դարի վերջին կամ ավելի ուշ,,[17]: Հ. Մանանդյանի կարծիքով ,,Ապացույցի,, հեղինակը ևս ծանոթ է Արիստոտելի իմաստասիրությանը, որովհետև նա ունի էակների քննությանը նվիրված մի ուշագրավ ակնարկություն, որտեղ գրվում է. ,,որք ըստ գոյացութեանց իմն քննախուզելով զէակս քննել առին ի կէսն,, , իսկ էակաց խնդիրը ,,ըստ գոյացութեանց քննախուզելով,, Արիստոտելի երկերում է քննվում[18]:

Հ. Մանանդյանի վերոհիշյալ դիտողությունը, որ Քերթողահոր թուղթը և ,,Ապացույցը,, պետք է գրված լինեն ,,Ստորոգութեանց,, թարգմանությունից հետո, ճիշտ է: Դրանով ապացուցվում է, որ ոչ միայն ,,Հակաճառությունը,, , այլ Արիստոտելի ,,Ստորոգությունքը,, ևս թարգմանվել է Խորենացուց ու Մանդակունուց առաջ: Սակայն, Հ. Մանանդյանը մերժում է այդ թղթերը 5-րդ դարի գործ համարել, որովհետև ըստ նրա խմբավորման, Արիստոտելի ,,Ստորոգությունքը,, թարգմանվել է 6-րդ դարի կեսերին: Համապատասխանաբար, այդ թղթերի գրու-

թյան ժամանակը նա ընդունում է ,,վեցերորդ դարի վերջերին կամ ավելի ուշ,,[19]: Ինչպես նկատելի է, լեզվական մի շարք դիտողությունների հիման վրա, Հ. Մանանդյանը հաճախ ժամանակագրական սխալ հետևություններ է անում, որովհետև Խորենացու ժամանակի մասին միշտ պատկերացում չունի:

Նման մի եզրակացության նա հանգում է նաև ,,Խորենացու առեղծվածի լուծումը,, գրքի հավելվածում: Այստեղ ուսումնասիրելով Խորենացու ,,Պատմության,, լեզվական առանձնահատկությունները, նա բազմաթիվ փաստերով ապացուցում է, որ Պատմահայրը ծանոթ է եղել ոչ միայն Պիտյից-փիլոնյան խմբի թարգմանություններին, այլև արիստոտելյան երկերին ու դրանց մեկնություններին, այսինքն՝ հունաբան դպրոցի երկրորդ և երրորդ խմբի թարգմանություններին:

Թեև լեզվական փաստերը Հ. Մանանդյանին հիմք են տալիս եզրակացնելու, որ Խորենացին ծանոթ է հունաբան դպրոցի երեք խմբերի թարգմանություններին էլ, ուրեմն նրա խմբավորած բոլոր թարգմանությունները էլ կատարվել են ոչ թե 6-րդ և 7-րդ, այլ 5-րդ դարում:

Այսպիսով, արդարանում է նաև ավանդական համարված մատենագրական տեղեկությունը, որը հունաբան դպրոցի քերականական, մարտասանական, փիլիսոփայական հնագույն թարգմանությունները վերագրում է կրտսեր թարգմանիչներից շատերին, հատկապես՝ Մովսես Խորենացուն, Դավիթ Անհաղթին և նրանց ընկերներին:

Մովսես Խորենացու և Դավիթ Անհաղթի ժամանակի ու գիտական ժառանգության ճշտումը և հունաբան հայերենով գրված որոշ երկերի լեզվական առանձնահատկությունների քննությունը հիմք են տալիս ասելու, որ հունաբան դպրոցը սկսել է ձևավորվել 5-րդ դարի երկրորդ քառորդին և այս դպրոցի առաջին շրջանի թարգմանական ու ինքնուրույն գործունեությունը հիմնականում ծավալվել է 5-րդ դարում:

Սակայն, հունաբան դպրոցի դերը չի սահմանափակվել միայն 5-րդ դարում: Հետագայում նրա ազդեցությունը շարունակվել է երկար, մինչև 19-րդ դար: 6-րդ դարի կեսերից, երբ հայ եկեղեցին Դվինի ժողովում որոշում ընդունեց բացարձակապես բաժանվել քաղկեդոնականից, հայ երիտասարդները դադարեցին այլևս բարձրագույն կրթություն ստանալու համար դիմել Բյուզանդիոն և Ալեքսանդրիա: Նրանք իրենց ուսումը կատարելագործեցին Հայաստանում, հայկական դպրոցներում, կամ ինչպես այն ժամանակ ընդունված էր կոչել՝ վարդապետարաններում: Այդ դպրոցներից հայտնի էր մասնավորապես Սյունյաց վարդապետարանը, որի մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է. ,,աղբիւր իմաստից... որ գըլուխ էր ամենայն գիտնոց Հայոց, և պայծառացեալ դպրոցքն, որ ի նը-

մա,,: Այդտեղ սովորում էին ,,Մարտարք և գիտունք հայոց,, , որոնք հմտանալով քերթողական արվեստի ու փիլիսոփայության մեջ, հռչակվում էին որպես ,,քերթող,, և ,,փիլիսոփա,,: 6-րդ դարի առաջին կեսից Ասողիկի վկայությամբ հայտնի են՝ Տեր Ջրիստափոր ,,փիլիսոփան,, , Եզրաս Անզեղացին, որ ,,զդաս Մարտաստնիցն քազմացուցանէր,, , Պետրոս Սյունեցին, որ ,,քերթող,, և ,,իմաստասեր,, է կոչվել. 6-րդ դարի երկրորդ կեսից Նաղանկատվացին հիշում է Ներինի եպիսկոպոս Թեոդորոսին, որին ,,փիլիսոփայական,, էին կոչում: 6-րդ դարի վերջին, 7-րդ դարի սկզբին հայտնի են նշանավոր մատենագիրներ՝ Վրթանես քերթողը, Գրիգոր քերթողը, Խոսրովիկ թարգմանիչը, Անանիա Շիրակացին, Դավթակ քերթողը, Թեոդորոս Քոթենավորը, Հովհան իմաստասեր Օձնեցին, Սահակ Ձորափորեցին, Սյունյաց վարդապետարանից՝ հռչակավոր Մաթուսաղան, որի մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է. ,,մեծ քերթող և անյաղթ փիլիսոփայ... ուսեալ զքերթողութիւն և վարժեալ մարտասանականաւն, հմտացեալ փիլիսոփայական արուեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ,,: 8-րդ դարից հայտնի է Ստեփանոս Սյունեցին, որպես ,,իմաստասեր,, և ,,քերթող,, , որը հունարենից կատարել է զանազան թարգմանություններ և գրել մեկնություններ, 11-րդ դարից՝ Գրիգոր Մագիստրոսը, որպես թարգմանիչ, իմաստասեր, քերականագետ, գիտնական, Հովհաննես Սարկավագը, որն ստացել է ,,իմաստասեր,, և ,,սոփեստես,, մականունները, 13-րդ դարից՝ Հովհաննես Պլուզ Երզնկացին, հայտնի իր փիլիսոփայական, քերականական, դավանաբանական, ընագիտական աշխատություններով: 13-14-րդ դդ. Սյունիքում հիմնադրվել են Գլաձորի և Տաթևի համալսարանները. դրանց հիմնադիրները և նշանավոր ներկայացուցիչներն էին 13-րդ դարից՝ Վահրամ Րաբունին, 14-րդ դարից՝ Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին, որոնք երկուսն էլ իրենց փիլիսոփայական հարուստ գիտելիքների համար արժանացել են ,,եռամեծ փիլիսոփա,, կոչման, 14-15-րդ դարերից՝ Առաքել Սյունեցին, հայտնի՝ իր քերականական և փիլիսոփայական աշխատություններով:

5-րդ դարից հետո հունաբանությունը նկատվում է 6-7-րդ դդ. և 11-14-րդ դդ. գիտական, դավանաբանական, մեկնողական և թարգմանական գրականության մեջ: Միջնադարյան վերոհիշյալ հայ քերթողներն ու փիլիսոփաները երկար ժամանակ ուսումնասիրել են 5-րդ դարում թարգմանված ու գրված քերթողական արվեստի վերաբերյալ դասագրքերը, տրամաբանական-փիլիսոփայական երկերը և ոչ միայն հարստացրել են իրենց գիտելիքներն ու աշխարհայացքը այդ երկերի միջոցով, օգտվել նրանցից գաղափարական պայքարի ընթացքում, այլև գրել են նրանց մասին

մեկնութ յունները, լուծմունքներ կամ վերլուծութ յուններ: Հայտնի են, օրինակ՝ Թրակացու Ջերականութ յան թարգմանութ յան մասին միջնադարյան հայ քերականների գրած բազմաթիվ քերականական մեկնութ յունները, Արիստոտելի, Պորփյուրի, Դավիթ Անհաղթի տրամաբանական-փիլիսոփայական երկերի մասին հայ փիլիսոփաների գրած ,,լուծմունքները,, կամ ,,վերլուծութ յունները,, մինչև Առաքել Սյունեցու ,,Ցաղագս քերականութեան համառօտ լուծմունք,, և նույնի ,,Մեկնութիւն կամ համառօտ լուծմունք Սահմանաց գրոցն Դաւթի Անյաղթի,, աշխատութ յունները: 6-7-րդ դարերում սրվել են քաղկեդոնական և հակաքաղկեդոնական վեճերը, որոնց առիթով գրվել և թարգմանվել են դավանաբանական գրութ յունները: Ավելի ուշ գրվել են գիտական աշխատութ յուններ, որոնք մեծ չափով կրել են հունական համապատասխան գիտական երկերի ազդեցութ յունը: 8-րդ դարից հայտնի են Ստեփանոս Սյունեցու, 11-րդ դարից Գրիգոր Մագիստրոսի հունարենից կատարած թարգմանութ յունները հունաբան հայերենով:

Այսպիսով, երկարատև և մեծ է եղել հունաբան դպրոցի առաջին շրջանի երախտավոր մատենագիրների ստեղծած հարուստ ժառանգութ յան ազդեցութ յունն ու դերը ինչպես իրենց ժամանակին, այնպես էլ հետագայում, դարեր շարունակ հարստացնելով հայ քերթողական, բնագիտական-փիլիսոփայական և աստվածաբանական միտքը:

Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Մովսիսէ Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, էջ 426:
2 Հ. Մանանդյան, Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 2:
3 Տես Ստ. Մալխասյանց, Բանասիրական հետազոտութ յուններ, Երևան, 1982, էջ 139:
4 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982, էջ 482-484:
5 Նույն տեղում, էջ 484:
6 Նույն տեղում:
7 Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, 1915, էջ LXXIV:
8 Հ. Մանանդյան, Նշվ. աշխ., էջ 222-223:
9 Գ. Տէր-Մկրտչեան, Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան հայ թարգմանութեան ժամանակը եւ Ս. Գրքի երրորդ կամ նորաբեր հայ թարգմանութիւնը, ,,Արարատ,, , Վաղարշապատ, 1908, էջ 564-589: Նույնի՝ Հայ մատենա-

գրութեան հնագոյն թուականները, ,,Նորակաթ,, , Վաղարշապատ, 1913, էջ 154-163:

10 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականութեյան պատմութեյուն, հ.1, Երեվան, 1944, էջ 101: Տես նաև նույն տեղում, էջ 613-618:

11 Տես Վ. Հացունի, Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 111-112:

12 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 121-122:

13 Տես ,,Ցուշարձան,, գրական ժողովածոյ, Վիեննա, 1911, էջ 193-202: Հ.Ա. Վարդանեան, Լեզուական նմանութիւններ Փիլոնի եւ Իրենէոսի հայ թարգմանութիւններու մէջ, ,,Հանդէս ամսօրեայ,, , Վիեննա, 1921, էջ 450-458:

14 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 111:

15 Տես Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Ա., Երևան, 1979, էջ 393-395:

16 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 252:

17 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 253:

18 Նույն տեղում, էջ 253-254:

19 Նույն տեղում, էջ 254:

Հ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հայերենի բարբառագիտական ատլասի կազմության հիմնական նպատակը հայերենի և նրա բարբառների ուսումնասիրության մեջ լեզվաբանական աշխարհագրության մեթոդների կիրառությունն է և այդ հիմքի վրա՝ հայոց լեզվի պատմության ու բարբառագիտության հանգուցային հարցերի լուծումը: Ատլասը կօգնի միշտ պահպանում կազմելու հայ բարբառների աշխարհագրական տեղաբաշխման ժամանակակից վիճակի, վերջին հարյուրամյակում կատարված նոր տեղաշարժերի, բարբառների միջև եղած տարածքային փոխհարաբերությունների մասին: Նրա միջոցով հնարավոր կլինի վերջնականապես շշգրտել հայ բարբառների դասակարգման սկզբունքները և այդ հիմքի վրա նաև բարբառների բուն դասակարգումը: Ատլասի լեզվական նյութի և պատմական շրջանից ավանդված գրավոր աղբյուրների բարբառային տարրերի համեմատական ուսումնասիրությամբ կլուծվեն հայոց լեզվի պատմության ու պատմական բարբառագիտության բազմաթիվ հարցեր, այդ թվում հայերենի բարբառային բաժանվածության սահմանը նրա պատմական զարգացման տարբեր փուլերում, բարբառների և գրական լեզուների փոխհարաբերությունը հին հայերենի և միջին հայերենի շրջաններում, բարբառների ծագման պատմությունը և այլն:

Ատլասը հնարավորություն կտա հայերենի զարգացումը դիտելու իր տարածքաժամանակային ամբողջության մեջ, խորամուխ լինելու զարգացման բարդ պրոցեսների մեջ, հասկանալու լեզվի տարբեր մակարդակներում փոփոխություններ առաջացնող բարդ ու հակասական երևույթների էությունը: Սա չափազանց կարևոր է, եթե նկատի ունենանք, որ մինչև այժմ հայերենի պատմությունը կառուցվել է բացառապես գրավոր աղբյուրների լեզվական փաստերի օգտագործմամբ: Եվ, վերջապես, ատլասը գիտականորեն մշակված ու իմաստավորված ճանապարհով միջազգային ատարեզդուրս կբերի հայերենի բարբառների աշխարհագրական ուսումնասիրության արդյունքները:

Հայերենի բարբառագիտական ատլաս կազմելու գաղափարը մեզանում սկսեց հասունանալ միայն 70-ական թվականների սկզբին: Մինչ այդ կուտակվել էր բավական բարբառագիտական նյութ, որը լրիվ պահպան-

ցում էր տալիս հայերենի բարբառային առանձին տարածքների լեզվական առանձնահատկությունների մասին։ Հրապարակի վրա էին երկու տասնյակից ավելի մենագրական ուսումնասիրություններ, որոնցում նկարագրվում էին տարբեր տարածքների բարբառային միավորներ, 1972թ. լույս տեսավ ակադ. Գ. Ջահուկյանի ,,Հայ բարբառագիտության ներածություն,, աշխատանքը, որը արդի գիտության պահանջներին համապատասխան հանրագումարի էր բերում հայ բարբառագիտության մեջ մինչ այդ կատարված աշխատանքների արդյունքները և բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ հող նախապատրաստում ուսումնասիրության լեզվաբանական աշխարհագրության մեթոդներին անցնելու համար։

Հայերենի բարբառագիտական ատլասի կազմությունը պիտի տեղի ունենար արտակարգ բարդ պայմաններում։ Այդ պայմանները հայ ժողովրդի կյանքում ստեղծվել էին հատկապես վերջին մեկ-մեկուկես հարյուրամյակի ընթացքում կատարված պատմական բարդ ու ողբերգալի իրադարձությունների հետևանքով։

Ատլասի կազմության բարդությունը ինքնին թելադրում էր աշխատանքների նախապատրաստական մի որոշակի շրջան։ Այստեղ անհրաժեշտ էր լուծել ատլասի բնույթի, ծավալի, հետազոտված նպատակների, նյութերի հավաքման եղանակների, քարտեզագրման ենթակա բնակավայրերի ընտրության, քարտեզների կազմման հետ առնչվող մի շարք սկզբունքային հարցեր։

Հայերենի բարբառագիտական ատլաս կազմելու համար առաջին հերթին պետք էր ունենալ լեզվական անհրաժեշտ նյութ։ Ըստ որում՝ այդ նյութը պիտի լիներ միանգամայն նպատակային, այնպիսին, որ լրիվ ծառայեր ատլասի առջև դրված խնդիրների լուծմանը։ Այս տեսակետից առանձին բարբառների ուսումնասիրություններում և տազիր այլ աղբյուրներում ներկայացված նյութը միայն մասամբ կարող էր բավարարել ատլասի պահանջներին։

Քարտեզների համար անհրաժեշտ նյութի հայթայթումը կարելի էր իրականացնել միայն հատուկ, այդ նպատակով կազմված ծրագրի միջոցով, որն իր մեջ ընդգրկեր քարտեզագրման ենթակա այն բոլոր լեզվական հատկանիշները, որոնք էական ու բնութագրական են բարբառային առանձին տարածքների համար և որոնց վերաբերյալ, այսօրվա դրությամբ, հնարավոր է լիարժեք տեղեկություններ ստանալ հավասարապես բոլոր վայրերից։ Նման ծրագրի ծավալի ու բնույթի հարցը բարբառագիտության բաժնին զբաղեցնում էր դեռևս աշխատանքների նախապատրաստական փուլում, երբ քննարկվում էին մի շարք գիտակազմակերպչա-

կան հարցեր: Լավ ծրագրի կազմումը համարվում էր հեռագա աշխատանքների հաջողության երաշխիքը:

Ամենից առաջ անհրաժեշտ էր ընտրություն կատարել առավելագույն ու նվազագույն ծավալի ծրագրերի միջև: Ապահիչ ծրագրի ստեղծման գաղափարը ինքնին հրապուրիչ էր, բայց այն մերժվեց մի շարք էական պատճառներով: Ծրագրի առավելագույն տարբերակը ծավալով ստացվում էր բավական մեծ և որպես այդպիսին՝ դժվար գործադրելի: Բացի այդ, պարզվեց, որ ծրագրի ծավալի մեծացմանը զուգընթաց համապատասխանաբար նվազում է ստացվող ինֆորմացիայի հավաստիության աստիճանը, քանի որ ծրագրի ծավալի մեծացումը տեղի էր ունենում մանրամասների հաշվին, իսկ մանրամասները ամենուրեք չէ, որ պահպանվել էին: Այնուհետև, ծրագրի առավելագույն տարբերակի կիրառումը մերժելի էր նաև նրանով, որ դժվարանում, իսկ որոշ դեպքերում նաև անհնար էր դառնում ընակավայրերի համաչափ խտության պահովումը քարտեզներում: Հաջակապես արևմտյան տարածքի համար այդ դժվարությունը զուգակցվում էր ընդհանուր տեղեկությունների հավաքման դժվարությունների հետ:

Այս հանգամանքները սահմանեցին, որ հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը կազմվի որպես առավելագույն և նվազագույն ծրագրերի միջինը, որն իր մեջ ամփոփում է հայերենի բարբառների բառային, հնչյունական ու քերականական առանձնահատկությունների առավել աչքի ընկնող տարբերությունները:

Ի տարբերություն այն կարգի այլ ծրագրերի, որոնց մեջ նպատակ է դրվում վեր հանել ավյալ լեզվի բարբառների լեզվական առանձնահատկությունները, հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի նպատակը նրանց աշխարհագրական բաշխման սահմանների որոշումն է արդեն իսկ հայանի բարբառային հատկանիշների հիման վրա: Այս նպատակադրությամբ էլ ծրագրի մեջ ընդգրկված բառային, քերականական ու հնչյունական շուրջ 800 տարբերակիչ հատկանիշները ձևակերպված են որպես ազագա քարտեզների զուգաբանություններ, որոնց համար պահանջվում է միայն պարզել նրանց տարածման սահմանները: Ծրագրի նման բնույթը հնարավորություն է տալիս հավաքչական աշխատանքների վերջին փուլում անմիջապես անցնել ատլասի քարտեզների կազմությանը՝ առանց ավելորդ ժամանակ և աշխատանք ծախսելու:

Ծրագրի մեջ մտած լեզվական հատկանիշները ընտրված են հայերենի բարբառների մենագրական ուսումնասիրությունների, գավառական բառարանների, բանահյուսական հարուստ գրականության լեզվական փաստերի համեմատական ուսումնասիրությամբ, հաշվի առնելով նաև, թե ընտրված հատկանիշներն ինչքանով են համապատասխանում ատլասի ընդհա-

նուր նպատակներին և հայոց լեզվի ու նրա բարբառների տարածքային, համաժամանակյա ու տարաժամանակյա քննության պահանջներին:

Նյութերի հավաքման ծրագիրը բաղկացած է երեք բաժիններից:

Առաջինն՝ բառագիտական բաժնի հիմնական տուն ցքը կազմում են հասկացական-բառանվանողական զուգաբանությունները: Այստեղ ընտրված են այնպիսի հասկացություններ, որոնց մասին հայտնի է, որ դրանք հայերենի բարբառներում վայրից վայր ունեն տարբեր դրսևորումներ: Այդ հասկացությունները ներկայացնում են արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների, մարդկային կյանքի, կենցաղի ու զբաղմունքի, կենդանական ու բուսական աշխարհի որոշ տեսակների, մարմնի մասերի ու գործարանների, առարկաների ու երևույթների հատկանիշների անվանումներ, որոնք ծրագրում դասավորված են ըստ խոսքի մասերի իմաստային խմբերի և ներկայացնում են հայերենի բառապաշարի ամենատարբեր շերտերը: Յուրաքանչյուր հասկացությանը համապատասխանող անվանման ճշգրտությունը ապահովելու համար ծրագիրը պահանջում է տվյալ բառը ներկայացնել նաև նախադասությամբ կամ բառակապակցությամբ: Այս պահանջի կատարմամբ, տվյալ զուգաբանության պատասխանից բացի, ստացվում են նաև տվյալ խոսվածքի վերաբերյալ լրացուցիչ այլ տեղեկություններ:

Հասկացական-բառանվանողական զուգաբանությունները հայերենի բարբառներում արտահայտված են բավական լավ և շատ հաճախ որոշ տարածքների համար ունեն ընութագրական արժեք:

Երկրորդ՝ քերականությանը նվիրված բաժնում ընտրված են այնպիսի հատկանիշներ, որոնք արտահայտության պլանում հանդես են բերում կառուցվածքային տարբերություններ: Դրանք մասնավորապես վերաբերում են հոգնակիի կազմության եղանակներին, հոլովման մեջ գոյականների ձևաիմաստային հատկանիշների դրսևորումներին, հոլովական վերջավորությունների տեղային տարբերություններին, դերանվանական հոլովման առանձնահատկություններին, բայական համակարգում եղանակաժամանակային ձևերի ձևաիմաստային տարբերություններին, շարահյուսական և այլ կարգի երևույթներին, որոնք այնքան բազմազան են հայերենի բարբառներում: Այս բոլորի համար անհրաժեշտ տեղեկությունները ապահովվում են բառահոդվածների տակ բերվող բառերի, նախադասությունների, հարցուցացային նմուշների գրական օրինակներով, որոնք լրացնողի կողմից փոխադրվում են տվյալ վայրի բարբառային լեզվին:

Ծրագրի երրորդ բաժինը հատկացված է հնչյունական զուգաբանություններին: Սրանց միջուկը կազմում են բարբառներում տուկ

պատմական ու փոխազդեցական հնչյունափոխության հայտնի երևույթները: Միայն թե այդ երևույթները խմբավորված են և շատ դեպքերում էլ ձևակերպված են մի զուգաբանության մեջ՝ որպես պատմական մի ընդհանուր օրինաչափության բաղկացուցիչ մասեր: Հնչյունական զուգաբանությունների համար անհրաժեշտ տեղեկությունները ապահովվում են տվյալ օրինաչափությանը ենթարկվող ստուգիչ բառերի օրինակներով, որոնց հին հայերենյան ձևերի դիմաց լրացնողը դնում է բարբառային: Ամեն վայրի համար տվյալ հնչյունական զուգաբանության օրինաչափ կամ ոչ օրինաչափ լինելը, ինչպես նաև տվյալ հնչյունական օրենքի սահմանները և անցման զոտիները որոշելու համար ստուգիչ բառերի քանակը հնչյունական զուգաբանությունների բաժնում հասցված է մոտ 1000 միավորի: Որպեսզի դրանց կրկնությամբ ծրագիրը չծանրաբեռնվի, այդ բառերը ցրված են տարբեր հոդվածների տակ:

Շապուհ Բագրատունին ունի ՍԱՀԱՆԴ, ,,գլխավոր քաղաք,, իմաստով, որ Ամառյանը /Ա, 798/ նույնացնում է պարսկ. ﺩﺍﻭﻧﺪ (āwand) ,,գահ,, աթոռ, պաշտոն,, բառի հետ և հիշում ՆԵՀԱՀԱՆԴ քաղաքի անունը /լեռնագագաթի անունը նրան հայտնի չէ/: Շահբազասը այս անվան համար ժողովրդական երկու ստուգաբանություն է բերել՝ Nih-āwand ,,խեցեղենի քաղաք,, և Nūh-awand ,,նոյի գահ, իմա՝ նոյի հիմնած քաղաք,,:
Ամառյանը /անդ/ նշում է, որ Համուսը վերջին ստուգաբանությունը սխալ է համարում:

ԱՀԱՆԴԱԿ ձևի առկայությունը Ներսեսովիչի բառարանում հնարավոր էր երկու աղբյուրի հիման վրա. կամ բառը նրան ծանոթ է եղել իր միջավայրի ժողովրդական խոսակցական լեզվից և կամ, որ առավել հավանական է, Աստվածաշնչից՝ առանձին միավորներ ընկալելով ՔԱՐՀՐԱՀԱՆԴԱԿ բառի սեռական ձևը՝ ՔԱՐՀՈՒ ԱՀԱՆԴԱԿԻՆ. ,,Եւ ոտից ես յընթիր մայրից բարձու աւանդակին՝. և տաց ես ի գլխոյ շառաւիղացն նորա ի սիրտս նոցա,, /Եզկ., ԺԶ, 22/:

Ամառյանը /Ա, 1023/ համադրել է Եզեկիելի վերոհիշյալ հայերեն տեսվածը հունարենի հետ և նշել, որ ՔԱՐՀՐԱՀԱՆԴԱԿ այնտեղ ՔԱՐԳ-

մանված է ,,լեռան զագաթ,, , սակայն նա բառիս երկրորդ մասը՝ ը-
ւանդակ, առանձին բառ-միավոր չի վերցնում, ավելին՝ բարձրաւանդակ
կազմված է համարում բարձր + ւանդ բառերից, ըստ որում վերջինիս
առկայությունը ցույց տալով նաև սարաւանդ, սարաւանդակ, ձահաւանդ,
ձահաւանդակ և ղարաւանդ բառերի մեջ. ,,այս բոլորի մեջ էլ,- գրում
է Ամառյանը,- ւանդ ունի ,,բարձր տեղ,, նշանակությունը /Ա, 1024/:
Այստեղ տարօրինակ կերպով Ամառյանի ուշադրությունից սպրդել է ըկ
վերջամասնիկը, որ պահպանված է, ինչպես տեսանք, թե՛ հայերեն բառե-
րում և թե՛ պարսկական լեռնանուններում, և հնարավորություն է տա-
լիս եզրակացնելու, որ ւանդակ որոշակի առանձին բառ է՝ ծագումով
իրանական *avandak . ըկ անվանակերտ վերջամասնիկը առավել քան հաս-
տատում է այս հանգամանքը:

Ինչ վերաբերում է ւանդ Ամառյանի նշած ձևին, ապա այն ւանդ-
ակը կրճատված ձևն է, որ համանիշ է եղել իրանական wand > band
,,կապ,, բառին և պահպանված է հյ. ղանդանաւանդ, պարաւանդ, շարա-
ւանդ, վարաւանդ, քահուանդ բառերում, վերջինիս վրա ուշադրություն
է հրավիրել Ամառյանը /անդ/:

3.Դրաւանդ ,,որոգայթ,,թակարդ,,.

- պահլավ.*daravand ժամանակակից պարսկ. دربند(darband)
,,շրջափակ,, պհլ. ā հողակապի սղումով և v=w > b անցումով:

Եղ. Մուշեղյանը սրան հոմանիշ է դնում որոգայթը՝ արաբ.,թուրք.
քալա նույնիմաստ բառը բացատրելու համար: Ըպիտի շփոթել ղարաւանդ
,,զահավանդ, ղար, բարձրություն,, բառի հետ:

4.Ռընդաք ,,հյուսնի ողորկիչ գործիքը,,:

- պահլավ. *randak ժամանակակից պարսկ. رنده(randa)
նույն նշանակությամբ: Մալխասյանցը ունի վերջին ւանդ ձևը, որ
գործածվում է բարբառներում և նոր փոխառություն է:

5. Վառակ ,,ոզեղ, ոժև,,.

- պահլավ. *varak ժամանակակից պարսկ. بره(barah) նույն
նշ.: v > b անցման համար հմմտ. հյ. վաղ պահլավ. war (var) ժա-
մանակ. պարսկ. bār ,,զարդարուն,,:

Ե. Կարնեցին թուրք. չաղիս-մալամաք ,,խայտառակ, ծանակ,, բա-
ցատրում է որպես ,,խախք վառակ,,:

6.Վտավանդակ ,,ասպարեզ,, /երկարության չափ/.

,,Բառգիրք հայոցը,, ունի վտաւանդ, որ մեկնում է ,,աղաջ,,
/երկարության թուրքական չափ/, հավասար շուրջ յոթ կիլոմետրի:

- պահլավ. vitavandak ժամանակակից պարսկերենն ունի دوانده
(dawanda), որ ենթադրում է պհլ. *tavandak ձևը, որից և հյ.
վտավանդակ /ըկ վերջամասնիկի համար հմմտ. հրեշտակ, նամակ և այլն/:

vi պահլ. նախամասնիկ է՝ պահպանված հյ. վթակ, վթանգ բառերում /Աճառ. Ջ, 710, 711/: Ե դարից ունենք նույնիմաստ վթաւան, որ հաղորդված է վթևան, վթաւան, վթավան, վթավանդ ձևերով /անդ, 716/: Աճառյանը բերում է Ավգերյանի և Հյունքապեյենտյանի կարծիքները, որ վթաւան բխեցնում են պարսկ. dawān ,,վազական, արագընթաց,, ձևից, բայց ինքը ծագումը անստուգ է համարում: Նղիա Մուշեղյանի բերած ձևը, նամանավանդ ալ վերջամասնիկը, հաստատում է բառիս իրանական ծագումը:

Արաբերենից փոխառյալ բառերի թիվը, որոնք մեր բառարաններում չեն գրանցված, Մուշեղյանի մոտ 37 է, սրանցից շատերը հայերենին են անցել պարսկերենի կամ թուրքերենի միջոցով: Այս բառերի մի մասը, անկասկած, ավելի վաղ փոխառություն է, որ մեր բառարաններում չի գրանցվել, բայց վկայված է վերջին տասնամյակներում լույս ընծայված միջնադարյան հեղինակների մոտ: Օր. Մուշեղյանը ունի քալեհ ,,բախտ,, , ղումբի ,,տաբակ,,. առաջինը օգտագործել է Փրիկը /13-րդ դ./ /ղալեհ ձևով/, իսկ երկրորդը Գրիգորիս Աղթամարցին /16-րդ դ./:

Արաբերենից փոխառյալ բառեր են

Աճուր / ādjur/ - ագուռ, աղյուս

Ամենի / yamanī/ բառասկզբի y-ի անկումով/ - հողաթափ, բուրմ

Ամպրխամ /ᶜanbarkham, n > m անցումով/ - դեղին սաթ, քահրիբար

Աստառ / astār / - խնդրագիր, դիմում

Աւադ / adab / - 1.պարկեշտ, 2.դաստիարակություն

Ընդղ /ᶜaraḳ , ᶜ > հյ. ե տառադարձումով/ - օղի

Ընդս / ra's հզ. ruus / - գլուխ, գագաթ

Քալէհ / tālaᶜ. ᶜ > հյ. հ տառադարձումով/ - բախտ, ծակատագիր

Իմամ / ᶜimād / - նեցուկ, հույս

Խալուաթ / khalwat / - 1.առանձնություն, 2.անմարդ, դատարկ տեղ

Ղասիդ / ḳasīda / - չափածո ներբող, պոեմ

Ղաֆաս / ḳafas / - վանդակ

Ղիմա / ḳīma / - մանր կտրատած կամ ծեծած միս

Ղումրի / ḳumrī / - տաղրակ

Ջահդ / djahd / - միգ, ջանք

Ջուբբա / djubba / - երկար վերարկու, բաճկոն

Ջուդամ / djudham / - 1.քորոտություն, 2.քորոտ, 3.ստոր

Մալխատ / milḳaṭ / - ունելի
Մահան / muhanna / - կեռ, ծանկ, ունելի
Մահսար / mahṣar / - համախոսական
Մաթխաբ / mathḳab / - շաղափ
Մուխտասիբ / muḥtasib, ḥ > հյ. խ/ - քաղաքապետ, ոստիկանապետ
Մուղաստամ /muḳaddam / - նախաղաս, առաջ
Մուղնի /mughannī , mughnī / - երգիչ, գուսան
Մուջալլա /mudjalla / - հղկված, փայլուն
Մուտախիլ / mudākhil / - եկամուտ
Նզլա /nazlat , պարսկ. nazla / - հարբուխ, իջվածք
Շաբաքա /shabaka / - ուռկան
Շունջար / shidjar / - խարի, սնգույր /
Շուքր / shukr / - գոհություն, շնորհակալություն
Պալաթ / balāṭ / - 1.փռվածք, մակերես, 2.սալ, սալաքար
Ջուրում / djurm , հզ. djurūm / - տուգանք
Սահն / ṣahn / - 1.մեծ կաթսա, 2.սկուտեղ
Սիֆիլ / sifīl / - խեղճ, թշվառ
Տաղտաղա /daghdagha / - 1. կասկած, 2.երկյուղ, սարսափ
Տամպուրա /ṭanbūr, թուրք. tanbūra , n > հյ. մ հնչումով/ -քը- նար, տավիղ
Քիբրիթ / kibrīt / - ծծումբ

Պարսկերենից փոխառյալ, մեր բառարաններին անծանոթ, բառերի թիվը մուշեղյանի այս բառարանում 26 միավոր է, որոնցից մի քանիսը հայերենին է անցել թուրքերենի միջոցով և տառադարձումը կատարված է տվյալ բառի թուրքական արտասանության հիման վրա:

Ամայ / āmāy / - ծեփագործ, զարդարող
Աֆտաբա / āftāba , թուրք. āftāfa / - ստոման, ջրաման
Դաֆլի / daūla / - բաժակ
Թասմա / tasma / - գոտի, կապ, երիզ
Թափանճին / tapānça / - ատրճանակ
Թիմարխանա / tīmārkhāna / - խենթանոց
Լուլէյին / lūlīn , թուրք. lūliyin / - կավե ստոման, ջրաման
Խէշ / khash / - բնավոր, պիսակավոր
Ղումպարա / khumpāra , թուրք. ḳumbāra / - ռումբ
ճիկ / čik / - մուրճ, թակ
Միշ_մէշին / mishīn / - մշակված ոչխարի կաշի
Յախ / yakh / - սառույց

Ցախդան / yakhdān / - սառցատուն, սառնարան
Նալբէքի / n^{c}albakī , nalbakī / - ափսե /քեյի բաժակի/
Շուրա / shūra / - աղուս վայր
Չիլինգար / čilingar / - դարբին, երկաթագործ
Ռաֆ / raf / - դարան, պահի վրայի պահարան
Սարրաջ / sarrādj / - քամբագործ, համեստագործ
Սէրթիզ, թուրք. sirtīz / -սայրասուր, սրածայր
Տրֆթիկ / taftīk / - այծեմազ
Փէրթիզ / pirtīz / - սայրասուր, սրածայր
Քալլափուշ / kallapūsh / - գլխաշոր, գլխարկ
Քարգարդան / kārgardān / - գործի ղեկավար, կառավարիչ
Քիլս / kils / - չմարած կիր
Քլա / klā / - կալիում, պոտաշ
Ուրիբ / ūrīb / - 1.ծուված /նետ/, 2.հակադարձ
Քուրքերենից փոխառյալ, մեր բառարաններում չգրանցված, բառերի թիվը Ծ. Մուշեղյանի 36 միավոր է.
Ադլիք / āḳlik / - ազնվություն, անմեղություն, բարի համբավ
Ադլեղ / āḳlik / - պաղլեղ, շիճ
Աշմաղ / yāshmaḳ , y-ի անկումով/ - կանանց երեսի բարակ ծածկույթ, կզակակապ
Գինաբ / gināb / - 1.երասանակ, 2.քոկ, լար
Գուրա / gūra / - նախադր. ն այելով, ըստ
Դաւաջի /=դաւաջի/ / d^{c}wadjī / - հայցվոր, ամբաստանող
Դիհ / dih / - մեջ
Դուլլուկ / ṭūlluḳ / - այրիություն
Էքիզ / ūkuz / - եզ
Թալաթին / talātīn / - յուֆտե /փափուկ/ կաշի կամ ռուսական կաշի
Թաքալթու / takaltū / - քամբաակի քրանաքաշ քաղիքը
Խաթիլ / khaṭīl / - հեծան, գերան
Ղարախչի / ḳārāḳčī / - ավազակ, ասպատակող
Կուսա / kūsa, պրսկ. kūsa ,,քարծ, մորուք չբուսնող,,/ -մուրացիկ, դերվիշ
Կուլաշ / kūlash / - ըմբշամարտ
Կալթաղ / ḳāltāḳ / -անութ
Կայիղ / ḳāyiḳ / - նավակ, մակույկ
Կանթարմա / ḳāntārma /-սանձ, երասանակ
Կուբուր / ḳūbūr / - 1.կապարճ, պատյան, 2.խողովակ
Կուսկուն / ḳūsḳūn / - դժբախտ, ծախորդ

ծանֆաս / djānfas / - սնդուկ, մեծաքայլ նուրբ, փայլուն կտոր, տաֆտա

ծնկռալու / - չընկըրակլու / cinghiraklū / - բռժոժ

Մատրաձաց / maṭrābāz / - 1.էժան գնող թանկ վաճառող, 2.խաբեբա

Մուսլուկ / mūslūk / - ծորակ

Մուկի / mūkī / - բորբոս

Նիլան / nīlan / - պարգևատրվելը

Չաիան / čītan / - փշե ցանկապատ

Չախշիրը / čakshīr / - անդրավարտիք, տաբատ

Չարշաֆ / čarshaf / - զավտ, կողմ

Չիթարի / čitārī / - բամբակե գունզարդ կտոր, չիթ

Պուրղու / būrghū / - շաղափ, գայլիկոն

Ջիբրա / djibra / - դիրմ, մրուր

Տաբաքի / / - շքեղ, պերճ

Փուլխուլի ստեպղին, զազար

Քուլխանջի /kulkhandjī, kulhandjī / -1.հնոցապան, 2.շրջմոլիկ

Քուքալ զանգուր

Բառարանում կան նաև հունարեն, լատիներեն ու իտալերեն 6 բառեր, որոնք փոխ են առնված քուրքերենի միջոցով.

Ասկալա /իտալ./ - նավահանգիստ

Ատամազ /հուն. լատ./ - աղամանդ

Բանայիը /հուն./ - տոնավաճառ

Խօրաթա /հուն./ - 1.կատակ, 2.խոսք, խոսակցություն

Կուստաը /լատ./ - նախաճաշ

Ղամարա /իտալ./ - նավի խուց, կամերա

Այս բոլորից բացի բառարանը ունի անստույգ ծագումով 14 բառ, որոնք բերված են որպես հայերեն բառերի հոմանիշներ, դրանք են՝

Աըմեշտ - հաշմանդամ

Քշիխ - կրկնակզակ

Մասորի - մարջան, բուստ

Մէլիխ - քանդակագործի բրիչ

Մումնա - դրոշակ

Շուառական - 1.անարյուն, 2.անհոգի

Շոռլոտ - անստույգ նշ.

Ոյառն - բազե

Չանք - զահավորակ

Չունուզ - փուչ, դատարկ

Պարմիլ - աղյուս

Ցարտաղ - քուրծ, պարկ
Տանտանել - խոհանոց
Տար - խոպոպ

Ե. Մուշեղյանի թուրք-հայերեն բառարանը ուսումնասիրելու և հրապարակելու նպատակով մենք ընդօրինակել ենք բնագիրը, վերադասավորել թերթերը ըստ հայերեն այբբենական կարգի՝ առանց խաթարելու յուրաքանչյուր զրի ներսում բառերի մուշեղյանական դասավորությունը՝ ոչ խիստ այբբենական կարգը, միաժամանակ կազմել ենք բառերի նույնականությունների աղյուսակը / Indontifikationastabelle / հայատառ թուրքերենի դիմաց տալով լատինատառ ու արաբատառ գրությունը:

Այսպիսով՝ Եղիա Մուշեղյանի քննության առարկա անտիպ բառարանը, որ թուրք-հայերեն բառարան կազմելու առաջին փորձերից է մեր իրականության մեջ, հետաքրքիր երևույթ է հայ լեզվաբանական գրականության մեջ և 111 նոր բառերով, ի բաց առյալ անստույգ բառերը, հարստացնում է հայերենի բառապաշարը:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Եղիա Մուշեղյանի մասին տես ,,Եղիա Կարնեցու Դիվանը,, /Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության/: Առաջաբանը և ծանոթագրությունները պրոֆ. Ա.Գ. Աբրահամյանի, Երևան, 1968: Բ.Լ. Զուզասցյան, Եղիա Մուշեղյանի /Կարնեցու/ զրաղարանը, ,,Լրաբեր հասարակական գիտությունների,, , 1983, № 1, էջ 61-74:

2 Տես Архив внешней политики России (АВПР), фонд "Сношения России с Арменией", опись 100/1, д. 10, с. 3-4:

Այս բառարաններից №№ 2 և 3-ը եղել են՝ Աստուածաշունչը Ներսես Վիչ, Dictionarium Latino-Armenum , Հռոմ, 1695 և Երեմիա Վարդապետ /Մեղրեցի/, Բառգիրք հայոց, Լիվոռնո, հրատ. Սարգիս Եւդոկիացի /Սահեթցի/, 1698: Ինչպես կտեսնենք ստորև Ե. Մուշեղյանը իր ,,Թուրք-հայերեն բառարանը,, կազմելիս մեծապես օգտվել է դրանցից:

3 АВПР անդ, № 5, էջ 62բ:

4 Անդ, № 1, էջ 44ա-120բ:

5 Անդ, № 5, էջ 64-69:

6 Անդ, էջ 70-73:

7 Անդ, № 3, էջ 57:

8 Հնչյունաբանական հարցերին այստեղ չենք անդրադառնում:

Ա. ՊԻՈՎԻԶ / Նրակով, Լենինական/

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՆՈՐ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ինչպես հայտնի է, հայ-իրանական լեզվական կապերը շատ հին են և առնվազն 2500 տարվա պատմություն ունեն: Հին դարերում այդ կապերը սովորաբար անմիջական էին, մինչդեռ ներկա հազարամյակի սկզբից այն հողերի վրա, ուր հայերենը տարածականից էր պարսկերենին, գանվել են թյուրքական բարբառներ: Ժամանակի ընթացքում նրանք զգալի ազդեցություն գործեին հայ բարբառների վրա: Այդ ազդեցությունը ըզգացվում էր նաև նոր պարսկերենից փոխառված բառերում, որոնց մեջ բուն պարսկերեն տարրերից բացի գոյություն ունեին նաև բազմաթիվ արաբերեն բառեր: Այդպիսի փոխառությունները համախ մտնում էին հայ բարբառները թյուրքական միջնորդությամբ: Նույնիսկ բավականին հետու, դեպի հարավ-արևելք գտնվող Ուրմիայի հայ բարբառը տերտ կապեր է ունեցել հարևան ադրբեջանցիների խոսվածքների հետ, որոնցից փոխ է առել և թյուրքական, և պարսկական բառերի զգալի քանակ:

Նմանապես Սպահանի Նոր Ջուղա հայ գաղութի բարբառում հավանական է որոշ ադրբեջանական ազդեցություն, քանի որ այդ գաղութի բնակչությունը 17-րդ դարից առաջ ապրել էր Արաքսի ափերին՝ շփվելով ադրբեջաններեն խոսողների հետ:

Որոշ դեպքերում թյուրքական միջնորդությունը հաստատվում է անարդակուսյա: Այդպես է, օրինակ, Առափալի, Ավեդիսի և ուրիշ արևմտահայ բարբառներում, որոնք երբեք անմիջական կապ չեն ունեցել պարսկերենի տարածման երկրամասերի հետ:

Նայենք այժմ իրենք՝ պարսկերենին, որպես փոխատու լեզվի: Գուցե այն լեզվի բարբառային տարբերացումը որոշ դեր է կատարել մեր հարցում: Չէ՞ որ իրանի լեզվաբանական քարտեզը բավականին խայտաբղետ է, և իրանյան բարբառներն էլ բազմաթիվ են: Բայց հայերենի երևան բերած նյութերում այդպիսի տարբերացում չի նկատվում: Հայ բարբառներում վկայված ձևերը ընդհանուր ,,Ֆարսի,, պարսկերենի բառեր են: Իրանի այն ընդհանուր ,,կոյնե,, վաղուց գործածվում է ամբողջ երկրում և հետզհետե դուրս է մղում տեղական խոսվածքները, մանավանդ՝ քաղաքներից:

Մեր հազարամյակի հենց առաջին դարում Անդրկովկաս են մտել թյուրքական ցեղեր: Նրանք և թրքացած իրանցիները մեծ չափով կտրել են հայերին անմիջական շփումից պարսկերեն խոսող բնակչության հետ: Հետագա դարերում հայատառ այբբեր տեղերում ապրող պարսիկները խոսում էին ընդհանուր ,,Ֆարսի,, լեզվով, առանց բարբառային զգալի առրերի:

Այսպիսով, մեզ հետաքրքրող հարցերից ամենակարևորը այն է, թե հայ բարբառներում գոյություն ունեցող պարսկերեն բառերը ո՞ր ճանապարհով են մտել հայերեն, անմիջապես պարսկերենի՞ց, թե՝ թյուրքական միջնորդությամբ: Որո՞նք են այս երկու խմբերի որոշման չափանիշները: Այս հարցի դժվարության մասին գրել է պրոֆ. Է. Աղայանը Մեղրու բարբառին նվիրված իր ուսումնասիրության մեջ[1]: Հարցը դրանով էլ բարդանում է, որ քննվող փոխառությունները երբեմն շատ հին են և ժամանակի ընթացքում մի խոսվածքից մյուս խոսվածք անցնելիս ենթարկվել են տարբեր փոփոխությունների: Օրինակի համար վերցնենք մի բառ Առտիալի արևմտյան բարբառից. xodāvandgār պարսկերեն սկզբնաձևը այնտեղ դարձել է խոնդիքար[2]: Իմաստն էլ փոխվել է այս բառի դեպքում: Պարսկերենում նշանակում էր ,,Աստված, տեր,, , իսկ Առտիալում՝ ,,կայսր,,:

Քննենք հայ բարբառներում վկայված պարսկերեն փոխառությունների ձայնավորները: Թյուրքական միջնորդության ամենաառանձնահատուկ ազդուցյը փոխառված բառերում առաջնալեզվային շրթնայնացված ö, ü ձայնավորների գոյությունն է: Սրանք պարսկերենում չկան, հայերենին էլ խորթ են, բայց հանդես են գալիս թուրքերենում և աղրբեջաներենում՝ պարսկերենից փոխառյալ բառերի մեջ, պարսկերեն o, u, ou ձայնավորների փոխարեն: Այս կանոնավոր համապատասխանությունը /պարսկերեն o, u, ou – թյուրքական ö, ü/ կապված է թյուրքական լեզուներին բնորոշ ձայնավորների ներդաշնակության երևույթի հետ: Օրինակ, Մեղրու բարբառում[3] ունենք դըշմա̈ն / düšmæn / ,,թշնամի,,< աղրբ. ДУШМӘН < պրսկ. /վաղ/ dūšman /այժմ došman /, Ուրմիայի բարբառից[4] կարող ենք քերել նէօքյոր / nökhʸær / բառը /,,ծառայ,, իմաստով/< աղրբ. НӨКӘР < պրսկ. noukar:

Երբեմն թուրքերեն /կամ աղրբեջաներեն/ ö, ü ձայնավորների փոխարեն հայ բարբառներում ունենք յը, յըւ կապակցությունները, օր. Մշո բարբառը[5]. գյուլլա ,,հրացանի գնդակ,,< աղրբ. КУЛЛӘ < պրսկ. golule /վաղ՝ gūlūla /: Այսպիսի դեպքերում թյուրքական ազդեցությունը նույնպես ակնհայտ է:

Բայց մյուս կողմից պատահում է նաև, որ նոր պարսկերեն բառերը պահում են հայ բարբառներում իրենց հարազատ ետնալեզվային արտասա-

նութ յունը, օր. քօո ,,կուլր,, < պրսկ. /վաղ/ kōr /այժմ kur /, դուշման < պրսկ. /վաղ/ dušman /Ուրմիայի բարբառը/: Սրանք անմիջական փոխառություններ են:

Պարսկերեն a, ā երկու ձայնավորների փոխարեն հայերենը սովորաբար հանդես է բերում մեկ a ձայնավոր, օր. /արարատյան բարբառից 6. թամբալ ,,ծուլ,, < պրսկ. tambal , բազար ,,շուկա,, < պրսկ. bāzār Բայց երբեմն հայ բարբառներում երկու պարսկերեն ձայնավորները զանազանվում են և արտասանվում՝ æ (ո), a (ա): Այս դրությունը շատ մոտ է պարսկերեն արտասանությանը, որում ձայնավորների տևողության հակադրությունը փոխարինվել է նրանց արտաբերման դիրքի հակադրությամբ /կարճ a-ն առաջնալեզվային է դարձել, երկար ā-ն՝ ետնալեզվային/: Ահա օրինակներ Մեղրու բարբառից, որում ունենք. դ՚ըրյա / dærya / ,,ծով,, < պրսկ. daryā , բազբ՚ան / bazbænd / ,,բազկապան,, < պրսկ. bāzuband : Այստեղ սպասելի կլիներ պարսկերենի անմիջական ազդեցությունը, բայց պետք է նկատել, որ աղրբեջաներենը համընկնում է այս դեպքում պարսկերենի հետ, օր. պրսկ. daryā > աղրբ. дəрjа , ուստի թյուրքական ազդեցությունը այստեղ էլ լիովին հավանական է:

Ժամանակակից պարսկերենի մի ուրիշ բնորոշ գիծը K, Ջ բաղաձայնների քմայնացած արտասանությունն է առաջնալեզվային a, e, i ձայնավորներից առաջ: Երկար ետնալեզվային ā-ից առաջ մենք ունենք միշտ կոշտ K, Ջ: Հետևաբար, եթե մի հայ բարբառում հանդիպենք քմայնացած k^j, g^j և ոչ-քմայնացած k, g բաղաձայնների հակադրությանը a-ից առաջ /այսինքն k^ja - ka, g^ja - ga/, օր. Ուրմիայի բարբառում՝ քարվանսարա ,,իջևան,, - քյոլոմ /kh^jælæm / ,,կաղամբ,, , դա փաստարկ կլինի քա, գա կապակցություններն ունեցող բառերի պարսկերենից /պրսկ. kārvānsarā , kalam / անմիջապես փոխառնված լինելու համար: Աղրբեջաներենում բոլոր պարսկերեն K, Ջ բաղաձայնները միշտ քմայնացած են, անկախ դիրքից 7: Այդ մասին կխոսվի ստորև:

Ժամանակակից պարսկերեն լեզվի մեջ հին a ձայնավորը բառավերջում արտասանվում է e: Հայ բարբառները այս դիրքում երևան են բերում a կամ æ ձայնավորները: Դա կարող է բացատրվել փոխառության վաղ տարիքով, բայց հավասարապես՝ աղրբեջաներենի միջնորդությամբ /այս լեզուն նույնպես պահպանում է բառավերջի a-ի հին՝ բաց արտասանությունը [æ]/:

Մեր հազարամյակի առաջին դարերում նոր պարսկերենն ուներ երկար ē, ō ձայնավորները, որոնք հետագայում նույնացել են երկար ī, ū ձայնավորների հետ: Այս հին արտասանությունը, որ մինչև այժմ պահպանվել է Աֆղանստանում, հատուկ է նաև հայ բարբառային ձևերին: Բար-

բառներից շատերում ունենք օր. թէզ ,,շուտ,, , հէշ ,,բնավ,, , քօտ ,,կույր,, , դօստ ,,բարեկամ,, բառերը, որոնք ժամանակակից պարսկերենում հնչում են [tīz], [hīč], [kūr], [dūst] : Անցյալում պարսիկները արտասանում էին այդ բառերը [tēz], [hēč], [kōr], [dost] : Սակայն հայ բարբառային ձևերի անմիջական փոխառություն լինելը պարսկերենից հաստատ չէ, քանի որ աղրբեջաներենը այս բառերում նույնպես պահպանում է հին վիճակը (тез,heч, кор, дост):

Ժամանակակից պարսկերեն կարճ e,o ձայնավորները առաջացել են վաղ նոր պարսկերենի ĭ, ŭ կարճ ձայնավորներից: Հայ բարբառային ձևերը այդ դեպքերում արտացոլում են ավելի հին վիճակը: Շատ տարածված օրինակներից են զուռնա<վաղ պրսկ. zŭrnā /այժմ՝ zornā /, չինար<վաղ պրսկ. čĭnār /այժմ՝ čenar /: Պատահում են նաև ավելի նոր փոխառություններ, օր. արարատյան էֆտիբար ,,վարկ,,<պրսկ. e'tebār : Բայց աղրբեջաներենն էլ ունի e'тибар ուստի այս դեպքում ևս դժվար է որոշել, թե հայերեն բառը որ աղբյուրից է փոխառվել: Նոր և անմիջական փոխառություն է երևում Ուրմիայի բարբառում՝ նօխուդ ,,սիսեռ,,<պրսկ. noxud :

Նոր Ջուղայի բարբառում պարսկերեն e(<ĭ) ձայնավորին երբեմն համապատասխանում է ը , եթե վստահենք աշուղների ստեղծագործությունների գրական հրատարակություններին[8], օր. ընթըզար ,,սպասում,,< պրսկ. entezār /արաբերենից/: Այսպիսի գրությունը արտացոլում է ըստ երևույթին պարսկերեն ĭ > e զարգացման անցողական մի վիճակ և հիմնվում է անմիջականորեն պարսկերեն արտասանության վրա:

Անցնելով բաղաձայններին հիշեցնենք, որ նոր պարսկերեն խուլ p, t, k, č պայթականներին հայերենում համապատասխանում են խուլ շնչեղ պայթականները փ, թ, ք, չ , օր. քուփթա<պրսկ. kufta /վաղ՝ kūfta /, փարչա ,,կտոր,,<պրսկ. pārče /վաղ՝ pārča /: Այս համապատասխանությունը լիովին արդարացված է, քանի որ պրսկ. p, t, k, č արտասանվում են հայերենի բաղաձայնների նման, այսինքն՝ շնչեղ[9]: Պետք է նշել սակայն, որ աղրբեջաներենում /և որոշ չափով նաև թուրքերենում/ քննվող բաղաձայնների արտասանությունը նույնպես շնչեղ է[10]:

Պարսկերեն b, d, g, ǧ ձայնեղ պայթականները բառավերջում չեն համընկնում համապատասխան խուլերի հետ: Նույնպիսին է նրանց վիճակը հայերենում, օր. Ուրմիա՝ դռդ /dærd / ,,ցավ,,<պրսկ. dard, քաբաք ,,խորոված,,< պրսկ. kabāb : Բայց այստեղ ևս չի կարելի որոշել, թե այս դրությունը բացատրվում է պարսկերենի անմիջական ազդեցությամբ, թե պարտական է աղրբեջաներենի միջնորդությանը: Այս վեր-

չինի արտասանությունը տվյալ դեպքում համընկնում է պարսկերենի հետ /ադրբ. дәрд, кабаб /, մինչդեռ թուրքերենում բառավերջի ձայնեղները լիովին խլանում են, օր. dert, kebap:

Բաղաձայնների մեջ բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում պարսկերենի ետնաբմային և լեզվակային բաղաձայնների հայերեն համապատասխանները: Նրանց պատկերը բավականին բարդ է, որը մի կողմից՝ բխում է թյուրքական հաճախ միջնորդությունից և մյուս կողմից՝ կապված է թյուրքական ազդեցության հետ, որին ենթարկվել է վերջին դարերում պարսկերենի հնչույթային համակարգը: Այս հանգամանքը քիչ է ուսումնասիրված իրանագետների կողմից և արժանի է նրանց հատուկ ուշադրության: Այստեղ կսահմանափակվենք զլխավոր փաստերի ներկայացմամբ:

Սկսենք ետնաբմայիններից: Պարսկերենն այս շարքում ունի երկու հնչույթ՝ /к/ և /ɣ/, որոնք ետնալեզվային ā, o (<ŭ), u(<ū), ou (<au) ձայնավորներից առաջ կոշտ են արտասանվում, իսկ մյուս դիրքերում՝ փափուկ: Այս քմայնացումը ըստ երևույթին նոր է, որի մասին վկայում է սրա բացակայությունը պարսկերենի ածղան տարբերակում /,,դարի,,/: Քմայնացումը հավանաբար առաջացել է պարսկերենում թյուրքական ազդեցությամբ: Քննվող բաղաձայնները թյուրքական բարբառներով խոսողների կողմից նույնացվում էին իրենց սեփական քմայնացած к՛, ɣ՛ պայթականների հետ, որոնք գործածվում էին առաջնալեզվային ձայնավորներ ունեցող բառերում: Մեր հազարամյակի առաջին դարերում ապրող աղըրբեջանցիները պարսկերենից փոխառած բառերում պրսկ. к, ɣ բաղաձայնները բոլոր դիրքերում վերարտադրում էին քմայնացած к՛, ɣ՛ պայթականների միջոցով: Ինչպես նշեցինք, պարսկերենում ետնալեզվային ձայնավորներից առաջ к, ɣ շարունակում են արտասանվել կոշտ, առանց քմայնացման: Դրա շնորհիվ հայ բարբառային նյութերում կարելի է զանազանել պարսկերենից անմիջապես փոխառված բառերը թյուրքական բարբառների միջնորդությամբ կատարված փոխառություններից:

Հետևաբար, եթե Ուրմիայի բարբառում ունենք քարվանսարա ,,իջևան,, , քօո ,,կույր,, , զունահքար ,,մեղավոր,, , ապա ք, ɣ պայթականների կոշտ արտասանությունից այն եզրակացությանն ենք հանգում, որ սրանք անմիջապես պարսկերենից են մտել մեր բարբառը /< պրսկ. kārvānsarā, kōr = այժմ kur, gūnāhkār =այժմ gonāhkār /: Աղրբեջաներենը այս բառերում հանդես է բերում փափուկ /քմայնացած/ բաղաձայններ՝ карвансара, кор, кунаһкар[11]:

Հին և անմիջական փոխառություն է նաև քաբաք բառը < պրսկ. kabāb, որը մտել է Ուրմիայի բարբառը այն ժամանակ, երբ պարսկերե-

նում a-ից առաջ к-ն դեռ քմայնացած չէր /այժմ արտասանվում է փափուկ [kʻabāb]/ :

Եթե, մյուս կողմից, նույն Ուրմիայի բարբառում հանդիպում ենք քյորգյո [khʻærgʻæ] ,,գործելու սեղան,, , գյիւլ [gʻül] /պրսկ. kārgāh, gol < gŭl կոշտ к, ջ պայթականներով/ բառերին, ապա թյուրքական միջնորդությունը /աղրբ. каркаһ, кул / ակնհայտ է ընկնում:

Ավելի դժվար է պարսկերեն լեզվակային q, ɣ -հայերեն ղ համապատասխանությունը: Նոր պարսկերենում այս բաղաձայնները սկզբից առանձին հնչույթներ են եղել, որոնցից q-ն հանդիպում էր միայն արաբերենից փոխառյալ բառերում: Այս վիճակը շարունակվում է մինչև այժմ Աֆղանստանի պարսկերենում /,,ղարիում,,/: Ադրբեջանի թյուրքական բարբառներում /նրանցից գոնե մի քանիսում/ երկու վերոհիշյալ հնչույթները նույնացել են: Այս նույնացումը / q-ɣ/ տարածվել է, մեր կարծիքով, հենց թյուրքական ազդեցության տակ, ամբողջ իրանում գործածվող պարսկերենի վրա: Այս ,,Ֆարսի,, պարսկերենը միայն մեկ հնչույթ /q/ ունի, որը հանդիպում է երկու գլխավոր տարբերակներով. բառասկզբում q-, ձայնավորների միջև [-ɣ-] : Այս տարբերակները իրենց արտասանությամբ հնչյունապես համընկնում են հին առանձին հնչույթների հետ:

Ժամանակակից գրական ադրբեջաներենում պարսկերենի /q/, /ɣ/ հին հնչույթներին համապատասխան հնչույթը իրականացվում է որպես ետնաքմային ձայնեղ /կամ կիսաձայնեղ/ պայթական բաղաձայն և ուղղագրության մեջ ներկայացվում է г տառով[12]: Միատեսակ կերպով են արտասանվում հին q և ɣ բաղաձայնները, օր. гисмəн ,,մասամբ,, < արաբերեն qisman, гиjаби ,,հեռակա,, < արաբերեն ɣiyābī : Թուրքերեն լեզուն, հակառակ ադրբեջաներենի, պահպանում է երկուսի տարբերությունը. kismen, giyabi :

Տեսնենք ինչպիսին է վերոհիշյալ բաղաձայնների դրությունը հայերենում: Բարբառների մեծամասնությունը պարսկերեն q /ɣ/-ի փոխարեն բոլոր դիրքերում հանդես է բերում լեզվակային /կամ ետնաքմային/ ձայնեղ շփական /!/ ղ բաղաձայնը: Այդ արտասանությունը բնորոշ է նաև գրական արևելահայերենին և արևմտահայերենին, օր. ղարիբ, ղուրան: Այս հայտնի համապատասխանությունը միշտ ասած անակնկալ է, որովհետև չի համընկնում փոխառու ոչ մի գրական լեզվի դրության հետ: Պարսկերենում /q/ հնչույթի բառասկզբի տարբերակը խուլ պայթականն է /q-/: Գրական ադրբեջաներենը տվյալ դեպքում նույնպես պայթական բաղաձայն է հանդես բերում /ձայնեղ g/, մինչդեռ թուրքերենում երկու հնչույթները զանազանվում են արաբերենին

փոխառու լեզվին համաձայն /թրք. к- g արաբ. q -ɣ/:

Հայերենը k, g, q երեք պայթականներն ունենալով հանդերձ՝ հիրավի անակնկալիորեն ավյալ դեպքում հանդես է բերում ղ շփականը: Դրա միակ բացառությունը, մեր կարծիքով, աղրբեջաներեն բարբառային արտասանության ազդեցությունն է: Իսկապես, աղրբեջանական որոշ բարբառներում, նրանց մոտիկ Քաշքայների բարբառում /հարավային Իրան/, ինչպես նաև Թուրքիայի որոշ տեղերում /օր. Քոնյա քաղաքի մոտերքում/[13] պատահում է g-ի շփական արտասանությունը, այն էլ ոչ միայն բառավերջում, որ շատ տարածված է /համեմատիր գրական աղրբեջաներենի հերթազայությունը. ajar ,,ոաք,, - հայցական հոլով՝ ajarы/, այլև բառասկզբում: Այսպիսի զարգացումը բացատրվում է միջբառային հնչյունական /սանդհի/ պայմաններով[14]. որոշ բարբառներում նախորդող բառի ձայնավորից /կամ ձայնորդից/ հետո հաջորդող բառի սկզբի g-ն շփական է դարձել, և այս շփական արտասանությունը ընդհանրացվել է բառասկզբում նույնիսկ անկախ նախորդող բառից:

Սակայն հայ բարբառներից մի քանիսը պարսկերեն q /ɣ/-ի դիմաց ուրիշ բաղաձայններ ունեն: Խոսքը Ուրմիայի[15] և Թիֆլիսի[16] բարբառների մասին է: Այնտեղ պարսկերեն բառերի մեջ /սովորաբար նրանց ընկերգրանքությունը արաբերենն է/ հանդիպում ենք լեզվակային խուլ պայթականի՝ ղ /q/: Ուրմիայի բարբառում այդ բաղաձայնը համընկնում է ժամանակակից պարսկերենի /q/ հնչույթի բառասկզբի պայթական տարբերակին, օր. ղլոմքըրաշ /qælæmthəraš / ,,գրչահատ,,< պրսկ. qalam-tarāš:

Թիֆլիսի բարբառում համապատասխան բաղաձայնի արտաբերմանը ուղեկցում է միաժամանակ կոկորդային պայթումը, միշտ վրացերեն լեզվակային ყ /q'/-ի նման: Ուրմիայի բարբառի դեպքում շատ հավանական է թվում պարսկերենի անմիջական ազդեցությունը: Բայց պետք է նշենք, որ գրական աղրբեջաներենի բառասկզբի r բաղաձայնները նույն ձևով են արտասանվում Ուրմիայի հայերի կողմից, օր. բուն թյուրքական բառերի ձևերը հետևյալն են մեր բարբառում. ղալին /qalin / ,,կոշ,, , ղուշ /quš / ,,թռչուն,, /համեմատիր աղրբ. галын, гуш թրք. kalin, kuš /: Այնուամենայնիվ հավանական է, որ Ուրմիա լսին մոտիկ աղրբեջաներեն խոսվածքները հենց այսպիսի արտասանություն ունեն, և այս դեպքում հայերեն բարբառային ձևերը կարող են թյուրքական միջավայրից փոխառված լինել:

Թիֆլիսի բարբառում, անշուշտ, իր դերն է կատարել վրացերենի ազդեցությունը, օր. q'alam ,,գրիչ,, և վրացերեն q'alami /ყალამი/ < արաբ. qalam -ից երկու ձևերում ունենք էյեքտիվ

q : Վրացերենում պարսկերեն և թյուրքերեն q-/k-/ բառասկզբում նույնացվել է բուն կովկասյան էյեքտիվ լեզվակային q բաղաձայնի հետ: Ի միջի այլոց վրացերենը հանդես է բերում մեկ բառի երկու հետաքրքիր զուգահեռ ձևեր. q'aribi և ɣaribi: Նրանք տարբերվում են իմաստով. առաչինը նշանակում է ,,ուխտավոր, օտարական,, , մյուսը՝ ,,աղքատ,, և թվում են տարբեր աղբյուրներից կատարված զուգահեռ փոխառություններ: Հավանական է, որ aribi ձևը փոխառել էր հայ բարբառներից /քայց, իհարկե, ոչ թիֆլիսյանից, ուր նույն բառը արտասանվում էր q'arib[17]/:

Խոսելով Թիֆլիսի հայ բարբառի մասին՝ պետք է ավելացնել, որ վրացական էյեքտիվ արտասանությունը /q'-ն սպասվող ղ-ի տեղ/ երևան է եկել նաև բուն հայերեն բառերում: Այն է՝ /ɣ/ հնչույթի դիրքային տարբերակը ս-ից հետո հենց այն ,,կովկասյան,, q'-ն է, օր. ,,աստղ,, բառը սեռականում [astq'i] հնչումն ուներ[18]:

Ուրմիայի բարբառում օտար ղ/ɣ/ բաղաձայնը նույնպես երևացել է բուն բնաձայնական բառերում, օր. ղըլվըլալ /ɣəlvəlal / ,,անհասկանալի խոսել,,:

Ընդհանուր պատկերից դուրս է մնում նաև Առտիալի բարբառը և սրա մի ծյուղ, որ կոչվում է լեհահայոց բարբառը: Այստեղ պարսկերեն q-ին /և թյուրքերեն k,g-ին եռնալեզվային ժայնավորներից առաջ/ սովորաբար համապատասխանում է խ շփականը, օր. xəsmath ,,երջանկություն,, /արաբ. qismat /, հատուկ անուն Xarəb /արաբ. ɣarīb /[19]: Այսպիսի արտասանությունը վկայում է օսմանյան թյուրքերենի Ղրիմի բարբառի ազդեցության մասին: Այն տարբեր էր Ղրիմի թաթարների բարբառից: Հենց այս օսմանյան բարբառում, որը ազդել է Առտիալի հայ բարբառի վրա, նկատում ենք *k>x կանոնավոր զարգացումը նույնիսկ բառասկզբում[20]:

Նույն զարգացումը առկա է նաև տեղ-տեղ թյուրքերենի ուրիշ բարբառներում, ինչպես երևում է հայերեն հազվադեպ ձևերից, օր. Մշո բարբառն ունի ,,խոչ,, բառը ընդհանուր հայերեն ,,ղոչ,, /= ,,խոյ,,/ ձևի տեղ /թյուրքերեն koç, ադրբեջաներեն qoç /:

Հետաքրքիր նյութեր է բերում Համշենի բարբառը, որում ունենք երկակի ձևեր. 1. պրսկ. q /թրք.k / - Համշենի ղ, 2. պրսկ. q/թրք. k / - Համշենի k /ոչ շնչեղ/, օր. մի կողմից՝ ղաբուլ ,,ընդունել,, ղուրբօն ,,մատաղ,, և մյուս կողմից՝ կաբը ,,ջորի,, , կայեղ ,,նավակ,,[21] /թյուրքերենում բոլորը k-ով են սկսվում՝ kabul , kurban , katir, kayik , իսկ պարսկերենում՝ q -ով. qabul, qorbān, qāter, qāyeq : Այս երկվությունը բացատրվում է հայ բարբառների փոխ-

ազդեցությամբ: Այն է՝ ղաբուլ, ղուրբօն ձևերը Համշենի խոսվածքն են անցել հայերենի ուրիշ բարբառներից, որոնցում, ինչպես հայտնի է, ամենուրեք գոնում ենք ղ: Մինչդեռ կաբը, կայեղ ձևերը պետք է փոխառված լինեին Համշենի հարևան Տրաբիզոնի շրջանի թուրքերեն խոսվածքներից:

Բարբառների վերը հիշված փոխազդեցությունը մի շատ կարևոր գործոն է, որը պետք է ի նկատի առնվի փոխառությունների ուսումնասիրության մեջ: Երբեմն այդ գործոնի դերը, ինչպես երևում է վերոհիշյալ նյութից, հեշտությամբ է հայտնաբերվում: Ավելացնենք մի օրինակ էլ. Ուրմիայի բարբառում պարսկերեն gāh բառը /,,ժամանակի,, իմաստով/ կյոխ /k'æx/ ձևն է տացել: Մինչդեռ սպասվող ձևը կլիներ ,,գահ,, /անմիջական փոխառություն/ կամ ,,գյահ,, /աղրբեջաներենի միջնորդությամբ/: Վկայված կյոխ ձևը փոխ է առնվել Վանի հայ բարբառից, ինչպես երևում է բառավերջի ,,խ,,-ից, որի առկայությունը հ-ի տեղ հենց Վանի բարբառի բնորոշ գիծն է[22]: Նմանապես խուլ քմայնացած կ՝-ն այս բարբառում կանոնավորապես հանդես է գալիս ք-ից առաջ գրաբարյան գ-ի տեղ, մինչդեռ հին կ-ն Վանի բարբառում անփոփոխ կոշտ է մնում: Այդ ամենից պարզվում է, որ կյոխ բառը շատ հին փոխառություն է:

Ինչպես երևում է մեջբերված օրինակներից, հայ բարբառներում գոյություն ունեցող նոր պարսկերենից փոխառված բառերի ուսումնասիրությունը բարդանում է ոչ միայն թյուրքական ազդեցությամբ, այլ նաև հայ բարբառների փոխազդեցությամբ: Ուսումնասիրելով արաբական, պարսկական և թյուրքական տարրերը հայերենի բառապաշարում՝ առանձին խոսվածքների դեպքերում պետք է մանրամասնորեն հաշվի առնել աղրբեջաներենի բարբառագիտության տվյալները /որ մինչև այժմ քիչ է կատարվել/: Մյուս կողմից՝ պետք է հատուկ ուշադրություն դարձնել հայերենի բարբառների փոխազդեցության վրա:

Պարսկերենի՝ հայ բարբառի հետ անմիջական շփման դեպքում /օր. Նոր Ջուղայում/ պետք է ի նկատի ունենալ նաև ժամանակակից պարսկերենի հավանական ,,ճշտող,, /,,կորեկտուր,,/ ազդեցությունը հին փոխառությունների վրա:

Մյուս կողմից, անհրաժեշտ է ուսումնասիրել հայ բարբառների պարսկերեն բառերը իմաստաբանական տեսակետից: Հաճախ կպարզվի, որ իմաստի փոփոխությունը կատարվել է աղրբեջաներենի ազդեցության տակ[23]:

Այդպիսի բազմակողմանի ուսումնասիրությունները զգալիորեն պարզ՝ կդարձնեին հայ բարբառների պատմական զարգացման և նրանց փոխհարաբերությունների պատկերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Է. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան 1954, էջ 254:
2 J. Hanusz, O jezyku Ormian polskich, մաս I, Kraków, 1886, էջ 69:
3 Այս բարբառից մեջ բերած օրինակները քաղված են Է. Աղայան. Մեղրու բարբառը /Երևան 1954/ ուսումնասիրությունից /էջ 255/:
4 Այս բարբառի մեջ բերած օրինակները քաղված են Մ. Ասատրյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը /Երևան 1962/ ուսումնասիրությունից /բառացանկ՝ էջ 241-251/:
5 Այս բարբառի մեջ բերած օրինակները քաղված են Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը /Երևան 1958/ ուսումնասիրությունից /էջ 238/:
6 Այս բարբառի մեջ բերած օրինակները քաղված են Տ. Նալյասարդեանց. Բառգիրք արարատեան բարբառի /Տփխիս 1903/ ուսումնասիրությունից:
7 Грамматика азербайджанского языка (под ред. М.Ш.Ширалиева и Э.В.Севортяна), Баку 1971, էջ 20-21:
8 ,,Հայ աշուղներ,, /կազմեց Հ. Սահակյան/, Երևան 1961, էջ 216:
9 Дж.Ш.Гиунашвили, Система фонем персидского языка [b:], Труды Тбилисского Государственного Университета, т.116, 1965, էջ 111-117:
10 Грамматика азербайджанского языка (под ред. М.Ш.Ширалиева и Э.В.Севортяна), Баку 1971, էջ 20:
11 Աղբեջաներեն ուղղագրության համաձայն ,, ,, տառը քմայնացած պայթական է ներկայացնում: Միայն ռուսերենից փոխ առնված բառերում այն տառը կոշտ է արտասանվում / Грамматика азербайджанского языка, Баку 1971, էջ 20-21/:
12 Грамматика азербайджанского языка, Баку 1971, էջ 22:
13 Philologiae turcicae fundamenta, հ.I Wiesbaden 1959, էջ 249:
14 Նույն տեղում /ծանոթ. 13/:
15 Մ. Ասատրյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Երևան 1962, էջ 20:
16 А.Томсон, Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, С.-Петербург, 1890, էջ 15-16, 72-73:
17 Նույն տեղում, էջ 73:
18 Նույն տեղում, էջ 73:
19 J. Hanusz, O jezyku Ormian polskich, մաս I, Kraków

1886, էջ 69, 71:

20 Philologiae turcicae fundamenta , հ. I, Wiesbaden 1959, էջ 275:

21 Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան 1947, էջ 267-268:

22 Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան 1953, էջ 64-67:

23 Է. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան 1954, էջ 254:

М.М.САХОКИЯ (Тбилиси, СССР)

ПОСЕССИВНЫЕ КОНСТРУКЦИИ И ЭРГАТИВНОСТЬ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА В СВЕТЕ ПРОБЛЕМ СИНТАКСИЧЕСКОЙ ТИПОЛОГИИ

Многоплановой проблеме грамматико-семантической общности идеи принадлежности, имения и идеи переходности, обнаруживающей в языках различных систем глубокие психолингвистические корни, посвящено много работ. Среди различных аспектов проявления этого языкового феномена особое место занимают факты использования посессивных конструкций. Для ранее сопоставляемых нами индоевропейских и грузинского языков выделяются идентичные структурно-семантические фразоформы или словоформы, подтверждающиеся также синхронными соответствиями древнеармянского и древнегрузинского языков (по материалам текстов Библии и Евангелия)/8 /. Общие модели построения высказываний с семантикой "именной посессивности": $S_g S_d S_{acc}$ + NS(O_n) + V_{esse}. Модели эргативных перифрастических перфектов, для формирования которых первые служат структурными синхронными прототипами: $S_g S_d S_{acc}$ + + P + V_{esse} + $O_n(\rightarrow O_{acc})$ По языкам модели распределяются таким образом: др.-перс.: S_g + NS + (V), S_d + NS + V, S_{acc} + VS + (V); S_g+P, S_d+P+V, S_{acc}+P . др.-арм.: S_g + NS + V, S_d + NS + V; S_g + P ; S_g + P + V; (исключение: S_d + P + V)[I] др.-груз.: Dr(S_g) + NS + (V) (перифрастическ.) S_d + NS + V (флективные), $S_{g+postp.}$ + NS + V(=S_d) (перифрастические), S_d + P + V (флективные). Здесь представлены данные ДА-ого языка в свете современных проблем синтаксической типологии.

I. ДА материал дает возможность определения степени квалификации перифрастического и.-е. перфекта, представляя собой классический образец трансформированной причастной конструкции с генитивным оформлением. В отличие от древнеперсидского, находящегося в переходной стадии от флективного к аналитическому строю, ДА представляет языковую систему стабильного флективного формообразования. Тем более значимым для оппозиционной дефини-

ции является факт функционирования перифрастических образований на фоне флективных в качестве живых эргативных перфектов. Эргативная конструкция - понятие собирательное, и одним из морфолого-синтаксических ее реализаций является посессивная конструкция, т.е. конструкция с субъектом-агенсом в каком-либо посессивном падеже (в иных языках - с посессивным суффиксом). Таким образом конструкция с генитивом или дативом одновременно и пассивна, и посессивна. Вопрос перекрещения понятий "пассивности" и "посессивности" многопланов. Важно различить два момента: историко-генетический анализ причастных перфектных конструкций, основанный на разграничении "нормального пассива" от ПК, или на фактах их морфолого-синтаксической контаминации /3, 7; I/. Другой момент - семантическая контаминация генитива с инструменталисом, как это понимал еще Г.Шухардт /I2/. Второй момент вполне созвучен с положениями современной индоевропеистики /I0; II/. Агентивная функция генитива/датива - явление универсальное. Мы не видим никакого противоречия в применении обоих понятий к перифрастическим причастным и.-е. конструкциям, равно как и к флективным грузинским перфектным образованиям III серии. Эти два термина здесь могут выражать одну суть. Мы предпочитаем "посессив", так как исследуем причастные/косвенные и флективные/эргативы с точки зрения действующих одновременно с ними идентичных моделей "именной посессивности".

Э.Г.Туманян справедливо идентифицирует ДА-ую генитивную конструкцию с генитивным типом ЭК северокавказских языков /9/, хотя, называя ДА-ую причастную конструкцию эргативной, автор считает, что ее позиция противопоставляется концепции Э.Бенвениста /I/, которую поддерживает также К.Х.Шмидт /II, - I/. Между тем, кажущееся противоречие упирается лишь в терминологические вопросы.

Глубокая семантическая и грамматическая связь посессивности с вербальностью далеко не ограничивается косвенными конструкциями. Эта связь реализована в различных номинативных конструкциях многих живых языков и характеризуется двумя полюсами распределения глаголов "иметь" и "быть" (ср. I'm cold и J'ai froid). Вовлеченные в эту сферу новоармянские формы опять-таки находят параллели в новогрузинском и в новоперсидских конструкциях.

Мы не разделяем мнения о возможности влияния кавказских языков на формирование ДА-ой ЭК /см. 9-II/. Возникновение подобных моделей и возможности их специализации в качестве ЭК - явление универсальное. ЭК отнюдь не является особым приоритетом северо- и южнокавказских языков. Если в кавказских и картвельских языках хорошо сохранились какие-либо архаичные морфолого-синтаксические системы, тому есть свои причины. Однако в новоарийских языках ЭК различных типов также воспроизводят свои древние и ранний праиндоевропейский прототипы. Впрочем, о возможной зависимости ДА-ой исследуемой конструкции от кавказских данных в свое время говорил еще А.Мейе /6/. Любопытно, что аналогичную мысль высказывает Ж.Лазар в отношении живых иранских эргативов того ареала, который географически соприкасается с кавказской языковой средой. Но у Лазара речь идет скорее о благоприятной языковой среде, способствующей сохранению иранских эргативов /5/. Не беремся судить о факторе консервации, но происхождение ЭК в и.-е. языках с одной стороны, и кавказских или картвельских - с другой, по всем современным данным безусловно следует считать явлениями независимыми. (Степень древности доступного нашему рассмотрению языкового материала не одинакова).

2. Коснемся основных моментов актантных характеристик падежных форм и функций S и O в исследуемых моделях. Относительная стабильность ДА-ого по сравнению с транзиторностью ДП-ого дает возможность четкой дефиниции функций падежных форм и самих форм. Несомненность ДА-ого генитива-агенса при причастии переходных глаголов способствует уточнению общеиндоевропейских различных морфологических типов ПК /именных и глагольных/, представленных в ДП-ом смешанными формами генитива-датива. Мы делаем вывод, что генитивные синтагмы преимущественно являются именными, а дативные - глагольными; а также - что свободные, независимые иранские местоименные формы по своей функции преимущественно генитивны, энклитические же - дативны. В результате посессивные фразоформы делятся на два типа: генитивный тип и тип "дативного круга", к которому относится также ДП-ий аккузатив. Деклинационная система грабара подтверждает правомерность такого деления. Она выявляет генитив как единственную форму-норму ДА-ого эргатива. Стало быть, генитивный

тип причастных конструкций грабара наряду с аналогичной конструкцией санскрита независим в свете общеиндоевропейского типологического узуса. Модель S_g + P является основной моделью для и.-е. перифрастических перфектов. С другой стороны, именно благодаря определенности местоименных форм в грабаре, мы получаем морфологически четко распределенные фразоформы в моделях именной посессивности. S_{acc} / O_{ind} > S / представлен только в ДП-ом. Тем самым ДП-ий аккузатив отражает свой древний прапрототип косвенного дативного актанта. В ДП-ом преобладает функция направительного падежа аккузатива, как известно, позднее получившего в и.-е. языках специализацию падежа прямого объекта /IO, II; IO-УI/. В ДП-ом многофункциональность аккузатива развивается на фоне общего взаимосмешения падежных форм по функциям. В ДА-ом акк. исключается как норма в качестве падежной формы S / O_{ind} > S / и выступает наряду с номинативом в специализированном качестве O_d в эргативных перфектах. В данном случае акк. (оформленный предлогом z), является показателем активизированности исследуемых пассивно-посессивных причастных конструкций с косвенным субъектом-агенсом /2; IO, -II, IУ, УI; II/. Здесь следует остановиться на том аспекте совмещения O_n и O_{acc} в качестве O_d и развития O_{acc} из O_n, который подчеркивается М.Н.Боголюбовым как в отношении ДП-ого, так и в отношении ДА-ого перфектов /2/. Заостряя внимание на роли аккузативного O_d, Боголюбов освещает в типологическом плане сферу односоставных, безсубъектных причастных конструкций; автор привлекает особо значимые данные славянских языков, которые в случае двусоставности также чаще используют в качестве агенса генитив /2, -I/. Трехчленная и двучленная синтаксемы - суть два варианта реализации одного и того же комплексного универсального языкового феномена. Это - два аспекта проявления именного высказывания с ориентацией на глагольную семантику. Затем конструкции могут раствориться либо перестроиться (из эргативных в персидской ветви развивается номинативная; в армянском ЭК исчезает) и, наоборот, ЭК либо закрепляется (в живых индоиранских языках), видоизменившись, либо модель возникает вновь на другом временном уровне (ср. генитивный праиндоевропейский эргатив-прототип ДА-ого и ДП-ого перфектов). И.-е. языки предоставляют наиболее нагляд-

ную картину этапов развития грамматико-семантического развития тех построений, которые принято называть эргативными.

Кратко очерченная схема соотношения падежных форм-функций в и.-е. языках в определенной степени соответствует фактам грузинского языка. Грузинский датив, являющийся эквивалентом и.-е. аккузатива, объединяет функции прямого и косвенного объектов (O_d и O_{id}), также как акк. в и.-е. в целом. Затем, датив в грузинском, подобно и.-е. аккузативу, отмечен семантикой направительного падежа и синтаксически выступает в качестве различных обстоятельств. Функцию направительности выполняет и обстоятельственный падеж (СА), совмещая это значение со значением местопребывания. Кроме того, СА как в древне-, так и в новогрузинском, выступает в качестве масдаров, выполняя роль и.-е. инфинитивов цели, и объектных инфинитивов СА оформляет также объект сложных глаголов или составных сказуемых, как это делает аккузатив в ДП-ом. При этом датив в общегрузинском - сильнейший падеж посессивных построений. Дативная семантика как в грузинском, так и в других картвельских языках, отмечена строгой и последовательной работой моделей именной посессивности, аффективности и квазиэргативных конструкций, косвенно-объектных глаголов с инвертированными актантами; к дативному кругу примыкают также формы статического пассива, совпадающие с формами переходных перфектов. Все названные группы построений прослеживаются с типологической идентичностью в ДП-ом, и особенно ярко в ДА-ом. Тенденция грузинского к дативизации и вместе с тем - флективизации генетически перифрастических синтаксем действует во всей диахронической динамике. И.-е. статус уступает грузинскому только в последовательности дальнейшего формирования дативных конструкций. Однако, не следует забывать об энклитических и предложно-послеложных конструкциях новоперсидского языка, о ряде построений такого же типа в западноевропейских и славянских языках. На уровне исследуемых нами древних и.-е. языков дативная модель, включая в дативный круг также ДП-ий акк., действует в таком же синтаксико-семантическом плане, в каком инвертированная грузинская модель. Это один из вариантов и.-е. пассивно-посессивных и аффективно-эргативных моделей. Основным, как уже было отмечено, является генитивная модель, предполагающая в этимологических глубинах

праиндоевропейского языка /IO/. В ДГ-ом генитив не представлен в моделях глагольной переходности, зато возникает в современном грузинском - преимущественно в разговорном литературном языке(как-то: čemi gaḳetebulia, šeni daçerilia), и таким образом круг стройных типологических параллелей смыкается. Выявляются существенные моменты стыковки в синтаксико-семантических соотношениях и.-е. и Г-их падежей: CG(Poss.-Dr; Sg-Agens); CD(Oid>Sd,Oid,Od,Aloc)→CAcc(Oid>Sacc,Oid,Od,Aloc); CA(Oid,Aloc,Od).

3. При квалификации семантики грамматических конструкций генитивные модели именной посессивности ДА-ого языка привлекают внимание фактором словорасположения. Выявляется стратификация функций датива-генитива, показывающая тяготение генитива (Drg) к выражению косвенного объекта. Последний трансформируется в косвенный субъект-обладатель: Drg > Og > Sg. Рассматривая малые синтаксические контексты в окружении "широкого контекста", мы делим генитивные ДА-ие именные посессивы на два варианта в зависимости от последовательности определения-определяемого (Dr(Sg) и Ds(On)). I. Препозитивный: (Drg>Og>)Sg + On(NS)+Vesse2. Постпозитивный: On-DS(NS)+Drg+ +Vesse (V подвижен). Первый из них относится к семантической фазе "строгой посессивности" с содержанием косвенного обладания. Второй вариант словорасположения является номинативно-атрибутивной фразой с семантикой номинальной принадлежности. Данная интерпретация генитивных конструкций подтверждается ДГ-ими текстовыми соответствиями. Таким же образом последние выполняют роль релевантного критерия для проверки семантики ДА-их грамматических конструкций. Постпозитивной генитивной ДА-ой конструкции соответствует обычно номинативно-атрибутивная ДГ фраза: e[i]c^{c}in gotik^{c} jer pndeal and mezs - iqvned çelni tkuenni morṭqmul /Л.I2.35/. ДА-ие препозитивные ГК имеют те же ДГ-ие параллели, что дативная ДА-ая конструкция: напр.: oroy ic^{c}en dramk^{c} tasn - romelsa akundes drakmai ati /Л.I5.8/. zi mer linic^{c}i žarangowt^{c}yown - rametu čuenda iqos samḳvidrebeli/Л.20.I4/, miamōr ē inj - ese xolo marṭoi mivis /Л.9.38/. Таким образом, генитивные препозитивные и дативные ДА-ие конструкции в равной степени приравниваются к дативно-инверсионным и послеложным ДГ-им формам, выражающим обладание. Синтагма Sg + Vesse

из препозитивной модели равняется глаголу ownel-kal в той же степени, в какой синтагма Sd + Vesse ; в итоге: Sg + NS + V = Sd+NS+V=ownel Sn + V. ДА-ие препозитивные генитивные и дативные посессивные модели, как и их грузинские соответствия, с моделью Sd+NS+V($S_{g+postp.}$=Sd), рассматриваются в плане est mihi. ДГ-ие данные служат как бы знаком равенства между первыми.

Материал сопоставляемых языков дает возможность выделить генетически соотносящиеся фазы семантики посессивности: I. фазу нулевой семантики (апозитивные конструкции наименования с индоиранским ядром-лексемой nāma, nāmna или ДА-им anun ; груз. saxelad, saxelit). 2. фазу номинальной принадлежности (постпозитивная генитивная ДА-ая констр.);3.фазу т.н. "пассивного владения", то же, что - "косвенное обладание, имение"; по семантике эта фаза фактически равняется "активному владению"и в некоторых случаях имеет общие формы с таковым, как-то глаголы makvs / mqavs-est mihi = habeo в грузинском. К этой фазе относятся ДА-ие препозитивно-генитивные и дативные перифрастические посессивы; 4. фазу "активного владения" - номинативный специальный глагол обладания типа habeo , как-то ДА ownel - kal , имеющий в качестве ДГ-их соответствий различные лексемы-специфические посессивы с моделью Sd + NS + V. Все эти фазы, в различном соотношении распределенные по исследуемым языкам, полностью прослеживаются в ДА-ом.

5. Далее, условная лексико-семантическая иерархическая схема ступеней развития фразовых образований от именной посессивности к глагольно-посессивной ЭК почти полностью построена на базе ДА-ого материала с учетом ДГ-их соответствий. Систематизация схемы усиления семантики вербальности внутри посессивных моделей выявляет значимый систематический пласт - переходное звено между собственно посессивными (именными) и перфектными (глагольными) эргативными образованиями. Это синтаксемы - фраземы с содержанием модальности, аффективности и "квазиглагольной" переходности. Этот структурный процесс мы называем "посессивностью в движении, в динамике". Приводим несколько образцов промежуточного семантического пласта, в коих в качестве о могут фигурировать ДА-ие NS, P, (NS + P), Adj., (Adj+ +Inf.),Inf., (P + Inf.),(P + NS + Inf.)и Т.П. orpēs tearn

haǰoy t^{c}owec^{c}aw (Vesse = towel) /Йов. I.2I/ vitarca undes γmertsa, part ē inj awetaranel - ǧer ars čemda xarebad /Л.4.43/, orowmoǰ^{c} ēr leal hnar yowmekē bžškil-romeli vervisgan ganiḳurna /Л.8.43/. Трансформация грамматической семантики ПК обусловливается морфологическим и лексическим составом компонентов; здесь перекрываются значения лексического и грамматического слоев. Выделяемые нами ступени структурно-семантического формирования ЭК: I. ДА-ая трехкомпонентная синтаксема равняется глаголу "иметь" (включая его лексические эквиваленты-заменители в ДГ-ом); 2. Та же самая форма с лексическими элементами, связанными с выражением чувств, расположения, долженствования и т.д., дает семантику аффективного глагола; преимущественно границы таких ДА-их синтаксем семантически совпадают с границами лексем ДГ-ого языка. 3. Семантическая сумма компонентов фразоформы равняется значению активного переходного глагола. Последняя ступень является важнейшим моментом перехода к эргативному перфекту, относясь уже к "эргативному кругу" структур вербального содержания. Пример двойственности ДА-ой причастной конструкции, ее именного и вербального содержания одновременно: minč^{c}č^{c}ew havow xōseal icē /Л.22.6I/ č^{c}ic^{c}ē aysōr havow xōseal /Л.22.34/. Этот образец находится на грани между именной и глагольной посессивностью. Обе эти грани отражены в ДГ-их параллелях: vidre katmisa xmobadmde /Л.22.6I.М.26.34.М.26, 75/; arγa eqivlos katamsa dγes /Л.22.34/.

Распределение по функциям подрядов ДА-ого эргативного перфектного ряда соответствует по семантике и по синтаксическому строю грузинским перфектным рядам III серии, а также - аористической ЭК из II серии, что также получает объективное отражение в текстовых данных. ДГ-ая ЭК является регулярным соответствием чистых, бессвязочных причастных перфектов ДА-ого, равно как и номинативных аористических флективных форм последнего. Оба эти соответствия очень важны для квалификации ДА-ой модели Sg + P , как слитной синтагмы, выражающей активное переходное действие. Таким образом, ГЭК служит знаком равенства между основными содержаниями генитивной причастной и номинативной аористической конструкций ДА-ого языка, соответствуя первой не только семантически, но и, по нашему убеждению, также и структурно. Итак, др.-арм. Sg + P и Sn + V =др.-груз.

A similar choice of terms is discernible in nos. 16 and 24: CRAFTSMANSHIP (Arm. arhest; Gk. technē) and ART (Arm. arowest; Gk. technē). Whereas the Greek terms are identical and are used to indicate both applied and fine art, the Armenian

makes a distinction by the use of different terms which every so often appear interchangeably in Armenian translations from Greek, as equivalents of the indiscriminating word techne. Since no. 24 does not appear in recension α, its insertion in recension ß must be credited to the perceptiveness of the redactor.

From among other examples no. 42, EMOTION/DISEASE, is equally noteworthy. The Greek word pathos stands for a number of Armenian words and meanings, which in the work of the compiler (recension α) are scattered in four parts. But in the reworking of the redactor (recension ß), where the various meanings are brought together, the potential difficulties arising from one Greek word representing a number of Armenian synonyms or words of related but by no means identical meaning are resolved in a rather disentangled way.

Additional observations on the sample may be made; however, the above notations should suffice. What began as a short introduction to a mediaeval glossary of philosophical terms and concepts became a lengthy, preliminary study of the making of such a glossary. The study may serve as a methodological model for similarly treating the rest of the document--if not as an introduction to a future publication of the entire document.

More than showing a later use made of the Armenian translations by the Hellenizing School, the glossary is a fine example of mediaeval Armenian lexicographical interest and philosophical curiosity. The document with its two recensions illustrates the making of the first alphabetically arranged Armenian glossary of philosophical terms and concepts. It is a witness to the transition from the earlier, thematically arranged glossaries, to the later, alphabetically arranged collections which take the form of dictionaries.

BIBLIOGRAPHICAL ABBREVIATIONS

AMALYAN, 1966-1971: H.M.AMALYAN, Miǰnadaryan Hayastani baṙaranagrakan howšarjannerə, I-II, Erevan, 1966-1971.

AMALYAN, 1975: H.M.AMALYAN, ed., Eremia Meɫrecʿow Baṙgirkʿ Hayocʿ, Erevan, 1975.

ANASYAN, 1959-1976: H.S.ANASYAN, Haykakan matenagitowtcyown, I-II, Erevan, 1959-1976.

(anonymous), 1956: (anonymous), Ccowcak Matenadarani pciliso-pcayakan nyowtcer parownakoł jeŕagreri, Banber Matenadarani, 3, 1956, pp. 387-457.

AREVŠATYAN, 1960: S.AREVŠATYAN, ed, and transl., Erkow hin pcilisopcayakan bnagir: "Čartasan, Yałags bnowtcean" ew "Sahmankc pcilisopcayakankc," Banber Matenadarani, 5, 1960, pp. 371-391.

AREVŠATYAN, 1971: S.AREVŠATYAN, Płatoni erkeri Hayeren tcargmanowtcyan žamanaka, Banber Matenadarani, 10, 1971, pp. 7-20.

DILLON and TERIAN, 1976-1977: J.DILLON and A.TERIAN, Philo and the Stoic Doctrine of Eupatheia: A Note on Quaes Gen 2.57, Studia Philonica, 4, 1976-1977, pp. 17-22.

GASPARYAN, 1968: G.K.GASPARYAN, Hay baŕaranagrowtcyan patmowtcyown, Erevan, 1968.

LAMPE, 1961: G.W.H.LAMPE, A Patristic Greek Lexicon, Oxford, 1961.

LIDDELL and SCOTT, 1968: H.G.LIDDELL and R.SCOTT, A Greek-English Lexicon, 9th ed. by H.S.JONES, rev. with a supplement by E.A.BARBER, Oxford, 1968.

TERIAN, 1980: A.TERIAN, Syntactical Peculiarities in the Translations of the Hellenizing School, in J.A.C.GREPPIN, ed., First International Conference on Armenian Linguistics: Proceedings, Delmar, New York, 1980, pp. 197-207.

TERIAN, 1981: A.TERIAN, Philonis Alexandrini De Animalibus: The Armenian Text with an Introduction, Translation, and Commentary, Studies in Hellenistic Judaism, Supplements to Studia Philonica, 1, Chico, California, 1981.

Ֆ. ՖԵՑԴԻ /Փարիզ, Ֆրանսիա/

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՎԻՆ ՄԵՋ

Ամենազարգացած լեզուներուն մեջ, հարաբերական դերանունը երեք տեսակ դեր կը կատարե. ա/ հարաբերյալին իմաստը կրկնելով, ոգեկոչելով, կը փոխանցե հարաբերական նախադասության մեջ, բ/հարաբերյալին քերականական սեռն ու թիվը, նաև քայական դեմքը, տվյալ լեզվին կանոններուն համեմատ համաձայնելով, նույնպես կը փոխանցե հարաբերական երկրորդական նախադասության մեջ, գ/ հարաբերական նախադասության մեջ իր իսկ պաշտոնը կը կատարե հոլովվելով կամ նախդիրի օժանդակությամբ: Այս դրությունը կը պահանջե, որ գործածողը որոշ աստիճան տրամաբանական մտքի տեր ըլլա:

Ուրիշ և բոլորովին այլատեսակ համակարգ մըն ալ գոյություն ունի, որուն մեջ հարաբերական դերանունը անփոփոխ կը մնա, ուստի ոչ հարաբերյալին սեռն ու թիվը կը փոխանցե, ոչ ալ իր շարահյուսական պաշտոնը կը կատարե իր նախադասության մեջ. կը դառնա հարաբերական շաղկապ, տեսակ մը ազդարարական նշան, որով իմաց կը տրվի,որ հարաբերյալին մասին մանրամասն երկրորդական տեղեկություն պիտի տրվի. այս կեղծ հարաբերականին կը հետևի միշտ անկախ նախադասություն մը և այն շարահյուսական տեղեկությունները, զորս հարաբերական բառը չի նշանակեր, ներմուծված անձնական դերանուն մը կը հայթայթե /և, ի դեպ պարագայի, մակբայ մը, եթե հարաբերական նախադասությունը կամ ժամանակի կամ տեղի պարագայական իմաստ ունի/: Այս դրությունը ավելի հեշտ է քան առաջինը, որովհետև ավելի դյուրին է երկու անկախ նախադասություններ կազմել, քան թե երկրորդական նախադասություն մը գլխավորին ենթարկել: Այս դրության կը հանդիպինք թուրքերենին մեջ և Ֆրանսական ամենեն անմշակ ոամկերենին մեջ: Անվավասիկ օրինակներ. թուրքերեն՝ o adam dır oğlu ile beraber yolculuk ettik geçen sene. /oglu ձևին ստացական հոդը անձնական դերանունի մը սեռականին համազոր է/: Ֆրանսերեն՝ C'est le monsieur que j'ai voyagé avec son fils l'année dernière.

Դյուրութեան համար այստեղ հարաբերական դրութիւն պիտի ըսեմ այն առաջին դրութեան, ըստ որուն հարաբերական բառը, ըլլա դերանուն, ըլլա մակբայ, կը հոլովվի և իր հոլովով բավական կ'ըլլա իր կատարած բոլոր պաշտոնները հայտնի դարձնելու. իսկ երկրորդը՝ անփոփոխ հարաբերական բառի դրութիւնը, պիտի նշանակեմ շաղկապային դրութիւն հորջորջումով:

Երկլեզու անձ մը, որուն հիմնական կամ ամենօրյա բարբառը երկրորդ տիպին կը պատկանի՝ մեծ դժվարութեան կը հանդիպի՝ առաջին տեսակի հարաբերական նախադասութիւն մը կազմելու, ստիպվելով միանգամայն հիշել և նշանակել հարաբերական դերանունին բոլոր պաշտոնները:

Արդի հայերենին մեջ, հարաբերական դերանունը կանոնավոր կերպով կը հոլովվի, այն միակ բացառութեամբ, որ դերանունը կրնա գործածվիլ անփոփոխ՝ եզակի և հոգնակի՝ թե՛ ուղղականներուն և թե՛ հայցականներուն համար, բայց գործածողը, նույնածևութեամբ հանդերձ, գիտակցութիւնը չի կորսնցներ հոլովներուն զանազանութեան: Թրքախոս հայերուն մեջ բավական շատ տարածված սխալ մըն է թուրքերենին ոմը փոխանցել իրենց խոսակցական հայերենին մեջ. օրինակ՝ այն մարդն է որ՝ անցյալ տարի անոր զավակին հետ ծամբորդեցի. /թո՛ղ որ շատ շատերը թուրքերեն ki շաղկապային հարաբերականը կը գործածեն՝ հայերեն որ դերանունին տեղ. Այս մարդն է քի՝ անոր զավակին հետ ծամբորդեցի անցյալ տարի/: Այս պարագային, արտասանութեան մեջ, կեղծ հարաբերականը կցված կը մնա կարևոր նախադասութեան և կարճ դադարով մը կ'անջատվի հաջորդ նախադասութենեն:

Ֆրանսայի մեջ, վերջին պատերազմեն ի վեր, ռամկորեն խոսող շատ մը ընտանիքներու զավակներ կրցած են բարձր ուսմանց հասնիլ և բավական քաջ մասնագետներ դառնալով, համեմատաբար բարձր դիրք գրավել հասարակութեան մեջ: Նույն ժամանակ, միջնակարգ դպրոցներուն մեջ, Ֆրանսերեն լեզվին ուսուցումը կա՛մ քիչ թե շատ զանց առնվեցավ, կա՛մ հակագիտական և հակամանկավարժական մեթոդներով ավանդվեցավ: Քանի որ բարձրագույն ուսմանց հաստատութիւնները, ըլլա՛ն գիտութեանց կամ բժշկական Ֆակուլտետներ, ըլլա՛ն մարտարագիտական կամ մարտարապետական և այլն դպրոցներ, կը սորվեցնեն միայն իրենց մասնագիտութիւնները, շատ մը նոր մտավորականներ Ֆրանսերեն մաքուր հարաբերական նախադասութիւն մը ի վիճակի չեն կազմելու. սակայն գիտեն, որ հարաբերական բառերը տեսակ մը կը հոլովվին /կամ ձևափոխութեամբ, կամ նախդիրի օժանդակութեամբ. "dont", "auquel", "d'où", և այլն/: Այն ժամանակ իրենց ընկերային դիրքին վայել կերպով խոսելու ազնիվ

ցանկութեններն մղված, այս հոլովված ձևերը կը գործածեն, բայց առանց գիտակցութիւնն ունենալու, որ իրենց գործածած հոլովված ձևերը իրենց մեջ կ'ամփոփեն հարաբերական դերանունին բոլոր պաշտոններուն արտահայտութիւնը, և կը ներմուծեն օժանդակ դերանուն կամ մակբայ, կազմելով հետևյալ տիպար նախադասութիւններ. "L'ami dont je vous en parlais tout-à-l'heure", "L'ami dont j'ai voyagé avec son fils..", "La ville d'où j'en viens", "Voici un livre où vous y trouverez tous les renseiments nécessaires " ... և այլն, գործածելով այսպես կրկին՝ թե՛ իմաստաբանական, թե՛ շարահյուսական ավելորդաբանութիւն մը: Այս տեսակ անմոռնի ասացվածքներ ոչ միայն հեռուստատեսիլի հաղորդումներու և մտավորական համարված անձերու հարցազրույցի ժամանակ կը լսենք, այլ կը գտնենք նաև պաշտոնական գրութիւններու մեջ:

Բայց հիմա պիտի հարցնեք թե թուրքերենը ու՞ր, Ֆրանսերենը ու՞ր, գրաբար հայերենը ու՞ր:

Շեղում երևացող այս առաջադիր տվյալներուն ներկայացումեն կամ ավելի հիշեցումեն ետք՝ հասնինք գրաբար հայերենի պարագային:

Հայերեն գրաբար լեզուն կը ծանչնա միայն ու միայն զուտ հարաբերական դրութիւնը: Շատ մը լեզուներու մեջ, փոխանակ հարաբերական նախադասութեան՝ կը կիրարկվի դերբայական դարձվածքի դրութիւնը: Գրաբար հայերենի մեջ այս տեսակ ոճի գործածութիւնը գոյութիւն չունի: Արդի հայերենին ընդունելութեան ներկան՝ բայական խոնարհման աղյուսակներուն մեջ տակավին չմտած՝ լոկ գործողի անուն էր և չէր կրնար գործածվիլ իբրև առիթաստ դերբայ. ուստի հունարեն πάντες οἱ ἀκοὺ πάντες ,,բոլոր լսողները,, գրաբար հայերենին մեջ պիտի թարգմանվեր ,,ամենքին որ լսէին,,: Նույնպես թեև անցյալ դերբայը գոյութիւն ուներ, սակայն կամ իր ընութիքը, կամ իր նշանակութիւնը հավանորեն չէր թուլատրեր, որ գործածվի այնպես ինչպես կը գործածվի թուրքերենի համապատասխան դերբայը, և aldığım evi ,,առած տունս,, դարձվածքը անզտանելի է գրաբար հայերենի մեջ: Թերևս այս նորածևութեան՝ սաղմնային վիճակին մեջ եղած նմուշ մըն է, որ կը գտնվի Ներսես Շնորհալիի մեկ շարականին հետևյալ նախադասութեան մեջ.

Նայեաց՝ սիրով Հայրդ զքեաց
ի քո ստեղծեալ գործս ձեռաց /ի քո ձեռաց ստեղծեալ գործս/:
/Քու ձեռքերուդ ստեղծած գործին/:

Բայց աշխարհաբարը երբեք պիտի չտարվի թուրքերենի չափազանցական գործածութեան այդ ոճին, որուն մեջ նույն անունը կը կատարե

երկու իրարու անհամերաշխ պաշտոնները:

Եթե զրեթե միշտ կանոնավոր կերպով հորինված են հարաբերական նախադասությունները զրաբար հայերենին մեջ, սակայն մերթ ընդ մերթ կրնանք հանդիպիլ անկանոն դարձվածքներու, որ կամ ուղղակի առնչություն ունին շաղկապային դրության հետ և կամ սխալ հարմարցումներ են զուտ հարաբերական դրության:

Անվավասիկ նմուշներ բուն շաղկապային դրության. Ընդհեցաւ աստուածն ... առնել զտուննս զայս, զերկինս եւ զերկիրս, որ ամենայն ինչ փակեալ էր ընդ նովաւ: Եւ ի տեղւոջն ուր եդեալ էր զգլուխ իւր ընկեաց աղբիւրն ... որ մինչեւ զայսօր ասեն այնմիկ աղբիւրն Յակոբայ /Փաւստոս Բուզանդ/: Իսկ արդ ո՞ կարէ չար ինչ խորհել ի վերայ աստիս այսորիկ՝ որ ունին զայդպիսի գեղեցկութիւն կանայք նոցա /Յուդիթ/ /քերականական թվի առձգման խնդիրը մեր ուսումնասիրած նյութին հետ առնչություն չունի/:

Օժանդակ ցուցական դերանունին տեղ կրնա գտնվիլ գոյական մը. Ընկն բնակեցաւ նա ի մեծ Ծոփս, յանապատին, որ կոչի անուն տեղւոյն Մամբրէ /Բուզ./ կամ գոյականացած ածական մը. Ղէպ լինէր ըմանց եղբարց ... դիմել ... ի կողմանս ցունաց, որ եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր եւ երկրորդին Նորիւնս: Թողեալ զերկուս ըմանս յիւրոց աշակերտացն, որ առաջնոյն ննովք անուն էր եւ երկրորդին Ղանան /Կորիւն/: Անվավասիկ նույն տեսակ նախադասություն մը անշունչ հարաբերյալի իմաստը կրկնող զի դերանունով. Տեսանէին զվէմն զի եւանէր ի ներքոյ նորա լոյս /Վարք եւ վկայաբնեք. սրբոց/: Այս նախադասություններուն մեջ, որ և զի դերանունները, անհոլով մնալով, շաղկապի դեր կը կատարեն և շարահյուսական պաշտոնները կը հայտնվին օժանդակ անվան կամ դերանվան միջոցով:

Հետևյալ նախադասության մեջ զի բառին շաղկապային բնույթը դեռ ավելի հայտնի կ'ըլլա անով, որ հարաբերյալը շնչավոր է. Մի՛ ինչ զաւրուբնսցի սիրտ տեառն իմոյ զի զոյ աստ այր մի զի իբրզ այդ նոր վաւ վճաբին /Ագաթ./: Եւ մինչդեռ հայէր ի մարդիկն ամենայն, եռես զՏէր Յիսուս զի նստէր յանդիմման նորա /Վարք Թեղկի կուսի/: Օժանդակ դերանունին պակասը կրնա բացատրվիլ անով, որ այս դերանունը տեր բայիի դեր պիտի կատարեր, և այս պաշտոնին արտահայտությունը կ'ամփոփվի բային վերջավորության մեջ:

Այս շաղկապային դրություններն հարաբերական դրության անցնելու համար երբեմն հինգերորդ դարու հայերը նույն դժվարության կը հանդիպեին, ինչպես Ֆրանսացի նոր սերունդի մտավորականները: Եթե այսքան ծանրացած եմ այս Ֆրանսացի նոր սերունդին այժմեական պարագա-

յին վրա, պատճառը այն է, որ մեր աչքին առջև մերկացող կենդանի օրինակ մըն է այն վարանումներուն, որոնց կ'ենթարկվին անցման մեջ եղած կենդանի լեզու մը զործածողները: Այս հայերը ուրեմն թե՛ հարաբերական դերանունը կը հոլովեին, թե՛ օժանդակ և իրականության մեջ ավելորդ դերանուն մը կը ներմուծեին: Անվասիկ օրինակներ. Ես եմ Քրիստոս յոր յուսացարդ դու լիս եւ կարդացեր զանուն իմ /Վարք եւ վկայաբանութիւնք. սրբոց/: Անդ էր քաշաւորացն մի որոյ որդի նորա հիւանդ կայր /Յովհ. Դ, 46/: Եւ էր անդ կին մի որոյ մեռեալ էր դուստր իւր /Թեկղ/: Ակն... ունէի... յաղաւչէն որոյ են ստացուածք իւր՝ երեւելի եւ աներեւոյթ աշխարհք /Ագաթ./: Եւ նա ինքն է որոյ ծառայութիւք նորա՝ կեան աշխարհք /Ագաթ./: Ժողովուրդ որդւոց իսրայէլի ոչ են յուսացեալ ի նեզակս իւրեանց... այլ ի վերայ լերանց բարձանց յորում /եզակի ներգոյական/ ընակեալ են ի նոսա /յոգնակի ներգոյական/ /Յուդիթ/:

Այս բոլորը կրնա եթե ոչ բոլորովին ենթադրել, գոնե կասկածել տալ, որ հարաբերականը հոլովելու և այս հոլովով բոլոր պետք եղած տեղեկութիւնները տալու հնդեվրոպական դրութիւնը զացած բախած է ենթաշերտի մը շաղկապային դրութեան, որուն այստեղ նկատված զարտուղութիւնները պիտի ըլլային վերապրումներ կամ վերհիշումներ:

Եվ հիմա, տարբեր հարց մը: Ինչու՞ համար հարաբերական նախադասության մեջ որ դերանունին հաջորդող առաջին շեշտակիր բառը երբեմն հոդավոր է և երբեմն առանց հոդի կը մնա: Նույն նախադասությունը երկու տարբեր ավետարաններուն մեջ տարբեր ձևերով կը ներկայանա. որ մատնելոց է գնս... կամ որ մատնելոցն է գնս... բացարձակապես նույն իմաստով: Հոդին դեմքին ընտրությունն ալ կանոն չունի. մեկը որք ընդ նս են կ'ըսե, ուրիշ մը՝ որք ընդ նսս են, իսկ երրորդ մը՝ որք ընդ նսն են. մեկը կ'ըսե զոր տեսանես, ուրիշ մը՝ զոր տեսանեսդ, երրորդ մը՝ զոր տեսանեսն...: Ասկե զատ, հոդը կը գործածվի ոչ միայն դերանվանական հարաբերական նախադասության մեջ, այլ նաև պարագայական նախադասության մեջ, տեղվո՝ իսկ քաշգմանչացն հասեալ ուր առաքեցանն, գնացին ի կողմանս Յունաց /Կորիւն/, վաղվաղակի յղեմ զքեզ ուր կամիսն երթալ /Ագաթ./, կամ համեմատական նախադասության մեջ՝ եւ հրամայ ետ՝ առնել որպէս եւ խօսեցանն /Յուդիթ/:

Այսպիսի խառնակ դրութենեն կարելի չէ կանոն մը հանել ու բանաձևել: Մեծ հանդգնություն է նույնիսկ անոր պատճառները ջանալ գտնել: Այսուհանդերձ փորձ մը ընենք:

Տեսանք, որ հարաբերական դրութեամբ հարաբերական բառը դերանուն է և կը հոլովվի իր բոլոր պաշտոնները միանգամայն հայտնելով.

կոչեաց գնաւոյս որոց տուեալ էր գործքն, մինչդեռ շաղկապային դրութեան մէջ հարաբերական բառը շաղկապ է և բոլոր պաշտոնները կ'ըստանձնէ օժանդակ դերանուն մը, այնպես որ սույն նախադասութիւնը պիտի դառնա. կոչեաց գնաւոյս որ տուեալ էր նոցա գործքն:

Վերը հիշված շաղկապային նախադասութիւններուն որ ... ընդ նովաւ, որ ... այնմիկ, որ ... նոցա բառակապակցութիւններուն մէջ, օժանդակ դերանունին դերը հայտնի կ'ըլլա շնորհիվ թեք հոլովներուն:

Բայց ենթադրենք հիմա, որ հարաբերական դերանունին կատարելիք պաշտոնը տեր բայլի պաշտոնն ըլլա. օրինակ՝ Ո՞ր է աստուած քո որ փրկէ զքեզ ի ձեռաց իմոց /Ազաթ./: Այս նախադասութեան մէջ որ բառը կրնա ըլլալ կամ հարաբերական դերանուն ուղղական հոլովով և կամ պարզ շաղկապ: Հարաբերական դրութեան վարժված խոսողը, զայն իբրև ենթակայական ուղղական համարելով, այս դերանունով պիտի բավականանա. իսկ այն, որ շաղկապային դրութեան վարժված է, որ բառը իբրև շաղկապ պիտի համարի և նախադասութեան մէջ պիտի ներմուծե ուղղական հոլովով նաև դերանունը և պիտի ըսե. Ո՞ր է աստուած քո որ փրկէ նա զքեզ:

Մյուս կողմե, հարաբերական դերանունը կրնա իր մէջ զորութեամբ ամփոփել հարաբերեալին իմաստը, և Եզնիկ ըսավ. որ ընդ ըստ ազգաւքս արեգական հայել կամիցի, պարտի զպատուականութիւնն աչացն ի բաց սրբել: Բայց կրնար նաև հարաբերական նախադասութիւնը գլխավորեն առաջ դնել և այն ժամանակ հարաբերեալը հետադասված նաև դերանունի կերպարանքով երևան կու գար. որ հայել կամիցի նա պարտի զպատուականութիւնն սրբել, ինչպես այլուր ըսած է. որ զերծոյնդ ուրուք ծանաչել կարէ, նա ի վեր է քան զնա:

Ահա ուրեմն երկու տարբեր պարագաներ, որոնց մէջ նաև դերանունը կրնա երևան զալ ուղղական հոլովով հարաբերական նախադասութեան մէջ:

Վերջին եզրակացութիւններ ասկե հանելե առաջ, պետք է որ նորեն փակագիծ մը բանամ, որպեսզի դուրջն ինչ ծշմարտանմանութեան զուրս ստանան: Ուղղական հոլովը սովորաբար ենթակայի կամ ստորոգելիի պաշտոնը կը կատարե, բայց կրնա նաև գործածվիլ իբրև casus pendens այսինքն՝ առկախ հոլով, առանց որոշ պաշտոնի, օրինակ՝ հայր, մայր, կին, զաւակ, բոլորին հետ կռվեցավ. և այս գործածութիւնը անբնական չէ, քանի որ ուղղական հոլովը ընութեամբ casus nominativus է, անվանական հոլով, այսինքն՝ պարզապես բառարանի մթերք, լոկ զաղափարի պատկերացում: Անկե կը հետևի, որ տկար նշանակութեամբ հոլով է: Քանի որ նոսր նշանակութեամբ բառ մը նյութա-

պես կը նոսրանա, ուղղական հոլովով գործածված ցուցական դերանունը կը դառնա անշեշտ և վերջապես նյութազուրկ հոդի կը վերածվի: Այսպես, քիչ առաջ ներկայացուցած նախադասություններես առաջինը՝ Ու՞ր է աստուած քո որ փրկէ նա զքեզ. կը դառնա Ու՞ր է աստուած քո որ փրկէն զքեզ, իսկ երկրորդը՝ Որ... հայել կամիցին, նա պարտի ցպղտորուքիւն... սրբել կը դառնա Որ... հայել կամիցին, պարտի ցպղտորուքիւն... սրբել:

Հիմա, բավական ծանր առարկություն մը կը հարուցանե այս հոդին զրաված տեղը նախադասությանց մեջ. ոչ միայն գլխավոր նախադասության բային նկատմամբ իր դրված տեղը բնականոն չէ, այլ կը փոխադրվի գլխավոր նախադասութենեն հարաբերական նախադասության. Որ շարժին և փոփոխի չէ էական:

Այս անբնական վիճակին պատճառը կրնա թերևս հետևյալն ըլլալ. Երբ որ բառ մը այսպես իմաստով և նյութով նոսրանա, և մանավանդ եթե անոր նախնական իմաստը բոլորովին կորսված ըլլա, վերջահարության հետևանքով կը ծգտի պարտադրական տեղ մը դրվելու նախադասության մեջ /,,ըլլալ,, բայը ստորոգելիեն ետքը, և այլն/: Այս տեսակետով, արևմտահայերենի նէ մասնիկին պարագան հատկանշական է. սկիզբը նէ ժամանակի ցուցական մակբայ է ,,այն ժամանակ,, նշանակությամբ, համապատասխանող՝ երկրորդ դեմքին զէ մակբային, որուն կը հանդիպինք օրինակի համար ,,Սաուլոսի Դավիթ,, ղյուցազներգության մեկ նախադասության մեջ, որ է՝ Նը տեսէ զէ տուը: ,,Եթէ տալու ըլլաս, այն ժամանակ տուր /առանց սպասելու/,,: Բոլորովին տարբեր կերպարանք կը ներկայացնեն արևմտահայերենի ուզեսնէ զեզի կու տամ, կամ ուզեսնէ փարեց երթալ օդանավով ցնա շատ սովորական նախադասությունները: Անիմանալի դարձած այս մակբայը մասնիկի վիճակին վերածվեցավ, փոխադրվեցավ գլխավոր նախադասութենեն երկրորդական նախադասության, վերջահարի վիճակին վերածված և ստիպողաբար կցվելով սույն նախադասության բային վերջավորության: Նէ արդի մասնիկին սկզբնական իմաստը այն աստիճան անիմանալի դարձած է, որ քերականագետներ կան, որոնք զայն կը համարին թրքաբանություն, intersem, intersen, interse և այլն թուրքերեն ստորադասական եղանակին մոտեցնելովը:

Նարևոր անդրադարձումը այն է, որ գլխավոր նախադասության սկիզբը դրված նէ բառը, որ ենթադրության մը հետևանքը կը բնորոշեր, դարձած է ենթադրական նախադասության ենթադրությունը արտահայտող վերջահար մասնիկ:

Թերևս նույնանման ընթացքի հետևանքով է, որ հոդ դարձած օժանդակ դերանունը կը կցվի որ հարաբերական դերանունին հետևող առա-

ջին շեշտակիր բառին վերջավորութ յան, ինչ որ ալ ըլլան այս բառին բնույթը և նշանակությունը, նույնիսկ եթե այս տարօրինակ գործածությունը կրնա քայլին եզակի երրորդ դեմքին՝ հոգնակիի կերպարանք տալ՝ Ը_շարժին_եւ_փոփոխէ...:

Այսպես ուրեմն երկու տարբեր պատճառներ կրնան ծնունդ տված ըլլալ հոդի կամայական երևույթ առած այս գործածության: Երկու տարբեր պատճառներ չեն կրնար չքերել խառնակությունը. և իսկապես հոդի այս գործածությունը կատարյալ խառնակության հասած է հայերեն լեզվին գրաբարյան փուլին մեջ, և հանդիսատես կ'ըլլանք հինավուրց համակարգի մը քայքայման, համակարգի մը, որ չվերապրեցավ գրաբարին:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК

MODERN ARMENIAN

38—904

Ս.Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՋԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Լեզվի զարգացման մեջ հանդես են գալիս արտալեզվական երկու կարգի գործոնները՝ ա/օբյեկտիվ իրականությունը, հասարակական կյանքը, որպես արտալեզվական օբյեկտիվ գործոն, բ/լեզվի վրա ազդող մարդը, որպես սուբյեկտիվ գործոն:

Այս երկու գործոնների ազդեցության բնույթի ու չափի տեսակետից լեզվի տարբեր բաղկացուցիչ մասեր տարբեր յուրահատկություններ ունեն: Մի դեպքում արտալեզվական օբյեկտիվ գործոնը ուղղակիորեն չի ներգործում լեզվի վրա և նրանում անմիջական տեղաշարժ չի առաջացնում /օրինակ՝ քերականության մեջ/, մի այլ դեպքում այդ գործոնը լեզվի վրա թողնում է անմիջական ազդեցություն և իր ուղղակի արտացոլումն է գտնում նրա մեջ /օրինակ՝ տերմինաբանության բնագավառում/: Մի դեպքում սուբյեկտը զուրկ է ստեղծելու հնարավորությունից և միայն լեզվի մեջ եղածը հաստատողի դեր է կատարում /օրինակ՝ ուղղախոսության բնագավառում/, մի այլ դեպքում նա հանդես է գալիս լեզվի վրա ակտիվ ներգործողի, ստեղծողի դերում /տերմինաբանության բնագավառում/: Կան նաև միջանկյալ դիրքեր, միջանկյալ վիճակներ:

Սովորաբար ասվում է, որ բառապաշարը լեզվի ամենազգայուն մասն է, որ անմիջականորեն իր մեջ արտացոլում է կյանքում կատարված տեղաշարժերը: Ի հակադրություն քերականական կառուցվածքի, լեզվի բառապաշարին տրված այս բնութագրումը, ընդհանուր առմամբ միշտ լինելով հանդերձ, կարիք ունի մշգրտումների իր ներքին մանրամասնություններում: Բանն այն է, որ բառապաշարի որոշ շերտեր, իմաստային որոշ դաշտերի բառեր, ամբողջ խոսքի մասեր /այդ թվում նաև նյութական իմաստ ունեցող խոսքի մասեր/ տասնամյակների ընթացքում կարող են էական փոփոխություն չկրել և իրենց կայունությամբ ու պահպանողականությամբ մրցել քերականական կառուցվածքի հետ:

Բառապաշարի տարբեր շերտերի, տարբեր խոսքի մասերի հիշյալ

յուրահատկության ընդունությունը բողնելով մի այլ առիթի և մեր խոսքը մասնավորելով տերմինաբանության վրա, նշենք, որ տերմինաբանությունը, ինչպես հայտնի է, լեզվի ամենաարագ փոփոխվող մասն է: Այն անմիջականորեն և առավելագույն չափով իր մեջ արտացոլում է արտալեզվական իրողությունները և առավելագույն չափով էլ ընդունում է մարդ-սուբյեկտի ակտիվ ներգործությունը:

Այս երկու գործոնների յուրահատուկ, կարելի է ասել, բացառիկ ակտիվությունը տերմինաշինության բնագավառում պայմանավորված են միմյանցով, ավելի ճիշտ՝ սուբյեկտիվ գործոնի դերը պայմանավորված է օբյեկտիվ գործոնի առանձնահատուկ ակտիվությամբ:

Տերմինաբանության բնագավառում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների նշված յուրահատուկ զուգակցումը իր համապատասխան ազդեցությունն է թողնում տերմինաշինության և մասնավորապես տերմինակազմության վրա: Գիտատեխնիկական առաջադիմության և առհասարակ հասարակական կյանքի բոլոր բնագավառների առաջընթացի հետ կապված՝ տերմինաբանության բուռն զարգացման անհրաժեշտությունը պահանջ է դնում լեզվի առջև՝ առավելագույն չափով օգտագործելու տերմինակազմական հնարավորությունները: Անմիջապես ավելացնենք, որ մարդ-սուբյեկտի տերմինակազմական հնարավորությունները, նորամուծությունները կարող են իրացվել լեզվի օբյեկտիվ օրինաչափությունների սահմաններում, և նա բացարձակ ազատություն չունի այս հարցում: Նշենք սակայն, որ այդ օրինաչափությունները բավականին ազատ են տերմինակազմության բնագավառում:

Ամենից առաջ աչքի է ընկնում մի ընդհանուր երևույթ. տերմինի բովանդակության նեղացման ու խորացման անհրաժեշտությունը պահանջում է համապատասխան կառուցվածքային միջոցների առավելագույն օգտագործում:

Տերմինի մասնագիտական ճշտությունը հաճախ կարելի է լինում ապահովել նրա մեծ ծավալի, նրա բաղադրիչների քանակի մեծացման միջոցով: Սա վերաբերում է թե՛ բառակազմությամբ և թե՛ բառակապակցությամբ արտահայտվող տերմիններին: Այսպես, հեռախոսային կապի տեխնիկական ու ֆունկցիոնալ զարգացման հետ կապված և այդ զարգացմանը զուգահեռ՝ երկարմատ <u>հնեռախոս</u> բառից կազմվել են <u>ռադիոհնեռախոս</u>, ապա <u>ռադիոտեսահեռախոս</u> տերմինները: Համմտ. նաև՝ նավ > տիեզերանավ, զգայուն > էլեկտրազգայուն, կենսաբանություն > մանրէակենսաբանություն, կցում > եռակցում > էլեկտրաեռակցում, աղաց > մսաղաց>էլեկտրամսաղաց:

Նույնը վերաբերում է տերմինակազմության մեջ բառակապակցությունների ծավալմանը:

Լեզվի մեջ եղել է տեսություն բառը. Էյնշտեյնի մնծ հայտնագործությունից հետո կազմվել է հարաբերականության տեսություն բառակապակցությունը, ապա այս տեսության երկու տարբերակները համապատասխան բառերի հավելման միջոցով արտահայտվել ու արտահայտվում են ավելի ծավալուն բառակապակցությամբ՝ հարաբերականության ընդհանուր տեսություն, հարաբերականության հատուկ տեսություն:

Սակայն տերմինի, որպես լեզվական միավորի, ծավալի շատ մեծացումը լեզվի համար անցանկալի է. դրանից տուժում է լեզվական միավորի գեղագիտական կողմը, այն դառնում է անբարեհունչ: Ահա է պատճառը, որ բառակազմական /իհարկե, նաև ճևաբանական, շարահյուսական/ մակարդակում բաղադրյալ միավորն ունի իր սահմանափակումը, և այդ ընդհանուր օրինաչափությունը, բնականաբար, տարածվում է նաև տերմինների վրա: Այնուամենայնիվ տերմինի մասնագիտական և լեզվական կողմերի իրար հակասող այս միտումները ի վերջո հանգում են ինքնատիպ լուծման:

Նախ, տերմինները հասնում են այն բանին, որ ,,ստանում են,, բազմարմատ կազմության ,,իրավունք,, , ի տարբերություն ոչ տերմինային բառերի: Վերջին տարիներին զգալի քանակությամբ տերմիններ են կազմվել և այժմ էլ շարունակում են կազմվել երեք և չորս արմատներով: Ըստ որում ժամանակակից հայերենի նոարմատ բառերի մեծագույն մասը և բոլոր բազարմատ բառերը տերմիններ են /էլեկտրաքարշավար, էլեկտրասրտագրություն, միջմայրցամաքային, լուսապատճենահանում, ավտոբեռնափոխադրում, ռադիոհեռուստակառավարում և այլն/:

Բայց տերմիններին վերապահված այս արտոնությունն ունի իր սահմանները: Կենդանի լեզուն հաճախ նախընտրում է տվյալ հասկացությունն արտահայտել երկու, երեք կամ ավելի բառերի կապակցությամբ, քան մեկ բազմարմատ բառով: Այդ կերպ էլ առաջանում են բառակապակցություններով արտահայտված հազարավոր տերմիններ. ինչպես՝ գիտատեխնիկական հեղափոխություն, տիեզերական կենսաբանություն, նվազող երկրաչափական պրոգրեսիա, լարը ֆունկցիանը ունեցող միացություն, համաժողովրդական կառույց, բանվորական ընտանեկան կոմունիստական աշխատանքի բրիգադ, սպառազինության մրցավազքի սանձահարում և այլն:

Բառակապակցությամբ տերմիններ կազմելու միտումն ու անհրաժեշտությունը հասցրել են այն բանին, որ հայերենում /և ոչ միայն հայերենում/ տերմինաշինության մեջ շարահյուսական եղանակը բառակազմական եղանակին հավասար կամ համարյա հավասար կերպով մասնակցում է տերմինաշինությանը: Ծիշտ է, բառակապակցությամբ տերմիններ կազ-

մելը զալիս է գրական հայերենի հնագույն շրջանից, բայց եթե մինչև վերջերս տերմինակազմության շարահյուսական եղանակը օժանդակ դեր էր կատարում, ապա ներկա փուլում այն մրցում է բառակազմական եղանակի հետ: Նվ տերմինակազմությունն այժմ ունի երկու համարյա հավասարազոր եղանակներ՝ բառակազմական և շարահյուսական:

Տերմինակազմության մեջ շարահյուսական եղանակի հատուկ ակտիվացման հարցում, հավանաբար, դեր են կատարում նաև տերմինային համակարգի և հատկապես միկրոհամակարգերի մեջ ստորակարգության առավել հստակ արտահայտման անհրաժեշտությունն ու հնարավորությունը: Այսպես, առարկայի ենթադասի բառակապակցական անվանումը սովորաբար ձևավորվում է դասի ընդհանուր անվան վրա ավելացվելով ենթադասը բնորոշող որոշիչ, ինչպես՝ ռումբ՝ ատոմային ռումբ, ջրածնային ռումբ. մնշում՝ ֆիզիկական մնշում, մթնոլորտային մնշում, արյան մնշում, դասակարգային մնշում և այլն:

Բառակապակցությամբ կազմված տերմինների բաղադրիչների քանակը երբեմն հասնում է 7-8 բառի, առանձին դեպքերում՝ մինչև 10 բառի /հատկապես տեխնիկայի և մշգրիտ գիտությունների բնագավառում/: Ահա ժամանակակից էլեկտրոնային տեխնիկայում գործող հաստոցներից մեկի ամբողջական անվանումը. էլեկտրոնային ուսնիվերսալ ավտոմատացված ծրագրային կառավարմամբ աննպատնեն հաստոց: Այսպիսի բազմաբառ տերմինները, թեև կարևոր են առարկայի, երևույթի տեխնիկական ու գործառական մշգրիտ բնութագրման համար, բայց և այնպես հարմար չեն լայն գործածության տեսակետից:

Այստեղից էլ բխում է բազմաբառ տերմինների փոքրածավալ տարբերակների ստեղծման անհրաժեշտությունը: Այսպես, էլեկտրոնային ուսնիվերսալ ավտոմատացված ծրագրային կառավարման աննպատնեն հաստոց տերմինն ունի կարճ տարբերակ՝ արտահայտված երեք բառով՝ ծրագրային կառավարման հաստոց, որ ավելի գործածական է, քան հաստոցի ամբողջական անվանումը: Իսկ ծրագրային կառավարման հաստոց տարբերակից էլ կազմվել է ավելի փոքրածավալ հապավված տարբերակ՝ ԾՂՀ, որը գործածվում է առավելապես մասնագիտական գրավոր խոսքում:

ՀՍՀ-ում մ տառից հետո տրված է նաև ,,մ,, գլխաբառ՝ հետևյալ բացատրությամբ. ,,ընդհանուր նշանակության էլեկտրոնային հաշվողական մեքենա,,: Ուրեմն՝ էլեկտրոնային հաշվողական մեքենա անվանումը հապավվել է՝ ԷՀՄ, և վերջինիս մ տառը, որը մեքենա բառի սկզբնատառն է, գործածվում է որպես այս նույն տերմինի պայմանական արտահայտիչ՝ հատկապես մակնիշների մեջ:

Այսպիսով՝ ամենաերկար և ամենակարճ տերմինները կամ տերմինա-

յին տարբերակները կազմվում են տեխնիկայի բնագավառում: Դա պայմանավորված է տեխնիկայի յուրահատկությամբ. եթե տեխնիկական սարքերը, գործողությունները իրենց էությամբ ու նշանակությամբ պահանջում են բազմաբաղադրիչություն, ապա զուտ կիրառական տեսակետից հաճախ զգացվում է անվանման նվազագույն արտահայտության անհրաժեշտություն: Այդ պատճառով էլ նույն օբյեկտի անվանման տարբերակների մի եզրում կարող է լինել մի քանի բառից կազմված բառակապակցություն, մյուս եզրում՝ մեկ տառ:

Ի դեպ, գիտատեխնիկական տերմինների տարբերակներ կազմելու հարցը որոշակի հարաբերության մեջ է բաղադրյալ հատուկ անունների տարբերակներ կազմելու հետ, որոնք զերազանցապես ձևավորվում են հապավման միջոցով, ինչպես՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն, Հայկական ՍՍՀ, ՀՍՍՀ, Սովետական Հայաստան: Իհարկե, դրանց միջև կան նաև զգալի տարբերություններ՝ պայմանավորված՝ անվանումների բնույթի և գործածության յուրահատկությամբ:

Որքան էլ բազմաբառ տերմինների առկայության պայմաններում նրանց փոքրաթավալ տարբերակի կամ տարբերակների կազմումով որոշ բավարարում է տրվում տերմինագործածությանը, այնուամենայնիվ լեզվաստեղծության օրենքներին բավարարող տերմինների կազմությունը մնում է որպես անհրաժեշտություն:

Ի բավարարումն այս պահանջի, տերմինակազմության մեջ գործում է մի սկզբունք, որը կարելի է կոչել պայմանականության սկզբունք: Այս սկզբունքի էությունն այն է, որ տերմինի կազմության մեջ չեն արտահայտվում ենթադրվող իմաստային բոլոր միավորները. բազմաբաղադրիչ տերմինի փոխարեն կազմվում է սակավաբաղադրիչ տերմին, որի որևէ բաղադրիչը դառնում է բազմաբառ հասկացության արտահայտման ներկայացուցիչ:

Այսպես. <u>ավիահրետը</u> բառի իմաստը կարելի է արտահայտել հետևյալ բազմաբառ կապակցությամբ. թռչող ապարատի լայնական ու երկայնական թեքումները չափող և իրական հորիզոնի նկատմամբ նրա դիրքը ցույց տվող սարք: Ուրեմն՝ միայն երկու բաղադրիչով /<u>ավիա</u> և <u>հորիզոն</u>/ արտահայտվում է մի հասկացություն, որը կարելի է ձևակերպել շատ բառերի կապակցությամբ:

<u>Ռադիոկենսաբանություն</u> տերմինի <u>ռադիո</u> բաղադրիչը ներկայացուցիչն է բավականին ծավալուն բառակապակցությամբ արտահայտվող հասկացության: Հիշենք, որ ռադիոկենսաբանությունը կենսաբանության մի բաժին է, որն ուսումնասիրում է ,,իոնացնող ճառագայթների ներգործությամբ օրգանիզմներում առաջ եկող փոփոխությունները և ճառագայ-

Քահարման դեմ կենսաբանական պաշտպանությունը,,: Ինչպես կարելի է նկատել, պայմանականության սկզբունքը հիմնականում հանդես է գալիս որպես լեզվի մեջ խնայողության օրենքի դրսևորման միջոց, թեև խնայողության օրենքի գործունեությունն ավելի լայն ոլորտ ունի, և պայմանականությունը ոչ միշտ է կապվում խնայողության հետ:

Պայմանականության սկզբունքը գործում է նաև բառակապակցությամբ կազմվող տերմիններում: Այսպես, _չմիացած_երկընքը տերմինի _չմիացած_ բաղադրիչը չի նշանակում առհասարակ չմիացած, այլ մասնավորապես նշանակում է ,,Հյուսիս-Ատլանտյան կազմակերպությանը և Վարշավայի պայմանագրի երկրներին չմիացած,,:

Այսպիսի դեպքերում բառակազմության կամ բառակապակցության համար ընտրվում է այն բաղադրիչը, որն առավելագույն ինֆորմացիա կարող է հաղորդել տվյալ տերմինի բուն էության մասին: Բերված բոլոր տերմինների բաղադրիչներն այդպիսին են:

Սակայն պատահում է, որ բաղադրյալ տերմինի բաղադրիչը կամ բաղադրիչները չեն արտահայտում հասկացության բուն էությունը, այլ նշում են երևույթի որևէ հատկանիշը, ըստ որում երբեմն՝ ոչ էական: Օրինակ՝ _Վաշշավայի_պայմանագրի_երկրները հասկացության մեջ _Վաշշավայի_ բառը չի նշում այդ պայմանագրի էությունը, որով միավորված են հայտնի երկրները. _Վաշշավա_ բառով միայն նշվում է այդ պայմանագիրը կնքելու վայրը: Այսպիսի դեպքերում տերմինակազմության մեջ ավելի է մեծանում պայմանականությունը: Այս և ընդհանրապես պայմանականության այլ դեպքերում պարզապես տվյալ բառին կամ բառակապակցությանը հատկացվում է տերմինային տվյալ իմաստը. հասկացությունը չի քնում բառից կամ բառակապակցությունից, այլ հասկացությունը հատկացվում է, վերագրվում է բառին, բառակապակցությանը:

Պայմանականության սկզբունքը բառակազմության մեջ նոր երևույթ չէ: Անցյալից եկող շատ բառերի ներքին ձևը ժամանակի ընթացքում դարձել է պայմանական , կամ այդ բառերը կազմվել են պայմանականության սկզբունքով /_նախագահ_, _սեփական_, _ընդարձակ_ և այլն/: Հասկանալի է, որ ,,ամեն բան ստեղծող,, _բանաստեղծ_ չէ /Թեկուզև _բան_-ը հասկանանք _խոսք_ իմաստով/, ,,ամեն գործ կատարող,, _գործակատար_ չէ, _ղեկավար_-ը՝ ,,ղեկ վարող,, չէ և այլն: Այս բոլորը հասկանալի է: Այժմ խոսքն այն մասին է, որ լեզվի զարգացման արդի շրջանում պայմանականության սկզբունքը գործում է շատ լայն ընդգրկումով, և դա իր կնիքն է դնում բաղադրյալ տերմինների ներքին ձևի, բառակազմական նշանակության ու տերմինի բովանդակության հարաբերության վրա:

Հետաքրքրական է, թե տերմինաշինության բուռն զարգացումն ինչ հարաբերության մեջ է տարբեր խոսքի մասերի բառակազմի հարցստացման հետ: Քանի որ բառապաշարի հարստացումն այժմ գնրազանցապես կատարվում է տերմինաբանության հաշվին, այդ պատճառով էլ տերմինակազմության բուռն ընթացքը հատուկ ազդակ է դառնում մասնավորապես այն խոսքի մասերի բառակազմական միջոցների ակտիվացմանը, որոնք առաջնային դեր ունեն տերմինների կազմության մեջ: Այս հարցում բացառիկ մեծ է գոյականի դերը: Հենց դրանով էլ պետք է բացատրել գոյականանկատ միջոցների կաղապարների հատուկ ակտիվացումը: Տերմինակազմության բնագավառում զգալի է նաև ածականի դերը:

Մասնագիտական գրականության մեջ /Ս. Էլոյան, Հ. Օհանյան, Ս. Գալստյան/ դիտվել է գոյականանկատ մի շարք ածանցների /գործ, արար, ում, ույթ, ութիւն, վածք և այլն/ բառակազմական դերի մեծացումը վերջին տասնամյակներում /այլումինազործ, ծանրդեղազործ, սարքաշինարար, լոտանարար, նորարար, եռակցում, ջեռուցում, դիմորդ, ուղեկցորդ, չմշկորդ, տիեզերագնացություն, ջերմադիմացկունություն և այլն/, կատարվել են որոշ ածանցների իմաստային տարբերակումներ. ինչպես՝ շարահյուսություն-շարահյուսություն, մրցություն-մրցույթ, պարբերություն-պարբերույթ, ավանդություն-ավանդույթ և այլն: Գոյականը հարստանում է նաև բառակազմական այլ միջոցներով: Հատկապես արժե նշել համադասական բաղադրիչների միացումով այնպիսի գոյականների կազմությունը, ինչպիսիք են՝ վազոն-ռեստորան, ցուցահանդես-վաճառք, բազմոց-մահճակալ, սովխոզ-տեխնիկում և այլն:

Ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման բնույթի և տերմինաշինության տեսակետից կարևոր է նշել, որ գոյականի ածանցական կազմությունների, բառաբարդման մյուս կաղապարների ակտիվացման հիմքում ընկած է տերմինակազմությունը:

Նույն տերմինակազմությունն է այն բանի հիմնական թյանը, որ հայերենում կազմվեցին մեծ թվով ածականներ, այդ թվում՝ առաջացան, ծավալվեցին որոշ կարգի կազմություններ, հատկապես հատվածական կազմությունները, որոնք հանդիսանում են հարադրական կազմությունների զարգացման հաջորդ աստիճանը: Ինչպես՝ գաղափարական-դաստիարակչական՝ գաղափարադաստիարակչական, նախագծային-կոնստրուկտորական՝ նախագծակոնստրուկտորական, դրամական-իրային՝ դրամաիրային, ժողովըրդական-դեմոկրատական՝ ժողովրդադեմոկրատական և այլն: Ածականների կազմության մեջ ակտիվացան որոշ նախածանցներ ևս: Այդպիսի նախածանցավոր կազմություններ են՝ գերլեզու, գերհզոր, գերամուր, գերնուրբ, գերկարճ և այլն: Ածականների կազմության ակտիվացումը

հատկապես կապվում է տերմինների շարահյուսական եղանակով կազմության հետ, ածականը հանդես է գալիս որպես գոյականական բառակապակցության լրացում:

Գիտատեխնիկական հեղափոխության, հասարակական, քաղաքական, մշակութային վերափոխումների արդի ժամանակաշրջանում քաղաքակիրթ լեզուների, այդ թվում և հայերենի, տերմինաբանությունը հարստացել ու հարստանում է հսկայական չափերով: Ում վիճակվում է զբաղվել արդի գրական հայերենի բառապաշարի հարստացման հարցով կամ ծանոթանալ այդ հարցին նվիրված ուսումնասիրություններին, նրա թե՛ առաջին տպավորությունը, թե՛ ընդհանուր եզրակացությունը այն է լինում, որ վերջին տասնամյակներում հայերենի մեջ մտած տասնյակ հազարավոր բառերի զերակշիռ մեծամասնությունը տերմիններ են: Եթե դրան ավելացնենք բառակապակցություններով կազմված տերմինների մեծ քանակը, ապա կարելի կլինի մոտավոր զաղափար կազմել ժամանակակից հայերենի անվանողական համակարգի մեջ կատարված քանակական, որոշ առումով նաև որակական մեծ տեղաշարժերի մասին:

Նշվածին պետք է ավելացնել նաև այն, որ համատարած զրագիտության և ինֆորմացիայի բազմազան միջոցների առկայության ու ներգործության արդի պայմաններում շատ տերմիններ, որոնք ունեն հաղորդակցային կարևոր նշանակություն, համեմատաբար կարճ ժամանակում դուրս են գալիս իրենց նեղ մասնագիտական շրջանակներից և դառնում լայն գործածական բառեր /սառնարան, հեռուստացույց, ելեկտրաքարշ, ինքնասպասարկում, օդանավակայան և այլն/:

Ավելին. տերմինները, լայնորեն գործածվելով գրական խոսքի մեջ, ոչ միայն իրենցով խոսքին տալիս են, այսպես ասած, գիտական գունավորում, այլև ծանաչողական ու հոգեբանական առումով ազդում են լեզվի ոչ տերմինային շերտի վրա՝ այն մի տեսակ բարձրացնելով կամ, համենայն դեպս, ձգտելով բարձրացնել տերմինների մակարդակին համապատասխանող աստիճանի:

Այսպիսով, մեծ է տերմինաշինության դերը թե՛ գիտության, տեխնիկայի, մշակույթի և թե՛ լեզվի զարգացման ընթացքներում:

Է.Բ. ԱՂԱՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը վիթխարի հնարավորություններ ստեղծեց հայ ժողովրդի ինչպես տնտեսական ու քաղաքական կյանքի, այնպես էլ ազգային մշակույթի, այդ թվում նաև մայրենի լեզվի զարգացման համար:

Հսկայական են հայ ժողովրդի նվաճումները ժողովրդական տնտեսության, գիտության, արվեստի ու գրականության, ինչպես և լեզվի զարգացման բնագավառներում:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից առաջ, պատմական հայտնի իրադարձությունների հետևանքով ցարական Ռուսաստանի բազմաթիվ ժողովուրդներ զրկված լինելով ինքնուրույն պետականությունից ու անկախությունից՝ հնարավորություն չունեին տնտեսական ու մշակութային զարգացումով հասնել ժամանակի առաջավոր ազգերի մակարդակին: Մեկ կենտրոնացված պետության տիրակալության տակ միավորված բազմաթիվ ազգեր, ժողովուրդներ ու էթնիկական խմբեր կանգնած էին ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային զարգացման տարբեր աստիճանների վրա: Դրանցից մի քանիսն ունեին բավականաչափ զարգացած գիր ու գրականություն, որոշ ժողովուրդներ զուրկ էին սեփական գրից, բայց այլ լեզուների գրով, այնուամենայնիվ, ստեղծել էին գրականություն և ունեին գրական լեզու, իսկ բազմաթիվ ժողովուրդներ ու էթնիկական խմբեր առհասարակ զուրկ էին գրից ու գրականությունից: Այս վիճակը թելադրում էր ազգային յուրահատուկ քաղաքականություն՝ ազգերի տնտեսական ու մշակութային անհավասարությունը հնարավորին չափ շուտ վերացնելու, հետամնաց ազգերին ու ժողովուրդներին առաջավորների մակարդակին հասցնելու նպատակով: Այդ իրավիճակը նկատի ունենալով էր, որ կուսակցության 10-րդ համագումարը քննության առնելով ազգային հարցը, իր որոշման մեջ շեշտում էր. ,,Կուսակցության խնդիրն է՝ օգնել ոչ վելիկոռուս ժողովուրդների աշխատավորական զանգվածներին՝ հասնելու առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին, օգնել նրանց, որպեսզի՝ ա/

իրենց մոտ զարգացնեն ու ամրապնդեն սովետական պետականությունը այն ձևերով, որոնք համապատասխանում են այդ ժողովուրդների ազգային նկարագրին, բ/ իրենց մոտ կազմակերպեն տեղական ընակչության կենցաղն ու տոզնբանությունն իմացող, տեղացիներից կազմված դատարան, աղմինիստրացիա, տնտեսության օրգաններ, իշխանության օրգաններ, գ/ իրենց մոտ մայրենի լեզվով զարգացնեն մամուլ, դպրոց, թատրոն, ակումբային գործը և առհասարակ՝ կուլտուր-լուսավորական հիմնարկները»: Սա Լենինի մշակած ազգային քաղաքականությունն էր՝ ընդունված կուսակցության համագումարում և գործողության մեջ դրված սովետական պետության կողմից: Թե ինչ վիթխարի արդյունքների հանգեցրեց այդ քաղաքականությունը, բոլորին հայտնի է, և եթե նկատի ուննանք, որ ազգային գրականությունը, մշակույթը, գիտությունը, իր մայրենի լեզուն զարգացնելու համար հայ ժողովրդին ոչ թե ներունակ հնարավորություններն էին պակասում, այլ հասարակական-քաղաքական պայմանները, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի մեծ առաջընթացի հնարավորություն էր տրվել նրան: Հայերն ունեին մեկուկես հազարամյակի պատմական ուղի անցած հարուստ, զարգացած ու բազմաբովանդակ գրականություն և հենց այդ գրականության մեջ մշակված գրական լեզու՝ գրաբարը: Հին և միջնադարյան Հայաստանում զարգացել ու բարձր մակարդակի էին հասել իր ղարաշրջանի գիտությունն ու արվեստը՝ պատմագրությունը, փիլիսոփայությունը, տրամաբանությունը, ճարտասանական արվեստը և դրա տեսությունը, քերականագիտությունը, որ ընդգրկում էր նաև գրականության տեսությունն ու տաղաչափությունը, բժշկությունը, մաթեմատիկան, աստղագիտությունը և դրա հիմքի վրա զարգացած ու բարձր մակարդակի հասած տոմարագիտությունը, և, իհարկե, գեղարվեստական գրականությունը, որի կոթողները համաշխարհային ճանաչում են ստացել: Այս բազմակողմանի գրականության մեջ մշակվել էր մեր դասական գրական լեզուն և կատարելապես բավարարում էր այդ բոլոր բնագավառների պահանջներին: Այնպես որ, 19-րդ դարում, երբ հայ ժողովուրդը ձևավորվում էր որպես ազգ, ուներ գրական հսկայական ժառանգություն և մշակված, հարուստ ու գեղեցիկ լեզու՝ մեր գրաբար լեզուն: Ազգային նոր գրականության ստեղծումով, 19-րդ դարում գրական լեզվի մակարդակին բարձրացվեց մեր կենդանի լեզուն՝ աշխարհաբարը իր երկու՝ արևելահայ և արևմտահայ տարբերակներով: Այդ լեզուն մշակվում ու կատարելագործվում էր ինչպես մեր նոր գեղարվեստական գրականության, այնպես էլ ժամանակի գիտական գրականության մեջ: Սակայն, որքան էլ այդ մշակումն ու կատարելագործումն արդյունավետ լիներ, այնուամենայնիվ,

հասարակական:-քաղաքական պայմաններն այնպիսիք էին, որ հնարավորություն չէին տալիս այդ զարգացումն ապահովել իր ողջ ներունակ թափով ու հզորությամբ: Պատմական ողբալի իրադարձությունների հետևանքով հայ ազգը մասնատվել էր, Հայաստանը բաժանված էր ռուսական ցարիզմի և խավարամոլ սուլթանական Թուրքիայի միջև: Հայ ազգի հատվածներից յուրաքանչյուրը, լինելով մեկ պետության լծի տակ, յուրահատուկ պայմաններում էր գտնվում: Արևմտյան հատվածը, թուրքական բռնապետության լծի տակ ամեն կարգի ճնշումների, կեղեքումների ու հալածանքի ենթարկվելուց հետո, զոհ դարձավ վայրագ թուրքերի կողմից կազմակերպված ու իրականացված ցեղասպանության ու զանգվածային տեղահանության: Արևելահայությունը կամ այսպես կոչված Ռուսահայաստանի հայությունը, իր բախտը կապած լինելով ռուս առաջավոր ժողովրդի հետ, աշխատավորական Ռուսաստանի հետ, թեև ցարիզմի կողմից ճնշված, այնուամենայնիվ համեմատաբար ավելի բարեհաջող ուղու վրա էր կանգնել: Սակայն 20-րդ դարի սկզբներին այստեղ էլ ամեն ինչ բարեհաջող չէր. ցարիզմը կանգնել էր փոքր ազգերին ծուլեցնելու ուղու վրա. հայտնի են դարասկզբի հայահալած քաղաքականությունը, հայ մտավորականության դեմ ուղղված հալածանքները, հայկական դպրոցների փակումը և այլն: Այս պայմաններում բոլորովին էլ անսպասելի չէր հայ մտավորականների տագնապը՝ հայոց լեզվի ու գրականության հետագա ճակատագրի համար: Այդ տագնապն այնքան իրական էր, որ ոմանք նույնիսկ խուճապի էին մատնվել ու կորցրել հայոց լեզվի ու հայ գրականության պահպանման հեռանկարը: Շատերից կարելի է հիշել Ստեփան Մալխասյանցի հետևյալ խոսքերը. ,,Ներկայումս ռուսահայության առջև դրված է հայերենի լինելու թե չլինելու հարցը իր բոլոր վտանգավոր հետևանքներով... որքան էլ մենք կամենանք հուսադրել մեզ, որքան էլ ստիպենք մեզ լավատես լինել, այնուամենայնիվ պետք է խոստովանենք, որ հայերեն լեզուն յուր գոյության ճգնաժամի մեջ է, և եթե արտաքո կարգի պայմաններ առաջ չգան, նա կկորչի բոլորովին հեռու կամ մոտիկ ապագայում,,: Այս խոսքերը տագնապալից էին, սակայն իրական հիմքեր ունեին: Արտաքո կարգի պայմաններ անհրաժեշտ էին հայոց լեզվի վերածնունդի համար. և հայ ժողովուրդը ստեղծեց այդ արտաքո կարգի պայմաններն ու ստացավ իր ազգային լեզուն, գրականությունը, մշակույթը, գիտությունը ամբողջ ուժով զարգացնելու հնարավորություններ: Հայաստանում սովետական իշխանության հաստատումով, սեփական պետականության ստեղծումից անմիջապես հետո հայոց ազգային գրական լեզվի տարբերակներից մեկը՝ արևելահայերենը, որի հասարակական դերը մինչև այդ սահմանափակվում էր գեղարվեստական

գրականությամբ, մամուլով, դպրոցական խղճուկ ցանցով ու մասամբ էլ թատրոնով, աննախադեպ կերպով ընդարձակեց իր հասարակական գործառույթների սահմանները ու բարձրացրեց իր հասարակական դերը: Նա դարձավ Սովետական Հայաստանի պետական լեզուն, իսկ Սովետական Միության կազմավորումով՝ նաև Սովետական Միության պետական լեզուներից մեկը: Դա պետական կյանքի ոլորտում գործառելու համար գրական հայերենի մշակման, կատարելագործման ու զարգացման հզոր գործոն հանդիսացավ: Մինչև հեղափոխությունը հայոց լեզուն չուներ այդպիսի գործառություն, նա չէր գործածվում պետական-վարչական, դիվանագիտական գործունեության ոլորտում և չէր մշակվել այդ բնագավառներին համապատասխան գործառության համար: Հասարակական նոր դերը ոչ միայն պահանջում էր մշակել ու կատարելագործել լեզուն՝ այդ գործառության պահանջները լիովին բավարարելու համար, այլև, որ գլխավորն է, ստեղծված էին բոլոր անհրաժեշտ պայմաններն ու հնարավորությունները՝ գրական լեզվի այդպիսի մշակման ու զարգացման համար: Այդ ոլորտներում գործառելով՝ մեր լեզուն իրոք որ աննախընթաց կերպով զարգացավ, մշակվեց ու հարստացավ, և այսօր դարձել է արդեն պետական-պաշտոնական, վարչական, դիվանագիտական ոլորտների ճկուն, հարուստ ու մեր ժամանակի առավել զարգացած լեզուների մակարդակի վրա կանգնած ազգային լեզու:

Մինչև սովետական կարգերի հաստատումը մեր մամուլը, գրականությունը, թատրոնը և առհասարակ ողջ մշակույթը զարգանում էր հիմնականում Հայաստանի սահմաններից դուրս՝ Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում և այլուր: Այս իրողությունը նկատի ուներ մեր հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որը գրում էր, թե մեր գրականությունը զաղութների գրականություն է, զարգացել է զաղութներում և աստիճանաբար կորցնում է ազգային առանձնահատկություններն ու ազգային կերպարանքը: Հայ գրականության համաշխարհային համամարդկային հատկանիշների հետ ազգային կերպարանքի պահպանման ու զարգացման, ժողովրդական ոգին չկորցնելու, գեղարվեստական գրականության զարգացման ճշմարիտ ուղուց չշեղվելու համար անհրաժեշտ է, որ մեր գրականությունը կանգնի հայերենի հողի վրա, զարգանա հարազատ ժողովրդի ծոցում: Սովետական իշխանության հաստատումով իրականացավ Թումանյանի այդ իղձը. մեր մշակույթի, արվեստի ու գրականության, գիտության, մամուլի, թատրոնի կենտրոնը դարձավ Հայաստան աշխարհը, հայ ազգի բազմաղարյան հայրենիքը: Իսկ դա չափազանց կարևոր նշանակություն ուներ ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև ազգային գրական լեզվի համար: Չէ՞ որ մեր գրական լեզուն էլ, որ-

պես գիտության, գրականության, մամուլի ու թատրոնի լեզու, մշակվում էր գաղութներում, հայրենի հողից ու ժողովրդից կտրված, լեզվի մշակման ու կատարելագործման որոշակի սեպարատիստական միտումների դրսևորումներով: Այս վիճակին էր, ահա, վերջ դրվում հայ ժողովրդի ինքնուրույն պետության ստեղծումով: Հայոց լեզվի, որպես պետական լեզվի զարգացումը դառնում էր մեր պետության հոգատարության առարկան, նա զարգանում էր նոր հասարակարգի պահանջները բավարարելու ոգով, և հայրենի հողի վրա: Եվ սա վիթխարի դեր էր խաղում և խաղում է մեր լեզվի զարգացման, կատարելագործման ու մշակման գործընթացում:

Մինչև սովետական կարգերի հաստատումը մեր գրական լեզուն, ինչպես և առհասարակ գիրն ու գրականությունը մի բուռ հայության սեփականությունն էր. ժողովրդական լայն զանգվածները զուրկ էին գրագիտությունից և հենց դրա հետևանքով էլ մեր գրական լեզուն մատչելի չէր բարբառախոս ժողովրդի լայն խավերին: Սովետական կարգերի օրոք արևելահայ գրական լեզուն դարձավ աշխատավոր ժողովրդի սեփականությունը: Մեր նորաստեղծ պետությունն առաջին իսկ օրերից հոգ տարավ ժողովրդի կուլտուրական մակարդակի բարձրացման մասին և ձեռք առավ անհրաժեշտ միջոցներ՝ անգրագիտությունը վերացնելու համար: Այս ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքները պարզ դարձան սովետական իշխանության գոյության հենց առաջին տասնամյակում: Դպրոցների լայն ցանցի ստեղծումը և մեծահասակներին գրագիտություն սովորեցնելու նպատակով 20-ական թվականներին ստեղծված ուսուցման օջախները /լիկպայանները/ հնարավորություն տվեցին ամենակարճ ժամանակամիջոցում վերացնելու անգրագիտությունը. 20-ական թվականների վերջերին իրոք որ անգրագիտությունը վերացվել էր: Սա լեզվի զարգացման տեսակետից այն կարևոր նշանակությունն ուներ, որ մեր գրական լեզուն դառնում էր ամբողջ ժողովրդի սեփականությունը, առօրյա հաղորդակցման լեզուն, որ և պետք է հսկայական դեր խաղար մեր կենդանի լեզվի խոսակցական տարբերակի մշակման ու զարգացման համար: Անցան տարիները, և մեր գրական լեզուն այսօր ունի իր խոսակցական տարբերակը. նա դարձել է կոլտնտեսականի ու բանվորի, քաղաքացու և գյուղացու, մտավորականի և արհեստավորի ամենօրյա գործածության լեզուն:

Հոգ տանելով ժողովրդի գրագիտության, մատաղ սերնդի դաստիարակության մասին, մեր կառավարությունը ձեռնամուխ եղավ նաև գիտության ու տեխնիկայի, արդյունաբերության ու գյուղատնտեսության համար բարձրորակ կադրերի պատրաստման գործին: Հիմնադրվեց Երևանի

պետական համալսարանը, իսկ հետագայում նրա հիմքի վրա ստեղծվեցին պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական և այլ ինստիտուտները: Եթե մինչև հեղափոխությունը մենք ունեինք ղեկրոցում դասավանդվող առարկաների մեծ մասի դասագրքեր, իսկ այդ նշանակում է՝ նաև այդ առարկաների համար զոնե ղկրոցական մակարդակով մշակված տերմինաբանություն, ապա սովետական կարգերի օրոք հիմնադրված համալսարանում և մյուս բուհերում, գիտության տարբեր ընագավառների ուսուցման, մասնագետների հզոր բանակ ստեղծելու համար անհրաժեշտ էր մշակել, կատարելագործել ու հարստացնել մեր լեզուն հատկապես տերմինաբանությամբ, մշակել տարբեր բնագավառների տերմինահամակարգերը: Դրան միանում էր նաև ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում լիարժեք կերպով գործառելու պահանջը: Արդյունաբերության, տեխնիկայի, գյուղատնտեսության վիթխարի տեմպերով զարգացումը պահանջում էր լեզվի համակողմանի զարգացում, հարստացում ու կատարելագործում՝ այդ բոլոր ոլորտներում ազատորեն գործառելու համար: Եվ այսօր մեր լեզուն գիտության ու տեխնիկայի, արդյունաբերության ու զարգացած գյուղատնտեսության նույնքան զարգացած ու մշակված լեզու է, որքան և Սովետական Միության մյուս ժողովուրդների լեզուները:

Սովետական կարգերի ստեղծումով մեր գրական կյանքի, արվեստի, մամուլի զարգացման կենտրոնը դարձավ Սովետական Հայաստանը: Այսօր մեր հանրապետության ամեն մի շրջանում, ամեն մի քաղաքում, մեծ գործարաններում ու բուհերում լույս են տեսնում տպագիր թերթեր: Հայերեն լեզվով տպագրվող հանդեսների և պարբերական հրատարակությունների թիվը հասնում է 60-ի: Եվ հասկանալի է, որ այս թերթերի ու հանդեսների մեջ մշակվել ու կատարելագործվել է մեր լեզուն որպես մամուլի լեզու, որպես հրապարակախոսության զարգացած լեզու:

Այն, ինչի մասին խոսվեց մինչև այժմ, վերաբերում է մեր լեզվի հասարակական դիրքին ու գործառությանը, նրա զարգացման հասարակական ու մշակութային պայմաններին, այսինքն այն գործոններին, որոնք ապահովել են և ենթանել մեր ազգային լեզվի զարգացումը և գործառությունը: Սակայն լեզվի զարգացում ասելով չի կարելի հասկանալ միայն նրա հասարակական դերի զարգացումն ու ընդարձակումը: Այդ գործոնները, որոնք ապահովել ու ապահովում են լեզվի զարգացումը, այսպես կոչված, արտալեզվական գործոններ են. դրանք հասարակական-քաղաքական ու գործառական այն նախապայմաններն են, որոնք լեզվի կատարելագործման, մշակման ու ներքին զարգացման հնարավորություններ են ստեղծում: Իսկ լեզուն այդ պայմանների մեջ զարգանում ու կատարե-

լագործվում է իր ներքին օրինաչափություններով: Այս տեսակետից նայելով մեր լեզվի զարգացման ընթացքին, առաջին և կարևորագույն նվաճումն այն պետք է համարել, որ նա զգալիորեն նորմավորվել է ու միասնականացել: Տարիների ընթացքում մշակվելով՝ նա ազատագրվել է քերականական կառուցվածքի մեջ բարբառայնության ու գրաբարաբանությունների ներխուժումից /մի բան, որ բնորոշ էր նախասովետական շրջանի գրական լեզվին/, հասել կենսունակ ձևերի ընդհանրացմանն ու միասնականացմանը: Ենթ քսանական թվականներին հոլովման ու խոնարհման համակարգում գործածվում էին այնպիսի զուգահեռ ձևեր, ինչպիսիք են ամսվա, ամսի և ամսյան, ժողովրդի, ժողովրդյան, մահվան, մահի և մահու, թաղամեց և թաղամեցավ, նստեցի, նստա և նստի, սպացի, սպեցի և սպի, ապա այսօր այդ զուգահեռներից հաղթանակել են մեր լեզվի կառուցվածքին հարազատ ու կենսունակ ամսվա, ժողովրդի, մահվան, թաղամեց, սպացի և նման ձևերը: Դրա հետ միաժամանակ մեր լեզուն մշակվել է նաև իր գործառության տարբեր ոլորտներին հատուկ տարբերակներով: Հեղափոխությունից առաջ մենք չունեինք մեր գրական լեզվի գրասենյակային գրագրությունների, վարչադիվանական, դատական-դատախազական, գիտության ու տեխնիկայի տարբեր ընագավառների մշակված լեզվատարբերակներ կամ, ինչպես հաճախ ասում են՝ լեզվաոճեր: Այժմ մեր լեզուն ունի այդ տարբերակները, որոնք պահպանելով իրենց միասնությունն ու ընդհանրությունը, ունեն նաև միայն իրենց հատուկ բնութագրերը /բառապաշար, յուրահատուկ դարձվածաբանություն և այլն, և այլն/: Այդ առանձնահատկությունների, ինչպես և մեր լեզվի ուղղախոսության, ճևաբանական ու շարահյուսական կառուցվածքների մեջ տեղի ունեցած տեղաշարժերի մասին կարելի է երկարորեն խոսել՝ բերելով բազմաթիվ տվյալներ: Սակայն զեկուցման ժամանակը դրա հնարավորությունը չի տալիս, ուստի և կբավարարվեմ մեր գրական լեզվի զարգացումը, մշակումն ու կատարելագործումը առավել ակնառու կերպով բնութագրող բաղադրիչի՝ բառապաշարի հարստացմանը վերաբերող մի քանի տվյալներ բերելով: Ինչպես հայտնի է, Ստեփան Մալխասյանցի բառարանը, որ լույս է տեսել 1944-45 թվականներին, այսպես ասած, համահայկական բառարան է և բովանդակում է մինչև այդ լույս տեսած բոլոր հայերեն բառարանների բառազանծը, թե՛ գրաբարյան ու միջին հայերենյան, թե՛ բարբառային, թե՛ աշխարհաբարյան, այսինքն՝ արևելահայ և արևմտահայ նոր գրական լեզուների: Ըստ հեղինակի հաշվումների, բառարանն ընդգրկում է մոտ 120.000 բառ: Վերջին տասնամյակում լույս տեսան ժամանակակից գրական հայերենի երկու բառարաններ, իմ ,,Արդի հայերենի բացատրական բառարանը,, և

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի քառահատոր բառարանը: Երկու բառարաններն էլ ընդգրկում են 19-20-րդ դարերի հայ գեղարվեստական գրականության, ինչպես և մամուլում և գիտական գրականության մեջ գործածված բառերը՝ բացառելով տեխնիկայի, արտադրության ու գիտության որոշ ճյուղերի խիստ նեղ մասնագիտական բառերը: Արդ, իմ բառարանը բովանդակում է մոտ 136.000 բառ, այսինքն՝ 16 հազար բառով ավելի, քան Մալխասյանցի բառարանը: Ավելի կարևոր է, սակայն, մի այլ վիճակագրական տվյալ: Իմ և Մալխասյանցի բառարանների բառապաշարի համեմատությունը ցույց է տալիս, որ Մալխասյանցի բառարանի 120.000 բառից մեր բառարանի մեջ մտել է 62.000 բառ. դուրս մնացած 58 հազար բառերը նեղ բարբառային և հին բառեր են, որոնք մեր գրականության մեջ չեն գործածվել: Դրանց փոխարեն մեր բառարանն ունի 74 հազար բառ, որոնք չկան Մալխասյանցի բառարանում, իսկ այդ նշանակում է, թե չեն եղել նաև դրանից առաջ հրատարակված հայերեն բառարաններում, այլ կերպ ասած՝ դրանք նոր բառեր են, որոնք մեր լեզվի մեջ կազմվել ու գործածություն են ստացել վերջին 60 տարիների ընթացքում: 74 հազար բառ. դա նշանակում է, թե մեր լեզվի մեջ 60 տարիների ընթացքում ավելացած նոր բառերի թիվն ավելի մեծ է, քան մեր հազար հինգ հարյուր տարիների հարուստ ու բազմաբովանդակ մատենագրության լեզվի՝ զրաբարի ողջ բառապաշարը, ըստ որում մեր մատենագրության մեջ գործածված բառերի թիվը մոտավորապես 60 հազար է: Մնում է ավելացնել, որ իմ բառարանի 136.000 և լեզվի ինստիտուտի բառարանի գրեթե նույն թվով բառերից մոտ 100 հազարը կենսունակ, գործածական բառեր են: Իսկ սա մեր լեզվի զարգացման մակարդակի ամենացայտուն ցուցանիշն է:

Ամեն մի երևույթի զարգացում ինքնին առաջ է բերում զարգացման հետագա ընթացքի որոշակի միտումներ ու նոր սաղմեր՝ դեպի ավելի բարձր մակարդակի, ավելի կատարյալի ներքին ձգտումով, իսկ դրա հետ նաև՝ իր գործունեության, դերի ու գործառության նորանոր ոլորտներ ու նոր պահանջներ: Այդպես է նաև լեզվի զարգացումը: Մեր, արևելահայ գրական լեզվի այժմյան հասարակական դիրքն ու դերը, նրա զարգացման ու գործածականության այժմյան վիճակը առաջադրել են նոր խնդիրներ, որոնց լուծումն էլ կընորոշի մեր լեզվի առաջիկա տասնամյակների զարգացման ուղղությունն ու բովանդակությունը: Այդ խնդիրներից առաջինը, այսպես ասած ներհանրապետականը, կամ ավելի ճիշտ՝ ներմիութենականը /Սովետական Միության ողջ հայության մասշտաբով/՝ մեր ժամանակակից լեզվի գրական ու խոսակցական տարբերակների մերձեցումն է՝ նրանց նույնացման հեռանկարով /մեր խոսքը վե-

ըաքերում է լեզվին, որպես միասնական ու ընդհանուր համակարգի, և ոչ թե տարբեր ոճերին/: 20-30-ական թվականներին առաջնակարգ խնդիր էր գրագիտության տարածումը և դրա միջոցով գրական լեզուն ժողովրդական լայն զանգվածների սեփականությունը դարձնելը, այնպես որ ժողովուրդը ոչ միայն կարդար և հասկանար գրական լեզվով գրվածը, այլև կարողանար խոսել այդ լեզվով: Այդ խնդիրն այսօր արդեն լուծվել է: Ովքեր Երևան քաղաքում են ապրել 20-30-ական թվականներին, նույնիսկ 40-ական թվականներին, նրանք լավ են հիշում, որ հենց Երևանում կարելի էր լսել հայերեն գրեթե բոլոր բարբառները, և բոլորովին էլ տարօրինակ չէ, որ այն ժամանակ Երևան քաղաքը համարում էին հայերեն բարբառների խառնարանը, ըստ որում բարբառները հնչում էին ոչ միայն փողոցներում, շուկայում ու տներում, այլև հասարակական վայրերում՝ ոչ պաշտոնական զրույցների ժամանակ, համալսարանի և ինստիտուտների միջանցքներում, անգամ գիտությունների ակադեմիայի ինստիտուտներում: Այսօր պատկերը բոլորովին փոխվել է: Երևանում այժմ առօրյա հաղորդակցման լեզուն մեր գրական լեզվի խոսակցական տարբերակն է, որ հնչում է ամենուրեք, հիմնարկներում ու ձեռնարկություններում, գիտական և ուսումնական հաստատություններում, փողոցում և տանը: Իսկ դա արդեն ինքնին թելադրում է նոր խնդիր՝ խոսքի մշակույթի բարձրացումը, որի նպատակն է առավելագույն չափով մերձեցնել միմյանց մեր ժամանակակից լեզվի խոսակցական ու գրական տարբերակները: Այս խնդրի լուծումը իրականացվում է զանազան գործնական միջոցներով, որոնցից ես կհիշատակեի ռադիոյի, հեռուստատեսության ու տարբեր կարգի հասարակական միջոցառումների բավականաչափ արդյունավետ դերը:

Մեր լեզվի հետագա զարգացումը, մշակումն ու կատարելագործումը և հասարակական դերի բարձրացումը անխուսափելիորեն այժմ արդեն առաջադրել են մի ավելի կարևոր, համազգային նշանակություն ունեցող հարց, <u>համազգային միասնական լեզվի խնդիրը</u>:

Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը պայմանավորել է ազգային լեզվի երկու տարբերակների, երկու գրական լեզուների գոյությունը հայության երկու հատվածների մոտ: Ազգային լեզվի գոյությունը երկու գրական լեզվի տարբերակային ճեղով ներկա դարաշրջանում, բնականաբար, զգալի դժվարություն է ներկայացնում Սովետական Հայաստանի /ավելի լայն առումով՝ Սովետական Միության/ հայության ու սփյուռքահայության մշակութային կյանքի միասնացման և շատ այլ տեսակետներից: Սփյուռքի հայության և Սովետական Հայաստանի կապերի ամրապնդումն ու առավել սերտացումը թելադրում է մեր ազգային լեզվի միասնացում

և ընդհանրացում, ուստի և այժմ համազգային միասնական գրական լեզվի ձևավորման խնդիրը կարևորագույն հարցերից մեկն է: Մեր արևելահայ գրական լեզուն իր զարգացման այժմյան մակարդակով, իր հասարակական դիրքով, իր գործառական տարբերակների կամ ոճերի մշակված, հարուստ ու կայուն համակարգերով պատմականորեն արդեն իսկ հանդես է գալիս որպես ընդհանուր ազգային լեզու: Սա պատմական իրողություն է և ոչ թե մեր երկու գրական լեզուներից մեկի գերագնահատում, իսկ մյուսի՝ թերագնահատում կամ անտեսում: Հայ ժողովրդի պատմական կյանքն է այսպես դասավորել իրերի ընթացքը: Այս բանը լավ են ըմբռնում սփյուռքահայության առաջադեմ շրջանները և գործնականում նպաստում են այդ գործընթացի ծավալմանն ու զարգացմանը: Առանձնապես նշանակալից է այն, որ ինչպես Սովետական Հայաստանի դպրոցներում ժամանակակից գրական հայերենի ուսուցման հետ միասին անհրաժեշտ գիտելիքներ են տրվում նաև արևմտահայերենի մասին, այնպես էլ սփյուռքում բազմաթիվ դպրոցներում սովորեցնում են նաև արևելահայերենը: Այժմ արդեն մի քանի հայկական զաղութներում արծարծվում է արևելահայ լեզվով թերթերի հրատարակության հարցը, որը հավանաբար գործնական լուծում և իրականացում կստանա մոտիկ ապագայում: Այս և մի շարք այլ միջոցառումներ, որոնք ծեռնարկվել են սփյուռքում, բնականաբար, բարենպաստ պայմաններ են ստեղծում մեր երկու գրական լեզուների միավորման ու միասնականացման համար, մեր լեզվի, դեպի համազգային լեզու զարգանալու ճանապարհին և այդ հեռանկարի իրականացման համար:

Հայերենագիտական այս համաժողովի Սովետական Հայաստանում հրավիրվելը շատ խորհրդանշական է իր զուգադիպությամբ մի մեծ իրադարձության՝ Սովետական Միության կազմավորման 60-ամյակի հետ: Իմ զեկուցումն էլ, նվիրված մեր լեզվի զարգացման, հասարակական դերի ու հեռանկարի համառոտ լուսաբանությանը, ըստ էության ցուցադրումն է Սովետական Միության կոմունիստական կուսակցության ու Սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության և դրա վիթխարի նշանակության՝ ինչպես սովետական մյուս ժողովուրդների, այնպես էլ մեր ժողովրդի ազգային մշակույթի ու ազգային լեզվի զարգացման գործընթացի համար: Մեր ազգային լեզվի ակունքները թաղված են խոր հնադարում: Մեսրոպ Մաշտոցի վառած լուսավոր ջահը՝ հայոց գրերի ստեղծումով, հայ մատենագրության հիմնադրումով ու դասական հայերեն գրական լեզվի ձևավորումով լուսավորել է հայ ազգի ողջ պատմական ուղին: Պետականությունից զրկված, մասնատված, արտազաղթերի ու կոտորածների ենթարկված հայ ժողովուրդը իր ինքնուրույն, նոր տիպի

պետականությունն ստեղծեց Մեծ Հոկտեմբերի շնորհիվ, վերստացավ իր հայրենիքը և բոլոր հնարավորություններն ստեղծեց մեր ազգի ոչ միայն պահպանման, այլև վիթխարի թափով զարգացման համար: Հայաստան երկիրը վերածնվեց, կրկին դարձավ իսկական Հայաստան աշխարհ, և Սովետական Միության կազմում, Սովետական բոլոր ազգերի հայրենիքների հետ միասին պիտի Հայաստան մնա,

Մինչև արևը սառչի և ցուրտ աճյունը նրա
Ձյունե համայն ազգերի հայրենիքների վրա:

Մ.Ե. ԱՄԱՏՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բարձրացած լինելով Արարատյան բարբառի հիմքի վրա՝ արևելահայ գրական լեզուն, համենայն դեպս, չի նույնանում Արարատյան բարբառին և նրանից տարբերվում է իր բառապաշարային, հնչյունական ու քերականական որոշակի առանձնահատկություններով, ուստի և կարիք է զգացվում հատուկ զբաղվելու արևելահայ գրական լեզվի համակարգի քննությամբ և սահմանազծելու, առանձնացնելու ու բնորոշելու գրական լեզվի՝ բուն բարբառից և այլ աղբյուրներից՝ հատկապես գրաբարից եկող բաղադրիչները:

Նախ մի քանի խոսք բառապաշարի մասին: Բառապաշարային տեսակետից ամենակարևոր երևույթն այն է, որ բարբառից գրական լեզվին անցնելու ծանապարհին մերժվում և գրաբար կամ նորակազմ հայերեն բառերով են փոխարինվում օտար, առանձնապես թուրք-պարսկական նոր փոխառությունները: Նկատի ունենալով հատկապես արևմտյան բարբառները՝ Հ. Աճառյանը գրում է. ,,Մենք գիտենք, թե ինչպիսի՛ անկանոնության էր հասած հայերենը այդ ժամանակ: Պոլսի և մի շարք վայրերի ժողովրդական լեզուն արժանի չէր կրելու լեզու անունը: Նա մի ժարգոն էր, թուրքական ժարգոն, որ զզվանք էր պատճառում ընդհանուր մարդկանց: ... Պոլսի բարբառում թուրքերեն բառերի թիվն էր 4000,,[1]:

Եթե մի կողմից լեզվից վտնդվում են թուրք-պարսկական փոխառությունները, ապա մյուս կողմից հայերեն են թարգմանվում եվրոպական գիտական բառերը, որոնք մյուս լեզուներում ընդհանուր են, ինչպես՝ գեոմետրիա ,,երկրաչափություն,, , արիֆմետիկա ,,թվաբանություն,, , ֆիզիոլոգիա ,,բնախոսություն,, , տելեգրաֆ ,,հեռագիր,, և այլն:

Այս բոլորի արդյունքն այն է լինում, որ, ինչպես գրում է Ա. Այտընյանը՝ ,,Այսօր աշխարհում քիչ կա այնպիսի մի լեզու, որ իր սեփական տարրերով կազմված լինի, որքան արևմտահայ գրական լեզուն,,[2]:

Արևմտահայ գրական լեզվում դրսևորված այս երևույթները, թեկուզ և ոչ այնքան արմատական ձևով, դրսևորվում են նաև արևելահայ

գրական լեզվում: Վերջինումս ևս լեզվից վտարվում են թուրքական փոխառությունները, որոնք Արարատյան բարբառում, միշտ է, Պոլսի բարբառի համեմատությամբ այնքան էլ շատ չեն, բայց և այնպես կազմում են մի պատկառելի քանակ՝ Հ. Աճառյանի կարծիքով մոտ 800 բառ: Մյուս կողմից՝ չնայած որ ոչ արևմտահայերենի նման հետևողականորեն, համենայն դեպս արևելահայերենում ևս, որպես կանոն, հայերենի են թարգմանվում եվրոպական գիտական անվանումները:

Սակայն ավելի կարևորը բառաժևերի ընտրության հարցն էր: Բանն այն է, որ գրաբարյան շրջանից սկսած մինչև 19-րդ դարը մեր լեզուն փոփոխության ու զարգացման 1500-ամյա մի ժամանակամիջոց էր անցել: Այդ երկարատև ժամանակաընթացքում քերականական ձևերի փոփոխության հետ միասին փոխվել էին նաև բառերի ձևերը հայերենի բոլոր բարբառներում, դրանց թվում նաև Պոլսի և Արարատյան բարբառներում: Բնականաբար մեր նոր գրական լեզուների ակունքների մոտ կանգնած գրողների համար երկընտրանք կարող էր առաջանալ՝ գրական լեզուներում ընդունել բառերի բարբառայի՞ն, փոփոխվա՞ծ ձևերը, ասենք, հեր//հայր, մեր//մայր, լիս//լուս, ձին//ձուն, Ֆոտ, Ֆոքի, հաղալ և այլն, թե՞ դիմել հին լեզվին և բարբառային ձևերը կաղապարել գրաբարյան ձևերի հիման վրա:

Մենք գիտենք, որ 19-րդ դարի կեսերին և՛ արևելահայ, և՛ արևմտահայ գրական լեզուների համար այդ հարցն արդեն վճռված էր, և, եթե կարելի է այսպես արտահայտվել, հաղթել էր գրական լեզվի մշակման գրաբարամետ ուղղությունը, թեև բարբառամետ ուղղությունը 19-րդ դարի 50-ական թվականներից և՛ առաջ, և՛ հետո զեղարվեստական գրականության մեջ հաջող թե անհաջող փորձեր էր կատարում գրել կամ գուտ բարբառով, կամ, համենայն դեպս, գրական լեզուները հնարավորին չափ մոտեցնել իրենց բարբառային հիմքերին:

Քննելով արևմտահայ գրական լեզվի կազմավորման հարցը՝ Հ. Աճառյանը նշում է, որ քերականությունը վերցվեց Պոլսի բարբառից, լեզվից վտարվեցին թուրքերեն փոխառությունները, իսկ բառերի ձևերի համար դիմեցին գրաբարին և նրա համեմատ մաքրեցին գրական լեզուն, այսինքն՝ բարբառային ձևափոխված բառերը կրկին իրենց հին, ,,մեռած,, ձևերին վերածեցին: Անդրադառնալով արևելահայ գրական լեզվի կազմավորմանը՝ Հ. Աճառյանը գրում է. ,,Այստեղ աշխատանքը տարվեց միշտ նույն ճևով ու ծրագրով, ինչպես արևմտահայ գրականի համար: Քերականությունը վերցվեց բարբառից, օտար բառերը վտարվեցին, և հայերեն բառերը վերածվեցին իրենց գրաբար ձևին,,[3]:

Այս հարցը այլ տերմինաբանությամբ, բայց համարյա նույն ճևով

է ներկայացնում նաև Գ. Սևակը: Ջարգացնելով այն դրույթը, թե արևվելահայ գրական լեզվի շենքը կառուցված է երկու հիմնական սյուների վրա, որոնցից մեկը բարբառայինն է՝ ժողովրդականը, իսկ մյուսը՝ գրաբարը, ավանդականը՝ նա գրում է. ,,Անվիճելի է, որ մեր լեզվի ներքին բովանդակային կողմը, այն, ինչ կարելի է համարել լեզվի ոգի, հիմնականում ժողովրդական է, և նրան մոտեցնում է բարբառներին: Նույնքան անվիճելի է, որ մեր լեզվի արտաքին նյութական կողմը, կամ այն, ինչ կարելի է լեզվական Ֆակտուրա անվանել, գրաբարյան է, և դրանով մեր լեզուն հակադրվում է բարբառներին,,[4]:

Հ. Աճառյանի և Գ.Սևակի քննութազրումներից կարող է ստեղծվել այն սխալ պատկերացումը, թե արևմտահայ ու արևելահայ գրական լեզուներում բառերի հնչման տեսակետից կատարվել է ընդհանուր ետաշրջում, և հայերեն բառերը վերածվել են իրենց 1500 տարի առաջ գոյություն ունեցող ձևերին: Մի կողմ թողած այն հարցը, թե այսպիսի ետաշրջումը տեսականորեն արդյոք հնարավո՞ր էր, այստեղ նշենք միայն, որ, ասենք, սիրել_է, բերել_է /և ոչ թե սիրյալ_է, բերյալ է/, բարձրացնել, մեծացնել /և ոչ թե բարձրացուցանել, մեծացուցանել/, գտնել, մեռնել /և ոչ թե գտանել, մեռանել/, ձուկ, հարս /և ոչ թե ձուկն, հարսն/, երգ, եղ, օր, օրք/, սուրբ, մարդ, արշ /և ոչ թե [սուրբ], [մարդ], [արշ]/ և նման ամբողջ համակարգ կազմող ձևերը բավական են համոզվելու, որ մեր գրական լեզվի բառերի ձևերի մասին արտահայտված դրույթները մի զգալի չափով ծիշտ չեն արտացոլում նրանց ռևալ ակունքների իրական պատկերը:

Հարցը դնելով այս ձևով՝ միաժամանակ պետք է նշել նաև այն,որ արևելահայ գրական լեզվի բառերի մի զգալի մասը իրոք որ գրաբարյան կերպարանք ունի: Սակայն արևելահայ գրական լեզվի և գրաբարյան բառերի ձևերի նույնությունը դեպքերի մեծամասնության մեջ ոչ թե անմիջական է, այլ միջնորդավորված է Արարատյան բարբառով: Դրա համար բերենք միայն երկու հասարակ օրինակ: Եթե այսօր արևելահայ գրական լեզվում ունենք երեսն, պատ և ոչ թե, ասենք, պերսան//փերսան կամ երդ ձևերը, ապա դրանք ոչ թե գրաբարյան փոխառության կամ ազդեցության, այլ Արարատյան բարբառի կենդանի արտասանության արդյունք են: Դրանում հաստատ համոզվելու համար հիշենք, որ այդ բառերը արևմտահայերենում փերսան և երդ ձևերն ունեն, և գրաբարն անզոր է եղել ազդելու, որ այդ բառերը արևմտահայերենում ստանան գրաբարյան կերպարանք: Հասկանալի է, արտասանության և ոչ թե գրության մեջ:

Մեր բարբառների և գրաբարի բառերը իրարից մի զգալի չափով տարբերվում են շեշտի պատճառով կատարված սղումներով:

Ինչպես հայտնի է, շեշտի դիրքի տեսակետից հայերեն բարբառները բաժանվում են երկու խմբի՝ վերջաշեշտ և հարաշեշտ բարբառների, ինչպես՝ հարսանի՛ք և հարսա՛նիք: Մեր բարբառների շեշտադրության այս տարբերությունը պատճառ է հանդիսացել բառերի տարբեր ծևափոխությունների: Վերջաշեշտ բարբառների մեջ, որպես կանոն, սղվում կամ ը-ի են վերածվում վերջընթեր վանկի ծայնավորները, ինչպես՝ հաըսանի՛ք, ըսկսանել, իսկ հարաշեշտ բարբառների մեջ՝ վերջընթեր վանկից առաջ ընկած ծայնավորները, ինչպես՝ հըրսանի՛ք, ըրսկսանել:

Հայտնի է, որ Արարատյան բարբառի շեշտն ընկնում է նախավերջին վանկի ծայնավորի վրա, և ըստ այդմ էլ, դատելով տեսականորեն, նա պետք է երևան հաներ հնչյունափոխության այս երկրորդ տեսակը՝ ունենալով, ասենք, հըրսանի՛ք, ըրսկսանել և այլ ծևերը: Սակայն իրականում այսպես չէ: Բանն այն է, որ Արարատյան բարբառի շեշտն անհամեմատ ավելի թույլ է, քան, ասենք, մեր եզերական բարբառների /Ղարաբաղի, Լոռու/ շեշտը: Եվ ահա՝ շեշտի թույլ լինելու հետևանքով Արարատյան բարբառը համեմատաբար ազատ է մնացել շեշտից առաջ կատարվող սղումներից և այդ իսկ պատճառով էլ նա շատ բարբառների համեմատությամբ ավելի անաղարտորեն է պահպանել գրաբարյան շատ բառերի հնչյունական կերպարանքը, օրինակ՝ հարսանիք, մոտենալ, վախենալ, խորովել, շատանալ և այլն:

Արարատյան բարբառում վերջընթեր վանկի շեշտադրությունը ազդել է վերջին վանկի վրա, որի ու ծայնավորը ներգոյական հոլովի ծևերում և անկատար դերբայներում խոսվածքների մեծ մասում վերածվել է ը-ի, օրինակ՝ դաշտըմ, բակըմ, վագըմ, եմ, ասըմ եմ և այլն: Այսպիսի փոփոխությունները արևելյան գրական լեզվում ընդունված չեն:

Այժմ անցնենք Արարատյան բարբառի և արևելահայ գրական լեզվի ծայնավորական համակարգերի համեմատական քննությանը:

Ձայնավորների կողմից Արարատյան բարբառը, եթե կարելի է այսպես արտահայտվել, մեր ,,ամենամաքուր,, բարբառներից մեկն է: Ունենալով 6 ծայնավոր՝ ա, օ, ու, է, ի, ը՝ Արարատյան բարբառի ծայնավորական համակարգը նույնանում է արևելահայ գրական լեզվի ծայնավորական համակարգի հետ: Արարատյան բարբառում ընդհանրապես չկան շատ բարբառներում տարածված ա, ö, ո՛ բմային ծայնավորները և ե երկբարբառակերպը: Ինչ վերաբերում է շատ բարբառներում տարածված ո երկբարբառակերպին, ապա այն կա նաև Արարատյան բարբառի

որոշ խոսվածքներում /Աշտարակ, Լոռի և այլն/: Սակայն բուն Երևանում ը-ի երկբարբառացում հավանաբար չի եղել, կամ եթե եղել է, ապա գրական լեզվում չի ընդունվել:

Առանձին պետք է խոսել գրաբարյան ե և ո ծայնավորների՝ բառասկզբում կրած փոփոխությունների մասին:

Ինչպես ուրիշ շատ բարբառներում, այնպես էլ Արարատյան բարբառում գրաբարյան միավանկ բառերի սկզբի ե ծայնավորից առաջ ավելացել է յ հնչյունը, օրինակ՝ յէգ, յէս, յէրք, իսկ ո ծայնավորից առաջ՝ վ հնչյունը, օրինակ՝ վօշ, վօսպ, վօտ, վօրփ և այլն: Ուղղագրական տարբերությունները հաշվի չառած՝ այս և նման բառերը նույն տեսքով ու հնչյունական կերպարանքով մտել են արևելահայ գրական լեզվի մեջ:

Ինչ վերաբերում է բազմավանկ բառերի բառասկզբնային ե և ո ծայնավորներին, պետք է նշել, որ գրաբարի համեմատությամբ Արարատյան բարբառը երևան է հանում ե > է, օրինակ՝ ելաց > էլաց, ելես > էլես, ե > յէ, օրինակ՝ երկիր > յէրգիր, երկայն > յէրգար, ո > օ, օրինակ՝ ոլոր > օլոր, ողորմի > օղորմի, ո > վօ, օրինակ՝ ոսկի > վօսկի, ոզի > վօզի՝ փոփոխությունները: Գրական լեզվում, առանց բացառության, ընդհանրացել են ե > յէ և ո > վօ փոփոխությունները:

Մյուս ծայնավորների փոփոխությունների տեսակետից Արարատյան բարբառը և արևելահայ գրական լեզուն քիչ թե շատ նշանակալից տարբերություններ երևան չեն հանում, ուստի և ծայնավորների մասին բավարարվելով այսքանով՝ անցնենք գրաբարյան երկբարբառների փոփոխություններին:

Ինչպես հայտնի է, գրաբարյան երկբարբառները հայերենի բարբառներում ընդհանրապես վերացել են՝ վերածվելով պարզ ծայնավորների: Դրանք պարզ ծայնավորների են վերածվել նաև Արարատյան բարբառում, ինչպես՝ այ > է՝ հայր > հէր, մայր > մէր, լայն > լէն, ոյ > ի//ու՝ լոյս > լիս, զօրոյց > զօրից, ձոյլ > ձիւ//ձուլ, եւ > ի//ու՝ ալեւր > ալիր, աբեւն > աբին, հարեւր > հարիր//հարուր, սեւն > սին//սուն, եա > է՝ լեառն > լէռն, ցօրեան > ցօրէն, զրեայց > զրէց, աւ > օ՝ աւձ > օձ, կարաւտ > կարօտ, արաւտ > արօտ և այլն:

Ինչպես հայտնի է, արևելահայ գրական լեզվում /նաև արևմտահայերենում/ գրաբարյան երկբարբառները ոչ թե վերածվել են պարզ ծայնավորների, այլ այսպես կոչված երկհնչյունների՝ 'ծայնավոր + յ կիսաձայն' կամ 'յ կիսաձայն + ծայնավոր' կապակցությունների, ինչպես՝ հայր > հայր, ձիւն > ձյուն, լոյս > լույս, մատեան > մատյան և այլն: Եվ ահա, հնչյունական տեսակետից գրաբարյան երկբարբառների հնչյու-

նպիսական այսպիսի դրությամբ է, որ արևելահայ գրական լեզուն սար-
քերվում է իր խոսակցական հիմքից՝ Արարատյան բարբառից՝ բառերի իր
ճևով ու արտասանությամբ մոտենալով գրաբարին:

Տեսականորեն կարծես թե անհավանական, լեզուների պատմության
մեջ գուցե և իր նմանօրինակը չունեցող այս երևույթը բացատրվում
է նրանով, որ գրաբարը որպես գրավոր-գրական լեզու սկզբում միջին
հայերենին, իսկ ապա աշխարհաբարին զուգընթաց կենդանի էր ընդհուպ
մինչև 19-րդ դարի կեսերը՝ դարեդար ուսուցանվելով հայկական դըպ-
րոցներում, հնչելով եկեղեցիներում ու կրոնավորների խուցերում և,
այսպիսով, հատկապես արտասանական-հնչյունական տեսակետից կրելով
որոշակի փոփոխություններ, որոնք մի կողմից արտացոլում էին հենց
իր՝ գրաբարի, որպես գրական լեզվի, ներքին զարգացումը, իսկ մյուս
կողմից՝ կենդանի խոսակցական լեզվի արտասանության գոնե ամենաէա-
կան կողմերը:

Խոսքը մասնավորելով գրաբարյան երկբարբառների մասին՝ պետք է
նշել, որ դրանք գրաբար գրական լեզվում վերածվել էին երկհնչյուն-
ների, և, ասենք, գրաբարյան հայը, մայը, ծիւն, սիւն, լոյս, քոյը
և նման ձևերը 19-րդ դարում և նրանից շատ առաջ էլ գրաբարյան տեքս-
տերում արտասանվում էին հայը, մայը, ծյուն, սյուն, լույս, քույը
և ոչ թե՝ հեը//հաը, մեը//մաը, ծին//ծուն, սին//սուն, լիս//լուս,
քեը//քույը: ծիշտ է, գրաբարյան երկբարբառների երկհնչյունային ար-
տասանությունը զալիս էր զրքից, բայց և միևնույն ժամանակ լեզվա-
կան ռեալ իրականություն էր, որ կենդանի կերպով գոյություն ուներ
մտավորականության , հայ ժողովրդի զրագետ խավերի լեզվում: Հաս-
կանալի է, որ այսպիսի պայմաններում այդ արտասանությունը ինչ-որ
ճևով կարող էր պատվաստվել և իրոք պատվաստվեց նոր գրական լեզվին:

Ամփոփելով ծայնավորների և երկբարբառների մասին ասվածները՝
կարելի է եզրակացնել, որ հատկապես գրաբարյան երկբարբառները երկ-
հնչյունային արտասանությամբ էր, որ արևելահայ գրական լեզուն, հե-
ղաշրջելով Արարատյան բարբառից, հակվում է դեպի մեզ հին լեզուն՝ ե-
րևան հանելով բառերի գրաբարյան կամ գրաբարամոտ տիպ ու կերպարանք,
որը հատկապես ցայտուն կերպով դրսևորվում է մեր ավանդական /մինչև
1922 թիվը եղած/ ուղղագրության մեջ:

Այժմ անցնենք արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի
բաղաձայնական համակարգերի փոխհարաբերությունների քննությանը:

Հայ բարբառների իրարից և գրաբարից ունեցած բաղաձայնական
հիմնական տարբերությունները հատկապես ցայտուն ու ակնառու դրսե-

վորվում են պայթական բաղաձայնների համակարգի մեջ, ուստի և մեր քննութ յունն սկսենք Արարատյան բարբառի և արևելահայ գրական լեզվի պայթական բաղաձայնների համակարգերի համեմատական վերլուծությամբ:

Ինչպես հայտնի է, Արարատյան բարբառի ամենաբնորոշ առանձնահատկութ յուններից մեկն այն է, որ նրա հիմնական խոսվածքներում նկատվում է բառասկզբնային ծայնեղ պայթականների շնչեղ ծայնեղացում, ինչպես՝ քըըան > ք՛ըըան, գաղն > գ՛աղն, դուղն > դ՛ուղն, ծուղ > ծ՛ուղ, ջուղը > ճ՛ուղը և այլն: Արևելահայ գրական լեզվում պայթական ծայնեղների շնչեղ ծայնեղացում գոյութ յուն չունի: Ունենալով եռաստիճան անտեղաշարժ, զրաբարատիպ բաղաձայնական համակարգ, արևելահայերենը այս կետում տարբերվում է իր բարբառային հիմքից՝ Արարատյան բարբառից, որն ունի քառաստիճան բաղաձայնական համակարգ: Ուրեմն՝ բարբառից գրական լեզվի անցման ծանապարհին փոխվել է Արարատյան բարբառի բառասկզբնային շնչեղ ծայնեղների արտասանութ յունը, և նրանք վերածվել են պարզ ծայնեղների: Այս բանը հնարավոր է դարձել, որովհետև Արարատյան բարբառում շնչեղ ծայնեղները առանձին, ինքնուրույն հնչութ յուններ չեն, իմաստազատիչ դեր չեն կատարում և սոսկ պարզ ծայնեղների արտասանական տարբերակներն են բառասկզբում:

Այժմ պայթական ծայնեղների բառամիջի և բառավերջի արտասանութ յան մասին: Ինչպես հայտնի է, հայերենի համարյա բոլոր բարբառներում ծայնեղ պայթականները բառամիջում և բառավերջում միջծայնավորային դիրքում, ծայնավորներից հետո և ը, ո ծայնորդներից հետո վերածվել են շնչեղ խուլերի: Այս նույն փոփոխութ յունն է տեղի ունեցել նաև Արարատյան բարբառում: Հասկանալի է, որ Արարատյան բարբառի հիմքի վրա բարձրացած արևելահայ գրական լեզուն պետք է որ արտացոլեր այս երևութ յունը: Եվ, իրոք, Արարատյան բարբառի արտասանութ յանը համահնչուն՝ արևելահայ գրական լեզվում ը, զ, դ, ծ, ջ ծայնեղ պայթականները վերոհիշյալ դիրքերում վերածվում են փ, ք, թ, ց, չ շնչեղ խուլերի՝ հատկապես կենդանի խոսակցական լեզվից եկող, ժողովրդի բերանում ամենօրյա հնչում ունեցող բառերում, օրինակ՝ սուըը_=_սուըփ, խաբել_=_խափել, հոգի_=_հոքի, կարագ_=_կարաք, աըդաը_=_աըթաը, վաըդ_=_վաըթ, խուըծ_=_խուըց, օծ_=_օց, աըջ_=_աըչ, աղաջ_=_աղաչ և այլն:

Այժմ անցնենք պայթական խուլերի արտասանութ յանը: Ուսումնասիրութ յունները ցույց են տալիս, որ Արարատյան բարբառում ընդհանրապես գրաբարյան պ, տ, կ, ծ, ճ խուլերը բառամիջի և բառավերջի դիրքերում արտասանական երկակիութ յուն ունեն այն իմաստով, որ բա-

ոների մի մասում միևնույն դիրքերում վերածվում են ձայնեղների, ինչպես՝ ացատ>ազատ, ակօս>ագօս, գործ>գօծ, երեկ>էրէգ, դաստել>դաստէլ, ժուկն>ժուգ, փայտ>փէդ, շէկ>շէգ, գորտ>գօդդ և այլն, իսկ մի մասում մնում են անփոփոխ՝ պահելով իրենց հին արտասանությունը, օրինակ՝ ածել>ածէլ, ատամ>ատամ, խոտ>խօտ, կապ>կապ, կրակ>կրակ, մածուն>մածուն, մատ>մատ, ոտն>վօտ, կատու>կատու, պարապ>պարապ և այլն:

Իսկ ի՞նչ դիրք է բռնում արևելահայ գրական լեզուն այս հարցում: Խուլ պայթականների արտասանության տեսակետից արևելահայ գրական լեզուն տարբերվում է իր բարբառային հիմքից, և դա արտահայտվում է նրանում, որ արևելահայ գրական լեզվում ո՛չ ձայնավորներից հետո, ո՛չ միջձայնավորային դիրքերում և ո՛չ էլ ձայնորդահաջորդ դիրքերում ընդհանրապես խուլերի ձայնեղացում չի նկատվում, օրինակ՝ պատ, կերակուր, ածել, իրիկուն, գիտեմ, ժուկ, երկիր, ամպ, ընկեր, երկար և այլն: Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի արտասանական այս տարբերությունը երևի հնարավոր է դարձել այն պատճառով, որ հենց Արարատյան բարբառում էլ խուլ պայթականների ձայնեղացումը, ինչպես տեսանք, չի ներկայանում որպես մի հետևողական և ամբողջական համակարգ:

Եվ վերջապես, արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի բաղաձայնական համակարգերի փոխհարաբերությունները քննելիս չի կարելի աչքաթող անել նաև բարբառում դրսևորվող՝ բաղաձայնների ոչ համակարգային, մասնակի փոփոխությունները, որոնք գրական լեզվում չեն ընդունված: Դրանցից են՝ գ, կ, ք ետնալեզվային պայթականների քմայնացումը է և ի առաջնալեզվային ձայնավորներից առաջ, օրինակ՝ գիր>գյիր, կերա>կյէրա, քնդի>քյէնդի, քիչ>քյիչ և այլն, բառասկզբնային հ բաղաձայնի վերածումը ֆ-ի ը ձայնավորից առաջ, օրինակ՝ հոգի>ֆօքի, հող>ֆօդ և այլն, բառասկզբնային խ-ի փոփոխությունը հ-ի, երբ բառի մեջ հաջորդ բաղաձայնը ղ է, օրինակ՝ խաղալ>հաղալ, խաղող>հավօդ//հաղօդ, շատ խոսվածքներում ձայնավորով սկսվող մի շարք բառերի սկզբում ձայնեղ յ հազագի հավելումը, օրինակ՝ ակօս>յագօս, ակն>յագ, ընտրել>յընդրել և այլն, ան>ննն փոփոխությունը, ինչպես՝ ոտները>վօննէը, գետնին>գէննին և այլն, բառամիջի որոշակի դիրքերում դրսևորվող ր>ղ փոփոխությունը, օրինակ՝ արդար>առթար, գործ>գօծ, դատարկ>դադդագ, լերը>լեղք, տարան>տաղս, որը>վօղք և այլն:

Արարատյան բարբառի ազդեցությա՞մբ, թե՞ սեփական ներքին ինքնազարգացմամբ արևելյան գրական լեզվում ևս այս ը>ղ փոփոխու-

ի յունը առանձին բառերում դրսևորվում է, օրինակ՝ մարդ>մարդի, վերջ>վերուչ, ցուրտ>ցուրտի, արծաթ>արծաթի, արծիվ>արծիվի, արջ>արուչ, բարձ>բարձի, սակայն զրական լեզվի ուղղախոսությամբ այսպիսի արտասանությունները մերժվում են, և զրական լեզվի նորման այն է, որ բերված և նման բառերը պետք է արտասանվեն ը-ով:

Այսքանից հետո ո՞րն է ընդհանուր եզրակացությունը: Դա հստակ ու համառոտ կարելի է ձևակերպել այսպես՝ արևելահայ գրական լեզվի հնչյունական համակարգի հիմքը Արարատյան բարբառի հնչյունական համակարգն է կամ, որ նույնն է՝ արևելահայ գրական լեզվի հնչյունական գլխավոր ու էական առանձնահատկությունները գալիս են Արարատյան բարբառից:

Այս եզրակացությունը հաստատվում է նաև արևելահայ գրական լեզվի և հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համար Գ. Ջահուկյանի կողմից որպես հիմք ընդունվող հնչյունական 50 զուգաբանությունների համեմատությամբ: Այսպես՝ մեր հաշվումներով արևելահայ գրական լեզուն Արարատյան բարբառի գլխավոր խոսվածքներից՝ Երևանից և Էջմիածնից տարբերվում է 9 հնչյունական հատկանիշով: Նույնքան հատկանիշներով է տարբերվում նաև Թիֆլիսի բարբառից, որովհետև վերջինս հնչյունաբանորեն շատ մոտ է Արարատյան բարբառին: Բայց ահա արևելահայ գրական լեզուն բարբառների նույն արևելյան խմբակցությանը պատկանող Խոյի բարբառից տարբերվում է 17, իսկ Ղարաբաղի բարբառից /Գորիսի խոսվածք/ 22 հնչյունական հատկանիշով:

Նշենք նաև, որ համարյա նույն արդյունքն է տալիս նաև արևելահայ գրական լեզվի և վերոհիշյալ բարբառների ձևաբանական զուգաբանությունների համեմատությունը, այսինքն՝ ձևաբանորեն ևս արևելահայ գրական լեզուն ամենից մոտ կանգնած է Արարատյան բարբառին:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ.2, Ե.,1951,էջ 471:
2 Ա.Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի , Վիէննա,1866,էջ 237:
3 Անդ, էջ 498:
4 Գ.Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե.,1955,էջ 68:

Տ.Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՀԱՑԿԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ազգանունը շատ ժողովուրդների մոտ ընդունված անձի անվանման եռանդամ բանաձևի բաղադրիչներից մեկն է: Այն սահմանվում է հետևյալ կերպ. ,,Անձի՝ որևէ գերդաստանին պատկանելը ցույց տվող, ժառանգաբար անցնող պաշտոնական անվանում,,[1]:

Ազգանունների ձևավորման ընթացքը բավականին երկարատև է եղել և կապվել է առաջին հերթին հասարակության զարգացման ավելի բարձր աստիճանի հետ: Ազգանունների առաջացման համապատասխան պայմանները[2] հասունացել են միայն այն ժամանակ, երբ անվանման բազմազան ձևերը այլևս չէին բավարարում անհատին ներկայացնելու համար և աստիճանաբար տեղի էին տալիս եռաբաղադրիչ, այսօր ընդունված ձևին, ուր վերջնական դերը պատկանում է ազգանվանը:

Հայ իրականության մեջ ազգանունների զանգվածային առաջացումը կապվում է 19-րդ դարի առաջին քառորդի և հատկապես 30-ական թվականների հետ: Այդ շրջանում Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից կատարված ներգաղթերը հնարավորություն տվեցին անվանման բանաձևերի միասնականացման ընագավառում կատարվող տեղաշարժերի մեջ ներառել նաև մեր ժողովրդի այդ հատվածները: 30-ական թվականների կեսերից մինչև 60-ականի վերջերը հայերի անվանման բանաձևերն անցնում են վերաիմաստավորման մի փուլ, և այս շրջանի վերջում տոհմանվան հիմքի վրա երևան է գալիս ազգանունը իբրև մարդանվանական նոր երևույթ: Նկատվում են ազգանվան կազմության զուգահեռ ձևեր -եան_/-յան/ և -եանց_/-յանց/ածանցներով և, սրա հետ կապված, զգալի անորոշություն ու շփոթ, որի հետևանքով տոհմանուն-ազգանուն անցման ժամանակ երբեմն՝ ոչ հայկական -ով ածանցի օգտագործում: Օրինակ՝ Սահակ Մելիքեան, Գրիգոր Մանուչարեան, Բարսեղ Գեղամեան և Սահակ Սանդրոսով, Օվագիմ Խեչիքաբով, Աղալո Էնակոլոփով և այլն: Աստիճանաբար դրվում են այսօրվա եռաբաղադրիչ բանաձևի հիմքերը: Վերը նշված զուգահեռ ձևերը վերանում են: Որոշակի բաշխում է նկատվում -յան և -յանց ածանցների համար, առաջինը՝ հայրանուն, երկրորդը՝ գերդաս-

տանի անուն, ապա ազգանուն կազմելու համար: Օրինակ՝ Մովսես Զաքարեան Արղուեթանց, Խաչատուր Լազարեան Եղիազարեանց, Գևորգ Մելիքսեդեկեան Խուպովեանց և այլն: Նույն ժամանակ, կապված ազգանվան, իբրև ամենակարևոր բաղադրիչի հաստատման ու քաղաքացիություն ստանալու հետ, միտում է նկատվում այն ձևավորելու -յան ածանցի օգնությամբ:

Ավելորդ չենք համարում նշել, որ հայկական գաղթօջախներից հատկապես Գեռլա կամ Արմեննվարոշ քաղաքում 18-րդ դարի երկրորդ կեսից սկսած անծնանվան բանաձևերում հանդիպող հայրանուն, տեղանուն, մականուն /զբաղմունքի անուն/ բաղադրիչներն անցնում են մարդանունների ավելի բարձր՝ տոհմանվան կարգը, ազգանուն դառնալու հետագա միտումով՝ Ղազար Օհաննանց, Լուսիկ Օսգերիչեանց, Դստեր Վարդիկեանց, Մելքոն Նաշքարեանց, Նիկոլ Ծիրաքեանց և այլն:

Այս շրջանում Արևմտյան Հայաստանի վիճակը ներկայացնում ենք, ելնելով Գ.Սրվանձտյանի կազմած վիճակագրական տվյալներից, որոնք արտացոլում են անցյալ դարի 60-ական թվականները: Այդ հեղինակի մոտ ներկայացվող ցուցակները անվանման բանաձևերի բաղադրիչների կառուցվածքի առումով բավականին կանոնավոր տեսք ունեն: Եվ եթե հիշենք Հ.Աճառյանի վկայությունն այն մասին, որ միայն անցյալ դարի 80-ական թվականներին էր, որ Կ.Պոլսում աշխատում էին ազգանուններ ստեղծել, ապա կարելի է առանց վարանելու ասել. Արևմտյան Հայաստանում զավառն ազգանուն ընդունելու հարցում առաջ էր անցել մեծ քաղաքներից: Վերջիններս երկար ժամանակ բավարարվում էին արհեստների անուններից -չի /-ջի, -ճի/ ածանցի օգնությամբ կազմվող բաղադրիչներով՝ Գուլումճի, Օթուրաքճի, Մինթանճի, Քավուքճի և այլն, մինչդեռ Սրվանձտյանի մոտ հանդիպում են՝ Հովասափյան, Այվազյան, Մկրտչյան, Փաստրմաջյան, Դեմիրճյան և այլն: Հաշվի առնելով հայկական ազգանունների ձևավորման առանձնահատկությունները, հին ու նոր գաղթօջախների առկայությունը և նրանց ընձեռած փաստերը, գտնում ենք, որ պետք է որոշակիորեն սահմանազատել ,,հայկական ազգանուն,, և ,,հայոց ազգանուն,, ըմբռնումները:

Հայկական ազգանուն ասելով հասկանում ենք այն միավորները, որոնք ձևավորված են գլխավորապես -յան, ինչպես նաև -ունց,-ունի, -յանց ածանցներով, որոնցից առաջ ընկած հատվածը՝ ազգանունական հիմքը, վկայված է հայերի մոտ իբրև անձնանուն, մականուն և սրանց կոչականաձև կամ փաղաքշական տարբերակ: Հայոց ազգանունը, բնականաբար, ավելի ծավալուն է և իր մեջ ներառում է նաև հայկական ազգանունը: Քանի որ վերջինս ընկնելով այլալեզու միջավայր, հաճախ

անմանաչելի է դարձել, ուստի զտնում ենք, որ հայոց ազգանունների հարցն ինքնուրույն և առանձին հետազոտություն պահանջող խնդիր է:

Հայկական ազգանունների սահմանումից երևում է, որ այն մարդանունների շարքի ամենավերջին և կատարյալ դրսևորումն է, քանի որ մյուսները՝ անձնանուն /հայրանուն, մայրանուն, պապանուն/, մականուն /զբաղմունքի անուն, արտաքին կամ ներքին առանձնահատկություն, տեղանուն՝ -ցի ածանցով ձևավորված/, տոհմանուն և այլն, իրենց հիմնական զանգվածով հիմք են դարձել ազգանունների ձևավորման համար: Հայկական ազգանունների համար իբրև առանձնահատկություն պետք է նշել, որ նրանք միշտ նշանակիր են, այսինքն՝ հակադրվում են ազգանունական հիմքին ազգանունակերտ ածանցի առկայությամբ: Դրանցից մեր օրերում միակ արգասավորը -յան ածանցն է, որը նաև ընդհանրական է, քանի որ երբեմն ազգանունակերտ այլ ածանցների հետ օգտագործվում է նաև -յան-ը՝ Մանդակունյան, Մալինցյան, Տատինցյան, Մելիքենցյան և այլն:

Ազգանունական հիմքերին անդրադառնալիս հարկ ենք համարում ամենաընդհանուր ձևով նշել. այն բազմազանությունը, որ առկա էր հայոց անձնանունների ցանկում 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին, իր արտացոլումն է գտել նաև հայկական ազգանունների մեջ: Այս, մենք կասեինք, խայտաբղետությունը առաջին հերթին պետք է բացատրել անունադրության քաղաքականության ավանդական դեմոկրատիզմով: Պետական և հատկապես հոգևոր որևէ մարմին այս բնագավառում զրեթե չի միջամտել, և արդյունքը լավագույնս երևում է Հ. Աճառյանի ՀԱԲ-ում: Փոխառություններ են կատարվել այն բոլոր ժողովուրդներից, որոնց հետ այս կամ այն չափով շփվել են հայերը: Եվ այս բոլորը որոշակիորեն երևան է գալիս հայկական ազգանուններում:

Հայկական ազգանուններն իրենց մնշող մեծամասնությամբ բառական միաժուլ միավորներ են վերջին վանկի վրա ընկնող շեշտով:

Փոքր թվով երկբաղադրիչ ազգանունները ձևավորված են մելիք-ները և մլիքզա նոմենների օգնությամբ և երկշեշտ են, ընդ որում մելիք բաղադրիչին կարող են հաջորդել գլխավորապես փոխառյալ, ինչպես նաև ընիկ անձնանուններ՝ Մելիք-Ալավերդյան, Մելիք-Աղամիրյան, Մելիք-Այվազյան, Մելիք-Ավետիսյան, Մելիք-Գրիգորյան և այլն, իսկ քանի որ մլիքզա և տեր բաղադրիչներով ազգանուն կրողները ուսումնական խավի ներկայացուցիչներ էին, ուստի այդ միավորներին հաջորդում են ընիկ և կանոնական անձնանունները՝ Միրզա-Ավագյան, Միրզա-Պետրոսյան, Միրզա-Պողոսյան, Տեր-Բարսեղյան, Տեր-Գրիգորյան, Տեր-Հովսեփյան և այլն:

Հայկական ազգանունակերտ հիմքերը բաժանվում են երեք խմբի՝ անձնանուն, մականուն և նոմեն:

Վերջինս ընդունում ենք հետևյալ մեկնաբանությամբ. բառապաշարի այն շերտը, որ տեքստում և խոսքի մեջ հանդես է գալիս անունների տարբեր տեսակների հետ: Մասնավորապես մարդանունների հետ դրվում են ազգակցություն ցույց տվող /որդի, հայր, դուստր, եղբայր, կողակից, ամուսին/, տիտղոս և պաշտոն ցույց տվող /իշխան, նահապետ, մարզպան, սեպուհ, տանուտեր, մարաջախտ, պարոն, քալանթար, ինչպես նաև՝ վարդապետ, քահանա, եպիսկոպոս, երեց, տեր, հաջի, մագիստրոս, սարկավագ, մահտեսի/, արհեստներ և զբաղմունք ցույց տվող /ոսկերիչ, գդակակար, կազմող, գիտնական, քարակոնի, հյուսն, խոջա, սհատճի/ և այլ բառեր:

Նշված և մյուս նոմենների մի մասը հիմք է դարձել հայկական ազգանունների համար՝ Պարոնյան, Քալանթարյան, Վարդապետյան, Քահանյան, Եպիսկոպոսյան, Երիցյան, Տերյան, Հաջյան, Սարկավագյան, Մահտեսյան, Վարպետյան, Աղայան, Ոսկերչյան, Հյուսյան, Խոջոյան և այլն: Ազգանունները ազգանվան հիմք կարող են դառնալ ինչպես իրենց ուղիղ ձևով, այնպես էլ կոչական, փաղաքշական, բարբառային և կրճատված տարբերակներով: Այստեղ ևս հարկ ենք համարում ընդգծել, որ նշված խմբի ենթախմբերից միակ արգասավորը առաջինն է, քանի որ այսօր նոր ազգանուններ կազմելիս վերցվում է միայն անձնանվան գրական ձևը: Նշելի է, որ ընդգծված արգասավորություն են հանդես բերում ավելի քան երեք տասնյակ արական անձնանուններ, որոնք և արտացոլում են 19-րդ դարի 30-60-ական թվականների անունադրության միտումները: Շատ տարածված ազգանունների թվին են պատկանում /ըստ նվազող հաճախականության/[3] Հարությունյան-2500, Հովհաննիսյան-2200, Սարգսյան-2100, Գրիգորյան և Թաչատրյան-1950, Հակոբյան-1500, Կարապետյան-1350, Գևորգյան-1300, Վարդանյան և Պետրոսյան-1250, Մանուկյան, Ղազարյան, Մկրտչյան, Ավետիսյան, Մարտիրոսյան-ավելի քան 1000, Մարգարյան, Պողոսյան, Սահակյան, Ստեփանյան, Գասպարյան, Բաղդասարյան-մոտ 1000, այնուհետև՝ Սիմոնյան, Հովսեփյան, Դավթյան, Դանիելյան, Մուրադյան, Հայրապետյան, Գալստյան, Առաքելյան, Ավազյան, Աբրահամյան, Մելքոնյան և այլն[4]: Չնայած մեր դարի 20-30-ական թվականների ազգանունափոխության և, դրա հետ կապված, նկատելի փոփոխություններին՝ հօգուտ անձնանունների գրական ձևերի ներմուծման, այնուամենայնիվ, այսօր էլ մեր ազգանունների մեջ նկատելի թիվ են կազմում անձնանվան կոչական տարբերակից ստեղծվածները: Ընդ որում, որքան տարածված է անձնանունը, այնքան մեծ է հա-

վանականությունը նրանից կոչական տարբերակներ ունենալու, և ոչ միայն կոչական, այլև փաղաքշական և կրճատված, որոնց մասին կխոսվի ավելի ուշ: Հայերենում անձնանվան կոչականը կազմվում է -ե և -ը ձուլյթների օգնությամբ, որոնք ավելանում են անձնանվան՝ բաղաձայնով վերջացող առաջին հատվածին: Այս դեպքում երբեմն տեղի է ունենում ձայնավորների հերթազայություն: Բերենք օրինակներ՝ Հաբոյան, Հարեյան, Հովոյան, Հովեյան, Սաքոյան, Սքեյան, Թեչյան, Թաչոյան, Դավեյան, Դավոյան, Կրպոյան, Կրպեյան, Գևոյան, Ստեփոյան, սրանից էլ՝ Տեփոյան և այլն:

Երբեմն, երբ տարբեր անձնանունների կոչականի հիմքերը նույնն են, կոչական տարբերակները նույնանում են, և հաճախ դժվար է լինում պարզել, թե որ անձնանվան կոչականի հետ գործ ունենք՝ Մելո-Մելքոն, Մելիքսեթ և այլն, Ավո-Ավետիք /Ավետիս/, Ավազ և այլն:

Շատ տարածված են անձնանվան փաղաքշական-փոքրացուցիչ տարբերակներից կազմված ազգանունները, որոնք անմիջապես առանձնանում են շնորհիվ ազգանունակերտ ածանցից առաջ ընկած -իկ ածանցի՝ Բաղդիկյան, Գաբիկյան, Գալիկյան, Թորիկյան, Թումիկյան և այլն:

Բավականին թվով ազգանուններ կազմված են անձնանվան կրճատված տարբերակներից: Այստեղ պետք է ավելացնել, որ դրանց որոշ մասը ոչ թե անձնանվան կրճատված տարբերակից է կազմված, այլ՝ ազգանվան: Օրինակ՝ Թևյան ազգանունը կարելի է ստուգաբանել հետևյալ կերպ՝ Թևաղրոս, Թևոս, Թևում անձնանուններից՝ կրճատված, կամ՝ Թևաղրոսյան, Թևոսյան, Թևումյան ազգանուններից՝ նույնպես կրճատված: Վասյան, Վարյան, Լուսյան, Սենիքյան և այլն ազգանունները կազմված են վերը նշված օրինաչափությամբ:

Հայկական ազգանուններում աչքի է ընկնում հետևյալ առանձնահատկությունը: Երբեմն որևէ անձնանուն ներկայացված է լինում ազգանունների շարքում և՛ իր ուղիղ կամ զրական ձևով, և՛ իր բոլոր տարբերակներով՝ կազմելով ավարտուն բառակազմական ամբողջություն՝ Գալստյան-Գալոյան-Գալիկյան-Գալյան, Սանասարյան-Սանոյան-Սանիկյան-Սանյան, Թորոսյան-Թորոյան-Թորիկյան-Թորյան և այլն:

Մեխանիկական ծագում ունեցող ազգանունների խումբը բավականին մեծաքանակ է և բազմազան: Այն բաժանվում է երկու ենթախմբի՝ կրողի արտաքին կամ ներքին առանձնահատկության հետ կապվող մականուններ և զբաղմունքի, մասնագիտության, հասարակության մեջ զրաված դիրքի հետ կապվող մականուններ: Երկրորդ խումբը բավականին հեշտությամբ առանձնանում է, շնորհիվ ազգանունակերտ ածանցից առաջ -ցը ածանցակերպի և -չի /-ջի, -մի/ ածանցի առկայության՝ հացագործ յան, Ար-

ծաքազործյան, Գուլումջյան, Դոնդուրմաջյան, Թուքունջյան և այլն, ինչպես նաև՝ Սազանդարյան, Դուրգարյան և այլն:

Այս խմբի մեջ մտնող ազգանուններում նկատվում են հոմանշային շարքեր, ուր շարքի անդամները կարող են լինել ինչպես գրական, բարբառային, այնպես էլ այլալեզու բառեր: Ըստ որում, նրանք կարող են հանդես գալ և՛ հնչյունափոխ, և՛ անհնչյունափոխ տարբերակներով՝ Աժդահարյան-Էժդահարյան-Էժդարյան, Երկանյան-Երգենյան-Երգանյան-Ոշորյան-Գրծելյան-Մաղալյան-Ուզունյան, Պատոյան-Պատեյան-Պատիկյան-Պիծիկյան, Սևակյան-Սևաչերյան-Ղարագյոզյան, ինչպես նաև միևնույն ազգանվան տարբերակները՝ Ջոսյան-Ջյոսյան-Ջեսեյան – Ջեսայան-Ջոսայան:

Այստեղ առանձնանում են նաև ըզ_/ան/ թուրքական ածանցով ազգանունները՝ Դերեմզյան, Ղոնախզյան, մի քանի օրինակներ բերենք այս խմբի հիմնական ենթախմբերից.

1. Կրողի արտաքինի հետ կապված ազգանուններ՝ Ջարգանդյան, Թաքթեխյան, Թոփալյան, Թուխմանուկյան, Բոզօղլանյան, Խորոտյան, Ծաղկերեսյան, Շիմշատյան:

2. Կրողի բնավորության կամ ներքին որևէ այլ հատկանիշի հետ կապված ազգանուններ՝ Ախմախյան, Դմբոյան, Ջոմարդյան:

Այս խմբի մեջ պետք է դասվեն նաև այն ազգանունները, որոնք վերջին հաշվով կապվում են կրողի սոցիալական դրության հետ՝ Աղատյան, Բոբիկյան, Եթիմյան: Սրանք սահմանափակ տարածում ունեն:

Հայոց ազգանունների շարքում տեղանվանական ծագում ունեցողները բավականին բազմազան են, չնայած՝ փոքրաքանակ, դրանք իրենց բառակազմության որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ նրանց որոշ մասում պահպանվում է տեղանվանական -ացի, -եցի ածանցը -ացւ, -եցւ և -ց տարբերակներով՝ Աստաբացյան, Ախցխեցյան, Ազրումցյան:

Տեղանվանական ծագում ունեցողների մի այլ մասը գործածված է առանց ածանցի. Ալաշկերտյան, Ամասյան, Այնթապյան:

Եվ վերջապես, երրորդ խումբը, որի մեջ մտնում են զուգահեռ՝ ածանցով և առանց ածանցի գործածվող ազգանունները՝ Աբուլյան-Աբուլցյան, Ալվարյան-Ալվրցյան-Ալվարցյան, Աստաբացյան-Աստաբատյան:

Այսպիսով, հայկական ազգանունները՝ լինելով համեմատաբար նոր կազմություններ, իրենց մեջ ներառել են հայերենի հատուկ անունների ամբողջ համակարգը և այսօր իրենց մեջ պարփակում են ազգային մշակույթի շատ հետաքրքիր և ինքնատիպ երևույթներ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Н.В.Подольская, Словарь русской ономастической терминологии, М., 1978.
2 Տ.Մ.Ավետիսյան, Հայոց անվանման բանաձևերը, ՊՌՀ, նո.1, 1982:
3 Ըստ Երևանի հեռախոսային աբոնենտների զրքի, Երևան, 1970:
4 Տվյալները բերվում են որոշ մոտավորությամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Н.В.Подольская, Словарь русской ономастической терминологии, М., 1978.
2 Տ.Մ.Ավետիսյան, Հայոց անվանման բանաձևերը, ՊԲՀ, Նո.1, 1982:
3 Ըստ Երևանի հեռախոսային աբոնենտների զրքի, Երևան, 1970:
4 Տվյալները բերվում են որոշ մոտավորությամբ:

Ա.Մ. ԱՐԱՄՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Արդի հայերենի պայթականների բաշխման ուսումնասիրության արդյունքները կարելի է ներկայացնել հետևյալ կետերում.

1. Հետազոտության հիմքում ընդհանուր դրույթ է դիտվում այն հարաբերությունը, որ գոյություն ունի որոշակի հնչույթակապակցությունների միջև՝ գրային և արտասանական մակարդակներում:

2. Արտասանական և գրային մակարդակները մենք համապատասխանորեն հարաբերում ենք հնչյունաբանական և հնչույթաբանական հասկացությունների հետ:

3. Առանձին նշանակություն է տրվում հնչույթակապակցությունների և հնչաղիրքերի զորձառական բեռնվածությանն ու օգտագործման հաճախականությանը:

4. Քանի որ յուրաքանչյուր լեզվի կառուցվածք սկզբունքորեն աննկրկնելի է, հետևապես այն ներկայացնող տարրերը /հնչույթներ, հնչյուններ, հնչույթակապակցություններ, ձևույթներ և այլն/ յուրահատուկ են միայն տվյալ լեզվին:

Սրանք իրականանում են. ա. լեզվի տարրական միավորների հնչույթների և հնչյունների դրսևորմամբ.

բ. Տարրական միավորների միջև գոյություն ունեցող կապերի դրսևորմամբ՝ ձգտի ունենալով այն սահմանափակումները, որոնք պայմանավորված են տվյալ լեզվի /ընդհուպ մինչև արտասանական բազայի/ կառուցվածքով:

Վերջիններս վկայում են այն մասին, որ տվյալ լեզվական կառուցվածքի տարրերը և դրանց միջև եղած կապակցությունները կարող են որոշակի դառնալ միայն իրենց բնորոշ հնչյունային միջավայրում, միայն իրենց կարգի տարրերի հետ ունեցած հարաբերությունների միջոցով: Հենց սրանով էլ բնորոշվում է լեզվի նկատմամբ բաշխական մոտեցման հիմնական սկզբունքը:

Այսպիսով՝ ելնելով վերը շարադրվածից, մենք ներկայացնում ենք

ա. գործուն հնչույթակապակցությունները,

բ. հնչույթակապակցությունների արդյունավետությունը՝ ըստ գործառական բեռնվածության և համախականության,

գ. սկզբունքորեն հնարավոր հնչույթակապակցությունները, որոնք չեն հակասում լեզվի արտասանական նորմաներին, և այն հնչույթակապակցությունները, որոնք խորթ են լեզվի արտասանական նորմաներին:

դ. Հնչույթակապակցությունների այն դիրքային անցումները, որոնց հիմքի վրա ծավալվում են զրային և արտասանական մակարդակների միջև տեղ գտած հնչյունային անհամապատասխանությունները: Դրանք դիտվում են հիմնականում որոշակի ծայնեղ պայթական բաղաձայնների՝ բառամիջի և բառավերջի դիրքերում դրսևորած խլությամբ:

ե. Առանձնահատուկ շեշտվում է միջանկյալ [ը] ծայնավորի դերը արտասանական մակարդակում /նաև զրային՝ վանկատման ժամանակ/ բառամիջում և բառասկզբում՝ պայթականների միաժամանակյա դրսևորման ժամանակ: Ուսումնասիրության նյութը ընտրվել է Ա.Ս.Ղարիբյանի, Ե.Տեր-Մինասյանի և Մ.Ա.Գևորգյանի խմբագրությամբ կազմած հայ-ռուսերեն բառարանից, որը պարունակում է 40 000 բառ: Նկատի են առնված ոչ միայն բառերի ուղիղ ձևերը, այլև որոշ թեքված ձևեր:

Վիճակագրական հաշվումները արտացոլում են զտել աղյուսակներում:

Հայերենի պայթականների եռաստիճան համակարգը /ծայնեղ, խուլ և շնչեղ խուլ/ հնչույթաբանորեն տարբերակված է և կազմում է հայերենի բաղաձայնական համակարգի ատաղձը: Բաշխումային վերլուծության համար բոլոր պայթականները դիտված են երեք դիրքերում՝ բառասկզբի, բառամիջի և բառավերջի՝ ծայնավորների, ծայնորդների և պայթականների հետ ունեցած կապակցություններում:

Յուրաքանչյուր դիրքի համար կազմված են մի շարք կաղապարներ, որոնք ընդգրկում են 555 կոնկրետ հնչույթակապակցություններ:

Դրանք են.

Բառասկզբի համար՝ 1.CV, 2.CS, 3.CC [1]:

Բառամիջի համար՝ 1.VCV, 2.VCC և CCV, 3.SCV և VCS, 4.SCS, 5.SCC և CCS:

Բառամիջյան CCC շարքը հայերենում բացառվում է:

Բառավերջի դիրք՝ 1.VC, 2.SC, 3.CC:

Համառոտակի ներկայացնենք վերլուծության արդյունքները:

Բառասկիզբ.

Բ, պ, փ, դ, տ, թ, գ, կ, ք - պայթականները իրենց հաջորդող ա, օ, ու, է, ի, ը ծայնավորների հետ ունեցած կապակցություններում բնութագրվում են ընդհանուր առմամբ գործառության և հաճախա-

կանության լայն ծավալով: Ավելի քիչ ծավալ են կազմում շնչեղ-խուլ պայթականով կազմված հնչույթակապակցությունները: Վիճակագրական հաշվումների արդյունքները պայմանականորեն ներկայացնելով միավորներով՝ կունենանք այսպիսի պատկեր.

պա	± 760 միավոր	կո	± 270 միավոր
փա	± 80 ,,	քո	± 37 ,,
քա	± 95 ,,	կե	± 255 ,,
փու	± 15 ,,	քե	± 36 ,, և այլն:

Այս դիրքի համար ամենից բնորոշը այն է, որ նշված հնչույթակապակցությունները հանդես են գալիս հնչյունական ուժեղ դիրքում:

Պայթական+ծայնորդ /ՀՏ/ բառասկզբի դիրքը բնութագրվում է մի քանի բաշխական առանձնահատկություններով:

Այն դեպքում, երբ /ՀՏ/ հնչույթակապակցության երկրորդ բաղադրիչը [յ] ծայնորդն է, կապակցությունները իրականանում են [ը] ծայնավորի միջնորդությամբ, այսինքն բառասկզբի պայթականի և հաջորդող ծայնորդների միջև արտասանական մակարդակում ավելանում է [ը]-ն, որը և վանկ է կազմում և դրսևորվում գրության մեջ տողադարձի ժամանակ: Այդպես, թ[ը]ն-դյուն, ք[ը]լ-րակ և այլն:

/պմ/, /փմ/ և /դլ/ բառասկզբային հնչույթակապակցությունները ուսումնասիրված նյութում չի արձանագրվել:

Պայթական+ծայնավոր /ՀՎ/ հնչույթակապակցության համեմատությամբ պայթական+ծայնորդ /ՀՏ/ հնչույթակապակցությունն ունի ավելի նեղ զործառություն և համախականություն:

Բառասկզբի պայթական+պայթական /ՀՀ/ և պայթական+ծայնորդ /ՀՏ/ հնչույթակապակցություններն ըստ զործառության և համախականության ունեն մի շարք ընդհանրություններ: Միաժամանակ առկա են որոշ առանձնահատկություններ:

/ՀՀ/ բառասկզբի դիրքը իրականանում է միայն /ը/ ծայնավորի միջնորդությամբ, որը շատ ցայտուն դրսևորվում է արտասանական մակարդակում, իսկ զրայինում հանդես է գալիս վանկատման ժամանակ:

Անկախ /ը/ ծայնավորի միջնորդությունից, արդի հայերենի բառապաշարում համեմատաբար սակավ զործածություն ունեն /ՀՀ/ բառասկզբի կապակցությունները:

<u>ք-ի հետ՝</u> երբ վերջինս կապակցության երկրորդ անդամն է, այսինքն վերջում է. բ, պ, փ, դ, տ, թ, կ, ք հնչույթները,

<u>պ-ի հետ՝</u> երբ պ-ն վերջում է. փ, գ, ք, թ հնչույթները,

<u>փ-ի հետ՝</u> երբ փ-ն վերջում է. բ, պ, փ, դ, տ, կ, ք. հնչույթները,

դ-ի հետ՝ երբ դ-ն վերջում է. պ, փ, կ, ք հնչույթները,
տ-ի հետ՝ երբ տ-ն վերջում է. թ, ք հնչույթները,
տ-ի հետ՝ երբ տ-ն սկզբում է. թ, գ հնչույթները,
ք-ի հետ՝ երբ թ-ն վերջում է. տ հնչույթը,
ք-ի հետ՝ երբ թ-ն սկզբում է. բ, պ, տ, գ հնչույթները,
կ-ի հետ՝ երբ կ-ն վերջում է. պ, փ, դ, թ, գ, ք հնչույթները,
կ-ի հետ՝ երբ կ-ն սկզբում է. բ, փ, դ, գ հնչույթները,
գ-ի հետ՝ երբ գ-ն վերջում է. բ, պ, փ, դ, փ, թ, կ, ք հնչույթները,
ք-ի հետ՝ երբ ք-ն վերջում է. պ, գ, ք հնչույթները,
ք-ի հետ՝ երբ ք-ն սկզբում է. բ, պ, փ, դ, տ, գ հնչույթները

և այլն:

Պայթականների քաղաքերջի դիրքում դիտվում է հետևյալ պատկերը.

1. Առաջին ընդհանուր դիտողությունը այս դիրքում ձայնավորներին և ձայնորդներին հաջորդող ձայնեղ պայթականների խլացումն է: Հակառակ երևույթը արդի հայերենին բնորոշ չէ: Նշենք, որ բառավերջի պայթականների խլացումը հիմնականում պահպանվում է բառաշարի այն շերտում, որը ունի ժողովրդական-խոսակցական գործառույթ /օր. գուլգ, վարդ, կարգ, երգ և այլն/: Գրային ճանապարհով լեզվի մեջ մուտք գործած բառաշերտը հիմնականում պահպանում է գրային արտասանությունը /օր. թումբ, հազուրդ, անագ, բորբ և այլն/:

Հայոց լեզվում սակավաթիվ են բառային այնպիսի ճևերը, որոնք ներկայացնում են բաղաձայնական եռաստիճան համակարգը: Այդ բառերում իմաստատարբերակման համար խստորեն պահպանվում է գրային արտասանությունը. օր. վարգ-վարկ-վարք:

Սակայն կրկնակի հակադրություն ներկայացնող բառերը լեզվում նկատելի տեղ են գրավում և բնորոշվում են գրության և արտասանության անհամապատասխանությամբ. օր. հորդ/թ/-հորթ, խորդ/թ/-խորթ, հարդ/թ/-հարթ և այլն:

Սա բխում է լեզվի օրինաչափությունից: Թեև, մեր կարծիքով, այժմ նկատելի է, որ նախապատվությունը ավելի տրվում է գրային արտասանությանը:

2. Բառավերջի ձայնեղների խլացումը /և շնչեղ խլացումը/ ստեղծում է հնչյունական անհամապատասխանություններ գրային և արտասանական մակարդակներում:

3. Բառավերջի դիրքի համար բնորոշ է ձայնավոր+պայթական /VC/ հնչույթակապակցության գործառական մեծ բեռնվածություն և համախականություն, որն, իհարկե, բոլոր ձայնավորների վրա հավասարաչափ չի

բաշխվում: Այսպես, օրինակ, ամենամեծ բեռնվածություն ունի [ակ] հնչակապակցությունը / 1000 միավոր/:

Ձայնորդ→պայթական /SC/ հնչույթակապակցությունը, [նք]/±220 միավոր/, [րկ]/100 միավոր/, [րտ] /140 միավոր/ և այլն, համեմատաբար մեծ բեռնվածություն ունի: Չեն արծանագրված ժբ, ժթ, ժփ, մփ, մդ, մտ, մզ, մկ հնչույթակապակցությունները: Րփ-ն արծանագրված է /թուրփ/ բառում, մբ-ն հանդիպում ենք մի քանի բառերում /կամբ, թամբ, հումբ և այլն/: Չեն արծանագրված նաև լբ, լփ, լփ, լդ, լթ, լգ հնչույթակապակցությունները: Ր ձայնորդի հետ կապակցություն կարող է կազմել ը պայթականը քիչ թվով բառերում /օրինակ՝ փառը, կառը, վառը և այլն/: Մնացած պայթականներով կազմություններ չեն հանդիպում:

Քիչ գործառություն ունի պայթական→պայթական CC հնչույթակապակցությունը: Այն արծանագրված է հիմնականում փոխառյալ բառերում, ինչպես [կտ] հնչույթակապակցությամբ /ակտ, տակտ և այլն/: [Տք] հնչույթակապակցությունը նույնպես արծանագրված է քիչ բառերում /հետք, պետք, միտք և այլն/: Հատուկենտ են [պք] /դեպք/, [փք] /քափք/ հնչույթակապակցությունները: Մեկ կամ երկու դեպքում կան կրկնակ պայթական հնչույթակապակցություններ, մեծ մասամբ փոխառյալ բառերում /սարեպտոկոկկ, վատտ/: VC, SC և CC հնչույթակապակցությունների բաշխական վիճակագրական մոտավոր պատկերները ներկայացված են աղյուսակներում:

Բառամիջյան դիրքը նախորդ երկուսի /բառասկիզբ, բառավերջ/ համեմատությամբ ունի բաշխական մի քանի առանձնահատկություններ:

Հատուկ կարևորություն է ստանում վանկատման սկզբունքը՝ դրանից քխող լեզվական դրսևորումներով:

Բառամիջյան դիրքում վանկի սկիզբը դիտվում է որպես բառասկիզբ, իսկ վանկի վերջը՝ որպես բառավերջ /երկու դեպքում էլ նկատի է առնվում ձայնեղների խլացման հանգամանքը/:

Ներկայացվող հնչադիրքային կաղապարները ընդգրկում են պայթականների՝ ձայնավորների, ձայնորդների և պայթականների հետ ունեցած հնչույթակապակցությունների՝ մեր կարծիքով առավել հնարավոր հնչադիրքերը: Դրանք են VSV, VCC, CCV, SCV և VCS, SCS, SCC և CCS:

Ձայնավոր→պայթական→ձայնավոր /VCV/ շարքը լեզվում ունի մեծ տարածում: Ինչ վերաբերվում է ձայնավոր [ը]-ին, ապա այն գրությամբ չի դրսևորվում, սակայն այն ակտիվ գործառություն ունի վանկաբաժանման ժամանակ:

VCC և CCV կաղապարը լայն գործառությամբ աչքի չի ընկնում, սակայն դրսևորման հնարավորությունները այնպիսին են, որ չեն հա-

կասում լեզվի նորմաներին:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ շարքում վանկաբաժանումը անցնում է երկու պայթականների միջով այնպես, որ առաջին պայթականը իր վրա է վերցնում ելքային դիրքի գործառույթյունը, իսկ երկրորդ պայթականը՝ բառասկզբի դիրքի գործառույթյունը:

ՏՀՏ շարքը ենթարկվում է վանկաբաժանման ընդունված կանոններին: Ընդհանրապես ձայնորդ+ձայնորդ /հը-որն-դյուն, բը-որն-կել /, ձայնորդ+պայթական կամ պայթական+ձայնորդ /ան-տըր-տունջ, ան-դըրդ-վելի և այլն/ կապակցությունները առանց միջնորդ [ը] ձայնավորի լեզվում չեն իրականանում:

ՏՀՀ և ՀՀՏ կաղապարները լեզվում տարածում չունեն, սակայն տեսականորեն հնարավոր են:

Այսպիսով, արդի հայերենում պայթականների՝ ձայնավորների, ձայնորդների և պայթականների հետ ունեցած կապակցությունների բաշխման մասին կարելի է ասել հետևյալը:

Բառասկզբի դիրքում առկա է պայթականների արտասանական և գրային մակարդակների համապատասխանություն /այսինքն հնչյունային միջավայրի ազդեցությունը հավասար է զրոյի/:

Բառասկզբի ՀՏ և ՀՀ կաղապարներում արտասանական մակարդակում հիմնականում առկա է [ը] ձայնավորը, որը վանկաստեղծ գործառույթյուն ունի և գրվում է վանկատման ժամանակ:

Նշված բառասկզբային կաղապարները լեզվում ունեն համեմատաբար ոչ լայն գործառույթյուն:

Բառամիջի դիրքը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

1. Այս դիրքում երկու և ավելի պայթականների կապակցության դեպքում ունենք կամ ներվանկային [ը] ձայնավորը, որը գրությամբ չի արտահայտվում, և կամ պայթականները բաշխված են տարբեր վանկերի միջև:

2. Բառամիջի դիրքում վանկի սկիզբը դիտվում է որպես բառասկիզբ, իսկ վանկի ավարտը՝ որպես բառավերջ:

Բառավերջի համար ամենանշանակալիցը ձայնեղների խլացումն է, որը ավելի շատ նկատելի է գրային ծանապարհով և այլ լեզուներից եկած բառաշերտերում: Լեզվական այս երևույթը հիմք է ծառայում արտասանական և գրային լայն անհամապատասխանությունների համար:

Գործառական մեծ ընդհանրությամբ բնութագրվում է բառավերջի ձայնավոր+պայթական հնչույթակապակցությունը:

Ավելի քիչ գործառույթյամբ բնորոշվում է ՏՀ հնչույթակապակցու-

թյունը, ՀՀ կապակցությունը գործառության տեսակետից հասնում է նվազագույնի:

Որպես ընդհանուր դիտողություն ավելացնենք, որ բառասկզբի և բառամիջի դիրքերում պայթականների կուտակումը՝ հայերեն գրական լեզվում մեծ ընդգրկում չունի, շնորհիվ [ը] ձայնավորի վանկատիչ դերի:

Կարծում ենք, որ պայթական բաղաձայնների բաշխման ուսումնասիրությունը ունի տեսական նշանակություն ինչպես հայերենի ծագումնաբանական հարցերի պարզաբանման, այնպես էլ լեզվի գործնական խնդիրների լուծման համար:

ՆԱՆՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հ-ն պայթական բաղաձայնն է, Տ-ը՝ ձայնորդը, Վ-ն՝ ձայնավորը:

Խ.Գ. ԲԱԴԻԿՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԻՄԱՍՏԱՋԱՏԻՉ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ

Դարձվածաբանության ուսմունքը, որը համեմատաբար ավելի կարճ պատմություն ունի, այժմ այնպիսի ընդգրկման է հասել, որ հիմնավորապես առանձնանում է որպես լեզվաբանական առանձին գիտաճյուղ: Դարձվածը լեզվի մեջ մի դեպքում հանդես է գալիս բառային արժեքով և նախադասության մեջ որևէ անդամի դեր է կատարում, իսկ մյուս դեպքում ունենում է հաղորդակցական արժեք և հարաբերակից է լինում նախադասությանը:

Բառերին հարաբերակից դարձվածաբանական միավորները /այսուհետև՝ ԴՄ/ արտահայտության պլանում բառակապակցություններ են, իսկ բովանդակության պլանում՝ հասկացություններ /բառեր/: Սրանք, ինչպես բառերը, օժտված են այս կամ այն խոսքի մասին հատուկ բոլոր հատկանիշներով՝ բառային իմաստով, քերականական ձևավորվածությամբ ու կարգերով[1], որոնք ԴՄ-ների ձևավորման գործում մեծ մասամբ վճռական գործոն են և նրանց գործառության տարբեր ոլորտներում ու իմաստների փոփոխության հարցերում հաճախ իմաստազատիչ դեր են կատարում:

Հայտնի է, որ քերականական կարգերը որոշվում են քերականական ձևերի հակադրությամբ, հենց այդպիսի հակադրություններում էլ հանդես է գալիս միևնույն բաղադրիչներով կազմված կապակցությունների՝ մի դեպքում դարձված լինելու, մյուս դեպքում չլինելու հանգամանքը. այստեղ, անշուշտ, վճռական դեր են խաղում խոսքային միջավայրը, ինչպես նաև որպես դարձված հանդես եկող կապակցության իմաստային բազմազան դրսևորումները:

Դարձվածաբանական միավորի գոյականական բաղադրիչի ՈՐՈՇՅԱԼԻ ու ԱՆՈՐՈՇԻ, ԱՆՁԻ ու ԻՐԻ, ՔՎԻ, ՀՈԼՈՎԻ, ԴԻՄԱՅԻՆ ԱՌՄԱՆ, իսկ բայական բաղադրիչի՝ ԵՂԱՆԱԿԻ, ԺԱՄԱՆԱԿԻ, ՍԵՌԻ, ՀԱՍՏԱՏԱԿԱՆ-ԺԽՏԱԿԱՆ հակադրությունների շնորհիվ հայերենի ԴՄ-ները հանդես են բերում

իմաստային ու գործառական ամենատարբեր դրսևորումներ:

Այստեղ մենք խոսելու ենք միայն բայական դարձվածներում հանդես եկող գոյական բաղադրիչի անվանական քերականական կարգերի մասին:

1. Ըղկայացման քերականական կարգը վճռորոշ նշանակություն ունի ԴՄ-ի ձևավորման և իմաստազատման գործում. հայերենում բազմաթիվ ԴՄ-ներ կաղապարվում են միմիայն ըղըշիչ հոդի շնորհիվ, առանց հոդի դրանք նույնիսկ ազատ կապակցություններ էլ չեն կազմում /աչքը ջուր կտրել, ոտքը քարին առնել, սիրտը տաք լինել, լեզուն պապանձվել, կապը կտրել, բերանը ջուր առնել, ուղտը զդալով ջրել և այլն/: Եթե սրանք առանց հոդի չեն ձևավորվում ու գործածվում, ապա,սրանց հակառակ,լեզվում կան բազմաթիվ ԴՄ-ներ, որոնք ձևավորվում են միմիայն հոդի բացակայությամբ /ջուր ծեծել, կրակ դառնալ, խելք հավաքել, երես տալ, գլուխ բերել, աչք ունենալ,կապ ընկնել.../:

Ժամանակակից հայերենի երկու որոշիչ հոդերը՝ ը-ն, ն-ն, որոշյալության իմաստի արտահայտության տեսակետից հանդես են գալիս որպես միևնույն անփոխակի դիրքային տարբերակներ[2] և բավականին մեծ դեր են կատարում հայերենի դարձվածների իմաստազատման գործում: Անորոշ–որոշյալ հակադրությունը երբեմն լրիվ իմաստափոխում է դարձվածաբանական կապակցությունը: Այսպես՝

անորոշ	որոշյալ
հաց կտրել-բարեկամանալ,ընկերանալ	հացը կտրել-ապրուստից զրկել.
կյանք առնել-կենդանություն ստանալ	կյանքն առնել-սպանել.
գլուխ տալ-խոնարհվել, բարևել	գլուխը տալ-ոչինչ չխնայել, կյանքը զոհաբերել.
հասակ առնել-հասունանալ	հասակն առնել-ծերանալ,մեծանալ.
ծեռք բռնել-օգնել,օժանդակել	ծեռքը բռնել-արգելել, թույլ չտալ.
շունչ տալ-կենդանություն ներշնչել	շունչը տալ-անշնչանալ,մեռնել.

Դժվար չէ նկատել, որ ըղըշիչ հոդը որոշ ԴՄ-ների լրիվ հակադիր իմաստներ է հաղորդել:

Ավելի հաճախ հոդի շնորհիվ սովորական կապակցությունները վերածվում են ԴՄ-ների. այս հարցում կարևոր նշանակություն ունեն խոսքաշարն ու խոսքային միջավայրը. օրինակ՝ ապուր եփել, դաս տալ, հաց ուտել, բուրդ գզել կապակցությունները գործածվում են իրենց

սովորական իմաստներով, բայց երբ դրանց առաջին բաղադրիչները հանդես են գալիս որոշիչ հոդով, արդեն ծեռք են բերում դարձվածի իմաստ՝ ապուրը_եփել նշանակում է մեկի դատաստանը տեսնել /Ես նրանց ապուրը_կեփեմ-ԴԴ/, դասը_տալ՝ ծեծելով պատժել /Այսօր հայրը նրա դասը_կտա- մամուլ/, հացը_ուտել՝ պատժվել /Նա էլ իր հացը_կեըավ-ՊՊ/, բուբրը_ցցել՝ մեկին խիստ քննաղատել, վնասել, լավ ծեծել /Կոմսոմոլի ժողովին բուբրը_լավ_ցցել_են-ՔՔ/: Եթե դու չգայիր, մենք դրա բուբրը_լավ_կցցեինք,- ասաց պառավներից մեկը-ԽԴ/:

Երբեմն էլ կապակցությունը հոդից զրկվելու դեպքում է ծեռք բերում ԴՄ-ի արժեք, օրինակ՝ երեսը_դարձնել, գլուխը_բարձրացնել, ձեռքը_քաշել, ջուրը_կտրել, հացը_հավաքել /սեղանից, դաշտից/ ունեն սովորական իմաստներ՝ առանց իմաստափոխության, բայց հոդից զրկվելով՝ ծեռք են բերում երկրորդական՝ փոխաբերական իմաստներ և վեր են ածվում ԴՄ-ների. ահա դրանցից մի քանիսը՝

երեսը_դարձնել – արհամարհել, անուշադրության մատնել /Ամենքը երեսը_են_դարձրել նրանից – Շիրվ./.

գլուխը_բարձրացնել – ըմբոստանալ, դեմ դուրս գալ /Գլուխը_կբարձրացնի հայոց աշխարհը – ԴԴ/.

հաց_հավաքել – մուրացկանությամբ զբաղվել /Հաց_հավաքողի մեկն էր – ՐաՓՓի/.

ձեռք_քաշել – հրաժարվել, նաև ստորագրել /Ես արդեն վաղուց եմ նրանից ձեռք_քաշել – ՍԽ: Ես ով եմ, որ գուբերնատորի հեռագրի տակ ձեռք_քաշեմ – բառարանից/:

ջուր_կտրել – վախենալ, թրջվել, ծիծաղից թուլանալ /Ծիծաղից ջուր_էինք_կտրել – ՔՔ/:

Հաճախ էլ որոշիչ հոդի իմաստազատիչ դերը պայմանավորված է միայն խոսքաշարով. միևնույն բառակապակցությունը տարբեր խոսքային միջավայրում տարբեր իմաստներ է ստանում՝ մի դեպքում ունենալով սովորական, մյուս դեպքում՝ դարձվածքային արժեք:

Համեմատենք հետևյալ կապակցությունները՝ տարբեր խոսքային միջավայրերում.

Կապակցություններ	Սովորական իմաստով	Դարձվածաբանական իմաստով
1	2	3
ջուրն ընկնել	Վիրավոր թռչունը ջուրն ընկավ.	Ամբողջ տարվա աշխատանքը ջուրը_ընկավ.
հաշիվը մաքրել	Արագ հաշիվը_մաքրեցինք	Հաշիվը_մաքրելու հա-

1	2	3
	և կաֆեից դուրս եկան.	մար քաղաքից դուրս գնացին.
թոկը քաշել	Հորթուկի ք<u>ոկը_քաշե</u>-<u>լով</u>, գոմից դուրս բերեց.	Չէ՞ս կարող էդ երես առած լակոտի <u>ք</u><u>ոկը_քաշել</u> /ՆԶ/.
կապը կտրել	Ձին <u>կապը_կտրել_է</u>ը ու դաշտից հեռացել.	Ասում են՝ կնիկդ <u>կապը կտրել_է</u>,ուրիշների հետ ընկել /ՍԽ/.

Աշ կողմի կապակցություններում բաղադրիչների շարահյուսական կապի մթագնում է տեղի ունեցել, այդ պատճառով էլ դրանք վերածվել են ղարժվածների:

Որոշիչ հոդը երբեմն էլ փոխում է ամբողջ դարժվածաբանական միավորի խոսքամասային պատկանելությունը: Այսպես, օրինակ՝ <u>հացը</u>-<u>ըից_մեկ</u> դարժվածը առանց որոշիչ հոդի <u>մակբայի</u> արժեքով է հանդես գալիս /նա <u>հացըից_մեկ</u> էր խոսում այդ մասին/: Նույն դարժվածը որոշիչ հոդով արդեն գոյականի արժեք է ստանում /<u>հացըից_մեկը</u> գիտեր այդ գաղտնիքը/:

2. <u>Դեմքի_քերականական_կարգը</u>, որը առարկաների դասակարգումն է ըստ հաղորդակցմանն ունեցած մասնակցության[3], նույնպես կարևոր գործոն է ԴՄ-ների ձևավորման և իմաստների տարբերակման գործում: Քանի որ ԴՄ-ների բաղադրիչներն իմաստային սերտ միասնության մեջ ունեն մի նոր, ընդհանուր իմաստ, հետևաբար բայական ԴՄ-ներում հանդես եկող գոյական բաղադրիչների դիմային առման քերականական մասնիկները /<u>ս</u>, <u>դ</u>/ ծուլվում են ԴՄ-ների ամբողջական իմաստների հետ[4]: <u>Ս</u> և <u>դ</u> ստացական հոդերը երբեմն լրիվ տարբեր իմաստներ են հաղորդում միևնույն շարահյուսական կառուցվածքն ունեցող կապակցություններին: Առաջին դեմքի հոդով՝ <u>ս</u>-ով, ձևավորվելիս, կառույցները մեծ մասամբ ափսոսանքի ու երդման արտահայտություն են ստանում /<u>աչքս_դուրս_գա</u>, <u>լուլյուս_խավարը</u>, <u>մազս_կտրվի</u>, <u>արևս_մեռնի</u>, <u>գլուխս_մեռնի</u>, <u>աչքս_բռնի</u>/, իսկ երկրորդ դեմքի ցուցիչով՝ <u>դ</u>-ով, ձևավորվելիս, միևնույն կառույցները անեծքի արտահայտություններ են դառնում /<u>աչքդ_դուրս_գա</u>, <u>լուլյուդ_խավարը</u>, <u>մազդ_կտրվի</u>, <u>արևդ մեռնի</u>, <u>գլուխդ_մեռնի</u>, <u>աչքդ_բռնի</u>/:

Որոշ կառույցներում էլ այդպիսի հակադրությունները չեզոքանում են, տարբերությունը լինում է միայն դիմային. հմմտ.՝ <u>գլխիս վրա</u> և <u>գլխիդ_վրա</u>, <u>ձեռքիցս_ընկել_ես</u> և <u>ձեռքիցդ_ընկել_եմ</u>:

Տարբերությունը միայն դիմային է նաև հետևյալ կառույցներում՝

Բանս
Բանդ } բուրդ է:
Բանը

Թոփս
Թոփդ } քարին դեմ առավ:
Թոփը

Կամ՝

Ավել բրդուցը { աչքս
աչքդ } չի հանի:
աչքը

{ Թանչալիս
Թանչալիդ } քարը հո չի
Թանչալի } ընկնի:

Նման կառույցներում ս, դ, երբեմն էլ ը հոդերը՝ մտնելով ՈՒ-ների ընդհանուր կազմի մեջ և ձևավորելով դրանք, կոնկրետացնում են արտահայտությունների դիմային հարաբերությունները՝ ի տարբերություն ընդհանրապես բերվող ասույթների /ավել_բրդուցը_աչք_չի հանի, խանչալի_քարը_չի_ընկնի և այլն/:

Սակայն երբեմն էլ այդ հոդերը ՈՒ-ի գոյականական անդամին դիմային հատկանիշ վերագրելով, դարձվածը զրկում են վերաիմաստավորումից և այն վերածում սովորական կապակցության. օրինակ՝ ձեռք քաշե՛ր – դարձված է՝ մի բանից /մեկից/ հրաժարվի՛ր, սակայն՝ ձեռքդ քաշի՛ր – արդեն իսկական իմաստով է գործածված:

3. Անվանական_թվի_քերականական_կարգը՝ եզակի-հոգնակի հակադրությունը բայական դարձվածների համար նույնպես իմաստատարբերակիչ արժեք ունի. այսինքն՝ միևնույն դարձվածային կառույցի գոյական բաղադրիչը եզակի թվով այլ իմաստ է հաղորդում ՈՒ-ին, իսկ հոգնակի թվով՝ բոլորովին այլ. այս դեպքում նույնպես հոգնակիության իմաստը վերագրվում է ոչ միայն ՈՒ-ի գոյականական անդամին, այլև նրա իմաստը ծուլվում է ամբողջ ՈՒ-ի ընդհանուր իմաստի մեջ: Այսպես՝ ջուրն_ընկնել եզակի գոյական բաղադրիչով կազմված կապակցությունը նշանակում է ի_դերև_լինել /նրա պլանները ջուրն_ընկան/, բայց ջրերն_ընկնել հոգնակի բաղադրիչով կազմված կապակցությունը նշանակում է ուրիշի_միջոցով_օգտվել[5] /Ես էլ ծերության օրերում իր ջրերն ընկած կապրեմ – ԱՔ/: Ձեռք_բարձրացնել նշանակում է ժայն_/ուշադրություն/_խնդրել, նաև՝ սպառնալ /մեկի վրա ձեռք բարձրացնել/, մինչդեռ ձեռքերը_բարձրացնել կապակցության մեջ նեը հոգնակերա ցուցիչը բոլորովին հակառակ իմաստ է հաղորդել նախորդ ՈՒ-ին՝ անձնատուր_լինելու, հնազանդվելու իմաստը /Անձնատուր եղիր, ասում են ավազակներին/ – ՍԽ/:

Ընկեր-հոգնակի իմաստային հակադրությունները ակնառու են նաև ոտքը_գետնից_կտրվել /այլևս ոտաբոբիկ չլինել/ և ոտքերը_գետնից_կտրվել /շատ ուրախանալ/ կառույցներում: Կամ՝ ոտքը_երկարաց-

նել կապակցությունը ուղղակի իմաստ ունի, մինչդեռ ոտքերը_երկարացնել նշանակում է նաև մեռնել:

Միևնույն բաղադրիչներով կազմված կապակցություններում թվի քերականական կարգը մի դեպքում կարող է կապակցությունը վերաիմաստավորել՝ նրան դարձվածային իմաստ հաղորդել, իսկ մի այլ դեպքում՝ ոչ: Այստեղ արդեն կապակցությունների իմաստների ձևավորման գործում հիմնական ու վճռական նշանակություն ունի խոսքաշարը. խոսքային միջավայրն է, որ կապակցությանը մերթ սովորական, մերթ վերաիմաստավորման զաղափար է հաղորդում: Օրինակ, ձեռքերը_լվալ_/լվանալ/ կապակցությունը, նայած խոսքային միջավայրին, մի դեպքում ուղղակի իմաստով է գործածվում /Երեխան ձեռքերը լվաց և գնաց քնելու/, իսկ մեկ ուրիշ խոսքաշարում նշանակում է պատասխանատվությունն իր վրայից զցել, մի բանից հրաժարվել /Պիղատոսի նման մենք լվանում ենք մեր ձեռքերը այս մութ, անհասկանալի, անիմանալի գործից -Եշ/: Այդպես էլ՝ աչքերը_բաց_անել-ը մի խոսքաշարում նշանակում է քնից_արթնանալ /Երեխան չէր ուզում աչքերը բացել, բաց անել/, իսկ մեկ ուրիշ խոսքաշարում՝ շրջահայաց,_ուշադիր,_խորամուխ լինել_որևէ_գործի_մեջ /Մեծ տղա ես, աչքերդ բաց արա, ինքդ տես ու մտածիր -Շեքս./:

Հայերենում ավելի շատ են այն ԴՄ-ները, որոնցում թվի քերականական կարգը իմաստազատիչ դեր չի կատարում: Այդպիսի ԴՄ-ները ձևավորվում են գոյականական բաղադրիչի կամ միայն եզակի, կամ միայն հոգնակի թվերով: Հետևյալ ԴՄ-ներում գոյական բաղադրիչը հանդես է գալիս միայն եզակի թվով՝ հին_դարմանը_քամուն_տալ, իզուր_տեղը ջուր_ծեծել, ավազի_վրա_տուն_շինել, ուղտը_գոալով_ջրել, պղտոր ջրում_ձուկ_որսալ, ձեռք_քերել...:

Համեմատաբար ավելի պակաս են այն ԴՄ-ները, որոնք ձևավորվում են գոյականական բաղադրիչի միայն հոգնակի թվով՝ սիրամարգի_փետուրներով_զարդարվել, ականջները_հոսս_անել, աստմները_հաշվել, փետուրները_քամուն_տալ, ոտքերը_հինա_դնել, դռները_ընկնել, աչքերին_հողու_մոխիր_փչել, գուլպները_խցացնել, սվիններով_դիմավորել և այլն:

Ավելի սակավ են այնպիսի դարձվածները, որոնցում թվի քերականական կարգն իմաստազատիչ դեր չի խաղում և ոչնչով չի ազդում ԴՄ-ի իմաստի վրա, այսինքն՝ տեղի է ունենում եզակիությանը_և_հոգնակիությանը_իմաստային_հակադրությանը_չեզոքացում. նույն իմաստով հավասարապես գործածվում են՝ մատի_վրա_խաղացնել և մատների_վրա_խաղացնել, ականջը_սրել և ականջները_սրել, աչքին_փոշի_փչել և աչքերին_փոշի փչել, /մեկի/ ոտքը_ընկնել և ոտքերը_ընկնել, ձեռքը_բռնել և ձեռ-

քերը_բռնել և այլն:

Ընդհանրապես դարձվածաբանության հետ կապված որոշ հարցեր ու իրողություններ համեմատաբար քիչ են պայմանավորված քերականական ձևերով ու իմաստներով: Դրանց մի մասն արդյունք է տվյալ ժողովրդի լեզվամտածողության և իրականության ամենաբազմազան դրսևորումների, շատ դարձվածներ էլ պարզապես ժողովրդի մտքի թռիչքի, իրականության և վերացական դատողության արդյունք են: Օրինակ, դժվար է ասել, թե ջուրն_ընկնել և ջրերն_ընկնել դարձվածներում ինչու է հնարավոր ջուրը բաղադրիչի և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով գործածությունը, իսկ ջուր_տեղալ կամ ջրից_հոր_դուրս_գալ կապակցություններում հնարավոր չէ ջուր-ը հոգնակի թվով գործածել: Այդպես էլ՝ ինչու՞ աչքը բաղցրացնել ԴՄ-ում աչքը եզակի է, իսկ աչքերին_հող_ու_մոխիր_փչել ԴՄ-ում՝ միայն հոգնակի, կամ՝ ինչո՞վ է բացատրվում ալեները/_եկան և աքլորը_բարձրացել_է_կտուրը ԴՄ-ների գոյական բաղադրիչների՝ մի դեպքում միայն եզակի, մյուս դեպքում՝ միայն հոգնակի թվով հանդես գալը: Իհարկե, դա բոլորովին էլ չի նշանակում, թե ԴՄ-ները կառուցված են անտրամաբանական հիմունքով. պարզապես որոշ ԴՄ-ներում տրամաբանական կապերն ու հարաբերությունները շատ են հեռացել իրենց նախնական հիմքից, մթագնել են ու քարացել /տե՛ս վերևի օրինակները/, իսկ մյուսներում դեռ պահպանվում են. օրինակ, հաշվել անորոշ ներքայով կազմվող ԴՄ-ի գոյական բաղադրիչը բայի իմաստի և սեռի պահանջով անպայման պետք է հոգնակի թվով գործածվի /ատամները հաշվել, աստղերը հաշվել, օրերը հաշվել/, նույնպես և զարդարվել բայի պահանջով նրա խնդիրը պետք է հոգնակի թիվ ունենա, որովհետև զարդարվելու համար մի քանի առարկաներ են պետք /սիրամարգի փետուրներով զարդարվել/, իսկ խտացնելու համար էլ մի քանի զույներ են հարկավոր /զույները խտացնել/, բեմում երբեք մեկ կուլիս չի լինում /կուլիսների ետևում/ և այլն: Այդպես էլ՝ ղարմանը և ավազը սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում /ղարմանը քամուն տալ, ավազի վրա տուն շինել/ և այլն:

4. Հոլովը, որպես բառափոխական ձևաիմաստային հատկանիշ, նույնպես հատուկ է բայական ԴՄ-ների գոյական բաղադրիչներին. միևնույն գոյական բաղադրիչները տարբեր հոլովներով դրվելիս տարբեր իմաստներ են հաղորդում ամբողջ դարձվածին, այսպես՝ սիրտ_առնել ԴՄ-ն գոյական բաղադրիչի ուղղական-հայցական հոլովով նշանակում է քաջալերվել, իսկ երբ փոխվում է նույն կառույցի գոյական բաղադրիչի հոլովը, լրիվ փոխվում է նաև ամբողջ դարձվածի իմաստը՝ սրտին_առնել, որն արդեն վերաբավորվել է նշանակում: Այսինքն, գոյականական

բաղադրիչի իմաստային կողմը ծուլվում է ամբողջ դարձվածի իմաստին: Իրողությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ԴՄ-ի գոյականական անդամի յուրաքանչյուր հոլովածև նրա կեղևն է, արտաքին ու նյութական կողմը, որի մեջ էլ ամփոփվում է ամբողջ դարձվածի բովանդակությունը[6], իսկ երբ փոխվում է այդ գոյական անդամի հոլովածևը, այն իր հետ անշուշտ բերում է նաև ամբողջ ԴՄ-ի բովանդակության փոփոխություն: Այստեղից էլ դժվար չէ ասել, որ որոշ ԴՄ-ներում գործում է նաև հոլովման հարացույցը, որը նայած ԴՄ-ների իմաստների և կիրառության ոլորտների, կարող է լինել լրիվ կամ թերի: Այդ հարացույցը հայերենի բայական դարձվածաբանական միավորներում կարող է տատանվել 2-ից մինչև 5-ի սահմաններում, և յուրաքանչյուր հարացուցային ձև դարձվածին հաղորդում է առանձին իմաստակիր միավորի արժեք:

Հայերենում հոլովական լրիվ հարացույց ունեցող բայական ԴՄ-ները այնքան էլ շատ չեն. ահա դրանցից մեկը.

Ուղղ.,հայց. - աչքը_ընկնել /մի քանի աչքադրվել/,
Տրակ./անորոշ/- աչքի_ընկնել /ծանաչվել,ուշադրություն գրավել/,
Տրակ./որոշյալ/- աչքին_ընկնել /երևալ, պատահաբար տեսնվել/,
Բաց. - աչքից_ընկնել /նախկին հարգանքը չունենալ, այլևս չհարգվել/,
Գործ. - աչքով_ընկնել /նույնն է, ինչ որոշյալ տրականը/,
Ներգ. - աչքում_ընկնել /հեղինակությունը, վարկը կորցնել/:

ԴՄ-ների իմաստների նման փոփոխություններն ակներևաբար պայմանավորված են հոլովական քերականական կարգի իմաստազատիչ դերով:

Հայերենում ավելի շատ են թերի հարացույց ունեցող ԴՄ-ները, որոնցում նույնպես ակնհայտ են իմաստային տարբերությունները: Համեմատենք տարբեր հոլովներով հանդես եկող միևնույն կառուցվածքային միավորների իմաստային տարբերություններն ու հակադրությունները.

երեսին_ընկնել-անօգնական մնալ և երեսից_ընկնել-արհամարհվել.
ոտքերն_ընկնել-խնդրել,աղերսել և ոտքերից_ընկնել-ծերանալ,հիվանդանալ
վզին_ընկնել - բեռ դառնալ և վզից_ընկնել-բեռից ազատվել.
գլխին_նստել - շատ երես առնել և գլխում_նստել-ըմբռնել,հասկանալ.
մի_բան_ձեռք_գցել-/մի բան/ ծա- և մի_բանի_ձեռք_գցել-ձեռնամուխ
րել,գտնել,ձեռք բերել լինել /մի բանի/.

մեկի սիրտը բաց անել-ուրախաց- և մեկին սիրտը բաց անել-մեկի
նել, տրամադրությունը հետ կիսվել, բացատրվել,
բարձրացնել թեթևանալ:

Հայերենում ավելի տարածված են գոյականների միայն մեկ հոլովաձևով կաղապարված ԴՄ-ները, որոնց մեծ մասն այլ հոլովաձևերով զրեթե հանդես չի գալիս: Միայն մեկ հոլովով հանդես եկող ԴՄ-ները մի տեսակ քարացած կառույցներ են դարձել: Օրինակ՝ մեջից փուշ հանել կապակցությունը դարձվածային իմաստով նշանակում է մեկին օգնել, որևէ հարցում օգտակար լինել. այս ԴՄ-ում մեջ գոյականը ԴՄ-ի անդամ է դառնում միմիայն բացառական հոլովաձևով, բավական է փորձել այն գործածել որևէ այլ հոլովով, որ լրիվ դադարի ԴՄ-ի բաղադրիչ լինելուց, չեզոքանա նրա վերաիմաստավորումը և կապակցության մեջ ունենա իր սովորական՝ բուն իմաստը, ասենք՝ մեջով փուշ հանել:

Մաղով ջուր կրել /անօգուտ, ապարդյուն գործ կատարել/ ԴՄ-ում էլ մաղ գոյականը միայն գործիական հոլովով է վերաիմաստավորվում:

Ասվածից սակայն չպետք է ենթադրել, թե այս կամ այն գոյականը, որպես ԴՄ-ի բաղադրիչ, եթե լրիվ հարացույցով հանդես չի գալիս, ուրեմն միայն մեկ հոլովաձևով կարող է մտնել դարձվածային կապակցության մեջ, իհարկե ոչ, այստեղ խոսքը գնում է միևնույն կառույցի վերաբերյալ, իսկ այլ կառույցներում, ուրիշ բաղադրիչների հետ, ինչ խոսք, որ նույն գոյականը կարող է հանդես գալ տարբեր հոլովաձևերով. օրինակ, ականջով փոշի չըժժել դարձվածում ականջ գոյականը միայն գործիականով կարող է կիրառվել. փոշի և չըժժել բաղադրիչների հետ ականջ գոյականը ուրիշ ոչ մի դարձվածային կապակցություն չի կազմի, մինչդեռ այն տարբեր հոլովաձևերով կարող է հանդես գալ բոլորովին ուրիշ բաղադրիչների հետ և, բնականաբար, այլ իմաստներ արտահայտել, այսպես՝ ականջին օդ անել, ականջի եռանդ գցել, ականջը ծայնի պահել, ականջին տալ, ուղտի ականջում քնած լինել, ականջից ծանը և այլն:

ԴՄ-ներում հոլովների լրիվ հարացույցի բացակայությունը հիմնականում պետք է բացատրել ԴՄ-ների իմաստների կայունությամբ, այսինքն՝ ավելի շատ ԴՄ-ներ կայունացել են միայն մեկ կամ երկու հոլովաձևերով և այդպես էլ քարացել:

Հայերենում բայական դարձվածներ կազմելու գործում ամենամեծ ակտիվությունն ու համախականությունը բացառական հոլովն ունի /ջրից չոր դուրս գալ, մատից փուշ հանել, երկնքից աստղեր ցած բերել, մազից կախված լինել, շան քթից ջուր խմել, մատից հոտ քա-

շել, սրտից արյուն գնալ, բերանից ջուր վազել, մազից պրծնել, քթից բերել /հանել/, լվից մրազու հանել, աղբը անից դուրս հանել, ժեռքից քաց քողնել, իր շուքից վախանել և այլն/: Իր ակտիվությամբ բացառականին չի զիջում <u>ըրըակաանը</u> /գլխին ջուր մաղել, աչքին քոզ փչել, գլխին խաղ խաղալ, խելքին քամի փչել, գլխին գայլի ավետարան կարդալ, գլխին շան լափ լցնել, գլխին հարամ անել, հողին հավասարեցնել, բերնին զալ և այլն/: Պակաս գործուն չէ նաև <u>ուղղակաան-հայցակաան հոլովը</u> /օժիքը բռնել, կյանքը ուտել, աչքը հանել, քիքը ջարդել, ատամները հաշվել /քաշել/, հոգին բերանը բերել, բուրդը քամուն տալ, օր ու արև չտալ, խոսքը սար ու ժոր գցել, ջաղացը մածուն աղալ, ծովը մտնել,ցամաք դուրս գալ, ջուրը տանել, ծարավ ետ բերել և այլն/: Իր համախականությամբ ու կիրառությամբ այս հոլովներին զիջում է <u>գըրնիչակաանը</u> /ականջով փոշի չարժել, մաղով ջուր կրել, ատամներով պաշտպանել, խաղով հասկացնել, օդով սնվել, աչքերով ուտել, /մեկի/ խաչով քաղվել և այլն/: Ամենից քիչ դարձվածաբանական միավորներ են կազմվում <u>ներգոյական հոլովով</u> /գրպաններում մկներ ման գալ, օդում կախված լինել, լվացքը դրսում անել, գլխում նստել, մի ոտքը գերեզմանոցում լինել, ժեռքը ծոցում լինել և այլն/:

5. Ժամանակակից հայերենում բայական ԴՄ-ները համախ էլ իմաստափոխվում են անձի անունը իրի անունով կամ իրի անունն անձի անունով փոխարինելիս. նման դեպքերում դարձվածը կաղապարվում է հատուկ բառերի օգնությամբ՝ անձի համար՝ <u>մեկը</u> անորոշ դերանվամբ, իրի համար՝ <u>մի-բան</u> կապակցությամբ:

Համեմատենք հետևյալ զույգերը.

<u>մեկի-երեսը-չտեսնել</u> – /մեկին/ չհանդիպել, երկար ժամանակ տեսած չլինել

և <u>մի-բանի-երեսը-չտեսնել</u> – /մի բանից/ զուրկ լինել.

<u>մեկի-համար-հոգի-տալ</u> – անսահմանորեն նվիրված լինել մեկին /Խաչին Թամարի համար հոգի էր տալիս– Շիրվ./

և <u>մի-բանի-համար-հոգի-տալ</u> – 1.սաստիկ փափագել, ցանկանալ /Հայկական գինու համար հոգի էր տալիս –ՍՋ/.

2.ժլատության աստիճանի խնայել/Փողի համար հոգի էր տալիս – Շիրվ./.

<u>մեկի-հետևից-ընկնել</u> – հալածել, հետապնդել /մեկին/

և <u>մի-բանի-հետևից-ընկնել</u> – մի բանով զբաղվել, հետամուտ լինել.

<u>մեկի-վրա-ծանրանալ</u> – /մեկին/ նեղություն պատճառել, ծախսի

տակ գցել

և մի բանի վրա ծանրանալ - խորամուխ լինել մի հարցի մեջ.
մեկի հետ հաշվի նստել - խորհրդակցել, կարծիքներ կիսել
և մի բանի հետ հաշվի նստել - կարևորություն տալ, նկատի ունենալ:

Այսպիսով, ԴՄ-ների իմաստային հատկանիշներն ու քերականական իմաստները սերտորեն կապված են իրար հետ, փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով և, ինչպես երևաց մեր ուսումնասիրությունից, քերականական փոփոխությունները համախ առաջացնում են նաև ԴՄ-ների իմաստային փոփոխություններ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Տես նաև Ա.Սուքիասյան, ժամանակակից հայոց լեզու, 1982, էջ 369:
2 Գ.Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 210;
3 Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 218:
4 Տես նաև Հ.Նազարեթյան, Դեմքի քերականական կարգը ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 82:
5 Թվի, ինչպես նաև քերականական այլ կարգերի իմաստազատիչ դերի մասին խոսում է նաև Գ.Բեգիջյանը իր ,,ժամանակակից հայերենի դարձվածաբանություն,, գրքում /Երևան, 1973/:
6 А.М.Чепасова, Специфика функционирования грамматических категорий во фразеологизмах. В книге: "Вопросы фразеологии современного русского языка", Челябинск, 1975, стр. 22-23.

Г.А.БАГИРОВ (Баку, СССР)

АРМЯНСКИЕ ЛЕКСИЧЕСКИЕ ЭЛЕМЕНТЫ В АЗЕРБАЙДЖАНСКОМ ЯЗЫКЕ

Азербайджанский народ исторически на протяжении веков жил и продолжает жить бок о бок с братским армянским народом. Влияние этого соседства проявилось в обычаях и нравах, в общественных, политических и нравственных воззрениях народов, создало общие и частные сходства, соответствия и близость в области литературы, искусства, быта... Об исторической и территориальной близости, о дружбе и братстве азербайджанского и армянского народов достаточно много написано.

Особенное отражение получило это соседство в произведениях азербайджанских и армянских писателей. Что же касается взаимовлияния и взаимоотношения азербайджанского и армянского языков, то об этом написаны многочисленные статьи, защищены диссертации. (См. кандидатские диссертации: Григорян А.А. "Опыт историко-лексического исследования азербайджанских заимствований в армянских источниках и диалектах армянского языка", Баку, 1981; Багиров Г.А. "Азербайджанские говоры Сисианского района Армянской ССР", Баку, 1966; книги М.А.Ширалиева "Бакинский диалект" и "Основы азербайджанской диалектологии"; а также статьи З.Будаговой и В.Гукасяна "Армянско-азербайджанские языковые связи" - "Советская тюркология", Баку, 1979, № 4; М.И.Мамедова "Об азербайджанских заимствованных словах в армянском языке" жур. "Азәрбајчан дили вә әдәбијјаты тәдриси", Баку, 1973, № 3.)

В ряде исследований констатируется следующий факт: азербайджанско-армянские языковые связи своими корнями уходят в глубокую древность. Употребление в говорах азербайджанского языка и в художественной литературе слов армянского языка получает более интенсивный характер начиная с XIX века и особенно развивается после победы Советской власти в этих респуб-

ликах.

В настоящем сообщении рассматриваются армянские лексические элементы, заимствованные в азербайджанском языке. Доводим до внимания участников нашего симпозиума, что армянские заимствования обнаруживаются не только в живой разговорной речи носителей азербайджанского языка, но и в азербайджанской художественной литературе.

В азербайджанской художественной литературе, начиная с образца устно-поэтического народного творчества, т.е. с дастана "Асли и Керем", и до наших дней, создана целая галерея образов, олицетворяющих представителей армянского народа (Асли и Кара Кешиш в дастане "Асли и Керем"; образы Мкртыча и Аракела в комедии "Гаджи Кара" М.Ф.Ахундова; Кыды Кирва в пьесе "Из под дождя да в ливень" Н.Везирова; Карапет и Саркис в комедии "Игра в изюм" Дж.Мамедкулизаде; Аллахверди, Бахши, Сона, Айказ, Агамян в пьесе "В 1905 году" Дж.Джабарлы; Аршак в драме "Вагиф" С.Вургуна и множество других образов).

Естественно, что в их речи нередко наблюдаются лексические элементы родного для них армянского языка, вложенные в их уста великими мастерами слов азербайджанской литературы. Армянские заимствования особенно широко представлены в произведениях писателей конца XIX - начала XX веков, а именно: Дж.Мамедкулизаде, А.Ахвердиева, Ю.В.Чеменземинли, М.А.Сабира, Н.Нариманова.

Приведем несколько примеров: в комедии "Игра в изюм" Дж.Мамедкулизаде читаем: "Берите лопаты, кирки, обливайте друг друга и поскорее выройте глубокую яму в углу стойла, опустите дохлятину в яму и засыпьте сверху навозом и ахбуном." В дневнике Ю.В.Чеменземинли, посетившего Армянскую ССР после установления Советской власти, читаем: "Начали создавать какой-то дашнакцутюн, уронили престиж хлеба-соли отцов". А также: "По левую сторону дворца были построены стойла, амбары, мараки."

Употребляемые в этих предложениях ахбун - "навоз, мусор"; дашнакцутюн - "националистическая организация"; марак - "специальное сооружение из досок, глины для хранения овощей, дров, разных припасов" являются исконно армянскими словами.

Дж.Мамедкулизаде, А.Ахвердиев, Ю.В.Чеменземинли и другие азербайджанские писатели, жившие в конце XIX - начале XX века,

владели армянским языком и умели читать и писать на этом языке. В одном из своих фельетонов Дж.Мамедкулизаде скромно писал: "Понимая армянский язык, я остановился, чтобы послушать разговор попа". (Сбор. соч., том 2, стр. 704). Армянские лексические единицы, встречающиеся в произведениях вышеуказанных азербайджанских авторов, почти не были искажены ни по фонетическому строю, ни по семантике. Так, в сатире М.А.Сабира "Чихание" читаем: " Андыра галмыш нə јаман сəслənир" (Будь оно проклято, как оно плохо звучит"). Как в древнеармянском, так и в современном литературном языке и в говорах слово "андыр" (армянское " անտեր " /"антер"/ часто употребляется в значении "беспризорный", "без хозяина", а в сочетании с глаголом (мнал) также в значении "будь неладен", "будь проклят". Употребление этого слова встречается и в произведениях Дж.Мамедкулизаде, А.Ахвердиева, Ю.В.Чеменземинли, Н.Нариманова и других. Так, например, у Ю.В.Чеменземинли: "Дүнјада дəрд верəнлəр əhриманын јаратды ы дивлəр, андырлар, нəслəр вə чорлардыр". (То, что в мире приносит горе и печаль - это порожденные Ахриманом дэвы, антеры, насы и болезни".); у Н.Нариманова: Кулпəри - "Ала андырыны" (Гюльпери - "Возьми свое беспризорное, убирайся со своим беспризорным".). Слово "андыр" широко употребляется в наших говорах, особенно в тех из них, которые находятся на территории Армянской ССР. Например: "Кəл бы андырынызы апар." (Иди забери вашу беспризорную. (Район Сисиан, село Гызыл Шафак); "Бы андыры ачых бурахмајын, кəлип гап-бачаны да ыдып". ("Не оставляйте этого беспризорного не привязанным..."). (Район Сисиан, село Дастакерт).

Видные азербайджанские мастера слова не ограничивались употреблением в своих произведениях лексических единиц армянского языка. Для более живого и колоритного изображения в своих произведениях представителей армянского народа, они зачастую слова азербайджанского языка употребляли в их устах в соответствии с произносительными нормами армянского языка, тем самым достигая большей типизации, эмоциональности и художественности образов. Так, например, в комедии Н.Везирова "Из под дождя да в ливень" - Мельник (Кыды Кирве): "Адə , нə чох адам ваааг!,hачы Ганбар кирвə , аллаh сахласун... Па, Ашрап бəј , Ашрап бəј , аллаh сахласун." В комедии "Игра в изюм"

Дж.Мамедкулизаде: Саркис (Карапету): "Jахшысы будур биз кедəк, сонра кəллуг, пулу аллуг. Вааа, олан, нијə дејируг..."

Выделенные в вышеприведенных примерах слова азербайджанского языка в устах персонажей - представителей армянского народа - даны в произношении, соответствующем армянскому произношению.

Писатели реалисты зачастую употребляли в своих произведениях армянские выражения и предложения так, как они звучат на языке оригинала, что в свою очередь обеспечивало бóльшую полноту, выразительность, совершенство самих произведений и их художественных персонажей. Такие выражения и предложения способствуют раскрытию мыслей и идей автора, их более точному выражению. Так, например, в одном из фельетонов Дж.Мамедкулизаде поп говорит: " Jашасын вəтəн јолунда фəда олан ермəни милləти! Jашасын милləт у рунда шəhид олан гардашларI Кетсе, кетсе hајреник!" (Да здравствует армянская нация, ставшая жертвою за родину! Да здравствуют братья, ставшие мучениками за нацию! Да здравствует родина!). Или у того же автора в комедии "Игра в изюм" - Карапет (Саркису): "Зарманали бана" (Удивительное дело).

Рассмотрим лексические единицы армянского языка, наблюдаемые в азербайджанской разговорной речи, а также в диалектах и говорах азербайджанского языка, находящихся на территории Армянской ССР.

Лексические единицы армянского языка, входящие в данную группу, в количественном отношении доминируют над лексическими единицами армянского языка, употребляемыми в художественной литературе. Дело не только в большом количестве лексических единиц армянского языка, употребляемых в говорах азербайджанского языка. В лексических единицах армянского языка, употребляющихся в азербайджанской устной речи, в азербайджанских говорах на территории Армянской ССР, наблюдаются большие фономорфологические и лексико-семантические изменения. Об этом свидетельствуют такие слова, как "андыр" ("беспризорный - армянское " անտեր "), дыға//тыға ("парень", "мальчик", - армянское " տղա "), hахчых//ахчых" ("девушка" - армянское " աղջիկ ") и др.

Еще в I960-I966 годах, исследуя азербайджанские говоры

Сисианского района Армянской ССР, мы собрали лексические единицы армянского языка, употребляющиеся в этих говорах и исследовали эти слова в специальном разделе своей монографической работы. При внимательном рассмотрении этих слов выясняется, что данные лексические единицы давно вошли в азербайджанские говоры Сисианского района и хорошо понятны носителям азербайджанского языка, живущим там. Это, в основном, экзотические слова (см. вышеприведенные примеры).

Существует и вторая группа армянских слов, употребляющихся в говорах. Они не встречаются ни в азербайджанском литературном языке, ни в диалектах и говорах на территории Азербайджанской ССР. Такие лексические единицы наблюдаются лишь в азербайджанских говорах и диалектах на территории Армянской ССР. Данные слова вошли в эти говоры в период после установления Советской власти, в связи с новым укладом общественной жизни. Отметим следующие лексические единицы, заимствованные из армянского языка: "анаһатдых//аннатдых" (частное хозяйство - армянское " անհատ ձեռնարկություն "), "ашхор" (трудодень - армянское " աշխոր "), "баһесд//паһест" (склад - армянское " պահեստ "), "баһаг//паһак" ("сторож - армянское " պահակ "), "банаг//банак"(солдатская служба - армянское " բանակ "), "вәрнәһар " (термин в пчеловодстве), "дашдавараган" (полеводческая - армянское "դաշտավարական "), "чоранотс//чоранос" (табачная сушильня - армянское " չորանոց "), "маснакерт//маснакет" (специалист - армянское " մասնագետ "), "наһага//нәхагаһ " (председатель - армянское " նախագահ "), "о агавар//охакавар" (звеньевой - армянское " օղակավար "), һәшвәбаһ //һашвабаһ " (бухгалтер - армянское " հաշվապահ "), "чагат" (поверхность), "шәпәтор" (суббота, субботний день; субботник - армянское " շաբաթօրյակ " и т.п.

Приведем несколько примеров употребления лексических единиц в предложениях азербайджанского языка: Бурада да овахт һәлә анаһатдыхды (әр.) "Тогда и здесь пока была частная собственность" (անհատական սեփականություն); О, ашхорумуз галанда көмәклик елијирди (Гыз.) "Когда у нас оставались трудодни (աշխոր), он помогал нам"; Баһесдән тахыл алма а кетмишдик (Ва .) "Мы пошли на склад (պահեստ) получать пшеницу"; Елә бир ишим јохду, бы бағлара баһагам. (Вағ .)

"Я не очень-то занят, являюсь сторожем (պահակ) этих садов"; Оғлум банага кедип (Гыз.)."Сын пошел в солдаты (բանակ)"; Јешији тез долдуранда сузмурух, устүнә вәрнәһар гојрух (әр.) "Когда рамки наполняются быстро (медом), то не процеживаем, сверху ставим магазин" (վերնահարկ); Бујыл икиминчи дашдавараган бригада габахчылды (Ш.)."В этом году вторая полеводческая (դաշտավարական) бригада является передовой"; "Тәзә терт вермәсән, ары ишә кетмәз (әр.) "Пока не дашь пчелам нового лепестка (թերթ), пчела на работу не пойдет"; Кәтдиләр мәни гојдулар бригәдир, чурбә ур ишдәрә , маснакет, та нә билим нә (Ағ.). "Меня назначали то бригадиром, то на какие-то разные работы специалистом (մասնագետ). Наһаганы кәтдә тапәммәдим (Ағ .) "Не смог застать председателя (նախագահ) в селе"; Оғагавар һәммәшә јерләри өлчүр (Ш.). "Звеньевой (օդակավար) постоянно измеряет земли"; һәшвәбаһ ичласда путун галхозун һесабыны данышды (Вағ .) "Бухгалтер (հաշվապահ) на собрании говорил о расчетах колхоза"; Дашы чагат елијир, сонра тыфара гојрух. (Вағ .). (Сначала шлифуем поверхность, потом ставим в стену) и т.п.

В заключение следует отметить, что давно настало время изучения диалектов и говоров азербайджанского языка жителей Армянской ССР с целью выявления в них лексических единиц армянского языка, составления их подробного словаря и научного исследования языковых взаимосвязей и взаимовлияний двух соседних братских народов. Следует также собрать и исследовать слова армянского языка, употребляемые в азербайджанской литературе. Это - один из актуальных вопросов азербайджанского языкознания.

Հ.Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑԻՆ ՁԵՎԵՐԻ ՏԵՐՄԻՆԱՎՈՐՈՒՄԸ

,,Արտահայտելով ժամանակի իմացաբանական կատեգորիան՝ քերականական ժամանակը, ինչպես ամեն մի քերականական կատեգորիա, չի նույնանում իր հիմքում ընկած տրամաբանական կատեգորիայի հետ,,[1]: Մոտ երեսուն տարի առաջ բայի ժամանակի քերականական կարգի տեսական քննությունը մենք սկսել ենք այս հանրահայտ դատողության վերահաստատումով: Ոչ այնքան արդի հայերենի բայածևերի ու սրանց ժամանակային իմաստների փոփոխությունների /այդպիսի փոփոխություններն ավելի երկարամյա ժամանակաշրջանի արդյունք են լինում/, որքան տեսական հայացքների ու, մասամբ էլ, տերմինագործածության փոփոխման պատճառով մենք անհրաժեշտ զտանք կրկին անդրադառնալ բայի ժամանակի կարգին:

Մեր վերլուծությունն սկսելով նույն դատողությամբ՝ կամենում ենք միաժամանակ ասել, որ վերջին երկու-երեք տասնամյակներում հայերենի բայի ժամանակի կարգին անդրադարձող հայագետներից ոմանք, ընդգծելով ժամանակի փիլիսոփայական-տրամաբանական և լեզվական-քերականական կարգերի տարբերությունը, մի պահ մոռանում են, որ ժամանակի քերականական կարգի բովանդակային պլանում վերջիվերջո ընկած է ժամանակի տրամաբանական հասկացությունն իր եռանդամ՝ ներկա, անցյալ, ապառնի, հակադրությամբ: Լեզվաբանության մեջ այս եռանդամ հակադրությունը հանրույթային արժեք ունի, և ավելորդ է այն խոսակցությունը, թե բոլոր բայածևերում ներկա, անցյալ, ապառնի ժամանակի իմաստներ որոնելը, իբր թե, հանգեցնում է լեզուների առանձնահատկությունների անտեսմանը, և վերլուծությունը դառնում է ոչ լեզվական կամ լեզվաբանական: Մեր կարծիքով, լեզուների բայածեվերում ժամանակային այլ իմաստներ չկան էլ, որ լեզվաբանը որոնի, իսկ այն, ինչ այսուամենայնիվ որոնում և ժամանակի անվան տակ հաճախ գտնում են, դրանք բայի այլ քերականական կարգեր ու ենթակարգեր են՝ շփոթված կամ նույնացված ժամանակի կարգին: Հարցի առավել

հստակ ու հետևողական քննությունը գտնում ենք Գ.Ջահուկյանի և Է. Աղայանի վերջին տարիների աշխատություններում[2]: Անջատելով բայական քերականական իմաստների արտահայտության միջոցների քննությունը դրանց բովանդակային միավորների քննությունից՝ այս հեղինակները հստակորեն առանձնացնում են լեզվական վերլուծության պլանները, ապա որոշում ձևական հակադրություններն ու սրանցով պայմանավորված իմաստային հակադրությունները՝ քերականությունները: Առանց ձևական հակադրությունների հստակ տարբերակման և ապա սրանցով արտահայտված քերականությունների իմաստային սահմանման, քերականական կարգ որոշել չի կարելի:

1. Ձևական կամ արտահայտչական վերլուծություն

Ժամանակակից հայերենի բայի ժամանակային ձևերն ըստ կազմության լինում են համադրական և վերլուծական:

Ա. Համադրական կազմության ժամանակաձևեր

Համադրական /պարզ/ կազմության կանոնավոր երկանդամ հակադրություն ունեն ըղձական և սրանից կազմված ենթադրական և հարկադրական եղանակների ժամանակաձևերը, այն է՝ /կ-, պիտի/ վազեմ - վազեի:

Այս ձևերում ժամանակի կարգը երկու քերականություն ունի, ընդորում թե՛ համադրական, թե՛ վերլուծական ձևերում ժամանականիշ արժեք ունեն բայարմատին հաջորդող ձևույթների հակադրությունները միայն: Բայարմատին նախորդող բաղադրիչները /կ-, պիտի, ը, ե՞ե, գուզե, մի .../ ժամանականիշ արժեք չունեն: Հետևաբար ժամանակային հակադրություն ու տարբերություն չկա վազեմ-կվազեմ-պիտի վազեմ, ինչպես նաև՝ վազեի-կվազեի-պիտի վազեի բայաձևերի միջև:

Երկանդամ հակադրություն կազմող այս բայաձևերը կազմվում են բայի ներկայի կամ անորոշի պարզ ու ածանցավոր հիմքերից և սրանց ավելացվող խոնարհիչ ձայնավորից ու դիմորոշ վերջավորություններից:

Ա խոնարհման բայերի ժամանակային հակադրություն կազմող համադրական ձևերի հարացույցը՝ դիմային և թվային տարբերակումներով, ունի հետևյալ պատկերը.

աղամ	աղանք	աղայի	աղայինք
աղաս	աղաք	աղայիր	աղայիք
աղա	աղան	աղար	աղային

Ե խոնարհման բայերի համադրական ձևերի հարացույցը ունի հետևյալ պատկերը.

վազեմ	վազենք	վազեի	վազեինք
վազես	վազեք	վազեիր	վազեիք
վազի	վազեն	վազեր	վազեին

Վերոհիշյալ բայաձևերում ժամանականիշ հակադրություն կազմող ձևույթներն են.

եզակիում՝	- մ	- ի
	- ս	- իր
	- -	- ր
հոգնակիում՝	- նք	- ինք
	- ք	- իք
	- ն	- ին

Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերում համադրական կազմության երկանդամ հակադրություն են կազմում արդի հայերենի մի քանի հավելավոր բայեր: Դրանցից են՝

գիտեմ - գիտեի
կամ - կայի
արժեմ - արժեի
ունեմ - ուներ
եմ - էի

Սրանցում ժամանականիշ ցուցիչները վերը թվարկված նույն վերջավորություններն են, թեև գիտեմ-գիտենամ, ունեմ-ուներամ, արժեմ-արժեիամ և այլ ձևերի հակադրությունը լրացուցիչ հանգամանք է դառնում, որպեսզի բովանդակության պլանում սրանցից առաջինները՝ արմատական հավելավոր ձևերը, գիտակցվեն որպես ներկա, իսկ երկրորդները՝ ածանցավորները, ապառնի:

Սահմանական եղանակի ժամանակային ձևերի շարքում համադրական կազմություն ունի անցյալ կատարյալը /վազեցի/: Կատարյալի ձևերում ժամանականիշ արժեք ունեն -ի, -իը, -// -ի, -իը, -ացա, -ինք,-իք, -ին // -ա, -ար, -ավ,-անք, -աք, -ան վերջավորությունները,որոնք հակադրվում են ներկայի վերջավորություններին, ապա՝ կատարյալի հիմքի -ացա, -աց, -ը մասնիկները, որոնք միանալով բայարմատին, հակադրվում են անորոշի պարզ կամ ածանցավոր հիմքին:

Վազի՛ր, վազեցե՛ք հրամայականի համադրական կազմության ձևերը այդ եղանակի ներսում իրենց հակադրվող քերականույթ չունեն: Դրանք բովանդակային պլանում գիտակցվում են որպես առանձին ժամանակաձև մյուս եղանակների ժամանակաձևերի հակադրությամբ:

Բ. Վերլուծական կազմության ժամանակաձևեր

Հայերենի վերլուծական /բաղադրյալ/ կազմության բայաձևերում

ժամանակի կարգն արտահայտվում է երկշարք եռանդամ հակադրությամբ[3].

1-ին շարք՝ վազել եմ – վազում եմ – վազելու եմ

2-րդ շարք՝ վազել էի – վազում էի – վազելու էի:

Այս շարքասյունակային հակադրություններում գոյանում են վեց քերականություններ: Սրանցում ժամանականիշ արժեք ունեն թե՛ գործողության տարբեր վիճակներ ու հաջորդականություն արտահայտող դերբայները, թե՛ ժամանակակետ արտահայտող օժանդակ բայը:

Հայերենի բայերի մեծ մասը հարակատար դերբայով և օժանդակ բայով բաղադրված ձևեր չունի. գործածական չեն վազած_եմ, վազած_էի և նման հարյուրավոր, տեսականորեն հնարավոր, կազմություններ:

Հարակատարով կազմված նստած_եմ, հոգնած_եմ, մաշված_է և այլ հեզոք ու կրավորական բայաձևերը, որ կան և գործածական են, խոնարհման հարացույց մտցնելու դեպքում մնացած՝ հարակատարի ձևեր չունեցող բոլոր բայերը պիտի ճանաչվեն պակասավոր հարացույց ունեցող բայեր:

Էդ. Աղայանն իր ,,ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը,, աշխատության մեջ հիմնավորում է հարակատարով բաղադրված ձևերում դերբայի ոչ ժամանականիշ արժեքը և դրանք դուրս է դնում խոնարհման հարացույցից: Պլրոցական ղասագրքի նախորդ հրատարակություններում այդ ձևերը մենք բնութագրել ենք որպես անկատար ներկային /գործողության ներկային/ հակադրվող հարակատար ներկայի /վիճակի ներկայի/ ժամանակաձևեր: Այս բնութագրությամբ հարակատարի ձևերը դառնում են վիճակայնություն արտահայտող հեզոք ու կրավորական բայերի մասնակաղապարային ձևեր:

Վերլուծական կազմություն ունեն ենթադրական եղանակի ժխտական խոնարհման չեմ_վազել, չէի_վազել և արգելական հրամայականի մի՛_վազը ձևերը:

Արտահայտության պլանում զուգաձևություններ են առաջացել արգելական հրամայականի հարացույցում:

Ա. Ղարիբյանի ,,Հայոց լեզվի դպրոցական դասագրքի,, 1963 թ. հրատարակության մեջ արգելական հրամայականի հարացույցը տարբեր կազմության բայերի համար ունի այս պատկերը.

մի՛ նստիր	մի՛ կարդա
մի՛ նստեք	մի՛ կարդաք
մի՛ մոտեցնիր	մի՛ թոցնիր
մի՛ մոտեցնեք	մի՛ թոցնեք
մի՛ մոտենար	մի՛ թռչիր
մի՛ մոտենաք	մի՛ թռչեք

Դպրոցական գործող դասագրքում բայի ներկայի հիմքից կազմված արգելականի վերոհիշյալ ձևերի կողքին, որպես զուգահեռ ձևեր, նշված են նաև բայի կատարյալի հիմքից կազմված ձևեր.

մի՛ կարդացեք	մի՛ մոռացրու
մի՛ մոռնայիր	մի՛ մոռացրեք
մի՛ մոռնացեք	մի՛ թռիր
	մի՛ թռեք

Շատ հեղինակավոր հրատարակություններում վերջին ձևերն արդեն ճանաչվում են որպես նորմատիվ ձևեր: Խոսակցական լեզվում արգելականը բուն հրամայականից կազմելն իրոք դառնում է սովորական: Այս դեպքում կանոնից կշեղվի և խոնարհման պարզ բայերի արգելական հրամայականի հոգնակիի ձևը, որը կկազմվի ոչ թե բուն հրամայականից /մի՛ գրեցեք/, այլ՝ ներկայի հիմքից՝ մի՛_գրե՛ք: Այս շեղումն էլ կմնա այն պատճառով, որ բանավոր խոսքում տարածված է բուն հրամայականի գրե՛ք ձևը, գրեցե՛ք-ի փոխարեն: Ասել է թե՝ խոսակցական լեզուն այստեղ էլ շեղում չունի: Այսուամենայնիվ, արգելական հրամայականի ներկայի հիմքից կազմված ձևերը գրական նորմայից դուրս դնելը, մեր կարծիքով, վաղ է:

2. Իմաստային կամ բովանդակային վերլուծություն

Բայի ժամանակային ձևերի իմաստային վերլուծությունը համեմատաբար սուբյեկտիվ հիմունք ունի: Ձևական կամ արտահայտչական սկզբունքով տարբերակված քերականությունների իմաստների որոշման միասնական սկզբունք դժվար է մատնանշել: Այդ բանին խանգարում են քերականական բազմիմաստության, բայական կարգերի խաչավորման, իմաստների սուբյեկտիվ ընկալման ու գնահատման, այս ամենի հետևանքով՝ տերմինազործածության անմիօրինակության հանգամանքները:

Քերականական կարգերի ու սրանց քերականությունների տարբերակման լեզվաբանական տարածված տեսական դրույթների հետևողական կիրառումը հայերենի բայի ժամանակի կարգի ձևաիմաստային բնութագրման մեջ կարող է հանգեցնել դրա հասկացության նեղացման: Ձևական երկանդամ կամ եռանդամ հակադրություններին՝ վազե՛մ-վազե՛ի, /վազու՛մ-վազե՛լ-վազե՛լու՛/ եմ-էի, կարող են համապատասխանել մեկական քերականություններ՝ ապառնի-անցյալ և ներկա-անցյալ-ապառնի ժամանակային իմաստներով: Այդ դեպքում հայերենի բայը կունենա ոչ ավելի, քան երեք քերականություն: Առավել հետևողականությունը կարող է հանգեցնել նաև բայի ժամանակը՝ հայերենում ձևական արտահայտություն ունեցող երկու ժամանակակետերին՝ ներկային և անցյալին /ե՛մ - է՛ի/, նույնացնելուն:

Սակայն վազեմ-վազեցի տիպի բայերի կողքին ունենմ-ունեցի տիպի /թեև սակավաթիվ/ բայերի առկայությունը, որպես նույն կաղապարներում ապառնի-անցյալ իմաստությունների հակադրություն, իսկ մյուս կողմից՝ միևնույն եմ բայով բաղադրված վազում_եմ-վազել_եմ - վազելու_եմ ձևերում երեք տարբեր իմաստությունների՝ ներկա-անցյալ-ապառնի, դրսևորումը պարտադիր են դարձնում ժամանակի կարգը քննելիս հաշվի առնել ժամանականիշ ձևույթների բազմիմաստությունը և վերլուծական ձևերում՝ դերբայների մասնակցությունը: Այլ կերպ ասած՝ ժամանակի կարգի լայն ըմբռնումը իր մեջ է առնում նաև բայի գործողության ու կազմության կերպերի, Գ. Ջահուկյանի տարբերակմամբ ու տերմինավորմամբ՝ հաջորդականության, տիպարի ու կերպի, կարգերը:

Որոշել բայի ժամանակը նշանակում է սահմանել գործողության ընթացքի հարաբերումը իրաղրային որևէ ժամանակի՝ խոսքի պահի կամ մի անցյալ ու ապառնի ժամանակակետի նկատմամբ: Համեմատության զըլխավոր կամ հիմնական ժամանակակետը խոսքի պահն է, խոսողության գործընթացի հարակա ու մշտական ներկան: Այդ պահի ու նրա նկատմամբ առնված գործողությունների ընթացային հարաբերությունը ըստ բովանդակության կարող է լինել՝ համընթաց, նախընթաց, ապընթաց /համընկնող, նախորդող, հաջորդող/: Խոսքի պահի նկատմամբ գործողության համընթացությունը առաջացնում է ներկա ժամանակի, նախընթացությունը՝ անցյալի, ապընթացությունը՝ ապառնու գիտակցում:

Ա. Համաղրակյան կազմության վազեմ-վազեցի տիպի բայաձևերի ժամանակային բովանդակությունը ոչ_անցյալ և անցյալ ժամանակային հակադրություն է: Ոչ_անցյալը հիմնական կաղապարային ձևերում ապառնի է, իսկ եմ, կամ, գնեմ, արժեմ, ունենմ պակասավոր բայերում՝ ներկա: Վազեցի ձևը բովանդակությամբ անցյալ է և, ինչպես ճիշտ մեկնաբանում է Գ.Ջահուկյանը, հակադրվում է վազում_էի ձևին,իրև կատարյալի հակադրությունը անկատարին: Վազել հրամայականը,ինչպես ասվեց, բովանդակությամբ գիտակցվում է որպես ապառնի:

Համաղրական բայաձևերով գործողության ընթացային /վիճակային/ հարաբերություններ չեն արտահայտվում: Սրանցում գործողությունը կոնկրետացված է որևէ ժամանակակետում կամ ժամանակահատվածում: Գնամ նշանակում է գործողություն, որի կատարումը ցանկալի է հենց հիմա՝ խոսքի պահից անմիջապես հետո, և կամ էլ՝ նրան հաջորդող մի այլ ժամանակակետում, որը ապագայի մեջ սահմանափակում չունի, գնայի նշանակում է գործողություն, որի կատարումը ցանկալի էր խոսքից անմիջապես առաջ, կամ նրան նախորդող որևէ ժամանակակետում, որն

անցյալի մեջ սահմանափակում չունի, գնացել նշանակում է ավարտված գործողություն, որի կատարումն ընկած է խոսքի պահից անմիջապես առաջ կամ նրան նախորդող որևէ ժամանակակետում, որն անցյալի մեջ սահմանափակում չունի: Այսպիսով, գնամ ասելով կարող է հասկացվել՝ հենց հիմա և տարիներ հետո, գնացել ասելով կարող է հասկացվել՝ հենց նոր և տարիներ առաջ: Որքան գործողության կատարման ժամանակակետը հեռանում է խոսքի պահից, այնքան դիմավոր բայը ժամանակային կոնկրետացման բառային օժանդակ միջոցների կարիք է զգում: Համմտ.՝

Նանի ջա՛ն, Նանի՛, քող կուժը աղնեմ,
Աղբյուրը գնամ աղջիկների հետ... /քող աղնեմ, գնամ՝ հենց հիմա, անմիջապես/ և ,,Մի քանի տարի հետո անգնեմ քոշակի ու գնամ գյուղ,,:

Այսպես նաև՝

,, - Աշոտն ու՞ր է: - Գնաց դասի,,: Եվ ,,Տարիները առաջ էր, որ Աշոտը գնաց պատերազմ ու չվերադարձավ,,:

Ըղծականի կամեմ-կամենամ, ուզեմ-ուզենամ, ցանկամ-ցանկանամ, ինչպես նաև սահմանականի գիտեմ-գիտենամ, արժեմ-արժենում եմ, ունեմ-ունենում եմ, կամ-լինում եմ, ուզում եմ-ուզենում եմ պարզ ու ածանցավոր ձևերի հակադրությունը ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական կազմության դիմավոր ձևերում առաջացնում է բովանդակության կերպաժամանակային տարբերակում: Մինչդեռ պարզ հավելավոր ձևերը գործողությունն առնում են կոնկրետ խոսքի պահի նկատմամբ, իսկ ածանցավոր համադրական թե վերլուծական կազմության կանոնավոր բայաձևերը գործողությունը վերցնում են խոսքի պահն իր մեջ առնող մի հարաճիզ ժամանակի նկատմամբ, որով նա /գործողությունը/ դառնում է ընդհանուր, տևական /գիտի, արժի, կա, ունի, կարող է առաջին հերթին նշանակում են հիմա, խոսքի պահին, իսկ գիտենում է, արժենում է, լինում է, ունենում է, կարողանում է՝ ընդհանրապես/[4]:

Վերը հակադրված ձևերից ածանցավորները մեր ընութագրմամբ շարունակական կամ տևական կերպի բայեր են: Գ. Ջահուկյանը այդ հակադրություններում տեսնում է գործողության միակատար-բազմակատարի հակադրությունն՝ դա համարելով դարձյալ կերպի մի դրսևորում[5]:

Բ. Վերլուծական կազմության ձևերում բովանդակության պլանում գործողության կատարման իրաղրական ժամանակի կամ ժամանակակետի /ներկա, անցյալ/ և գործողության ընթացայնության /գործողության կերպի կամ հաջորդականության/ քերականական հատկանիշները հանդես են գալիս որպես բայի ժամանակի կարգի ենթակարգեր: Դրանց՝ դերբայով

և օժանդակ բայի ներկայի ձևերով բաղադրված ժամանակաձևերը կամ ժամանակները, որպես խոսքի պահի համեմատությամբ վերցված գործողության արտահայտիչներ, լեզվաբանության մեջ ընդունված է համարել հիմնական կամ ըացարձակ ժամանակները: Որոշ պայմանականությամբ հիմնական անվանված /վազում_եմ-վազել_եմ-վազելու_եմ/ ժամանակաձևերը իրենց ժամանակային բովանդակությամբ ներկա-անցյալ-ապառնի քերականություններ են:

Դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով բաղադրված ժամանակաձևերը կամ ժամանակները, որպես խոսքի պահի համեմատությամբ վերցված մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ գործողության տարբեր ընթացքներ արտահայտող ժամանակաձևեր կամ ժամանակներ, լեզվաբանության մեջ ընդունված է համարել հարաբերական_ժամանակները: Վազում էի-վազել_էի- վազելու_էի, որոշ պայմանականությամբ, հարաբերական անվանված ժամանակաձևերը, իրենց ժամանակային իմաստներով անցյալ ժամանակի տարբերակներ /ժամանակաձևեր/ կամ ենթաժամանակները են:

Սահմանական եղանակի վերոհիշյալ վերլուծական բայաձևերի բովանդակության պլանում, ինչպես ասվել է, ժամանականիշ արժեք ունեն և դերբայները, և օժանդակ բայը: Դերբայներն արտահայտում են գործողության տարբեր ընթացքներ կամ վիճակներ /համընթաց, նախընթաց, ապընթաց/, օժանդակ բայը՝ տարբեր ժամանակակետեր: Բայի ժամանակի լեզվական ըմբռնումը իր մեջ է առնում այս կերպաժամանակային իմաստները: Հաջորդականության հատկանիշը /,,կարգը,,/, որ մենք անվանել ենք գործողության կերպ, ըստ էության ծուլվում է ժամանակի կարգին՝ գիտակցվելով որպես ժամանակի_ենթակարգ:

Ըստ դերբայների գործընթացային /վիճակային/ նշանակությունների՝ վերլուծական ձևերում գործողության կատարման ժամանակի կոնկրետացումն ու սահմանափակումը տարաբնույթ են լինում:

Վազում_է տիպի կաղապարային ձևերում գործողության կատարումը համընթաց է խոսքի պահին, հետևաբար այս ձևերը չեն պահանջում ժամանակային կոնկրետացում և չեն առնում ե՞րբ հարցը: Սակայն այդ գործողությունն անցյալի սահմանափակում չունի, նրա սկիզբը գալիս է անցյալից, հետևաբար կարող է առնել երբվանի՞ց հարցը: Իբրև ընթացող, շարունակական գործողության բայաձևեր, սրանք թեև առնվում են ներկա ժամանակակետի մեջ, բայցևայնպես գործողության ընթացքը չի սահմանափակվում ներկայով, ահա թե ինչու այդ բայերը կարող են առնել նաև մինչև_ե՞րբ հարցը: Այդ բանը հնարավոր է դարձնում ներկայի ձևերի գործածությունն ապառնու նշանակությամբ. ,,Վաղը գընում է Մոսկվա,,:

ժամանակային տեղայնացման այս յուրահատկության շնորհիվ է,որ անկատարի ձևերը կարող են արտահայտել նաև իրըև սովորություն, օրինաչափություն, մշտապես կատարվող գործողություններ. ,,Լուսինը պտտվում է երկրագնդի շուրջը: Երկրագունդը տաքանում է արևի ջերմությամբ,,:

Վազել_է տիպի կաղապարային ձևերում գործողությունը սահմանափակվում է ներկայով, ձգվում է մինչև խոսքի պահը, ուստի չունի անցյալի սահմանափակում և կարող է առնել ե՞ը հարցը՝ պահանջելով անցյալ ժամանակահատվածում գործողության կատարման ժամանակի կոնկրետացում. ,,Երեկ է վազել,,:

Վազելու_եմ տիպի կաղապարային ձևերում գործողությունը սահմանափակվում է խոսքի ներկայով, բայց, ի տարբերություն նախորդ ձևերի, իր ընթացքով հաջորդելու է այդ պահին, ուստի չունի ապառնի ժամանակի սահմանափակում և կարող է առնել ե՞ը հարցը՝ պահանջելով ապառնի ժամանակահատվածում գործողության կատարման ժամանակի կոնկրետացում. ,,Վաղն է վազելու,,:

Ժամանակի կոնկրետացման ու սահմանափակման նույն օրինաչափությունները գործում են դերբայներով և օժանդակ բայի անցյալի ձևերով բաղադրված հարաբերական ժամանակներում /վազում էի-վազել էի-վազելու էի/: Այս դեպքում ժամանակի սահմանափակման եզրը դառնում անցյալ ժամանակակետը, որի հարաբերությամբ վերցված է գործողությունը:

Հարակատար դերբայով բաղադրված վերլուծական ձևերը, ինչպես վերևում ասվեց, մենք բնութագրում ենք որպես անկատար ներկային /գործողության ներկային/ հակադրվող հարակատար ներկայի /վիճակի ներկայի/ ժամանակաձևեր: Իրըև որոշ խումբ բայերի մասնակաղապարային ձևեր, հարակատարի ձևերը բովանդակությամբ ներկա ժամանակի տարբերակ են: Գ.Ջահուկյանը անկատարի և հարակատարի հակադրություններում տեսնում է գործողության փոխարկային /քնում է/ և ոչ փոխարկային /քնած է/ հակադրություն՝ սրանք գնահատելով որպես բայի տիպարի քերականական կարգի քերականություններ[6]:

Բայի ժամանակային ձևերի նախնական /առաջնային/ և տարբերակային, ածանցյալ իմաստների ամբողջական քննությունը առավել ծավալուն ուսումնասիրության խնդիր է: Այդ քանն արված է մեր հիշատակված աշխատության մեջ, որն, իհարկե, լրացման և վերանայման կարիք ունի:

Քերականական կարգերի ու համակարգերի անվանումները ունենում են կա՛մ ձևական, կա՛մ իմաստային հիմունք: Սրանցից մեկնումեկի հե-

տևողական կիրառումը համարյա անհնար է: Այդ հետևողականությանը խանգարում է նաև քերականական հասկացությունների ավանդական դարձած անվանումների համակարգը, ապա՝ առավելապես բայածևերի քերականական բազմիմաստությունը: Նկատի ունենալով գրաբարի բայածևերի եղանակաժամանակային բազմիմաստությունը՝ գրոֆ. Շանիձեն առաջարկում էր հրաժարվել այդ ձևերի ավանդական /իմաստային/ դասակարգումից և դրանք քննել ըստ ձևական շարքերի: Ձևական դասակարգում թեև կարող է կիրառվել խոնարհման մանրահամակարգերում, բացարձակապես ձևական հատկանիշներով տարբերակվող շարքերում, բայց քանի որ քերականական կարգերի դասակարգման բուն նպատակը սրանց իմաստների ու կիրառությունների բացահայտումն է, ուստի քերականական կարգերի ու քերականությունների տերմինավորման մեջ նախընտրելի է իմաստային հիմունքը:

Համադրական ձևերի անվանումներն՝ ըստ ժամանակային իմաստների՝ ապառնի /վազեմ/, անցյալ /վազեի/, պարզ են ու ըմբռնելի: Անցյալ անկատարի /վազում էի/ հակադրության մեջ անցյալ կատարյալ /վազեցի/ ավանդական անվանումը իդեալական անվանում է: Հրամայականն ունի մեկ քերականություն /վազի՛ր/, որի ապառնի լինելը ժամանակաձևի անվանման ժամանակ հաճախ չի էլ նշվում. գործածվում է միայն եղանակի անվանումը՝ հրամայական, կամ ավանդական՝ բուն հրամայական:

Վերլուծական կազմության ժամանակաձևերի անվանումների պատմությունը մի առանձին քննության առարկա կարող է լինել: Մեր գրքի տպագրումից հետո ընկած մոտ երեք տասնամյակների ընթացքում անվանումների փոփոխությունների մի շարք փորձեր են արվել: Որոշ տարբերակներով տարածում գտած տերմինավորումը Մ.Աբեղյանի ստեղծածն է՝ Ա.Ղարիբյանի կողմից մասնակիորեն խմբագրված: Այդ տերմինավորման հետևողական սկզբունքը բայածևը բաղադրող դերբայով և օժանդակ բայով անվանելն է /անկատար ներկա՝ վազում եմ, անկատար անցյալ՝ վազում էի, վաղակատար ներկա՝ վազել եմ, վաղակատար անցյալ՝ վազել էի, ապառնի ներկա՝ վազելու եմ, ապառնի անցյալ՝ վազելու էի/: Ինքը՝ Աբեղյանը, հաճախ խախտում է անվանման այս սկզբունքը և վաղակատար ներկան դարձնում է ուղղակի վաղակատար, ապառնի ներկան՝ ապառնի և այլն:

Ա. Ղարիբյանի խմբագրմամբ խորանում է տերմինավորման այս հակասությունը, և բայածևերը մեկ անվանվում են օժանդակ բայի /ներկա՝ վազում եմ/, մեկ դերբայի /վաղակատար՝ վազել եմ/, մեկ օժանդակ բայի ու դերբայի /անցյալի անկատար՝ վազում էի/ անուններով: Տերմինավորման աբեղյանական սկզբունքի նույնիսկ հետևողական կիրառու-

մը, որ տեղ է գտել դպրոցական գործող դասագրքում, անքննադատելի չէ:

Վերլուծական ժամանակաձևերին ըստ սրանց արտահայտած կերպաժամանակային իմաստների ճշգրիտ անվանումներ տալու համար անհրաժեշտ էր վերանվանել ապառնի դերբայը՝ մյուս դերբայների նման սրան էլ կերպային կամ վիճակային անվանում տալով: Գործածության դրված կատարելի տերմինը տերմինային հին ,,զինանոցից,, վերցված լինելու պատճառով քննադատվեց: Գ. Ջահուկյանի գործածած ապակատար անվանումը մյուս ձևակազմիչ դերբայների հետ /անկատար, վաղակատար/ միանգամայն համահունչ է և իմաստալից:

Դերբայների վերաքննությունը հայագետներին հանգեցրեց անկատարը մի տարբերակ համարված վազելիս ձևը առանձին դերբայ ճանաչելու մտքին: Տրված անվանումներից այժմ ընտրված է համընթացականը: Սա որոշ անհարմարություններ ունի: Երկար է, կազմությամբ մյուս անվանումների համակարգից շեղվում է: Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերում, հարակատար և ապակատար դերբայների հակադրության մեջ, քերականությունների անվանման անհարթություն է առաջացնում.

վազելիս եմ լինում՝ համընթացական ներկա,
վազած եմ լինում՝ հարակատար ներկա,
վազելու եմ լինում՝ ապակատար ներկա:

Եթե այս դերբայի արտահայտած գործողությունը մի այլ գործողության համընթաց է, ապա նաև համակատար է: Համակատար անվանումը, որ Գ. Ջահուկյանն է առաջարկել ենթակայական դերբայի համար, թե՛ կազմությամբ, թե՛ իմաստով միանգամայն հարմար է այս դերբային և համակատար անվանումը ձևակազմիչ անկատար, վաղակատար, ապակատար, նաև՝ հարակատար շարքում միանգամայն համակարգային է[7]: Այս դեպքում կունենանք՝ համակատար, հարակատար, ապակատար ներկա /անցյալ/ և այլն:

Ինչ վերաբերում է ենթակայականին, ապա, քանի որ նրանով դիմավոր ձևեր չեն կազմվում, և նա ժամանակաձևերի տերմինավորմանը չի խանգարում, կարող է նաև չվերանվանվել:

Սահմանական եղանակի վերլուծական կազմության ժամանակաձևերը հիմնական և հարաբերական ժամանակների խմբավորմամբ համակարգելու սկզբունքը հեշտացնում է նաև սրանց տերմինավորման գործը: Հիմնական ժամանակներն անվանվում են իրենց ժամանակային բուն բովանդակությամբ, որ գոյանում է խոսքի պահի /օժանդակ բայի ներկայի/ և գործողության տարբեր վիճակների /դերբայների/ հարաբերությունից: Հարաբերական ժամանակները, որպես անցյալի ենթաժամանակներ, անվան-

վում են իրենց բաղադրող անցյալ ժամանակակետի /օժանդակ բայի անցյալի/ և դերբայների անվանումներով:

Այսպիսով, սահմանական եղանակի գլխավոր ժամանակային ձևերի ամբողջական հարացույցը կունենա այս անվանումներն ու տեսքը:

Հիմնական ժամանակները

Ներկա	Անցյալ	Ապառնի
նստում եմ	նստել եմ	նստելու եմ

/Հարակատար ներկա/

նստած եմ

Հարաբերական ժամանակները

Անցյալ անկատար	Անցյալ վաղակատար	Անցյալ ապակատար
նստում էի	նստել էի	նստելու էի

/Հարակատար անցյալ/

նստած էի

Անցյալ կատարյալ

նստեցի

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հ.Բաբսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1958, էջ 137:

2 Գ.Բ.Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, նույնի՝ Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974; Է.Բ.Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:

3 Այստեղ քննության չենք առնում երկրորդական բաղադրյալ ժամանակները:

4 Տե՛ս Հ.Բաբսեղյան, նշվ. աշխ., էջ 210:

5 Տե՛ս Գ.Բ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 286-287:

6 Գ.Բ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 256-264:

7 Տե՛ս Գ.Բ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը /,,Դերբայները,,/ ,,Բանբեր Երևանի համալսարանի,, ,1975,նո.3, էջ 40-45:

В.М.ГРИГОРЯН (Ереван, СССР)

О НЕКОТОРЫХ ПРИНЦИПИАЛЬНЫХ ОСНОВАХ ОПИСАТЕЛЬНОЙ ГРАММАТИКИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Методология научного исследования во многом зависит от характера постановки задачи. Это утверждение можно проиллюстривовать и обосновать, сравнивая, например, классическую математику и прикладную математику. Если первая характеризуется решением задач с опорой на набор исходных данных и правил обращения с ними, то вторая на пути решения предварительно сформулированной задачи формирует тот аппарат, который, в конечном итоге, должен привести к ее решению. С той же целью можно вспомнить также о науках, архитектура которых покоится на фундаменте физических реалий, физических данностей, с одной стороны, а с другой - о науках, в основе которых лежит система (последовательность - в декартовском смысле) дедуктивных выводов из некоторого набора аксиом. В первом случае характер постановок задач определяется свойствами самого субстрата, а во втором - логикой выводимости утверждений.

Перечень подобных примеров можно было бы продолжить. Но в данном случае нас интересует другое: характер постановки задач в лингвистике вообще и в описательной лингвистике - в частности. Ставя эти вопросы, мы преследуем одну цель: показать нетривиальность казалось бы самоочевидного утверждения - описательная грамматика данного языка должна быть адекватна описываемому объекту. Конкретно это значит: описательная грамматика армянского языка должна быть адекватна объекту дескрипции.

Если иметь в виду широкий охват вопроса, т.е. характер постановки задач лингвистики вообще, то здесь, как известно, предпринимались попытки поисков аналогии с геометрией в ее эвклидовой версии. Действительно, на этом пути можно заметить определенные сближения, но на них мы не будем останавли-

ваться и сошлемся на одну из наших статей. Заметим лишь, что в рассматриваемом плане отличие между постановкой задач в традиционной лингвистике и постановкой задач в структурной лингвистике, с нашей точки зрения, логически совпадает с теми разграничениями и противопоставлениями, которые проходят между эвклидовой и гильбертовой геометрией.

В указанной связи нельзя пройти мимо уникального примера. Это - машинный перевод. В этом случае задача формулировалась в принципиально новом для лингвистики аспекте: задавалась конечная цель. Что же касается путей и методов решения этой задачи, то они диктовались и предопределялись самой задачей. В этом смысле проблема МП сближается с тем кругом задач управления, которые в наши дни решаются средствами и методами прикладной математики.

Как обстоит дело, если речь идет об описательной грамматике? К сожалению, логические основы этой стороны проблемы в литературе практически не освещены. Даже в капитальном труде Игоря Фридриховича Вардуля мы не нашли прямого ответа на вопрос - можно ли считать, что задачи описательной лингвистики ограничиваются поисками путей сводимости отдельных реализаций языковых систем к идеализированным системам, или здесь возможны другие постановки вопросов?

Не задаваясь целью подробно анализировать принятые на этот счет точки зрения (в том числе нашедшие свое место в книге И.Ф.Вардуля), отметим, что, действительно, объективно в основе описательных грамматик лежит задача, в конце концов сводимая к методике сравнения, т.е. сравнения некоторого языка - объекта описания - с имплицитно заданной схемой, параметры которой определяются идеализированным представлением о типологическом субстрате.

Как само это представление, так и общие контуры субстрата были порождены еще гумбольдтовской идеей о всеобщности и единстве человеческого духа. Но, как говорил в свое время Мейе, "каждый век имеет свою грамматику". И это на самом деле так.

Для конкретизации сказанного приведем пример. Одним из определяющих параметров упомянутого идеализированного представления о типологическом субстрате является часть речи.

Согласимся с утверждением Матезиуса: структурной следует считать лишь классификацию по частям речи. Таким образом делается вывод: классификация слов по частям речи есть единственная система классификации. И этот подход органически вписался в круг понятийных основ грамматических описаний.

Согласимся также (в целях упрощения изложения), что номенклатура частей речи также является чем-то наперед заданным. Это допущение тем более приемлемо, что номенклатура эта не претерпела сколько-нибудь существенных изменений от Аристотеля до наших дней.

Следующий шаг хорошо известен. Он характеризуется установлением корреляций между каждой единицей словарного состава и каждой единицей номенклатуры. Иногда в практике дескрипции отдельным словам (их называют омонимами или омоформами) приписывается более одного признака части речи. Так поступали, например, составители Толкового словаря армянского языка и Э.Б.Агаян в своем двухтомнике при описании слов со значением имени деятеля с суффиксами -ի , -ող , պետ, - սեր , - գործ и под, характеризуя их как существительные и/или прилагательные.

И дело здесь не в составителях, а в логике описания. Она базируется на той методике решения задачи, которая связана с приведением в соответствие некоторого набора единиц какой-то наперед и раз навсегда заданной графе схемы. Никто из нас не сомневается, что слова քար, տղամարդ, աստեղ, ոսկի - это существительные, а լավ, բավական, ազնիվ - это прилагательные и т.д. И эта наша убежденность покоится на укоренившемся в сознании лингвистов начале начал: соотноси анализируемый объект со схемой. Причем, и это очень важно, схема эта в своих определяющих чертах типологически универсальна, поскольку "язык есть деятельность духа" (Гумбольдт).

Но не будем забывать, что каждый век порождает (вернее - должен порождать) свою грамматику. И дело не только во временных соотношениях и прогрессе науки вообще. Здесь стоит задуматься и над пространственными факторами - над неповторимостью взаимосвязей (опять-таки в гумбольдтовском смысле) между национальным языком и национальным духом. Это значит, в частности, что специфика описания, детерминируемая специфи-

кой объекта, должна опираться на неповторимость логических основ постановки вопроса.

В приложении к армянскому языку этот подход предполагает, что при его (языка) описании логика сопоставления анализируемой единицы со схемой, т.е. логика, ставшая традиционной, не дает ожидаемого эффекта адекватности.

Итак, утверждается, что онтологические факты получают лингвистическую интерпретацию через понятие функции. Под функцией понимается роль, выполняемая языковой единицей, во-первых, в механизме отражения действительности и, во-вторых, в механизме коммуникации. Первый механизм конструируется из сложных взаимоотношений лексических и грамматических элементов, а второй (коммуникативный) конструируется из элементов текста. Дескрипция этих механизмов может быть адекватной только при учете взаимосвязей составляющих их элементов. Это, в частности, означает, что предлагаемая процедура предписывает учет соотношений между элементами механизмов, их динамики как функционирующих единиц. Таким образом, логику описательной грамматики армянского языка мы видим в анализе динамики элементов указанных механизмов, находящихся в отношениях корреляции.

В приложении к армянскому языку нам представляется эффективной такая схема дескрипции, при которой каждый данный описываемый объект проектируется на идеализированном дереве отношений как некое отображение онтологической функции. Полученную проекцию следует рассматривать как частный результат модификации идеализированной структуры. Единицы модификата, в свою очередь, мы склонны рассматривать как результат динамических преобразований, породивших данное дерево, которое в акте коммуникации принимает линейное воплощение.

Отсюда следует, например, что мы не можем дать ответа на вопрос о том, к какой части речи следует отнести то или иное слово, пока в данной конкретной модификации идеализированной структуры оно не займет своего конкретного места. Это один из многих примеров иной логики дескрипции по сравнению с той, которая основана на процедуре соотнесения рассматриваемых единиц с графами стандарта, выработанного традицией, базирующейся на принципах универсализма.

Именно с предлагаемых позиций следует, как нам представляется, рассматривать целый ряд явлений грамматики армянского языка, в пределах его именной и глагольной парадигм. Так, мы склонны рассматривать вопрос о системе склонения имени не с точки зрения соотнесения именных форм с номенклатурой названий падежей, а имея в виду конкретную функцию имени на модифицированном дереве. И так далее - при анализе аналитических (հարադիր) глаголов, парадигмы дербайных (причастных) форм, явлений конверсии и более сложных явлений словообразования.

Принципиально важно, как мы думаем, рассмотреть место и функции дербаев (причастий) на -ած , - ող , - լու. Не меньший интерес вызывает у нас вопрос о дистрибуции второстепенных членов предложения. И, наконец, принципиально важно приложить конкретный анализ распространения членов предложения на дереве зависимостей к проблеме модификации идеализированного дерева. Как известно, уже предпринимались перспективные попытки исследования в этом направлении (напр., в работах Ж.Манукян, Э.Миракян и некоторых др.). Только на этом пути, как нам представляется, можно выявить определяющие контуры структуры армянского предложения и очертить заимствованные модели.

Разумеется, все сказанное относится лишь к грамматике, имеющей своей задачей дескрипцию, и не претендует на всеохватывающее значение. В частности, мы допускаем такую ситуацию, в которой преследуются иные цели, например, связанные с уточнением места данного языка в системе других. Возможно, что при этом не исключается принцип ориентации на универсальные модели, но это особая тема, и она требует специального рассмотрения.

Հ.Լ. ՋԱՋՈՐՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴԻ ԼԵՋՎԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՆՐԱԼԵՋՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Երևանը՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքը, Սովետական Միության խոշորագույն քաղաքական, տնտեսական, մշակութային կենտրոններից և աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է: Այն հիմնադրվել է մ.թ.ա. 782թ. մի վայրում, որը դեռևս մոտ 6 հազարամյակ առաջ եղել է մարդկային բնակավայր:

Մինչև նոր ժամանակները, սակայն, Երևանը երկրորդական դեր է կատարել հայ ժողովրդի և Հայաստանի կյանքում: 1800-ականների սկզբում նրա բնակչությունը հասել է հազիվ 10 հազարի: Միայն 1827թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո նահանգական կենտրոն դառնալով՝ Երևանն՝ սկսեց ավելի աշխույժ հասարակական-քաղաքական կյանքով ապրել:

Արևմտյան Հայաստանի ողբերգությունից և հատկապես Սովետական Հայաստանի կազմավորումից հետո Երևանի դերը հայ ժողովրդի և Հայաստանի կյանքում արագորեն աճել սկսեց, մինչ այն աստիճան, որ այժմ Երևանը իր բնակչությամբ /1 մլն. 100 հազար/ Սովետական Հայաստանի /3 մլն. 200 հազար/ մեկ երրորդն է, իսկ իբրև հայկական մշակույթի կենտրոն իր մրցակիցը չունի:

Պատմական հանգամանքների բերումով վերջին 100 տարվա ընթացքում Երևանի ազգաբնակչությունը մեծացել է ավելի քան 80 անգամ, երբեմն որոշ ասանամյակների ընթացքում կրկնապատկվելով և նույնիսկ եռապատկվելով /աճն աղյուսակ 1/:

Այս ցուցանիշներից երևում է, թե երբեմն որքան մեծ է եղել /և այժմ էլ քիչ չէ/ բնակչության ներհոսքը Երևան: Լեզվական առումով այս փաստը նշանակալի է նրանով, որ ցույց է տալիս, թե որքան տարասեռ է Երևանի այժմյան բնակչությունը բարբառային ծագման և երևանաբնակ լինելու վաղեմության տեսակետից: Պետք է նկատի ունենալ, որ Երևանի այդ մեխանիկական աճը չի կատարվել մի որոշակի տարածքի բնակչության հաշվին, այլ Երևանում են հաստատվել մարդիկ

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՃԸ

Աղյուսակ 1

Տարեթվերը	Բնակչության քիվը /հազար մարդ/	1830թ. համեմատությամբ /տոկոսներով/	1970թ. համեմատությամբ /տոկոսներով/
1830	11,9	100	1,6
1873	11,9	100	1,6
1886	14,7	123,6	1,9
1897	29,0	243,3	3,8
1914	29,4	246,4	3,8
1916	51,3	430,3	6,7
1922	46,6	391,3	6,1
1926	64,6	542,1	8,4
1930	79,4	666,1	10,4
1939	204,2	1710,0	26,6
1959	509,3	4280,0	66,4
1965	643,8	5410,0	84,0
1970	766,7	6443,8	100
1972	814,8	6867,0	106,3
1976	899,4	7558,0	117,3
1977	967,0	8126,0	126,1
1978	1010,5	8491,6	131,8
1979	1032,8	8679,0	134,7
1980	1050,0	8823,5	137,0
1981	1068,7	8980,7	139,4
1982	1090,4	9159,7	142,2

պատմական և ներկա Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերից և աշխարհի բոլոր ծայրերից, հայերենի բոլոր բարբառների և ամենատարբեր լեզուների կրողներ, մշակութային ամենաբազմազան ազդեցությունների ենթարկվածներ: Ահա թե ինչու երեվանցիների հայերենը, չնայած իր որոշ յուրահատուկ գծերին ու առանձնահատկություններին, չունի այն միասնականությունն ու բնորոշ դեմքը, որ սովորաբար հատուկ է հիմնականում իրենց բնական ածի հաշվին մեծացած քաղաքներին:

1971թ. տվյալների վերլուծությունից պարզվել է, որ անընդմեջ մինչև 5 տարի երևանում ապրողները կազմել են քաղաքի բնակչության 28 տոկոսը, 6-14 տարի ապրողները՝ 34,9 տոկոսը, 15-24 տարի ապրողները՝ 21,6 տոկոսը, 20 տարուց ավելի ապրողները՝ 15,5 տոկոսը:

Պատմառն այն է, որ նախորդող երկու տասնամյակում Երևանում բնակություն է հաստատել միջին հաշվով 10,2 հազար մարդ, այն դեպքում, երբ Երևանի բնակչության բնական միջին աճը նույն ժամանակաշրջանում մոտ 19 հազար է եղել: Չպետք է մոռանալ նաև, որ մեխանիկական աճը միայն պարզ ներհոսք չէ, այլ ներհոսքի ու արտահոսքի տարբերություն: 1955-1971թթ. ընթացքում բնակչության ներհոսքը Երևան կազմել է 331,9 հազար, արտահոսքը՝ 158,1 հազար: Դրանց տարբերությունը՝ Երևանի բնակչության մեխանիկական աճը կազմել է 173,8 հազար մարդ:

Ըստ ծագման վայրերի բնակչության այսպիսի խայտաբղետ կազմն է պատճառը, որ Երևանում կարելի է գտնել հայերենի երկու գրական լեզուներով և բոլոր կենդանի բարբառներով խոսողներ, այսինքն՝ Երևանում մեծ տարածում ունի զուգախոսությունը /դիգլոսիա/, որի հիմնական ձևերն են՝ ,,գրական արևելահայերեն-գրական արևմտահայերեն,, և ,,գրական արևելահայերեն-բարբառ,,: Սակայն Երևանում խոսվող բարբառներից ոչ մեկը չունի իշխող դիրք, ուստի այսօրվա Երևանը դժվար է հատկացնել բարբառային այս կամ այն ոլորտին: Երևանի բոլոր բնակիչները մի քանի տարի ապրելով քաղաքում, քիչ թե շատ յուրացնում են արևելահայ գրական լեզուն և միայն երևանաբնակների խոսքին հատուկ լեզվական որոշ առանձնահատկություններ, ու այսպիսով դառնում ,,Երևանի խոսվածքի,, կրողներ:

Չնայած բնակչության ծագման վայրերի այդպիսի բազմազանությանը, Երևանն աչքի է ընկնում իր ազգային կազմի համասեռությամբ:

Այժմ Երևանը ոչ միայն Սովետական Միության, այլև աշխարհի խոշոր քաղաքների մեջ ամենամիատարը բնակչություն ունեցողներից մեկն է: 1979թ. Երևանում հայերը կազմել են ազգաբնակչության 95,8 տոկոսը /տե՛ս աղյուսակ 2/:

Ազգային կազմի համասեռությունը նպաստում է լեզվավիճակի պարզությանը: Դա է պատճառը, որ Երևանում հայերենից ու ռուսերենից բացի զգալի տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ չեն գործառում: Երևանցիների 95 տոկոսը /երևանաբնակ հայերի 99,6 տոկոսը/ իրենց մայրենի լեզուն են համարում հայերենը /տե՛ս աղյուսակ 3/:

Երևանի բնակչության հասարակական կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքը չունի ընդգծված մասնագիտացում, ինչպես որոշ արդյունաբերական-բանվորական, վարչական-մշակութային կենտրոններ: Ինչպես սովորաբար հատուկ է քաղաքներին, Երևանում ևս գոյություն ունի բանվորների որոշ գերակշռություն, շատ փոքր թիվ են կազմում գյուղատնտեսությամբ զբաղվողները:

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Աղյուսակ 2

	1959 թ.		1970 թ.		1979 թ.	
	հազար մարդ	տոկոս	հազ.մարդ	տոկ.	հազ.մարդ	տոկ.
Հայեր*	473,7	92,3	738,0	95,3	986,8	95,8
Ռուսներ	22,5	4,4	21,8	2,8	26,5	2,6
Քրդեր	3,1	0,6	3,8	0,5	5,7	0,55
Ադրբեջանցիներ	7,3	1,4	2,7	0,35	2,4	0,2
Ուկրաինացիներ	2,6	0,5	2,7	0,34	3,4	0,3
Հույներ	0,6	0,1	0,9	0,1	1,2	0,1
Այլ ազգություններ	3,6	0,7	5,1	0,65	5,0	0,48
Ընդամենը	517,7	100	775,0	100	1031,0	100

Բավականաչափ տարասեռ է Երևանի բնակչությունը նաև ըստ մասնագիտության: Այստեղ ներկայացված են զրեթե բոլոր հիմնական մասնագիտական խմբերն իրենց տարատեսակներով:

Երևանի բնակչության հասարակական կազմի այս բազմազանությունը և հասարակական խմբերի ներկայացուցչականությունը լեզվական առումով նշանակալից է, քանի որ դա նշան է այն բանի, որ երևանցիների լեզուն բավականաչափ տարբերակված է ըստ խոսողների մասնագիտական, զբաղմունքային, դասակարգային բնութագրերի:

Երևանում հանդիպում են հայերենի զրեթե բոլոր հասարակական տարբերակները: Այդ տարբերակումների հիմքում ընկած հասարակական հատկանիշներից էականներն են լեզուն կրողների տարիքը, կրթության մակարդակը, կրթության լեզուն, հասարակական դրությունը /մասնագիտություն-զբաղմունք միասնությունը/, ընտանիքի խոսակցական լեզուն, սեռը: Համեմատաբար ցայտուն են շերտավորված մասնագիտական ու կրթական տարբերակները, փոքր-ինչ պակաս՝ տարիքային տարբերակները: Հասարակական մյուս հատկանիշները երևանցիների լեզվում թույլ են արտացոլվում:

---

*1926թ. հայերը կազմել են Երևանի բնակչության 88,6 տոկոսը:

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԱԶԳՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ

Աղյուսակ 3

	1959 թ.			1970 թ.		
	ընդամենը	ընդ որում մայրենի են համարում իրենց ազգի լեզուն		ընդամենը	ընդ որում մայրենի են համարում իրենց ազգի լեզուն	
	1000մարդ	1000մարդ	%	1000մարդ	1000մարդ	%
Ամբողջ բնակչությունը	509340	497092	97,5	766705	760013	99,1
ընդ որում՝						
Հայեր	473742	465419	98,2	730435	727666	99,6
Ռուսներ	22572	22481	99,6	21519	21325	99,1
Քրդեր	2835	2544	89,7	3513	2804	79,8
Ադրբեջանցիներ	3413	3164	92,7	2691	2515	93,5
Ուկրաինացիներ	2624	1274	48,6	2607	1717	65,9
Այլ ազգություններ	4154	2210	53,2	5940	3986	67,1

Իբրև գրական լեզուներ Երևանում գործածվում են հայերենը, ռուսերենը, ադրբեջաներենը և քրդերենը:

Հայերենն իբրև ազգային լեզու, սահմանադրությամբ համարվում է Հայկական ՍՍՀ պետական լեզուն:

Հայերենը Երևանում տարածված է շատ հավասարաչափ /քանի որ քաղաքում չկան այլալեզու բնակիչների քիչ թե շատ կենտրոնացած թաղամասեր, շրջաններ/ և գործառում է իր առավելազույն բեռնվածությամբ:

Այն, ամենից առաջ, երևանցիների առօրյա խոսակցական լեզուն է: Այսինքն՝ հայերենը Երևանի բնակչության հիմնական զանգվածի հաղորդակցման լեզուն է:

Առօրյա գործածության հայերենը Երևանում գրական լեզվի խոսակցական տարբերակն է, երբեմն մաքուր, իսկ սովորաբար այս կամ այն չափով բարբառախառն կամ էլ օտարաբանություններով աղտոտված:

Հայկական դպրոցներում հայերենը ուսուցման հիմնական լեզուն է:

Ռուսական դպրոցներում այն ուսուցանվում է իբրև առանձին դասընթաց:

Հայերենի կշիռը մոտավորապես նույնն է բարձրագույն կրթության ոլորտում: Միայն այն տարբերությամբ, որ եթե հայկական դպրոցներում աշակերտներին անհրաժեշտ գրականությունը հայերեն կա, ապա բուհերի ուսանողները /հատկապես տեխնիկական մասնագիտությունների գծով/ ստիպված են մեծ չափով օգտվել նաև ռուսերեն մասնագիտական գրականությունից:

Հայերենը մի փոքր զիջում է իր դիրքերը նաև գիտության և տեխնիկայի ոլորտում: Եթե բուհերի ուսանողներն օգտվում են ոչ միայն հայերեն լեզվով ստեղծված, այլև թարգմանական մասնագիտական գրականությունից, ապա գիտական աշխատողների համար նախատեսվող մասնագիտական գրականությունը գրեթե չի թարգմանվում, իսկ նրանց անհրաժեշտ անհամեմատ ավելի մեծ քանակով գրականության մեջ հայերեն բնագիր գրականությունը փոքր մասն է կազմում: Առավել բարենպաստ դրության մեջ են գտնվում հայագիտության բնագավառի մասնագետները:

Հայերենը տիրապետող է նաև Երևանի պետական ու հասարակական-քաղաքական կյանքում: Հայկական ՍՍՀ պետական հիմնարկների լեզուն պաշտոնապես հայերենն է համարվում: Ռուսերենը լրացուցիչ կերպով նախատեսված է միայն միութենական նշանակության հիմնարկների համար:

Կենտրոնական և այլ հանրապետությունների հիմնարկների ու ձեռնարկությունների հետ պաշտոնական գրագրությունը կատարվում է ռուսերեն:

Դատավարությունները և դատական հիմնարկներում գրագրությունը կատարվում է հայերեն:

Ինֆորմացիայի զանգվածային միջոցների լեզուն Երևանում հիմնականում հայերենն է: 1971թ. լույս տեսնող 12 թերթերից հայերեն էին 9-ը, 98 պարբերականներից՝ 60-ը: 1967թ. լույս տեսած 1081 անուն գրքից /8264 հազար ընդհանուր տպաքանակով/ հայերեն է 844-ը /6801 հազար ընդհանուր տպաքանակով/: Ընդ որում դրանց մեծ մասը ստեղծված են հայերեն լեզվով:

Երևանի ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերի գերակշիռ մասը հայերեն է: Ռուսերեն են կենտրոնական ծրագրերից կատարվող վերահաղորդումները, ինչպես նաև տեղական որոշ մշտական հաղորդումներ:

Հայերենը տիրապետող է գեղարվեստական գրականության ոլորտում:

Հայերենի դիրքը գրեթե նույնն է արվեստների ոլորտում: Երևանում գործում է 8 պրոֆեսիոնալ թատրոն, որոնցից մեկը՝ ռուսական և մեկը՝ աղրբեջանական:

Կինոյի ոլորտում տիրապետող է ռուսերենը: Տեղական արտադրության ֆիլմերը ցուցադրվում են և՛ հայերեն, և՛ ռուսերեն: Մնացած կինոնկարները կինոթատրոններում ցուցադրվում են ռուսերեն: Հայերեն կրկնօրինակված որոշ թվով ֆիլմեր ցուցադրվում են հիմնականում հեռուստատեսությամբ:

Նախադպրոցական դաստիարակության հիմնարկներում հայերենն ունի մոտավորապես նույն դիրքը, ինչ դպրոցական կրթության ոլորտում: Մանկապարտեզներում կան և՛ հայկական, և՛ ռուսական խմբեր:

Հայերենը Երևանում ներկայացված է նաև իր գործառական-ոճական բոլոր տարբերակներով՝ առօրյա-խոսակցական, հրապարակախոսական, պաշտոնական-գրասենյակային, գիտական, գեղարվեստական: Սրանցից իրենց առավել զարգացածությամբ և ներքին տարբերակվածությամբ աչքի են ընկնում առօրյա-խոսակցական և գեղարվեստական ոճերը: Առաջինն արտահայտվում է հիմնականում բանավոր, երկրորդը՝ գրավոր ձևով:

Վերջին ժամանակներս հատուկ ուշադրություն է դարձվում գիտական ոճի զարգացմանը գիտության տարբեր բնագավառների ուղղությամբ: Որոշ բնագավառներում անգամ եթե մեծ քանակությամբ գրականություն չի հրապարակվում, ապա գոնե ստեղծվում են տերմինաբանական մասնագիտական երկլեզվյան ու բացատրական բառարաններ, տեղեկատուներ ու տերմինարաններ: Պարբերաբար հրատարակվում են բուհական մասնագիտական բնագիր ու թարգմանական դասագրքեր և ուսումնական ծեռնարկներ:

Հայերենի ամենից հեղինակավոր ձևը Երևանում գրական արևելահայերենն է, որը գլխավորապես արտահայտվում է գրավոր ձևով, իբրև գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական և պաշտոնական-գրասենյակային լեզու: Բանավոր խոսքում այն դեռևս քիչ է արտահայտված, զիջելով ժողովրդախոսակցական տարբերակին և մասամբ բարբառներին: Ուստի ամեն երևանցի զուգախոսության կրող է: Նա մտերմիկ միջավայրում խոսում է հայերենի մի տարբերակով, գրում, կարդում և պաշտոնական իրադրություններում խոսում է մի այլ տարբերակով: Այս երևույթը, որ որոշ չափով սասանում է հայերենի հասարակական հեղինակությունը, հետևանք է արևելահայերենի գրական և ժողովրդախոսակցական տարբերակների՝ պատմական ու մշակութային-հասարակական հանգամանքներով պայմանավորված՝ զգալի խզման, որը ներկայումս հաղթահարվում է նպատակասլաց և արդյունավետ լեզվապլանավորման շնորհիվ:

Ինչպես տեսնում ենք, գործառության ոլորտների տեսականու /տեսակաշարի/ առումով հայերենն ունի աննշան սահմանափակումներ: Որոշ սահմանափակումներ ունի նաև գործառական ոլորտների ծավալների առումով: Այդ սահմանափակումները հետևանք են հայերենի և ռուսերենի՝

ըստ գործառույթյան ոլորտների տեսականու և ծավալի որոշակի բաշխման:

Երևանում գործառող ռուսերենը գրական ռուսերենի տեղական տարբերակն է, որ ստանդարտ ռուսերենից տարբերվում է գրավոր խոսքում՝ առավել կաղապարվածությամբ ու պարզունակությամբ, հայերենի ոճական ներթափանցումներով, իսկ բանավոր խոսքում՝ տեղական որոշ յուրահատուկ բառապաշարով, հայերենից կրած հնչյունական-արտասանական, քերականական ու ոճական որոշակի ազդեցությամբ: Այդ ազդեցությունը զգացվում է անգամ այն երևանցիների խոսքում, ովքեր ռուսախոս են և հայերեն վատ գիտեն:

Այսպիսով, Երևանում տիրապետող լեզուն հայերենն է: Զգալի կիրառություն և տարածում ունի նաև ռուսերենը: Իսկ ադրբեջաներենի և քրդերենի գործածության ոլորտները շատ սահմանափակ են: Ադրբեջաներենը ուսուցման հիմնական լեզու է մեկ դպրոցում և Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ադրբեջանական ֆակուլտետում: Ադրբեջաներեն լույս է տեսնում ,,Սովետ Էրմանըստան,, թերթը /շաբաթը 3 անգամ, տպաքանակը՝ 21 հազար/, հաղորդումներ են տրվում Երևանի ռադիոյով /ամեն օր, կես ժամ տևողությամբ/: Ադրբեջաներենն իրենց մայրենի լեզուն են համարում Երևանում բնակվող 2691 ադրբեջանցիների 93,5 տոկոսը /2515/:*

Քրդերեն լույս է տեսնում ,,Ռյա թազա,, թերթը /շաբաթը 2 անգամ, տպաքանակը՝ 4 հազար/: Քրդերենն իրենց մայրենի լեզուն են համարում Երևանում ապրող 3513 քրդերի 79,8 տոկոսը /2804/:*

Պետք է ավելացնել նաև, որ Երևանի դպրոցների, բուհերի և այլ ուսումնական հաստատություններ ծրագրերում իբրև առանձին դասընթացներ մտցված են անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը: Բացի այդ, անգլիական թեքում ունեն 5, ֆրանսիական՝ 2, գերմանական՝ 1 դպրոց: Համալսարանում գործում է ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետը: Ինքնուրույն բուհ է Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը /1976-1977 ուս.տարում՝ 2841 ուսանող/: Հայկական հեռուստատեսությունը պարբերաբար հաղորդում է անգլերենի և ֆրանսերենի դասեր:

Անդրադառնալով Երևանի լեզուների զարգացման ընդհանուր միտումներին ու բնորոշ գծերին, կարելի է նկատել հետևյալը.

1. Երևանի բնակչության ազի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին մեխանիկական աճի դերը զնալով նվազում

---

*Տվյալները բերվում են ըստ 1970թ. մարդահամարի արդյունքների:

է: Դրա շնորհիվ սկսում է ավելի որոշակի արտահայտվել երևանցինե-
րի լեզվի միասնականացման, գրական լեզվի կողմից բարբառների և
դրանց մնացորդների ու ազդեցությունների արտամղման միտումը:

Երևանցիների լեզուն սկսում է ժեռք բերել իր բնորոշ դեմքը,
այլև որոշակի ազդեցություն թողնել Երևանից դուրս ապրող հայերի
վրա:

2. Երևանի լեզվավիմակին բնորոշ մյուս գիծը նրա պարզեցման
միտումն է: Դրա պատճառը Երևանի բնակչության ազգային կազմի միա-
տարրության մեծացումն է: Վերջինս հետևանք է ոչ միայն այն հանգա-
մանքի, որ Երևանի բնակչության մեխանիկական ածը կատարվում է հիմ-
նականում հայերի հաշվին, այլև այն բանի, որ Երևանում ապրող որոշ
ազգությունների /աղրբեջանցիներ, ռուսներ/ բացարձակ թիվը նվազում
է կամ դանդաղ է աճում դրանց արտահոսքի հետևանքով: Սրանց զումար-
վում է և այն հանգամանքը, որ ոչ հայերի շրջանում նկատվում են
ծուլման որոշ նշաններ: Այսպես, օրինակ, 1959թ. Երևանում ապրող
քրդերից իրենց մայրենի լեզուն քրդերենն են համարել 89,7 տոկոսը,
իսկ 1970թ.՝ 79,8 տոկոսը:

Ռուսներից իրենց մայրենի լեզուն ռուսերենն են համարել համա-
պատասխանաբար 99,6 և 99,1 տոկոսները: Դրանց հակառակ՝ հայերից ի-
րենց մայրենի լեզուն հայերենն են համարել համապատասխանաբար 98,2
և 99,6 տոկոսները:

3. Մյուս բնորոշ գիծը հայերեն-ռուսերեն երկլեզվության տարա-
ծումն ու խորացումն է: Թե՛ մի կողմից՝ նկատվում է Երևանում հա-
յերենի դիրքերի ամրապնդման միտում, ապա մյուս կողմից՝ գնալով մե-
ծանում է ժողովրդական զանգվածների՝ ռուսերենին տիրապետման աստի-
ճանը: Սա նշանակում է, որ ավելի ու ավելի շատ մարդիկ են ներգրավ-
վում երկլեզվակիրների շարքը:

4. Երևանի լեզվավիմակին բնորոշ է պարզեցումը ոչ միայն երկ-
լեզվության, այլև գուգախոսության առումով: Նկատի ունենք այն, որ
գնալով հաղթահարվում է բարբառախոսությունը և ամրապնդվում է գրա-
կան հայերենի դիրքը մանավանդ բանավոր խոսքում:

5. Պարզեցմանը հակառակ՝ նկատվում է Երևանի լեզվի հասարակա-
կան շերտավորման խորացում և երևանաբնակների խոսքացանկի հարստա-
ցում գործառական-ոճական տարբերակումների առումով, այսինքն՝ գնա-
լով սովորական է դառնում, որ անհատը տիրապետի գործառական մի շարք
ոճերի, կարողանալով անցնել մեկից մյուսին՝ ըստ իրադրության պա-
հանջի:

Երևանի լեզվավիմակի նշված առանձնահատկությունները պայմանա-

վորում են հանրալեզվաբանական ուսումնասիրությունների նկատմամբ հետաքրքրության աճը և հանրալեզվաբանական հայերենագիտության ձևավորումը երևանում, ինչպես նաև լեզվաբանական այլ կենտրոններում /Մոսկվա, Վենետիկ, Քվեբեք և այլն/:

Մասնավորապես Երևանում արդեն կան մի շարք մասնագետ հանրալեզվաբաններ /Երևանի պետական համալսարանում և այլ ուսումնական ու գիտական հաստատություններում/:

ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում 1976թվից գործում է հանրալեզվաբանների խումբը:

Արդեն հրապարակվել են հանրալեզվաբանական մի շարք մենագրություններ, հոդվածներ, զեկուցումներ*: Դրանցում առաջ քաշվող հիմնական խնդիրներն են.

1. հանրալեզվաբանության պատմության, արդի վիճակի և հեռանկարների քննություն.

2. հանրալեզվաբանության տեսություն, զաղափարաբանություն և մեթոդաբանություն.

3. համաժամանակյա կառուցվածքային, գործառական և կիրառական հանրալեզվաբանություն /լեզվի հասարակական տարբերակվածության, լեզվավիճակների, երկլեզվության, լեզվաշինության, նորմավորման ու լեզվաքաղաքականության ուսումնասիրում/.

4. տարժամանակյա հանրալեզվաբանություն.

5. համայնաժամանակյա հանրալեզվաբանություն և հանրալեզվաբանական տիպաբանություն:

Հայ լեզվաբանության մեջ ավանդաբար առավել զարգացած է կիրառական հանրալեզվաբանությունը, մասնավորապես լեզվաշինությունը:

Ներկայումս զարգանում է կառուցվածքային հանրալեզվաբանությունը, ինչպես նաև թվարկված մյուս ուղղությունները:

---

*Տես, օրինակ, ,,Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատաբանական հետազոտություններ,, , Ե., 1979; ,,ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն,, , Ե., 1981; ,,ժամանակակից հայերենի զարգացման միտումները,, /զեկուցումների դրույթներ/, Ե., 1980; ,,Ներհասարդ լեզվաբանների հանրապետական գիտական երրորդ կոնֆերանս,, /զեկուցումների դրույթներ/, Ե., 1982; Հ.Լ. Ջաքարյան, Սոցոլինգվիստիկան, նրա արդի վիճակը և խնդիրները; ,,Լրաբեր հասարակական գիտությունների,, , 1975, նո.2: Э.Г.Туманян. Малые языковые группы в свете социально-психологических и культурно-этнических проблем (по данным зарубежных армянских колоний). "Тезисы докладов советских социолингвистов на IX всемирном социоло-

ѓическом конгрессе", М., 1978; G. Uluhogian, H.L. Zakarian. Aspetti della situazione linguistica di Erevan. "Studi italiani di linguistica teorica ed applicata", Anno X, 1981: numero 1-2-3; և այլն:

Լ.Գ. ՋԵՔԻՅԱՆ /Վենետիկ, Իտալիա/

ՀԱՅԵՐԷՆԻ ՎԵՐԱԳՐՈՒՄԻ ՀԱՐՑԸ ,,ԱՐԵՒՄՏԵԱՆ,, ՍՓԻՒՌՔԻՆ ՄԷՋ

Ակնյայտ երեւոյթ մըն է, վերստուգելի նոյնիսկ մակերեսային ակնարկով մը, թէ հայերէն լեզուի ծանօթութիւնը, հայածին զանգուածներու կողմէ, անքաղաքակիրթ նուազ ծաւալում մը ունի եւ, առկայութեան պարագային ալ, ընդհանրապէս աւելի տկար է արեւմտեան երկիրներու մէջ, ինչպէս Ֆրանսան կամ Ամերիկայի Միացեալ Նահանգները, քան թէ Միջին Արեւելքի մէջ, օրինակ՝ Լիբանան կամ Պարսկաստան: Նշելի է նաեւ որ վերջին տարիներու ընթացքին Արեւմտեան երկիրներու մէջ հայախօսութեան տարածումը կախում ունեցած է, մեծ մասամբ, Միջին Արեւելքէն եկող գաղթի ուժեղ շարժումներէն:

Իսկոյն ըսենք թէ ,,արեւմտեան,, որակումը կը կիրարկենք այստեղ ոչ այնքան աշխարհագրական, որքան մշակութային եւ ընկերա-կառուցային իմաստով: Այսպէս, ,,արեւմտեան,, սփիւռք կը նկատենք, օրինակի համար, Աւստրալիոյ հայ գաղութը, թէեւ այդ երկիրը կը գտնուի ծայրագոյն Արեւելքի մէջ: Արդարեւ, իր մշակոյթով եւ ընկերային կառոյցով, Աւստրալիա կը ներկայանայ իբր էապէս ,,արեւմտեան,, , աւելի ճիշդ, անգլիա-սաքսոնական երկիր մը:

Ներկայ ուսումնասիրութեան ընթացքին մեր նպատակը չէ՝ կատարել վիճակագրական տուեալներու վերլուծում մը, ոչ ալ համադրական ամփոփում մը, թէ ինչ համեմատութիւններ եւ ինչպիսի արտայայտութիւններ ունի արեւմտեան երկիրներուն մէջ հայերու կողմէ հայերէնը լեզուի ծանօթութիւնը եւ ընթացիկ գործածութիւնը: Այլ, արդէն ենթադրելով եւ իբր մեկնակէտ առնելով յիշեալ երկիրներու մէջ հայերէնի տկար դիրքը, կը փորձենք վերլուծել այս երեւոյթին պատմական, մշակութային, ընկերային եւ այլ կարգի պատճառները, հուսկ հարց դնելու համար՝ թէ լեզուական ծուլումի այս տակաւ, բայց զգալի յառաջընթացը պէ՞տք է արդեօք իբր անդիմադրելի կամ անխուսափելի եղելութիւն մը նկատել, սերտօրէն եւ անքաժանօրէն կապուած այդ երկիրներու ընկերա-մշակութային ներքին կառոյցին, թէ ոչ կարելի է այդտեղի զա-

ղութիւններուն համար եւս ուրուագրել լեզուական պահպանումի որոշ հեռանկարներ, որոնք վաւերականութեան երաշխիք մը ընծեռնեն գոնէ սերունդներու շօշափելի յաջորդականութեան մը համար:

Մեր վերլուծումները թէեւ կը կատարենք աչքի առջեւ ունենալով գլխաւորապէս հայերէնի պարագան, բայց ատոնք հիմնուած ըլլալով տուեալ իրողութիւններու կառուցային նկատառութեան վրայ, պէտք են զօրել ըստ ինքեան հայերէնի դիրքին մէջ գտնուող ուրիշ լեզուներու համար ալ:

Սփիւռքային /1/ դրութեան մը մէջ գտնուող լեզուի մը գոյապայմանը կարելի է, ընդհանուր առմամբ, զետեղել հանրալեզուաբանական երեւոյթներու այն ծիրին մէջ՝ որ կը կոչուի երկլեզուութիւն /2/: Ասով հանդերձ, սփիւռքի մը երկլեզուութեան պարագան՝ սփիւռքային լեզուին գործածութեան, զարգացման եւ պահպանումին նկատմամբ՝ երեւան կը բերէ այնպիսի եզակի հարցեր, որոնք զայն յատկօրէն կը զանազանեն հողային կամ աշխարհագրական երկլեզուութեան /3/ պարագայէն: Դժբախտաբար, երկլեզուութեան մասին կատարուած ուսումնասիրութիւնները նկատի կ'առնեն առաւելաբար հողային փոքրամասնութիւնները եւ անոնց լեզուական հարցերը: Սփիւռքային դրութեան մը լեզուական հարցերուն,եւ ոչ միայն լեզուական՝ այլ ընկերային ու իրաւական աւելի հիմնական հարցերուն ալ, ընդհանրապէս, չէ ընծայուած պատշաճ կարեւորութիւնը: Այլեւայլ լեզուներու համակեցութեան մասին կատարուած ուսումնասիրութիւններու մեզ հետաքրքրող ուրիշ մէկ սահմանափակումն ալ այն է՝.որ անոնք շատ աւելի կը ծանրանան զուտ լեզուական երեւոյթներու վրայ, ինչպէս լեզուական միջդիպումը /interférence /, կամ նկատի կ'առնեն երկլեզուութեան հոգեբանական անդրադարձները եւլն.: Ընկերա-մշակութային կառոյցի տեսակէտէն՝ երկլեզուութիւնը ամէնէն ընդարձակօրէն ուսումնասիրողներէն մէկը եղած է Ուրիէլ Վայնրայխ, թէեւ իր վերլուծումներն ալ ուղղուած են հուսկ լուսաբանելու լեզուական միջդիպումի հարցերը, որոնք իր հետազօտութիւններուն գլխաւոր նպատակակէտը կազմած են /4/:

Խումբի մը մօտ երկու լեզուներու համակեցութեան պարագային, շատ դժուար է որ այդ լեզուները իրարու նկատմամբ ճիշդ միեւնոյն դիրքին վրայ գտնուին. ընդհանրապէս անոնցմէ մէկը կամ միւսը տիրող հանգամանք մը կ'առնէ: Զանազան կարգի ազդակներ կը նպաստեն՝ մէկ կամ միւս լեզուին այս հանգամանքը տալու: Բնականաբար ենթակային կամ ենթականերուն առաւելագոյն ծանօթութիւնը մէկուն կամ միւսին՝ հիմնական ազդակներէն մէկն է: Տարիքը՝ երբ սորված են զանոնք, կիրարկումի ժեւը՝ լոկ խօսակցական թէ նաեւ գրաւոր, զգացական անդրա-

դարձները՝ յատկապէս մանկութեան տարիներուն վերաբերող, ուրիշ ազդակները են՝ որ նոյնպէս դեր ունին լեզուներէն մէկուն կամ միւսին գերակշռութեան նկատմամբ: Այս ազդակները հասարակաց գիծ մը ունին իրարու հետ, այնու որ բոլորն ալ կը վերաբերին ենթակայի բեւեռին. կրնանք զանոնք բնորոշել իբր լեզուի մը գերակշռութեան ենթակայական ազդակները: Իսկոյն աւելցնենք սակայն որ զանոնք կարելի չէ զետեղել զուտ ենթակայական մակարդակի մը վրայ, այնու որ կը պայմանաւորուին, առաւել կամ նուազ չափով, ընկերութեան կառոյցէն եւ այդ կառոյցը կազմող զանազան տարրերուն միջեւ տիրող յարաբերութիւններէն:

Ամէն պարագայի, վերոյիշեալ ազդակներուն առընթեր կան ուրիշներ ալ, որոնք աւելի անմիջականօրէն կ'արտայայտեն ընկերա-մշակութային կառոյցին յատկանիշները: Այս վերջին ազդակներու կարգին կըրնանք թուել հետեւեալները. լեզուի մը առաւելազոյն օգտակարութիւնը ընկերային հաղորդակցութեան, ինչպես նաեւ ընկերային դիրքի մէջ յառաջադիմութեան համար. լեզուի մը գրական ու մշակութային առաւելազոյն կարեւորութիւնը՝ զաւառին կամ երկրին ընդհանուր շրջածիրին մէջ: Այս ազդակներուն՝ որոնք առաւելապէս ընկերա-մշակութային բնոյթ կը կրեն՝ կարելի է աւելցնել տակաւին զուտ լեզուական կարգի ազդակներ, թէեւ ասոնք ալ պայմանաւորուած են վերջ ի վերջոյ պատմա-մշակութային յեղաշրջումներու փուլերէն: Այսպէս՝ լեզուի մը առաւել կամ նուազ ճոխութիւնը, ճկունութիւնը, գիտական եւ գիտարուեստական իմացումներ արտայայտելու ատակութիւնը, նոր գաղափարներու արտայայտութեան տրամադրելիութիւնը եւլն.:

Հանրալեզուաբաններու կողմէ առաջարկուած այս ազդակները, զոր երեք գլխաւոր խումբերու վերածեցինք, նկատի առնուած են բացատրելու համար գլխաւորապէս փոքրամասնային խմբաւորումի մը մօտ լեզուի մը տիրապետումի յառաջընթացքը, երբ այդ խմբակը տեւական շփումի մէջ կը մտնէ այլալեզու մեծամասնային խումբի մը հետ: Այլապէս պարզ է որ երկրի մը տիրող լեզուն, ընդհանրապէս, քաղաքականօրէն գերակշռող խումբին լեզուն եղած է: Վերադառնալով փոքրամասնութիւններու պարագային, որոնց լեզուն տիրող հանգամանք չունի երկրին ընդհանուր կառոյցին մէջ, կը տեսնենք որ անոր գոյատեւումին նկատմամբ ժխտական ու դրական երկու հնարաւորութիւններն ալ պատմականօրէն իրականացած են. այսինքն՝ խնդրոյ առարկայ լեզուն միտած է տկարանալու եւ նոյնիսկ մարելու՝ իբր հետեւանք յամախակի շփումին գերակշռող լեզուին հետ եւ կամ շարունակած է պահել իր գոյութիւնը: Առաջին պարագային իբր օրինակ կրնանք նշել Ջուլիցերիոյ բարբառներէն ռոմանշներէնը, որ

հազարամեակէ մը ի վեր ենթարկուած է յարաճուն տկարացումի յառաջընթացքի մը, եթէ նկատի չառնենք վերջին տասնամեակներուն ծայր տուած շարժումները լեզուն վերապրեցնելու: Երկրորդ պարագային իբր օրինակ կրնայ ծառայել նոյնինքն հայերէնը՝ Պարսկական կամ Օսմանեան կայսրութիւններուն մէջ:

Հիմա, եթէ ուզենք թուել լեզուի մը տկարացումին ազդակները, պարզ է թէ, ընդհանուր առմամբ, ատոնք պիտի ըլլան այն միեւնոյնները՝ որոնք լեզուի մը միւսին վրայ գերակշռումին կը սատարեն, անշուշտ հակառակ տեսանկիւնէն դիտուած: Այս կէտը արժանի է մասնաւոր ուշադրութեան: Արդարեւ, մեր հարցադրութեան տեսանկիւնէն, լեզուի մը գերակշռումի պարագան՝ միեւնոյն ատեն լեզուական փոփոխութեան պարագայ մըն է: Սակայն, ծանօթ են լեզուական փոխարինութեան պատմական պարագաներ, ուր գերակշռումի վերոյիշեալ ազդակները բաւարար պիտի չըլլային ամէն ինչ բացատրել: Այսպէս, արեւմտեան Փրուսիոյ մէջ, առաջին աշխարհամարտէն առաջ, շատ լիթուանացիներ խոր ծանօթութիւն մը ունեցած են գործածական տիպար գերմաներէնի. եւ սակայն լիթուաներէնը տեղիք տուած է գերմաներէնին՝ միայն պատերազմէն վերջ, երբ յետ-պատերազմեան սերունդին միջեւ ընդարձակօրէն ծաւալած է ստորին գերմաներէն բարբառը: Նմանապէս ռեթառոմանշներու բազմաթիւ սերունդներու ծանօթ եղած է տիպար գերմաներէնը. բայց ռոմանշերէնը գործնականօրէն սկսած է վտանգուիլ միայն զուիցերական բարբառային գերմաներէնի, շվիցերթիւչի ծաւալումով /5/: Այս երեւոյթները կը թելադրեն, ուրեմն, որ զօրաւոր լեզուի մը համապատասխան կամ մօտիկ բարբառի մը առօրեայ խօսակցականութեան պարագան կրնայ վճռական դեր մը կատարել վանելու համար ուրիշ լեզու մը՝ որ այլապէս կը դիմադրէր զօրեղ գրական լեզուի մը խուժումին: Այս պարագան կը մասնականացնէ եւ որոշ ուղղութեամբ մը առաւելաբար կը բացայայտէ ինչ որ կ'ըսէինք՝ նկատի առնելով լեզուի մը զուտ խօսակցական կամ նաեւ գրական ըլլալու բնոյթը, լեզուական գերակշռումի ազդակներու կարգին:

Ուրիշ բազմաթիւ ազդակներ ալ, անտարակոյս, շատ կարեւոր դեր մը կը կատարեն լեզուական փոխարինումի պարագաներուն: Յիշենք կրօնքը կամ յարանուանական պատկանելիութիւնը. Անքարացի Թրքախօս կաթողիկէ հայերու պարագան դասական օրինակ մը կ'ընծայէ այս մասին: Նպանապէս նշուած է որ գերմաներէնէն փորթուկալերէնի անցքը Պրազիլ գաղթած գերմանացիներուն միջեւ՝ աւելի դիւրին տեղի ունեցած է կաթողիկէներու քան թէ բողոքական գերմանացիներու մօտ, ինչ որ կը բացատրուի անշուշտ փորթուկալեան մշակոյթին ուժեղ կապակցութեամբ

կաթողիկէ աւանդութեան հետ: Միեւնոյն գաղթականներու պարագային՝ նշուած են տակաւին այլ կարգի ազդակներ: Այսպէս, աւելի արագ եղած է փոքրուկալերէնի անցքը եռալեզու գօթիներու մէջ՝ ուր փոքրուկալերէնը իբրեւ հաղորդակցութեան հասարակաց միջոց մը կը ծառայէր: Նմանապէս աւելի արագ եղած է անցքը՝ ուր աւելի շուտով ջողուած են գերմանական բարքերն ու սովորոյթները: Ընկերային դասակարգն ալ շատ կարեւոր դեր մը կը կատարէ: Այսպէս, լեզուական փոխարինումը շատ աւելի դանդաղ եւ դժուար տեղի կ'ունենայ գիւղացի խաւերու միջեւ քան թէ առեւտրական եւ քաղքենի դասակարգին մօտ /6/: Յայտնի է նաեւ աշխարհագրական կղզիացումին կատարած դերը ի նպաստ լեզուական պահպանումին . կովկասեան շրջանը իր բազմաթիւ տասնեակ լեզուներով եւ անհամար բարբառներով ցայտուն օրինակ մըն է այս ուղղութեամբ:

Ժամանակի տարածքն ալ իբր կարեւոր ազդակ մը կը ներկայանայ: Մեր անձնական փորձառութեամբ յաճախ նշած ենք՝ ըլլայ քասնական-երեսնական թուականներուն, ըլլայ վերջին տասնամեակներուն Արեւմուտք գաղթած հայ ընտանիքներու մօտ, որ տեղւոյն վրայ ծնած զաւակներէն հայերէնը լաւագոյն մանչացողները անդրանիկներն են եւ որքան սերունդը կը նորոգուի՝ ընդհանրապէս համեմատաբար կը նուազի հայերէնի ծաւոթիւնը, մերթ չքանալու աստիճան: Այս երեւոյթին արդէն ժամանակին անդրադարձած է Արսէնեան՝ հարցը ուսումնասիրելով միացեալ նահանգներ գաղթած իտալացիներու եւ հրեաներու միջեւ /7/: Սակայն, կը խորհինք թէ քացի ժամանակի տարածքէն կայ նաեւ նշելի ուրիշ կէտ մը. այն՝ թէ յաճախ անդրանիկ կամ երէց զաւակները ցեղային զգացողութեան տեսակէտէն ալ աւելի մօտիկ կը զտնուին իրենց ծնողներու զգացումներուն. այս պարագան կը բացատրուի, կը խորհինք, ընտանեկան քջիջին եւ նոր շրջապատին միջեւ ստեղծուած կապերուն քնոյթով եւ այդ կապերուն կրած յեղաշրջումներով ընտանիքի նոր անդամներուն նկատմամբ:

Հուսկ, ուրիշ կարեւոր ազդակ մը երեւան կու գայ, յատկապէս, երբ նկատենք լեզուի մը պահպանումին համար կատարուած կազմակերպեալ աշխատանքները եւ կամ լեզուական վերապրումի պարագաները: Արդարեւ, այս երեւոյթները կը յենուն լեզուական հաւատարմութեան ըմբռնումի մը, որ իր կարգին կ'ենթադրէ այն համոզումը՝ թէ լեզուի մը պահպանումը կը ներկայացնէ դրական արժէք մը: Այս համոզումն ալ կը ներփակէ որեւէ մշակոյթի, յատկապէս փոքրամասնային մշակոյթներու պահպանման արժէքը: Բնականաբար անկարելի չէ որ տնտեսական եւ այլ կարգի իշխանատիրական շահեր դիմակաւորուին լեզուական կամ մշակութային հաւատարմութեան պատրուակներով: Բայց ամէն ինչ եւ տարամերժօրէն վերագրել այդպիսի ազդակներու՝ կը կարծենք թէ անընդունելի ծայրա-

յեղուքիւն մըն է: Ոչ ալ կարելի է ժայնակցիլ այն տեսակէտին՝ որ կը քելադրէ լեզուները ձգել բոլորովին իրենց մակատագրին: Արդարեւ, եթէ մինչեւ ծայրը հասցնէինք նման սկզբունք մը, պէտք էինք բոլորովին անօգուտ եւ աննպատակ յայտարարել ոչ միայն լեզուական ակադեմիաներն ու յարակից հաստատութիւնները, այլ մինչեւ իսկ դըպրոցներու մէջ լեզուի եւ քերականութեան ուսուցումը: Մանաւանդ որ պատմական փորձառութիւնը ցոյց կու տայ որ լեզուի մը պահպանման, նոյնիսկ վերակենդանացման համար թափուած ջանքերը տուած են մեկէ աւելի անզամներ շօշափելի արդիւնքներ /8/: Մեր կարծիքով՝ լեզուական, ինչպէս նաեւ աւելի ընդարձակօրէն՝ մշակութային որեւէ արտայայտութիւն մարդկային ուրոյն արժէք մը կը ներկայացնէ, արժանի խնամքի եւ զուրգուրանքի /9/: Բնականաբար նման ըմբռնումի մը թափանցումը ժողովրդական լայն խաւերու մէջ՝ կը կարօտի մասնաւոր դաստիարակութեան մը: Բայց, որպէսզի կարենանք աւելի խորացնել այս կէտը, պէտք ենք աւելի մասնաւորել մեր նիւթը համեմատութեան դնելով հայ լեզուի եւ մշակոյթի վիճակը՝ անցեալին ու ներկայիս՝ արեւելեան ու արեւմտեան երկիրներու մէջ: Շատ կարեւոր է անցեալին ընծեռած չափանիշը, քանի որ լեզուի մը որոշ ժամանակամիջոցի մը տեւողութեամբ գոյութեան ստուգութիւնը միայն անցեալէն կրնանք ունենալ. արդ, սաոյգ է որ ըլլայ Պարսկական, ըլլայ Օսմանեան կայսրութեան մէջ հայ լեզուն գոյատեւած է, նաեւ պատմական Հայաստանի սահմաններէն դուրս, շուրջ հինգ դարերու տեւողութեամբ. իսկ ուր որ ընդմիջուած է անոր գոյութիւնը՝ ասիկա արդիւնք չէ եղած ընկերա-լեզուական բնականոն յեղաշրջումի մը:

Իսլամական իրականարգը աստուածպետական իրաւակարգ մը ըլլալով՝ հիմնուած էր այն սկզբունքին վրայ որ էապէս հաւատացեալներու ընկերութիւնը ներկայացնող պետութեան լրիւ քաղաքացիները միայն հաւատացեալներ, այսինքն իսլամներ կրնային ըլլալ: Սակայն կ'ընդունուէր միեւնոյն ատեն քրիստոնեայ տարրին ալ ապրելու իրաւունքը որոշ պայմաններով, ինչ որ կրնանք՝ հարցը պարզելու համար իբր երկրորդ կարգի քաղաքացիութիւն մը նկատել: Իսկ պետութեան ծոցին մէջ ապրող այս բազմապիսի տարրերէն իւրաքանչիւրին իրաւակարգը եւ իրարու հետ փոխադարձ համակեցութիւնը կը հիմնուէր ,,միլլէթ,, ի ըմբռնումին վրայ: Կրօնական եւ էթնիկ տարրերու ժուլումէն յառաջագայող եզակի իմացում մը՝ որ գործնականին մէջ բաւական յստակ զանազանութիւն մը կը ստեղծէր ոչ միայն իսլամին եւ քրիստոնեային, այլ նաեւ քրիստոնեայ զանազան խմբաւորումներուն միջեւ՝ համաժայն իրենց կրօնական-յարանուանական պատկանելութեան եւ ազգային-լեզուա-

կան ինքնութեան:

Նման իրաւակարգի մը մէջ, եթէ մէկ կողմէն քրիստոնեան քաղաքացիականօրէն երկրորդական դիրքի մը վրայ կը գտնէր ինքզինքը, միւս կողմէ սակայն պետական ճանաչում եւ վաւերացում ստացած էր քնիկ ինքնութիւնը, որով կը զանազանուէր ոչ միայն իսլամէն, այլ նաեւ իրեն նման՝ բայց միեւնոյն ատեն լեզուով, Եկեղեցիով կամ յարանուանութեամբ իրմէ տարբեր քրիստոնեայէն: Պարզ է թէ պետական նման ճանաչում մը, միացած յատկապէս կրօնական զանազանութեան զիտակցութեան եւ կրօնական բացարձակ հաւատարմութեան զգացումին՝ քրիստոնեայ ենթականերուն կողմէ, կը ստեղծէր նպաստաւոր միջավայր մը էթնիկա-լեզուական միաւորներու գոյատեւումին համար. իրերու այս կացութիւնը կը խզուէր միայն բռնի կրօնափոխութիւններու պարագային, որոնք ընդհանրապէս տեղական հանգամանք ունեցած են:

Օսմանեան եւ Պարսկական կայսրութիւններու իրաղրութենէն՝ եթէ պահ մը անցնինք 1920էն ասդին Միջին Արեւելքի այլեւայլ իսլամ երկիրներուն մէջ ցրուած հոծ հայութեան վիճակին, ուր հայերէն լեզուն, ինչպէս արդէն ըսինք, արեւմտեան սփիւռքին նկատմամբ անբաղդատելիօրէն աւելի բարգաւած երեւոյթ մը կը պարզէ, կրնանք հետեւեալ նկատողութիւնները կատարել: Այդ երկրներէն ոմանք եթէ նոյնիսկ հրաժարած ըլլան իսլամական շերիայէն եւ ընդունած արեւմտեան ,,լայիք,, պետութեան զաղափարը, բայց եւ այնպէս՝ ըլլայ ժողովուրդին մտայնութեան, ըլլայ վարչական մեքենային խորքին մէջ դրոշմուած կը մնայ ,,համայնքային,, պատկանելիութեան եւ որակումի զաղափարը, որ ունի նաեւ իր իրաւական եւ գործնական անդրադարձները՝ քրիստոնեայ տարրին քաղաքական եւ կառավարական պաշտօններու մասնակցութեան սահմանափակումներուն մէջ: Նման դրութիւն մը, թէեւ տարբեր երեւոյթներով ու կոչումներով, բայց խորքին մէջ, կարեւոր չափով մը, կը շարունակէ ,,միլլէթ,,ի իսլամական ըմբռնումը: Ուստի կը սատարէ վառ պահելու համայնքային այն ինքնագիտակցութիւնը, որ անհրաժեշտ է լեզուամշակութային գոյատեւումին համար:

Իսլամ երկիրներու այս ընկերա-քաղաքական կառոյցին ազդեցութեան վրայ, զոր կնկատենք իբր գլխաւոր ազդակներէն մին, իր բոլոր թերութիւններով հանդերձ, էթնիկա-լեզուական միաւորներու պահպանման, կարելի է աւելցնել նաեւ վերը թուարկուած այլ կարգի ազդակներէն ոմանք. այսպէս, օրինակի համար, հայերու պարագային, հայ տարրին եթէ ոչ միշտ զերակշիռ, բայց պատկառելի դիրքը՝ այդ երկիրներու տնտեսական եւ մշակութային կեանքին մէջ, ինչ որ տուած է հայուն որոշ ինքնավստահութիւն մը եւ սնուցող ջամբած՝ իր ինքնութիւնը

պահպանելու գիտակցութեան:

Իսլամ երկիրներու պարզած այս իրաւրութիւնը բոլորովին կը փոխուի՝ երբ կ'անցնինք արեւմտեան աշխարհին: Երկու աշխարհներու միջեւ պատմականօրէն հիմնական տարբերութիւններէն մին այն եղած է, որ մինչ իսլամ տէրութիւններու մեծամասնութեան մէջ գոյութիւն ունեցած է միշտ՝ նաեւ ցեղով տարբեր ոչ իսլամ տարր մը, արեւմտեան Եւրոպայի երկիրներէն ոչ մէկը ստիպուած է դիմազրաւել կրօնա-ցեղային այլատարրութեան նման երեւոյթ մը՝ զոնէ մեր հազարամեակի ընթացքին: Ծիշդ է որ Բողոքականութեան երեւումին յաջորդող պայքարներով կարելի եղած է զգետնել Միջին դարու արեւմտեան աստուածպետականութեան այն սկզբունքը՝ թէ պէտք էր տիրել իշխողին կրօնքը "cujus regio ejus religio" : Սակայն Բողոքականութիւնն ալ, կրելով հանդերձ որոշ չափով ցեղային-ազգային անդրադարձներ, չէր դներ կրօնա-ցեղային զանազանութեան այնպիսի արմատական հարց մը՝ ինչպիսին էր, ընդհակառակն, Արեւելքի մէջ մէկ կողմէ իսլամներու եւ քրիստոնեաներու, միւս կողմէ՝ այլեւայլ քրիստոնեայ Եկեղեցիներու միջեւ զանազանութիւնը: Արդարեւ, զոնէ կրօնական պատերազմներու աւարտէն ասդին, հաւասար տիտղոսով գերմանացի նկատուած են կաթողիկէն ալ, բողոքականն ալ: Որով կրօնքը չէր կրնար էթնիկա-լեզուական զանազանութեան մը իբրեւ հիմ ծառայել Արեւմուտքի ընկերային-իրաւական ընդհանուր կարգուսարքին մէջ: Միւս կողմէ Վերածնունդով ծիլ արձակած զաղափարախօսութիւնները, որոնք Ֆրանսական յեղափոխութեամբ եւս աւելի արմատացան ու Եւրոպայի լայիք ժողովրդավար կարգախօսներուն ներշնչարանը դարձան, կը միտէին էապէս պետութեան այնպիսի մտապատկերի մը՝ ուր ամէն քաղաքացի օրէնքին առջեւ հաւասար ըլլար, առանց որեւէ կրօնական, ցեղային կամ լեզուական զանազանութեան: Այսպէս, թօթափելով աստուածպետականութեան յետին մնացորդներն ալ, կը ձեւանար հետզհետէ արդի Եւրոպայի լայիք, ժողովրդավար եւ ,,ազգային,, պետութեան ըմբռնումը՝ ուր զրեթէ աննշան պիտի դառնային քաղաքացիներու միջեւ կրօնական, ցեղային կամ լեզուական տարբերութիւնները, ինչ որ պիտի ձգտէր հուսկ քաղաքացիներու միջեւ մշակութային ու լեզուական զրեթէ բացարձակ միաձեւութեան մը զաղափարակային:

Այս վերլուծումը բաւական յստակօրէն ցոյց կու տայ թէ արեւմըտեան ընկերութիւնը, ըլլայ իր միջնադարեան աստուածպետական յօրինուածքով, ըլլայ յետագայի լայիք-ժողովրդավար-ազգային ըմբռնումներով, դժուար էր որ ընձեռէր այնպիսի միջավայր մը՝ ուր քրիստոնեայ այլացեղ փոքրամասնութիւնները, մանաւանդ եկուորներն ու տկար-

ները, կարենային մնայուն գոյատեւումի մը համար բաւարար երաշխիքներ ունենալ եւ կամ նոյնիսկ վայելել այն անուղղակի պատսպարանքը զոր կ'ընծայէր՝ կրօնական-յարանուանական զանազանութեան վրայ հիմնուած իսլամ ընկերութիւնը:

Բարեբախտաբար, արեւմտեան ընկերութեան ընկերա-մշակութային կառոյցին մէջ վերջին տասնամեակները զգալի փոփոխութիւնները նշեցին, որոնք տակաւին ծլարձակումի եւ տակաւ հասունացումի հանգրուան մը կը բոլորեն: Այս փոփոխութիւններու կարգին կարեւորագոյններէն մէկը, որ մեզ յատկապէս կը հետաքրքրէ, խարխլումն է մշակութային միազանգուածութեան զաղափարին: Ցետ զգեստնելու ,,տիրողին կրօնքը,, կարգախօսը, Արեւմուտքը, գործնականին մէջ, դեռ երկար դարեր ապրեցաւ լեզուա-մշակութային զետնի վրայ հանգէտ սկզբունքով մը՝ զոր կրնանք բանաձեւել իբրեւ ,,տիրողին լեզուն,, կամ ,,տիրողին մշակոյթը,, / cujus regio ejus lingua /: Այս զաղափարը, մէկ կողմէ, իր արմատները կ'առնէր Եւրոպայի միջնադարեան աստուածպետական աւանդութենէն, միւս կողմէ՝ հարկ է ընդունիլ որ այդ սկզբունքը արդիւնք էր Արեւմուտքի մէջ զարգացող քաղաքացիական հաւասարութեան եւ ազատութեան զաղափարներուն, որով աննշան կը դառնար երկրի մը քաղաքացիներուն միջեւ որեւէ ցեղային կամ լեզուական տարբերութիւն, որ հուսկ հետզհետէ նօսրանալու եւ անհետանալու կը սահմանուէր:: Այս երեւոյթը տեղի կ'ունենար յատկապէս այն պարագաներուն՝ ուր փոքրամասնային ցեղը, մշակոյթը կամ լեզուն յստակօրէն չէին բնորոշուած աշխարհագրական դիրքով մը, որ իբր բնական պատուար մը ծառայէր ծուլումի հոսանքին դէմ, ինչպես Իտալիոյ մէջ՝ Ալթոյ-Ատիճէի զերմանախօս ցեղախումբին՝ կամ Սպանիոյ մէջ Պասքերու պարագային /10/: Շատ պարզ է որ արեւմտեան ոչ մէկ երկրի մէջ հայերը կրնային օգտուիլ նման ,,բնական,, պատսպարանքէ մը:

Շատ նշանակալից է, ուրեմն, այն յեղաշրջումը՝ որ քանի մը տասնամեակներէ ասդին տեղի կ'ունենայ արեւմտեան քաղաքակրթութեան ծիրին մէջ, որով Արեւմուտքը հետզհետէ կը սկսի գիտակցիլ՝ թէ քաղաքացիներու միջեւ օրինական հաւասարութիւնը չի ներփակեր անհրաժեշտօրէն լեզուա-մշակութային տարբերութիւններուն բարձումը եւ թէ ընդհակառակն, այդ տարբերութիւնները, զայմանաւ որ չվտանգեն երկրին պետական միասնականութիւնը, ծոխութիւն մը կ'աւելցնեն երկրին ընդհանուր մշակոյթին: Նման յեղաշրջում մը զգալի է յատկապէս Միացեալ Նահանգներու, Քանատայի, Ֆրանսայի նման երկիրներու մէջ, ուր հայերն ալ ստուարաթիւ զաղութներ կը կազմեն: Այս նոր մտայնութիւնը կ'արտայայտուի մինչեւ իսկ Պետութեան կողմէ ընծեռուած

նպաստներով՝ նաեւ ոչ հողային փոքրամասնութիւններու լեզուին, մշակոյթին կամ աւանդութիւններուն պահպանման համար:

Արեւմտեան հայ սփիւռքը եթէ կ'ուզէ գոյատեւել իբր հայ ինքնութեամբ հասարակութիւն մը, թէեւ համարկուած տուեալ երկրի մը կառոյցներուն մէջ, պէտք է որ առաւելագոյն չափերով օգտուի արեւմտեան մշակոյթի այս նորագոյն յեղաշրջումներէն: Ինչպէս կը տեսնուի, հոս կը դպչինք ընկերա-մշակութային կառոյցի մը արմատներուն: Արեւմտեան սփիւռքին մէջ, այսօր հայապահպանումի պայքարը էապէս հաւասարակշռութեան, համադրութեան հարց մըն է. զտնել միշտ համադրութիւնը՝ ընդմէջ հայութեան եւ երկրի մը քաղաքացիական կառոյցներուն պատկանելիութեան: Եւ արեւմտեան մշակոյթը, որ հարիւր կամ նոյնիսկ յիսուն տարի առաջ թերեւս պիտի չկարենար ըմբռնել նման համադրութեան մը կարելիութիւնը, այսօր կը սկսի արդէն աւելի ատակ դառնալ զայն հասկնալու: Հասկնալու՝ թէ փոքրամասնութիւններու ծուլումը /assimilation / երբեք անհրաժեշտ չէ երկրի մը միասնականութեան համար. բաւական է որ անոնք համարկուած /intégrés / ըլլան, այդ երկրին ընկերա-մշակութային-քաղաքական կառոյցներուն մէջ եւ ըլլան լրիւ իմաստով քաղաքացիներ՝ թէ իրենց իրաւունքներով եւ թէ պարտաւորութիւններով: ,,Համարկում, բայց ոչ ծուլում,, կրնայ ըլլալ կարգախօսը նման գաղափարախօսութեան մը: Այս լոյսին տակ՝ նոր դերակատարութիւն եւ նոր ազդողականութիւն մը կը ստանան ,,ազգապահպանում,,ի ծանօթ բոլոր աւանդական միջոցները, ակումբ, դպրոց, եկեղեցի եւլն.:

Հուսկ՝ տակաւին երկու նկատողութիւն: Ըսինք թէ հայերը արեւմտեան երկիրներուն մէջ չեն կազմեր հողային փոքրամասնութիւն մը: Ակներեւ է, սակայն, որ փոքրամասնային մշակոյթի մը վերապրումին սատարող ազդակներէն մէկն ալ՝ անոր պատկանողներուն թիւն է: Միւս կողմէ, որոշ քաղաքներու մէջ ծեւացած հոծ խմբաւորումները զրեթէ աշխարհագրական փոքրամասնութեան մը երեւոյթին կը մօտենան, որով կը ստանան՝ զէթ մասամբ՝ այս երեւոյթին ընձեռած առաւելութիւնները: Նման խմբաւորումներ կարելի է նկատել, օրինակի համար, Փարիսայի մէջ Մարսէյլի հայութիւնը, կամ Միացեալ Նահանգներու մէջ՝ Լոս Անճելէսի գաղութը: Թելադրելի պիտի ըլլար, ուրեմն, որ սփիւռքահայ կազմակերպութիւններ հնարաւորութեան չափով քաջալերէին՝ արդէն ինքնաբերաբար գոյացած կեդրոնացումի, խմբուելու այս միտումը:

Մեր վերջին նկատողութիւնը պիտի վերաբերի սփիւռքահայութեան կապակցութեան Մայր Հայրենիքին հետ: Թէեւ սփիւռքահայութիւնը,ըստ ինքեան, հողային փոքրամասնութիւն մը չէ, չի կրնար սակայն չունե-

նալ, ինչպէս ամէն ցեղային փոքրամասնութիւն, հողային առնչակցութիւն մը, որով կը քնորոշուի իր ծագումը եւ որուն ազգային ու մշակութային կենսունակութիւնը ոչ միայն խորհրդանիշը, այլ նաեւ յենարանը պէտք է կազմէ իր գոյատեւումի ծիզերուն: Այս յարաբերութիւնը կրնայ այլեւայլ արտայայտութիւններ ու հանգամանքներ ստանալ. բայց կը կարծենք որ կը մնայ միշտ հիմնական կորիզ մը, այն՝ թէ հայրենի հողը եւ անոր վրայ ծաղկող կեանքը վերաքերումի անզանցանելի եզր մը կը ներկայացնեն սփիւռքի մէջ ապրող հայութեան համար:

Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

1 Կը կարծենք թէ պէտք է զանազանել ,,սփիւռք,, եւ ,,գաղութ,, իմացումները: Արդարեւ, սփիւռքը՝ իր ստուգաբանութեամբ իսկ՝ ցրուումի վիճակ մը կը մատնանշէ, որով կ'ենթադրէ բնաշխարհին մէջ քաղաքական ու մշակութային տկարացում մը. գաղութները, ընդհակառակն, կը բարգաւաճին ընդհանրապէս քաղաքական ու տնտեսական ծաղկումի շրջաններուն: Միւս կողմէ՝ ոչ գաղութները, ոչ ալ սփիւռքները միշտ միեւնոյն դիմագիծով ու յատկանիշներով կը ներկայանան: Հին յունական գաղութները, որոնք կը տարածուէին Փոքր Ասիոյ երկայնքին կամ Սիկիլիոյ մէջ, միեւնոյն ատեն ջահակիրներն էին մշակոյթի մը՝ որ հուսկ ինքզինքը կը պարտադրէր տեղական նախընթաց մշակոյթներուն: Ասկից՝ բոլոր այդ զօտիներուն յունացումի երեւոյթը պատմական այնպիսի շրջանների մը մէջ, որ չէր կապուած քաղաքական ուղղակի տիրապետութեան մը, ինչպէս պիտի ընէր ընդհակառակն արդի ժամանակներու զաղթարարութիւնը եւ կամ, հին աշխարհի մէջ, Աղեքսանդր Մակեդոնացին: Ինչ կը վերաբերի հայերուն, հակառակ իրենց մեծ ցրուումին՝ վաղ Միջին Դարէն սկսեալ՝ Փոքր Ասիոյ եւ Պալքաններու տարածքով, արդիւնք՝ գէթ մասամբ՝ օտար տիրապետութեան, չենք խորհիր թէ կարելի ըլլայ արդէն այդ շրջաններէն սկսեալ հայ սփիւռքի մը մասին խօսիլ՝ այն իմաստով որով կը խօսինք, օրինակի համար, հրեական սփիւռքի մը մասին Քրիստոսի ժամանակներէն ի վեր: Արդարեւ, մինչեւ ԺԴ. դարու վերջերը գոյութիւն ունէր հայ քաղաքական միութիւն մը, յստակօրէն ճանաչելի, ինքնավար եւ, յաճախ, անկախ: Կը կարծենք թէ լաւագոյն է՝ այդ շրջաններուն համար կիրարկել ,,գաղութ,, բառը, ,,սփիւռք,,ը վերապահելով Կիլիկեան թագաւորութեան անկումին յաջորդող ժամանակներուն, թէեւ ասոնք ալ կը ներկայացնեն՝ իրենց կարգին՝ ցրուումի գոնէ երկու հիմնական հանգրուանները, ընկերա-քաղաքական բաւական տարբեր կառոյցնե-

րով:

2 ,,Երկլեզուութիւն,, կը գործածենք հոս իբր համապատասխան bilinguisme -ի /հմմտ. Լեզուաբանական բառարան, Երեւան, 1975/, որով՝ polylinguisme = բազմալեզուութիւն: Վերջերս ամերիկացի լեզուաբաններ սկսած են զանազանել ընդմէջ bilingualismի եւ diglossia-յի. այս վերջինիս համար կրնանք ըսել երկլեզուախօսութիւն, համեմատաբար բազմալեզուախօսութիւն՝ polyglossia /հմմտ. A. Martinet, La linguistica, Milano, 1972, art. 38: Զշփոթիլ polyglottism-ի հետ, որ է բազմալեզուագիտութիւն կամ բազմալեզուանիութիւն/:

3 Հողային կամ աշխարհագրական կը կոչենք փոքրամասնային այն լեզուներն ու մշակոյթները, որոնք կը բնորոշուին աշխարհագրական կամ հողային որոշ դիրքով մը: Այսպէս, Գասքերը՝ Սպանիոյ մէջ, Ալթոյ-Ադիճէի գերմանախօս ադրը՝ Իտալիոյ մէջ, եւլն.:

4 U. Weinreich, Lingue in contatto, իտալ. թրգ., Torino, 1974.

5 Հմմտ. նշդ, էջ 156-157:

6 Անդ:

7 S. Arsenian, Bilingualism and Mental Development, New York, 1937, p. 69.

8 Գերմանական լեզուներուն եւ եիտիշի մասին տես՝ H. Kloss, Nebesprachen, Wien, 1929; Կեղտական լեզուներու մասին տես՝ W. H. Rees, Le bilinguisme des pays celtiques, Rennes, 1939; Ռոմանշերէնի մասին՝ U. Weinreich, Research Problems in Bilingualism, with Special Reference to Switzerland, դոկտորական աւարտաճառ, /Columbia Univ., 1951/:

9 Մեր հայ իրականութեան ծիրին մէջ այսպիսի մասնաւոր զուրգուրանքի կարօտ արժէքներէն մէկն է արեւմտահայերէնը, որ իբր գրական եւ ուսումնական խոշոր աւանդութեան մը լեզուն՝ եզական ծոխութիւններէն մէկն է մեր ազգային մշակոյթին: Արեւմտահայերէնը, ներկայիս, գուտ սփիւռքային լեզու մը դարձած ըլլալով, յետ ԺԹ. դարու եւ դարասկզբի փառքի շրջաններուն, իր գոյատեւումի հարցը, պատմական այս պահուն, էապէս կապուած է սփիւռքի եւ յատկապէս Միջին Արեւելքի մէջ հայապահպանման եւ մանաւանդ լեզուապահպանման հարցերուն: Մեր երկու ոսկեղնիկ գրական բարբառներն ալ համազգային սեփականութիւնը ըլլալով բովանդակ հայ ժողովուրդին, անոնց պահպանման եւ բարգաւաճումին հոգն ալ կը վիճակի անխտիր հայ մշակոյթին նախանձախնդիր ամէն հայ անհատի եւ կազմակերպութեան:

10 Եզակեան պարագայ մը կը ներկայացնէ Զուիցերիան, ուր թէեւ գոյութիւն չունի երկրի բովանդակ տարածքին տիրող միակ մշակոյթ մը, բայց երկրին մէջ պաշտօնապէս ընդունուած լեզուներն ու մշակոյթները կը համապատասխանեն աշխարհագրական յստակ բաժանումներու:

Ռ.Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լեզվի հնչյունային կողմի ուսումնասիրության համար լեզվաբանությունը վերջին տարյուրամյակում լայնորեն օգտվում է փորձառական հնչյունաբանության ընձեռած հնարավորություններից: Փորձառական հնչյունաբանությունը ոչ թե առանձին գիտամյուղ է, այլ մեթոդ կամ, ավելի ծիշտ, մեթոդների ամբողջություն, որտեղ սարքերի ու գործիքների միջոցով կատարված ուսումնասիրությունները զուգակցվում են անմիջական, ուղղակի դիտումների հետ:

Հայերենի փորձառական հնչյունաբանության սկզբնավորումը կապվում է ամենից առաջ հայ անվանի լեզվաբան Հրաչյա Ամառյանի գործունեության հետ: Դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին Փարիզում՝ Սորբոնի համալսարանում սովորելու տարիներին, նա շատ կարճ ժամանակում տիրապետում է Ռուսլոյի լաբորատորիայում օգտագործվող սարքերին և կիմոգրաֆով փորձում է պարզել արևմտահայ գրական լեզվի և բարբառների հնչյունական համակարգերում առկա հնչյունափոխության պատմառները :

Հայերենի 6 բարբառների՝ Պոլիս, Ասլանբեկ, Մուշ, Սեբաստիա, Շուշի, Նուխի, Նյութի հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքները Ամառյանը հրատարակում է 1899թ. ,,La parole ,, ամսագրում ,,Հին հայերենի պայթականները՝ ուսումնասիրված ժամանակակից բարբառներում,, Փրանսերեն լեզվով գրված հոդվածում: Հոդվածն ուղեկցվում է հայանի լեզվաբաններ Ռուսլոյի և Մեյեի շատ արժեքավոր լրացումներով ու դիտողություններով: Փորձերին մասնակցել էին Փարիզում իրենց ուսումնառությունն անց կացնող հայ ուսանողները, ընդ որում Պոլսի բարբառը ներկայացրել է ինքը՝ Ամառյանը:

Հոդվածում բերված գծանկարներում տրվում են ձայնալարերի տատանումների և արտաշնչման ուժի փոփոխությունները պայթական բ, գ, և կիսաշփական ց, ծ, ջ հնչյուններում: Հիմք ընդունելով հնչյունի արտաբերման սկզբում պայթյունի և ձայնալարե-

րի տատանման հարաբերությունը՝ հեղինակը որոշում է բարբառներում ձայնեղից խուլի անցման ընթացքը: Այս պայմաններում առանձնացվում է երեք վիճակ՝ ա/ ձայնալարերի տատանումը սկսում է մինչև պայթյունը, բ/ համընկնում է պայթյունի պահին և գ/ զգալիորեն ետ է մնում: Առաջին դեպքում առանձնանում են ձայնեղները, երկրորդում՝ խուլերը, իսկ երրորդում՝ շնչեղ խուլերը:

Հոդվածը զբավում է մասնագետների ուշադրությունը: Ստացված նկարների քննությամբ զբաղվում է Մ. Գրամոնը, իսկ Ռուսլոն նրանցից 3-ը իր բացատրություններով զետեղում է 1902թ. հրատարակած ,,Փորձառական հնչյունաբանության սկզբունքները,, նշանավոր աշխատության մեջ:

Ամառյանն առաջինն էր, Ռուսլոյի վկայությամբ, ոչ միայն հայագիտության, այլև լեզվաբանության մեջ առհասարակ, որ փորձառական հնչյունաբանության մեթոդը կիրառեց բարբառագիտության բնագավառում:

Ամառյանի առաջին փորձերի և բուն Հայաստանում փորձառական հնչյունաբանության աշխատանքների ծավալման միջև ընկած է մոտ կես դարյա մի ժամանակահատված: Թեև հնչյունաբանության մեջ փորձառական մեթոդների կիրառման անհրաժեշտության մասին բազմիցս նշում էին հայ անվանի լեզվաբաններից շատերը, սակայն նման աշխատանքներ մեզանում չէին կատարվում ինչպես համապատասխան լաբորատորիաների ու սարքերի, այնպես էլ մասնագետների բացակայության պատճառով:

Մեր դարի 50-ական թվականները կարելի է համարել Հայաստանում փորձառական հետազոտությունների նախապատրաստման ժամանակաշրջան: Փորձառական հնչյունաբանության բնագավառի համար որակյալ կադրերի պատրաստումը դառնում է այդ շրջանի լեզվաբանական գիտության հրամայական խնդիրներից մեկը: Ի դեպ 1950թ. պրոֆեսոր Անժուրի /Հ.Զեբոռաբյան/ ղեկավարությամբ Ֆիզիկոս Գ. Հովհաննիսյանը կատարում է հայերենի ձայնավորների էլեկտրաձայնաբանական մի ուսումնասիրություն, որը սակայն լեզվաբանական առումով սակավ արժեք ունի:

Հայերենի փորձառական հնչյունաբանության ուղղությամբ գործնական բնույթի առաջին քայլերը սկսվում են 60-ական թվականների սկզբից, երբ Երևանի համալսարանում ակադեմիկոս Գ.Սևակի նախաձեռնությամբ և գրեթե միաժամանակ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում ակադեմիկոս Ա. Ղարիբյանի եռանդուն ջանքերի շնորհիվ բացվում են հնչյունաբանության կաբինետներ:

Հայաստանում փորձառական հնչյունաբանության ուսումնասիրությունների ծավալման ժամանակաշրջանը սկսվեց 60-ական թվականների կեսերից, երբ ակադեմիկոս Գ. Ջահուկյանի նախաձեռնությամբ ՀՍՍՀ ԳԱ

լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնին կից /վարիչ՝ ակադեմիկոս Է. Աղայան/ սկսեց գործել Ակադեմիայի լեզվի ինստիտուտի և համալսարանի հնչյունաբանական կաբինետների բազայի վրա ստեղծված փորձառական հնչյունաբանության լաբորատորիան, որտեղ միավորվեցին նման աշխատանք կատարելու ունակ բոլոր կադրերը:

Առանց ռուսական լեզվաբանական գիտության օգնության ու օժանդակության անհնարին է պատկերացնել փորձառական հնչյունաբանության ծագումն ու զարգացումը Հայաստանում: Դրա լավագույն վկայությունն այն է, որ հայերենի փորձառական հնչյունաբանական հետազոտություններ կատարող զրեթե բոլոր լեզվաբանները մասնագիտացել են միության առաջատար կենտրոններում /Մոսկվայում կամ Լենինգրադում/: Այս առումով անգնահատելի է հատկապես Մոսկվայի Մ. Թորեզի անվան օտար լեզուների 1-ին պետական մանկավարժական ինստիտուտի Վ.Ա. Արտյոմովի ղեկավարած Խոսքի հոգեբանության և փորձառական հնչյունաբանության լաբորատորիայի դերը, լաբորատորիա, որտեղ էլ հենց բան.գիտ. թեկնածուներ Ա. Արամյանը և Ա. Խաչատրյանը կատարել են հայերենի ծայնավորական համակարգի փորձառական առաջին ուսումնասիրությունները: Դրանք հայերենի հնչյունային կազմի փորձառական առաջին լուրջ ուսումնասիրություններն էին, որոնց արդյունքները հրապարակվեցին Ա. Արամյանի ,,Հայերենի ծայնավորները,, /1962թ./ և Ա. Խաչատրյանի՝ ,,Հայերեն և անգլերեն լեզուների ծայնավորների համեմատական վերլուծություն,, /1963թ./ մենագրություններում: Ընայած փորձարկվողների սահմանափակ քանակին, հիշյալ աշխատանքները, որոնք կատարվել էին սպեկտրոգրաֆիական, էլեկտրոկիմոգրաֆիական մեթոդներով, որոշակի պատկերացում են տալիս հայերենի ծայնավորների ինչպես արտաբերական, այնպես էլ ֆիզիկական բնութագրերի մասին:

60-ական թվականների կեսերից ԳԱ լեզվի ինստիտուտի լաբորատորիայի բազայի ամրապնդման հետ միաժամանակ /ծեռք են բերվում պալատոգրաֆ, սեզմենտատոր սարքերը և մի շարք մագնիտոֆոններ/ աշխատանքներ են ծավալվում հայերենի բաղածայնական համակարգի փորձառական ուսումնասիրության և բարբառների հնչյունական կազմի ուսումնասիրությունների ուղղությամբ: Աշխատանքները, որոնք տևում են 6-7 տարի, կատարվում են համակողմանիորեն՝ մեծաթիվ փորձարկվողների մասնակցությամբ, ընդ որում ռենտգեն նկարահանումները կատարվում են Հանրապետական ռենտգեն ինստիտուտում, իսկ դինամիկ սպեկտրոգրաֆի վրա կատարված գրանցումները՝ էստոնական ակադեմիայի

լեզվի և գրականության ինստիտուտի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում: Հայերենի բաղաձայնների փորձառական ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումն էր Ա. Խաչատրյանի և Վ. Հայրապետյանի կողմից 1971թ. Երևանում ռուսերեն լեզվով հրատարակած ,,ժամանակակից գրական հայերենի բաղաձայնների փորձառական ուսումնասիրություն,, գիրքը: Այն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Փորձառական հարուստ նյութի հիման վրա արվում է հայերենի բաղաձայնների արտաբերական և ձայնաբանական կողմերի լիակատար նկարագրությունը, Ճշտվում հնչյունների դասակարգման աղյուսակը:

70-ական թվականների սկզբներին ավարտվեց հայերենի վերհատուցքային միավորներից մեկի՝ բառային շեշտի փորձառական ուսումնասիրությունը /հեղինակ՝ Ռ. Քոխմախյան/: Աշխատանքում, կատարված Մոսկվայի Մ.Թորեզի անվան ինստիտուտում մշակված ,,ինտոնոգրաֆ,, տիպի սարքի օգնությամբ, բացահայտվում են շեշտի գործառույթանը մասնակցող ձայնաբանական երեք գործոնների՝ ինտենսիվության, տևողության և հիմնական տոնի համախականության բարդ փոխհարաբերությունները:

70-ական թվականներից փորձառական հնչյունաբանության լաբորատորիան ծեռնամուխ եղավ հայերենի շեշտի ու հնչերանգի ուսումնասիրությանը /նախադասությունների տարբեր հաղորդակցական տիպերի քննությունը կատարեցին Ա. Խաչատրյանը, Ա. Արամյանը, Վ. Հայրապետյանը, Ս. Ղուկասյանը, շարունյային շեշտինը՝ Ռ. Քոխմախյանը/:

Փորձառական ուսումնասիրության հիմնական արդյունքները ամփոփվել են 1978թ. հրատարակված ,,Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում,, գրքում, և մասամբ ,,Լեզվի և ոճի հարցեր,, 5-րդ ժողովածուում:

70-ական թվականների կեսերից նկատելիորեն աշխուժանում են աշխատանքները հաշվիչ մեքենայի օգնությամբ հնչյունների և բառերի ավտոմատ ճանաչման և հատուկ տվավորման ուղղությամբ /Ա.Գրիգորյան և ուրիշներ/: Թեև հնչյունների ավտոմատ հատուկ տվավորումը որոշակի դժվարություն է ներկայացնում ու երբեմն տվյալ հնչույթի մասին գաղափար է կազմվում միայն հաջորդ հնչյունի ծայնաբանական պատկերի միջոցով, այնուամենայնիվ մշակվում է մի սարք, որը վերլուծելով հնչաշղթայում գործառող որոշ կարգի ծայնաբանական հատկանիշները՝ բավականին Ճշգրտությամբ կարողանում է կատարել խոսքի հնչյունների ավտոմատ առանձնացում և դասակարգում: Հնչյունների ճանաչման համար օգտագործվում են 1.ազդանշանի ինտենսիվության կորը, 2.250-

800 հց տիրույթում ազդանշանի էներգիայի չափը, 3.հիմնական տոնի համախականությունը, 4-5.առաջին երկու ֆորմանտ՝ րը, 6.0-ական հաճումների ընդհանուր քանակը, 7.ծայրագույն անցումների քանակը, 8.ազդանշանի կորուկ և կրկնվող հատվածները 30 հց տիրույթում և այլն: Սարքում գործում են ձայնավորների, շփականների և կիսաշփականների, պայթականների և ձայնեղների մանաչման հանգույցներ, սակայն ոչ բոլոր դեպքերում է հնարավոր տարբերակել խմբի հնչյուններն առանձին-առանձին: Հնչյունների մասնակի մանաչմամբ 50 և 200 բառ պարունակող ծրագրերի գործարկումը ցույց տվեց, որ երեք հաղորդավարների արտասանությամբ 50 բառանոց ցանկում մանաչման հուսալիությունը կազմում է 93 տոկոս, իսկ 200 բառի դեպքում՝ 84 տոկոս: Այս ուղղությամբ տարվող աշխատանքների մասին զեկուցումներ կարդացվեցին 1980թ. դեկտեմբերին Երևանում կազմակերպված լսողական պատկերների ավտոմատ ընկալումը՝ ԱՐՍՈ-11 համամիութենական դպրոց-սեմինարում:

Վերջին տասնամյակում խիստ ընդարձակվել է փորձառական հնչյունաբանական ուսումնասիրությունների շրջանակը: Քննարկված հարցերի մեջ հետաքրքրություն են ներկայացնում նախաստության հաղորդակցային տիպերի հնչերանգի, շնչեղ ձայնեղ բաղաձայնների բնույթի, բառասկզբական բաղաձայնական կուտակումների, Լոռու խոսվածքի հնչյունային կազմի ու հնչերանգի, խոսքի տեմպի, տառադարձությանը նվիրված ուսումնասիրությունները:

Հայերենի հնչյունական կողմի փորձառական եղանակով կատարված ուսումնասիրությունների արդյունքները լայնորեն օգտագործվել են ԳԱ լեզվի ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի նախաձեռնությամբ կազմված ,,ժամանակակից հայոց լեզու,, ակադեմիական ծանրակշիռ աշխատության ,,Հնչյունաբանություն,, բաժնում, հեղինակ՝ Ա. Խաչատրյան /խմբագիր՝ Ն. Պառնասյան/: Փորձառական ուսումնասիրությունների արդյունքների հաշվառմամբ է կազմվել նաև Ա. Սուքիասյանի 1982թ. հրատարակած ,,ժամանակակից հայոց լեզու,, բուհական ժեռնարկի հնչյունաբանությանը նվիրված հատվածը:

Հայերենի փորձառական հնչյունաբանությունը կարող է զարգանալ միայն հարակից գիտությունների համագործակցությամբ, որովհետև մարդու հնչարտաբերական գործունեությունը, միշտ է, տարբեր հայեցակետերով, նաև բնախոսների և ճայնաբան-Ֆիզիկոսների ուսումնասիրության առարկա է: Իր հերթին փորձառական հնչյունաբանության նվաճումները ծառայում են ոչ միայն լեզվաբանական խնդիրների պարզաբանմանը, այլև կիրառական, գործնական բնույթի բազմաթիվ հարցերի լուծմանը:

Ռ.Ա. ԻՇԽԱՆՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Հայոց նոր կամ երրորդ գրական լեզվի /նոր գրական հայերենի/ վաղ շրջանը ներկայացնող բնագրերը ճանաչելու և տարբերելու համար կարևոր է նկատի առնել՝ 1/ որ ասպարեզում կան միայն հայոց երեք՝ հին, միջին, նոր, գրական լեզուների հուշարձաններ ժամանակագրական բաժանումով. չորրորդինը չկա, չկան նաև միջանկյալ որևէ գրական լեզու ներկայացնող բնագրեր, քանի որ չի եղել միջանկյալ գրական լեզու. կան այդ երեք գրական լեզուներից ամեն մեկի տարբերակներ կամ տվյալ ժամանակի խոսակցական հայերենի և գրական լեզուներից մեկի կամ մյուսի միջին օղակը ներկայացնող բնագրեր, 2/ որ այդ երեք գրական լեզուները ոչ թե միմյանց շարունակություն են, մեկի որևէ տեսակ ձևափոխումը մյուսի, այլ տարբեր ժամանակաշրջանների խոսակցական հայերենի հողի վրա աճած երեք ճուներ, 3/ որ նոր գրական հայերենի սկզբնական շրջանը պետք է համարել ոչ թե նոր գրական լեզվի առանձին տարրերի երևան գալու որևէ շրջան, այլ այն ժամանակամիջոցը, երբ հայոց երրորդ գրական լեզուն սկսել է գործածվել որպես հաղորդակցման միջոց հայերի մեջ, 4/ որ նոր գրական հայերենի ասպարեզ գալն ու իբրև հաղորդակցման միջոց գործածվելը որևէ առնչություն չունի գրապայքար կոչվող բանավեճերի հետ /բոլոր ժամանակների/:

Այս չորս կետերը հաշվի չառնելու հետևանքով է, հավանաբար, որ գրականության մեջ նոր գրական հայերենը կոչելով աշխարհաբար կամ գրական աշխարհաբար ոչ շատ որոշակի անվանումներով, նրա սկիզբը դրել են տարբեր ժամանակաշրջաններում. օրինակ, առաջնորդվելով այն իրողությամբ, որ նոր գրական հայերենին հատուկ քերականական տարրեր առկա են հին և միջին գրական հայերենների մեջ՝ աշխարհաբարի սկիզբը համարել են մերթ 15-րդ, մերթ 16-րդ դարերը: Ուրիշները հաշվի չառնելով, որ 17 և 18-րդ դարերում կան գրական լեզվի հուշարձաններ, որոնք ոչ հին և ոչ էլ միջին գրական լեզուներն են ներկայացնում, այլ ունեն նոր գրական լեզվի որակ, աշխարհաբարի

սկիզբը համարել են 19-րդ դարի 40-ական թվականները՝ նրա հիմնադիրը համարելով Խ.Աբովյանին: Նույն անստուգ մոտեցման, ինչպես և գրապայքարի դերը գերագնահատելու պատճառով շատերն էլ աշխարհաբարի սկիզբը դրել են 1850-ական թ.թ. վերջում, 1860-ական թվականների սկզբում՝ կապելով այն ,,Հյուսիսափայլ,, ամսագրի հետ: Ուրիշները գեղարվեստական գրականության լեզվի երևույթները հատակորեն չտարբերելով հայոց գրական լեզուների զոյացման երևույթներից՝ աշխարհաբարի սկզբնավորումը կապել են Րաֆֆու գրական գործունեության հետ և այլն:

Նոր գրական հայերենի սկզբնավորումը 19-րդ դարի հետ առնչելն է պատճառներից մեկն այն բանի, որ որոշ լեզվաբաններ էլ հայոց երրորդ գրական լեզվի վաղ շրջանի, այն է՝ 17 և 18-րդ դարերի բնագրերը կամ նրանց մի մասը համարում են միջին հայերեն:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նոր գրական հայերենի ամենավաղ բնագրերը վերաբերում են 17-րդ դարի երկրորդ կեսին: Ուստի ընդհանուր առմամբ իրավացի են այն լեզվաբանները /Գ. Սևակ, Գ.Ջահուկյան/, որոնք 17-րդ դարն են համարել հայոց նոր գրական լեզվի ծագման ժամանակաշրջան: Մեր ջանքերը՝ ուղղված նոր գրական հայերենի ամենավաղ շրջանի անթվակիր որոշ բնագրերի թվագրմանը, ինչպես և սխալմամբ 17-րդ դարի սկզբին վերագրված բնագրերի ստեղծման ժամանակաշրջանի որոշմանը, ավելի ստույգ դարձրին նոր գրական հայերենի, որպես հաղորդակցման միջոցի, ասպարեզ գալու ժամանակը, որ 17-րդ դարի 60-70-ական թվականներն են:

Ճիշտ է, որ դարի 40-50-ական թվականներից, գուցե և փոքր-ինչ ավելի վաղ շրջանից պահպանվել են հայ վաճառականների նամակներ, գրագրություններ, դավթարներ, որոնց լեզուն թեև նորին /երրորդին/ է վերաբերում, սակայն գրական լեզվի մակարդակ չունի: Դրանցից է, օրինակ, վաճառական Ջաքարիա Ագուլեցու Դավթարը, որի մեջ ամենավաղ գրություններն 1647 թվականից են /թեև իր մեծ մասով վերաբերում է դարի երկրորդ կեսին, մինչև 1680-ական թվականները/:

Գրական լեզվի մակարդակ կոչվածը, անշուշտ, դյուրին որոշվող մի սահմանագիծ չունի, բայց և ակնհայտ է, որ 17-րդ դարի 60-ական թվականներից սկսած ստեղծվել են բնագրեր, որոնք գրվել են հասարակական հաղորդակցման համար, հաճախ որպես ձեռնարկ, և իրենց լեզվական որակով տարբերվում են այն բնագրերից, որոնք խիստ անհատական հաղորդակցման ընույթ են ունեցել՝ գրություն, նամակ, օրագիր:

17-րդ դարից մեզ հասած նոր գրական հայերենի գրեթե բոլոր բնագրերը առնչված են հայ վաճառականության հետ. մեծ մասամբ հաս-

ցեազրված են վաճառականներին կամ գրված են նրանց կողմից և կամ ստեղծված նրանց շրջապատում:

Գրական լեզվի մակարդակ չունեցող վերոհիշյալ բնագրերի համեմատումը նոր գրական հայերենի վաղ նմուշների հետ ցույց է տալիս, որ 17-րդ դարում եղել է գերազանցապես հայ վաճառականների շրջանում ձևավորված խոսակցական հայերեն, որն ունեցել է աննշան գրական երանգավորում, այսինքն՝ հին ու միջին գրական հայերենների տարրերի մասնակի ներառում, և օգտագործվել է նախապես վաճառականների անհատական գրություններում և ապա գրագետ անձանց կողմից առավել զգալի մշակումով հասցվել է գրական լեզվի մակարդակի, օգտագործվել է հայ վաճառականությանը հասցեագրված գրքերի ու ձեռնարկների մեջ: Ստորև կհիշատակենք նոր գրական հայերենի ամենավաղ նմուշներից այնպիսիք, որոնց լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս արդեն ձևավորված և մասամբ կանոնավորված երրորդ գրական հայերենի առկայությունը 17-րդ դարի 2-րդ կեսին, հատկապես 1960-ական թվականներից սկսած:

Այդ բնագրերն են. 1/,,Արուեստ թվական է սայ,, ձեռագրի մեջ խնդրագրքի բաժինը /Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 8716/՝ անթվափիր է, պետք է գրված լինի 1760-ական թվականների վերջին, 2/ Նոստանդ Ջուղայեցու վաճառականական երկու ձեռնարկները՝ ,,Աշխարհածողով,,-ը /ձեռնարկ է չափի, դրամի և կշռի մասին/ և ,,Դուռն համարողական արհեստին,, թվաբանության դասագիրքը՝ երկուսն էլ նախատեսված նոր Ջուղայի վաճառականական դպրոցի համար /Մաշտոցի անվ. մատ., ձ. 8443/. ձեռագիրն ընդօրինակված է 1687թ., գրվել է, հավանաբար, 1670-ական թվականներին, 3/,,Արհեստ համարողութեան,, /տպագիր/, Մարսել, 1675. թվաբանական-հաշվապահական ձեռնարկ է՝ նախատեսված վաճառականների համար, փոխադրություն է /հավանաբար լատիներենից/, 4/Հովհաննես Հոլով Նոստանդնուպոլսեցու ,,Պարզաբանութիւն հոգենուազ սաղմոսացն,, երկը /տպագիր/, Վենետիկ, 1687, որ գրաբար սաղմոսների բացատրություն է, երբեմն էլ թարգմանություն նոր գրական հայերենով՝ հատուկ վաճառականների համար արված, 5/Ղուկաս Վանանդեցու ,,Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի,, ձեռնարկը /տպագիր/, Ամստերդամ, 1699: Գրված է որպես հայ վաճառականների ամենօրյա օգտագործման տեղեկատու՝ տարբեր երկրներում գործածվող չափերի, կշիռների և դրամների մասին, 6/վաճառական Ստեփանոս Դաշտեցու /Ծնված 1640-ական թ.թ./ բանաստեղծությունների մի մասը, գլխավորապես թեջնիսները, 7/Նաղաշ Հովնաթանի /1661 - 1722 թ.թ./ մի շարք բանաստեղծությունները, գլխավորապես սիրային:

Ինչպես ասվեց, նոր գրական լեզվի վաղ շրջանի հուշարձանները համարվող որոշ ընագրեր, պարզվեց, որ այդպիսիք չեն. դրանցից է, օրինակ, ,,Ողբ Ֆուղայեցվոց,, բանաստեղծությունը, որը համարվել է գրված 1605թ. և ,,Արևելյան աշխարհաբարով գեղարվեստական գրականության ամենահին նմուշը,,[1]. այնինչ գրվել է 1840-ական թվականներին, կամ՝ 17-րդ դարի զուսան էզազին վերագրված ,,Ասի՝ ախչի,,[2] և ,,Յարը քո,,[3] խաղերը. պարզվեց, որ իրականում ստեղծված են 19-րդ դարի երկրորդ կեսին և այլն[4]:

Նոր գրական հայերենի ամենավաղ շրջանի վավերական ընագրերի քննությունը ցույց տվեց, որ նրանց լեզվական տարբերությունների համեմատ բացարձակորեն գերակշռում է լեզվական ընդհանրությունը:

Ամենից առաջ ակնառու դարձավ այն հանգամանքը, որ 17-րդ դարում գրավոր խոսքի մեջ չի եղել նոր գրական լեզվի երկփեղկում՝ արևելահայերենի և արևմտահայերենի, այլ եղել է մեկ միասնական նոր գրական հայերեն: Որոշ դեպքերում զգացվում է մասնակի թեքում դեպի արևելահայերենը, սակայն ընդհանուր առմամբ իշխում է միասնականությունը: 17-րդ դարի նոր գրական հայերենի վերը հիշված նմուշներում առկա են և՛ արևմտյան, և՛ արևելյան հայոց բարբառներին հատուկ լեզվառարբեր: Իբրև օրինակ բերենք դրանցից մի քանիսը. նախ՝ արևելյան բարբառներին հատուկ տարբեր. ա/ըմ-ով ներգոյական,ինչպես՝ ասկումն, օրհնակումն, Ասավածաշնչումն, աշխարհումս, երկրումմ, դռներումն և այլն, բ/ը-ով հոգնակի սեռական-տրական՝ գրքերին, օրերի, մսխալների, ցավերը /օրինակ. ,,սեյլաները նման ինծ վերայ վազեցին,,/, գ/մի շարք բայածևերի և շարահյուսական կառույցների գործածություն, ինչպես՝ լինել /և ոչ ըլլալ/ ձևը /օրինակ, ,,գըլխիկոր լինի,, , ,,չի լինի,, , ,,Որ լինի թե մեկ հնարք մի զոր - ծեն,,/ կամ էս, էդ, էն, էլ բառածևերի առկայությունը և կամ ,,պիտի բարդած,, և նման կառույցների բազմաքանակ գործածությունը և այլն:

Արևմտյան բարբառների հետ համապատասխանություններ. ա/բացառական հոլովի կազմությունը է-ով՝ սրտէն, քվերէն, անօրեններէ, քեզմանէ, փորձանքէ, մնացածներէս և այլն: Հազվագյուտ են ց-ով բացառականի դեպքերը /էսկից, մեզմանից, ինձմանից/, բ/բայի դրական ներկա ժամանակի համադրական կազմությունը՝ ինչպես՝ կու_գըվի, կու_նշանակէ, կասվի, կտեսնումք, կուգենք, ,,Գանգատ կանէ Մարգարեն,, , ,,կուրախանամ և կու_գնծամ,, և այլն /գործածվում են կու և կ մասնիկները/; գ/ժխտական ներկայի և վաղակատարի կազմությունները, ինչպես, ժխտական ներկա՝ չի_քշվիը, չի_գալը, չի_տալը և

այլն, վաղակատար՝ հանդգնեը_են, մեը_վգին_են_դրեը, նշանվեը__են, ընդացցուցեը_են և այլն:

Արևմտյան բարբառներին հատուկ ձևերի մի մասն, անշուշտ, համընկնում է միջին զրական հայերենի որոշ ձևերին, որ և բնական է. դա ինչ-որ չափով, ըերևս, միջին հայերենի ազդեցության արդյունք է, բայց ավելի շատ այն բանի հետևանք, որ միջին հայերենին և արևմտյան բարբառներին հատուկ շատ ձևեր ընդհանուր են:

Նոր զրական հայերենի միասնականությունը զոյացել է նաև հին զրական լեզվի՝ զրաբարի որոշ տարրերի ներմուծումներով. օրինակ՝ վաղ շրջանի նոր զրական հայերենում առկա են հոգնակի ուղղականի զրաբարյան ձևեր՝ քահանայք, հեթանոսք, մեղաւորք և այլն, սեռական ձևեր՝ մարդոյ, ազատութենանց, զրելոյ, հասարակաց և այլն, դերանվանական ձևեր՝ մեք, նորա, դորա, նոցա, իւր, իւրեանք և այլն:

Նոր զրական հայերենի լեզվամտածողական հենքը հայոց նոր բարբառների լեզվամտածողությունն է: Սակայն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 17-րդ դարի նոր զրական հայերենը որևէ բարբառի զրական մշակման արդյունք չէ: Այն, ինչպես վերն ակնարկվեց, ասպարեզ է եկել որպես գերազանցապես հայ վաճառականության շրջանում ընդունված խոսակցական հայերենի զրական մշակում՝ հին և մասամբ միջին հայերենի օգնությամբ:

Ընդհանրապես, հայոց պատմության մեջ 17-րդ դարը հայ վաճառականության աննախադեպ ծաղկման ժամանակաշրջանն է, ըերևս, այն կարելի լինի նաև կոչել նորջուղայական դար:

Այդ հարյուրամյակն սկսվեց հայության մեծ զանգվածների 1604-5 թ.թ. բռնազաղթով դեպի Պարսկաստանի խորքերը: Դրա մի արդյունքն էլ եղավ պարսից մայրաքաղաք Սպահանի մոտ Նոր Ջուղայի հիմնադրումն ու արագ ծաղկումը: Շուտով Նոր Ջուղան դարձավ հայության ամենաազդեցիկ կենտրոնը: Նորջուղայեցի վաճառականները հսկայական հարստություն կուտակեցին: Միաժամանակ, հայ վաճառականության ասպարեզում աշխուժացավ նաև ազուլեցի, կոստանդնուպոլսեցի, թիֆլիսեցի, լվովցի, կեսարացի, ակնեցի, դարաբաղցի և այլ վայրերի հայերի դերը: Արևելքի ու Արևմուտքի միջև կատարվող առևտրի մի նշանակալի մասը հայ վաճառականների ձեռքին էր: Հայ ժողովրդի մեջ վաճառականությունը մի ստվար ու ազդեցիկ դաս էր դարձել, և նրա ներկայացուցիչներին կարելի էր տեսնել Եվրոպայի ու Ասիայի ամենատարբեր քաղաքներում՝ Փիլիպիններից ու Սինգապուրից մինչև Իսպանիա և Հոլանդիա: Այդ ժամանակ է, որ տարբեր, հաճախ փոխադարձաբար անհասկանալի բարբառների ներկայացուցիչ վաճառականների շրջանում ասպարեզ է գա-

լիս մի խոսակցական հայերեն՝ լեզվամտածողությամբ նորբառրառային, կառուցվածքով և բառապաշարով ու բառաձևերով՝ միջբարբառային կամ վերբարբառային: Մենք դա անվանում ենք վաճառականական հայերեն:

Ահա, օրինակ, 1670-ական թվականներին Մարսելում կենտրոնացած հայոց հրատարակչական խումբը որոշում է թվաբանական-հաշվապահական տեղեկատու հրապարակել հայ վաճառականների համար: Նախորդ փորձերը ցույց էին տվել, որ նման բովանդակություն ունեցող գրքերը ծառարկները նպատակին չեն հասնում: Հայ վաճառականների հսկայական զանգվածը կիսագրագետ էր, շատերը՝ հազիվ տառաճանաչ: Պարզ էր, որ նրանց հասցեագրված, ամենօրյա գործածության ծառարկը, որպեսզի սլաովեր և գործածվեր, պետք է գրված լիներ այդ վաճառականներին հասկանալի լեզվով: Այսպես. ,,Արհեստ համարողութեան,, գըրքույկի թարգմանիչը /հավանաբար, Մատթեոս Վանանդեցին կամ Ոսկան Երևանցին/ օգտագործում է վաճառականական հայերենը կամ նրա առավել մշակված մի տարբերակը՝ ,,գրոց լեզվի,, տեսք տալով նրան: Այս վերջինը ընդաղրված էր նախ հենց ուղղագրությամբ՝ բառերը պետք է գըրվեին հնարավորին չափ ճիշտ ուղղագրությամբ, իսկ դա արդեն շատ բառերի գրաբարյան տեսք էր տալիս, ապա՝ անհրաժեշտ էին գրաբարում գործածված ոչ քիչ բառեր, որոնք չկային վաճառականական հայերենում: Այդ բառերը ևս գրականացնում էին լեզուն: Մյուս կողմից՝ գրագետ թարգմանիչը չէր կարող վաճառականական հայերենի մեջ գրաբարյան որոշ ներմուծություններ չանել: Այսպես, վաճառականական հայերենը, օգտագործվելով իբրև գրքի լեզու, ներկայանում է մեզ որպես նոր գրական հայերենի վաղ նմուշներից մեկը: Ահա մի օրինակ նրա լեզվից. ,,Մին մարդ մի մառչիլ կուզէ տայ զառապխանէն և կուզէ իմանայ, թե իւր փողն որչափ ըուման և որչափ դիան կանէ: Ջառապխանի քաշումն վեց հարիւր մսխալն հարիւր մառչիլ է. մին մառչիլն քանով որ կու պարշի, դիան կու շինէ և էս մին մառչիլի գնովս իւր բովանդակ փողն կու բազմացնէ,,:

Հիշենք նաև, որ Մարսելի ոսկանյան հրատարակչական խումբը բաղկացած էր Նորջուղայեցի և ազուլեցի հայերից և սերտ հարաբերության մեջ էր հայ վաճառականների հետ ու իրենք էլ պետք է, որ բանավոր հաղորդակցվելիս լինեին վաճառականական հայերենով:

Նաև՝ Նոր Ջուղայում բացված աշխարհիկ վաճառականական դպրոցի համար դպրապետ Կոստանդը դասագրքեր էր գրում: Պարզ է, որ նրա պատանի սաները՝ ապագա վաճառականները, դասագիրքը կկարդային և կսովորեին, եթե այն լիներ գրված նրանց հասկանալի լեզվով, և Կոստանդը դասագրքերը գրում է վաճառականական հայերենի մշակված որակով:

Ուշագրավ է նաև, որ այս դեպքում դասագրքերի լեզվի մեջ թափանցել են Հուդայի բարբառի առանձին տարրեր, միասնական նոր լեզուն մի փորը շեղելով դեպի արևելյան բարբառները: Ահա մի նմուշ այդ լեզվից. ,,Զարժյալ Գ /3/ հոգի ընկերացանք. ԵճԺ /518/ ռուփի դատեցինք: Բերին կիսեցին: Մինին հասաւ ՃԴ /104/ ըռուփի և երկրորդին հասաւ ՌճՌԱ /241/ ըռուփի, և երրորդին հասաւ ճՀԹ /173/ ըռուփի: Որ էս ճՀԹ /173/ ըռուփա տրողն խարար ամ, որ սարմայէն Ռճէ/417/ ըռուփի այ և էն Բ /2/ հոգոյն սարմայէն խարար չնմ,,:

Մի այլ վաճառական՝ նահապետ Ազուլեցին, հանճնարարում է ժամանակի ականավոր գրագետ Հովհաննես Հոլով Նոստանդնուպոլսեցուն վաճառականների համար հասկանալի լեզվով պարզաբանել զրաբար սաղմոսները: Այդպես ասպարեզ է գալիս ,,Պարզաբանութիւն հոգևնուազ սաղմոսացն,, մեծածավալ գիրքը, որի նախաբանում, ի դեպ, առաջին անգամ տեսականորեն էլ պաշտպանվում է նոր գրական լեզուն /աշխարհաբարը/: Պարզ է, որ Հովհաննես Հոլովը ևս պետք է դիմեր վաճառականական հայերենի և մանավանդ նրա հիման վրա արդեն զգալիորեն ժեվավորված նոր գրական լեզվի օգնությանը: Ահա մի նմուշ էլ այդ գրքի լեզվից. ,,Յուսա՛ դու յԱստուած և քաղցրութիւն արա, իբր ամենեցուն սէր և զութք և խոնարհութիւն Նշանց տուր: Բնակիր միշտ այս երկրումս իւր սուրբ եկեղեցւոյ միջումն, որ Աստծոյ մեծութեամբն իբր շնորհօքն և ողորմութեամբն ապրիս և կերակրիս բոյ կենաց մեջն,,:

Նույն կերպ, սրղեն դարի վերջում նշանավոր գիտնական-մատենագիր Ղուկաս Վանանդեցին է գործածում նոր գրական լեզուն՝ վաճառականների համար իր ,,Դանճ չափոյ,,-ն գրելիս: Ահա մի նմուշ էլ այդ գրքի լեզվից. ,,Պիտի յառաջ ամէն ընկերաց մայէն մի տեղ ջամ աննել և դնել առաջին տեղումն: Յետո իւրեանց մէջ դրած փողն շահն կամ զարարն մին տեղ ջամ աննել: Այսպէս երեքի կանոնաւն ընկերաց մէջ-տեղ դրած փողն ջոկ-ջոկ պիտի հարցանելով իմանալ, թե ինչ շահ կամ ինչ զարար կու հասնի ամէն **ջոկ ջոկ** դրած սարմայի,,:

Նմուշի համար ընտրում ենք նաև երկու թաչնիս վաճառական-բանաստեղծ Ստեփանոս Դաշտեցուց. ,,Սիրուն ժամ, սիրուն պահ է, Ջեզ նորա սիրուն պահէ, Գեշին նրեսն է կշկուռ, Թե գիտես՝ սիրուն պահէ,, , ,,Ստեփան, մ՛ել սիրունն է լաւ, Շունչս այն, որ սիրուն էլաւ. Դեշ կատուն ի՞նչ կու պահես՝ ինչ պահես սիրունն է լաւ,,:

Հետաքրքրական է, որ նոր գրական հայերենի վաղ շրջանի բնագրերի ստեղծողները եղել են և՛ արևելահայեր, և՛ արևմտահայեր. օրինակ, ,,Արհեստ համարողութեան,, և ,,Դանճ չափոյ,, գրքերի լեզվի մշակները արևելահայեր են եղել, իսկ ,,Պարզաբանութեան,,-ը՝ արևմտա-

հայ: Բայց, չնայած դրան, գրավոր խոսքի մեջ լեզվական որակն ընդհանուր առմամբ միևնույնն է, որ հատկապես դրսևորվում է իբրև չերկփեղկված, միասնական գրական հայերեն:

17-րդ դարի նոր գրական հայերենում կան և լեզվական-հնդինաեվրոպական տարբերակներ. օրինակ, ակնհայտ է, որ ,,Արհեստ համարողութեան,, գրքի լեզուն ավելի է հակված դեպի ժողովրդային խոսքը, քան ,,Պարզաբանութեան,, լեզուն, որի հակումը դեպի գրաբար ավելի շատ է: Բայց դրանք ևս արդեն եղած ու նկատելի կանոնավորում ստացած գրական լեզվի տարբերակների արժեք ունեն սոսկ:

17-րդ դարի երկրորդ կեսում գոյություն ուներ նաև աշուղական կամ նորզուսանական մի հայերեն, որ մոտ էր նոր գրական լեզվին: Խոսքը վերաբերում է նոր Ջուղայի զուսանական դպրոցի վաղ շրջանի ներկայացուցիչներին, որոնք ընդհանրապես գրում էին Ջուղայի բարբառով, բայց կրոնական խաղերը բավականին մոտեցված են նոր գրական հայերենին՝ այն տարրերությամբ, որ չունեն 17-րդ դարի նոր գրական լեզվի միասնական բնույթը, ակնհայտորեն արևելյան թեքում ունեն: Մենք լեզվական այդ որակն անվանում ենք զուսանական աշխարհաբար:

Այսպիսով, նոր գրական լեզվի սկզբնավորման շրջանում, չնայած նրա միասնական բնույթին, այսինքն՝ արևելյան ու արևմտյան ճյուղերի բացակայությանը, նկատվում են նաև այդ ճյուղերի առաջացման, նոր գրական հայերենի երկփեղկման միտումներ: Դա, ինչպես ասվեց, թույլ արտահայտված է նաև Նոստանդ Ջուղայեցու դասագրքերի լեզվում, նկատվում է Նաղաշ Հովնաթանի որոշ բանաստեղծություններում, հատկապես ավելի ուշ շրջանում գրված:

Նոր գրական հայերենի ներսում և նրանից դուրս /զուսանական աշխարհաբար/ եղած այս միտումները զարգանալով՝ 18-րդ դարի սկզբներին արտահայտվեցին իբրև միասնական գրական հայերենի երկփեղկում և արևելյան ու արևմտյան ճյուղերի առաջացում: Այդ երկփեղկումը դիտվում է 18-րդ դարի առաջին երկու-երեք տասնամյակների մի շարք բնագրերում, այդ թվում, օրինակ, Եղիա Խոտորջրեցու Դիվանի լեզվում և մանավանդ այն փաստով, որ Ամստերդամում 1711 թ. Յոհան Շրյոդերը իր ,,Արամեան լեզուին զանժ,, գրքում որպես քաղաքացիական հայերենի նմուշ և քերականություն ներկայացնում է նոր գրական լեզվի արևելյան տարբերակը, իսկ Մխիթար Սեբաստացին 1727 թ. Վենետիկում հրատարակած իր ժեռնարկի՝ ,,Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց,, վերնագրի տակ ներկայացրեց գրական արևմտահայերենի անդրանիկ քերականությունը:

Միասնական լեզվի երկփեղկման պատճառները մի քանիսն են, որոնց

այստեղ անդրադառնալու հնարավորություն չունենք: Ասենք միայն, որ եթե արևմտյան ճյուղը սկսեց զարգանալ գլխավորապես Պոլսի հայոց բարբառի ազդեցությամբ, ապա արևելյանի զարգացման հիմքերը երկուսն էին՝ նոր Ջուղայի և արարատյան ու Թիֆլիսի բարբառները: 18-րդ դարում, նաև 19-ի առաջին կեսում գրական արևելահայերենը երկու տարբերակ ուներ՝ նորջուղայական, որ գործածվում էր հնդկահայության և պարսկահայության մեջ, և կովկասյան, որ գործածվում էր Կովկասում, ապա և ռուսական ամբողջ կայսրության հայության մեջ:

Այս ամենով հանդերձ կարևոր է նկատի առնել հետևյալը. ընագրերի քննությունը ցույց է տալիս, որ միջին գրական հայերենի գործածությունը ընդհատվում է 16-րդ դարի վերջում, առավելագույնը 17-ի սկզբներում, իսկ գրաբարը որպես հաղորդակցման միջոց շարունակում է գործածվել մինչև 19-րդ դարի կեսերը, մասամբ նաև հետո, մինչև այժմ: 17-րդ դարի առաջին կեսը, ըստ երևույթին, եղել է նոր գրական հայերենի սաղմնային զարգացման և ձևավորման շրջանը: Հայոց գրական նոր լեզուն, ծագելով 17-րդ դարի երկրորդ կեսին, երկար ժամանակ գործածվում էր նեղ շավիղներով, գրաբարի, որպես գրական գլխավոր լեզվի լայն ճանապարհին զուգահեռ: Բայց աստիճանաբար, որպես հայության հիմնական մասին հասկանալի լեզու, նոր գրական հայերենը ասպարեզը նվաճեց գրաբարից և 19-րդ դարի երկրորդ կեսից դարձավ հայոց իշխող գրական լեզուն՝ իր երկու ճյուղերով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Գ.Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե.,1948, էջ 39-40, նաև՝ Ժամանակակից հայերենի դասընթաց, Ե.,1955, էջ 324-325:

2 Գ.Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, էջ 46:

3 Հ.Աճառյան, Հայ աշուղներ, 17-18-րդ դդ.,Ե.,1961,էջ 374:

4 Այս և այլ ծշգրտումների մասին ավելի մանրամասն տես ,,Արևելահայ քանաստեղծության լեզվի պատմություն,, գրքում /Ե.,1978/, էջ 39-41, 45-48, 71-74:

Մ. Հ. ԹԱՄՈՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՑԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ-ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դարձվածաբանությունն իր ծնավորման առաջին շրջանից սկսած մեծ ուշադրություն է նվիրել դարձվածքի ծևի և բովանդակության ուսումնասիրության խնդրին: Ֆրանսիական ծագումով շվեյցարացի լեզվաբան Շառլ Բալլին դեռևս մեր դարի սկզբներին /1909/ դարձվածքի էությունը տեսնում էր նրա իմաստաբանական յուրահատկությունների մեջ: Չնայած նրա՝ դարձվածի և բառի համարժեքության կոնցեպցիան զրկեց նրան դարձվածքի և բառի նշանակությունների միջև եղած սկզբունքային տարբերությունները և, նրանցով պայմանավորված՝ այդ միավորների կառուցվածքային տարբերությունները փնտրելու հնարավորությունից, դարձվածքի իմաստաբանական հայեցակետով ուսումնասիրության հարցադրումը նշանակալի դեր խաղաց դարձվածաբանության զարգացման գործում:

Դարձվածքի ծևի և բովանդակության լուսաբանման ուղղությամբ տարբեր լեզուների նյութերի հիման վրա հսկայական աշխատանք է կատարվել սովետական լեզվաբանների կողմից վերջին տարիների ընթացքում: Սակայն պետք է խոստովանել, որ տեսական դարձվածաբանությունը այս բնագավառում դեռևս մեծ անելիքներ ունի:

Դարձվածաբանության հիմնական հասկացությունների մասին եղած բազմաթիվ ու հաճախ խիստ իրարամերժ կարծիքները, դարձվածքների ուսումնասիրության, այդ քվում նրանց դասակարգման տարբեր ու երբեմն ոչ համատեղելի մեթոդները, դարձվածաբանության մակարդակային ու համակարգային բնույթի գնահատման գործում եղած տարակարծիքները և այլն՝ այս բոլորն այդ մասին են վկայում:

Դարձվածաբանական միասնական տեսության բացակայության պայմաններում կարևոր և վճռական նշանակություն է ծեռք բերում դարձվածքի ծևի և բովանդակության բազմակողմանի ուսումնասիրությունը: Ենթե մեզ անհրաժեշտ է պարզել, թե ինչ է դարձվածքը, ինչ է իրենից ներկայացնում դարձվածաբանությունը որպես լեզվաբանության առանձին բնագավառ, որն է դարձվածքների տեղն ու դերը լեզվի համակարգում,

պետք է նախ և առաջ որոշել դարձվածքի ծևի, դարձվածքի բովանդակության ու այդ երկու կողմերի միջև եղած փոխհարաբերությունների բնույթը:

Այս հարցի մշակումն, անշուշտ, պահանջում է մեծ աշխատանք և մի ելույթում հնարավոր չէ ցույց տալ նրա էությունը, ծրագրել նրա լիակատար պրոբլեմատիկան:

Ժամանակի սղության պատճառով մենք հնարավորություն ունենք ներկայացնել այս ուղղությամբ մեր դիտումների միայն մի քանի ընդհանուր տվյալներ, որոնք, սակայն տալիս են ոչ այդքան հանգամանալից պատկերացում դարձվածքների ծևի և բովանդակության, բնույթի և տիպերի բուն լեզվաբանական վիճակի /статус/ մասին, որքան վկայում են դարձվածաբանության բնագավառում ծևերի և բովանդակությունների տիպաբանական ուսումնասիրությունների օբյեկտիվ անհրաժեշտության, այդ ուսումնասիրությունների հետ պայմանավորված՝ դարձվածքների կառուցվածքային-իմաստաբանական տեսակների կամ խմբերի բացահայտման ուղիների և հնարավորությունների մասին:

Նշենք, որ դարձվածքի իրացման դեպքում մենք նախ լսում-ընկալում ենք նրա ծևը՝ հնչողությունը, ապա հանգում ենք նրա նշանակությանը, ըմբռնում ենք այն: Եթե այս պրոցեսը ներկայացնենք ,,ծևից դեպի նշանակություն,, սխեմայով, ապա այդ սխեման կներկայացնի դարձվածքի իրացման, ընկալման, ըմբռնման կաղապարը, իսկ այդ սխեմայի հակառակ պատկերը, այսինքն՝ ,,նշանակությունից դեպի ծև,, , դարձվածքի ստեղծման կաղապարը: Ըստ ,,նշանակությունից դեպի ծև,, կաղապարի դարձվածքը վերլուծելիս գտնում ենք երկու տիպի նշանակություն, որի արտահայտման պահանջից տվյալ դարձվածքը կյանքի է կոչվել, ու այսպես կոչված բաղադրյալ նշանակություն, որը բաղադրիչ բառերի նշանակությունների գումարն է: Դա նշանակում է, որ վերլուծական պլանով դարձվածակազմական կաղապարն ունի հետևյալ տեսքը. դարձվածաբանական նշանակությունից դեպի բաղադրյալ նշանակություն և ապա վերջինիս նյութական քաղանք, որից հետևում է՝ դարձվածաբանական նշանակությունը պայմանավորում է բաղադրյալ նշանակության ծևավորման պահանջ և,դրանով իսկ կյանքի կոչելով այն, միացվում է նրա հետ, ընդունում նրա նյութական քաղանքը, որի հետևանքով ստեղծվում է դարձվածի լեզվական միասնություն: Շնորհիվ այն քանի, որ դարձվածքի բաղադրիչների նշանակությունների կապակցությունը ընտրվում է և ծևավորվում ըստ դարձվածքի նշանակության բնույթի, իսկ բաղադրյալ նշանակությունները բազմատիպ են և հետևապես բազմատիպ են նրանց կյանքի կոչող համապատասխան դարձվածաբանական նշանակություն-

ները, իմանում ենք, որ դարձվածքները ստեղծվում են ըստ կառուցվածքային-իմաստաբանական կաղապարի և ոչ թե ըստ ազատ բառակապակցության կամ նախադասության բերականական կաղապարների, ինչպես այդ մասին գրում են համարյա բոլոր դարձվածաբանները: Դարձվածքների կազմության կաղապարի առկայության մասին է վկայում այն, որ դարձվածքի քերականական կառուցվածքով կարելի է որոշել նրա իմաստի բնույթը և, ընդհակառակը, դարձվածքի իմաստի /սեմանտիկայի/ բնույթով՝ կանխագուշակել նրա բերականական կառուցվածքի բնույթը, այլ կերպ ասած, դարձվածակազմության կաղապարի իսկությունը հաստատվում է հենց դարձվածքների կառուցվածքային-իմաստաբանական տիպաբանությամբ, դարձվածքների կառուցվածքային-իմաստաբանական տիպերի դասակարգմամբ:

Ժամանակակից հայերենի դարձվածաբանական կազմը ներկայացնում է դարձվածքների կառուցվածքային-իմաստաբանական տիպերի մեծ բազմություն, որոնք բացահայտվել են վերը նշված մոտեցման շնորհիվ:Թվարկենք այդ տիպերից մի քանիսը և ցույց տանք դարձվածքների նման դասակարգման դերը լեզվի համակարգում դարձվածքների տեղը որոշելու գործում:

Այսպես՝ հայերեն լեզվի դարձվածաբանական համակարգում առանձին, ինքնուրույն կառուցվածքային-իմաստաբանական տիպ են կազմում հետևյալ դարձվածքները՝

Սիրտը քարանալ	Արևը ծագել
Սիրտը անցնել	Արևը խավարել
Սիրտը բացվել	Դեմքը լուսավորվել
Սիրտը կոտրվել	Դեմքը մթնել
Ձեռքը-ոտքը թուլանալ	և այլն[1]:

Այս տիպի դարձվածքները ձևի տեսակետից հարաբերակցվում են ոչ անցողական բայով պարզ նախադասությանը և բնութագրվում են անձի որոշակի հոգեկան, հոգեֆիզիկական վիճակի մեջ գտնվելու կամ այդպիսի վիճակի մեջ ընկնելու ընդհանուր նշանակությամբ: Նրանք լեզվի դարձվածաբանական կազմի մի զգալի մասն են կազմում և մեծամասնությամբ կրում են սոմատիկ բնույթ:

Այս կառուցվածքային-իմաստաբանական տիպին իրենց ձևաիմաստային հատկություններով հակադրվում են հետևյալ դարձվածքները՝

Սիրտը քարացնել	Գլուխն առնել
Սիրտը խռովել	Գլուխն ուռել
Սիրտը ծակել	Գլուխը տաքացնել
	Խելքը առնել

և այլն, որոնք ծևի տեսակետից հարաբերակցվում են անցողական բայով բառակապակցությանը և ընութագրվում են անծի /կամ երբեմն իրի/ որոշակի ֆիզիկական, հոգեկան կամ հոգեֆիզիկական վիճակին բերելու, հասցնելու ընդհանուր նշանակությամբ:

Մեկ այլ կառուցվածքային-իմաստաբանական տիպ են կազմում այն դարձվածքները, որոնց արտահայտության պլանը ,,գոյական+գոյական,, կաղապարով կառուցված որոշիչ բառակապակցություններ են, իսկ բովանդակության պլան ստեղծող հասկացություններն արտացոլում են կամ հայտնի առարկաների ասոցիատիվ-դասային դրսևորումներ, կամ էլ առարկաների ռեալ դասային կամ տիպային դրսևորումներ: Այս կարգի դարձվածքներից են, օրինակ՝

Դազանների արքա	Ագռավի ծայն
Անտառի արքա	Կատվի դրախտ
Կատվի համերգ	Առյուծի կաթ
Երևսի կաշի	Եզան լեզու և այլն:

Լեզվի դարձվածաբանական կազմում իրենց տիպաբանական ցայտուն հատկությունների շնորհիվ հատուկ տեղ են գրավում այն դարձվածքները, որոնք ծևի տեսակետից հարաբերակցվում են ,,անական+գոյական,, կաղապարով ստեղծված որոշիչ բառակապակցություններին և ունեն անծի կամ իրի որոշակի որակական ընութագրության ընդհանուր նշանակություն: Դրանք են՝

Անմեղ զառ	Անպոչ գդալ
Կարմիր կով	Անպճեղ զառ
Կարճ խելք	Խելոք դավիթ /կամ եղբայր/

և այլն:

Դարձվածքների կառուցվածքային-իմաստաբանական տիպերի դասակարգման ժամանակ առանձնանում են մի մեծ խումբ դարձվածքներ, որոնք չեն պատկանում գոյություն ունեցող տիպերից որևէ մեկին, ի հայտ բերելով ծևի կամ բովանդակության լուրջ տարբերություններ: Այսպես՝ անեզակ փերը, անմեղ զառ տիպի դարձվածքների կողքին գտնում ենք մի շարք նույն կառուցվածքի դարձվածքներ, որոնք, սակայն, բովանդակությամբ համապատասխանում են առյուծի կաթ, Ադամի արհեստ տիպի դարձվածքներին: Այսպիսի դարձվածքներից են, օրինակ՝

Կարմիր դրոշակ	Առաջին ջութակ
Գեղեցիկ սեռ	Առաջին քայլեր
Առաջին խոսք	Առաջին ծիծեռնակ և այլն:

Նախորդ տիպի դարձվածքներին շատ մոտ են, սակայն ևս մեկ առանձին տիպ են կազմում այն դարձվածքները, որոնց արտահայտության

պլանը կազմում են ,,գոյական+ածական /կամ ածականաբար օգտագործվող բառ, երբեմն՝ թվական/,, կաղապարով ստեղծված որոշիչ բառակապակցությունները և որոնք բնութագրվում են անձի կամ իրի որոշակի վիճակի կամ հատկության որակական բնութագրության ընդհանուր նշանակությամբ: Օրինակ՝

Աչքերը պաղ	Գլուխը հաստ
Աչքերը չորս	Ձենը կարճ
Աչքը ծակ	Գլուխը մերմակ
Աչքը կարոտ	Կատարը տաք և այլն:

Մեկ այլ տիպ են կազմում համեմատության կառուցվածք ունեցող դարձվածքները, որոնք բնութագրվում են անձին, իրին, որևէ գործողության կամ որևէ հատկանիշի վերագրվող որակի կամ հատկության նրկարագրման ընդհանուր նշանակությամբ, կամ էլ բայի կողմից ներկայացվող գործողության կամ վիճակի սաստկացման բարձրազույն աստիճանի որակավորման նշանակությամբ: Որպես օրինակ բերենք այս դարձվածքները՝

Ինչպես երազ /նշածև աչքերով մի աղջիկ դուրս կգա պատշգամբ և, ինչպես երազ, նորից կանհետանա աննկատելի/

Ինչպես ծուկը ջրում /իրեն ազատ, անկաշկանդ զգալ/

Ինչպես որոտ պայծառ երկնքից. /անսպասելիորեն, հանկարծակի/

Ինչպես ջրի երկու կաթիլ /նույն, նման, իրարից չտարբերվող, շատ նման/ և այլն:

Նշենք մեկ այլ խումբ ևս:

Հայերեն լեզվի դարձվածաբանական առանձնահատուկ տիպ են ներկայացնում՝

Տուն ու տեղ	Օր ու գիշեր
Աչք ու ականջ	Բոյ ու բուսաթ
Ցավ ու կրակ	Առքով ու փառքով
Թև ու թիկունք	Թելք ու միտք
Դեղ ու դեղթանք	Մեծ ու փոքր
	Ահ ու վախ

տիպի կայուն բառակապակցություններ, որոնք բացարձակ երկանդամ սահեղծումներ են, ձևի տեսակետից հարաբերակցվում են նախադասության երկու համազոր անդամների շարահյուսական կապակցության հետ և սովորաբար կառուցվում են կարգային ընդհանրացնող-հավաքական, կարգային վերացական-հավաքական կամ կարգային սաստիկ ընդհանրացնող հասկացությունների արտահայտման համար: Նրանց կարգային հասկացության նկատմամբ բաղադրիչների արտահայտած հասկացությունները կրում են դասային, տեսա-

կային /видовой / բնույթ:

Անհրաժեշտ է նշել, որ այս տիպի դարձվածքների օրինակով բացահայտվում է այն փաստը, որ կառուցվածքային-իմաստաբանական դասակարգման սահմանները չեն համընկնում նրանց դասակարգմանը՝ ըստ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերակցության: Դարձվածքների մեկ կառուցվածքային-իմաստաբանական տիպ կարող է ներկայացնել տարբեր խոսքի մասերի հետ հարաբերակցվող միավորներ: Հետևապես մեր կողմից ներկայացվող դարձվածքների կառուցվածքային-իմաստաբանական դասակարգումը հաշվի չի առնում դարձվածքների քերականական նշանակությունները՝ նրանց բովանդակությունից վերցնելով զուտ սեմանտիկական էությունը:

Հայերեն լեզուն, ինչպես վերը նշվեց, ներկայացնում է դարձվածների կառուցվածքային-իմաստաբանական տիպերի մեծ քանակ: Հնարավորությանն դեպքում կարելի է շարունակել նրանց քվարկումը: Սակայն վերը բերված տիպերն արդեն կարող են բավարար հիմք ծառայել մեր մի քանի նախնական եզրակացությունների համար:

1. Կառուցվածքային-իմաստաբանական դասակարգումը չի հանդիսանում դարձվածաբանական մասնագիտական զբաղմունքից մեզ հայտնի իմաստաբանական, իմաստա-քերականական, Ֆունկցիոնալ-կիրառական, կառուցվածքային-քերականական դասակարգումներից որևէ մեկի կրկնողությունը կամ նրանցից մի քանիսի միացությունը: Այն հիմնված է դարձվածքների տիպերի միջև եղած կառուցվածքային ու իմաստաբանական տարբերությունների վրա: Կառուցվածքային-իմաստաբանական առանձին, ինքնուրույն տիպ է դարձվածքների այնպիսի խմբավորումը, որտեղ միավորները բնութագրվում են միևնույն քերականական կառուցվածքով և ընդհանուր կարգային նշանակությամբ:

2. Լեզվի դարձվածքների կառուցվածքային-իմաստաբանական դասակարգումից դժվար չէ կռահել, թե դարձվածքներն ինչ տիպի հասկացությունների արտահայտման համար են ստեղծվում և որոնք են լեզվի շարահյուսական բառակապակցությունների և նախադասությունների այն տիպերը, որոնք ծառայում են որպես համապատասխան իրացման ձևեր այդ հասկացությունների արտահայտման համար:

Եթե մի տիպին պատկանող դարձվածքները տարբերվում են այլ տիպերին պատկանող դարձվածքներից ստրուկտուրայի, կառուցվածքի տիպով և միայն այդ տիպը պայմանավորող ընդհանուր նշանակությամբ, ապա՝ ա/ ամեն մի տիպի դարձվածքներն ունեն իրենց առանձին տեղը դարձվածաբանական համակարգում, բ/ ստեղծվում են ու իրենց կիրառությունն են գտնում յուրահատուկ պահանջից և հետևապես օժտված են սպեցիֆիկ

նշանակմամբ լեզվի դարձվածաբանական համակարգում: Այստեղից էլ՝ յուրաքանչյուր տիպի դարձվածքների ձևի և բովանդակության միասնությունը հանդիսանում է նրանց /ռելեվանտ/ կարգային հատկանիշի՝ լեզվաբանական նշանակման ցուցիչը:

Դարձվածքի նշանակումը / Назначение / նրա կարգային էական հատկությունն է, որը պատասխանում է այն հարցին, թե ինչ է իրենից ներկայացնում դարձվածքը որպես լեզվի ինքնուրույն միավոր, ինչ պահանջից է ստեղծվել, որպեսզի ապահովի այդ պահանջը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հոդվածում բերվող օրինակները վերցրել ենք Ա.Մ.Սուքիասյանի և Ս.Ա.Գալստյանի ,,Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանից,,:

В.А.КАРАПЕТЯН (Ленинград, СССР)

К ВОПРОСУ О ДИФФЕРЕНЦИАЛЬНЫХ ПРИЗНАКАХ ШУМНЫХ СМЫЧНЫХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Общепринято, что для взрывных и аффрикат в современном литературном армянском языке корреляционные ряды образуются по признаку звонкости-глухости и придыхательности-непридыхательности. Принято считать также, что глухой неаспирированный согласный выступает как немаркированный член оппозиции, а другие два - глухой аспирированный и звонкий - отличаются от него дополнительно каким-либо одним признаком - аспирацией или звонкостью. Некоторыми авторами отмечается и различная напряженность членов рассматриваемых рядов.

Материалом для нашего исследования послужили магнитофонные записи чтения семью дикторами-носителями литературного армянского языка специально составленного текста, в котором шумные смычные реализовались во всех основных позициях: абсолютного начала, интервокальной и абсолютного исхода. Записи были подвергнуты слуховому анализу, осциллографическому и аудиторскому анализу, суть которого заключалась в опознании носителями армянского языка звуков, вырезанных из тех или иных слов в соседстве с гласным. Анализ восприятия оказал существенную помощь в определении приоритета того или иного дифференциального признака рассматриваемых фонем.

В целом было проанализировано около 1000 шумных смычных в разных позициях. На восприятие 10 аудиторам было предъявлено 160 стимулов.

Слуховой анализ и анализ восприятия показал, что фонетически сильной позицией является только позиция абсолютного начала, хотя некоторыми авторами таковой считалась и позиция абсолютного исхода. Почти все реализации, вырезанные из слов в этой позиции опознавались аудиторами правильно. Кроме того, в позиции абсолютного начала реализации противопоставляемых фонем обладают, как правило, полным набором дифференциальных

признаков, о чем речь пойдет ниже.

Интервокальная позиция не может считаться сильной, т.к. в ней достаточно часто появляются такие реализации шумных смычных, идентификация которых на слух затруднена, а аудиторский анализ показывает случайное (т.е. менее 80%) опознание их.

Позиция абсолютного исхода совершенно очевидно является слабой для этой группы согласных. В этой позиции практически не реализуется противопоставление шумных смычных ни по наличию/отсутствию голоса, ни по наличию/отсутствию признака аспирации. В подавляющем большинстве случаев предъявленные в этой позиции шумные смычные опознаются либо случайно, либо как звуки, традиционно обозначаемые как придыхательные. Так, из 230 ответов аудиторов 140 пришлось на долю "придыхательных". Хочется подчеркнуть, что как "придыхательный" в этой позиции опознавался аудиторами и глухой непридыхательный и -реже - звонкий. Причем непридыхательный в этой позиции мог быть опознан правильно лишь при наличии у конкретной реализации четкой гортанной смычки, либо значительного озвончения. Из сказанного представляется возможным предположить, что немаркированным членом оппозиций все же является именно "придыхательный", т.к. для опознания других членов ряда требуется какой-то дополнительный признак (признаки), например, четко выраженная глоттализация у непридыхательного (как фонетический коррелят напряженности) или звонкость для звонкого.

Теперь несколько слов о характере фонетических реализаций шумных смычных в потоке речи.

В результате осциллографического анализа шумных смычных (которых только в интервокальной позиции было проанализировано около 600) было обнаружено, что:

1) из 250 реализаций глухих непридыхательных 200 были реализованы с озвончением, составляющим треть и более длительности звука. Это обстоятельство дает основание рассматривать непридыхательные как полузвонкие согласные;

2) длительность фазы рекурсии у шумных смычных, вопреки распространенному мнению, не может быть достаточно надежным критерием, а тем более - единственным для различения пар придыхательных и непридыхательных, т.к. имеются и значительные колебания в значениях этого параметра в пределах одной фонемы,

и большие области "перекрытия" значений, соответствующих доле рекурсии в длительности звука, у соответствующих глухих пар.

Кроме того, слуховой анализ показал, что аспирированные характеризуются не столько наличием собственно аспирации, сколько весьма ненапряженной, слабой артикуляцией. В потоке речи возможны реализации их как с аспирацией, так и без нее, причем отсутствие аспирации - как выяснилось из опытов по восприятию - вовсе не обязательно приводит к смешению их с соответствующими непридыхательными. Так, предъявленные аудиторам "трудноидентифицируемые" при слуховом анализе придыхательные при самых различных длительностях фазы рекурсии - т.е. как соответствующих средним значениям для данных звуков, так и значительно отклоняющихся - могли опознаваться в равной мере случайно. И наоборот, неслучайно опознанными реализациями придыхательных могли быть такие, длительность рекурсии которых более соответствовала непридыхательному, чем придыхательному. Из этого следует, что длительность фазы рекурсии, отражающая наличие/отсутствие аспирации, не может быть достаточным для различения этих фонем признаком.

Отметим еще, что у аффрикат, традиционно считающихся придыхательными, наблюдалось частое ослабление смычки, приводящее в отдельных реализациях к полной ее утрате и замене аффрикаты на соответствующий щелевой: /c/ на /s/, /č/ на /š/, например: arasasnúm, veršasnél и т.п., что, на наш взгляд, также свидетельствует о слабой артикуляции этих аффрикат. Кроме того, при практически одинаковой абсолютной длительности /c/ и /c/, /ć/ и /ć"/ фаза рекурсии у них в среднем различна. Следовательно, удлинение фазы рекурсии происходит не за счет аспирации, которая должна бы следовать за щелевой фазой аффрикаты, а за счет сокращения, т.е. ослабления смычки. Это обстоятельство свидетельствует о том, что аффрикаты являются не придыхательными в собственном смысле слова, а звуками, ненапряженными по артикуляции, т.е. слабыми.

Что касается непридыхательных шумных смычных, то слуховой анализ показал: наиболее типичными и легко идентифицируемыми на слух являются напряженные полузвонкие реализации. Кроме того, чрезвычайно характерной для этих согласных является значительная глоттализация, которая резко отличает непридыхатель-

ные от их коррелятов. Наличие глоттализации хорошо воспринимается на слух по особому качеству следующего за согласным гласного. Надо сказать, что наряду с глоттализацией эти согласные могут быть реализованы с собственно гортанной смычкой, которая отмечается как на слух, так и фиксируется осциллограммами, но в целом для армянских шумных смычных - в отличие от грузинских абруптивов - гортанная смычка не очень характерна. Опыты по восприятию непридыхательных согласных показали, что неслучайно правильно опознаются именно такие реализации непридыхательных, которые сопровождаются глоттализацией и/или значительным озвончением. Длительность фазы рекурсии для опознания этих согласных также решающего значения не имела. Нами были предъявлены, например, стимулы с /р/ и /р'/, длительность рекурсии которых была одинакова - 30% от общей длительности звука - а аудиторы неслучайно восприняли их как разные фонемы. Из этого опять-таки следует, что идентификация звуков аудиторами происходила на основе иного, чем аспирация признака, а именно степени напряженности артикуляции.

Итак, для опознания в предъявленном стимуле непридыхательного (если предъявлен, конечно, не звонкий согласный) нужны дополнительные по сравнению с придыхательным признаки, а именно: напряженность артикуляции и глоттализация.

Обобщая результаты экспериментов, представляется возможным построить корреляционные ряды для шумных смычных не по признаку наличия/отсутствия аспирации прежде всего, а по градациям признаков силы/слабости (напряженности/ненапряженности) и звонкости/глухости, причем аспирация и глоттализация оказываются дополнительными дифференциальными признаками. Заметим здесь, что еще Р.Якобсон говорил, что в отличие от напряженных ненапряженные смычные могут быть отмечены избыточным признаком придыхания (это о языках с трехрядной оппозицией шумных смычных), где немаркированным будет ненапряженный (аспирированный). Таким образом, в нашем построении все члены корреляционного ряда будут отличаться друг от друга одним полным признаком и частью другого признака. Например: /р$^{(ъ)}$/ противопоставляется /р / полностью по признаку силы/слабости, и частично - по признаку звонкости/глухости (т.к., как было сказано выше, непридыхательные можно считать полузвонкими), а противопо-

ставление /$p^{(ъ)}$/ - /ъ / осуществляется полностью по признаку звонкости/глухости и частично по силе/слабости, где звонкий более напряженный, чем "придыхательный", но менее, чем непридыхательный и т.д. Звонкий и непридыхательный, правда, противопоставляются при таком построении по части обоих признаков, т.е. частично по напряженности и частично по звонкости.

Н.А.КОЗИНЦЕВА (Ленинград, СССР)

КАТЕГОРИЯ РЕЗУЛЬТАТИВА В СОВРЕМЕННОМ ВОСТОЧНО-АРМЯНСКОМ ЛИТЕРАТУРНОМ ЯЗЫКЕ

Одним из дискуссионных вопросов армянской грамматики является теоретическое истолкование сочетаний результативного причастия с личными формами бытийных глаголов եմ, լինել, которые выступают в функции сказуемого. Разработка этого вопроса помогает очертить круг явлений, относящихся к категории вида армянского глагола, а также затрагивающих категорию залога. Материал армянского языка представляет интерес для общей аспектологии, так как в этом языке исследователь сталкивается с грамматизацией аспектуально-залоговой оппозиции "действие/состояние", выражающейся в других языках как противопоставление классов глагольных лексем и сочетающейся в армянском языке с известной также и в других индоевропейских языках оппозицией "имперфектив/перфектив/перфект".

Сочетания результативного причастия и личных форм настоящего и прошедшего времени եմ, էի традиционно считаются (М.Абегян) и в настоящее время признаются рядом исследователей особыми видо-временными формами ряда հարակատար, входящими в один ряд "главных видо-временных форм" наряду с имперфективными, перфективной и перфектными формами (С.К.Зарбеджян, Г.Б.Джаукян). Сочетания того же причастия с личными формами глагола լինել рассматриваются как "вторичные видо-временные формы", которые, как указывается в грамматиках, противопоставлены "главным" тем, что выражают предшествование и многократность (С.А.Абраамян, Г.Б.Джаукян). При этом, как правило, имеются в виду переходные глагольные лексемы, функционирование которых во вторичных видо-временных формах подтверждает указанные положения, ср. например, употребление вторичного результативного презенса в сложном предложении (I), где форма եփած է լինում букв. "бывает

свариши" выражает обычное действие, предшествующее ранее названному в тексте գալիս ենք "возвращаемся": (I) Առավոտը վեր ենք կենում... բոլորս միասին հացի ենք նստում, ուտում, գընում գործի գալիս՝կեսուրը ճաշը եփած է լինում...(Թալեփյան Զ.Որ-պեղ էիր, մարդ ասածո) "Утром [обычно] встаем... все вместе садимся завтракать, едим, уходим на работу, возвращаемся - - свекровь [уже] сварила обед..."

Изучение употреблений интранзитивных и пассивных глаголов во "вторичных" видо-временных формах показывает, что эти формы имеют абсолютное временное значение, что подтверждается возможностью их употребления в простом предложении вне соотносительности по времени с другим действием, ср. (2):Վաղ առավոտից մինչև կեսգիշեր նրա տան դռնից կախված էր ժանգոտ կողպեքը /Թանգալյան Ս. Հողը /"С раннего утра и до полуночи на дверях его дома висел ржавый замок"; (3) Հարյուր միլիոն, գուցե ավելի տարիներ այս ջուրը փակված է եղել գետնի տակ՝ ընդերքում /Թանգալյան Ս. Սևանի լուսաբացը / "Сто миллионов, может быть, и более лет эта вода была заперта под землей, в недрах". Как видно из приведенных примеров, "вторичные" видовременные формы от рассматриваемых глаголов так же, как и формы հարակատար, выражают значение состояния, вследствие чего все названные формы могут быть объединены в одну парадигму аналитических форм, в которых знаменательная часть представлена результативным причастием, а служебная - спрягаемыми супплетивными формами бытийного глагола. Таким образом для интранзитивных и пассивных глаголов в армянском языке актуально противопоставление двух рядов одноименных видо-временных форм (презенса, имперфекта, перфекта, плюсквамперфекта, аориста, будущего, будущего в прошедшем - в изъявительном наклонении, а также временных форм косвенных наклонений) - "главных" с акциональным значением и "вторичных" с результативным значением.

Результативное значение определяется как состояние предмета, возникающее после естественного завершения (достижения предела) действия. Так, например, состояние в (4) является результатом действия, обозначенного перфектной формой в (5): (4) Կողպեքը կախված է "Замок висит"; (5) Կողպեքը կախել են "Замок повесили".

Формы с результативным значением могут употребляться для

обозначения статива, т.е. автономного состояния, не связанного с предшествующим действием: (6)... տունը մշտապես կանգնած էր նուխը... (Խալափյան Զ. Ն.ա.) "... в доме постоянно стоял дым". Значение статива у предельных глаголов является контекстно-обусловленным, в то время как у непредельных глаголов оно выступает независимо от контекста: համոզված է "убежден", հիացած է "восхищен", սիրված է "любим", հարգված է "уважаем" и др.

При изучении категории результатива в армянском языке можно поставить следующие вопросы: I) типы глаголов, охватываемых этой категорией; 2) синтаксические типы результатива; 3) парадигма результативных форм; 4) соотношение результативных и "главных" видовременных форм. Кратко остановимся на перечисленных вопросах.

Результативное причастие образуется в армянском языке от всех глаголов без исключения. Однако аналитические формы результатива образуются с определенными ограничениями. Результатив невозможен от большинства непредельных глаголов, обозначающих: а) динамическое действие (վազել "бегать"), б) охват промежутка времени (ձմեռել "зимовать"), отношение субъекта к действию (ձգտել "стремиться") и др. Это ограничение вызвано семантической причиной: перечисленные глаголы передают действия, не оставляющие после себя результата. Из непроизводных интранзитивов рассматриваемую форму имеют глаголы положения в пространстве (կանգնել "стоять") и глаголы эмоционального состояния (բարկանալ "сердиться"). При этом, как указывает проф. В.Д.Аракелян, результатив от непроизводных интранзитивов лексически избирателен, например, глагол վախենալ "бояться" в результативе вполне употребителен, а близкий по значению զարհուրել "страшиться" в этой форме звучит неестественно.

Результативные формы регулярно образуются от предельных интранзитивов, маркированных суффиксом վ с декаузативным и возвратным значениями, а также от транзитивных глаголов в пассивной форме. В первом случае в качестве носителя состояния, выраженного именем в позиции подлежащего, выступает субъект действия и вся конструкция является субъектно-результативной (6) մատիտը ընկած է հատակի վրա "Карандаш валяется на полу".

Во втором случае носитель состояния - объект действия, при этом конструкция считается объектно-результативной: (7)Մատիտը դրված է սեղանի վրա "Карандаш положен на стол". В тех случаях, когда глагол с суффиксом վ двузначен, то есть может быть понят как декаузативный или пассивный (կեղտոտված է "испачкан" и "испачкался") или как возвратный и пассивный (սանրված է "причесан" и "причесался"), результатив является двудиатезным (омонимичным). Некоторые переходные глаголы образуют так называемый посессивный результатив. Это глаголы со значениями "надевать на себя одежду", "получать информацию", "приобретать опыт", "есть (насыщаться)", например: (8) Նա սև շոր էր հագած "На ней было надето черное платье", букв.: Она была надевши черное платье; (9)Նա արդեն կերած-խմած է "Он уже попил-поел", т.е. сыт (букв.: "Он попивши-поевши"). Данные конструкции очень редки; обычно вместо результатива в этом случае употребляется перфект. Результативные формы указанных глаголов чаще выступают со вспомогательным глаголом կա "имеется" с отрицанием или же в вопросительном предложении: (10)Ես նրան լսած չկամ "Я его не слышал (никогда)", (11) Դու այդ նկարը տեսած կա՞ս "Ты эту картину видел (когда-нибудь)?". В приведенных примерах выражается, что действие происходило или не происходило хотя бы один раз и его результативность состоит в приобретенном субъектом опыте, знаниях и т.п.

Рассмотрим парадигму видо-временных результативных форм. Презенс и имперфект результатива образуется с разными вспомогательными глаголами, в зависимости от того, является ли обозначаемое ими состояние однократным, актуальным в момент речи или в некоторый момент в прошлом, или многократным, неактуальным. В первом случае - с եմ (12)Նա նեղացած է "Он обижен (сейчас)", во втором - с լինել (13)Նա հաճախ նեղացած է լինում "Он часто бывает обижен". Перфектный результатив обозначает состояние, имевшее место в ограниченный период времени, относящийся к отдаленному прошлому, см. приведенный выше пример (3). При этом дополнительно в контексте может быть выражено также значение аннулированности состояния: (14) Տպարանում թղթակցությունը շարված է եղել, հրաքարոչս տղան ինքն է շարել, բայց Միսակյանը առաջը կապել է ու

շարվածքը ցրել տվել (Խնգոյան, Հողը) "В типографии корреспонденция была набрана, но Мисакян преградил ей дорогу и приказал рассыпать набор".

Результативный аорист – форма очень редкая, встречается практически только от глаголов ստիպել, հարկադրել "заставлять" и обозначает наступление модального отношения долженствования: ստիպված եղավ "стал вынужден", հարկադրված եղավ "стал вынужден". Результативное будущее также очень редкая форма, обозначающая отнесенность состояния к будущему: (15) Ձեր պատասխանից է կախված լինելու ձեր ճակատագիրը(Խալափյան Զ)"От вашего ответа будет зависеть ваша судьба!"

Как было отмечено выше, результативное состояние может быть выражено и формами результатива, и формами перфекта (плюсквамперфекта). В связи с этим следует показать, как соотносятся функции результатива и перфекта. Это состношение различно в зависимости от синтаксического типа результатива.

Субъектный результатив, обозначающий только состояние, уже по значению, чем перфект от непереходных глаголов, выражающий как состояние, так и вызвавшее его действие. Значения результатива и перфекта у непереходных глаголов действия различаются наиболее отчетливо. Так, глаголы изменения пространственного положения (կանգնել "вставать", պառկել "ложиться"), изменения социального статуса (ամուսնանալ "жениться", բաժանվել "разводиться") и др. в форме перфекта обозначают действие в прошлом,а в форме результатива – состояние, актуальное в момент речи или в некоторый другой момент в прошлом: (16)Նա կանգնել է "Он встал" и (17) Նա կանգնած է "Он стоит", (18)Նա ամուսնացել է"Он женился" и (19) Նա ամուսնացած է "Он женат". Обстоятельство времени при форме перфекта указывает на момент совершения действия, при форме результатива – на время состояния. Обстоятельство неограниченной длительности может сочетаться только с результативом, ср.: (20)Նա դեռ նստած է "Он все еще сидит", (21)Նա դեռ բարկացած է "Он все еще сердит". Только результатив употребляется также в том случае, если состояние не предполагает предшествующего действия, т.е. выражается статичное значение, например: (22)Նրա առաջ կանգնած էր լայնատարած կաղնին "Перед ним стоял широко раскинувшийся дуб". Эта ситуация может быть

также передана перфектом в переносном значении: вводится точка зрения движущегося наблюдателя, ср. (23) Մեր առաջ կանգնել է մի բարձր սար "Перед нами выросла высокая гора". Следует упомянуть также, что перфектные формы в армянском языке имеют некоторые собственные функции, несвойственные результативу. Это - передача последовательных действий в прошлом, о которых говорящий рассказывает с чужих слов; выражение относительного предшествования; обозначение многократных последовательных состояний. Материал, относящийся к первым двум случаям, общеизвестен; приведем пример, иллюстрирующий последний случай: (24) ... այս մահճակալի վրա քնել են առնվազն քսան մարդ (Խանզադյան, Սևանի լուս.) ...на этой кровати спали по крайней мере двадцать человек". Анализ употребительности субъектного результатива и перфекта от переходных глаголов в художественных текстах показывает, что количественные соотношения этих форм могут быть самыми разными, в зависимости от целого ряда причин, среди которых немаловажную роль играет также индивидуальный стиль автора, выбирающего в описаниях более "динамичные" перфектные формы или "статичные" результативные.

Объектный результатив указывает на состояние объекта, в то время как перфект пассива имеет чаще всего акциональное значение, то есть выражает действие как конкретный или обобщенный факт в прошлом.

При результативе употребительны различные качественные определители состояния: (25)Հատակը լավ էր_Ներկված "Пол был хорошо покрашен"; при перфектных формах употребляются обстоятельства, характеризующие процесс действия - время, скорость, количество повторений и т.п., например: (26)Հատակը Ներկվել_է մաս-մաս, ժամը 6-ից-8-ը "Пол красился по частям с шести до восьми часов". Для выявления более конкретных различий между результативом и перфектом пассива необходимо изучение функционирования этих форм в зависимости от лексической семантики глаголов, от которых они образованы. Так, глаголы созидания объекта употребляются в результативе для выражения различных сопутствующих значений, характеризующих объект и существенных для последующего текста: (27)Շենքը կառուցված է "Дом построен", значит его можно заселять или же следует перейти к другой работе и т.п.; (28)Այս գանգը ժուլված է 7-րդ դարում

"Этот колокол отлит в седьмом веке" - имеется в виду, что колокол очень древний. Перфект пассива от этих глаголов обычно употребляется в сообщениях типа отчета, рапорта и пр., где перечисляется то, что сделано: (29) Կառուցվել են հիվանդանոցներ, մանկատներ..."Построены больницы, детские дома ..." Важно отметить, что для сравниваемых конструкций с перфектом пассива и результатива характерно различие в актуальном членении.

Объектный результатив, выражая состояние объекта, имплицирует предшествующее действие и может иметь в отдельных контекстуальных условиях значение завершенного действия, достигшего предела и актуального для последующего временного плана (т.е. перфектное значение). Отметим некоторые подобные контексты: I) во временном придаточном, содержащем союз или обстоятельство, подчеркивающие завершенность действия: (30)Երբ սայլն արդեն բեռնաթափված էր, և մենք բավականին հիացել էինք նոր զուլքով, փողոցում Անդրանիկը վազելով ինձ հասավ /Հուրուն Լ. Հայրեր/"Когда воз уже был разгружен, а мы достаточно налюбовались на новую обстановку, на улице меня догнал бегущий Андраник"; 2) в прямой речи, когда говорящий является производителем действия: (3I)Մի առավոտ նստեց ու գրեց հրաման՝ ,,Հեռացված ես,,(Թալափյան)"Однажды утром он сел и написал приказ: "[Ты] уволен [с работы]".

Итак, если у непереходных глаголов более широким по значению оказывается форма перфекта, а результатив семантически более специализированная форма, то у пассивных глаголов соотношение между перфектом и результативом обратное - результатив более употребителен, так как выражает и результативное, и перфектное значения. О полном перекрывании функций этих форм ни у пассивных, ни у интранзитивных глаголов говорить нельзя, так как в обоих случаях и перфектные, и результативные формы имеют свои особые функции.

Анализ употреблений результативных форм в армянском языке показывает, что несмотря на специфическое оформление армянский результатив имеет многие универсальные черты в области семантики. Специфика результатива в восточноармянском литературном языке состоит в его сосуществовании с перфектом, начиная с эпохи среднеармянского языка по нынешнее время.

ЛИТЕРАТУРА

Աբեղյան Մ. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1965:
Աբրահամյան Ս.Գ. Ժամանակակից հայերենի քերականություն. Երևան, 1969:
Առաքելյան Կ.Դ. Հայերենի շարահյուսություն. 1. Երևան, 1958:
Ջահուկյան Գ.Բ. Ժամանակակից հայերենի տեսություն հիմունքները. Երևան, 1974:

Зарбеджян С.К. Значение и употребление прошедших видовых форм в современном армянском языке. – В кн.: Вопросы языка и стиля. П. Ереван, 1964.

Բ.Ն. ՂԱՋԱՐՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՆԱԽԸՆԹԱՑ ԱՆԴԱՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լեզվական միավորների փոխարինումներն ու կրկնությունները տեքստի վերլուծության հիմնական հարցերից են, քանի որ սրանց միջոցով են իրականացվում ասույթների ու ավելի բարձր միավորների միջև իմաստային կապերը: Առավել ակնառու են հոմանիշային, շրջասույթային և այլ կարգի փոխարինումներն ու կրկնությունները:

Նշված փոխարինումների մեջ այստեղ հիմնական ուշադրությունը դարձվել է այն խնդրի վրա, թե նախընթաց անդամն ինչպիսի ծավալում կարող է ունենալ ժամանակակից հայերենի պարբերությունում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախընթաց անդամը /նախընթաց ենք անվանում փոխարինվող կամ կրկնվող անդամը/ կարող է հանդես գալ ինչպես մեկ բառով, այնպես էլ նախադասությամբ կամ ամբողջ պարբերությամբ: Այդպիսի դեպքերում նախընթաց անդամի փոխարինումը կամ կրկնությունն իմաստային կամուրջ է զգում թե՛ միևնույն և թե՛ տարբեր պարբերությունների միջև:

Ոնկրետ նյութի վերլուծությունն ակնառու է դարձնում նախընթաց անդամի դերանվանական փոխարինումների /ամենատարբեր հոլովածեվերով/ տեքստակազմական արժեքը: Նախընթաց անդամի ծավալմամբ ստեղծվում է ներդաշնակ փոխարինումների ու կրկնությունների մի այնպիսի ցանց, որով իրականացվում է տվյալ հատվածի իմաստային կապը:

Պարբերության մեջ ստորադասական հարաբերությունների միջոցով բնութագրվում են բառերի միջև բովանդակային կապերը: Իսկ նախընթաց անդամի փոխարինումներն ու կրկնությունները նպաստում են այդ կապի դրսևորմանը /սրանք չպետք է խախտեն տվյալ լեզվում իմաստի արտահայտման քերականական ու ոճական նորմաները, միանշանակ արտահայտությունները չպետք է դարձնեն ոչ միանշանակ ու անհասկանալի/:

Առհասարակ պիտի ասել, որ գլխավորապես դերանվանական յուրաքանչյուր փոխարինմանը համապատասխանում է ինֆորմացիայի մի շերտ,

և երբ այդ շերտերը բազմապատկվում են, դրանց իմաստային կապին հետևելը դժվարանում է: Իհարկե, այդտեղ յուրահատուկ օրինաչափություններ չեն կարող գործել, սակայն փոխարինումների իմաստները միանշանակ կերպով ըմբռնվում են:

Այստեղ հիմնականում կանգ ենք առել հետևյալ յուրահատկությունների վրա.

1. Նախընթաց անդամի դերանվանական փոխարինումներ

ա/ միանշանակ փոխարինում /մոտենում է ծմեղը: Նրանից խուսափում են թռչունները/:

Նրանից դերանունը միանշանակ կերպով փոխարինել է ծմեղը նախընթաց անդամին:

բ/ ոչ միանշանակ փոխարինում /Հասմիկն ու Նունեն հասակակիցներ են: Սակայն սա մյուսից շրջահայաց է/:

Պարզ չէ, թե որն է որին նախընթաց:

2. Նախընթաց անդամի շրջասույթային փոխարինում /Վարժեցնողը մոտեցավ աղյուծին: Կենդանինների արքան սանձված էր/:

Կենդանինների արքան շրջասույթ է, փոխարինել է աղյուծ նախընթաց անդամին:

3. Նախընթաց անդամի փոխարինում բառիմաստի լայնացմամբ և այլն:

Այժմ տեսննենք, թե այս յուրահատկություններն ինչպիսի արտացոլում են գտել բնագիր տեքստերում:

Բերենք հետևյալ օրինակը.

,,Այդպես անցնում էին օրերը: Նահապետին (1) թվում էր, թե աշխարհքի (2) վրա ոչ մի բան (3) չի պվելանում, ու ոչ մի բան (4) էլ աշխարհքից (5) չի պակասում: Իր (6) համար միայն մի քիչ թեթևացել էր կյանքը: Ծերունի Մովսեսի գնալ գալով կարծես հուշիկ-հուշիկ մր ծանր քար ցած էր ընկնում նրա (7) կրծքից: Ինքը (8) չէր խոսում այդ հանդիպումների ժամանակ, միայն լսում էր: Մովսեսը (9) խոսել գիտեր, նրա (10) հոգին էլ վառված էր, սիրտն էլ տանջված: Ու նրա (11) պատմությունները մխիթարում էին Նահապետին (12): Մի երկու անգամ էլ ինքը (13), Մովսեսի (14) պնդմամբ, գնաց նրանց (15) տուն: Ծերունու (16) որդիները (17) հարգանքով բարևում էին, դուռը բացում նրա (18) առաջ, պառավը (19) բարևում էր՝ գլուխը խոնարհելով նրա (20) ծնոքին: Նահապետը (21) հասկանում էր, որ նրանց (22) այդ լռության ու հարգանքի (23), այդ շարժմունքների (24) մեջ ուրիշ բան էլ կա, խղճում են իրեն (25), մնաղ են գալիս: Ու դա (26) ընշում էր նրան (27): Դրա (28) համար էր նա (29) մարդկանցից խուսափում,, /Հր. Քոչար, Ընտիր երկեր, հ.1, էջ 443, Երևան, 1975/:

,, ԱՅԴՊԵՍ ԱՆՑՆՈՒՄ ԷԻՆ ՕՐԵՐԸ: ՆԱՀԱՊԵՏԻՆ 1 ԹՎՈՒՄ ԷՐ, ԹԵ ԱՇԽԱՐՀԻ 2 ՎՐԱ ՈՉ
ՄԻ ԲԱՆ 3 ՉԻ ԱՐԵԼԱՍՈՒՄ, ՈՒ ՈՉ ՄԻ ԲԱՆ 4 ԷԼ ԱՇԽԱՐՀԻՑ 5 ՉԻ ՊԱՀԱՍՈՒՄ: ԻՐ
6 ՀԱՄԱՐ ՄԻԱՅՆ ՄԻ ՋԻՉ ՔԵՔԵՎԱՑՆԵԼ ԷՐ ԿՅԱՆՔԸ: ՔԵՐՈՒՆԻ ՄՈՎՍԵՍԻ ԳՆԱԼ ԳԱԼՈՎ ԿԱՐԵՆՆ ՀՈՒ-
ՇԻԿ – ՀՈՒՇԻԿ ՄԻ ԾԱՆՐ ՋԱՐ ՑԱԾ ԷՐ ԸՆԿՆՈՒՄ ՆՐԱ 7 ԿՐԾԻՑ: ԻՆՔԸ 8 ՉԷՐ ԽՈՍՈՒՄ ԱՑԴ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ, ՄԻԱՅՆ ԼՍՈՒՄ ԷՐ: ՄՈՎՍԵՍԸ 9 ԽՈՍԵԼ ԳԻՏԵՐ, ՆՐԱ 10 ՀՈԳԻՆ ԷԼ
ՎԱՂՎԱԾ ԷՐ, ՍԻՐՏՆ ԷԼ ՏԱՆՋՎԱԾ: ՈՒ ՆՐԱ 11 ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԽԻԹԱՐՈՒՄ ԷԻՆ ՆԱՀԱՊԵՏԻՆ 12.
ՄԻ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԷԼ ԻՆՔԸ 13 ՄՈՎՍԵՍԻ 14 ՊՆԴՄԱՄԲ, ԳՆԱՑ ՆՐԱՆՑ 15 ՏՈՒՆ: ԾԵ-
ՐՈՒՆՈՒ 16 ՈՐԴԻՆԵՐԸ 17 ՀԱՐԳԱՆՋՈՎ ԲԱՐԵՎՈՒՄ ԷԻՆ, ԴՈՒՔԸ ԲԱՑՈՒՄ ՆՐԱ 18 ԱՒԱՋ,
ՊԱՏԱՎԸ 19 ԲԱՐԵՎՈՒՄ ԵՐ՝ ԳԼՈՒԽԸ ԽՈՆԱՐՀԵԼՈՎ ՆՐԱ 20 ՉԵՌՔԻՆ: ՆԱՀԱՊԵՏԸ 21 ՀԱՍ-
ԿԱՆՈՒՄ ԷՐ, ՈՐ ՆՐԱՆՑ 22 ԱՑԴ ԼՌՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՐԳԱՆՔԻ 23, ԱՅԴ ՇԱՐԺՄԱՆՆԵՐԻ 24
ՄԵՋ ՈՒՐԻՇ ԲԱՆ ԷԼ ԿԱ, ԽՉՄՈՒՄ ՆՆ ԻՐԵՆ 25, ՄԵՂՔ ԵՍ ԳԱԼԻՍ: ՈՒ ԴԱ 26 ԺՆՇՈՒՄ ԷՐ
ՆՐԱՆ 27 : ԴՐԱ 28 ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱ 29 ՄԱՐԴԿԱՆՑԻՑ ԽՈՒՍԱՓՈՒՄ,,:

/ՀՐ. ՋՈՂԱՐ, ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ, Հ. ԱՒԱՋԻՆ, ԷՋ 443, ԵՐԵՎԱՆ, 1975/:

Համեմատաբար ոչ մեծ այս հատվածում նախընթաց անդամի փոխարինումների ու կրկնությունների ընդհանուր թիվը 29-ից անցնում է /քոլորն էլ ընդգծված են ու համարակալված/, որից 17-ը դերանվանական է: Դա ցույց է տալիս, որ իմաստ ⟷ տեքստ կաղապարի տեսանկյունից դերանվանական տարրը կատարում է բազմազան գործառություններ: Միայն առաջին նախընթաց անդամին /Նահապետին/ հաջորդել են վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, տասներեքերորդ, տասյոթերորդ, տասնիններորդ, քսանչորսերորդ, քսանվեցերորդ, քսանութերորդ՝ թվով ինը դերանվանական փոխարինումներ՝ տարբեր կիրառություններով: Վերջինների ակտիվ մասնակցությունը տվյալ հատվածի ձևավորմանն ու նրա իմաստի արտահայտմանն ակնհայտ է:

Բերված հատվածից առանձնացնենք հետևյալ նախադասությունը.

Ծերունի Մովսեսի գնալ գալով կոչնես հուշիկ-հուշիկ մի ծանը քար ցած էր ընկնում նրա կրծքից, որտեղ բացակայում է դերանվան ու նախընթաց անդամի միջև միանշանակ հարաբերությունը: Նրա* բառը, կարծես, այստեղ փոխարինում է Ծերունի Մովսես նախընթաց անդամին: Մինչդեռ երկիմաստությունը վերանում է, երբ այն դիտում ենք պարբերության մեջ: Միանշանակ կերպով վերականգնվում է դերանվան իսկական նախընթացը՝ Նահապետը: Իսկ իրար կից, սակայն տարբեր նախադասություններում բաշխված վեցերորդ, յոթերորդ և ութերորդ /համապատասխանաբար՝ իր, նրա, ինքը/ փոխարինումներն իրենց նախընթացի՝ Նահապետի, հետ գտնվում են միանշանակ հարաբերությունների մեջ:

Ընդգծված յոթերորդ ու տասներորդ փոխարինումներում նրա դերանունը չունի միևնույն նախընթաց անդամը: Առաջինի դեպքում փոխարինում է Նահապետին, երկրորդում՝ Մովսեսին: Տարբեր նախընթաց անդամների միևնույն դերանվամբ փոխարինելն այստեղ, մանավանդ էլ թարմատարի ուղեկցությամբ, ընդգծում է նաև այդ երկուսի ծակատագրերի ընդհանրությունը: Տասնչորսերորդ և տասնհինգերորդ փոխարինումներում եզակի սեռականով նախընթացին /Մովսեսի/ հաջորդել է հոգնակի սեռականով դերանվանական տարրը /նրանց/, որով չեն խախտվել արտահայտության ոչ իմաստը, ոչ էլ քերականական ու ոճական նորմաները: Այն ընդգծել է միայն եզակի թվով հանդես եկած նախընթաց անդամի հոգնակիությունը:

Աչքի են ընկնում կրկնություններն ու հակադրությունները: Ոչ մի քան աշխարհքի վրա, ոչ մի քան աշխարհքից ժխտականներով ձևավորված ու կրկնված կապակցությունները, ինչպես նաև սրանց լրացնող

---

* ,,Նրա,,-ի փոխարեն միշտ կլիներ ,,իր,, դերանվան գործածումը:

ավելանում, պակասում հակադրություն առաջացնող լեզվական միավորները ավյալ հատվածում ստեղծում են համապատասխանությունների միասնական ոլորտ:

Դերանվանական փոխարինման մեկ այլ յուրահատկություն ընդգծելու նպատակով բերված պարբերությունից առանձնացնենք հետևյալ հատվածը.

Նահապետը հասկանում էր, որ նրանց այդ լռությամբ ու հարցանքի, այդ շարժումներների մեջ ուրիշ բան էլ կա, խղճում են իրենց, մեղք են ցավիս: Ու դա ծնշում էր նրան:

Այստեղ ունենք մեկ բարդ և մեկ պարզ նախադասություն, ըստ որում բարդ նախադասության բոլոր երկրորդականները միասին վերցրած հանդես են գալիս որպես մեկ նախընթաց անդամ: Վերջինս պարզ նախադասության մեջ փոխարինվել է դե դերանվանական միավորով: Սա հետաքրքրական է նաև նրանով, որ բարդ նախադասության կապակցված ընդարձակ անդամներին, այսինքն՝ ստորադասական միավորներին, փոխարինում է դերանվանական տարրը: Նման պարագայում արտահայտությունների միջև ստորադասական հարաբերություններն իրականացվում են ըստ իմաստի, իսկ շարահյուսական բաղադրիչների միջև ստորադասական կապը վերածվում է անաֆորականի:

Ակնառու է նաև, որ դե դերանունն այստեղ ունի շարահյուսական տարբեր տիպերի լեզվական արտահայտությունների նախընթաց անդամներ: Մի դեպքում այն փոխարինում է լռությունը, հարցանք, շարժումները անուններին, մյուսում՝ խղճում են, մեղք են ցավիս բառերին և այլն:

Շրջասության կապերի արտահայտման համար բերենք հետևյալ օրինակը.

1/ Տիկին Աննան գնաց խոհանոց:

2/ Հենց ներս մտավ՝ լվացքի քանձր գոլորշին համբուրեց նրա այտերը:

3/ Սաքոն լվացք էր անում: Բարկացած էր, բայց զուսպ: Միայն ջլապինդ մատները խլելով սպիտակեղենը՝ ուժով խեղդում էին տաշտի մեջ:

4/ Քաղքենի տիկինը կանգնեց, մտիկ տվեց ,,երեկվա,, ցյուղացի ցղիկան, որ գյուղից եկավ, ամեց, բարձրացավ և այսօր սկսել է հուզ տալ իրեն /Դ.Դեմիրճյան, Սաքոն, Հայկական նովելներ, էջ 445, Երևան, 1971/:

Ընայած այս հատվածը հարաբերականորեն ամբողջական է, բայց նրանում հանդես են եկել չորս առանձին պարբերություններ, որոնց միջև դրսևորվել են իմաստային տարբեր կապեր:

Այդտեղ հանդես եկած ՙՙԻԿԻՆ ԱՆՆՆ և ՍՔՔՈ նախընթաց անդամներն իրենց ՙՙՔաղքենի ԻԿԻՆ, ,,ԵրեկվաՃ_ԳյուղացիՃաղկիկ շրջասույթային փոխարինումներով օրգանական կապ են ստեղծում հաավածի իմաստային հանգուցակետերի միջև: Երեկվա գյուղացի աղջիկն իր հետանկախությունությամբ զայրույթ է պատճառում քաղքենի ԻԿԻՆՈՔԸ, որի ոտքերի տակ հողը լքրծուն է դարձել: Այս գլխավոր իմաստը, որ դրսևորվել է նաև այլ շրջասույթների միջոցով, ընդհանուր կապ է ստեղծում նշված տարբեր պարբերությունների միջև:

Ուշագրավ է չորրորդ պարբերության մեջ գլխավոր ու երկրորդական նախադասությունների միջև արտահայտված կապը: Այն դրսևորվել է ՈՐ հարաբերական դերանվամբ: Վերջինս իր մեջ պարունակում է իմաստի լրացուցիչ տարր և ձևված է երկակի նշանակությամբ. նախ, ինչպես հայտնի է, երկրորդական նախադասությունը կապում է գլխավորի հետ և երկրորդ՝ փոխարինում է ,,ԵրեկվաՃ_ԳյուղացիՃաղկիկ շրջասույթային նախընթաց անդամին:

Նախընթաց անդամի փոխարինում կարող է տեղի ունենալ, ինչպես նշեցինք, քառիմաստի ընդլայնմամբ: Այդ կապակցությամբ բերենք Հ. Թումանյանի ,,Երկու հայր,, փոքրիկ նովելը /կրճատումներով/.

,,1896-ի կոտորածի ժամեն էր: Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին: Նրանց մեջ էր ծերունի տեր Սարգիսը:

– ՀայրԻԿԸ աչը կուզեմ համբուրել, խնդրեց նա վեհարանում, ու ներս թողին:

– Բարով, տեր հայր, աչը մեկնեց ՀայրԻԿԸ. քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված:

.....

– Ես ոչինչ չեմ ուզում, ՀայրԻԿ, ես ... այնպես, եկել եմ... եկել եմ ՀայրԻԿԻՆ ասեմ... էլ ոչինչ չեմ ուզում...

.....

Երկուսն էլ լուռ էին:

– Քանի որդի կորցրիր, տեր Սարգիս, գլուխը վեր քաշեց կաթողիկոսը:

– Ամենքը միասին քսան, ՀայրԻԿ:

– Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես քսան հազար, պատասխանեց Հայրիկը. ում վիշտն է մեծ, տեր Սարգիս:

– ՀայրԻԿԻՆԸ:

– Դե եկ, տեր Սարգիս, մոտ եկ, աչդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ: Ասավ ու գլուխը խոնարհեց:

.....

Տեր Սարգիսի առջև խոնարհված էր հայոց Հայրենիքը:»

Նկատելի է, որ նովելի երկայնքով մեկ ծգվում է Հայրենիք բառը: Այն, որպես նախընթաց անդամ, հատուկ անունից, իմաստի լայնացմամբ, վերջում արդեն փոխարինվում, վեր է ածվում հասարակ անվան:

Տեքստի միավորների կապն այստեղ արտահայտվել է տարբեր միջոցներով. նախընթաց անդամի ծավալմամբ, հակադրությունների, բառիմաստի փոփոխության և նույնիսկ՝ չասվածի միջամտությամբ: Հիրավի, օգտագործված կախման կետերն ու բազմակետերը չարտահայտված ինֆորմացիայի իմաստային շղթաներ են, որ առատորեն ցրված են ամբողջ նովելում: Դրանք նպաստում են ստանալու նոր, լրացուցիչ ինֆորմացիա օբյեկտիվ իրականության իրադարձությունների, առարկաների, երևույթների ու հարաբերությունների վերաբերյալ:

Եզրակացնելով՝ կարելի է ասել, որ ժամանակակից հայերենի պարբերության սահմաններում /նաև նրանից դուրս/ նախընթաց անդամի ծավալման կոնկրետ ու հանգամանալի վերլուծությունը նպաստում է վեր հանելու նրանում հանդես եկող միավորների միջև արտահայտված կապի տեսակները: Վերջին հաշվով դա ծգտում է տեքստի վերաբերյալ ստեղծել ընդհանուր տեսություն: Ուրեմն՝ նախընթաց անդամի ծավալումը տեքստի յուրահատուկ օրինաչափություններից է, մեր կարծիքով՝ նրա բերականական կարգերից մեկը:

Ս.Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԻՆՉՈՒ-ՈՐ ՀԱՐՑՄԱՆ ՀՆՉԵՐԱՆԳԻ ՋՈՒԳԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

Տարբեր լեզուների քերականական, այլև մյուս մակարդակների հա-մակարգերի զուգադրական քննությունը շատ բանով է հարստացնում լեզվի մասին մեր ունեցած իմացությունը: Այս տեսակետից հայոց լեզվի գրական երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահա-յերենի լեզվական զանազան համակարգերի զուգադրությունը նույնպես շատ կարևոր է՝ հատկապես հայերենի ընդհանրական ուսումնասիրության համար: Այդ կարևորությունն առանձնապես նշանակալից է դառնում, երբ միմյանց հետ զուգադրում ենք մեր լեզվի երկու տարբերակների հնչերանգները:

Արևելահայ միջավայրում արևմտահայ գրական լեզվով արտասանված ցանկացած խոսք իսկույն տարբերակվում է. արևելահայն արագ է կողմ-նորոշվում, որ խոսողն արևմտահայ գրական լեզվով հաղորդակցվող հան-րության ներկայացուցիչ է: Բնականաբար հետաքրքիր է պարզել՝ ար-դյո՞ք այդ տարբերակվածությունը բացատրվում է երկու տարբերակների միայն հնչյունական, բառային, ձևաբանական ու շարահյուսական տար-բերություններով, թե՞ այն պայմանավորված է նաև հնչերանգով, այ-սինքն՝ ձայնի տոնով, ուժգնությամբ և տևողությամբ:

Հայտնի է, որ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների հըն-չյունական համակարգերը տարբեր են. արևելահայերենը ներկայանում է եռաշարք բաղաձայնական համակարգով, իսկ արևմտահայերենը՝ երկ-շարք, որոնց ներսում միաժամանակ տեղի է ունենում բաղաձայնական տեղաշարժ՝ արևելահայերենի ձայնեղները արևմտահայերենում խլանում են, իսկ խուլերը՝ ձայնեղանում. երևույթ, որն արդեն իսկ զգալի զանազանություն է առաջացնում երկու լեզուների արտասանություննե-րում: Կան նաև բառային տարբերություններ՝ <u>սա</u>–<u>ս</u>–<u>այս</u>, <u>ընդհանր</u>–<u>ս</u>–<u>ընդհանուր</u>, <u>գնալ</u>–<u>ս</u>–<u>երթալ</u> և այլն, ձևաբանական տարբերություններ՝ սեռական և բացառական հոլովների տարբեր կազմությունները <u>ի</u>–<u>ոյ</u> և <u>ից</u>–<u>են</u> հոլո-վիչների միջոցով, սահմանական ներկայի տարաբնույթ կազմություն-

ները և այլն:

Ասենք նաև, որ ինչու-որ կամ դերանվանական հարցումը երկու տարբերակներում ունի գործառական, կառուցվածքային և բաշխական տարբերություններ: Մի շարք հարցական դերանունները, որոնք գործառում են արևելահայերենում, արևմտահայերենում բացակայում են կամ փոխարինվում ուրիշներով: Արևելահայերենում նույն գործառությամբ հանդես են գալիս և՛ ինչքա՞ն, և՛ որքա՞ն հարցական դերանունները, իսկ արևմտահայերենում՝ միայն որքա՞ն-ը, արևելահայ ու՞մ-ի դիմաց արևմտահայերենը ունի որու՞ն դերանունը: Եթե արևելահայերենում տեղ ցույց տալու նպատակով գործառում են և՛ ու՞ր-ը, և՛ որտե՞ղ-ը, ընդ որում միմյանց նկատմամբ զանվելով լրացական բաշխական հարաբերության մեջ, այսինքն՝ շարժում և ուղղվածություն ցույց տվող բայերի հետ գործածվում է միայն ու՞ր-ը /Ու՞ր ես գնում/, իսկ կայուն տեղային վիճակ ցույց տվող բայերի հետ՝ որտե՞ղ-ը /Որտե՞ղ ես ապրում/, ապա արևմտահայերենում երկու դեպքում էլ հանդես է գալիս ու՞ր-ը /Ու՞ր կերթաս, Ու՞ր կ՚ապրիս/: Շմոռանանք, որ արևմտահայ խոսակցական լեզվում որտե՞ղ իմաստով կարող է գործածվել նաև ուրտե՞ղ դերանունը /Ուրտե՞ղ կ՚ապրիս/: Արևելահայերենում գործառում են նաև որերորդ և քանի՞երորդ դերանունները, արևմտահայերենում՝ միայն քանի՞երորդ-ը, սակավ դեպքերում նաև ո՞րերորդ-ը. արևելահայերենում՝ քանի՞սը և քանի՞ հատ, արևմտահայերենում՝ միայն քանի՞ հատ-ը. արևելահայերենում՝ ինչու՞մ և ինչի՞ մեջ, արևմտահայերենում՝ միայն ինչի՞ մեջ-ը: Վերջիններիս մեջ նույնպես առկա է որոշակի բաշխական հարաբերություն: Եվ վերջապես, եթե արևելահայ և արևմտահայ գրական լեզուները դիտենք որպես մեկ ընդհանուր լեզվական կառուցվածք, ապա ու՞մ-ը և որու՞ն-ը նույնպես միմյանց նկատմամբ կզտնվեն լրացական բաշխական հարաբերության մեջ՝ արևելահայերենում գործառում է միայն ու՞մ-ը, իսկ արևմտահայերենում՝ միայն որու՞ն-ը: Մյուս հարցական դերանունների մեջ նույնպես գործում է որոշակի բաշխական հարաբերություն, որը մենք այստեղ չենք դիտարկում:

Ինչու՞-ը հարցման շարադասությունը նույնպես երկու լեզուներում զգալիորեն տարբեր է: Արևելահայերենում դերբայով և օժանդակ բայով արտահայտված ստորոգյալով նախադասության մեջ հանգույցը դրվում է անմիջապես հարցական դերանունից հետո /Ո՞վ է բերել/, իսկ արևմտահայերենում այն անպայման դրվում է դերբայից հետո /Ո՞վ բերած է/: Ինչու՞-ը հարցման մյուս կառուցվածքներում համարյա շարադասական տարբերություններ չեն նկատվում: Եթե նախադասության ստորոգյալը բաղադրյալ է, արևմտահայերենի շարադասությունը հիմնա-

կանում նման է արևելահայերենին /ի՞նչ է ծրագիրդ, ի՞նչ զույնի է ծաղիկը և այլն/:

Հնչերանգային զուգաղրություն կատարելու նպատակով ծայնագրվել են 4-ական տղամարդ հաղորդավարներ: Արևելահայերենի հնչերանգն ուսումնասիրելու համար ծայնագրվել են Երևանում ծնված, միջնակարգ և բարձրագույն կրթություն ստացած 25-35 տարեկան երիտասարդներ, արևմտահայերենինը՝ Բեյրութում ծնված, հայերենով տարրական և միջնակարգ կրթություն ստացած 18-20 տարեկան հայ երիտասարդներ,որոնք բոլորն էլ տանը և դրսում /հայկական միջավայրում/ հաղորդակցվել են հայերենով: Ձայնագրման պահին Բեյրութահայերը սովորում էին Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններին կից նախապատրաստական Ֆակուլտետում: Սույն զեկուցման նյութ է ծառայել երկուական հաղորդավարների զրանցված խոսքը:

Ուսումնասիրվել է ինչու-ը հարցման 5 ենթատեսակ, որոնք պայմանականորեն անվանում ենք ինչու-ը-1, ինչու-ը-2, ինչու-ը-3, ինչու-ը-4 և ինչու-ը-5: ինչու-ը-1 հարցման հարցական դերանունը զանվում է հնչաղասության սկզբում, ինչու-ը-2-ինը՝ կենտրոնում, ինչու-ը-3-ինը՝ նախավերջին՝ հանգույցին նախորդող դիրքում: ինչու-ը-4-ը առանձին, միայն հարցական դերանուններով կազմված հարցումն է /Ե՞րբ, Որտե՞ղ և այլն/: ինչու-ը-5-ը, այսպես ասած, զարմացական, անհավատալի հարցումն է, որը մյուսներից տարբերվում է միայն հնչերանգով և օգտագործվում է այսպիսի իրադրություններում՝ - Ոչ ավել, ոչ պակաս քսան տարեկան եմ: -Քանի՞ տարեկան ե՞ս:

ինչու-ը-1-ից, որպես առավել տիպականից, ծայնագրել ենք 15 հնչաղասություն, մյուս ենթատեսակներից՝ 5-10 օրինակ: Աշխատել ենք ընտրել նաև այնպիսի հնչաղասություններ, որոնք արևելահայերենում և արևմտահայերենում ունենան միևնույն հնչյունական տեսքը: Ձայնագրությունները կատարվել են Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հնչյունաբանական փորձարարանում: Հնչագրիչ /ինտոնոգրաֆ/ կոչվող սարքի օգնությամբ ստացել և ուսումնասիրել ենք 90 հնչագրակեր /ինտոնոգրամ/:

Փորձառական ուսումնասիրության ընթացքում կատարվել է նաև լսողական վերլուծություն: Ուսնկնդիրների առջև դրվել են հետևյալ խնդիրները. 1/ տվյալ հնչաղասությունը միշտ է արտասանված, թե ոչ, 2/ ինչպիսին է հիմնական տոնի շարժման ուղղությունը, 3/ հարցաշեշտը ո՞ր վանկի վրա է դրվում:

Ջուգաղրական քննության ենթարկելու նպատակով ուսումնասիրվել են հետևյալ երկրորդական ծայնաբանական հատկանիշները.

1/ հիմնական տոնի շարժման ուղղությունը,
2/ հնչաղասության համախականության ծայնածավալը,
3/ միջուկի համախականության աճման ծայնածավալը,
4/ եամիջուկային վանկի համախականության նվազման ծայնածավալը,
5/ հնչաղասության վերջին վանկի համախականության ծայնածավալը,
6/ հնչաղասության ուժգնության ծայնածավալը և այլն:

Ինչու-որ-1 հարցում - ինչպես ասվեց, այս հարցման հարցական դերանունը գանվում է հնչաղասության սկզբում /Քանի՞ տարեկան ես/: Այդ իսկ պատճառով էլ արևելահայերենում տոնը հենց սկզբից միանգամից սկսում է բարձրանալ և միջուկից հետո սկսում է միանգամից նվազել. եամիջուկային վանկում արագ է նվազում, իսկ հետո՝ ավելի դանդաղ մինչև հնչաղասության ավարտը: Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում հնչաղասության վերջին վանկում տոնը բարձրացող է, ուստի և հիմնական տոնի շարժման ուղղությունը արևելահայերենում մեծամասամբ բարձրացող-իջնող է, իսկ արևմտահայերենում՝ բարձրացող-իջնող-բարձրացող: Պայմանավորվենք, որ 1-ին և 2-րդ հաղորդավար ասելով՝ հասկանում ենք, որ խոսքը գնում է արևելահայերենի մասին, իսկ 3-րդ և 4-րդ՝ արևմտահայերենի մասին:

Թվում է, որ մեր լեզվի երկու զրական տարբերակների հնչերանգների տարբերակման գործում էական դեր է կատարում նաև հնչաղասության համախականության ծայնածավալը: Մեր ուսումնասիրած օրինակներում 1-ին և 2-րդ հաղորդավարների դեպքում հնչաղասության համախականության ծայնածավալը փոխվում է 14-16 կիսատոնի սահմաններում, իսկ 3-րդի և 4-րդի դեպքում՝ 9-11 կիսատոնի: Վիճակն այսպիսին է հատկապես քիչ վանկեր ունեցող հնչաղասություններում, ինչպես՝ ,,Ուր գնաց,, , ,,Ո՞վ տարավ,, և այլն, որովհետև արևմտահայերենում տոնի վերջում ամելու պատճառով համախականությունը իր նվազման վերջնակետին չի հասնում: Ավելի երկար հնչաղասությունների դեպքում այս հարաբերությունը հաճախ փոխվում է: Այսպես, ,,Ի՞նչ գիրք կարդաց,, հնչաղասության դեպքում 3-րդ հաղորդավարի համախականության ծայնածավալը հասնում է մինչև 19 կիսատոնի, իսկ ,,Ինչպե՞ս անցար գեղը,, հնչաղասության դեպքում արդեն 2-րդ հաղորդավարի հնչաղասության համախականության ծայնածավալն է հասնում 20 կիսատոնի:

Միջուկային վանկի համախականության աճման ծայնածավալը մեր ուսումնասիրած օրինակներում փոխվում է հիմնականում 5-10 կիսատոնի սահմաններում: Այն ավելի հաճախ լինում է 6-9 կիսատոն: Եամիջուկային վանկի համախականության նվազման ծայնածավալը հիմնականում

փոխվում է 8-13 կիսատոնի սահմաններում: Սահմանային այս հարաբերությունը նույնպես երբեմն կարող է խախտվել: Այսպիսի խախտում է առաջացել 2-րդ հաղորդավարի դեպքում ,,Ինչպե՞ս անցար գետը,, հարցման արտասանության ժամանակ, երբ եամիջուկային վանկի հաճախականության նվազման ծայնածավալը հասել էր մինչև 16 կիսատոնի:

Թերևս արևելահայերենի և արևմտահայերենի ինչուը հարցումների հնչերանգների տարբերակման գործում ամենավճռական դերը պատկանում է հնչաղասության վերջին վանկի հաճախականության ծայնածավալին: Արևելահայերենում այն նվազող է /1-3 կիսատոն/ կամ հավասար /0/, իսկ արևմտահայերենում՝ աճող է /5-9 կիսատոն/: Երբեմն այն կարող է ավելի աճել և հասնել 11 կիսատոնի, ինչպիսին առկա է 4-րդ հաղորդավարի դեպքում՝ ,,Ինչպե՞ս անցար գետը,, և ,,Որքա՞ն ժամանակ պիտի մնաս Ֆրանսա,, հարցումների արտասանության ժամանակ:

Հնչաղասության առավելագույն ուժգնությունը երկու տարբերակներում էլ փոփոխվում է 32-35 դր սահմաններում: Այն կարող է տեղայնանալ ամենատարբեր վանկերում, սակայն ավելի հաճախ տեղայնանում է հարցաշեշտ կրող վանկում կամ նրա մոտակայքում՝ կախված համապատասխան ծայնավորների հզորությունից և բաշխվածությունից: Երկվանկ բառերի դեպքում այն տեղայնանում է առաջին վանկում, երբ այդ վանկի ծայնավորը հզորությամբ մեծ է շեշտված վանկի ծայնավորից կամ էլ ունի միևնույն հզորությունը: Այն տեղայնանում է շեշտված վանկում, երբ շեշտված վանկի ծայնավորը հզորությամբ մեծ է նախորդող վանկի ծայնավորից: Եռավանկ բառերի դեպքում տեղայնանում է դարձյալ որոշակի օրինաչափությամբ՝ նորից ծայնավորների հզորությունից և բաշխվածությունից կախված:

Ուժգնության ծայնածավալը էական դեր չի կատարում նրանց հնչերանգների տարբերակման գործում և փոփոխվում է հիմնականում 4-10դր սահմաններում: Առավել կարևոր է վերջին առավելագույն ուժգնությունը և հնչաղասության նվազագույն ուժգնության տեղայնացումը. այն էլ բազմավանկ բառերի առկայության դեպքում:

Տևողության պարամետրերը մեզ առանձնապես ոչինչ չեն ասում. ոչ հնչաղասության ողջ տևողությանը, ոչ վերջին վանկինը, ոչ էլ միջուկային վանկինը: Բերենք մեր ուսումնասիրած հարցումներից մեկի ողջ տևողության թվային արժեքները, որից իրոք պարզ կլինի, որ տևողությունը արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգի տարբերակման գործում դեր չի կատարում: ,,Ու՞ր գնաց,, հարցման դեպքում 1-ին հաղորդավարի ողջ հնչաղասության տևողությունը 670 մվրկ է, 2-րդինը՝ 630: 3-րդինը՝ 570, իսկ 4-րդինը՝ 680: Դժվար չէ նկատել, որ

ние обратнонаправленного порядка слов в армянском языке, принадлежащем к индоевропейской семье языков, и в частности порядок SOV ? Факты истории языка изучены недостаточно. Синтаксис надписей еще не изучен подробно[18]. В самых ранних текстах (УШ--IX вв. до н.э.) - образцах эпического армянского /վիպասանական հայերեն/ в конструкциях с согласованным и несогласованным определением, как устанавливает Кусикьян, на одинаковых правах существуют и пре- и постпозиция определения[19], ср.: NA ծովն ծիրանի, տեղ ոսկի,

но AN զկարմրիկն եղեգնիկ, խարտեաշ զառանեկիկ,

GN ի Տուհաց զաւառէն, ի սարկաց կարգի,

но NG զմէջք փափուկ աւրիորդին, ի տամարին վիշապաց:

Однако в поэтических текстах порядок слов может быть обусловлен экспрессией, целью ее достижения.

Обратимся к языку авторов У века, языку, порядок слов в котором, по мнению Мейе, свободен, столь свободен, что воспроизводит при переводе почти без изменений порядок слов греческого оригинала[20]. Уже перечень заголовков произведений свидетельствует о том, что в языке реализовались схемы NG и NA : Եղն աղանդոց /Եզնիկ/, Վարք Մաշտոցի /Կորիւն/, Պատմութիւն Հայոց /Բուզանդ/:

По мнению Кусикьяна, "постановка определения до или после определяемого в древнеармянском языке имеет стилистическое значение":[21]

Ի Տարաւնեական զաւառէն, ի Հացեկաց գեղջէ /Կորիւն/, զանպակաս իմաստութիւնն, զամենայնգէտ գիտութիւնն /Եզնիկ/,
но: զաւձ յաղթանդամ, զգազան ինչ ծովածին /Եզնիկ/:

Преимущество в употреблении препозитивное определение (как A, так и G) получило после XII века. Если к этому добавить, что послелоги, имевшие окказиональное употребление в системе грабара, распространились лишь в среднеармянском языке, то станет ясно, что фиксированный порядок слов в составляющих GN , AN , NPo есть результат развития языка в период средневековья.

Что касается порядка SOV и SVO , то ознакомление с особенностями текстов У века (в интересующем нас аспекте) приводит к выводу: имели место оба типа основного порядка слов и даже все три типа: VSO , SVO, SOV, что подтверждается исследованиями А.Саркисяна и С.Айрапетяна[22].

Статистическое обследование текстов произведений У века, выполненное С.Айрапетяном, призвано, по его мнению, показать, что: а) порядок OV реализуется в текстах У века; б) при этом преобладающим образом реализуется в непереводных произведениях, у авторов, чутко реагирующих на живую народную речь и не принадлежащих к грекофильской школе (Корюн, Бюзанд). Однако при обследовании случаев реализации порядка OV , следует первоначально рассмотреть лишь простые предложения (т.к. в сложных предложениях и в больших периодах препозиция O по отношению к глаголу может быть обусловлена их структурой), затем следует исключить случаи препозиции O, связанные с его анафорической функцией (типа զայն լուեալ), и отдельно рассмотреть случаи препозиции O в устойчивых выражениях.

Так, ознакомление с отрывком из произведения Корюна "Վարք Մաշտոցի "[23] позволяет обнаружить значительное число устойчивых выражений (составных глаголов и фразеологизмов) с порядком OV :

ժեռն արկանէր
անուն ծանաւչէր
հրաման առ յր
ողջոյնն առեալ
հրաման առեալ
զաւուրս սահմանի ուրախութեամբ անցուցանէին:

Наличие устойчивых выражений со структурой OV в текстах У века позволяет предположить, что их возникновение обусловлено существованием порядка OV в живой народной речи и ранее У в., почему и порядок OV в современном армянском языке можно охарактеризовать как унаследованный из древности и поддержанный воздействием ареала в средневековье.

В заключение уместно привести следующее высказывание Кусикьяна: "Развиваясь в очень сложных общественно-исторических условиях и являясь одиноким ответвлением индоевропейского праязыка, армянский язык выработал особые синтаксические качества, представляющие большой интерес в аспекте сравнительного синтаксиса индоевропейских языков"[24].

ПРИМЕЧАНИЯ

I. См.: Сб. "Сопоставительный анализ русского и армянского

языков", выпуск 2, Изд. АН Арм.ССР, Ереван, 1981, стр. 127-187.

2. Тенденция к реализации обратного, или центростремительного, по Теньеру, порядка слов может проявляться иным, специфическим для армянского языка, образом, напр.: а) в стремлении объекта в роли основы оказаться в контактной препозиции к глаголу, в связи с чем для О становится предпочтительной роль то интраядерной, то самостоятельной основы - при нескольких возможностях (43 примера), ср.:

1. Էյլերին հեռանալով, այդ սահմանը նշանակում են ե տառով:
2. Որոշ դեպքերում հնարավոր է խնդիրը հանգեցնել անիշական ինտեգրման բանաձևին:

б) в схеме расположения актантов при многоактантном предикате: два актанта слева, один - справа.

3. См.: И.И.Ревзин. К общесемиотическому истолкованию трех постулатов Проппа. Сб."Типологические исследования по фольклору", "Наука", М., 1975, стр. 78.
4. Ср.: "Глагольное предложение должно рассматриваться как такое расширение именного предложения, при котором к предикации как утверждению вневременной связи двух признаков добавляется номинация способа бытия (это собственное содержание глагола как члена глагольного номинативного класса) и категория времени (это собственное содержание одной из категорий аппарата локации)". Ю.С.Степанов. Основы общего языкознания, М., 1975, с. 135.
5. Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, ,,Միտք,, հրատ., 1965, стр. 533.
6. См.: О.П.Лаптева."Русский разговорный синтаксис. "Наука", М., 1976, стр. 183-192.
7. См.: П.Адамец. Порядок слов в современном русском языке. Прага, 1966, стр. 71,72; см. также: О.Б.Сиротинина. "Современная разговорная речь и ее особенности". М., "Просвещение", 1974, стр. 130.
8. Примеры взяты из указ. выше соч. П.Адамца и О.Б.Сиротининой.
9. См.: Т.М.Николаева. Акцентно-просодические средства выражения категории определенности-неопределенности. В сб. "Категория определенности-неопределенности в славянских и бал-

канских языках". М., 1979, стр. 119-174.

10. См.: Գ.Բ.Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, ,,Միտք,, հրատարակչություն, 1964, стр. 66,70.

11. См.: Մ.Աբեղյան, Указ. соч., стр. 533,534. (Книга, впервые опубликованная в 1931 г., была написана в 1922-23 гг. - см.: Предисловие к указ. соч., стр. I).

12. Մ.Աբեղյան, Указ. соч., стр. 534,535.

13. Ср.: с русским языком, где указанная аналогия имеет место - при ином качестве рассматриваемых явлений: принцип стихосложения - силлабо-тонический, ритмическая организация РР основана на чередовании ударных и безударных звеньев (см. О.А.Лаптева. Русский разговорный синтаксис,"Наука",М.,1976, стр.194); соответствующие особенности фонетики и грамматики русского языка,обусловившие эту аналогию: резкое различие между ударными и безударными гласными и редукция последних - в определенных случаях, подвижное ударение в слове, нежелательность междуударного интервала более чем в 3 слога, наличие флексий у прилагательных и причастий, разрывные составляющие и связанная с их наличием возможность возникновения так называемой акцентной рамки и т.п.

14. См.: Дж.Гринберг. Некоторые грамматические универсалии, преимущественно касающиеся порядка значимых элементов. В сб.: "Новое в лингвистике", вып. 5, изд. "Прогресс", стр. 157.

15. См.: Дж.Гринберг. Указ. соч., стр. 144.

16. См.: Ш.Балли. Общая лингвистика и вопросы французского языка. ИЛ, М., 1955, стр. 227.

17. См.: Иванов Вяч.Вс. - Winfred Lehmann. Proto-Indoeuropean Syntax. Известия АН СССР, серия литературы и языка, 1977, № 1, стр. 362-365;
Нерознак В.П. Индоевропейское языкознание: новые аспекты. Известия АН СССР, серия литературы и языка, 1980, № 3, стр. 230-241.

18. Можно привести следующее высказывание по поводу позиции глагола в текстах надписей: In der Inschriftsammlung überwiegt bei weitem die MST über die EST (MST - центральная позиция, EST - конечная позиция глагола в предложении). См.: W.Dressler. Ein textsyntaktische Regel für indo-

germanische Wortstellung. Zeitschrift für vergleichende Sprachforschung auf der Gebiete der Indo-germ. Sprachen. Göttingen, 1969, N 1,

19. И.К.Кусикьян. Очерки исторического синтаксиса армянского языка. Изд-во АН СССР, М., 1959, стр. 19.
20. См.: A. Meillet. Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913, стр. 120,122; цит. по W. Dressler. Указ.соч., стр.
21. И.К.Кусикьян. Цит. соч., стр. 68.
22. Ա.Ե.Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, Հայոց լեզվի կառուցվածքը, Ереван, 1975, стр. 346,347. Ս.Հայրապետյան, Ուղիղ խնդրի շարադասությունը դասական գրաբարում, "Вестник общественных наук", Ереван, 1981, № 9.
23. Կորիւն, Վարք Մաշտոցի /հատվածներ/. В кн.: Ա.Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ереван, 1976, стр. 287-290.
24. См.: И.К.Кусикьян. Указ. соч., стр. 153.

Ն.Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ժամանակակից գրական արևելահայերենի ձևավորման ժամանակաշրջանից սկսած ինչպես նրա ամբողջ համակարգը, այնպես էլ քերականական կառուցվածքը ենթարկվել է որոշակի փոփոխությունների:

Ընդունված է ազգային գրական արևելահայերենի զարգացման ընթացքը բաժանել երկու ենթաշրջանի՝ XIX դարի կեսերից մինչև XX դարի 20-ական թվականները ընկած ժամանակաշրջան և 20-ական թվականներից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջան /սովետական կամ արդի շրջան/:

Եթե բառապաշարի զարգացման ընագավառում այդ ենթաշրջանները կարելի է հստակորեն սահմանազատել, ապա նույնը չի կարելի անել քերականական կառուցվածքի զարգացման ընագավառում: Եվ դա բնական է: Հայտնի իրողություն է, որ վերջինս /քերականական կառուցվածքը/ լեզվի համակարգի այն կողմն է, որը համեմատաբար դանդաղ է զարգանում: Նրանում կատարված փոփոխությունները, ի տարբերություն բառապանի, կախված չեն արտալեզվական գործոններից, մասնավորապես հասարակական-անտեսական փոփոխություններից: Քերականական կառուցվածքի զարգացումը կատարվում է հիմնականում ներքին օրինաչափությունների և արտաքին ազդեցությունների քիչ է ենթարկվում: Եթե կարելի է ցույց տալ, ասենք, նոր բառերի առաջացման, առաջին գործածության ժամանակը, նույնիսկ այն անհատին, որն ստեղծել է տվյալ բառը, ապա որոշել քերականական որևէ իրակության առաջացման որոշակի ժամանակը գրեթե անհնար է: Այս առումով չի կարելի խիստ սահմանազիծ դնել ժամանակակից գրական արևելահայերենի քերականական կառուցվածքի զարգացման հիշյալ ենթաշրջանների միջև: Այդ իսկ պատճառով մենք ընդհանուր գծերով քննության ենք առնում ժամանակակից գրական արևելահայերենի քերականական կառուցվածքի պատմական զարգացման ընթացքը՝ սկսած XIX դարի կեսերից մինչև մեր օրերը: Իհարկե, միաժամանակ ընդգծում ենք, որ սովետական շրջանում հայերենի՝ պետական լեզվի

աստիճանի բարձրանալը և դրա հետևանքով նրա գործառույթյան շրջանակների ընդարձակումը, ինչպես նաև լեզվի նկատմամբ պետական հսկողությունն ու պետական հոգատարությունը չէին կարող էքան չհանդիսանալ ու չնպաստել նաև քերականական կառուցվածքի զարգացմանն ու կատարելագործմանը, գրական նորմաների մշակմանը, հստակացմանն ու կայունացմանը:

Ժամանակի և տեղի սղության պատճառով մենք ընդհանուր գծերով կներկայացնենք միայն այն փոփոխություններն ու միտումները, որոնք ավելի ընդհանուր, համակարգային բնույթ են կրում և որոնցով հիմնականում ընորոշվում է ժամանակակից արևելահայ գրական լեզվի զարգացումը՝ անտեսելով առանձին, մասնակի ընդգրկում ունեցող փոփոխությունները, որպիսիք նույնպես բավականին մեծ թիվ են կազմում:

Հարմրանալով Արարատյան բարբառի հիման վրա, ժառանգելով գրաբարի շատ քերականական իրակություններ և ճևավորվելով բազմաթիվ բարբառների առկայության պայմաններում՝ արևելահայ գրական լեզուն իր կազմավորման շրջանում ընականաբար պետք է լիներ անմիօրինակ, ուներ բազմաթիվ զուգաձևություններ, ուներ քերականական իրակությունների կանոնարկման, նորմաների մշակման, միօրինակացման կարիք, որպիսի ուղղությամբ էլ հենց ընթացել է նրա զարգացումը: Այսինքն՝ նրանում կատարված փոփոխությունները առաջին հերթին միօրինակացման, կանոնարկման միտումի արդյունքն են:

Ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի զարգացման ընթացքը և նրանում կատարված փոփոխությունները դիտարկում ենք և՛ գրաբարյան հուշարձանների պատմական ու համեմատական քննությամբ, և՛ առանձին շրջանների լեզվական պատկերը արժանագրող քերականական աշխատությունների համեմատական քննությամբ /Ստ. Պալասանյան, Մ. Աբեղյան, Ա. Ղարիբյան, Գ. Սևակ, Է. Աղայան և այլն/:

Արդ, ինչպիսիք են, կամ որոնք են այդ փոփոխությունները:

I. Ժամանակակից հայերենի ճևաբանական համակարգի զարգացումը ընթացել է լեզվի ճևաբանական միջոցների միօրինակացման, դրանց գործառույթյան սահմանների ճշտորոշման, իմաստների հստակացման ուղղությամբ: Այսպես.

1. Գոյականների համակարգում կատարվել են հետևյալ հիմնական տեղաշարժերը.

ա/ XIX դարի կեսերից սկսեց ճշտվել և որոշակի դառնալ հոգնակիական ընդ_նեը մասնիկների գործառույթյան շրջանակները, որոնք /այդ մասնիկները/ հաստատվեցին որպես գոյականների հոգնակի ճևերը կազմելու հիմնական միջոցներ: Ը հոգնակերտ մասնիկը, որը գործա-

ոում էր անցյալ դարի գրական լեզվում, աստիճանաբար սկսեց իր տեղը զիջել նը̲ը̲/ը̲ը/-ին և ի վերջո դադարեց գրական լեզվում որպես այդպիսին գործածվելուց: Երե մինչև 20-ական թվականները ը̲ղ̲ը̲ը̲ք̲, հ̲ո̲գ̲ը̲ը̲, ֆ̲ա̲տ̲ա̲ն̲ը̲ք̲, ա̲ն̲գ̲լ̲ի̲ա̲ց̲ը̲ը̲ կազմություններն շարունակում էին գործածվել ը̲ղ̲ը̲ն̲ն̲ը̲ը̲, հ̲ո̲գ̲ի̲ն̲ն̲ը̲ը̲, ա̲ն̲գ̲լ̲ի̲ա̲ց̲ի̲ն̲ն̲ը̲ը̲ ձևերին զուգահեռ և դեռևս գրական նորմա էին, ապա լեզվի զարգացման վերջին տասնամյակներում վերջնականապես դուրս եկան գրական լեզվից՝ մնալով որպես բարբառների, մասամբ նաև խոսակցական լեզվի տարրեր: Գրավոր խոսքում ը̲-ն այժմ հոգնակերտ իմաստով գործածվում է միայն գեղարվեստական գրականության լեզվում՝ որպես խոսքի ոճավորման միջոց, ինչպես նաև եզակի կազմություններում /ի̲ն̲չ̲ա̲ի̲ս̲ի̲ը̲ը̲, ը̲ղ̲ա̲ի̲ս̲ի̲ը̲ը̲/: Իսկ շատ կազմություններում այն թեև պահպանվել է, սակայն ժեռը է բերել ածանցական արժեքը, այսպես՝ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին տ̲ա̲ը̲ը̲ք̲, շ̲ը̲ջ̲ա̲կ̲ա̲յ̲ք̲, ա̲ւ̲ը̲ք̲ և այլ ձևեր դեռևս հոգնակի էին կամ գիտակցվում էին որպես այդպիսիք /Տ̲ա̲ը̲ի̲ը̲ը̲ մոտեցել էին 50-ին /ր/, Շ̲ը̲ջ̲ա̲կ̲ա̲յ̲ք̲ը̲ ածակված էին մ̲ի̲ւ̲ք̲յան մեջ /ր/, Ա̲ւ̲ի̲ը̲ը̲ կայտառ գնում են, գալիս /հհ/, սակայն այժմ դրանք դիտվում են **զուտ իրրև եզակի ձևեր:**

Գրական լեզվից դուրս եկան նաև XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության լեզվում հանդիպող ե̲ը̲ը̲ և ո̲ւ̲ն̲ը̲ հոգնակերտները, որոնք ևս իրենց տեղը զիջեցին ն̲ը̲ը̲-ին՝ ա̲ղ̲ջ̲ի̲կ̲ն̲ը̲ը̲-ա̲ղ̲ջ̲ի̲կ̲ն̲ն̲ը̲ը̲, տ̲ղ̲ը̲ը̲ը̲-տ̲ղ̲ա̲ն̲ն̲ը̲ը̲ /ա̲ղ̲ջ̲կ̲ն̲ը̲ը̲. և տ̲ղ̲ն̲ը̲ը̲ ձևերն այժմ հանդիպում են միայն գրական լեզվի խոսակցական տարրերակում, որպես կոչական արտահայտություններ/:

Ավարտին հասավ ո̲ւ̲ն̲ը̲ հոգնակերտի վերածումը ածանցի: Նրանով կազմություններն այժմ դիտվում են միայն որպես եզակի թվի ձևեր: Երե շ̲ը̲ն̲ո̲ւ̲ն̲ը̲ք̲, ա̲ը̲ց̲ո̲ւ̲ն̲ը̲ը̲, ծ̲ա̲ղ̲կ̲ո̲ւ̲ն̲ը̲ը̲, սկ̲ց̲ը̲ը̲ո̲ւ̲ն̲ը̲ը̲ ձևերն անցյալ դարի գրական լեզվում դեռևս գիտակցվում էին որպես հոգնակի ձևեր, ապա այժմ դրանք եզակի թվի ձևեր են և անհրաժեշտության դեպքում ստանում են ն̲ը̲ը̲ հոգնակերտ մասնիկը /շ̲ը̲ն̲ո̲ւ̲ն̲ք̲ն̲ը̲ը̲, ա̲ը̲ց̲ո̲ւ̲ն̲ք̲ն̲ը̲ը̲, սկ̲ը̲ց̲ը̲ո̲ւ̲ն̲ք̲ն̲ը̲ը̲/:

բ/ Ժամանակակից հայերենի գոյականների հոլովման համակարգի զարգացման ընդհանուր միտումը եղել է նմանակության հիման վրա հոլովական ձևերի միօրինակացումը, հստակացումը, կանոնավորումը, շեղումների, զուգաձևությունների թվի պակասումը, հոլովումների սահմանների պարզորոշումը՝ իմաստային և ձևական հատկանիշների հիման վրա: Գործառությունից դուրս եկավ զրաբարյան ը̲ հոլովումը, որը բավական տարածված էր XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին. ինչպես՝ ո̲ր̲ո̲վ̲ո̲ /մ./, ք̲ո̲ն̲, ը̲ա̲ր̲վ̲ո̲, ա̲մ̲ո̲ն̲ո̲, հ̲ա̲վ̲ա̲տ̲տ̲ո̲ /շ/, հա-

րավո /ՀՀ/, _մարդո_ /ՀՔ/, _մարդոց_ /ՎՏ/: Այժմ այդ հոլովման պատկանող գոյականների մի մասը ենթարկվում է _ի_ հոլովման, մի մասը՝ _ու_ հոլովման /մարդու, հավատի, հոգու, քնի, հարսի և այլն/: Հիշյալ հոլովումը պահպանվել է միայն _սեը_ բառի մեջ և մի քանի կայուն բառակապակցություններում /սգո միտինգ, պատվո պահակ, խնդրո առարկա, արտքո կարգի և այլն/:

Վերջնականապես ձևավորվեց _վա_ հոլովումը, որը XIX դարի կեսերին ավելի հաճախադեպ էր _վան_ զուգածևով /շաքաթվան, ամսվան, տարվան և այլն/: Որոշակի դարձավ նաև նրա գործառությունը որպես ժամանակ ցույց տվող բառերի դասանիշ:

Հոլովման համակարգում կատարված փոփոխությունները պայմանավորված են հիմնականում _ի_ հոլովման տարածմամբ: Դրանով է բացատրվում նաև զուգահեռ հոլովածևերի առկայությունը լեզվի զարգացման արդի փուլում: Զարմանալի չի լինի, եթե ասենք, որ բանավոր խոսքում զրեթե բոլոր գոյականները /բացառությամբ _ուրբաթ_-ով վերջացողների/ հնարավոր է հոլովել _ի_-ով /գինիի, ընկերի, ծյունի, քույրի և այլն/: Այդ զուգածևերից շատերը գրական նորմա չեն, սակայն դրանց մի մասը գործառում է նաև գրական լեզվի սահմաններում. այդպիսին են ժամանակ ցույց տվող բառերի հոլովումը նաև _ի_-ով /ամսվա-ամսի, օրվա-օրի, գիշերվա-գիշերի և այլն/, _ուշ_ ածանցով բայանունների զուգահեռ հոլովածևերը _ի_-ով /սպասումի-սպասման, կառուցումի-կառուցման, ծգտումի-ծգտման և այլն/: Զուգածևություններ հատկապես շատ են հանդիպում գործիական հոլովում. կառուցումով-կառուցմամբ, ծգտումով-ծգտմամբ, խոստումով-խոստմամբ և այլն: Սրանցից _ը_-ով ծևերն աստիճանաբար դուրս են գալիս գործածությունից՝ իրենց տեղը զիջելով _ով_-ով ծևերին /այսինքն՝ այստեղ ևս հաղթանակում է _ի_ հոլովումը/:

Լեզվի զարգացման վերջին տասնամյակներում նկատվում է ներգոյական հոլովի գործառության սահմանների ընդարձակում: Հատկապես պետք է նշել _ուրբաթ_ ածանցով թանձրացական նշանակությամբ գոյականների մի մասի՝ ներգոյական հոլովով գործածության տարածումը վերջին շրջանում. օրինակ՝ _շինարարությունում, նախագահությունում, կոլտնտեսություններում, տարածություններում_ և այլն:

գ/ Համակարգային բնույթ է կրում գոյականների հոլովման համակարգում հոլովածևերի հողառության սահմանափակման երևույթը: XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին որոշիչ հող կարող էին առնել ոչ միայն ուղղական, տրական և հայցական հոլովները, այլ նաև բացառականը, գործիականը և ներգոյականը: Շատ սովորական էին _պաը_-

տեցիցը, քակիցն, սըտուՄը, վզովը, ըուէաբուՄը, տնուՄը, բուունցքովը, դաշտովը և այլ ձևեր: Լեզվի զարգացման արդի շրջանում այս ձևերն արդեն դուրս են եկել գրական լեզվից, պահպանվել են միայն որպես բարբառային ու խոսակցական լեզվի տարրեր, այն էլ գործածվում են հիմնականում ստացական իմաստով /սրտումը-իր սրտում, գըրպանիցը-իր գրպանից, գլխովը-իր գլխով և այլն/:

դ/ Որոշակի համակարգային տեղաշարժ է կատարվել նաև դերանունների հոլովման համակարգում:

Հյուսիսափայլյան շրջանում խիստ տարածված սըրա, դըրա, նըրա, սըրաս, դըրաս, նըրաս, սըցանից, դըցանով ... ձևերն աստիճանաբար դուրս եկան լեզվից: Եթե այդ ձևերը XX դարասկզբին այս կամ այն չափով դեռևս հանդիպում էին /օրինակ՝ նորա-/ՀԲ/, նորան /ԿՏ/, դորա, նոցա /ՀՀ/, նորա, նոցա /ԵՀ//, ապա սովետական շրջանում դրանք իսպառ դուրս եկան գործածությունից՝ տեղը զիջելով սըրա, նըրա ... սըրանը, դըրանը ձևերին: Գործածությունից աստիճանաբար դուրս եկավ նաև յըրը ձևը, որն այժմ գործածվում է միայն ոճական նկատառումներով:

2. Առաջին էական փոփոխությունը, որ նկատվում է արևելահայ գրական լեզվի բայական համակարգի զարգացման մեջ, լծորդությունների մեջ տեղի ունեցած տեղաշարժն է: Հայ ազգային գրական լեզվի կազմավորման շրջանում՝ հյուսիսափայլյան շրջանում, արևելահայերենն ուներ 3 լծորդություն՝ ա, ե, ի:

ի լծորդության բայերը, որոնք հիմնականում չեզոք սեռի էին, համեմատաբար մեծ թիվ էին կազմում XIX դարի վերջերի գեղարվեստական գրականության մեջ /բնակիլ, ապրիլ, աշխատիլ, գրաղվիլ, հակառակիլ, սառչիլ, հապաղիլ, մեկնիլ և այլն/: Այս բայերն անցյալ կատարյալում ունեին կրավորակերպ խոնարհում՝ բնակեցայ, ապրեցայ, աշխատեցայ, գրաղեցայ: Սակայն հենց այս շրջանում /70-ական թվականներից/ ի խոնարհման ձևերի կողքին սկսում են գործածվել նաև այս բայերի ե լծորդով ձևերը, դա բնականաբար իր ազդեցությունն է թողնում նաև դրանց անցյալ կատարյալ ձևերի կազմության վրա, որոնք սկսում են հանդիպել նաև եցի ձևով /աշխատեցի, ապրեցի և այլն/: Վերջին ձևերը, որ արժանացրել է նաև Պալասանյանը 1894թ.՝ համարելով շեղումներ գրական լեզվից, հետագայում աստիճանաբար տարածվեցին՝ դուրս մղելով նախորդ ձևերը: Արդեն 1906թ. Մ. Աբեղյանն իր ,,Աշխարհաբարի քերականության,, մեջ նշում է, որ ի-ով ձևերը բարբառային են և գրական լեզվի մեջ սովորաբար փոխարինվում են ե-ով: ,,Աշխատիլ, խոսիլ, ծաղկիլ, մեռնիլ, հաջողիլ, համարվիլ և

այլ սովորաբար ասվում և ավելի գրվում են աշխատել, խոսել, ծաղկել, մնոնել, հաջողել,, /էջ 92/: Ի խոնարհման արտամղման պրոցեսը շարունակվեց մինչև 20-ական թվականները և իր վերջնական ավարտին հասավ սովետական շրջանում: Մինչ այդ, XX դարի առաջին տասնամյակներում, դեռևս նկատվում էին այդ բայերի զուգահեռ գործածության բազմաձիվ դեպքեր նույնիսկ նույն հեղինակի մոտ: Ահա մի քանի օրինակ՝ կարծես զատկի գառ լինես... կարծես աղջիկ լինես /Ն՝/, ուրբ չեք կարող ապրել... սովորեցեք ապրել /Ր/: Ապրե՛ք, իմ քաջեր /Մ՝ Մ/ ...կսաղչին և կկազմեն... /Ր/, մեկնեցավ /Ր/, ուներ /Ն՝/ և այլն:

Իհարկե, լեզվի զարգացման սովետական շրջանում ևս, հատկապես 20-30-ական թվականներին, երբեմն հանդիպում են Ի հնորդության առանձին գործածություններ: Այսպես, օրինակ, կկոշինք /Շիրազ/, ուներ_լինես_կորչին /Ե2/ և այլն:

Անցյալ դարի գրական լեզվում Ի հնորդը համեմատաբար ավելի լայն տարածում ուներ վ սեռածանցի հետ: Քանի որ աշխարհաբարում վերացել էր ներգործածև և կրավորածև խոնարհումների հակադրությունը որպես ներգործական ու կրավորական սեռերի դրսևորման ձևաբանական միջոց, այդ դերը վերջնականապես ստանձնեց վ սեռածանցը՝ նախապես Ի հնորդի հետ և համատեղելով նաև Ի խոնարհման ձևերը /պատժվիլ-պատժվեցա/, ապա ինքնուրույնաբար, երբ արդեն լեզվում ավելորդ դարձավ նույն քերականական իմաստն արտահայտելու համար միաժամանակ գործածել երկու ձևաբանական ցուցիչ: Մեկ որ Ի հնորդը դուրս մղվեց խոնարհման համակարգից որպես կրավորական սեռի ցուցիչ, նմանակության օրենքով այն սկսեց դուրս մղվել նաև այն դեպքում, երբ կրավորական սեռի իմաստ չէր արտահայտում /պատժվիլ-պատժվել և ապրիլ-ապրել/: Նմանակության օրենքով պետք է բացատրել նաև մի շարք հզոր բայերի Ել վերջավորության վերածվելը վել-ի և կրավորածև հզոր բայերի խմբի առաջացումը /բնակիլ-բնակվել, համարիլ-համարվել, հարձակիլ-հարձակվել, զանգատիլ-զանգատվել և այլն/:

Բայերի եղանակային ձևերի համակարգում կատարված փոփոխություններից այստեղ կնշենք միայն համակարգային բնույթ կրողները.

ա/ ինչպես ասվեց, Ի խոնարհման արտամղման հետ կապված և դրանով պայմանավորված՝ աստիճանաբար լեզվից դուրս մղվեցին անցյալ կատարյալ ժամանակի կրավորածև խոնարհման ձևերը /ա,ար,աւ/՝ մնալով միայն ըն_են_ն_ո ածանց ունեցող բայերի խոնարհման համակարգում:

Հյուսիսափայլյան շրջանում դեռևս գերակշռում էին ա_ալ_ալ ձևերը որպես կրավորական և Ի հնորդով հզոր բայերի ձևեր /պատահ-

յավ, թափառեցավ, շարժվեցավ, վճռվեցան, տեսնվեցան, աշխատեցավ, համարձակեցան, հանդիպեցավ և այլն/: XIX դարի վերջերից դրանց զուգահեռ հանդիպում են նաև ի, իը, ը ձևերը, սակայն դեռևս լայն տարածում ուներ կրավորական խոնարհումը /կանգնեցա, սկսվեցան, հայտնվեցան, բարեհամեցավ, կարմրեցավ /Ր/, խաղաղեցան, ուղղվեցավ, ցնցվեցավ, պատժվեցա, վրդովվեցա /Մուր.//:

XX դարի սկզբներից հարաբերակցությունը փոխվում է. գերակշռում է արդեն ներգործաձև խոնարհումը. այդպես է, օրինակ, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Հ. Քումանյանի ստեղծագործություններում. /լըսվեցին, ըաժանվեցին և այլն/: Սակայն այդ շրջանում հանդիպում են նաև ա,ա-ով ձևեր. օրինակ՝ ցանվեցա /ՆԴ/, խեղդվեցան /ՀՔ/, պայթեցա /ՀՀ/, վախճանվեցա, հանդգնեցավ, նստա,ա նստան, հանդիպեցա /Իս./: Կրավորաձև խոնարհման արտամղման գործընթացը իր ավարտին հասավ 20-ական թվականներին: Դրանից հետո հանդիպող հատուկենտ ձևերը արդեն դիտվում են որպես շեղումներ գրական նորմայից և հնաբանություններ են կամ բարբառների ու արևմտահայերենի ազդեցություն:

Տեղաշարժ կատարվեց նաև պատճառական բայերի անցյալ կատարյալի կազմության մեջ: Եթե հյուսիսափայլյան շրջանում դրանց անցյալի հիմքը կազմվում էր հիմնականում /ց/ուց-ով՝ ամրացուց, շտապեցուց, չքացուց, տխուժեցուցին և այլն, ապա աստիճանաբար դրանց զուգահեռ և դրանց փոխարեն սկսում է գործածվել ցը: Ստ. Պալասանյանն արդեն արժանագրում է ցը կազմությամբ կատարյալը /տագցրի, տագցրիր ... տագցրեց/, թեև նշում է նաև եզակի III դեմքի համար ուց-ով ձևը, որը 70-ական թվականներին բավականաչափ տարածված էր ցը հիմքակազմիչի հետ՝ ցցալացուց, ընակեցուց, ավելացուց, վազեցուց: Հետագա զարգացման ընթացքում այդ ձևերը բոլորովին դուրս եկան գործածությունից, և արդեն XX դարի սկզբներից պատճառական բայերի անցյալ կատարյալ ժամանակն ունի ժամանակակից տեսքը:

բ/ XX դարի II կեսերին, մասամբ նաև XX դարի սկզբներին հարակատար և անցյալ հարակատար ժամանակները, որոնք նույնանիշ էին վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակներին, լայն կիրառություն ունեին. օրինակ՝ Ձեզ ոչինչ չեմ_ասած /Ր/, պատահած_էը ոչ այնքան հեռու մեզանից /Ր/, համալսարան էիք_գնացած /ՆԴ/, գրաբարից են մտած /Աբեղյան/ և այլն: Սակայն աստիճանական զարգացման ընթացքում դրանք իրենց տեղը զիջեցին վաղակատար և անցյալ վաղակատար ձևերին՝ մնալով միայն կրավորական սեռի և վիճակ, դրություն ցույց տվող մի խումբ բայերի խոնարհման համակարգում /կառուցված է, նստած եմ/:

Նախասովետական շրջանում նկատվում էր նաև ներգործական սեռի բայերի հարակատար ժամանակների գործածության չնգոք սեռի իմաստով /դնները փակած էին, վարագույրները ցած էին քողած /Ր/, որի վրա կառուցած էր ամրոցը, շրջապատած էր .../Մուր./: Այժմ այս ձևերը գործածվում են վ ածանցով /կառուցված էր, շրջապատված էր, փակված էին և այլն/:

գ/ Ղծական եղանակի կազմության մեջ կատարված տեղաշարժերը ևս պայմանավորված են ի խոնարհման վերացմամբ:

XIX դարի կեսերից սկսած հանդիպում են ի խոնարհման բայերի զուգահեռ գործածությունները ե խոնարհման ձևով, որոնք աստիճանաբար տարածվելով՝ վերջնականապես դուրս մղեցին նստիմ, հասնիմ,մեռնիմ, կոըշիմ ձևերը և 20-ական թվականներից արդեն գրական նորմա են: ի խոնարհման ձևերը պահպանվեցին միայն եզակի III դեմքում /նստի, հասնի, կորչի և այլն/: Այնուհետև, դարձյալ նմանակության օրենքով, հիշյալ ձևերը տարածվեցին նաև ե խոնարհման բայերի վրա:Վերջիններս արևելահայ գրական լեզվի կազմավորման շրջանում, նաև XX դարի I կեսերին, ըղծականի եզակի III դեմքում ուներին ե, օրինակ՝ ուսումնասիրեը, աղնե, պատմե, վախեցնե, կաշտակցե, պիտի պատասխանե, կնշանակե և այլն և այլն /այս շրջանում ե-ով կազմությունը նմանակությամբ երբեմն տարածվում էր նաև ի լծորդով բայերի վրա. ինչպես ապրե, նստե, պառկե, հուզվե և այլն/: Այնուհետև սրանց զուգահեռ սկսում են գործածվել ի-ով ձևերը /օրինակ՝ ապի, շարժի և այլն/, սակայն մինչև 20-ական թվականները /գուցե նաև 20-ական թվականներին/ դեռևս գերակշռում էին ե-ով ձևերը: Այդպիսիք շատ են հանդիպում հատկապես Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Շիրազի ստեղծագործություններում /խոխոջե, տարածե, զիտե, այրե, պիտի օրորե, կվառե և այլն/: 30-ական թվականներից արդեն գերիշխում և գրական նորմա է դառնում ե խոնարհման բայերի ըղծական եզակի III դեմքի կազմությունը ի-ով: Բնականաբար այդ փոփոխությունները համակարգորեն կատարվում են նաև ըղծականից կազմվող ենթադրական և հարկադրական եղանակներում: Վերջիններում այլ էական տեղաշարժ չի կատարվել: Միայն կարելի է նշել կ եղանակիչի արտասանության և գրության միասնականացման գործընթացը, ինչպես նաև պիտի, պետը է եղանակիչների գործածության հաստատումը որպես նորմա և պիտը, պիտը է ձևերի վերջնական դուրս մղումը խոնարհման համակարգից:

դ/ Ժամանակակից հայերենի հրամայական եղանակը բնորոշվել և այժմ էլ բնորոշվում է ձևերի կազմության անմիօրինակությամբ և բազմազանությամբ: Լեզվի միօրինակացման և պարզեցման միտումը,սա-

կայն, գործում է նաև այսօր, քեև շատ գործընթացներ դեռևս ավարտին չեն հասել: Հայոց լեզվի զարգացման քննվող շրջանում հրամայական եղանակի կազմության մեջ նկատվում են հետևյալ հիմնական փոփոխությունները.

1/ արգելական մի՛_գրնը, մի՛_խոսը ձևերը, որոնք անցյալ դարի գրականության մեջ համեմատաբար էին, XX դարի սկզբներից սկսած իրենց տեղը զիջեցին մի՛_գրնը, մի՛_խոսիը ձևերին, այժմ գնում է այդ ձևերից ը-ի անկման պրոցեսը: Մի կողմից հոգնակի հրամայականի, մյուս կողմից ըղձականի ազատու նմանակությամբ վերջին շրջանում խիստ տարածվել է ե խոնարհման պարզ բայերի հաստատական խոնարհման անցոյական ձևը՝ գրե՛ք, ցատկե՛ք, ապահովե՛ք և այլն /գրեցե՛ք, պահպանեցե՛ք ձևերին զուգահեռ/:

2/ Հաստատական ձևերի նմանակությամբ ենթադրյալ ածանցավոր բայերի ներկայի հիմքից կազմված արգելական հրամայականի կանոնական համարվող ձևերի կողքին /մի՛_մոռենաս, մի՛_մոռենաք, մի՛_բարձրացնես, մի՛_բարձրացնեք/ խիստ տարածվել և հավանաբար արդեն նորմայի աստիճանի է բարձրանում հաստատական ձևից մի մասնիկով կազմված արգելականը /մոռացի՛ր-մի՛ մոռացիր, բարձրացի՛ր/ցե՛ք-մի՛ բարձրացիր/ցեք, իջեցրո՛ւ-մի՛ իջեցրու և այլն/:

Գործածությունից քոլորովին դուրս են եկել երգե՛-մի՛_երգե, /մի՛/_կարկաչէ, /մի՛/_կանչէ ձևերը, որոնք որպես զուգահեռներ հանդիպում էին XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության մեջ:

ե/ Որոշակի տեղաշարժ է կատարվել ժխտական խոնարհման համակարգում: Այսպես. XIX դարի վերջերին ներկա ժամանակի եզակի III դեմքի ժխտականը կազմվում էր չէ ձևով. չէ_պատրաստվել, չէ_տնօրինում, ինչու_չէ_եկել, չէ_խնայում, չէ_հասկանում և այլն /Ր, Մուր., ՀՀ, նաև Իս./, սակայն դրանց կողքին արդեն սկսում են գործածվել չի-ով ձևերը, որոնք Աբեղյանը 1906թ. համարում էր ժողովրդական և ոչ հանծնարարելի ձևեր: Սակայն աստիճանաբար վերջին ձևերն սկսեցին տարածվել և արդեն 20-ական թվականներին վերածվեցին գրական նորմայի /չէ_պատրաստվել, չի_տնօրինում, չի_խոսում և այլն/: Չէ ձևը ետադաս շարադասությամբ որպես գրական նորմա պահպանվեց միայն բաղադրյալ ստորոգյալի կազմության մեջ /մեծ_չէ, խելոք_չէ, ամուր_չէ/: Իսարկե խոսակցական լեզվում բաղադրյալ ստորոգյալի կազմում ևս այժմ տարածված է չի ձևը /խելոք չի/, որը սակայն գրական նորմա չէ:

Համակարգային փոփոխություն է կատարվել ենթադրական եղանակի ժխտական ձևերի կազմության մեջ: XIX դարի վերջերին ենթադրական

եղանակի ժխտական ձևերը կազմվում էին օժանդակ բայի ժխտական ձևերով և խոնարհվող բայի ԸԼԱ_ԱԼ վերջավորություններով, ընդ որում ներկայի եզակի III դեմքը միշտ արտահայտվում էր չի ձևով. չԸՄ_ՁԸՆԱԼ, չԸՄ_ՁԸԲԼ, ՉԻ_ԱՍԲԼ, ՉԻ_ՈՒՆԵՆԱԼ, չԸՄ_ՁՈՎԼԻ և այլն: XIX դարի վերջերից, սակայն, սկսվում է Լ-ի անկման գործընթացը, որն իր վերջնական ավարտին է հասնում 20-ական թվականներին, և ձևավորվում է ժխտական ներքայը:

II. Որոշակի տեղաշարժեր են կատարվել նաև ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքում. վերջինիս զարգացումը ևս ընթացել է հիմնականում ներքին օրինաչափություններով, սակայն այստեղ, ի տարբերություն ձևաբանական կառուցվածքի, զարգացման ընթացքի վրա որոշակի ազդել է նաև արտաքին գործոնը: Հասարակական հարաբերությունների բազմաբնույթ դառնալը, ինչպես նաև այլ լեզուներից, մասնավորապես ռուսերենից կատարվող թարգմանությունները, այլև առանձին բառերի իմաստային պատճենումները հիմք են հանդիսացել ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի որոշ տեղաշարժերի: Այդ բանը նկատվում է առանձնապես կապակցական միջոցների համակարգում: Բավարարվենք նշելով շարահյուսական կառուցվածքում կատարված փոփոխություններից մի քանիսը: Պատմական զարգացման ընթացքում ավելի կուռ է դարձել նախադասության կառուցվածքը, ուժեղացել է ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն ու քերականական կապը, հազվադեպ են դարձել մինչև 20-ական թվականները բավականին տարածված բակառուցյան դեպքերը: Որոշակի տեղաշարժեր են կատարվել հոլովների կիրառական առանձնահատկությունների մեջ, Ճշտվել, որոշակի են դարձել դրանց գործառության ոլորտները, որի հետևանքով փոփոխություններ են առաջացել նաև նախադասության անդամների ձևավորման մեջ:

Նախադասության անդամների արտահայտության մեջ կատարված փոփոխություններից կարելի է նշել հետևյալները.

ա/ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին տարածված էր ժամանակ ցույց տվող բառերի ներգոյական հոլովի կիրառությունը ժամանակի պարագայի պաշտոնում. օրինակ՝ Այդպիսի ԴԵՎԱՐ_ԲԱՆԵՐՈՒՄ նրան օգնության էր հասնում յուր սովորական թերահավատությունը /Ր,7,48/: Նա ԱՅԴ_ՕՐԵՐՈՒՄ մի քանի լավ ծառայություններ արեց ինձ /Ր,7,164/: Իր կյանքի վերջին ՕՐԵՐՈՒՄ մի բանավեճով էր բռնված /Ան.,3,358/: Ես էլ ՅՕԹՈՒՆՔԱՆ_ՕՐԵՐՈՒՄ իր ջրերն ընկած կապրեմ /ԱՒ,9/: Գետակը ... անանցանելի է դառնում գարնան ՎԵՐՋԵՐՈՒՄ /Մ, 2,328/: Այժմ այս ձևերի փոխարեն գործածվում և գրական նորմա է

տրական հոլովաժևը /դժվար ըոպեներին, ալյ_օրերին, իր կյանքի վերջին_օրերին, զարնան վերջերին/: Գործածությունից դուրս են եկել նաև ընթացքին, մեջտեղին կապական բառերը՝ իրենց տեղը զիջելով ընթացքում և ժամանակ կապական բառերին. օրինակ՝ Քափառումնեըին_ընթացքին հյուր եղա.../հս.,3,320/: Բայց չկոտրեց հավատը... սնուցած իր ողջ կյանքի_ընթացքին /հս./: Նրանց զրույցի մեջտեղին ներս է մտնում Օքերը /ՍՋ,Եժ,3,195/: ...ճաշի_մեջտեղին.../Շ/: Ալյ_մեջտեղին ներս մտավ.../ՄԳՄ/: Տարոնով անցնելու_մեջտեղին նրանք մեր ամրոցում հյուր կլինեն /Ր,7,32/: Այժմ արդեն հնացած և ոչ հանժնարարելի են ժամանակի պարագայի կիրառությունը տրական հոլովով /երբ այն ժամանակ ցույց տվող դոյական չէ/. ինչպես՝ Նրա ըացակայությանը՝ մարդիկ շինել էին իրենց բնակարանները /ՀԲ/: Պատերազմին քո հայրենասեր բուրժուա անգլիացիները... գենք էին ծախում իրենց թշնամի Գերմանիայի վրա /հս./: Հետագա նանգնաւումներին սիրտ արեցի հարցնել /հս./:

բ/ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին տարածված էր գործողության կատարման տեղը ցույց տվող տեղի պարագայի գործածությունը հայցական հոլովով. այսպես՝ Ուզում էի դուրս գալ և քափառել դաշտերը /հս./: Թենիացած լափառում էր Ալամ, առանց դադարի, դրախտի մեկուսի վայրերը /հս.,3,319/: Այդ երկրի մի կողմը ծփում էր Ախթամարա ծովակը /Ր,7,259/: Ժամանակակից հայերենի արդի փուլում այդ ձևն արդեն հնացած է և գրեթե չի հանդիպում: Այն իր տեղը զիջել է ներգոյական հոլովին կամ սեռականին՝ մեջ կապի հետ:

Նկատվում է նաև ներգոյական հոլովի տարածման միտում սեռական+մեջ կառույցի փոխարեն. օրինակ՝ ...Որ սպանվեց այս դիվական պատերազմի_մեջ /հս./: Ծարտարապետն աշխատում էր Անիի_մեջ /հս./: Ու կորչում է հեռու երկնքի_մեջ /ԵՀ/: Այժմ հանժնարարելի են պատերազմում, Անիում, երկնքում:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ուղևորման հայցականի փոխարեն հաճախ գործածվում էր ներգոյական հոլովը, օրինակ՝ Մուտք գործեցին Ողական ամրոցում /Ր,7/: Հեռացավ սենյակի մի անկյունում /Ր/: Այս ձևերը ևս արդեն դուրս են եկել գործածությունից և փոխարինվել են հայցական հոլովով /մուտք գործեցին Ողական ամրոց, հեռացավ մի անկյուն/:

XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության մեջ հանդիպում ենք ուղղական հոլովով դրված անժ ցույց տվող կողմնակի ենթակայի /բուն ենթակայի նմանողությամբ/. օրինակ՝ Պատերազմը_հաղթանակ մյուս սենյակ անցնելուց հետո, Պյոտր Ստեփանիչի դեմքն ա-

վելի փոխվեց /Շ,4,106/: Էս հարևանը վարելու ժամանակ խոփը դեմ է ընկնում, դուրս է գալի մի կարաս՝ մեջը լիքը ոսկի /ՀՔ,1,447/: Ըզգին աքստրվելուց հետո նա միաժամանակ աստծուց երես էր դարձրել /Շ,4,231/:

Այժմ կանոնական է անձ ցույց ավող գոյականների սեռական հոլովով ղրված կողմնակի ենթական:

Եթե XX դարի սկզբներին գործիական հոլովը արտահայտում էր նաև պատճառային հարաբերություն /օրինակ՝ մեռավ քոքախով-իս./, ապա այժմ կանոնական է այդ իմաստով բացառականի կիրառությունը /մեռավ քոքախից/: Գործիականի այդ իմաստը պահպանվել է միայն հեթանքով, պատճառով կապական բառերի մեջ:

Լեզվի զարգացման վերջին շրջանում զգալիորեն համալրվեց ու հարստացավ ժամանակակից հայերենի կապերի ու շաղկապների համակարգը, որը պայմանավորված է վարչա-գրասենյակային, իրավաօրենսդրական, գիտատեխնիկական, հասարակական-քաղաքական ոլորտներն ու բնագավառները սպասարկող լեզվաարտահայտչական միջոցներ ստեղծելու, մշակելու ու կատարելագործելու անհրաժեշտությամբ: Նպակցական նոր հարաբերություններ արտահայտելու պահանջով ծնվեցին որոշ կապերի կիրառությունները, այլ խոսքի մասերից փոխանցման կարգով առաջացան նոր կապեր ու կապական բառեր: Այդպիսիք են՝ ընդհքեը, կից, համաձայն, համապատասխան, ուղղությամբ, գծով, կողմից, կապակցությամբ, նվիրված և այլն, ինչպես նաև հարադրական կազմությամբ՝ ընդհուպ մինչև, հետ համատեղ: Ժամանակակից հայերենի գործառական որոշ ոլորտում /հրապարակախոսություն, մամուլ, գրասենյակային ոճ/ տարածվեցին գրաբարյան ի, մասամբ նաև ըստ նախդիրները /ի նշանավորումն, ի փառս, ի դեմս, ի բարօրություն, առ այն, առ 1-ը մայիսի, առ այսօր և այլն/:

Բառերի իմաստային զարգացման հետ կապված՝ որոշ տեղաշարժեր կատարվեցին նրանց կապակցելիության և խնդրառության մեջ: Մամուլի ու հրապարակախոսության լեզվում բայանունների գործածության մեծացման հետ կապված՝ վերջին տասնամյակներում խիստ տարածվեց գոյականների խնդրառությունը, առանձնապես կապական խնդրառությունը /հանդիպում Մոսկվայում, պայքար հանուն խաղաղության, հարգանք դեպի ընկերը և այլն/, առաջացան բառակապակցության նոր տեսակներ /օրինակ՝ բարձր արտադրողականության աշխատանք/, նախադասության կառուցվածքային նոր տիպեր /Ձնեխ, Պահպանել լռություն/, մեծ տարածում ստացան անվանական նախադասությունները և այլն:

Ա.Ե. ՄԱՐԳՍՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՋՈՒԳԱԴՐԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Հայերենագիտության համար կարևոր է արևելահայ և արևմտահայ գրական լեզուների կոռուցվածքների հեռևողական զուգադրությամբ լեզվական ընդհանրությունների և առանձնահատկությունների բացահայտման խնդիրը:

Արդի հայերենի երկու գրական վիճակների հնչույթային համակարգերի համեմատականյա կարվածքների տիպաբանական բնութագրերի բացահայտումը, անշուշտ, նախորդել է համապատասխան կարվածքների քննությունը ըստ լեզվական միավորների գործառական արժեքների: Այսինքն, նախքան բուն զուգադրությանն անցնելը բացահայտվել են հնչույթային միավորները, նրանց ենթահամակարգային փոխհարաբերությունները և այլն:

Նախ զուգադրվում են նշված լեզուների հնչույթային համակարգերը՝ հարացույցի տիպաբանություն, ապա բացահայտվում են համապատասխան ոլորտների շարակարգային առանձնահատկությունները՝ ձեքքաքի տիպաբանություն: Վերջին դեպքում, բնականաբար, գործ ենք ունենում քանակական արժեքների, վիճակագրության հետ:

ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2. Նշված գրական լեզուների ժայնավորական ոլորտներն աչքի են ընկնում ավելի մեծ ընդհանրությամբ, քան բաղաժայնականը: Երկու դեպքում էլ՝ ա/ ժայնավորական ոլորտում առկա վեց հնչույթները՝ ա_է_ը_ո_է_ու, բնութագրվում են որակական բնույթի հատկանիշներով՝ բարձրություն, շարք, շրթնայնություն, բ/ քանակական բնույթի հատկանիշները՝ ժայնավորների երկարություն, երկբարբառայնություն և այլն, հատուկ չեն երկուսին էլ, գ/ իբրև ընդհանրություն կարելի է նշել, որ երկուսում էլ ժայնավորների որակը բնութագրվում է հիմնականում երկու հատկանիշի՝ բարձրություն և շարք, հա-

մակցումով:

3. Ըստ Ֆ. Միլևսկու ընդհանրական տիպաբանական սխեմայի, աշխարհի լեզուների ծայնավորային ոլորտի միջուկային հատկանիշներից է շրջնայնությունը: Վերջինս հայերենում հանդես է գալիս շ-ը հատկանիշի զուգակցմամբ: Այն կարծիքը, թե հայերենում շրջնայնությունը հավելուրդային հատկանիշ է, չի հիմնավորվում ինչպես ընդհանուր լեզվաբանական, այնպես էլ մեր երկու գրական լեզուների ավյալներով:

4. Երկու գրական լեզուներում էլ ա/ բարձրություն հատկանիշով բնութագրվում է ծայնավորական ոլորտի միավորների կեսը /վեց հնչույթից երեքը/: Ընդ որում ծայնավոր հնչույթների 50 տոկոսը միջին շարքի միավորներ են /ե, ը, օ/; բ/ շարքը հնչույթների տարբերակման գործում հանդես է գալիս շրջնայնություն հատկանիշի զուգակցությամբ:

5. Երկու գրական լեզուների հնչույթային համակարգերի տարբերությունները դրսևորվում են զերազանցապես բաղածայնական ոլորտում: Արևելահայերենի ծայնորդային ենթաոլորտում տարաբերաբար ուժեղ է դրսևորվում վերաամանայնություն / ոչ վերաամանայնություն հակադրությունը, որով տարբերակվում են ը և ը հնչույթները: Արևմտահայերենում նշված հատկանիշը թույլ է դրսևորվում. ուսաի հնչաշղթայում ը և ը հնչյունների տարբերակումը որոշ չափով դժվարանում է: Դրանով է նաև պայմանավորված այն իրադրությունը, որ արևմտահայ ուղղագրության մեջ դժվար կետերից մեկն էլ ը և ը հնչյունների տարբերակման հարցն է:

6. Արևելահայերենին հատուկ ծայնեղ-խուլ-շնչեղ-խուլ եռաստիճան հակադրությունը արևմտահայերենում գործում է ծայնեղ-շնչեղ խուլ երկաստիճան հակադրության պատկերով: Այսինքն, ծայնեղներ-զարգ խուլեր-շնչեղ խուլեր զծապատկերում մեջտեղի շարքը արևմտահայերենում վերացել է: Ձայնեղություն-խլություն հակադրությունը գրական արևմտահայերենում մաքուր ձևով հանդես չի գալիս: Խլությունն այնտեղ դրսևորվում է շնչեղության հատկանիշի հետ միասին:

7. Քանի որ արևելահայերենի բաղածայնական ոլորտի համեմատությամբ, արևմտահայերենի համապատասխան ոլորտն աչքի է ընկնում սահմանափակ բաղածայն հնչույթներով, այդ հանգամանքը նպաստում է համակարգում ծայնավորների ունեցած տեսակարար կշռի ավելացմանը՝ արևելահայերենի 13 տոկոսի փոխարեն 19,7 տոկոս:

8. Եթե նկատի ունենանք, որ լեզուներում հնչույթների առավելագույն քանակը շուրջ 70 է, ապա կարելի է ասել, որ մեր երկու գրա-

կանները մի՛շտ դիրք են զբաղում աշխարհի լեզուների շարքում:

9. Հնչույթային համակարգերի զուգադրության ժամանակ տարբերում են /արևելահայերենն ունի 36 հնչույթ, արևմտահայերենը՝ 31/ միջուկային՝ առանցքային, և եզրային երևույթները: Պետք է ասել, որ մեր երկու գրական լեզուներում եզրային երևույթներն ընդհանուր առմամբ համընկնում են. այսպես՝ երկուսում էլ ֆ հնչույթը եզրային է. այն հանդես է գալիս միայն փոխառյալ և զերազանցապես բնածայնական բառերում՝ օֆ, ուֆ և այլն: Սակայն կան եզրային երևույթներ էլ, որոնք գործում են մեկ համակարգում և հատուկ չեն մյուսին: Այսպես, օ/ը[1] հնչյունափոխությունը /օրինակ՝ դիրեկտոը-դիրեկտորը/ եզրային երևույթ է արևելահայերենում և գործում է խոսակցական տարբերակում, մինչդեռ այն արևմտահայերենում բացառվում է անգամ համապատասխան տարբերակում. ուստի նույնիսկ եզրային երևույթ չէ: Նամ՝ սպ, ստ, զբ և այլ բաղաձայնական կապակցություններում արևելահայ գրական ժամանակակից արտաբերմամբ իսկապես գործ ունենք բաղաձայնական կապակցությունների հետ[2] և ոչ թե ը-ով ձևերի հետ՝ ըսկսել և այլն, մինչդեռ արևմտահայերենում առկա են հենց ը-ով ձևերը:

10. Հնչույթային համակարգի առաջնային և երկրորդային տարրերի հարաբերությամբ աշխարհի լեզուները բաժանվում են երկու խմբի՝ ձայնավորական և բաղաձայնական: Սովորաբար ավելի տարածված են բաղաձայնական լեզուները: Թեև մեր երկու գրականներն էլ մտնում են բաղաձայնական խմբի մեջ, արևմտահայերենն, այնուամենայնիվ, արևելահայերենի համեմատությամբ ավելի մոտ է ձայնավորական խմբին /արևմտահայերենի համակարգում ձայնավորները 6,7 տոկոսով ավելի են/. դա պայմանավորված է բաղաձայնական ոլորտում պարզ խուլերի բացակայությամբ:

ՇԱՐԱԿԱՐԳԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

11. Տիպաբանական զուգադրության համար կարևոր է նաև խոսքում հնչյունների ունեցած բեռնվածությունների ուսումնասիրությունը: Շարակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր երկու գրականներն էլ՝ 1.ձգտում են խոսքում ձայնավոր և բաղաձայն հնչյունների համաչափ բաշխման. 2.խոսքում ինչպես ձայնավորական, նույնպես էլ բաղաձայնական կապակցություններից խուսափելու միտումը կարելի է դիտել իբրև մեր երկու գրական լեզուների տիպաբանական ընդհանրություն. 3.ձայնավոր գրույթների կապակցությունը արմատի /բառի/սահմաններում վկայում է տվյալ լեզվական միավորի փոխառյալ լինելը /օրինակ՝ ատրաք, լաուազն և այլն/: Սովորաբար նման դեպքերում եր-

կու գրականների հնչաշղթայում ձայնավորական կապակցությունները վերանում են կիսաձայն յ-ի օգնությամբ. 4.ձայնավորական կապակցությունները վերացվում են նաև հեռևյալ միջոցներով. ա/առաջին ձայնավորի բաղաձայնեցմամբ /ուրուրուրվա՛ն/, բ/երկու ձայնավորներից առաջինի սղմամբ /արևել.՝ կը_ըսէ > կ՛ըսէ, արևմտ.՝ կը_ըսէ > կ՛ըսէ/, գ/երկու ձայնավորների կապակցությամբ առաջացող որակական փոփոխությամբ՝ նոր ձայնավորի հանդես գալով երկուսի փոխարեն՝ գինի-ա-ման > գինեման:

12. Իրև արևմտահայերենի ձայնավորական հաջորդականությունների ոլորտում ի հայտ եկող տարբերություն պետք է նշել -ին/-ուն հնչյունի /խոսքը ը ձայնավորի մասին է/ զարտաղիր հաջորդականությունը հատարակ անունների հոլովման ժամանակ՝ գինի-գինին, գարի-գարին և այլն: Արևելահայերենը նման դեպքերում սովորաբար կատարում է հնչյունափոխություն՝ գինու, գարու և այլն, բ/կից ձայնավորներից առաջինի սղման երևույթը՝ մի_ընթեր-մ՛ընթեր, չի_լուացք-չ՛լուացք և այլն:

13. Ինչպես ձայնավորական, այնպես էլ բաղաձայնական հաջորդականությունները երկուսում էլ հանդես են գալիս ածանցի և արմատի կցման կետում՝ ամենատարածվածը, մակբայ և այլն: Ընդ որում արևմտահայերենը ձայնավորական հաջորդականություններից խուսափում է վերլուծական ձևերին նախապատվություն տալով՝ ամենեն աղջկունամբ, փոխանակ՝ ամենաաղջկունամբ:

14. Արևմտահայերենում բառամիջի ձայնավորի սղման հետևանքով՝ մոռնալ, գիշնալ և այլն, առաջացել են միայն արևմտահայերենին հատուկ բաղաձայնական հաջորդականություններ՝ ընկալ, կլլել և այլն:

Որևէ լեզվի ձայնավոր-բաղաձայն իրական հակադրության պատկերը երևան է գալիս այդ լեզվի իրացված վիճակում՝ տեքստում: Ուստի կատարել ենք վիճակագրական քննություն: Գրական արևելահայերենի համար վիճակագրության են ենթարկվել Շիրվանզադեի, Նար-Դոսի, Դեմիրճյանի, Ռ.Զարյանի, Վահրամ Փափազյանի, իսկ գրական արևմտահայերենի համար՝ Զոհրապի, Բաշալյանի, Շահնուրի, Ծառուկյանի, Վահյանի, Որբունու ստեղծագործություններից ընտրված հատվածները:

15. Վիճակագրական քննությունից պարզվում է, որ թեև համակարգում բաղաձայնները զգալի գերակշռություն ունեն /արևելահայերենում՝ 83 տոկոս, արևմտահայերենում՝ 80 տոկոս/, շարակարգում /լեզվի իրացված վիճակում/ տակ է արդեն ձայնավոր-բաղաձայն 42:58 հարաբերությունը: Այդ ավյալով երկու գրականներն էլ ընդհուպ մոտենում են ձայնավորական լեզուների խմբին: Ընդ որում արևմտահայերենը

0,2 տոկոսով ավելի հարուստ է ձայնավորներով: Սորև ներկայացվում են արևելահայերենի և արևմտահայերենի ամենահաճախական վեց հնչույթները /համապատասխան վիճակագրական արժեքներով/.

արևելահայերեն	արևմտահայերեն
ա /14,31/	ա /13,60/
ն /9,13/	ն /9,67/
ե /է/ /8,61/	ե /է/ /8,78/
ր /8,53/	ր /7,97/
ի /5,96/	ը /5,87/
ը /4,88/	ի /5,37/
ընդամենը 51,42	ընդամենը 51,26

Երկու գրականներում էլ ամենահաճախական առաջին վեց հնչույթները կազմում են տեքստի շուրջ 52 տոկոսը: 100 հնչյունի կեսից ավելին ձայնավորներ և ձայնորդներ են: Ընդ որում ձայնորդներից ն-ն /ըստ նվազող հաճախականության/, ը-ից հետո, երկրորդ դիրքն է գրավում: 100 հնչույթից շուրջ 10-ը ն է: ն հնչույթի ամենահաճախական բաղաձայն լինելը երկու գրականներում էլ պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. ա/ այն հանդես է գալիս ամենահաճախական ածանցների կազմում /ուքյուն, ություն, և այլն/, բ/ հոգնակազմ քերքյթների առընթեր է /նեը/, գ/ բայաձևերի 3-րդ դեմքի ցուցիչ է, գ/ որոշյալ հոդի առընթերակ է և այլն:

16. Ամենահաճախական հնչույթների զուգակերը վկայում է, որ միևնույն ներկայացրած՝ աշխարհի լեզուների հնչույթների առաջնային շարքը տարբերորեն է դրսևորվում հայերենում: Որպես երկու գրականներին հատուկ ընդհանրություն կարելի է դիտել նաև ը հնչույթի գործառական մեծ բեռնվածությունը:

17. Ուսումնասիրությամբ պարզվում է, որ հայոց լեզուն ունի վիճակագրական կայուն արժեքներով բնութագրվող որոշակի հնչույթային ոլորտներ: Եթե ավյալ ոլորտում միավորներից մեկը /հնչույթը/ դուրս է գալիս, ապա նրա վիճակագրական բեռնվածությունը բաշխվում է նույն ոլորտում եղած մյուս միավորների վրա: Ըստ այդմ, իմանալով արևելահայերենին հատուկ եռաշարք հակադրությունների անդամների վիճակագրությունը առանձին-առանձին, կարելի է պնդել, որ նրանց ընդհանուր միջին արժեքը համապատասխանում է արևմտահայերենի երկշարք համապատասխան հակադրությունների ոլորտի անդամների վիճակագրական արժեքների գումարին: Եթե արևելահայերենում ձայնեղները, խուլերը և շնչեղ խուլերը միասին վերցրած կազմում են տեքստի

շուրջ 19 տոկոսը, ապա երկշարք բաղաձայնական համակարգ ունեցող արևմտահայերենի տեքստում դարձյալ ձայնեղները և շնչեղ խուլերը միասին վերցրած կազմում են շուրջ 19 տոկոս: Այդ ևս վկայում է, որ գործառական բեռնվածության ժամանակ հնչյունները ոչ թե առանձին-առանձին, այլ որոշակի ոլորտներով են ունենում իրենց կայուն արժեքները: Այսինքն՝ եթե հայտնի է, որ երկու գրական լեզուներում ձայնավորները կազմում են տեքստի 41 տոկոսը, ապա այդ նշանակում է, որ նրանցից որևէ մեկի հաճախականության միջին ցուցիչից բարձր կամ ցածր արժեքներ ունենալու դեպքում ստեղծվում է նույն ձայնավորային ոլորտի մյուս միավորների բարձր կամ ցածր հաճախականության ռեալ հնարավորություն:

18. Երկու գրական լեզուներում էլ ձայնավոր-բաղաձայն հարաբերակցությունը ստանում է 41:59 տոկոսային հարաբերություն: Ըստ այդ ավյալի, մեր գրական լեզուները աշխարհի լեզուների դասակարգման համապատասխան շարքում <u>միջին</u> դիրք են գրավում:

19. Արևելահայերենի և արևմտահայերենի վիճակագրական արժեքների միջև նկատելի շեղումները պայմանավորված են ինչպես հնչույթային, այնպես էլ լեզվական այլ մակարդակների օրինաչափություններով. օրինակ՝ արևելահայերենում <u>ս</u> ձայնավորի ավելի հաճախական լինելը արևմտահայերենի համեմատությամբ՝ պայմանավորված է նաև <u>ս</u>-ի թույլ դիրքով արևմտահայերենի բառամիջում, ուր սովորաբար այն ընկնում է՝ շեշտի հետ կապված. ինչպես, օրինակ՝ <u>ս</u>ըջիւ /առաջին/:

20. Եթե արևելահայերենը հնդեվրոպական մի շարք լեզուներին հատուկ գիծը պահպանում է՝ խուլ բաղաձայնների զեռակշռությունը ձայնեղների հարաբերությամբ /մմմ. 4 տոկոս 15 տոկոսի համեմատությամբ/, ապա արևմտահայերենին այն բնորոշ չէ. այստեղ գործ ունենք ձայնեղների և շնչեղ խուլերի հարաբերական հավասարակշռության հետ /շուրջ 10 տոկոս յուրաքանչյուրը/: Արևելահայերենում, ինչպես նաև հնդեվրոպական մյուս լեզուներում, խուլ հնչյունները ավելի հաճախական են, քան ձայնեղները /ընդ որում ամենահաճախականը <u>ս</u>-ն է, իսկ հայերենում՝ <u>կ</u>-ն/: Ամենահաճախական հնչյունների հաջորդականության մեջ հայերենում առկա է տեղաշարժ /հայերենում <u>կ</u>-ն ավելի հաճախական է, քան <u>ս</u>-ն, որ դարձյալ պայմանավորված է համակարգում <u>կ</u>-ի ունեցած հարաբերաբար մեծ բեռնվածությամբ. հիշենք թեկուզ <u>կ</u>-ի հանդես գալն իբրև եղանակիչ/:

<u>Տ</u>-<u>կ</u> տեղաշարժը /ըստ հաճախականության շարքի/ գուտ արևելահայերենին հատուկ երևույթ չէ. արևմտահայերենում այն դրսևորվել է <u>ք</u>-<u>գ</u> տեղաշարժով, համապատասխանաբար ունենալով 2,45 և 2,74 արժեքները:

21. Երկու գրականներում էլ հնարավոր վանկատիպերը սահմանափակ են /ընդամենը ինը վանկատիպ/: Դրանք են՝ V, CV, VC, VCC, CVC, CCV, CVCC, CCVC, CCVCC .

Երկու գրականներում էլ ամենահամախական վանկատիպն է բաղաձայն-ձայնավոր /CV / երկհնչույթ վանկատիպը /49 տոկոս/: Բաղաձայնական կապակցություն չունեցող վանկատիպերը /ընդամենը չորս տիպ/ կազմում են տեքստի վանկատիպերի շուրջ 93 տոկոսը: Յուրաքանչյուր վանկի միջին հաշվով ընկնում է 2,4 հնչույթ: Դա լիովին համապատասխանում է երկհնչույթ բաց և եռահնչույթ երկփակ վանկատիպերի ամենահամախական լինելու երևույթին: Ըստ այդմ երկու գրական լեզուների բառի տիպաբանական կառույցը կներկայացնի հետևյալ տեսքը՝ ԲՀ+ԲՀԲ /CV + CVC /:

22. Որպես տիպաբանական ընդհանրույթ կարելի է նշել այն, որ չնայած բաղաձայն հնչյուններով հարուստ լինելուն, երկու գրականներն էլ բնութագրվում են վերջիններիս սահմանափակ կապակցելիությամբ և դա հանգեցնում է վանկատիպերի քանակի սահմանափակման. երկուսում էլ 1/քաց վանկի ծգտումը պայմանավորված է նաև շեշտի բառավերջային դիրքով, 2/մեհնչույթ Ձ /V/ և երկհնչույթ ԲՀ /CV/ վանկատիպերը վիճակագրական տվյալներով կազմում են բոլոր վանկատիպերի 54 տոկոսը:

Այսպիսով, միայն հարացույցի տվյալները հիմք ընդունելու դեպքում մեր երկու գրականները կմտցվեն լեզուների քաղաձայնական խմբի մեջ, մինչդեռ շարակարգի քննությունից պարզվում է, որ արևելահայերենն ու արևմտահայերենը ձայնավորական և քաղաձայնական լեզուների միջակայք դիրքն են գրավում /ընդհուպ մոտենալով ձայնավորական լեզուների խմբին. ընդ որում արևմտահայերենը, արևելահայերենի համեմատությամբ, 0,2 տոկոսով ավելի հարուստ է ձայնավորներով/:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Բերվող ձևերում նկատի ունենք հնչույթային միավորները և ոչ թե տառային ձևերը:

2 Տարբերակվում է արևելահայերենի խոսքի տեմպի երկու փոփոխակ՝ արագ և դանդաղ: Արագ տեմպի ժամանակ ը-ն չի հնչվում: Դանդաղ տեմպի ժամանակ հին սերունդը ը-ն սովորաբար հնչում է, իսկ նոր սերունդը, եթե հնչում էլ է, ապա՝ նկատելիորեն թույլ:

СТ.СТОЯНОВ, В.ЦВЕТКОВ, Э.СЕЛЯН (София, Болгария)

ЛИНГВИСТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РУКОПИСНОЙ И МАШИННОЙ СТЕНОГРАФИИ НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Стенография может быть определена как скоропись, сокращенное письмо, использующее графические символы для фонем, слогов, морфем, слов и словосочетаний, позволяющие вести синхронную запись устной речи и рационализировать технику письма. Из данного определения видно, что проблематика стенографии является неотъемлемой частью общелингвистической проблематики /2,II/.

Так например, аббревиатуры, встречающиеся и в современном армянском языке /կենսկոմ (կենտրոնական կոմիտե) и др./, являются предметом изучения как со стороны лингвистики, так и со стороны стенографии.

Орфографическая запись языка обычным и стенографическим письмом осуществляется по определенным правилам, которые в значительной степени совпадают в обеих системах. В стенографической системе существуют некоторые отклонения от орфографии обычного письма. Их можно разделить на две основные группы.

В первую группу входят случаи, касающиеся означаемых букв в составе слова: пропуск и замена строчных букв, а также замена прописных букв строчными. К этой группе относятся и случаи пропуска знаков препинания.

Во вторую группу входят случаи, касающиеся внешнего /графического/ оформления изображения слова: запись слова с пробелом, объединение двух или больше слов одним графическим изображением и т.д.

Способы оптимального сокращения речевого сигнала и основные принципы, требуемые любой стенографией, рассмотрены в специальной литературе /2,3,4/.

Особенно тесной является связь стенографии со структурной и математической лингвистикой. Разнообразные стеногра-

фические системы в различной степени и форме отражают структуру языка и частоту ее элементов на различных уровнях. В этом отношении в традиционной стенографии известно понятие вокализации, основанное на изменении позиции знаков относительно друг друга. Подбор этих знаков учитывает самые частотные единицы языка. Машинное стенографирование идет дальше традиционной стенографии в использовании теоретических постановок и данных, полученных благодаря теоретико-прикладным достижениям лингвистики. В машинной стенографии уделяется особое внимание частоте букв, слогов, аффиксов. Некоторые исследования в этом направлении могут оказаться полезными для совершенствования алфавита.

Имеется много общего между стенографией и тайнописью при упрощенной записи букв обычного письма. Так например, в одном из ключей ахтаракской тайнописи используется знак "Ч" для буквы "ч" армянского алфавита. В тайнописи используются и знаки, составленные из геометрических фигур. В вышеупомянутом ключе используется знак "◪" для обозначения буквы "ш" армянского алфавита.

Стенографические системы, использующие упрощенные формы или элементы букв обычного письма, называются курсивными, а системы, использующие геометрические фигуры в качестве знаков - геометральными. К курсивным стенографическим системам относится и Государственная единая система стенографирования СССР /ГЕСС/.

История стенографии многовековая. Мраморная плита, найденная в Акрополе в 1883 г., свидетельствует о том, что стенография существовала в древней Греции примерно в 350 г. до н.э. Применялась стенография и в древнем Египте, в Хеттском государстве. Общество Армянского нагорья еще до II тыс. до н.э. имело связь с письменными культурами хеттов и хурритов и, по всей вероятности, не осталось несопричастным к ним.

До 17 в. стенография была словной. Каждому слову соответствовал свой значок, рисунок или упрощенное начертание буквы. Известная стенографическая система Тирона /раба знаменитого оратора Цицерона - "Тироновы ноты", созданная в 63 г. до н.). насчитывала около 5000 знаков. Последователи Тирона довели это число до 13000.

Согласно данным, приведенным проф. Абраамяном А.Т., в 12-13 вв. армяне использовали стенографические знаки, образованные из элементов букв армянского алфавита /13/.

Автором первой буквенной системы стенографирования был англичанин Джон Уиллис, который в 1602 г. издал книгу "Искусство скорописи, или стенография". Знаки его системы напоминали геометрические фигуры, поэтому система Джона Уиллиса была названа геометральной. В 1789 г. в Англии Симон Бордлей создал первую курсивную систему.

Геометральные стенографические системы характерны для языков с относительно короткими словами /английский, французский/. Курсивные системы свойственны языкам с длинными словами /русский, немецкий/.

В 1834 г. в Германии была создана система стенографии Франца Габельсбергера, которая была переработана и адаптирована для большого числа языков.

Согласно исследованиям Дрезденской библиотеки в 1887 г., Цейбих сообщает об адаптации системы Габельсбергера для армянского языка, сделанной Тирояном и О.Греко. Библиотека также располагает рукописью, которая была, как предполагается, учебником по армянской стенографии. В 1888 г. в Венеции опубликован учебник по армянской стенографии, написанный Тирояном /10/. В это же время в Париже была опубликована адаптация геометральной системы Дюплойе на армянском языке /8/.

Наиболее удобной и доступной в СССР была признана в 1933 г. система Н.Н.Соколова, которую и приняли в качестве основы Государственной единой системы стенографирования.

Стенография все более и более упрощалась, и в 1958 г. были изданы два учебника по стенографии - А.Г.Гильдебранда и О.С.Акопяна. О.С.Акопян создал систему, которая имеет ряд преимуществ:

а/ состоит из двух частей - массовое и профессиональное письмо;

б/ удобна для приложения во всех славянских языках;

в/ при стенографировании можно использовать любые письменные средства - перо, карандаш, ручку.

Акопяну также принадлежит заслуга возвращения и доразви-

тия забытых аккордных знаков /I/. Последние могут заменить от двух до пяти звуков и ускоряют процесс стенографирования на 30–40%.

Согласно некоторым предварительным данным, полученным в результате исследований в Софийском университете, аккордные знаки могут использоваться с успехом и на армянском языке и, особенно, в связи с машинным стенографированием.

Машинная стенография может с успехом использовать также и грамматические сокращения, что, с точки зрения традиционной стенографии, не обязательно, но целесообразно. Этим достигается рационализация стенографирования на стабильной основе грамматики, а не на основе случайных соображений. Сокращения подобного рода могут быть распознаны и дешифрированы машиной на выходе. Задача здесь аналогична автоматическому анализу и синтезу при машинном переводе.

В настоящее время верховным достижением письменности считается не изобретение знаков, а ввод алфавитной системы, в которой каждый звук обозначается на письме только одним знаком. Однако, с точки зрения машинной стенографии, самый большой интерес представляют слоговые письменные системы, которые использовались в прошлом. Элементы слоговых письменных систем зарегистрированы в древнейшей письменной системе – клинописи, которая, как предполагается, возникла в середине IУ тыс. до н.э. в Месопотамии. Первыми клинопись использовали шумеры /5/. Ассирийская клинопись более позднего периода, хеттские иероглифы и древнеперсидская письменность очень близки к слоговому письму.

Вероятно, будет необходимо переоценить использованные в прошлом системы письма в свете машинной стенографии. Любая система письма удовлетворяла потребности определенных кругов: дворцово-административных, административно-бытовых и т.д. /7/, в соответствии с возможностями существующих технических средств. Степень удовлетворения потребностей общества в письме соответствовала качеству применяемых письменных систем и технических средств. В однородном с точки зрения языковой коммуникации обществе существовала возможность одновременного использования как двух иностранных письменных систем /напр. древнеперсидская и греческая, используемые

армянским народом в прошлом/, так и различных вариантов одной письменности /наряду с обычными письменностями существовали и системы скорописи/. С последним связан пропуск гласных в словах /բոլոր - բլր / или написание первого слога слова /մարդ - մդ / в древней армянской скорописи, что используется и в современной армянской стенографии /I4/.

Армянский алфавит, созданный в начале У в. гениальным Месропом Маштоцем, удовлетворяет потребности армянского общества, но думается, что значимость письменной коммуникации в обществе актуализирует тему о скоростном вводе языковой информации. Ввод данных не только в автоматизированные, но и в другие системы нуждается в совершенствовании. В этом отношении машинная стенография располагает некоторыми возможностями, которые в недостаточной степени использованы.

При машинном стенографировании впервые применяется принцип полибуквенного ввода языковой информации. Во всех остальных случаях ввода языковой информации посредством печатающей машины, вводных устройств ЭВМ, телетайпа, полиграфических машин и т.д. используется монобуквенный ввод информации, при котором скорость ввода не отвечает возросшим требованиям потребителей информации.

Ввод системы машинного стенографирования осуществляется при помощи многопальцевого такта на определенной клавиатуре. Структура многопальцевого такта соответствует мануально-пальцевой форме речи. Кроме этого она связана с делением словоформ на слоги.

Модель фонологического слога описана в некоторых современных лингвистических разработках /6/. Считается, что в его рамках наиболее целесообразным является изучение правил сочетания фонем, которые имеют свою специфику для каждого языка. Общеизвестная структура слога - согласный /С,консонант/ + гласный /V, вокал / - является характерной особенностью всех языков мира, но слогоделение не во всех языках совпадает с морфемоделением. Только в так называемых "слоговых" языках, как правило, морфемы являются однослоговыми, т.е. границы слогов и морфем совпадают /например, в китайском языке/.

Машинное стенографирование имеет стопятидесятилетнюю историю. Первые попытки создания машины для стенографирования

связаны с революцией в промышленности I9 в., когда начало развиваться машинное производство. Первую стенографическую машину создал француз Гоно в I827 г. До конца I9 в. и начала 20 в. такие машины были созданы и патентованы в Италии, Англии, США и других странах /9/.

Родоначальником машинного стенографирования в СССР считается К.Е.Циолковский, на имя которого в I929 г. был издан патент № 9488 для стенографической машины, которая давала возможность стенографировать на различных языках.

В настоящее время машинное стенографирование широко применяется в развитых странах, таких как США, Канада, Франция, Австралия и др.

Новым этапом в развитии машинного стенографирования являются электронные стенографические машины с автоматическим дешифрированием /I2/. В последнее время такие машины были созданы в Болгарии, США и Италии. На мировых соревнованиях по машинному стенографированию, состоявшихся в I98I г. в ФРГ, первое место с достижением скорости записи 500 слогов в минуту было завоевано болгаркой на болгарской машине для стенографирования и дешифрирования МСД - I300.

Болгарская машина для стенографирования МСД - I300 является универсальным устройством для скоростного ввода языковой информации. Информация вводится по слогам. Преимущество этого устройства состоит в том, что на его выходе получается не специфический стенографический текст, а обычный печатный текст на обычном орфографическом письме.

МСД - I300 адаптирована на I4 языках, в том числе и на армянском языке. Адаптация на армянском языке является первой машинной стенографической системой на этом языке в мире. Армянский язык оказался очень подходящим для машинного стенографирования. Специфическая слоговая структура армянского языка, которая характеризуется преобладанием слогов типа CV /согласный + гласный/, составляющих почти половину всех слогов в языке в отношении частоты их встречаемости в словах, дает возможность для его вполне удачной адаптации к машинному стенографированию.

Согласно нашим исследованиям, около 95% слогов в армянском языке - это слоги типов CV, CVC,VC и V , которые

вводятся машиной МСД - 1300 одним тактом. В этом отношении армянский язык близок японскому языку и превосходит все другие языки мира.

Так например, частота слогов типа CV в русском, польском и греческом языках приблизительно 45%, в английском - 34%, в немецком - 26%. Общая частота слогов типов CV, CVC, VC и V в текстах на русском языке - 78%, на греческом - 75%, на польском - 74%, на английском - 73%, на немецком - 71%. Немаловажен также и факт, что относительная часть слогов типов CCV, CCCV, CCVC / с двумя и больше начальными согласными/, создающих затруднения как при машинном, так и при рукописном стенографировании, в армянском языке составляет всего 4,4%, тогда как в немецком языке этот процент 11,2%, в английском - 14,7%, а в польском - 19%.

Все эти лингвистические предпосылки, как и умелое расположение букв армянского алфавита и других знаков, применяемых в текстах на армянском языке, на клавиатуре МСД - 1300, сообразно их частотному распределению и работоспособности пальцев левой и правой руки, позволяют достичь максимально высоких скоростей при стенографировании на армянском языке.

При обучении армянской стенографии целесообразно пройти предварительный этап обучения рукописному, так называемому, "слоговому стенографированию", для которого разработана специальная система "Стоянов" на болгарском языке. Ее адаптация на армянском языке дается в прилагаемой схеме (стр.).

1. Стенограммы консонантов и вокалов являются одноэлементными и двуэлементными.

2. Стенограммы биконсонантов образуются посредством сочетания грамм[1] консонантов.

3. Стенограммы силабов[2] образуются посредством сочетания грамм консонантов и вокалов.

На этом этапе, при использовании современных технических средств, обучение по стенографии предполагает, кроме наличия знаковой системы для записывания слогов в армянском языке, и создание навыков для быстрого слогоделения слов. В связи с этим очень важна лингвистическая проблема создания формализованной процедуры многопальцевого слогового такта и клавишных сочетаний для слогов, соответствующих реально

существующим слогам в армянском языке.

Здесь, в качестве приложения к докладу, демонстрируется машина для стенографирования на армянском языке, которая, с небольшими совершенствованиями, может обеспечить почти полное выравнивание времени акустической и письменной регистрации текстовой информации и интегрирует в одну некоторые виды деятельности: машинопись, стенография, перевод и др.

ПРИМЕЧАНИЯ

I Грамма - знак для буквы
2 Силаб - знак для слога

ЛИТЕРАТУРА

I. Акопян О., Масово и професионално писмо - В: "Предложения за усъвършенствуване на българската стенография" - сборник от резюмета на ръкописите, представени за конкурса I96I - I963 г., София, I965 г., с. I24-I30
2. Андрейчин Л., Някои мисли за стенографията от езиковедческо гледище - В: Сборник статии "Въпроси на българската стенография", София, I959 г., с. 5-7
3. Банов Ст., Донев М., Българска стенография, София, I979г., с. 346
4. Вопросы оптимизации естественных коммуникативных систем. Издательство Московского университета. Под редакцией Ахмановой О.С., Москва, I97I г., с. I33-I35
5. Диринтер Д., Алфавит, Москва, I963 г., с. 59-77, I93-222
6. Панфилов Е.Д., Фонологические слоги классической латыни. Издательство Ленинградского университета, Ленинград, I973 г., с. 3
7. Саркисян Г., К предыстории армянской письменности - В: Второй международный симпозиум по армянскому искусству. Сборник докладов, Ереван, I978 г., том I, с. 2I9-225

8. Gontard, Anpassung des Systems Duployé an Armenisch, Paris, 1888
9. Racine M. et R., La stenographie dans le monde, Montreux, 1965, p. 91-96
10. Tiroyan I.H., Haygagan A.X., Segakrutium est trutian F.X. Gabelsberghery Harmeal ... Venedig, 1888
11. Tzvetkov., The Stenographic Theory as a Linguistic Discipline. Report of the 32nd Congress of INTERSTENO, Rotterdam, 1977, p. 57-58.
12. Tzvetkov V., Present State and Tendencies in the Development of Shorthand Reporting in Bulgaria. National Shorthand Reporter, Vol. 43, p. 30-31
13. Աբրահամյան Ա.Գ., Հայոց գրի և գրչության պատմություն, Երևան, 1973
14. Մուրադյան Բ.Գ., Նշագրություն, Երևան, 1982, էջ 3

Ա.Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայ բազմադարյան բառարանագրությունը իր զարգացման սովետական փուլը թևակոխեց հարուստ ավանդույթներով:

Սովետական շրջանում հայ բառարանագրության վերելքը պայմանավորված է քաղաքական-տնտեսական և մշակութային մի շարք գործոններով: Հայ պետականության վերականգնման հետևանքով հայոց համաժողովրդական ազգային լեզվի՝ ժամանակակից հայերենի, պետական, վարչական, հասարակական-քաղաքական կյանքի, գիտության ու տեխնիկայի, միջնակարգ և բարձրագույն դպրոցի և այլնի պաշտոնական լեզու դառնալու շնորհիվ անհամեմատ ընդարձակվեցին նրա գործածության ոլորտները և ընդհանրապես բարձրացավ նրա հասարակական կշիռը:

Սովետական իշխանության տարիներին լեզվաբանության մյուս ճյուղերի հետ զարգացման նոր փուլ թևակոխող հայ բառարանագրության մեջ կյանքի են կոչվում ոչ միայն նրա ավանդական ուղղությունները, այլև ժամանակակից գիտական մակարդակին համապատասխան ստեղծվում են նոր ուղղություններ, կազմվում նոր տիպի բառարաններ:

Բառարանագրությունն անձնական նախաձեռնությունից դառնում է պետական, համազգային գործ: Այդ նպատակով ստեղծվում են հատուկ գիտահետազոտական կենտրոններ՝ գիտական բազայով և գիտատեխնիկական սարքավորումներով: Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ տասնամյակում բառարանագրական աշխատանքների մեջ են ներգրավվում հայագիտության և հայերենագիտության հին սերնդի այնպիսի խոշոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են Հ. Ամատունը, Մ. Աբեղյանը, Սմ. Մալխասյանը, Ն. Տեր-Մինասյանը, Թ. Ավդալբեկյանը և ուրիշներ:

Հետագա տասնամյակներում արդեն հայ լեզվաբաններից կազմվում է հատկապես բառագետ-բառարանագիր մասնագետների մի սակավ չոկատ: Այս շրջանի մյուս կարևոր առանձնահատկությունն էլ այն է, որ եթե նախկինում հայերեն բառարանները լույս էին տեսնում հայերի քնօրրանից՝ Հայաստանից դուրս՝ Վենետիկում, Ն.Պոլսում, Փարիզում,

Ռոստոնում, Նահիրեում և այլուր, ապա վերջին վեց տասնամյակներում արդեն՝ հայերեն լավագույն բառարանները կազմվում և հրատարակվում են Սովետական Հայաստանում: Այսպիսով Սովետական Հայաստանը դառնում է նաև հայ բառարանագրության կենտրոնը, նրա հիմնական օջախը:

Սովետական շրջանում հայ բառարանագրությունը զարգանում է հետևյալ ուղղություններով.

Հատուկ ուշադրություն է դարձվում միալեզվյան բառարանագրությանը՝ բացատրական, սուղաբանական-արմատական, հոմանիշների, հականունների, դարձվածաբանական, ուղղագրական-ուղղախոսական բառարաններին:

Համեմատաբար կարճ ժամանակում՝ մի քանի տասնամյակների ընթացքում կազմվեցին և հրատարակվեցին հայ ազգային գրական լեզվի բացատրական երեք բառարաններ:

ա/ Սա. Մալխասյանցի քառհատոր ,,Հայերեն բացատրական բառարանը,, լույս է տեսել 1944-45թ.թ. և պարունակում է հայոց լեզվի բոլոր դրսևորումների՝ գրաբարի, միջին հայերենի, բարբառների, գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների մոտ 120 հազար բառ և դարձվածքային միավոր:

Բառերի և դարձվածքների ընդգրկմամբ, բառիմաստների տարբերակմամբ, բառերին տրվող ոճական ու քերականական նշումներով և բնութագրումներով այն ոչ միայն ազգային գրական լեզվի առաջին ընդարձակ, այլև որոշ իմաստով նաև պատմական բառարան է: Նրանում համատեղված են ինչպես պատմական, այնպես էլ ժամանակակից գրական լեզվի բացատրական բառարանների սկզբունքները: Այն արդի գրական լեզվի բառարան է՝ ժամանակակից գրական լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարով, բառերի և դարձվածքների ժամանակակից իմաստների տարբերակմամբ, նրանց կիրառության ոլորտների ոճական ու գործածության սահմանափակման վերաբերյալ բազմազան նշումներով ու հանծնարարականներով. պատմական է՝ գրաբարյան, միջին հայերեն և բարբառային բառապաշարների ընդգրկման ծավալով և շերտերով, բառիմաստի պատմական զարգացման տվյալներով, այդ իմաստների տարբերակմամբ ու դասակարգմամբ: Բառարանում զգալի աշխատանք է կատարված նաև բառերի քերականական և ոճական բնութագրումների ուղղությամբ: Ժամանակակից հայերենի քերականության և բառապաշարի ոճական կիրառության օրինաչափությունների համաձայն՝ քերականական և ոճական բնութագրման շնորհիվ նորմավորման է ենթարկվել բառարանում ներկայացված հայոց լեզվի ամբողջ բառամթերքը: Հատուկ նշաններով և նշումներով տարբերակվում են նորաբանու-

թյունները, արմատահայերեն, գրաբար, միջին հայերեն, բարբառային, հնացած և հազվադեպ գործածվող բառերը, ինչպես նաև հին և նոր փոխառությունները: Տրվում են նաև լեզվի առանձին ոլորտներում, հասարակական-քաղաքական կյանքի, գիտության և տեխնիկայի առանձին բնագավառներում բառերի կիրառության վերաբերյալ հատուկ նշումներ: Բառահոդվածում հաճախ բերվում են նաև սաուզաբանական և այլ օվյալներ:

Բառերի և դարձվածքների ընդգրկման ծավալով, բառահոդվածի կազմության հարստությամբ, բառերի և դարձվածքային միավորների իմաստաբանական, բառագիտական, ոճագիտական և քերականագիտական բազմակողմանի մշակվածությամբ Սա. Մալխասյանցի ,,Հայերեն բացատրական բառարանը,, անկասկած երևույթ է ոչ միայն հայ բառարանագրության, այլև սովետահայ մշակութային կյանքում: Եվ պատահական չէ, որ այն հայ բանասիրության միակ գործն է, որ արժանացել է ՍՍՀՄ պետական առաջին կարգի մրցանակի:

բ/ Հայկ.ՍՍՀ ԳԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների ջանքերով է կազմվել բառահատոր ,,ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը,, , որի առաջին հատորը լույս է տեսել 1969թ., վերջինը՝ 1980-ին: Բառարանը պարունակում է ժամանակակից հայոց լեզվի ավելի քան 125 հազար բառ և դարձվածքային միավոր: Ի տարբերություն Սա. Մալխասյանցի՝ սույն բառարանի հեղինակներն աշխատել են խուսափել արդի հայերենում արդեն հնացած, գրաբարյան, հազվադեպ գործածվող, նեղ բարբառային բառերից, հասարակաբանություններից և գեհկաբանություններից: Բառարանը ձգտում է ընդգրկել հայ գեղարվեստական ու գիտական գրականության, պարբերական մամուլի և հրապարակախոսության մեջ լայնորեն տարածված այն հին և նոր բառերը, ինչպես նաև բառերի նոր իմաստները, որոնք տարբեր պատճառներով տեղ չեն գրավել նախորդ՝ Սա. Մալխասյանցի բառարանում: Բառարանը նորմատիվ բնույթ ունի: Բառապաշարի ընտրությունը, բառերի ուղղագրության, բառիմաստների տարբերակման ու բացատրության, գործածության սահմանների ու ոլորտների, ինչպես և քերականական նշումների հիմքում ընկած են ժամանակակից հայերենի գործող նորմաներն ու կանոնները: Բառերի և դարձվածքային միավորների տարբեր իմաստներն ու նրբերանգները, նրանց գործածության սահմաններն ու ոլորտները հաստատելու համար բերվում են համապատասխան օրինակներ՝ քաղված նախասովետական և սովետական շրջանների հայ գեղարվեստական և գիտական-մասնագիտական գրականությունից, դասագրքերից, մամուլից և այլն: Իբրև ազգային գրական լեզվի ակադեմիական նորմատիվ

բառարան՝ ,,ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը,, կարևոր տեղեկատու ձեռնարկ է ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի իմաստային, ոճական և քերականական հարստությունը յուրացնելու համար:

գ/Վերջին տարիներին հայ բառարանագրությունը հարստացավ ազգային գրական լեզվի մի նոր բառարանով: Էդ. Աղայանի ,,Արդի հայերենի բացատրական բառարանը,, , որ լույս է տեսել 1976թ., պարունակում է մոտ 136 հազար բառ ու 10 հազար դարձվածքային միավոր: Այն հիմնականում ամփոփում է արդի հայ գրական լեզվի ակտիվ և պասիվ բառապաշարը: Բառացանկն ընդգրկում է հայ գեղարվեստական, թարգմանական, հանրամատչելի գիտական գրականության, հրապարակախոսության, կարևոր դասագրքերի, գրավոր այլևայլ աղբյուրների, ինչպես նաև բանավոր՝ խոսակցական լեզվի բառային ու դարձվածքային միավորները: Ընդհանուր գործածական բառերից բացի՝ բառացանկում տեղ են գրավել նաև պասիվ բառապաշարի այն բառերը, որոնք վերաբերում են գրաբարին, միջին գրական հայերենին, բարբառային շերտերին, հին ու նոր փոխառություններին, նորաբանություններին, ինչպես նաև մասնագիտական բառապաշարին՝ տերմինաբանությանը:

Բառարանի նորմատիվությունը արտահայտված է բառապաշարի ընտրությամբ, բառերի, դարձվածքների և նրանց իմաստների ոճական տարբեր կիրառությունների նորմավորման, ժամանակակից բառագործածության օրինաչափությունների որոշման, բառերի ուղղագրական տարբերակների, քերականական սխալ ձևերի մշման նպատակով արված զանազան հղումների և համապատասխան հանձնարարականների միջոցով:

Գիտական բարձր մակարդակով են կատարված բառահոդվածի կազմությունը, համանունների առանձնացումը, գլխաբառին արվող քերականական և ոճական այլևայլ նշումները, բառիմաստների տարբերակումն ու դասակարգումը, տարբերակված իմաստների բացատրությունը, զանազան տեսակցությունների սահմանումները, իմաստները հաստատող որոշ օրինակների ընտրությունն ու տեղադրումը:

Էդ. Աղայանի ,,Արդի հայերենի բացատրական բառարանը,, բառացանկի հարստությամբ, բառահոդվածի մշակվածությամբ, իմաստների բացատրության կատարելությամբ նշանակալից երևույթ է ոչ միայն սովետահայ բառարանագրության, այլև ՍՍՀՄ ազգային լեզուների նույնատիպ բառարանների մեջ:

Բացատրական է իր բնույթով նաև ավյալ լեզվի դարձվածքների՝ դարձվածաբանական բառարանը: 1975թ. լույս տեսավ Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի ,,Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը,, , որ

պարունակում է մոտ 20 հազար դարձվածքային միավոր և ընդգրկում է ժամանակակից հայոց գրական լեզվի դարձվածքների ամբողջությունը, ինչպես նաև գավառական-բարբառային դարձվածքային այն միավորները, որոնք լայն չափերով քափանցել են գեղարվեստական գրականության մեջ կամ լայնորեն գործածվում են ժողովրդախոսակցական լեզվում:

Քննվող շրջանում երևան եկած միալեզվյան-բացատրական բառարանի նոր տեսակ է հեղինակային բառարանը: Համաբարբառի սկզբունքով արդեն կազմվել են ինչպես առանձին հեղինակների որևէ գործի /օրինակ՝ Ավ. Իսահակյանի ,,Աբու-Լալա-Մահարի,, վեպի, կազմող՝ Թ. Նանեյան/, այնպես էլ բոլոր գործերի /օրինակ՝ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի, կազմող՝ Ա. Քոչոյան/ բառարանները: Այդ կարգի աշխատանքներից առանձնապես պետք է հիշատակել Լ. Պետրոսյանի ,,Հովհ. Թումանյանի գեղարվեստական երկերի բառարանը,, /Երևան,1976թ./,որ պարունակում է մոտ 9 հազար բառ և Ա. Պաչոյանի ,,Գ. Սևակի չափածոյի բառարանի,, երկու հատորները /1981-82թ.թ./, որոնցում ընդգրկված է ավելի քան 17 հազար բառային միավոր:

Բառագիտական-իմաստաբանական բառարանների մեջ իր ուրույն տեղն է գրավում որևէ լեզվի հոմանիշների բառարանը: 1967թ. լույս տեսավ Ա. Սուքիասյանի ,,Հայոց լեզվի հոմանիշների բառարանը,, , որ պարունակում է 33 հազար հոմանիշ բառ և դարձվածքային միավոր: Բառահոդվածում առանձնացվում են հոմանշային կապերով իրար հետ առնչվող բառերն ու դարձվածքային միավորները, տարբերակվում՝ ըստ իմաստային նրբերանգների և ոճական-կիրառական գործածության, տրվում են հոմանիշների արտահայտած հուզա-արտահայտչական գունավորման համապատասխան բնութագրումներ, նշվում՝ նրանց ոճական զանազան կիրառությունները և պատկանելությունը տարբեր քերականական կարգերին, լեզվի տարբեր շերտերին ու գործածության ոլորտներին:

Վերջին տարիներին հրատարակվել են նաև հայերեն համանունների և հականիշների բառարաններ:

Միալեզվյան-բառագիտական բառարանների մեջ իր որոշակի տեղն ունի Հ. Բարսեղյանի ,,Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը,, /Երևան, 1973թ./, որ պարունակում է ժամանակակից հայոց լեզվի ավելի քան 152 հազար բառ: Բառացանկում գրական հայերենի լայն գործածական բառերից ու հոգեվումներից բացի ընդգրկված են նաև հնացած, հին և բարբառային որոշակի քվով բառեր, ինչպես նաև մասնագիտական տերմիններ, որոնք հանդիպում են գեղարվեստական, գիտական և գիտատեխնիկական հանրամատչելի գրակա-

նույթյան մեջ: Բառերը բերվում են մեկ ընդունված ուղղագրությամբ: Հազվագյուտ դեպքերում քույլատրվում են բառային, արտասանական, ինչպես և գրությամբ արտահայտված տարբերակներ. ճշտված, կրճատված և հնարավորության սահմաններում միօրինակացված են ուղղագրական տարբերակները՝ երկգրություն ունեցող բառերը: Բառերին արվում են քերականական ու ոճական, և հատկապես տերմինների գործածության ոլորաններին, բառերի հուզա-արտահայտչական տարբեր գունավորման պատկանելու համապատասխան նշումներ ու բնութագրումներ: Հ. Բարսեղյանի ,,Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը,, ընդգրկված բառերի քանակով, գլխաբառի ուղղագրական, ուղղախոսական իրողությունների մշակվածությամբ, քերականական, ոճական, բառագործածական զանազան նշումներով ու հանճնարարականներով վստահելի ծեռնարկ է ոչ միայն ժամանակակից հայերենի ուղղագրությունն ու ուղղախոսությունը, այլև բառերի ու տերմինների ոճական-կիրառական հարստությունը յուրացնելու համար:

Աշխարհի սակավաթիվ լեզուների է վիճակված ունենալու սեփական լեզվի ստուգաբանական բառարան: Այդ սակավաթիվ երջանիկ լեզուներից է հայերենը:

Հայերեն արմատական-ստուգաբանական բառարանը /1-ին հրատ. 7հ. 1926-1936թթ., 2-րդ հրատ. 1957-1980թթ., 4 հատոր/ լինելով Հ. Աճառյանի՝ ասանամյակների աքնաջան աշխատանքի արդյունքը, ոչ միայն հեղինակի գլուխգործոցն է, այլև հայ բառարանագրության պսակն ու պարծանքը: Բառարանում ընդգրկված է հին մատենագրությամբ ավանդված 11 հազար բառարմատ: Բառահոդվածում կատարվում է հայերեն բառարմատների հնչյունական, իմաստաբանական-բացատրական, բառակազմական, բառագործածական, արմատների հնչյունական տարբերակների, նրբանց ստուգաբանության, ավյալ արմատի ստուգաբանության պատմության ու բարբառային օրինաչափության խոր և բազմակողմանի քննություն:

Լեզվաբանական-բանասիրական մի շարք բաժինների ծավալով սույն աշխատանքը դուրս է գալիս սոսկ ստուգաբանական բառարաններին տրաջադրվող խնդիրների սահմաններից և փաստորեն դառնում է բառի լեզվաբանական համակողմանի քննության ու բնութագրման մի կարևոր տեղեկատու ծեռնարկ: Բառարմատների ընդգրկման ծավալով, յուրաքանչյուր արմատին տրվող ստուգաբանական, բառագիտական, իմաստաբանական և այլ տվյալներով այն իր տեսակի մեջ մնում է անգերազանցելի:

Այսպիսով, մեծ է եղել հայերեն միալեզվյան՝ բացատրական և բառագիտական բառարանների դերն ու նշանակությունը ժամանակակից հայոց լեզվի բառային կազմի, նրա իմաստային համակարգի հարստու-

քյան, բառերի ոճական բազմազան կիրառությունների, ուղղագրության և ուղղախոսության յուրացման և ընդհանրապես խոսքի մշակույթի բարձրացման ուղղությամբ:

Սովետական շրջանը առանձնապես հարուստ է թարգմանական ընդհանուր և տերմինաբանական ու մասնագիտական բառարաններով: Այդ շրջանում լայն հնարավորություններ ստեղծվեցին առանձնապես ռուս-հայերեն բառարանագրության զարգացման համար, որ պայմանավորված է հայ ժողովրդի կյանքում, գիտության և մշակույթի այլևայլ բնագավառներում ռուսաց լեզվի խաղացած դերով և նշանակությամբ:

Ռուս-հայերեն թարգմանական ընդհանուր բառարանագրության մեջ առանձնապես աչքի են ընկնում Թ. Ավդալբեկյանի, Գ. Սոսնիկյանի, Ե. Տեր-Մինասյանի և Վ. Փոքեյանի երկհատոր ,,Ռուս հայերեն նոր բառարանը,, /1933-35թթ./, որ պարունակում է մոտ 30 հազար բառ, 1954-1958թթ. լույս տեսած Ե. Տեր-Մինասյանի, Վ. Փոքեյանի, Հ. Կուսիկյանի, Հ. Համբարձումյանի և Մ. Գևորգյանի բառահատոր ,,Ռուս-հայերեն բառարանը,, , Ա. Ղարիբյանի ,,Ռուս-հայերեն բառարանը,, /1963թ./, որոնք ընդգրկում են ռուսերենի ավելի քան 100 հազար բառ և արտահայտություն, ինչպես նաև ընդարձակ ,,Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարանը,, /1975թ./: Նշված, ինչպես նաև մյուս ռուս-հայերեն և հայ-ռուսերեն երկլեզվյան բառարանները գործնական և գիտական կարևոր արժեք են ներկայացնում: Գործնականորեն նրանք մեծ դեր են խաղում ինչպես ռուսաց և հայոց լեզուների ուսուցման, այդ լեզուների տնօրեն հարստությունների յուրացման, այնպես էլ թարգմանական գործի բնագավառում:

Թարգմանական ընդհանուր բառարանագրության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ է հիշել այդ շրջանում հրատարակված եվրոպական և հարևան ժողովուրդների լեզուներին՝ անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, ինչպես և աղբեջաներենին ու քրդերենին առնչվող երկլեզվյան բառարանները:

Սովետական շրջանում հայ բառարանագրության մեջ իրենց նշանակությամբ առանձնահատուկ տեղ են գրավում թարգմանական-տերմինաբանական և մասնագիտական-տերմինաբանական բառարանները: Դժվար է գերագնահատել այդ կարգի բառարանների և տերմինաբանների դերը հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական հայ տերմինաբանության ստեղծման, մշակման և կարգավորման գործում: 20-ական թվականներից սկսած կազմվեցին և հրատարակվեցին գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող հիմնականում ռուս-հայերեն և հայ-ռուսերեն տասնյակ տերմինաբանական և մասնագիտական բառարաններ:

Տերմինաբանական բառարանների առանձնապես հիշատակության արժանի են ռուս-հայերեն ռազմական, իրավաբանական, տնտեսագիտական, պոլիտեխնիկական, լատիներեն-ռուսերեն-հայերեն բժշկական բառարանները: Մասնագիտական բառարաններից հատկապես պետք է նշել լեզվաբանական և գրականագիտական բառարանները, որոնց շնորհիվ ոչ միայն մշակվում և կարգավորվում է հայերեն համապատասխան տերմինաբանությունը, այլև հայ հասարակությունը մայրենի լեզվով հաղորդակից է դառնում այդ բնագավառների գիտելիքների ժամանակակից մակարդակին:

Հայ բառարանագրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Հ. Աճառյանի 5 հատորանոց ,,Հայոց անձնանունների բառարանը,, /1942-1962թթ./: Հեղինակի նպատակն է եղել հավաքել և բառարանագրական մշակման ենթարկել այն բոլոր անունները, որ գոյություն ունեցել է որևէ հայ անհատ, անկախ նրա դիրքից ու ասպիճանից, ապրած շրջանից և երկրից: Բառացանկն ընդգրկում է 5-15 դ.դ. ներառյալ հայոց պատմության մեջ արժանացրված և ընդհանրապես այս կամ այն առիթով հիշատակված հայոց բոլոր այն անձնանունները, որոնք մեզ են հասել գրավոր հուշարձանների միջոցով: Հեռագա դարերից առնված են պատմական և գրական կարևոր, նշանավոր դեմքերը: Բառարանը գործունակում է մինչև մեր դարի 40-50-ական թթ. հայերենի մեջ ընդհանուր գործածություն գտած անձնանունները: Այն բանասիրական-լեզվաբանական և պատմական-հանրագիտական բառարանների սկզբունքների միավորմամբ ստեղծված բառարանի մի նոր տիպ է, որտեղ արվում են հայերենի անձնանունների թե՛ լեզվաբանական-ստուգաբանական և թե՛ պատմական-մասնագիտական, մատենագիտական, կարևոր, անհրաժեշտ և մանրամասն ակյալներ ու բնութագրումներ:

Մշակութային և քաղաքական նշանակալից երևույթ պետք է համարել ,,Հայկական սովետական հանրագիտարանի,, 10 հատորների ստեղծման և հրատարակման ուղղությամբ արվող աշխատանքները:

Հանրագիտական ընդհանուր բառարան կազմելու համար անհրաժեշտ են գիտատեխնիկական, քաղաքական-սոցիալական և նյութական որոշակի նախադրյալներ և պայմաններ: Հայկական հանրագիտարանի ստեղծումը հնարավոր դարձավ միայն սովետական կարգերի պայմաններում հայ ժողովրդի ազգային և սոցիալական վերածննդի, նրա տնտեսության, մշակույթի, գիտության և տեխնիկայի աննախընթաց զարգացման շնորհիվ:

Իբրև ազգային հանրագիտարան, նրանում պատշաճ տեղ է գրաված հայ ժողովրդի պատմական անցյալին, տեղանուններին, աշխարհագրական անուններին, Սովետական Հայաստանի ստեղծման և զարգացման պատմությանը, նրա տնտեսության, արտադրության, գիտության և մշակույթի

նվաճումներին, կենսագրական և այլ ավյալներ են բերվում գիտության, մշակույթի, պետական ականավոր գործիչների, նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության մասին: Հանրագիտարանում ընդգրկված հոդվածների մյուս մասը նվիրված է համաշխարհային, սովետական և ռուսական կյանքի, գիտության և մշակույթի տարբեր բնագավառների լուսաբանմանը:

Այսպիսով, սովետական իշխանության տարիներին վերելք է ապրել նաև հայագիտության հնագույն և ավանդական ճյուղերից մեկը՝ հայ բառարանագրությունը: Այն ծառայում է հայ ժողովրդի գիտատեխնիկական առաջընթացին, լեզվական և ընդհանրապես մշակութային պահանջմունքները բավարարելուն, մեծապես նպաստում է յուրացնելու մայրենի լեզվի, ինչպես և օտար լեզուների ենսպես գանձերը և դրանով իսկ մեր ժողովրդին հաղորդակից է դարձնում համաշխարհային գիտության, տեխնիկայի, արվեստի և գրականության հարստություններին, համամարդկային գաղափարներին:

Բառարանագրական աշխատանքներն այժմ լայն թափ և մեծ ծավալ են ստանում Սովետական Հայաստանում: Հայագիտական կենտրոններում՝ Հայկ. ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում և գիտության այլ օջախներում կազմվել և հանձնվել են տպագրության կամ կազմության ընթացքում են գտնվում տարբեր տիպի և նպատակների համար նախատեսված մի շարք բառարաններ:

Հրատարակության ընթացքում են գտնվում ,,Հայ-ռուսերեն երկհատոր բառարանը,, , բազմահատոր ,,Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի,, անդրանիկ հատորը, հանձնված է արտադրության ավելի քան 160 հազար բառ պարունակող հայերենի բառակազմական-ստուգաբանական բառարանը, աշխատանքների ավարտման և խմբագրման ընթացքում են գավառական-բարբառագիտական, գրաբար-աշխարհաբար, միջին հայերենի, օտարազգի բառերի բառարանները:

Ռ. Լ. ՈՍՈՍՏՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում բայական բառակապակցություններն օժտված են մեծ դինամիզմով՝ սկսած կայուն բառակապակցություններից մինչև ազատ շարահյուսական կապակցությունները: Այդ պատճառով դրանք նկարագրելիս առաջ է գալիս անհրաժեշտ կաղապարի ընտրության խնդիրը: Իսկ ժամանակակից լեզվաբանությանը հայտնի են առավել տարածված երկու՝ նախադասության անդամների և անմիջական բաղադրիչների կաղապարները: Դրանք լինելով ձևային կաղապարներ՝ ունեն սահմանափակություններ, որոնք պայմանավորված են ելակետային տվյալների ու միջանկյալ միավորների արտածման կանոնների ընտրմամբ: Մասնավորապես նախադասության անդամների դիրքային փոփոխությունների տեսակետից նախադասության անդամների կաղապարը սահմանափակություն ունի: Դա պատճառ է դառնում այն բանի, որ բայական բառակապակցությունների նկարագրության մեջ լրիվ չեն արտացոլվում դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև իմաստաշարահյուսական այն տեղաշարժերը, որոնք կապված են այդ բառակապակցությունները կազմող բառերի դիրքային փոփոխությունների հետ: Այստեղ քննությունից դուրս են մնում բայական հարադրությունների կազմման բնութագրական հիմունքները:

Եթե փորձենք իբրև բառակապակցությունների հետազոտման միջոց ընտրել անմիջական բաղադրիչների կաղապարը և բայական բառակապակցությունների սերման պրոցեսում միջանկյալ միավորների տրոհումն առանձնացնենք կառույցի տեսքով, ապա այդ բառակապակցությունները կազմող բառերի ու բառախմբերի միջև գոյություն ունեցող իմաստաշարահյուսական հարաբերությունները կարելի է դիտարկել երկու խմբով՝ արտակառույցային և ներկառույցային: Առաջին խումբն արտահայտում է միևնույն կառույցի բաղադրիչների, իսկ երկրորդ խումբը՝ տարբեր կառույցների միջև գոյություն ունեցող հարաբերություննե-

րը: Այդ դեպքում միևնույն բայական բառակապակցությունը, կախված ներկառուցվածային և արտակառուցվածային կապերի բաշխումից, կարող է ունենալ մեկից ավելի ձևային նկարագրություններ, որոնք բացահայտում են տվյալ բառակապակցության այս կամ այն իմաստային առանձնահատկությունը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ որպես բայական բառակապակցության աշխատանքային սահմանում ներկա զեկուցման հիմքում ընկած է ակադեմիկոս Գ.Բ. Ջահուկյանի կողմից տրված ընորոշումը, որ,եթե բայական բառակապակցությունը դիտենք լայն առումով՝ ներառելով ոչ միայն բայի խնդրառությամբ պայմանավորված խնդիրները, այլև բայի արժույթով պայմանավորված բուն /զործող/ ենթական և ստորոգելին, ապա նախադասության օբյեկտիվ պլանը հանդես կգա հենց որպես բայական բառակապակցություն՝ ստորոգմամբ կամ առանց դրա, և նախադասությունը կլինի բայական բառակապակցություն՝ լրացված ստորոգումով /տես Գ.Բ.Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները/:

Նախադասության /կամ բառակապակցության/ անմիջական բաղադրիչների համակարգը նշված աշխատության մեջ առաջարկված գոյաբանական կարգերի օգնությամբ նկարագրելիս ոչ ծայրագույն միավորներին կվերագրվեն կազմի, իսկ ծայրագույն միավորներին՝ կախման կարգեր: Նշենք, որ բառակապակցության արտածման ցանկացած մակարդակում սերված միավորները տվյալ մակարդակի նկատմամբ կլինեն ծայրագույն միավորներ և կունենան կախման կարգ: Նույն ծայրագույն միավորը արտածման հաջորդ փուլի նկատմամբ կհանդիսանա արդեն ոչ-ծայրագույն միավոր ու կստանա կազմի կարգ: Կախման կարգ ունեցող միավորներից մեկն անվանենք մյուսի շարահյուսական Ֆունկցիա: Ստորադասության դեպքում միավորներից մեկին տրվում է կախունակության, իսկ մյուսին՝ կախյալության կարգեր: Այսպես, օրինակ, նախադասությունը, իբրև ոչ-ծայրագույն միավոր, կունենա կազմի կարգ. արտածման առաջին փուլում անվանական ու բայական բառախմբերը կդիտվեն իբրև ծայրագույն միավորներ, որոնց վերագրվում են կախման կարգեր: Բայական կամ անվանական բաղադրիչները երկատվելիս կստանան կազմի կարգեր, որովհետև դրանք արդեն հանդիսանում են ոչ-ծայրագույն միավորներ:

Քննարկենք այս հարցերը ժամանակակից հայերենի երկու՝ զուտ մակբայական և զուտ գոյականական, բառակապակցությունների օգնությամբ: Դժվար չէ ցույց տալ, որ ստացված արդյունքները ընդունելի կլինեն ցանկացած այլ բայական բառակապակցության համար:

Նախ քննարկենք զուտ մակբայական ստորադասությամբ բայական

բառակապակցությունները: Եթե ունենք բայական բառակապակցություն, որի մեջ բային՝ իբրև գերադաս անդամի, նախորդում են մի, պատճառի, տեղի և այլ մակբայներ, ապա բառակապակցության վերլուծությունը կտա անմիջական բաղադրիչների մի համակարգ, որի մեջ յուրաքանչյուր մակբայ, իբրև շարահյուսական Ֆունկցիա, բնորոշում է, մինչև բայը ներառյալ, բառակապակցության մնացած հատվածը: Եվ քանի որ որևէ բառակապակցության շարահյուսական Ֆունկցիան համընկնում է կախունակ բաղադրիչի շարահյուսական Ֆունկցիայի հետ, ապա անմիջական բաղադրիչների կաղապարով արված զուտ մակբայական ստորադասությամբ բայական բառակապակցությունների նկարագրությունը կունենա երկակի բնույթ: Առաջինը վերաբերում է ստատիկ կաղապարմանը, իսկ երկրորդը՝ դինամիկ: Ստատիկ կաղապարմանն է վերաբերում, որովհետև բայական բառակապակցության մեջ ներառված բոլոր մակբայները վերջին հաշվով դառնում են բայական անդամի լրացումներ, և դինամիկ կաղապարմանը՝ որովհետև բառակապակցություն կազմելիս յուրաքանչյուր մակբայի շարահյուսական Ֆունկցիան հաստատուն չէ: Կախված բառակապակցության մեջ ներառված մակբայների քվից՝ այն կարող է փոփոխվել, քանի որ տարբեր անգամ միևնույն մակբայը բնորոշում է տարբեր բառախմբեր:

Ասվածը ցուցադրելու համար Գ.Բ. Ջահուկյանի ,,ժամանակակից հայերենի տեսության հիմունքները,, աշխատությունից փոխառենք ՂԸՍՈՒՄ_ԿՈՒՑԵԿՈՒՑ_ՔԱՂՈՒՄ_ԷՐ զուտ մակբայական ստորադասությամբ բայական բառակապակցության նմուշը: Այս բառակապակցության անմիջական բաղադրիչների համակարգում ՂԸՍՈՒՄ մակբայի շարահյուսական Ֆունկցիան ԿՈՒՑԵԿՈՒՑ_ՔԱՂՈՒՄ_ԷՐ բայական բառակապակցությունն է, իսկ ԿՈՒՑԵԿՈՒՑ մակբայի շարահյուսական Ֆունկցիան՝ ՔԱՂՈՒՄ_ԷՐ բայը: Քանի որ ԿՈՒՑԵԿՈՒՑ_ՔԱՂՈՒՄ_ԷՐ բառակապակցության կախունակ բաղադրիչը ՔԱՂՈՒՄ_ԷՐ բայն է, հետևաբար ՂԸՍՈՒՄ մակբայը անուղղակիորեն՝ այդ բառակապակցության միջոցով, բնորոշում է նաև ՔԱՂՈՒՄ ԷՐ բայը: Եթե ելակետային բառակապակցությունից արտաքսենք ԿՈՒՑԵԿՈՒՑ մակբայը, ապա կփոփոխվի ՂԸՍՈՒՄ մակբայի շարահյուսական Ֆունկցիան: Այժմ այն կբնութագրի միայն ՔԱՂՈՒՄ_ԷՐ բայը: Եվ հակառակը, եթե ելակետային բառակապակցության մեջ ներառենք ՍՄՈՔՈՒ մակբայը /այսպես՝ ՂԸՍՈՒՄ_ՍՄՈՔՈՒ_ԿՈՒՑԵԿՈՒՑ_ՔԱՂՈՒՄ_ԷՐ/, ապա ՂԸՍՈՒՄ մակբայի շարահյուսական Ֆունկցիան կհանդիսանա արդեն ՍՄՈՔՈՒ_ԿՈՒՑԵԿՈՒՑ_ՔԱՂՈՒՄ_ԷՐ բառակապակցությունը: Ահա այն դինամիզմը, որ բացահայտում է անմիջական բաղադրիչների կաղապարը: Եթե նույն բառակապակցությունը նկարագրենք նախադասության անդամների կաղապարով,

ապա նրանում ներառված բոլոր մակբայները կատարում են բայի լրացման ֆունկցիա, որ, ի դեպ, կախված չէ մակբայների բանակից:

Ժամանակակից հայերենում լայն տարածում ունեն նաև անվան ստորադասությամբ բայական բառակապակցությունները: Ելն հաշվի առնենք այն, որ անվան համար իբրև կախյալ բառ կարող ենք ընտրել ածականը, իսկ բայի համար՝ մակբայը, գոյական < բայ կապակցության համար մեկ աստիճանի երկատման դեպքում /եթե ածականն էլ իր հերթին ստորադասենք մակբայով/ կստանանք ուղ բառակապակցություն, որոնց գլխադաս բաղադրիչը բայն է կամ՝ մակբայի ստորադասությամբ բայական բառակապակցությունը, իսկ ստորադաս բաղադրիչը՝ գոյականը կամ ածականի ստորադասությամբ անվանական բառակապակցությունը:

Դիտարկենք բոլոր ուղ բառակապակցությունները:

1/ Գոյական < բայ. այս բառակապակցությունը ժամանակակից հայերենում ունի շատ լայն գործածություն և օժտված է մեծ դինամիզմով: Ներկառուցային կապի տեսակետից գոյական և բայ բաղադրիչների միջև հաստատվում է խնդրային կամ պարագայական հարաբերություններ /զանց ենք առնում բայի ենթակառուցությունը/: Արտակառուցային կապի տեսակետից գոյական/բայ կառուցը խոսքում դրսևորվում է բայական բաղադրիչի ֆունկցիայով: Որպես օրինակ բերենք նվեր_տալ բառակապակցությունը: Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում այս բառակապակցությունը հանդես է գալիս երկակի՝

ա/ սովորական շարահյուսական կառուցվածք /նվեր կոչված իրը տալ/,

բ/ հարադրական բարդություն /նվիրել/:

Նշենք, որ հարադրական բարդության հասկացությունն անմիջական բաղադրիչների քերականության մեջ ընդունվում է լայն առումով: Բայական հարադրական բարդություն ենք համարում բայական այն կազմությունները, որոնք խոսքում հանդես են գալիս իբրև մակբայի շարահյուսական ֆունկցիա: Անմիջական բաղադրիչների կաղապարը հնարավորություն է տալիս բնորոշելու բայական հարադրական բարդությունը նրա ընդհանուր ներկայացմամբ. այսպես, եթե գոյական/բայ կառուցը խոսքում չի կարող դրսևորվել գոյական<մակբայ<բայ կառուցվածքով, ապա գոյական<բայ կառուցվածքը կլինի հարադիր բայ:

2/ Գոյական<մակբայ<բայ. այս բառակապակցությունների մեջ հարադրական հարաբերություններ չեն ստեղծվում: Առանձին դեպքերում հարադրության մասին խոսք կարող է լինել գոյականի և մակբայ<բայ կապակցության միջև, ինչպես օրինակ, <u>տող_կըսկսի_ըսաժանելին</u> → <u>տող կըսկսնըսաժանելին</u>: Քանի որ խոսքային առանձին իրադրություններում,

համաձայն նախորդ դեպքի, հարաղրական հարաբերությունները կարող են ստեղծվել հող և կրկնաբաժանեցնել բաղադրիչների միջև, ապա այդ հարաբերությունը կարող է փոխանցվել հող և կրկնաբաժանեցնել բաղադրիչներին:

3/ Ածական<զոյական<բայ. այս բառակապակցության մեջ ավելի ուժեղացված են խնդրային կամ պարագայական հարաբերությունները, նեև դրանք ստեղծվում են անուղղակիորեն՝ բայի ու անվանական բառակապակցության միջոցով, օրինակ, գեղեցիկ նվեր տալ:

4/ Ածական<զոյական<մակբայ<բայ. հնշտ է նկատել, որ այս բառակապակցությունը կարելի է ստանալ նախորդ երկու բառակապակցություններից: Կամ երկրորդում զոյականին ստորադասված է ածական, կամ երրորդում բային ստորադասված է մակբայ: Այստեղ բայի ու զոյականի կապն անուղղակի է՝ բայական ու անվանական բառակապակցությունների միջոցով: Այդ բառակապակցությունների միջև կարելի է ստեղծել հարաղրական հարաբերություններ, սակայն դրանք արտածման հաջորդ փուլում վերանում են:

5/ Մակբայ<զոյական<բայ. այս բառակապակցության մեջ մակբայը որոշում է հարաղրական ստատիկ վիճակ, որ ունի զոյական<բայ բառակապակցությունը: Այստեղ չի ժխտվում զոյականի ու բայի միջև ներկառուցյային կապը, որ կարող է բխել թե՛ խնդրային, թե՛ պարագայական հարաբերություններից:

Նշենք նաև, որ ժամանակակից հայերենում մակբայի ստորադասությամբ զոյականի ընդարձակման դեպքերը, ինչպես օրինակ՝ շտապ օգնություն, շատ հազվադեպ են:

6/ Մակբայ<զոյական<մակբայ<բայ. այստեղ զոյական և մակբայ<բայ բաղադրիչների միջև հնարավոր է բացահայտել հարաղրական հարաբերություն, քանի որ առաջին մակբայը ոչ թե զոյականի անմիջական բաղադրիչն է, այլ զոյական<մակբայ<բայ կապակցության:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ բաղադրիչների քանակի ավելացումը զուգընթաց հարաղրական հարաբերությունները թուլանում են, քանի որ հնարավոր է լինում կազմել ներկառուցյային ու արտակառուցյային կապերի այլ զուգորդումներ ևս: Դա պարզ երևում է հաջորդ երկու կառուցվածքներում:

7/ Մակբայ/ածական/զոյական/բայ կառուցը ժամանակակից հայերենում ունի երկու դրսևորում՝ ա/մակբային իրրև ածականի անմիջական բաղադրիչ, բ/մակբային իրրև ածական<զոյական<բայ բառակապակցության անմիջական բաղադրիչ:

8/ Մակբայ/ածական/զոյական/մակբայ/բայ կառուցի դրսևորումը

լրիվ համընկնում է նախորդի հետ միայն այն լրացումով, որ այստեղ բայը ստորադասված է մակբայով:

Այժմ, երբ մեզ հայտնի է գոյականհբայ կառուցվածքի նկարագրությունը, իբրև ամփոփում, կարող ենք անցնել զուտ գոյականական ստորադասությամբ բայական բառակապակցությունների վերլուծությանը: Որպես օրինակ վերլուծենք զորեղությունը ջուրը մեքենայով հեղուկից զատ ծնում են պինդ մարմին բառակապակցությունը, որը նշված է Գ.Բ. Ջահուկյանի ,,ժամանակակից հայերենի տեսության հիմունքները,, աշխատության մեջ:

Բերված բառակապակցության մեջ բոլոր գոյականները ստորադասվում են բային: Նախադասության անդամների կազմերը այս բառակապակցության համար տալիս է մի վերլուծություն, որի մեջ նշվում է յուրաքանչյուր գոյականի գործառույթը: Համեմատաբար ընդարձակ նկարագրություն ենք ստանում, երբ կիրառում ենք անմիջական բաղադրիչների կազմերը:

Ներկառուցային ու արտակառուցային կապերի տարբեր գուգորդումների միջոցով այստեղ կստանանք հինգ տարբեր վերլուծություն: Եթե ընդունենք այն դրույթը, որ արտածման տարբեր սխեմաներ արտահայտում են տարբեր իմաստներ, և հակառակը, առանձին իմաստների արտահայտումը հանգեցնում է տարբեր արտածման սխեմաների, ապա նշված բառակապակցությունը կարելի է սերել հինգ տարբեր սխեմաներով, որոնց համար կարելի է նշել իմաստային տարբերակներ:

(((((ա)(բ))((գ)(դ)))((ե)(զ)))((է)(ը)))((թ)(ժ))
(((ա)(բ))(((գ)(դ))((ե)(զ))))(((է)(ը))((թ)(ժ)))
(((ա)(բ))((((գ)(դ))((ե)(զ)))((է)(ը))))((թ)(ժ))
գործարանում
(ա)
մշակում
(բ)
գինի
(գ)
դարձնում
(դ)
ձեռքով
(ե)
հեղուկ
(զ)
ապակուց
(է)
պահեցնում
(ը)
շշում
(թ)
ամրացնում
(ժ)

Ա.Ն. ՋՅՈՒՐՋՅԱՆ /Երևան, ՍՍՀՄ/

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՋՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բաղադրյալ ստորոգյալը[1], ըստ հատկանիշ ցույց ավող մասի արտահայտության՝ անու՞ն, թե՞ բայ, բաժանվում է երկու խմբի՝ ա/ անվանաբայական բաղադրյալ ստորոգյալ /մարդ է, բարի է, ախուր է թվում, ուրախ կճանա և այլն/, բ/ բայական բաղադրյալ ստորոգյալ /հանդգնեց պատասխանել, ուզեց տեսնել և այլն/:

Արևելահայ ու արևմտահայ արդի գրական լեզուներում բաղադրյալ ստորոգյալի համաժամանակյա կարվածքով ուսումնասիրությունից պարզվում է, որ այս ընդհանուր կառույցները երկու ճյուղերի համար լինելով ընդհանուր, հիմնականում ունեն նաև արտահայտության առանձրություններ, որոնք և մեր քննության նյութն են:

Անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի հատկանիշ ցույց ավող մասը՝ ստորոգելիական վերադիրը կամ ստորոգելին[2], արտահայտման տարբերություններ չունի գրական հայերենի երկու ճյուղերում: Անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի կառուցվածքային տարբերությունը հիմնականում պայմանավորված է հատկանիշը վերագրող հանգույցով կամ էանչան բայով[3], որն արտահայտում է՝ ա/ նույն հանգույց-բայի լծորդության ու բառապաշարային տարբերություններով՝ երևալ-իլ, թվալ-իլ, համարել-իլ, լինել-ըլլալ, ասել-ըսել, անել-ընել, կարող եմ-կրնամ և այլն.

բ/ արևմտահայերենում բայերի՝ որպես հանգույց վերացականանալու ընդգծված ձկունությամբ՝ զըվիլ՝ լինել, դառնալ /զինվոր զրվեցավ/, նկատել-վիլ՝ համարել-վել /կարևոր նկատեց-նկատեցավ/, գիտեմ, տվաջալ՝ կարծել /խելացի գիտեի, դաշնակից էինք տվաստցեր/, ընձալել՝ դարձնել,է-լինել /տեսանելի կընձայեր, կընձայեր փստաը ազնիվ խառնվածքի մը. ՎՎ/, շինել՝ դարձնել,-անել-ընել ընդհանուր իմաստներից բացի, արևմտահայերենում նաև՝ կազմել /կախարդիչ տեսարան մը շիներ էին. ՎՎ/, ըսել-ըսել՝ է, նշանակել, ցնվանել, կոչել ընդհանուր իմաստներից բացի, արևմտահայերենում նաև՝ համարել /Ծ-

ասր մը ըսել եք/ և այլն.

գ/ արևմտահայերենում հանգույց-բայերի համանիշների առատությամբ, որը հավանաբար բխում է բայերի՝ որպես հանգույց վերացականանալու մեծ հակվածությունից. հմմտ. սեպել, շամպրհել, կաբճել, նկատել, հավատալ, ղասել, ղառել, բռնել, գտնել, ծեսնել, ըսել և այլն:

Արդի գրական հայերենում որպես հանգույց վերացականանալու համեմատ են և՛ չեզոք, և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի բայերը, որոնք սաորոգումը կատարելու հետ մեկտեղ՝ երկփեղկված ձևով պայմանավորում են նաև նախադասության կառուցվածքը՝ չեզոք, ներգործական, կրավորական, և միաժամանակ իրենց բառիմաստն են թելադրում ամբողջ սաորոգյալին՝ հատկանիշի վերագրումը կատարելով էական-լինելության, քվացողական, մնայունության-հարատևման, վերածման-փոխարկման, համադրողական ու այլ իմաստներով:

Բացի ամենատարածված եմ_լինել-ըլլալ բայերից, երկու ծյուղերի համար ընդհանուր՝ հատկանիշը էական-լինելության իմաստով վերագրող հանգույցներից են հանդիսանալ, հանդես_գալ, ի_հայտ_գալ, նշանակել, կանգնել-ել, ցանվել-ել, ներկայացնել, կազմել, դուրս_գալ /հեռացրեք_դուրս_եկավ//ժորթը միանգամայն ըանասեղն ու նկարիչ դուրս_եկավ. Շիր./, արևելահայերենում նաև՝ ստացվել /ընդհանուրը_է ստացվում/ և այլն, քվացողական իմաստով հատկանիշ վերագրող քվալ-ել, երևալ-ել, ձևանալ ընդհանուր բայ-հանգույցներից բացի, արևմտահայերենում նաև՝ ցեսնվիլ_գալ_ձևացնել բայերը՝ գիտուն կցեսնվեը, նեղ կուգաը, քանգարան մը կձևացնեին/, վերջինն այլ է անցողական իմաստով, որը հատուկ է նաև արևելահայերենին՝ ընդունված ձևացուցիչը ինքզինքդ /գԶ/, իրեն խելացի_էը_ձևացնում, իսկ մնայունության-հարատևման, վերածման-փոխարկման իմաստներով հատկանիշ վերագրող՝ մնալ_դառնալ այլև՝ լինել-ըլլալ բայերի որպես հանգույց կիրառությունը ընդհանուր է գրական հայերենի երկու ծյուղերի համար. հմմտ. Անծնական կյանքում նա միշտ ողբ_մնաց /ՊՍ/, անկշռելի_կը մնան_/ՎՎ/, Գուլսեցի Հաճի Մեհրուբեն Սիրանուշ_դարձավ /Փափ./, մայր_եղավ և այլն:

Հանդիսանալ_ներկայացնել բայերի՝ հանգույցի դերում կիրառությունը ընդհանրապես համարվում է օտարաբանություն, ռուսական ազդեցություն, մինչդեռ դա շատ սովորական է նաև արևմտահայերենում. հմմտ. վերելք_մը_կը_հանդիսանա, հիմնադիրը_հանդիսացավ, Գորկին հանդիսացավ հզոր_հեղափոխին գալիք հաղթանակին /ՎՎ/, ողակ_կներկայացնեն, արժանիք մը կներկայացնեն և այլն. այլ է հարցը իրենից

ներկայացնել, ներկայանալ, ըղձալ-իբրև, հանդիսանալ, հանդես գալ, աշխատել, ծառայել//ըղձալ-իբրև+վերջադիր կառուցների դեպքում, որոնք, սակայն, կարծում ենք, ոչ թե առհասարակ հատուկ չեն նղել հայոց լեզվին, այլ աշխուժացել են արևելահայերենում՝ ռուսերենի ազդեցությամբ. հմմտ. զրաբարում՝ ...ես եղէց ծեզ ի_հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և ի_դստերս...: ...Դու լիցիս յառաջնորդ ի վերայ հարայելի: Եղիջիք դուք մեզ ի_ծառայս...[4]: Արևմտահայերենում՝ Սարուխան ի_հայր եկավ_որդեն քաղաքական մեծատաղանդ երգիծանկարիչ /Շիր./: իբրև պարզ զորձավոր կաշխատի, երևցեր էին իբրև ֆիզիկական բնույթ մը, կմնա իբրև իրացորձում և այլն:

